

ԻՆՉՈՒՄ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ ԿԵՑՈՒԱԾՔԴ
ԿՈՐՈՇԷ ԱՊԱԳԱԴ



ԾԱԾԿՈՅԹԻ ՏԱԿ



ԾՈՆ ՊԸԿԻՐ
ՊԷԽ-ՍԷԼԻՆԿ ՀԵՂԻՆԱԿԸ ԶԻՒՆԿ ԶՐԻՖԻՅՈՆԱՅԹԻ

Սիրելի բարեկամ,

Ամեն տեղ մարդիկ կը տառապին, քանի որ չեն հասկնար իշխանութեան համար Աստուծոյ ձեւը եւ նպատակը: Մենք չենք անդրադառնար, որ Աստուած կը գործածէ ղեկավարները, թէ՛ լաւերը եւ թէ՛ վատերը, մեր մեջէն լաւագոյնը դուրս բերելու համար եւ զարգացնելու, սնուցանելու եւ ձեւի բերելու համար մեր նկարագիրը, որպէսզի կարենանք ոտքի կենալ եւ ծառայել: Երբ կը հասկնանք, թէ Աստուած ինչպէս ստեղծած է մեզ իշխանութեան հետ կապակցութեան մեջ ապրելու համար, մենք մեզ կը դիրքաւորենք այնպէս մը, որ ունենանք խաղաղութիւն, պաշտպանութիւն եւ մատակարարում՝ անկախ անկէ թէ մեր ղեկավարները ինչ կ'ընեն կամ չեն ըներ:

Աստուծոյ հետ կոչումդ կամ ապագայ քու առջեւդ է: Երբ հնազանդութիւն կ'ընտրես քու վրադ եղող իշխանութիւններուն հանդէպ, կ'ընտրես Աստուծոմով իրականացնել եւ կատարել Աստուծոյ կողմէ քեզի համար սահմանուած կոչումը:

Այս գիրքը նուէր է քեզի: Կը խնդրեմ, որ ազատ զգաս բաժնեկցելու այս գիրքի պարունակութիւնը ուրիշ հաւատացեալներու հետ, որոնք կրնան կարիքը ունենալ նոյն քաջալերանքին: Կը խնդրեմ, որ նաեւ այցելես **MessengerX.com**՝ ներբեռնելու եւ սերտելու համար շատ մը ուրիշ կեանք փոխող աղբիւրներ քու լեզուովդ:

Կ'աղօթեմ, որ դուն եւ ես ըլլանք անոնցմէ, որոնք կը կատարեն մեր հիանալի Տիրոջ փառք բերելու յանձնարարութիւնը...

Ձեր եղբայրը Քրիստոսի մէջ՝



Ճոն
JohnBevere@ymail.com



ԾԱԾԿՈՅԹԻ ՏԱԿ

ԻՆՉՈՒ ԴԵԿԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ ԿԵՑՈՒԱԾԵՂ
ԿՈՐՈՇԵ ԱՊԱԳԱԴ

ԵՆՆ ՊԸՎԻՐ

Under Cover, by John P. Bevere, Western Armenian
© 2023 Messenger International
MessengerInternational.org
Originally published in English as Under Cover

Additional resources in Western Armenian by John and Lisa Bevere are available for free download and video streaming at **MessengerX.com** and on the **MessengerX** App

To contact the Author: JohnBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is NOT FOR SALE

«Ծածկոյթի Տակ», ճոն Դըվիր, արեւմտահայերէն
© 2023 Messenger International
MessengerInternational.org
Սկզբնապէս հրատարակուած է անգլերէն լեզուով՝ «Under Cover» վերնագիրով

Յաւելեալ նիւթեր արեւմտահայերէնով հասանելի են անվճար ներբեռնման եւ հոսքային հեռարձակման համար **MessengerX.com** կայքին մէջ եւ **MessengerX** յաւելուածին մէջ:

Հեղինակին հետ կապ հաստատելու համար՝ JohnBevere@ymail.com Այս գիրքը նուէր է «Messenger International» Առաքելութեան կողմէ եւ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ



App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որ արձանագրուած է ԱՄՆ-ի եւ այլ երկիրներու մէջ:

Google Play-ը եւ Google Play-ի պատկերանիշը Google LLC-ի ապրանքանիշերն են:

Այս գիրքը կը նուիրեմ առաջնեկ որդիիս՝
Ատիսըն Տէյվիտ Պըվիրին:

«Իմաստուն որդին իր հայրը կ'ուրախացնէ»

– ԱՌԱԿՆԵՐՈՒ 10:11

Քու անունդ կը նշանակէ՝ «Սիրելի մը,
որ արժանի է վստահութեան»:

Դուն մինչեւ հիմա վստահաբար այդ անունին
համաձայն ապրած ես եւ քալած ես այս գիրքի
պատուէրներուն համաձայն:

Թող ժառանգես Աստուծոյ ամէնէն հարուստ
օրհնութիւնները եւ խոստումները
եւ թող Աստուած շարունակէ իր երեսը
պայծառացնել քու վրայ:

Թող ապրիս երկար եւ բարգաւաճիս կեանքի մէջ:
Մայրդ եւ ես կը սիրենք քեզ եւ օրհնուած ենք քեզ
իբրեւ մեր զաւակը ունենալնու համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ. ԾԱՆՕԹԱՅՈՒՄ «ԾԱԾԿՈՅԹԻ ՏԱԿ»Ի

1. Աստուծոյ Պաշտպանութիւնը. 1
2. Դժուար է Ապարդիւն Կերպով Պայքարիլ
Բանի մը Դէմ 11

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ. ԱՍՏՈՒԾՈՅ ՈՒՂՂԱԿԻ ԾԱԾԿՈՅԹԸ

3. Մեղքի Սահմանումը 33
4. Անօրէնութեան Գաղտնի Ոյժը 49
5. Անհնազանդութեան Հետեւանքները Ա. 71
6. Անհնազանդութեան Հետեւանքները Բ. 85
7. Կախարդուած. 107

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ. ԱՍՏՈՒԾՈՅ ՆՇԱՆԱԿԱԾ ԾԱԾԿՈՅԹԸ

8. Աստուած Գիտէ, թէ Ո՛վ է Ղեկավարը 129
9. Պատուէ Թագաւորը 151
10. Կրկնակի Պատիւ 173

11. Հնազանդություն եւ Ենթարկում	201
12. Հապա Եթէ Իշխանությունը Ինձի Ըսէ...	221
13. Անարդար Վարմունք	247
14. Ինքզինք Դատապարտութեան Տակ Դնել	275
15. Մէկ	301
16. Հակառակություններ եւ Վերջաւորություններ	323
17. Մեծ Հաւատք	349
18. Եզրակացություն	373
<i>Քննարկումի Հարցումներ</i>	<i>377</i>

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ



**ԾԱՆՕԹԱՅՈՒՄ
«ԾԱԾԿՈՅԹԻ ՏԱԿ»Ի**

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

*Յաճախ ցաւ պատճառող բառերն են եւ ոչ
մեղմ բառերը, որոնք վերջաւորութեան
կը բերեն մեծագոյն ազատութիւնը եւ
պաշտպանութիւնը:*

Ծածկոյթի տակ: Այս եզրը կրնայ կիրարկուիլ մեծ թիւով կացութիւններու մէջ: Իր ամէնէն պարզ ձեւին մէջ անիկա կրնայ նկարագրել պզտիկ մանուկ մը ծածկոցի մը ջերմութեան եւ պաշտպանութեան տակ կամ վտանգաւոր կացութեան մը պարագային՝ ծնողի մը պաշտպանող կազմին տակ: Քաղաքացիական նկարագրութիւն մը կրնայ ըլլալ՝ քաղաք մը ոստիկանութեան կամ զինուորութեան պաշտպանութեան տակ: Անիկա կրնայ նկարագրել անասունի մը թաւուտի մը, քարայրի մը կամ ստորերկրեայ ապաստանարանի մը մէջ պահուրտիլը: Կամ կրնայ նկարագրել ընտանիք մը, որ կը վայելէ ապաստանը եւ ապահովութիւնը իր տան մինչ դուրսը փոթորիկը կը գոռայ:

Մանուկ հասակիս կը յիշեմ, որ կ'ապրէինք շրջանի մը մէջ, ուր յաճախ փոթորիկներ կ'ըլլային: Մեր մեծ պատուհաններէն կը դիտէինք ինչպէս մութ ամպերը կը գլորուէին դէպի մեր կողմը՝ հեռուն լսուող որոտումներու աղմուկին ընկերակցութեամբ: Միայն վայրկեաններ ետք փոթորիկը մեզի կը հասնէր իր ամբողջական զօրութեամբ: Կայծակներու շողումներուն անմիջապէս կը յաջորդէին որոտումներու պայթումները: Անձրեւի ձայնը նման էր մեր տան կտուրին վրայ հարիւրաւոր փոքր մուրճերու զարկերուն: Փոթորիկը իրականութեան մէջ մեր տունը աւելի ես ապահով եւ անվտանգ կը զգացնէր ինձի: Պատուհանէն դուրս ամէն բան թաց էր, պաղ եւ կայծակի հարուածներու զոհ երթալու վտանգին տակ: Սակայն տունէն ներս մենք ապահով էինք եւ չոր՝ փոթորիկին դաժանութենէն պաշտպանուած մեր կտուրով: Մենք ծածկոյթի տակ էինք:

Այս կէտը աւելի զարգացնելով, ըսեմ, որ կարելի է անգլերէնի մէջ «ծածկոյթի տակ» նշանակող այդ երկու անջատ բառերը՝ *անտրըր* եւ *քաւըր*, միացնել եւ յառաջ բերել ուրիշ եզր մը՝ *անտրըրքաւըր*: Այդ բառը կը նկարագրէ ծածկուած ինքնութիւններու մէջ գտնուող ապահովութիւնը: *Անտրըրքաւըր* կամ իր ինքնութիւնը ծածկած գործակալ մը կրնայ աւելի ազատօրէն շարժիլ՝ առանց նկատուելու կամ բռնուելու իր թշնամիին կողմէ: Իր կառավարութիւնը իրեն տուած է ծածկանուն մը եւ ան ազատ գործակալ մըն է թշնամիին տարածքին մէջ: Այլ խօսքով, անկախ անկէ, թէ ինչ ձեւով կը գործածենք այդ բառը կամ եզրը՝ իր ընդարձակ իմաստներով, անոնց բոլորին մէջ ալ կան *պաշտպանութեան* եւ *ազատութեան* գաղափարները:

Բայց այդ եզրը՝ *ծածկոյթի տակ*, ինչ իմաստ կրնայ ունենալ Քրիստոնեաներուն համար: Դաւիթ կը գրէ. «*Ամենաբարձրին ծածկոյթին տակ բնակողը՝ Ամենակարողին հովանիին տակ պիտի հանգչի: Տէրոջ համար պիտի ըսեմ. “Իմ ապաւէնս*

ու բերդս է, իմ Աստուածս՝ որուն կը վստահիմ» (Սղ 91.1-2, շեշտադրումը՝ մեր կողմէ): Դարձեալ պաշտպանութիւն կը տեսնենք անոնց համար, որոնք Իր ծածկոյթին տակն են: Սակայն այդ համարի անգլերէն տարբերակին առաջին երկու բառերուն մէջ՝ «Ան որ...», կը գտնենք այն շատ կարեւոր հարցումը. Ո՞վ Աստուծոյ ծածկոյթին տակ է: Այն գիրքը, որ բռնած ես ձեռքերուդ մէջ փնտռուածն է այդ հարցումի այնքան կարեւոր պատասխանին: Կարճ ձեռով ըսելու համար, ծածկոյթի տակ եղողը ան է, որ Աստուծոյ իշխանութեան տակն է:

Ադամ եւ Եան ազատութիւն եւ պաշտպանութիւն կը վայելէին պարտէզին մէջ Աստուծոյ ծածկոյթին տակ: Սակայն այն պահուն, որ անհնազանդութիւն գործեցին իրենք զիրենք գտան կարիքին մէջ ճիշդ այն բանին, որուն տակէն սահէրելը էին... անոնք կարիքը զգացին «իրենք զիրենք ծածկելու» (տես Ծն 3.7): Աստուծոյ իշխանութեան նկատմամբ անոնց անհնազանդութիւնը մարդկութիւնը կողոպտեց այն քաղցր ազատութենէն եւ պաշտպանութենէն, որ ժամանակին ունէին:

Եկէք անկեղծ ըլլանք: *Իշխանութիւնը* շատ սիրուած բառ մը չէ: Սակայն զանիկա մերժելով կամ անկէ վախնալով, չենք տեսներ այն մեծ պաշտպանութիւնը եւ օգուտները, զորս իշխանութիւնը կը հայթայթէ: Մենք կը սարսռանք, որովհետեւ անիկա չենք տեսներ Աստուծոյ տեսակէտէն: Շատ յաճախ իշխանութեան նկատմամբ մեր կեցուածքը ինձի կը յիշեցնէ դէպք մը, որ պատահեցաւ երրորդ որդիիս հետ:

Երբ Ալեքը առաջին դասարան եղաւ, ան վատ փորձառութիւն մը ունեցաւ իր ուսուցչուհիին հետ: Ուսուցչուհին շարունակ ջղային կերպով կը վարուէր դասարանին հետ. խոժոռ եւ հակակշիռէ դուրս՝ յաճախ կը պոռար-կը կանչէր աշակերտներուն: Ալեքը շատ յաճախ կ'ըլլար թիրախը ուսուցչուհիին այդ պոռթկումներուն, որովհետեւ Ալեքը ստեղծագործ եւ վառվռուն տղայ մըն էր, որ կը նախընտրէր

խօսիլ քան հանդարտ ըլլալ: Անոր համար դպրոցը սքանչելի ընկերային հաւաք մըն էր: Պէտք չկայ ըսելու, որ դպրոցին նկատմամբ իր մօտեցումը բախում կ'ունենար ուսուցչուհիին անհատականութեան եւ անհամբերութեան հետ:

Շատ անգամ կինս եւ ես ուսուցչուհիին սենեակը այցելեցինք՝ խորհրդակցութեան համար: Գործակցեցանք ուսուցչուհիին հետ՝ քաջալերելով Ալեքը, որ ենթարկուի անոր օրէնքներուն եւ համագործակցի, բայց այդ ամբողջ ճնշում պատճառով գործընթացը արգելք եղաւ ակադեմական կառոյցի մը մէջ ուսում առնելու անոր սիրոյն:

Ապա մենք փոխադրուեցանք ուրիշ նահանգ մը, եւ Ալեքը եղաւ երկրորդ դասարան: Ան ունեցաւ շատ տարբեր ուսուցչուհի մը, որ գրեթէ չափէն աւելի ազնիւ էր եւ չափազանց ուշադիր իր աշակերտներուն ուրախութեան: Ան Ալեքը շատ սիրեց, իսկ Ալեքը՝ իր ունեցած նախկին փորձառութեան լոյսին տակ, հաւանաբար սիրահարուեցաւ ուսուցչուհիին: Բայց Ալեքը գրեթէ ինչ որ կ'ուզէր՝ կ'ընէր եւ շատ քիչ բան կը սորվէր: Ան սկսաւ ձախողութիւններ ունենալ ակադեմական գետնի վրայ, ուստի զայն դրինք անկախ դպրոց մը (*չարթըր սքուլ*), ուր մեծ շեշտ կը դնէին ակադեմական արդիւնքներուն վրայ:

Հոն ան կորսուած զգաց եւ յուսալքուեցաւ: Կը գտնուէր պզտիկներու հետ, որոնք ակադեմական բացառիկ արդիւնքներ բերած էին իրենց ուսումնական առաջին երկու տարիներուն: Ալեքը դրուեցաւ շատ աղուոր, ազնիւ, բայց խիստ ուսուցիչի մը հովանաւորութեան տակ: Շուտով մէջտեղ ելաւ, որ ակադեմական առումով ան միւս աշակերտներէն ետ էր: Դարձեալ, իր ուսուցիչին հետ կ'ունենայինք յաճախակի հանդիպումներ, որոնք այս անգամ արդիւնաւէտ էին: Լիսան եւ ես աւելի մօտէն սկսանք հետեւիլ Ալեքի աշխատանքին:

Ամբողջ օրդ դպրոցը անցընելը եւ ապա գիշերը տան մէջ շարունակ ծնողներուդ ուշադրութեան տակ ըլլալը կրնայ

ճնշիչ ըլլալ: Շատ անգամ Ալեքը պարզապէս կ'անջատուէր կամ կը դադրէր աշխատելէ: Ան յաճախ կու լար, որովհետեւ կը զգար, որ կը խեղդուէր, հակառակ անոր որ իրականութեան մէջ յառաջխաղացք կ'արձանագրէր:

Օր մը այլեւս գաւաթը լեցուեցաւ զգացական իմաստով: Եղբայրները կ'երթային դպրոցին կազմակերպած *ռոլլըր սքէյթի* հաւաքոյթին, բայց ինք պէտք էր տունը մնար՝ լրացնելու համար պարտականութիւն մը, զոր դարակին մէջ պահած էր եւ չէր ըրած դասարանին մէջ: Ան հաճելի ժամանցէ կը զրկուէր՝ ուսուցիչին տուած շատ աշխատանքին պատճառով: Ան միայն կու լար: Նորէն պէտքը կար հայր-որդի խօսակցութեան մը: Քանի մը բառ խօսելէ ետք, դիւրութեամբ կրցայ տեսնել, թէ հարցը ինչ էր: Անոր աչքին այդ բոլորը բացարձակապէս անյոյս էին: Յուսախաբութեան արցունքները կը շարունակէին հոսիլ, եւ ան պարզապէս չէր լսեր, թէ իր հայրը ինչ կ'ըսէր: Պահ մը լռեցինք երբ երկուքս ալ այլեւս ըսելիք չէինք գտներ: Ան պարզապէս գլուխը ծռած՝ կու լար:

Բնաւ չեմ մոռնար ատկէ ետք պատահածը: Ան շտկուեցաւ, ինքզինք գտաւ չափով մը եւ սրբեց երեսն ի վար հոսող արցունքները: Ապա նայեցաւ ինծի՝ իր քաղցր սրճագոյն աչքերով, որոնց մէջ նոր ինքնավստահութիւն մը կար: Ըստ երեւոյթին միտքին մէջ լուսաւորուած էր գաղափար մը, որ պիտի լուծէր իր հարցերը եւ սրբէր իր արցունքները: Ան շտկուեցաւ, թեւերը ծալլեց կուրծքին վրայ եւ լուրջ ձայնով մը ըսաւ. «Հայրիկ, կ'ուզեմ քեզի բան մը ըսել: Գիտե՞ս իմ դասարանիս ճեսիքան... ան բժիշկներու չի հաւատար»: Ապա պահ մը վարանելէ ետք, ըսաւ. «Հայրիկ, ես ալ ուսուցիչներն չեմ հաւատար»:

Դժուար էր ինծի համար այդ պահուն չժպտալը կամ չխնդալը: Ան իրապէս զարմացուց զիս: Ան շարունակեց. «Եթէ իմ դասարանիս ճեսիքան չի հաւատար բժիշկներու, ես

ալ ուսուցիչներու պիտի չհաւատամ»: Այլեւս չկրցայ խնդուքս զսպել: Եթէ ան ատիկա ըսած ըլլար յուսախաբութեամբ, ծիծաղելի պիտի չըլլար ինծի համար: Հարցը անոր ոճն էր: Ան իրապէս համոզուած էր, որ կ'ընէր նոր յայտնութիւն մը, որ կրնար լուծել իր բոլոր հարցերը: Ան դատարանի մը մէջ վկայութիւն տուողի մը չափ լուրջ էր:

Անշուշտ ես այդ առիթը գործածեցի իրեն բացատրելու, թէ ո՛ր կրնար ըլլալ ինք եթէ ուսուցիչներ չունենար: Իրեն պատմեցի, թէ ի՞նչ էր վիճակը Անկոլայի մէջ, Ափրիկէ, որ այցելած էի նախորդ տարին՝ սովի մէջ եղող մանուկները կերակրելու կայարաններու մէջ աշխատելու համար: Ըսի, թէ՛ այդ պզտիկները ինչ պիտի չտային Ալեքսանտրին տեղը ըլլալու համար: Անոնք առանց վարանելու պիտի յափշտակէին սորվելու որեւէ առիթ, քանի որ գիտէին, թէ անիկա ճիշտ կարեւոր էր իրենց համար՝ օր մը իրենց ընտանիքներուն ապրուստը ապահովելու համար: Իմ երկար բացատրութենէս ետք, ան դժկամութեամբ հրաժարեցաւ իր նոր յայտնաբերած փիլիսոփայութենէն եւ վերադարձաւ խոհանոցի սեղան՝ իր կուտակուած աշխատանքը նուաճելու համար:

Յառաջիկայ քանի մը շաբաթներուն շարունակ կը մտածէի որդիիս հետ այդ խօսակցութեանս մասին, եւ չէի կրնար զուգահեռներ չգծել անոր եւ կարգ մը մարդոց իշխանութեան նայելու ձեւին միջեւ: Շատ յաճախ իշխանութեան հետ տհաճ փորձառութիւններու պատմութիւն մը կայ հոն. ոմանց համար այն է, որ իրենց վրայ եղող առաջնորդները անպէտք կերպով կոպիտ են, ուրիշներու համար, ինչպէս Ալեքսանտրին, իրենց յուսախաբութիւնը պատճառ եղած է, որ իշխանութիւնները տեսնեն իբրեւ արգելքներ իրենց հաճոյքին կամ, ըստ իրենց, իրենց համար լաւագոյնին դիմաց, մինչ իրականութեան մէջ անոնք լաւ առաջնորդներ են եւ իշխանութիւն ունին իրենց վրայ: Բայց մեղմ կեցուածք մը զարգացած կ'ըլլայ անոնց մէջ այդ անախորժ փորձառութիւններուն պատճառով.

Ես պարզապէս չեմ հաւատար իշխանութեան, կամ աւելի չափահասի վայել բառերու մէջ դնելով, ես պարզապէս պիտի չենթարկուիմ իշխանութիւններուն բացի եթէ նախ համաձայն գտնուիմ անոնց հետ:

Բայց ինչ է Աստուծոյ տեսակէտը այս բոլորին նկատմամբ: Մեզմէ կը պահանջուի, որ իշխանութիւններուն ենթարկուինք նոյնիսկ եթէ անոնք անարդար են: Հապա եթէ փտած են: Հապա եթէ մեզմէ ուզեն, որ ընենք բաներ, զորս սխալ կը համարենք: Հապա եթէ մեզմէ ուզեն, որ մեղք գործենք: Ո՞ր պէտք է քաջուի գիծը: Առաւել, ինչո՞ւ պէտք է ենթարկուինք: Ենթարկուելու մէջ մեզի համար օգուտներ կան: Չենք կրնար բոլորս ալ պարզապէս Աստուծոյ Հոգիով առաջնորդուիլ:

Աստուծոյ Խօսքը որոշակի պատասխաններ ունի այդ բոլոր հարցումներուն համար: Կը հաւատամ, որ ասիկա ամէնէն կարելոր գիրքերէն մէկն է, որ Տէրը յանձնարարած է ինծի, որ գրեմ, որովհետեւ անիկա կը խօսի ներկայիս իրենց կեանքին մէջ մարդոց ունեցած շատ մը դժուարութիւններուն արմատը եղող պատճառին մասին: Ինչն էր պատճառը Արուսեակի իյնալուն: Ըմբոստութիւնը: Ինչն էր պատճառը Ադամի իյնալուն: Ըմբոստութիւնը: Ինչն է, որ պատճառ կ'ըլլայ, որ շատեր շեղին Աստուծոյ հետ իրենց քալած ճամբայէն: Ըմբոստութիւնը: Սթափեցնող իրականութիւնը այն է, որ ըմբոստութիւնը ընդհանրապէս բացայայտ չէ, այլ՝ աննկատ:

Այս գիրքին մէջ կը բաժնեկցիմ օրինակներ իմ սեփական ձախողութիւններուս մասին: Ես իշխանութեան ծարաւը ունեցող առաջնորդ մը չեմ, որ կը փափաքի իր ոչխարները, իր անձնակազմը կամ ընտանիքը բռնի ոյժով կամ քննադատութիւններով իրեն ենթարկել: Ես ունիմ հիանալի ծառայութեան խումբ մը եւ ընտանիք մը: Եւ ես տեղական եկեղեցիի մը հովիւը չեմ: Ուստի կը գրեմ իբրեւ մարդ մը, որ գործած է շատ մը սխալներ, կամ աւելի

ճշգրիտ կերպով ըսելով՝ մեղքեր: Ես ծառայած եմ երկու միջազգային Քրիստոնէական կազմակերպութիւններու մէջ 1980-ականներուն, եւ այդ փորձառութիւններէս կը քաղեմ իմ սխալելու օրինակներս: Ամէնէն սթափեցնող իրականութիւնը իւրաքանչիւր պատահարի մասին այն է, որ օրին ամբողջ սիրտովս կը հաւատայի, որ ճիշդ էի, մինչ իրականութեան մէջ սխալ էի: Ես շատ երախտապարտ եմ մեր Տիրոջ, որ Իր Խօսքը մէջտեղ հանեց իմ շարժառիթներս:

Սիրտիս փափաքն է, որ դուն սորվիս իմ դժուարութիւններէս եւ խուսափիս նոյն սխալները գործելէն: Կ'աղօթեմ, որ թելադրանքներ քաղես եւ բարեպաշտ ներըմբռնումներ ունենաս իմ անմտութիւններէս, եւ քաղես անոնց օգուտները: Իմ այդ փորձառութիւններէս եւ անոնց ընթացքին ինձի յայտնուած ճշմարտութիւններէն իմ սորվածներս թէ՛ շահաւէտ էին եւ թէ՛ հիանալի: Ապաշխարութեամբ ունեցայ ապահովութիւն եւ մատակարարում:

Կը հաւատամ, որ նոյնը կրնայ պատահիլ քեզի: Մինչ կը կարդաս այս գիրքին մէջ տեղ գտած աստուածաշնչական եւ անձնական օրինակները, սիրտիդ մէջ ալ լոյս պիտի ծագի: Կարգ մը կէտեր պիտի ամրապնդեն կամ հաստատեն այն ինչ որ արդէն իսկ գիտես, մինչ ուրիշներ պիտի ազատագրեն քեզ: Երկու պարագաներուն ալ կ'աղօթեմ, որ Իր Խօսքը ընդունիս հեզութեամբ, որովհետեւ իրապէս աստիկա է սիրտիս փափաքը:

Երբ ճշմարտութիւնը մեր առջեւ կ'ելլէ, մենք կրնանք երկու կեցուածք ունենալ անոր հանդէպ: Կրնանք բարկանալ եւ պաշտպանողական ըլլալ, ինչպէս Ադամի որդին Կայէն եղաւ, եւ մերժել այն յայտնութիւնը, որուն պէտք ունինք (կարդա՛ Ծն 4): Կամ կրնանք ըլլալ համեստ եւ կոտրած, ինչպէս Դաւիթ եղաւ երբ Նաթան ճշմարտութիւնը երեսին ըսաւ, արտօնելով, որ ցաւը եւ ապաշխարութիւնը մեզ բարձրացնեն

բարեպաշտ նկարագրի մէկ ուրիշ մակարդակի (կարդա՛ Բ.Թգ 12): Եկէք Դաւիթի սիրտը ունենանք այս հարցին մէջ եւ մերժենք հպարտութիւնը, որ պիտի ջանայ մեզ ետ պահել մատակարարումի եւ պաշտպանութեան Աստուծոյ ծրագիրէն:

Մինչ կը սկսիս այս ճամբորդութեան, յիշէ՛, որ յաճախ ցաւ պատճառող խօսքերը, ոչ թէ նուրբ խօսքերը, վերջաւորութեան մեծագոյն ազատութիւնը եւ պաշտպանութիւնը կը բերեն մեզի: Երբ մանուկ էի, ճիշդ նախքան որ երկրորդ դասարանի պատուաստս առնէի, ընկերներէս մէկը ըսաւ, թէ հրքան պիտի ցաւէր: Ատիկա լսելէս ետք, ամէն գնով կ'ուզէի խուսափիլ այդ սրսկումէն: Դէմ դրի երկու հիւանդապահուիչներու մինչեւ որ վերջապէս տեղի տուին: Յետոյ ծնողներս նստեցուցին զիս եւ բացատրեցին, թէ ինչ կրնար պատահիլ եթէ չառնէի թոքախտի պատուաստը: Ես արդէն ականատես եղած էի քրոջս քաղցկեղի պատճառով մահանալուն, ուստի գիտէի, որ անոնք զիս պաշտպանել կ'ուզէին միայն: Գիտէի, որ սրսկումը ցաւ պիտի պատճառէր, բայց անիկա ինծի պիտի պաշտպանէր ասելի մեծ ցաւերէ եթէ սոսկալի եւ հաւանաբար նաեւ մահացու այդ հիւանդութեամբ հիւանդանայի: Երբ հասկցայ, իմ կամքովս վերադարձայ սրսկումը ստանալու:

Յիշէ՛ այս օրինակը երբ Աստուծոյ խօսքին մէջ կը հանդիպիս որեւէ անհանգստացնող կամ նոյնիսկ ցաւալի, դիմադրողականութիւն զօրացնող ճշմարտութիւններու: Գիտցիր, որ Երկնաւոր Հօրդ ձեւերը կատարեալ են, եւ այն ինչ որ ներկային մէջ կը թուի ըլլալ վնասակար կամ ցաւալի, իրականութեան մէջ քեզ պիտի դնէ Իր պաշտպանութեան եւ օրինութեան տակ կամ ուրիշի փրկութեան պատճառ ըլլալու դիրքին մէջ: Երբեք մի՛ մոռնար, որ Իր սէրը մեզի հանդէպ մաքուր է, ամբողջական եւ յաւիտենական:

Նախքան որ սկսիսք մեր ճամբորդութիւնը, եկէք աղօթենք.

Երկնաւոր Հայր, իմ ներքին անձիս մէջ ճշմարտութիւն կը փափաքիմ աւելի քան հանգիստ կամ հաճոյք: Ուստի իմ սիրտս եւ հոգիս կը դնեմ ձեռքերուդ մէջ, գիտնալով, որ Քու ձեւերդ կարարեալ են: Դուն զիս այնքան կը սիրես, որ դրկեցիր Ան, որ ամէնէն աւելի կարեւոր էր Քեզի համար՝ Քու Որդիդ, Յիսուսը, որ մեռնի ինծի համար, որպէսզի ես յաւիտենական կեանքը ունենամ: Եթէ Դուն զիս այդքան կը սիրես, վստահաբար կ'ուզես ամբողջացնել այն գործը, որ սկսած ես կեանքիս մէջ: Մինչ կը կարդամ այս գիրքը, կը խնդրեմ, որ խօսիս ինծի Քու Հոգիովդ եւ ցոյց տաս կեանքիս համար Քու փափաքած ձեւերդ: Բաց աչքերս, որ տեսնեմ եւ ականջներս, որ լսեմ Քու Խօսքդ: Յայտնաբերէ Յիսուսը ինծի աւելի մեծ ձեւով քան երբեւէ տեսած եմ զԻնք: Կանխաւ շնորհակալութիւն կը յայտնեմ այն բաներուն համար, որ պիտի ընես իմ մէջս այս գիրքին մէջ Քու խօսքիդ միջոցաւ: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԴԺՈՒԱՐ Է ԱՊԱՐԴԻՒՆ ԿԵՐՊՈՎ ՊԱՅՔԱՐԻԼ ԲԱՆԻ ՄԸ ԴԷՄ

Դժուար է թագաւորութեան սկզբունքները հասկնալ ժողովրդավարական մտայնութեամբ:

Մարտահրաւեր մը կայ հիմա իմ առջեւ: Մարտահրաւեր մը, որ անկարելի պիտի ըլլայ յանձն առնել առանց Աստուծոյ շնորհքին: Իմ մարտահրաւերս է փորձել իշխանութեան մասին ուսուցանել աշխարհի մը մէջ, ուր օրէ օր աւելի կը շատնայ անօրէնութիւնը: Հետեւաբար այս գիրքին մէջ գրածներէս շատ մը բաներ հակառակ պիտի թուին կամ պիտի դիմադրեն մեր ընկերութեան բանական գործընթացներուն: Շատ մը ձեւերով մեր միտքերը ծրագրուած են մտածելու մեր այս գիրքին մէջ արծարծելիք հիմնական ճշմարտութիւններէն տարբեր ձեւով: Սակայն ատիկա ուղղակի մարտավարութիւնն է Սատանային, որ թշնամին է մեր հոգիներուն: Ան մեզ

հրապուրելով կ'առաջնորդէ կապանքներու՝ չարը փափաքելի եւ լաւ թուացնելով մեզի, իսկ ազատագրող եւ սուրբ բաները ներկայացնելով իբրեւ կապանք:

Այդպէս ալ սկսաւ ամէն բան: Յիշէ՛ Պարտէզը. Սատանային մեթոտը շատ յաջող էր, եւ ան անիկա չէ փոխաժ մինչեւ այսօր: Ատոր համար Աստուածաշունչը մեզի կը զգուշացնէ. «Մի՛ մոլորիք [կամ խաբուիք], սիրելի եղբայրներս» (Յկ 1.16)¹: Առաւել, «Այս աշխարհի մարդոց վարմունքը մի՛ ընդօրինակէք, այլ՝ նորոգուած միտքերով նոր մարդ եղէք, որպէսզի ձեր փորձառութեամբ ընտրէք լաւը, գիտնալով Աստուծոյ կամքը, այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է իրեն եւ կատարեալ» (Հռ 12.2):

Իմ փորձառութեանս համաձայն, արեւմուտքցիները Աստուծոյ Խօսքը լսելու ամէնէն ասելի դէմ դնող մարդիկն են: Պատճառը կարելոր է: Դժուար է թագաւորութեան սկզբունքները հասկնալ ժողովրդավարական մտայնութեամբ: Ժողովրդավարութիւնը լաւ է աշխարհի վրայ գոյութիւն ունեցող երկիրներուն համար, բայց պէտք է յիշենք, որ Աստուծոյ Թագաւորութիւնը ճիշդ այդ է. թագաւորութիւն մը: Անոր վրայ կ'իշխէ Թագաւոր մը, եւ թագաւորութիւններու մէջ գոյութիւն կ'ունենան՝ կարգ կամ աստիճան, կարգ-կանոն եւ իշխանութիւն: Աստուծոյ Թագաւորութեան օրէնքները չեղեալ չեն համարուիր հանրային կարծիքին, քուէարկութեան կամ մարդոց կարծիքներուն միջոցաւ ոչ ալ ենթակայ են անոնց: Օրէնքները այս կամ այն կողմ չեն ծոիր պարզապէս որովհետեւ բան մը մեզի համար լաւ կամ օգտակար կը համարենք, ինչպէս Սատանան այդքան խորամանկօրէն խաբեց Եան, որ մտածէ, թէ կարելի է: Հետեալբար ճիշդ ինչպէս Սամուէլ «թագաւորութեան կանոնները ժողովուրդին հաղորդեց, զանոնք գիրքի մը մէջ գրեց» (Ա.Թգ 10.25),

¹ Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

նոյնպէս ալ մենք այսօր պէտք է սորվինք Թագաւորութեան սկզբունքները, քանի որ մեր ընկերութիւնը մեզ չի վարժեցնէր Թագաւորութեան ձեւերով ապրիլ:

Եթէ փորձենք հաւատացեալի կեանք ապրիլ բայց իշխանութեան նկատմամբ ունենանք այն մտայնութիւնը, որ մեր մշակոյթը մեր մէջը շինած է, լաւագոյն պարագայի պիտի ըլլանք անազդու, իսկ յոռեգոյն պարագայի՝ վտանգի մէջ: Մեր մատակարարումը ինչպէս նաեւ պաշտպանութիւնը կրնան խափանուիլ կամ նոյնիսկ կտրուիլ երբ մենք մեր կապը կը կտրենք ճշմարիտ կեանքի Աղբիւրէն: Կը նմանի անոր, որ դուռն կեանքի մէջ *պէյսպոլ* կը խաղաս մինչ Աստուած *ֆութպոլի* ախոյանութիւն մը կը ղեկավարէ: Ատիկա կրնանք նմանցնել նաեւ ելեկտրական գործիք մը գործածել փորձելուն առանց ելեկտրականութեան աղբիւրի մը կապելու զանիկա:

Այսօր շատ յաճախ երբ չենք համաձայնիր իշխանութեան հետ, կրնանք մեր ընդդիմութիւնը յայտնի դարձնել զանգատ կամ բողոք ներկայացնելու միջոցաւ: Վերջապէս, կառավարութիւնը պէտք է ըլլայ «ժողովուրդէն, ժողովուրդին կողմէ, ժողովուրդին համար», չէ՞: Այս եւ այլ ժողովրդավարական մտայնութիւններ կաթիլ կաթիլ թափանցած են մեր Քրիստոնէութեան մէջ եւ շատերը առաջնորդած ինքնակառավարումի խաբուսիկ ուղին ի վար: Որքան ատելի կը քալեն այդ ճամբան ի վար այդքան ատելի անդին կ'անցնին իշխանութեան դէմ իրենց ընդդիմութիւնը յայտնելէն՝ հասնելով բացէ ի բաց դէմ ղնելու անոր: Ապա կան անոնք, որոնք ատելի մեծ աստիճանի արհամարհանք զարգացուցած են իշխանութեան դէմ, եւ ասիկա կ'արտայայտեն անոր գոյութիւնը ամբողջութեամբ անտեսելով: Այդպէս ընելով անոնք ցոյց կու տան, որ իրենց մէջ Աստուծոյ վախը բոլորովին կորսուած է:

Բայց այդ մօտեցումներէն ոչ մէկը մեզի պիտի բերէ մեր փնտռած ազատութիւնը: Որովհետեւ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ.

Եթէ անոնք հնազանդելով՝ զինք պաշտեն, Իրենց օրերը բարօրութեամբ պիտի աւարտեն, եւ տարիները՝ հաճոյքով: Բայց եթէ անոնք չհնազանդին՝ թուրով պիտի անհետանան, Առանց գիտնալու իրենց շունչը պիտի տան: (Յոր 36.11-12)

«Զինք»ը նոյնինքն Աստուած է: Նկատի առ խոստումը. մատակարարում եւ պաշտպանութիւն՝ Իր իշխանութեան ենթարկուելու փոխարէն: Նաեւ նկատի առ այն վտանգը, որուն մէջ կը դնենք մենք մեզ երբ կ'անտեսենք Անոր կառավարումը: Երբ ազատութիւն մը փնտռելով իշխանութեան դէմ կը դնենք, կը կորսնցնենք զանիկա իշխանութեան անհնազանդ ըլլալով: Կինս խօսք մը ունի, որ կ'ըսէ. «Ազատութիւն կայ ենթարկուելու մէջ, եւ կապանք՝ ըմբոստութեան մէջ»: Այդ խօսքը կ'ամփոփէ Յորի գիրքէն մեր վերը կարդացած համարները:

Ոմանք կրնան ըսել. «Ես կ'ենթարկուիմ Աստուծոյ, բայց ոչ մարդու մը, բացի երբ կը համաձայնիմ անոր հետ»: Հոս է, որ մեր դաստիարակութիւնը եւ սխալ եկեղեցական մտայնութիւնը կրնան արգելք ըլլալ մեզի: Չենք կրնար իրարմէ անջատել ինքնին Աստուծոյ իշխանութեան ենթարկուիլը Իր կողմէ յանձնարարուած իշխանութեան ենթարկուելէն: Ամէն իշխանութիւն ծնունդ կ'առնէ Աստուծմէ: Տէն Աստուածաշունչը ինչ կ'ըսէ.

«Ամէն մարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց, որովհետեւ առանց Աստուծոյ թոյլտրութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ, եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծմէ կարգուած են: Ուստի, ով որ իշխանութեանց կը հակառակի՝ Աստուծոյ հրամանին է որ հակառակած կ'ըլլայ, եւ հակառակողները իրենք զիրենք դատապարտութեան տակ կը դնեն» (Հռ 13.1-2, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Շանտ մտածելու բան կայ այս հատուածին մէջ, եւ աւելի պիտի խորանանք անոր մէջ յետագային, բայց հիմա պարզապէս կ'ուզեմ միայն կարգ մը կէտեր նշել: Առաջին, Աստուած կը նշանակէ բոլոր գոյութիւն ունեցող կառավարիչները: Ճշմարտութիւնը այն է, որ ոչ ոք կրնայ օրինական իշխանութեան դիրքի մը վրայ գտնուիլ առանց Աստուծոյ գիտութեան: Պէտք է այս գաղափարը հաստատուի մեր սիրտին մէջ: Շատերու համար դժուար է ընդունիլ այդ ճշմարտութիւնը, որովհետեւ գործ ունեցած կ'ըլլան չար, անգութ, կոպիտ կամ անպարկեշտ իշխանութիւններու հետ: Սակայն պէտք է քննենք վերի խօսքերը. մեզի կ'ըսուի, թէ *ամէն իշխանութիւն Աստուծմէ է*, եւ ոչ թէ՝ *ամէն իշխանութիւն բարեպաշտ է*: Հսկայ տարբերութիւն կայ երկուքին միջեւ, եւ մենք անոր պիտի անդրադառնանք խորունկ ձեւով:

Երկրորդ, այդ իշխանութիւններուն դէմ ըմբոստանալը ըմբոստանալ է Տիրոջ վճիռին դէմ կամ ինքնին Աստուծոյ դէմ, եւ անոնք, որոնք ատիկա կ'ընեն իրենք իրենց վրայ դատապարտութիւն կը բերեն: Պէտք է յիշենք, որ մեր Հայրը՝ որ իշխանութեան ծարաւ ղեկավար մը չէ, Ինքն է այդ բառերուն հեղինակը, որովհետեւ՝ «Աստուծոյ ներշնչումով գրուած [են] բոլոր Սուրբ գիրքերը» (Բ.Տմ 3.16): Պարզապէս որովհետեւ անոնք շրջուած են մարդուն կողմէ չի նշանակեր, որ անոնք Աստուծոյ կողմէ գրուած չեն:

Հակառակ անոր որ շատեր չեն ընդունիր, բայց իրականութեան մէջ իրենք զիրենք հաշուետու կը համարեն միայն Աստուծոյ եւ ոչ իշխանութիւններու: Անոնք, որոնք այդ ձեւով կը մտածեն բախումի ընթացքի մէջ են Անոր հետ, զոր Տէր կը կոչեն: Յիշէ՛ Յիսուսի խօսքերը Սողոսին (որ Պողոս եղաւ). «Չես կրնար խթանին աքացի զարնել» (Գրծ 9.5): Աստուածաշնչական օրերուն հողագործները խթան կը գործածէին: Ընդհանրապէս խթանը կ'ըլլար 2.5 մետր երկայնքով կաղնիի կամ ուրիշ զօրաւոր, չկտրուող փայտ

ունեցող ծառի մը ուղիղ, կեղուուած ճիւղը: Առջեւի ծայրը սուր փուշի պէս բան մը կ'ըլլար, որ կը գործածուէր հերկելու ատեն եզը խթանելու համար: Եզը վստահաբար դէմ չէր դնէր այդպիսի սուր գործիքի մը, որ կարող էր բաւական ցաւ եւ վնաս պատճառել իրեն: Հետեւաբար Պողոսի օրերուն այդ ասացուածքային արտայայտութիւնը կը գործածուէր նկարագրելու համար գերագոյն իշխանութեան դէմ դնելու փորձերուն անպտուղ կամ ապարդիւն ըլլալը:

Եթէ ուզենք այդխօսքը անելի հասկնալի դարձնել այսօրուան համար, կրնանք խթանի փոխարէն գամի օրինակը տալ: Շատ անիմաստուն եւ ցաւալի կ'ըլլայ գամի մը սուր ծայրին աքացի (կից) զարնելը: Անոնք, որոնք կը դիմադրեն Աստուծոյ իշխանութեան՝ ըլլայ ատիկա ուղակիօրէն՝ ինչպէս Պողոս կ'ընէր կամ անուղղակիօրէն՝ Անոր կարգած իշխանութեան դէմ դնելով, իրենք զիրենք պիտի գտնեն սուր գամերու աքացի զարնելու վիճակին մէջ: Շատ յաճախ ատիկա ցաւալի փորձառութիւն մը եւ դաս մը կրնայ ըլլալ մեզմէ շատերուն համար, որոնք վերջաւորութեան դժուար ձեւով կը սորվին զանիկա, ինչպէս եղաւ իմ պարագայիս:

Այն Փորձառութիւնը, որ Աչքերս Բացաւ

Խօսելով ցաւի մասին, կը յիշեմ երբ ցաւալիօրէն աչքերս բացուեցան եւ անդրադարձայ այն իրականութեան, որ կարգուած իշխանութեան դէմ դնելը իրականութեան մէջ ընդդիմանալ է Աստուծոյ իշխանութեան: Ինծի համար այդ փորձառութիւնը յաւիտենապէս դրոշմուած յիշատակ մըն է, թէ՛ գամերու աքացի զարնելը անմտութիւն է:

1980-ականներու կէսերուն պատանիներու հովիւի դիրքը առաջարկուեցաւ ինծի մեծ միջազգային եկեղեցիի մը մէջ: Աղօթելէ եւ հրաշալի հաստատում մը ստանալէ ետք, ես այդ դիրքը ընդունեցի իբրեւ Աստուծոյ կամբը:

Քիչ մը ճնշուած զգացի, քանի որ ատկէ առաջ պատանհներու հովիւ ըլլալու փորձառութիւն չէի ունեցած, բայց ինքզինքս գտայ Ամերիկայի ամէնէն արագ կերպով աճող եւ ամէնէն ազդեցիկ եկեղեցիներէն մէկուն անձնակազմին մէջ: Սկսայ լափել պատանհներու հովիւի ծառայութեան մասին գրուած գիրքեր եւ ձեռագիրքեր: Գիրքերէն մէկը գրուած էր պատանհներու աւագ հովիւին կողմէ Լուիզիանայի մէջ եկեղեցիի մը, որ պատանհներու բացառիկ ծառայութիւն մը ունէր: Քարտուղարէս խնդրեցի, որ հեռաձայնէ եւ հարցնէ եթէ կրնայի իրենց քով երթալ եւ երկու օր ժամանակ անցնել պատանհներու խումբին հետ: Առաջնորդները շատ ազնուօրէն ընդառաջեցին, եւ այցելութեանս թուականները նշանակեցին:

Հագիւ հասայ իրենց քով, զիս անմիջապէս տարին իրենց Չորեքշաբթի գիշերուայ պատանհներու հանդիպումին: Հիացած էի: Պատանհները իրենց սեփական մեծ սրահը ունէին, ուր կը բաւէր 1,500 հոգի, եւ սրահը գրեթէ ամբողջութեամբ լեցուն էր: Անոնք խաղեր չէին խաղցնէր կամ դիւրին, զիջումներով լեցուն պատգամներ չէին տար. պատգամները սրբութեան եւ զօրութեան մասին էին: Այդ բոլորին վրայ, այդ պատանհները իրապէս խանդավառ էին հոն ըլլալնուն համար: Ես հրճուած էի եւ ինքնավստահ կը զգայի, որ ճիշդ խումբը ընտրած էի՝ իրենցմէ սորվելու համար:

Յաջորդ օրը եկեղեցիին մէջ հանդիպում մը ունեցայ առաջնորդներուն հետ: Դարձեալ, չէի հաւատար տեսածներու: Անոնք պատանհներու ծառայութեան յատուկ վարչական շէնք մը ունէին, երկու լման ժամով աշխատող վարչական օգնականներ եւ չորս լման ժամով ծառայող պատանհներու հովիւներ: Ես յաջորդ երկու օրերը անցուցի չորս հովիւներուն հետ ետեւ-ետեւի ժողովներու ներկայ ըլլալով: Վիճակագրութիւնները խելքէ գլխէ վեր էին: Այդ ատեն անոնք ունէին 1,250 պատանհներ իրենց

երկրորդական վարժարանի ծառայութեան մէջ, եւ անիկա կ'աճէր ապշեցուցիչ արագութեամբ:

Չորս հովիւներէն իւրաքանչիւրը ճիշդ նոյն բանը ըսաւ ինծի: Ծառայութեան յաջողութիւնը կը պարտէին այն «հաւաքոյթներուն», որ կ'ունենային ամէն Ուրբաթ գիշեր իրենց քաղաքի տարածքին աւելի քան 150 վայրերու մէջ: Այդ հաւաքոյթները իրականութեան մէջ տուներու մէջ հաւաքուող բջիջ խումբեր էին՝ նպատակ ունենալ պատանիներու եւ երիտասարդներու փրկութիւնը:

Գաղափարը բաւական պարզ էր, բայց նաեւ խորունկ: Դժուար է չփրկուած դեռահասակները եկեղեցի բերել, բայց դիւրին է զանոնք հաւաքոյթի մը հրաւիրել: Շաբթուան ընթացքին պատանիներու խումբի իւրաքանչիւր անդամի կը քաջալերէին, որ իր դպրոցէն անձ մը զատէր եւ Ուրբաթ օրուայ հաւաքոյթին հրաւիրէր զայն: Հաւաքոյթի ատեն կերակուր կ'ուտէին, իրարու հետ կը խօսակցէին, ժամանակ կ'անցընէին եւ Քրիստոնէական երգեր մտիկ կ'ընէին: Յետոյ խումբի առաջնորդը՝ որ երկրորդական վարժարանի աշակերտ մը կամ համալսարանի ուսանող մը կ'ըլլար, կը սկսէր Աստուածաշունչի վրայ հիմնուած քննարկում մը կամ նիւթ մը, որ վերջ ի վերջոյ կը հասնէր փրկութեան պատգամին: Ատկէ ետք ան առիթ կու տար, որ հոն եղողները իրենց կեանքը Յիսուսի նուիրէին: Իբրեւ արդիւնք, մեծ թիւով առաջին անգամ հաւաքոյթին ներկայ գտնուողներ փրկութիւնը կ'ընդունէին: Անոնց մէկ կողմ կ'առնէին եւ կը խօսէին անոնց հետ ընկերութեան եւ եկեղեցիին կարեւորութեան մասին, անուններ եւ հեռաձայնի թիւեր կը փոխանակուէին եւ զանոնք կը հրաւիրէին Չորեքշաբթի գիշերուայ պատանիներու ծառայութեան:

Ես ներկայ եղայ իրենց հաւաքոյթներէն մէկուն եւ իրապէս ներշնչուեցայ երբ խումբ մը չփրկուած աշակերտներ իրենց

կեանքը Յիսուսի նուիրեցին: Վերադարձայ իմ եկեղեցիս եւ տեսածներս եւ սորվածներս բաժնեկցեցայ օգնականիս հետ: Աղօթել էտք, առաջնորդուեցանք նոյնը ընել նաեւ մեր խումբին հետ: Ես նաեւ խանդավառօրէն բաժնեկցեցայ գաղափարը աւագ հովիւին հետ երբ ինքնաշարժներու կառատան մէջ հանդիպեցանք Կիրակի օր մը պաշտամունքի ծառայութենէն ետք: Ան քաջալերեց զիս, ըսելով. «Շատ լաւ: Ըրէք այդպէս»:

Ութ Ամսուայ Ծրագրում եւ Աշխատանք

Աղօթքի ատեն Աստուած ինձի տուաւ ծրագիր մը: Անմիջապէս պիտի սկսէի ղեկավարութեան դպրոց մը՝ առաջնորդներ պատրաստելու համար: Երեքշաբթի գիշեր մը ամբողջ պատանեկան խումբին յայտարարեցի ատիկա, եւ ի ուրախութիւն ինձի, եօթանասուն պատանիներ եկան մասնակցելու ղեկավարութեան դասընթացքին յաջորդ Կիրակի առտու: Յառաջիկայ վեց ամիսներուն ես անոնց ամէն շաբաթ պիտի սորվեցնէի ղեկավարութեան սկզբունքներ, ինչպէս՝ հաւատարմութիւն, պարկեշտութիւն, նուիրում, ծառայել եւ տեսիլք:

Հինգ ամիս ետք, Տէրը նորէն խօսեցաւ ինձի աղօթքի ատեն, ըսելով. *Ընտրէ՛ ղեկավարութեան դասարանիդ երիտասարդներէն քսանչորսը, եւ անոնց համար աշակերտելու դասարան մը սկսէ՛: Անոնցմէ է, որ պիտի ընտրես հաւաքոյթները վարող կամ հիւրընկալող առաջին առաջնորդներդ:* Ես անմիջապէս սկսայ մարզել այդ առաջնորդները՝ տուներու մէջ բջիջ խումբերու առաջին հանգրուանին համար:

Յառաջիկայ երկու ամիսներուն այդ առաջնորդները սկսայ յատուկ կերպով պատրաստել տուներու մէջ տեղի ունենալիք հաւաքոյթներուն համար, եւ այդ հաւաքոյթներու

հետ կապուած տեսիլքին մասին քարոզեցի Երեքշաբթի գիշերուայ պատանհներու գլխաւոր ծառայութեան ընթացքին: Օգնական հովիւս եւ ես աշխատեցանք առաջնորդներու դասընթացքի նիւթերուն վրայ ինչպէս նաեւ շատ մը ուրիշ մանրամասնութիւններու, ինչպէս՝ հաւաքոյթներու վայրերը, քաղաքը դպրոցներու վայրերուն համաձայն բաժնելը, խումբերուն ինչ ձեւով ընդարձակուիլը եւ թէ դարձի եկողներուն ինչ ձեւով պէտք էր հետեւէինք: Մենք մեր ամէն ինչը դրինք այդ աշխատանքին մէջ՝ նպատակ ունենալով հասնիլ կորսուած հոգիներու:

Ամէն մարդ խանդավառ էր: Տեսիլքը հոսած էր առաջնորդներէն դէպի պատանհներու ծառայութիւններուն կանոնաւոր կերպով ներկայ եղողներուն: Պատանհները արդէն սկսած էին խօսիլ այն անձերուն մասին, զորս կ'ուզէին հրաւիրել իրենց առաջին հաւաքոյթին: Կ'աղօթէինք, որ Աստուած դպչէր սիրտերուն եւ ընդառաջէին Յիսուսին նուիրուելու առաջարկին, եւ որ տեսնէին իրենց կարիքը Յիսուսի եւ իրենց կարիքը փրկուելու: Օգնականս եւ ես կրնայինք արդէն պատկերացնել, որ Երեքշաբթի գիշերները ամբողջ սրահը լեցուած պիտի ըլլար 2,500 պատանհ-երիտասարդներով: Երկուքս ալ մեծապէս լեցուած էինք տեսիլքով եւ կրակով:

Ժողով մը, զոր Բնաւ Պիտի Չմոռնամ

Առաջին հաւաքոյթներուն սկսելէ երեք շաբաթ առաջ հովիւներու շաբաթական ժողովին մտայ՝ բոլորովին անպատրաստ լսելիքներու: Ժողովին ընթացքին մեր գլխաւոր հովիւը մեզի՝ բոլոր տասնմէկ գործակից հովիւներուս ըսաւ հետեւեալ ցնցիչ բառերը. «Տղաք, Սուրբ Հոգին ինձի ցոյց տուաւ, որ մեր եկեղեցոյ ուղղութիւնը տուններու մէջ բջիջ խումբեր ունենալը չէ: Ուստի կ'ուզեմ, որ ջնջէք բոլոր պզտիկ խումբերու հանդիպումները, որ սկսած էք ունենալ

անդամներու տուներուն մէջ»:

Չէի հաւատար լսածիս: Պէտք է տեղ մը սխալ մը կամ սխալ հասկացողութիւն մը ըլլար: Օգնականիս ապշած աչքերը իմիններուս հանդիպեցան՝ մինչ կը փորձէինք որոշել, թէ ինչպէս վարուիլ մեր շփոթին մէջ: Ինքզինքս փորձեցի մտիթարել եւ ինծի ըսելով, թէ՛ *վստահաբար ըսել չ'ուզեր պատանհներու խումբը եւ... ան պարզապէս իր խօսքը կ'ուղղէ միւս հովիւներուն*: Ամուրիներու հովիւը, տարեցներու հովիւը, զոյգերու հովիւը եւ ուրիշներ տուներու մէջ խումբերով կը հաւաքուէին, բայց շատ արդիւնաւէտ չէր ըլլար ատիկա եւ իրապէս ալ իրենց ծառայութեան բուն կեդրոնացումը չէր ատիկա: Իրենցինները ւաւելի «հոգատարութեան խումբեր» էին, մինչ մերը ւաւետարանչական էին իրենց ձեւին մէջ: Առաւել, ես քանի մը ամիս առաջ կառատան մէջ իմ աւագ հովիւիս հետ խօսած էի գաղափարիս մասին, եւ ան ըսած էր՝ «Ըրէք ատիկա»: Ուստի եզրակացուցի, որ պատանհներու ծառայութիւնը չէր ներառուէր այդ կասեցումին մէջ:

Չկրնալով ւաւելի սպասել, հարցուցի. «Կը ներես, հովիւ: Ըսել կ'ուզես բոլորը բացի պատանհներու ծառայութիւնը, չէ՞»:

Ան ինծի նայեցաւ եւ ըսաւ. «Ճոն, Սուրբ Հոգին ինծի ցոյց տուաւ, որ այս եկեղեցւոյ ուղղութիւնը բջիջ խումբեր ունենալը չէ»:

Ըսի. «Հովիւ, կը յիշե՞ս, քանի մը ամիս առաջ ճամբորդեցի, որպէսզի քանի մը օր անցընեմ Լուիզիանայի այդ պատանհներու ծառայութեան հետ: Անոնք 1,250 պատանհներ ունին իրենց խումբին մէջ: Բոլոր չորս հովիւներն ալ ըսին, թէ այդ թիւը տուներու մէջ իրենց ունեցած բջիջ խումբերուն շնորհիւ էր»:

Աւագ հովիւը ինծի նայեցաւ եւ ըսաւ. «Ճոն, Սուրբ Հոգին ինծի ցոյց տուաւ, որ այս եկեղեցւոյ ուղղութիւնը բջիջ խումբեր ունենալը չէ»:

Անգամ մը եւս խօսեցայ, մտածելով՝ *Ան պարզապէս չի հասկնար*: Փորձեցի պատճառաբանութիւններ տալ, ըսելով. «Հովիւ, դժուար է չփրկուած պատանիները կամ երիտասարդները եկեղեցի բերել, բայց կրնանք ունէ դպրոցական պատանի կամ երիտասարդ տան մը մէջ կազմակերպուած հաւաքոյթի մը բերել, ինչ որ՝ ինչպէս բացատրեցի ձեզի քանի մը ամիս առաջ, տան մէջ հաւաքուող բջիջ խումբ մը պիտի ըլլայ՝ կեդրոնացած չփրկուածները փրկութեան հրաւիրելու վրայ»:

Ան կրկնեց. «Ճոն, Սուրբ Հոգին ինձի ցոյց տուաւ, որ այս եկեղեցւոյ ուղղութիւնը բջիջ խումբեր ունենալը չէ»:

Քիչ մը կրակոտ ձեռով վիճաբանեցայ, ըսելով. «Բայց, հովիւ, կրնանք մեր սրահը 2,500 աշակերտներով լեցնել: Օրլանտօ, Ֆլորիտայի ամբողջ երիտասարդութիւնը կրնայ փրկուիլ»:

Ան կրկնեց նոյն բառերը:

Իրեն հետ շուրջ 15 վայրկեան վիճաբանեցայ: Սենեակին մէջ ամէն մարդ կը զգար ինչպէս լարուածութիւնը հետզհետէ կը սաստկանար: Ինձի համար լաւ էր, որ միակ բառերը, որ դուրս կու գային հովիւին բերանէն անոնք էին, զորս կը հաւատար, որ Աստուած կ'ըսէր իրեն, որ ըսէր:

Վերջապէս լռեցի, բայց ներսս կ'եռար: Ժողովի մնացեալ տետղութեան ընթացքին ոչ մէկ բան կը լսէի: Միակ բանը, որ կը մտածէի այն էր, թէ՛ *Մենք ութ ամիսէ ի վեր կ'աշխատինք այդ ծրագիրին վրայ: Ան գիտէր, որ մենք կը ծրագրէինք այդպիսի բան մը. այդ մասին իրեն ըսի ամիսներ առաջ: Ինչպէս կրնայ կեցընել այն ծրագիրը, որ հարիւրաւորներ եւ նոյնիսկ հազարաւորներ Թագաւորութենէն ներս պիտի բերէ: Ան կը կեցընէ Աստուծոյ սկսելիք մէկ շարժումը: Ինչ պիտի ըսեմ պատանիներուն: Ինչ պիտի մրաօծեն առաջնորդներս: Մինչեւ Լուիզիանա գացի: Ինչ կորուսար դրամի, ժամանակի: Չեմ հաւատար, որ ասիկա իրապէս կը*

պատրաստի հիմա: Խորհուրդներս չէին վերջանար, եւ բոլորն ալ շատ տրամաբանական էին: Համոզուած էի, որ ճիշդ էի եւ Աստուծոյ կողմն էի, բայց հովիւը չէր տեսներ աստիկա...

Երբ ժողովը վերջացաւ, անմիջապէս դուրս ելայ: Աւելի տարեց, ասելի իմաստուն հովիւ մը փորձեց կեցընել զիս՝ իմաստութեան խօսքեր ըսելու համար ինձի եւ մխիթարելու համար զիս, բայց ես անոր նայեցայ եւ ըսի. «Ֆրէտ, չեմ ուզեր խօսիլ»: Ան գիտցաւ, որ արդիւնք պիտի չստանար, ուստի ետ կեցաւ:

Դէպի տուն ճամբուս վրայ ինքնաշարժիս մէջ միտքիս մէջ բազմաթիւ պատճառներ կը դառնային թէ ինչն է գլխաւոր հովիւը սոսկալի սխալ մը կը գործէր: Որքան ասելի մտածեցի անոր որոշումին մասին այդքան ասելի աճեցաւ բարկութիւնս: Կը մտածէի. *Ան չի գիտեր, թէ այդ հաւաքոյթները ճիշտն ազդու պիտի ըլլային, որովհետեւ չէ ուսումնասիրած հարցը այնքան որքան ես ուսումնասիրած եմ: Պարզապէս եկաւ եւ ջնջեց ամիսներու աշխատանքը՝ առանց բաւարար չափով հետաքրքրուելու անոր մասին: Ան կը մեռցնէ այն ինչ որ աճ պիտի պատճառէ եկեղեցիին եւ պատանհներու խումբին: Ան արգելք կ'ըլլայ մարդոց փրկութեան...* Ասիկա պարզապէս օրինակ մըն է միտքէս անցածներուն տուն վերադարձի այդ երկար ճամբուն վրայ: Ես առողջ տրամաբանութեամբ կը մտածէի եւ չկար պատրուակ այդ ժողովին ընթացքին պատահածին:

Շարեցի ինքնաշարժս տան դիմաց, բացի տան դուռը եւ կինս ողջունեց զիս: Ես չբարեւեցի իրեն, այլ՝ շատ յուսախաբ եղած ձայնով մը ըսի. «Պիտի չհաւատաս, թէ ինչ ըրաւ»:

Ձայնիս թոնը լսելով, ան մտահոգուած պատասխանեց. «Ո՛վ եւ ինչ էր, որ ըրաւ»:

«Հովիւը: Տուներու հաւաքոյթները ջնջեց... Ութ ամիսէ ի վեր մեր կատարած աշխատանքը. մեր ամբողջ պատանհներու

ծառայութեան առած ուղղութիւնը: Ան ջնջեց զանոնք... Կրնամ հաւատալ»:

Կինս ինծի նայեցաւ եւ ամէնէն անկեղծ եւ լուրջ ծայնով ըսաւ. «Ուրեմն, այնպէս կը թուի, թէ Աստուած բան մը կը փորձէ սորվեցնել քեզի»: Եւ ապա նախասենեակէն դէպի ննջասենեակ գնաց:

Բարկացայ անոր դէմ: Իմ միտքիս մէջ ան իմաստութեան եւ հոգեւոր գիտակցութեան պակաս ունէր: Ինքն ալ, հովիւիս պէս, անգէտ էր: Բարկացած, փոթորիկի պէս մտայ խոհանոց, որ մեր ննջասենեակին ճիշդ հակառակ կողմն էր, ոտքերս երկարեցի աթոռի մը վրայ, պատուհանէն դուրս սեւեռեցի աչքերս եւ շարունակեցի մտածել, թէ ճիշդն սխալ էր հովիւս: Իսկ հիմա այդ մտածումներուս վրայ կ'աւելնային նաեւ անոնք, թէ՛ ճիշդն անզգայուն եւ զանազանութենէ զուրկ էր կինս:

Հանդիպում մը Տիրոջ հետ

Մինչ պատուհանէն դուրս կը դիտէի, Սուրբ Հոգին խօսեցաւ ինծի: Ըսաւ. *Ճոն, որո՞ւ ծառայութիւնն է, որ կը կառուցանես: Ի՞նչ կամ քուկդ:*

Անմիջապէս ըսի. «Քո՛ւկդ, Տէր»:

Ան արագօրէն պատասխանեց. *Ո՛չ, այդպէս չես ընէր: Դուն քո՞ւ սեփական ծառայութիւնդ կը կառուցանես:*

Ըսի. «Տէր, մենք չփրկուած աշակերտները չենք յաջողիր եկեղեցի բերել, բայց կրնանք զանոնք հաւաքոյթներու բերել...»: Եւ սկսայ Իրեն խօսիլ ամբողջ ռազմավարութեան եւ տրամաբանական պատճառներուն մասին, կարծես թէ չէր գիտեր: Ո՛րքան դիւրութեամբ կրնանք մենք խաբուիլ...

Տէրը արտօնեց, որ սիրտիս մէջ ինչ որ կար դուրս հանէի, եւ ապա ըսաւ. *Ճոն, երբ ես քեզ այս եկեղեցին բերի՝ այս մարդուն ծառայելու համար, ես քեզ դարձուցի մէկ ճիւղը այն*

ծառայութեան, զոր իրեն վստահած եմ: Ես քեզ կանչեցի, որ ըլլաս իր թեւերն ու սրունքները. ես միայն մէկ հոգի կը դնեմ իբրեւ պատրաստանապու ծառայութեան մը:

Ան Մովսէսի օրինակը յիշեցուց ինձի: Աստուածաշունչը կ'ըսէ. «Մովսէս ինք “Հաւատարիմ էր Աստուծոյ ամբողջ տանը մէջ”» (Եբր 3.5): Ան էր այն ղեկավարը, զոր Աստուած դրաւ ժողովուրդին վրայ:

Ապա ան ինձի յիշեցուց Յակոբոսը Նոր Կտակարանին մէջ: Յակոբոս Երուսաղէմի եկեղեցիին ղեկավարն էր: Աստուած ինձի յիշեցուց այն դէպքը երբ թլփատութիւնը նիւթ դարձած էր հաւատացեալներուն մէջ (կարդա՛մ Գրծ 15): Պողոս, Բառնաբաս, Պետրոս, Յովհաննէս եւ Երուսաղէմի եկեղեցւոյ բոլոր միւս առաքեալներն ու երէցները միասին հաւաքուեցան այդ հարցը քննարկելու համար:

Նախ խօսք առին հաւատացեալ փարիսեցիներէն ոմանք, որոնք նաեւ ղեկավարներ էին եկեղեցիին մէջ: Ապա Պետրոս խօսք առաւ: Անկէ ետք Պողոս եւ Բառնաբաս բաժնեկցեցան այն գործը, զոր Աստուած կ'ընէր հեթանոսներուն մէջ: Երբ աւարտեցին, Յակոբոս ոտքի ելաւ, ամփոփեց բոլոր խօսուածները եւ յետոյ հետեւեալ վճիռը տուաւ. «Հետեւաբար, ես յարմար կը դատեմ [...]» (հմր 19): Իբրեւ զլուխը, իր որոշումը տուաւ, եւ բոլորը՝ ներառեալ Պետրոսը, Պողոսը եւ Յովհաննէսը, ենթարկուեցան անոր որոշումին:

Ես այդ մասին օրինակ մը եւս տեսայ Աստուածաշունչին մէջ երբ հրեշտակը Պետրոսը արձակեց բանտէն: Պետրոս Մարիամի տան մէջ հաւաքուած հաւատացեալներուն ըսաւ. «Ասիկա Յակոբոսին եւ միւս հաւատացեալ եղբայրներուն պատմեցէք» (Գրծ 12.17): Նոյնն էր պարագան նաեւ Ղուկասի եւ Պողոսի: Երբ անոնք Երուսաղէմ եկան, Ղուկաս գրեց. «Հաւատացեալ եղբայրները ուրախութեամբ ընդունեցին մեզ: Յաջորդօրը, Պողոս մեզի հետ միասին Յակոբոսի քով գնաց:

Եկան նաեւ բոլոր երէցները» (Գրծ 21.17-18): Ինչո՞ւ Պետրոս եւ Պօղոս Յակոբոսը կը նշեն այդ երկու պատմութիւններուն մէջ: Յստակ է, որ ան գլխաւոր առաջնորդն էր, տրուած ըլլալով, որ յատուկ կերպով անունով կը նշուի:

Երբ Սուրբ Հոգին այդ կէտը յստակացուց ինծի համար, Ան շարունակեց. *Ճո՛ն, երբ իմ առջեւ կը կենաս դատաստանի օրը այս ժամանակահատուածին համար երբ քեզ նշանակեցի, որ այս եկեղեցիին մէջ ծառայես, դուն նախ հաշիւ պիտի չտաս, թէ քանի՞ պատանիներ կամ երիտասարդներ փրկութեան առաջնորդեցիր Օրլանտօ Ֆլորիդայի մէջ: Նախ պիտի դատուիս անոր համար, թէ ռիքան հաւատարիմ էիր այն հովիւին, որուն իշխանութեան փակ ծառայելու համար դրի քեզ:*

Ապա Սուրբ Հոգին ըսաւ բան մը, որ ցնցեց զիս. *Իրականութեան մէջ կրնաս Օրլանտոյի բոլոր պատանիները շահիլ եւ իմ առջեւ կենալ ու դատուիլ ենթարկուած եւ հաւատարիմ չըլլալուդ համար այն հովիւին, որուն իշխանութեան փակ դրի քեզ:* Այդ բառերուն հետ Աստուծոյ վախի գիտակցութիւնը նորոգուեցաւ մէջս... Բոլոր պաշտպանողականներս վար դնելով, խմորի պէս եղայ Տիրոջ ձեռքերուն մէջ:

Ան շարունակեց. *Ճո՛ն, եթէ շարունակես այս ընթացքդ, պատանիները մէկ ուղղութեամբ պիտի երթան, իսկ եկեղեցին՝ ուրիշ ուղղութեամբ: Դուն բաժանում պիտի բերես եկեղեցիին մէջ: Անգլերէնով բաժանում բառը *տրիվիժըն* բառն է, որուն մէջ *տրի*-ն կը նշանակէ՝ երկու, իսկ *վիժըն*-ը կը նշանակէ՝ տեսիլք: Այսինքն՝ բաժանում (*տրիվիժըն*) կը նշանակէ՝ «երկու տեսիլքներ»: Ինչո՞ւ այդքան շատ եկեղեցիներ եւ ընտանիքներ կը բաժնուին այսօր: Որովհետեւ մէկէ աւելի տեսիլքներ կան, ինչ որ կը նշանակէ, թէ անոնցմէ մէկը չէ ենթարկուած Աստուծոյ կարգած իշխանութեան: Աստուած որոշ տղամարդիկ կամ*

առաջնորդներ կը կարգէ, որովհետեւ երկու գլուխ ունեցող կազմակերպութիւն մը բաժանումի դատապարտուած է:

Ապաշխարութեան Պատասխանը եւ Շարունակութիւնը

Ես անմիջապէս ապաշխարեցի իմ ըմբոստ վարմունքիս համար: Աղօթելէ ետք, գիտէի, թէ ինչ պիտի ընէի: Հեռաձայնեցի մեր գլխաւոր հովիւին: Երբ պատասխանեց, ըսի. «Հովիւ, ճո՛ն Պըվիրն եմ: Կը հեռաձայնեմ ներողութիւն խնդրելու համար: Աստուած ինձի ցոյց տուաւ, որ ըմբոստութեան մէջ էի ընդդէմ քու իշխանութեանդ, եւ մեղքս մեծ է: Կը խնդրեմ, որ ներես ինձի: Անմիջապէս պիտի ջնջեմ տան մէջ հաւաքուող խումբերը»:

Ան շատ ազնիւ էր եւ ներեց ինձի: Հազիւ հեռաձայնը գոցեցի, լսեցի, որ Սուրբ Հոգին հետեւեալ հարցումը կը հարցնէ. *Հիմա ինչպէս լուրը պիտի տաս քսանչորս երէցներուդ այս շաբաթավերջին:*

Տեսայ տեսիլք մը կամ պատկեր մը, թէ՛ կը մտնէի սենեակ մը, ուր առաջնորդները կային եւ տխուր, միապաղաղ ձայնով մը իրենց կ'ըսէի. «Տղաք, պիտի չհաւատամք, թէ ինչ պատահեցաւ»:

Բոլորը ինձի պիտի նայէին մտահոգ նայուածքներով, հարցնելով. «Ի՞նչ»:

Ես ալ իմ ծանր, միապապաղ ձայնովս պիտի շարունակէի. «Գիտէք, որ մենք ասոր վրայ կ'աշխատինք ամիսներէ ի վեր, բայց հովիւը ջնջեց տուներու մէջ հաւաքուող բջիջ խումբերու ծրագիրը: Մենք Ուրբաթ գիշերուայ մեր հաւաքոյթները պիտի չունենանք»:

Տեսայ ինչպէս բոլորը դժգոհութեան ձայներ կը հանէին այդ որոշումին դէմ: Դիւրին էր տեսնել, որ անոնք նեղացած

էին աւագ հովիւէն: Բոլորս ալ իր զոհերն էինք, եւ անշուշտ, ես լաւ կ'երեւէի անոնց աչքին, իսկ աւագ հովիւը՝ ոչ:

Այդ տեսարանին մասին խորհրդածելէ ետք, լսեցի Սուրբ Հոգին կը հարցնէր. *Այդպէ՛ս պիտի ընես:*

Ըսի. «Ոչ, Տէր»:

Յաջորդ ժողովին մտայ առաջնորդներով լեցուն սենեակը ինքնավստահութեամբ, երեսիս վրայ ժպիտով եւ ձայնիս մէջ խանդավառութեամբ: Խանդավառութեամբ յայտարարեցի. «Տղաք, լաւ լուր ունիմ ձեզի»:

Անոնք ինծի նայեցան խանդավառ ակնկալութեամբ. «Ի՞նչ»: Շարունակեցի. «Աստուած խնայեց մեզ ծնունդ տալէն եւ կառուցանելէն բան մը, որ Իրմէ չէր: Մեր աւագ հովիւը անձնակազմի ժողովին ընթացքին այս շաբաթ մեզի ըսաւ, որ այս եկեղեցիին համար Սուրբ Հոգիին ուղղութիւնը տունի մէջ հաւաքուող խումբեր ունենալը չէ: Ուստի այս պահէն սկսեալ տուներու մէջ հաւաքոյթները ջնջուած են»:

Անոնք բոլորն ալ կարծես արտացոլացուցին իմ խանդավառութիւնս եւ մէկ ձայնով. «Այո՛... Շատ լաւ», գոռացին: Բնաւ հարց չունեցայ իրենց հետ: Ես միակը չէի, որ աճած դուրս եկայ այդ փորձառութենէն. բոլորս ալ աճեցանք: Յետագային կրցայ անոնց հետ բաժնեկցիլ, թէ ճիշդ ի՞նչ պատահած էր: Այդ քսանչորս առաջնորդներէն շատերը լման ժամով ծառայութեան մէջ են այսօր, եւ լաւ վիճակի մէջ:

Կոտրած եւ ճմլուած Սիրտ մը

Ետ նայելով, համոզուած եմ, որ այդ դէպքը անկիւնադարձ մըն էր կեանքիս եւ ծառայութեանս մէջ: Եթէ ես չկոտրուէի եւ յարատեւած ըլլայի իմ տրամաբանութեամբս եւ շարունակած ըլլայի յամառութեանս մէջ, շատ տարբեր տեղ մը պիտի ըլլայի այսօր: Այո, վերջաւորութեան պիտի ջնջէի այդ

հաւաքոյթները, քանի որ ուրիշ ընտրութիւն պիտի չունենայի, բայց սիրտս պիտի մնար ընդդիմացող, հպարտ եւ կարծր: Բնաւ մի՛ մոռնար. արտաքին հնազանդութիւն չէ միայն Աստուծոյ ուզածը, այլ՝ կոտրած եւ ճմլուած սիրտ մը. սիրտ մը, որ ծարաւը ունի Աստուծոյ կամքը կատարելու: Այդ պատճառով Դաւիթ ըսաւ.

Արդարեւ զոհէ չես ախորժիր՝ որ զայն մատուցանեմ [...] Աստուծոյ հաճելի զոհը՝ կոտրած հոգին է. Կոտրած ու ճմլուած սիրտը, ո՛վ Աստուած, դուն չես արհամարհեր: (Սղ 51.16-17)

Մենք կրնանք մեծ զոհողութիւններ ընել մեր կեանքերուն մէջ, երկար ժամեր ծառայել, աշխատիլ առանց վճարումի, քունէ զրկուիլ, ձեւեր գտնել լայելեալ մարդոց հասնելու համար եւ ամէն տեսակի բաներ ընել, քանի որ ծառայութեան մէջ այդ ցանկը անվերջանալի է: Այդ բոլոր զոհողութիւններուն մէջ բռնուած ըլլալով, կրնանք դիւրութեամբ պատկերացնել, որ մեր անձերը եւ մեր ջանքերը հաճելի են Աստուծոյ: Սակայն այդ ամբողջ գործունէութեան մէջ մեր բուն շարժառիթը կրնայ խաբուսիկ կերպով տակաւին հրահրուած ըլլալ ինքնակամութեան վառելանիւթով:

Մտիկ ըրէ՛ հետեւեալ բառերը. Աստուած կը հաճի ենթակայութեան՝ որ կ'առաջնորդէ ճշմարիտ հնազանդութեան: Այս գիրքին նպատակը ոչ միայն յայտնաբերել է Աստուծոյ իշխանութեան ենթարկուելու կարելորութիւնը, այլեւ ստեղծել է անոր հնազանդելու սէր եւ բուն փափաք մը:

Գիտեմ, որ կրնան շատ մը չպատասխանուած հարցումներ գոյութիւն ունենալ միտքիդ մէջ հոս տրուած վկայութեան վերաբերեալ: Անոնցմէ մէկը կրնայ ըլլալ՝ «Աստուած չէ՞ր քեզի ըսողը, որ կազմակերպես այդ տան հաւաքոյթները»: Ուրիշ

մը կրնայ ըլլալ՝ «Հապա եթէ հովիւը կը սխալի եկեղեցւոյ ուղղութեան հետ կապուած: Հապա եթէ ասելի լաւ պիտի ըլլար եկեղեցիին համար, որ բջիջ խումբեր ունենար, եւ ինք սխալ էր եւ դուն՝ ճիշդ: Հապա եթէ ան սխալ գաղափարներու ազդեցութեան տակ էր»: Մինչ կը յառաջանանք այս սերտողութեան մէջ, պիտի պատասխանենք այս եւ շատ ուրիշ հարցումներու:

Սակայն նախքան որ յաւելեալ կերպով քննարկենք յանձնարարուած իշխանութեան նիւթը, պէտք է նախ հաստատենք կարեւորութիւնը Աստուծոյ ուղղակի իշխանութեան ենթարկուելու: Ուաչման Նի կը գրէ.

Նախքան որ մարդ կարենայ ինքզինք ենթարկել Աստուծոյ յանձնարարած իշխանութեան, ան նախ պէտք է հանդիպի ինքնին Աստուծոյ իշխանութեան: Աստուծոյ հետ մեր ամբողջ յարաբերութիւնը կը կանոնաւորուի մեր իշխանութեան հանդիպած ըլլալուն կամ չըլլալուն հիման վրայ: Եթէ հանդիպած ենք, ապա իշխանութեան պիտի հանդիպինք ամէն տեղ, եւ այդպիսով զսպուած ըլլալով Աստուծոյ կողմէ՝ կրնանք սկսիլ գործածուիլ Անոր կողմէ («Հոգեւոր Իշխանութիւն» [Նիու Եորք. *Քրիսչըն Ֆելոշիփ Փապիլիշըրգ*, 1972]):

Ինքնին Աստուծոյ ենթարկուելու կարեւորութեան աստուածաշնչական ամուր հիմերը պէտք է դրուին նախ: Ատիկա իրագործելէ ետք է միայն, որ կրնանք անցնիլ յանձնարարուած իշխանութեան ենթարկուելու կարեւորութեան: Անիկա անկիւնաքարը պիտի ըլլայ ամէն բանի, որ կը կառուցանենք անոր վրայ:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ



**ԱՍՏՈՒԾՈՅ
ՈՒՂՂԱԿԻ ԾԱԾԿՈՅԹԸ**

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄԵՂՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

*Եկեղեցին յաճախ կը շեղի մեղքի բուն
սահմանումէն:*

*Մենք կապ չենք հաստատել անոր
ճշմարիտ իմաստին հետ:*

Պահ մը եկէք խաղ մը խաղանք: Անոր համար անելի
լաւ անուն մը չունենալով, եկէք զանհկա կոչենք
հոգեբանի եւ հիւանդի խաղը: Դուն նստարանին վրայ
երկնցած հիւանդն ես, եւ ես քու քովդ աթոռին վրայ նստած
հոգեբանն եմ: Բառ մը պիտի ըսեմ եւ դուն ինծի կ'ըսես միտքդ
եկած առաջին բանը: Պատրաստ ես: Ահա բառը. մեղք: Ի՞նչ է
այն առաջին բանը, որ միտքդ եկաւ:

Ամբողջ աշխարհի մէջ մեծ թիւով հաւատացեալներու եւ
առաջնորդներու հետ խօսելէ ետք, կրնամ ենթադրել, թէ ի՞նչ
եկաւ միտքդ: Կրնայ ըլլալ միտքդ եկաւ շնորհին, պոռոնկութիւն,
այլասեռութիւն կամ այլ տեսակի սեռային սխալ վարմունք մը:
Ես յաճախ հետեւեալ ողբերգական հաստատումը կը լսեմ.
«Մեղքի մէջ ինկաւ»: Ասիկա ընդհանրապէս ակնարկութիւն

է ղեկավարի մը սեռային իմաստով իյնալուն: Այդ մասին ինծի տեղեկացնողը պէտք չունի յաւելեալ բացատրութիւն տալու. անմիջապէս կը գիտնամ, թէ ինչ բանի կ'ակնարկէ: Եկեղեցական շրջանակներու մէջ այդ խորհուրդը կը թուի առաջին գիծի վրայ ըլլալ *մեղք* բառին հետ կապակցաբար:

Կամ թերեւս գինովութեան կամ թմրեցուցիչի գործածութեան պատկեր մը եկաւ միտքդ: Հաւատացեալները վստահաբար այդ բաները գլխաւոր մեղքեր կը համարեն: Թերեւս բախտախաղ, սպանութիւն, կողոպուտ կամ կախարդութիւն եկան միտքդ: Հաւանական է, բայց ոչ այդքան կարելի, որ մեղքի դասակարգումիդ մէջ միտքդ եկած ըլլան ատելութիւնը, վէճերը, նախանձը կամ աններողամտութիւնը: Կը կարծեմ, որ կրնանք դիւրութեամբ ենթադրել, որ ցանկը բաւական երկար է:

Անկապ՝ Բուն Սահմանումէն

Այս նիւթին մասին մտածելէ ետք, հետեւեալը ըսեմ. Ադամ անկողին չմտաւ օտար կնոջ մը հետ Պարտէզին մէջ, ոչ ալ թմրեցուցիչ նիւթ պարունակող ծխախոտ մը ծխեց: Սակայն անոր մեղքը այնքան լուրջ էր, որ ամբողջ ստեղծագործութիւնը գերութեան մէջ եւ կապանքի տակ դրաւ: Պէտք է նկատի առնենք Ադամի կացութիւնը երբ կը սահմանենք մեղքը, որովհետեւ անոր անօրէնութեան բնոյթը տարածուեցաւ մարդկութեան երակներուն մէջ: Ինչ ըրաւ ան, որ այդքան կործանում բերաւ մարդկութեան: Պարզ ձեւով ըսելով, ան հնազանդ չեղաւ Աստուծոյ իրեն թելադրածին:

Պահ մը մտածէ՛ այդ մասին: Չեմ ըսեր, որ վերը նշածներս մեղքէ գերծ են, այլ՝ կը շեշտեմ, որ եկեղեցին յաճախ կը շեղի մեղքի բուն սահմանումէն: Չենք կապուիր անոր ճշմարիտ իմաստին հետ: Առանց այդ կարելոր կապին, կրնանք դիւրութեամբ առաջնորդուիլ խաբկանքի մէջ, ինչպէս պիտի տեսնենք այս գլուխին մէջ:

Տամ ուրիշ օրինակ մը: Ըսենք, թէ հիւանդութեան հասկացողութիւնդ այն է, որ մէկը կ'ունենայ 37-էն վեր ջերմութիւն, անհանգիստ կը զգայ մարմինին մէջ, կը հազայ, կը փռնգտայ կամ դուրս կու տայ: Երբ եօթը տարեկան էի, այդ էր հիւանդութեան ամբողջ հասկացողութիւնս երբ յայտնաբերեցինք, թէ տասնչորս տարեկան սիրելի քոյրս քաղցկեղ ունէր: Ան շարունակ բժիշկներու այցելութիւններ կու տար եւ քանի մը շաբաթ ալ հիւանդանոց մնաց: Մայրս ինծի այսպէս բացատրեց. «Ճոնի, քոյրիկդ շատ հիւանդ է»: Բայց ան ջերմութիւն չունէր, եւ չէր հազար կամ փռնգտար: Չէի հասկնար, թէ ծնողներս եւ անելի մեծ քոյրս ինչն'ալ այդքան մտահոգ էին: Ըստ ինծի, ան պարզապէս յոգնած էր: Չէի հասկնար անոր հիւանդութեան լրջութիւնը, որովհետեւ ես անիկա կը հասկնայի իմ գիտցածներուս եւ փորձառութեանս հիման վրայ:

Երբեք ամբողջութեամբ չէի հասկցած կացութիւնը մինչեւ որ օր մը երբ առաջին դասարան էի դուրս կանչեցին զիս դասարանէն, ինքնաշարժով զիս տուն տարին եւ քահանայ մը տեսայ նստած մեր նստասենեակը՝ մօրս եւ հօրս քով: Ինծի ըսին, որ քոյրիկս մահացած էր: Այդ ատեն էր միայն, որ անդրադարձայ, որ ան իրապէս շատ հիւանդ էր: Այդ բոլոր ամիսներուն ընթացքին ես բնաւ չէի կապուած իրապէս անցած-դարձածին հետ, որովհետեւ հիւանդութեան իմ սահմանումս սահմանափակուած էր անոր միայն մէկ երեսին մէջ: Ես հարցումներ հարցուցի եւ յաւելեալ կերպով հետաքրքրուեցայ: Հասկցայ, որ հիւանդ մարդը ան է, որ վատառողջ է կամ հիւանդութիւն մը ունի: Ատկէ ետք հիւանդութիւնը նոյն ձեւով չէի չափեր այլեւս. հասկցայ, թէ հիւանդութեան իսկական սահմանումը ինչ կը պարունակէ:

Մեղքի Իսկական Սահմանումը

Այդ է պարագան եկեղեցւոյ մէջ մեծ թիւով մարդոց: Ըստ յաճախ չենք հասկնար, թէ ճիշդ ինչ է մեղքը: Յառաջ

երթալու համար, պէտք է նայինք, թէ Սուրբ Գիրքերը ինչպէս կը սահմանեն զանիկա: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ՛ «Բ՛րն մեղքը՝ անօրէնութիւնն է» (Ա.Յի 3.4)²: «Անօրէնութիւն» բառին յունարէնը *անոմի'ան* է: Թէյըրի Յունարէն Բառարանը այդ բառը կը սահմանէ իբրեւ. «Առանց օրէնքի [ըլլալու] վիճակը՝ անոր նկատմամբ տգիտութեան կամ զանիկա խախտելու պատճառով»: Պարզձեւով ըսելով, անօրէնութիւն կը նշանակէ՝ չենթարկուիլ Աստուծոյ օրէնքին կամ իշխանութեան: Վայնի Բառարանը կը նշէ, թէ այդ համարը կու տայ՝ «[Մեղք] բառին իրական իմաստը»: Վայն կը շարունակէ ըսելով, թէ՛ «Մեղքի այդ սահմանումը կը բացատրէ անոր հիմնական յատկանիշը՝ իբրեւ Աստուծոյ օրէնքին կամ կամքին մերժումը եւ անոր փոխարինումը անձին կամքով»:

Այդ սահմանումը հաստատելու համար, նայինք Յիսուսի մէկ առակին: Ան կերակուր կ'ուտէր կարգ մը մարդոց հետ, եւ անոնցմէ մէկը ըսաւ. «Երանի՛ անոր որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ» (Դկ 14.15):

Տէրը մարդուն ըսածը իբրեւ առիթ մը գործածեց նշելու համար, թէ՛ ճիշդ պիտի ըլլար Գառնուկին պսակի ընթրիքի սեղանին շուրջ: Ան սկսաւ առակ մը պատմել, թէ՛ «Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն իր ծառան դրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. “Եկէք, ամէն ինչ պատրաստ է արդէն”» (Դկ 14.16-17):

Ընթրիքը սարքող մարդը կը ներկայացնէ Հայրը, իսկ ծառան ինքնին Յիսուսն է: «Ծառայ» բառին եզակիի մէջ գործածուիլը անելի հաւանականութիւն կու տայ այդ մեկնաբանութեան: Աստուծոյ Խօսքը որոշակիօրէն կը նշէ. «Անցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ,

2 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ» (Եբր 1.1-2): Յիսուս մեր Ներկայացուցիչն է: Անոնք, որոնք կը քարոզեն, կ'ուսուցանեն կամ կը գրեն այս Նոր Կտակարանի ժամանակներուն պատուէր ունին խօսելու իբրեւ Տիրոջ պատգամաբերները: Պէտք է լսենք, թէ Ան ինչ կ'ըսէ մեզի եւ ճշգրտօրէն հաղորդենք անիկա:

Այս առակին մէջ Հօր կամքը կը բացայայտուի. «Եկէք, ամէն ինչ պատրաստ է արդէն»: Այդ յայտարարութիւնը ուղղուած է անոնց, որոնք արդէն իսկ հրաւիրուած են, այսինքն՝ Եկեղեցիին մէջ եղողներուն, եւ ոչ անհաւատներուն, որոնք բնաւ չեն լսած Աւետարանը:

Սակայն այդ մարդիկը կը սկսին պատրուակներ ընել չընդառաջելու համար «Եկէք» կոչին: Առաջինը կ'ըսէ. «Ես քիչ մը *վոտքա* ունիմ, քանի մը փաթթուած ծխախոտ եւ խենթանալիք խրախճանք մը, որուն պէտք է ներկայ ըլլամ: Իրապէս կ'ուզէի գալ, բայց ներողամիտ գտնուեցէք»:

Երկրորդը կ'ըսէ. «Բոլոր ծախսերը յանձն առնուած ճամբորդութեան տոմս մը շահեցայ դէպի Լաս Վեկաս: Առաւել ունիմ շուրջ հինգ հազար տոլար՝ պոռնիկներ վարձելու եւ բախտախաղ խաղալու համար խաղատան մէջ: Շատ կ'ուզեմ հոն երթալ, ուստի ներողամիտ գտնուեցէք, որ պիտի չկարենամ ներկայ ըլլալ ընթրիքին»:

Երրորդը կ'ըսէ. «Ես իմ անձնական օգնականիս սիրահարուած եմ, եւ մենք միասին պիտի ճամբորդենք այս շաբաթ դէպի Հաուայի՝ մեր շաբաթը սիրաբանութեամբ անցընելու համար: Հաճիք բան մը մի՛ ըսէք կնոջս. ան կը կարծէ, թէ ես գործի պատճառով կը ճամբորդեմ: Ատոր համար չեմ կրնար գալ»:

Այդպէս կ'ըսեն: Եթէ Աստուածաշունչը կարդաս, կը տեսնես, որ անոնց պատասխանները շատ տարբեր են: Նայինք անոնցմէ իւրաքանչիւրին:

«Առաջինը ըսաւ [ծառային]. “Արտ մը գնեցի”»: Հարցում մը հարցնեմ նախքան շարունակելու: Արտ մը գնելը մե՞ղք է: Եթէ է, ուրեմն շատերս խնդիրի մէջ ենք: Պատասխանը «Ոչ» է: Բոլորս ալ գիտենք ատիկա: Անգամ մը ես նայինք, թէ ան ինչ ըսաւ. «Արտ մը գնեցի, պէտք է երթամ եւ տեսնեմ զայն, հետեւաբար ներողամիտ գտնուի»: Ինչպէս ըսի, արտ մը գնելը մեղք մը չէ, բայց երբ ստացուածքին հանդէպ մէկու մը հետաքրքրութիւնը անելի կարելոր կը դառնայ Աստուծոյ Խօսքին անմիջական հնազանդութենէն, ատիկա մեղքի հիմնական սահմանումին մէջ կ’իյնայ: Ատիկա անօրէնութիւն է. չի հնազանդիր Աստուծոյ իշխանութեան:

Յաջորդ մարդը բախտախաղի պտոյտ մը պիտի չկատարէր եւ պոռնիկներ չվարձէր: Ան ըսաւ. «Հինգ զոյգ եզ գնեցի, պէտք է երթամ փորձեմ զանոնք, հետեւաբար կը խնդրեմ, որ ներողամիտ գտնուի»: Եզ կամ մեր ապրուստին համար որեւէ անհրաժեշտ սարք գնելը մե՞ղք է: Անշուշտ ոչ: Բայց երբ ճարտարարուեստը կամ *պիզնըսը* անելի կարելոր կը դառնայ քան անմիջապէս Աստուծոյ Խօսքին կամ կամքին հնազանդիլը, ատիկա մեղք է: Յիշէ, որ Ադամ միասեռական պոռնիկ մը չվարձեց Եդեմի Պարտէզին մէջ: Ան պարզապէս չհնազանդեցաւ Աստուծոյ ըսածին:

Վերջին մարդը ըսաւ. «Տակաւին նոր ամուսնացայ, հետեւաբար չեմ կրնար գալ»: Կին մը առնելը մե՞ղք է: Անշուշտ ոչ: Եթէ այդպէս ըլլար, մեծամասնութիւնս լուրջ խնդիրի մէջ պիտի ըլլայինք: Սակայն երբ զոյգդ հաճեցնելու փափաքդ կը դառնայ անելի կարելոր քան Աստուծոյ կամքին հնազանդիլը, ատիկա մեղք է: Դարձեալ, յիշէ Պարտէզը: Եւան խաբուեցաւ (տե՛ս Բ.Կր 11.3), բայց Ադամի պատմութիւնը տարբեր էր. «Ադամ չէր, որ խաբուեցաւ» (Ա.Տմ 2.14): Ադամի մեղքին բնոյթին ակնարկելով, Աստուածաշունչը կ’ըսէ. «Որովհետեւ, ինչպէս մէկ մարդու *անհնազանդութեամբ* բոլորը մեղաւոր եղան, այնպէս ալ մէկ հոգիին հնազանդութեամբ բոլորը

պիտի արդարանան» (Հռ 5.19, շեշտադրումը՝ մեր կողմէ): Ադամ անհնազանդ գտնուեցաւ, որովհետեւ իր կինը արդէն կերած էր, եւ ան ուզեց, որ ինքն ալ նոյնը ընէր: Ադամ Եւան ընտրեց Աստուծոյ իշխանութեան ենթարկուելու փոխարէն: Ատիկա մեղք է: Ադամի անհնազանդութեան իբրեւ արդիւնք՝ «բոլորը մեղաւոր եղան», կամ ալ այս ձեւով կրնանք ըսել. «Բոլորը անօրէն կամ անհնազանդ եղան Աստուծոյ իշխանութեան»: Ատիկա իսկական մեղք է: Այս առակին պարագային, Յիսուս ցոյց տուաւ, թէ ինչպէս տղամարդը ընտրեց իր կինը՝ Աստուծոյ Խօսքին չհնազանդելու գնով:

Հիմա տես, թէ ինչ կ'ըսէ Յիսուս այդ մարդոց մասին, որոնք ամէն տեսակի քաղաքավար պատրուակներ ըրին եւ իրենք զիրենք չենթարկեցին Աստուծոյ կանչող ծայնին եւ իշխանութեան. «Կ'ըսեմ ձեզի, որ առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը իմ ընթրիքէս պիտի ճաշակէ» (Ղկ 14.24): Ո՛րքան սթափեցնող հաստատում մը: Այդ մարդոց արտօնուած պիտի չըլլայ մասնակցիլ այդ պսակի ընթրիքին, որուն մասնակցելու համար նախապէս պատուոյ հրաւերներ ունէին: Անոնց արգիլուեցաւ մասնակցիլ Գառնուկին պսակի ընթրիքին ոչ սեռային սխալ վարմունքի կամ այլքոյի կամ թմրանիւթերու չափազանցուած գործածութեան պատճառով, այլ՝ Աստուծոյ Խօսքին պարզ անհնազանդութեան պատճառով: Ինչո՞ւ պիտի զարմացնէ մեզ ատիկա: Եթէ պահ մը մտածենք այդ մասին, Ադամի անհնազանդութիւնը չէ՞ր, որ մարդկութեան վրայ դատաստանի ամէնէն մեծ հետեւանքը բերաւ:

Հետաքրքրական է, որ այս առակին մէջ թմրամոլներու, պոռնիկներու, անբարոններու, այլքոյամոլներու, մարդասպաններու կամ գողերու նշում չկայ, չէ՛:

Սխալ:

Եթէ շարունակես կարդալ, պիտի նկատես, որ ծառան մարդոց տուած բոլոր պատրուակները փոխանցեց տիրոջ:

Տան տէրը ծառային ըսաւ. «Քաղաքէն դուրս գնա եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ ո՛վ որ գտնես՝ ստիպէ, որ գայ, որպէսզի տունս լեցուի» (Ղկ 14.23): Աստուածաշունչին մէջ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ եղող մարդիկը կը ներկայացնեն պոռնիկները, անբարոնները, գողերը, կենկի անդամները, մարդասպանները, այբուլամուլները եւայլն: Օ՛, անոնք առակին մէջն են, բայց լաւ իմաստով:

Տէրը գիտէ, որ այս վերջին օրերուն այդ մարդոցմէ շատերը պիտի անդրադառնան, որ իրենց կեանքը պարապ է եւ տառապանքով լեցուն, եւ պիտի յոգնին գամերու արացի զարնելէն: Երբ կը լսեն Տիրոջ կանչը, անոնք անմիջապէս պիտի հնազանդին անոր: Ատոր հակառակ, անոնք, որոնք հրաւիրուած էին՝ անոնք, որոնք եկեղեցի կը յաճախեն, զիրենք բարեպաշտ կը համարեն եւ ապահով՝ Աստուծոյ շնորհքին մէջ, բայց Աստուծոյ կը հնազանդին միայն երբ յարմար է իրենց կամ երբ չի խանգարեր իրենց ժամանակացոյցին, ծրագիրներուն, օրհնութիւններուն կամ հաճոյքին, իրենք զիրենք պիտի գտնեն Ադամի հետ՝ դուրս Աստուծոյ փառաւոր ներկայութենէն:

«Կ'երթամ, Հայր»

Մեղքի իսկական սահմանումը կը յայտնաբերուի պսակի ընթրիքի առակին մէջ՝ իբրեւ անհնազանդութիւն Աստուծոյ իշխանութեան: Յիսուս ատիկա կը յստակացնէ ուրիշ առակի մը մէջ ալ, զոր կը սկսի հետեւեալ հարցումով. «Ի՞նչ կը կարծէք»: Այդ բառերով Ան ուզեց, որ Իր արտաքնապէս արդար ունկնդիրները անլի խորունկը նային եւ նկատեն ճշմարտութիւնը իրենց պատասխանին մէջ:

Յիսուս խօսեցաւ մարդու մը մասին, որ երկու զաւակ ունէր: Հայրը գնաց իր առաջին որդիին եւ ըսաւ անոր. «Տղաս, գնա՛ եւ այգիին մէջ աշխատիր այսօր»:

Որդին պատասխանեց. «Չեմ երթար»: Սակայն յետոյ միտքը փոխեց եւ իր ձեռքին գործը ձգելով գնաց այգիին մէջ աշխատելու:

Ապա հայրը մօտեցաւ երկրորդ որդիին եւ նոյն հարցումը հարցուց անոր: Որդին հօրը պատասխանեց. «Կ'երթամ, հայր»: Լաւ որդիի մը տպաւորութիւնը կը ձգէ այդ պատասխանը: Եւ ան վստահաբար յարգանքով խօսեցաւ իր հօրը հետ: Սակայն Յիսուս ըսաւ. «Ան չգնաց»:

Ապա Յիսուս հարցուց ամէնէն կարեւոր բայց դիւրին պատասխանելի հարցումը. «Այդ երկու որդիներէն ո՞ր մէկը ըրաւ իր հօրը ուզածը»:

Այն խումբը, որուն ուղղեց հարցումը ճիշդ պատասխան տուաւ. «Առաջինը»:

Ապա Յիսուս ուղղակի նիւթին կորիզը մտաւ եւ ըսաւ. «Կ'ըսեմ ձեզի, թէ մաքսաւորներն ու պոռնիկները պիտի կանխեն ձեզ եւ ձեզմէ առաջ պիտի մտնեն Աստուծոյ արքայութիւնը» (Մտ 21.28-31): Յստակ է, որ ոեւէ ծնող պիտի նախընտրէ, որ իր որդին ըսէ. «Այո, հայր, կ'երթամ», եւ իրապէս երթայ ուրախութեամբ, ոչ միայն պատուէրին հնազանդելով, այլեւ պատրաստակամ սրտով: Սակայն այդ առակը այդ օրուայ ղեկավարներուն ցոյց տուաւ, որ մեղքի բուն իմաստը վերջաւորութեան անհնազանդութիւնն է Աստուծոյ իշխանութեան: Անիկա միայն շնութիւնը, մարդասպանութիւնը, գողութիւնը եւայլն չէ:

Ղեկավարները հպարտ եւ ինքնավստահ էին իրենք իրենցմով, քանի որ չէին իյնար «մեծ մեղքերու» ծուղակը: Սակայն քանի որ մեղքի համար իրենց սահմանումը սահմանափակ էր, անոնք դիւրութեամբ կը խաբուէին գործելու այն, որմէ այդքան ժրաջանօրէն կ'ըսէին, թէ կը խուսափէին. մեղքը կամ աստուածային իշխանութեան անհնազանդութիւն:

Հապա «Մեծ Մեղքերը»...

Ամբողջ Աստուածաշունչին ընթացքին շարունակ կրնանք գտնել այդ նոյն պատգամը: Կրնայ ըլլալ, որ կը մտածես. *Հապա սուր խօսիլը, գինովնալը, շնութիւն ընելը, գողնալը, մարդասպանութիւնը... Ասոնք ալ մեղքեր չեն:* Անշուշտ, որ են: Ասոնք ալ Աստուծոյ կամքին հակառակ են: Աստուած նաեւ այն Աստուածն է, որ մեզի կ'ըսէ, որ հրաժարինք ստելէ, եւ կ'ըսէ՝ «Ամէն մարդ ճշմարտութիւնը թող ըսէ իր ընկերոջ» (Եփ 4.24-25): Ինչ կը վերաբերի գինովնալուն, Ան պատուիրեց. «Գերին մի՛ դառնաք գինիին» (Եփ 5.18): Շնութեան մասին Ան զգուշացուց. «Պոռնկութենէ հեռու փախէք» (Ա.Կր 6.18): Գողութեան վերաբերեալ, Ան թելադրեց. «Ով որ գողութեամբ կ'ապրէր՝ թող այլեւս չգողնայ» (Եփ 4.28): Մարդասպանութեան մասին մեզի կ'ըսուի. «Ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան մըն է. եւ գիտէք թէ ոեւէ մարդասպան յախտենական կեանքը չունի իր մէջ» (Ա.Յհ 3.15): Նոր Կտակարանը կը շեշտէ, թէ այդ բաներով զբաղող մարդիկը պիտի չժառանգեն Աստուծոյ Թագաւորութիւնը (տես Ա.Կր 6.9-11: Գղ 5.19-21: Յյտ 21.8): Սակայն չմոռնանք այն իրականութիւնը, որ ամէն տեսակի մեղք կը կործանէ, եւ ոչ միայն այն մեղքերը, որոնք իբրեւ «մեծ մեղք» կը պիտակենք:

Վերադառնանք մեր հոգեբանի եւ հիւանդի խաղին: Նստարանին վրայ նստած հիւանդը, որ լաւ հասկացողութիւն ունի մեղքի մասին, կրնայ անմիջապէս պատասխանել՝ «աստուածային իշխանութեան չինազանդիլը»: Ան կը հասկնայ մեղքի եւ անօրէնութեան միջեւ կապը:

Անօրէնութեան Օրերը

Յիսուսի աշակերտները Իրեն հարցուցին ժամանակներու վերջին մասին: Ան անոնց պատասխանեց, խօսելով

դէպքերու մասին, որոնք տեղի պիտի ունենան եւ նկարագրելով այն պայմանները, որոնք պիտի տիրեն Իր Երկրորդ Գալուստի նախօրէին: Պայմաններէն մէկը հետտեւեալն է. «Անօրէնութեան բազմանալուն պատճառով շատերուն սէրը պիտի ցամքի: Բայց ով որ մինչեւ վերջը դիմանայ՝ անհկա պիտի փրկուի» (Մտ 24.12-13):

Երբ պատգամս ունկնդրողներուն հարցնեմ, թէ ասիկա կը նկարագրէ մեր օրերու ընկերութիւնը, շատեր ձեռք կը վերցնեն եւ գլուխ կը շարժեն: Մեծամասնութիւնը մեր ընկերութիւնը մեղաւոր կը համարէ: Շատ քիչեր, եթէ երբեք, հարցականի տակ կ'առնեն այդ հաստատումին ճշգրիտ ըլլալը: Սակայն Յիսուս ընկերութիւնը չէր, որ կը նկարագրէր այդ հաստատումով: Ան Եկեղեցին կը նկարագրէր: Կրնաս մտածել, թէ արդեօք ինչպէս այդ եզրակացութեան հասայ: Վերի երկու համարներուն մէջ երկու որոշակի եզրեր ցոյց կու տան, թէ Ան կը խօսէր Եկեղեցիին մասին եւ ոչ թէ ընդհանրապէս ընկերութեան:

Առաջին բանալի եզրը «շատերուն սէրը պիտի ցամքի»ն է: Բնագիրին մէջ հոս «սէր» բառին համար գործածուած յունարէն բառը *աղաքին* է: *Տապըլեու. Ի.* Վայն՝ որ յունարէնի մասնագէտ է, կը գրէ, թէ *աղաքին* կը գործածուի «յայտնութեան Հոգիին կողմէ... արտայայտելու համար գաղափարներ, որոնք նախապէս անծանօթ էին»: Յիշեցնեմ, որ Յիսուս ըսաւ. «Նոր պատուիրան մը կու տամ ձեզի.- Սիրեցէք [*աղաքա՛ւօ, աղաքի* անունին բայը] իրար: Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ իրար սիրեցէք» (Յի 13.34): Այդ սէրը ատկէ առաջ մարդոց ծանօթ չէր. Յիսուս էր, որ ծանօթացուց զանհկա: Ան զանհկա սահմանեց՝ «Ինչպէս ես ձեզ սիրեցի» եզրով: Վայն կը շարունակէ ըսելով, թէ՛ «Այդ սէրը կ'արտայայտէ կատարեալ Էակի մը խորունկ եւ մնայուն “սէրը” եւ հետաքրքրութիւնը բոլորովին անարժան առարկաներու հանդէպ»: Հիմնականօրէն անհկա կը

նկարագրէ Աստուծոյ անպայմանական սէրը՝ այն սէրը, որ կը հոսի մեր սիրտերուն մէջ Սուրբ Հոգիին միջոցաւ (տե՛ս Հռ 5.5), որուն համար Յիսուս ըսաւ, թէ՛ «Աշխարհը չի կրնար [...] ընդունիլ» (Յհ 14.17): Հիմնականօրէն այդ սէրը կը գտնուի միայն անոնց մէջ, որոնք ընդունած են Յիսուս Քրիստոսը իբրեւ իրենց Փրկիչը:

Կան ուրիշ յունարէն բառեր ալ, որոնք իբրեւ «սէր» թարգմանուած են Նոր Կտակարանին մէջ, եւ բոլորն ալ կիրարկելի են թէ՛ անհաւատներուն եւ թէ՛ հաւատացեալներուն համար: Անոնցմէ մէկն է՝ *ֆիլէօն*: Այս բառը, ըստ *Տապըլտու. Ի. Վայնի*՝ «պէտք է զանազանուի *աղաքաձէն* այն իմաստով, որ *ֆիլէօն* աւելի կը նշանակէ՝ “քնքոյշ խանդաղատանք”... *Ֆիլէօն* բնաւ չի գործածուիր զԱստուած «սիրելու» մարդոց ուղղուած որեւէ պատուէրի մէջ»: Այս բառը յատուկ կերպով հաւատացեալներուն համար չի գործածուիր ինչպէս *աղաքին*: Վերը նշուած Յիսուսի խօսքին մէջ, թէ՛ «Անօրէնութեան բազմանալուն պատճառով շատերուն սէրը պիտի ցամքի», «սէր» բառին համար բնագիրին մէջ գործածուած յունարէն բառը *ֆիլէօն* չէ, այլ՝ *աղաքին* է: Յիսուս Իր խօսքը չէր ուղղեր ընկերութեան: Այլ՝ կը խօսէր Եկեղեցիին: Ան կ’ըսէր, թէ անօրէնութիւնը տարածուած պիտի ըլլայ Եկեղեցիին մէջ վերջին օրերուն:

Չենք կրնար անտեսել Յիսուսի ըրած ուրիշ համապատասխան հաստատումները: Այդպիսի հաստատում մը կը գտնուի Մատթէոսի Աւետարանին մէջ. «Չկարծէք, թէ ով որ ինծի “Տէր, Տէր” կ’ըսէ, երկինքի արքայութիւնը պիտի մտնէ. այլ՝ պիտի մտնէ միայն անիկա, որ երկինքի մէջ գտնուող իմ Հօրս կամքը կը կատարէ» (Մտ 7.21):

Այս հաստատումը կ’ոչնչացնէ մեր ընդհանուր գաղափարը եւ սահմանումը, թէ՛ ո՛վ կը փրկուի: Մենք ուսուցանած եւ հաւատացած ենք, որ լման ընելիքդ «ապաշխարութեան աղօթք» մը աղօթելն է, եւ քեզի տեղ կ’ապահովուի երկինքի

մէջ: Մենք անտեսած ենք Իր պատուէրները պահելու յանձնառութիւնը կամ բնաւ շեշտ չենք դնել անոր վրայ: Այդ Աւետարանի անկատար պատգամը պատճառ կը դառնայ շատերու շեղելուն՝ հնազանդիլը թեթեւի առած ըլլալուն պատճառով: Յիսուս ըսաւ, որ անոնք, որոնք երկինք պիտի երթան անոնք են, որոնք պիտի *դաւանին* Յիսուսը եւ *ընեն* Աստուծոյ կամքը՝ պահելով Աստուծոյ պատուէրները:

Ճշմարիտ շնորհքը տրուած է՝ լիազօրելու համար մեզ, որ հնազանդինք այն բաներուն, որ ան մեզմէ կը պահանջէ: Եբրայեցիներուն նամակը գրողը լաւագոյն ձեւով արտայայտած է այդ գաղափարը, ըսելով. «Ամուր բռնենք այն շնորհքը ու Աստուած պաշտենք [«Աստուծոյ ծառայենք», ըստ անգլերէն տարբերակին] հաճելի [«ընդունելի», ըստ անգլերէն տարբերակին] կերպով» (Եբր 12.28)³: Շնորհքը կարող կը դարձնէ մեզ ծառայելու Աստուծոյ ընդունելի ձեւով մը, որ Աստուծոյ կամքին համապատասխան է:

Յիսուս շարունակեց, ըսելով. «Երբ այդ օրը գայ, շատեր պիտի ըսեն ինծի. “Տէր, Տէր, չէ՞ որ քու անունովդ Աստուծոյ պատգամները փոխանցեցինք, քու անունովդ չար ոգիներ դուրս հանեցինք եւ քու անունովդ բազմաթիւ հրաշքներ գործեցինք”» (Մտ 7.22):

Այս համարին մէջ կը խօսի ոչ թէ քիչերու մասին, այլ՝ *շարերու*: Յիշէ՛ *շարերուն* բառը Յիսուսի նախորդ հաստատումին մէջ: «Շատերուն սէրը պիտի ցամքի»: Այդ բազմութիւնները Յիսուսի պիտի ըսեն. «Տէր, մենք քու անունովդ մարգարէացանք, դեւեր հանեցինք, հրաշքներ գործեցինք»: Անհաւատ մը չի կրնար դեւեր հանել Յիսուսի անունով (տես Գրծ 19.13-17): Ուստի դարձեալ Ան կը խօսէր Եկեղեցիին մէջ եղողներուն մասին:

Ապա Ան այդ Քրիստոնեաներուն պիտի ըսէ. «Հեռացէ՛ք

3 Աստուածաշունչ Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայական եւ Յունական Բնագիրներէն Թարգմանուած, 1981

քովէս դ՛րք՝ որ անօրէնութիւն կը գործէիք» (Մտ 7.23)⁴: Ինչ կը գործեն: *Անօրէնութիւն*: Այլ խօսքով, անոնց կենցաղը կը նմանի Մեծ Խնճոյքի Առակի մարդոց կենցաղին: Անոնք սովորութիւն դարձուցած են իրենց նպատակները, հաճոյքը եւ ծրագիրները Տիրոջ պատուէրներէն առաջ դնելու: Այսօր ատիկա բնական վարմունք կը համարուի: Պարզ ծելով ըսելով, անոնք չեն ապրիր Իր տիրութեան ենթարկուելու իրենց դաւանութեան համաձայն: Անոնք կը հնազանդին այն բաներուն, որոնք կը համապատասխանեն իրենց ծրագիրներուն: Անոնք գիտակից չեն իրենց ներկայի անօրէնութենէն: Կը ցաւիմ ըսելու, որ այդ է պարագան այսօր մեծ թիով Քրիստոնէաներու:

Երկրորդ պատճառը, որ գիտենք, թէ Յիսուս Իր խօսքը կ'ուղղէր Եկեղեցիին կը գտնուի Անոր հետեւեալ հաստատումին մէջ. «Բայց ո՛վ որ տոկայ մինչեւ վախճանը՝ անիկա՛ պիտի փրկուի» (Մտ 24.13): Մրցումի մը մէջ տոկալու համար, պէտք է անիկա սկսած ըլլաս: Անհաւատները տակաւին սկսած չեն Քրիստոնէական մրցումը:

Խաբկանքի Տնցումը եւ Տառապանքը

Երբ Յիսուս եւ առաքեալները մարդոց կը խօսին վերջին օրերուն մասին, կը տեսնենք, որ շարունակ կը զգուշացնեն այդ վերջին օրերուն տիրելիք մթնոլորտին դէմ, զոր լաւագոյն կերպով կը նկարագրեն իբրեւ՝ *խաբկանք*: Այդ լայն տարածում գտած խաբկանքի պատճառներէն մէկը մեղքի բուն իմաստը ճիշդ չհասկնալն է: Ատիկա շատ տարբեր չէ քրոջս հիւանդութեան նկատմամբ իմ հասկացողութենէս: Տնցուեցայ երբ տուն եկայ եւ գիտցայ, որ ան մեռած էր, որովհետեւ երբեք չէի ընդունած անոր հիւանդ ըլլալու

4 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

իրականությունը: Ասիկա ինձի կը յիշեցնէ փորձառութիւն մը, որ ունեցայ 1980-ականներու վերջերը:

Աղօթքի ընթացքին սթափեցնող հոգեւոր տեսիլք մը ունեցայ, որ փոխեց կեանքիս եւ ծառայութեանս ընթացքը: Տեսայ մարդոց բազմութիւն մը, զոր հաշուելը դժուար էր եւ որուն նմանը ես ասկէ առաջ բնաւ տեսած չէի: Անոնք հաւաքուած էին երկինքի դռներուն առջեւ՝ ակնկալելով, որ ներս մտնեն եւ Տէրը իրենց ըսէ՝ «Եկէք իմ Հօրս օրհնածները, ժառանգեցէք այն թագաւորութիւնը, որ պատրաստուած է ձեզի համար՝ աշխարհի հիմնադրութենէն ի վեր» (Մտ 25.34): Բայց ատոր փոխարէն Տէրը ըսաւ. «Հեռացէք ինձմէ, անհօծալներ [«անօրէններ», անգլերէն տարբերակին համաձայն]» (հմր 41): Տեսայ անոնց երեսին վրայի սոսկալի ցնցումի, տառապանքի եւ սարսափի արտայայտութիւնները: Անոնք իրապէս կը հաւատային, որ իրենց տեղը երկինքն էր, որովհետեւ դաւանած էին Յիսուսի տիրութիւնը եւ իրենց Քրիստոնեայ ըլլալը: Սակայն անոնք չէին հասկցած մեղքի ճշմարիտ եւ բուն իմաստը: Հակառակ անոր որ երկինքը կը փափաքէին, անոնց կը պակսէր հնազանդօրէն Հօրը կամքը ընելու կրակը:

Աստուած կը փնտռէ զաւակներ, որոնց սիրտերը կը փափաքին հնազանդութեամբ քալել: Կեանքի ճիշդ մարզին մէջ ալ, որ ըլլայ, մենք՝ իբրեւ հաւատացեալներ պէտք է ուրախանանք Անոր կամքը ընելով: Հնազանդութենէն յաջողութիւն եւ անհնազանդութենէն դժուարութիւն քաղելու փորձառութիւններով լեցուն կեանքի մը վերջին հանգրուանին Սողոմոն գրեց հետեւեալ իմաստուն խօսքը, որ ճիշդ է բոլոր ժամանակներուն համար. «Այս ամբողջ խօսքին եզրակացութիւնը լսենք.- “Վախցի՛ր Աստուծմէ՛ ու պահէ՛ անոր պատուիրանները, որովհետեւ ասիկա՛ է մարդուն ամբողջ պարտականութիւնը”» (Ժղ 12.13):

Մտ 7.23-ը կ'ըսէ. «Այն ատեն պիտի յայտարարեմ անոնց.

«Ես բնաւ չէի ճանչնար ձեզ. հեռացէք քովէս դ՛րժ՝ որ անօրէնութիւն կը գործէք”»։ Ոմանք կ’ըսեն, թէ ասիկա չի կրնար հաւատացեալներուն մասին ըլլալ, քանի որ Յիսուս կ’ըսէ՝ «Ես բնաւ չէի ճանչնար ձեզ»։ Յիշեցնեմ, որ ոչ-հաւատացեալները չեն կրնար դելեր հանել Յիսուսի անունով։ Երբ Յիսուս ըսաւ՝ «Ես բնաւ չէի ճանչնար ձեզ», կարելոր է հասկնալ, որ «ճանչնալ» բառին յունարէնը *γινώσκω*-ն է, որ Նոր Կտակարանին մէջ կը գործածուի նկարագրելու համար տղամարդու մը եւ կնոջ մը միջեւ սեռային յարաբերութիւնը (տե՛ս Մտ 1.25)։ Անիկա կը ներկայացնէ մտերմութիւն։ Յիսուս իրականութեան մէջ կ’ըսէ. «Ես ձեզ մտերիմ ձեւով չճանչցայ»։ Ա.Կր 8.3-ին մէջ կը կարդանք. «Սակայն եթէ մէկը կը սիրէ Աստուած, ինք ճանչցուած է անկէ»։ Հոս ալ գործածուած «ճանչցուած» բառը դարձեալ յունարէն *γινώσκω* բառն է։ Աստուած մտերիմ կերպով կը ճանչնայ անոնք, որոնք կը սիրեն զինք։ Անոնք, որոնք կը սիրեն զինք, անոնք են, որոնք կ’ենթարկուին Իր իշխանութեան՝ հնազանդելով Իր խօսքերուն։ Յիսուս ըսաւ. «Ա՛ն որ չի սիրեր զիս՝ չի պահեր իմ խօսքերս» (Յհ 14.24)։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻ ՈՅԺԸ

*Յայտնուած եւ ոչ հաղորդուած
գիտութիւնը մեր մեծագոյն պահապանն
է ընդդէմ խաբկանքի:*

«**Վ**երջին օրերը» եզրը յաճախ կը նշուի Սուրբ Գիրքերուն մէջ: Բաական հաւանական է, որ այդ օրերը պիտի ըլլան ամէնէն խանդավառիչ եւ ամէնէն վախնալիք ժամանակը մարդկութեան պատմութեան մէջ: Խանդավառիչ, որովհետեւ վկաները պիտի ըլլանք Աստուծոյ փառքի ամէնէն մեծ յայտնութեան, որ որեւէ սերունդ երբեւէ ապրած կամ տեսած է, եւ որուն պիտի ընկերակցի հոգիներու աներեւակայելի հունձք մը: Անիկա պիտի ըլլայ փառքի եւ ուրախութեան, դատաստանի եւ վախի ժամանակ մը:

Վախի ժամանակ պիտի ըլլայ, որովհետեւ Պօղոս Առաքեալ մեզի կ'ըսէ. «Գիտցիր թէ վերջին օրերը դաժան ժամանակներ պիտի գան» (Բ.Տմ 3.1): Այս նախադասութիւնը

կը սկսի «Գիտցի՛ր թե»ով, որ կը նշանակէ՝ ուշադիր եղի՛ր ըսելիքիս, ընդգծէ՛ զանիկա միտքիդ մէջ: Ապա ան այդ խնդիրը մանրամասնօրէն կը բացատրէ երրորդ գլուխին մէջ: Դաժան ժամանակներուն պատճառը պիտի չըլլայ կառավարութեան կամ անաստուածներու կողմէ հալածանքը: Վտանգաւոր ժամանակներուն պատճառը պիտի ըլլայ Եկեղեցիին մէջ լայնատարած *խաբկանքը*: Այդ զգուշացումը շարունակ կը լսենք ամբողջ Նոր Կտակարանին մէջ:

Խաբկանքը վախնալիք բան մըն է: Ինչո՞ւ: Որովհետեւ խաբո՞ղ է: Այն անձը, որ խաբուած է, իր ամբողջ սիրտով կը հաւատայ, որ ճիշդ է, մինչ, իրականութեան մէջ, սխալ է: Աւետարաններուն մէջ Յիսուս շարունակ կը զգուշացնէ խաբկանքի դէմ: Միայն Մատթէոսի 24-ին մէջ Ան չորս անգամ զգուշացուց խաբկանքի դէմ: Իրականութեան մէջ երբ Իր աշակերտները հարցուցին Իր վերադարձին մասին, առաջին բառերը, որ ելան Անոր բերանէն երբ մեր օրերը կը նկարագրէր հետեւեալներն էին՝ «Զգուշացէ՛ք որ ո՛չ մէկը մոլորեցնէ ձեզ» (Մտ 24.4): Դիւրին է հարցին հրատապութիւնը զգալ Անոր այդ զգուշացումին մէջ: Լուրջ եւ խորունկ կերպով անկեղծ ոճ մը կայ այդ խօսքին մէջ: Ան ուզեց, որ Իր խօսքերը դրոշմուին ունկնդիրներուն հոգիներուն մէջ: Անոր խօսքերը հազարաւոր տարիներէ ի վեր կը կարդացուին, եւ իմաստուն կ'ըլլանք եթէ չանտեսենք Անոր խորհուրդը:

Երկու Կարեւոր Հարցումներ

Պէտք է երկու կարեւոր հարցումներ հարցնենք: Առաջին՝ Ի՞նչ է արմատը այդ խաբկանքին: Երկրորդ՝ ինչո՞ւ այդ խաբկանքը առանց արգելքի իր ընթացքը կը գտնէ մեր կեանքին մէջ: Առաջինին իբրեւ պատասխան, խաբկանքի արմատը այն է, որ քննարկեցինք նախորդ գլուխին մէջ. անհնազանդութիւնը աստուածային իշխանութեան կամ

անօրէնութիւնը: Աստուածաշունչը մեզի կը յորդորէ՝ «Սակայն խօսքը գործադրողներ եղէք, եւ ոչ թէ միայն լսողներ՝ դուք ձեզ խաբելով» (Յկ 1.22):

Սթափեցնող... Աստուծոյ խօսքը մեզի կ'ըսէ, թէ երբ անձ մը կը լսէ Աստուծոյ խօսքը եւ չի *հնազանդիր* անոր, խաբկանք կը մտնէ անոր սիրտին եւ միտքին մէջ: Այդ անձը ատկէ ետք կ'ապրի այն համոզումով, թէ՛ ինք ճիշդ է, մինչ իրականութեան մէջ սխալ է: Ան ճշմարտութիւնը կը փոխանակէ սուտով մը: Հոն, ուր չկայ իսկական ենթարկում Աստուծոյ իշխանութեան՝ որուն մէջ կայ նաեւ Իր խօսքին իշխանութիւնը, դուռ կը բացուի ծածուկ բայց մեծ խաբկանքի դիմաց:

Ինչո՞ւ խաբկանքը շատ տարածուած պիտի ըլլայ վերջին օրերուն: Պօղոս ըսաւ, որ շատեր պիտի խաբուին՝ «քանի որ անոնք չընդունեցին ճշմարտութեան սէրը՝ որպէսզի փրկուին» (Բ.Թս 2.10): Հետաքրքրական է նշել, որ խաբկանքը պիտի ըլլայ արդիւնքը ոչ միայն «ճշմարտութիւնը» չստանալուն, այլեւ «ճշմարտութիւնը չսիրելուն»: Ճշմարտութիւնը սիրելը միայն զանիկա լսելէն հաճոյք առնելը չէ, այլեւ անոր հնազանդիլ սիրելն է: Աստուած մարգարէի մը ըսաւ.

Դ՛հն, մարդո՛ւ որդի, ժողովուրդիդ որդիները պատերուն քով ու տուներուն մուտքերը քու մասիդ կը խօսակցին: Իրարու հետ կը խօսին- իւրաքանչիւրը իր եղբօրը հետ- եւ կ'ըսեն. “Այժմ եկէ՛ք ու լսեցէ՛ք, թէ ի՛նչ է Տէրոջմէն եկած խօսքը”: Անոնք քեզի կու գան՝ ինչպէս ժողովուրդը կու գայ, քու առջեւդ կը նստին՝ իմ ժողովուրդիս պէս, եւ քու խօսքերդ կը լսեն, բայց *զանոնք չեն գործադրեր*, արդարեւ իրենց բերանով հաճելի խօսքեր կ'արտասանեն, բայց իրենց սիրտը իրենց ագահութեան կը հետեւի: (Եզ 33.30-31, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Մեր եկեղեցիներուն մէջ շատեր կը սիրեն լաւ քարոզներ

Եւ ուսուցումներ լսել, բայց երբ հարցը գործադրութեան կու գայ, անոնք տակաւին կը սիրեն իրենց ձեռով ընել բաներ փոխանակ Աստուծոյ կամքին հնազանդելու (տե՛ս Բ.Տմ 3.1-4): Մենք պէտք է սիրենք ճշմարտութիւնը ուրիշ ամէն մարդէ եւ ամէն բանէ աւելի: Պէտք է բուռն կերպով փափաքինք Իր կամքը աւելի քան մեր հանգիստը կամ կեանքը: Այդատեն է, որ պիտի ուրախանանք մեր անձնական փափաքները Իր փափաքներուն համար մէկ կողմ դնելուս համար: Պիտի վերցնենք մեր խաչը եւ հրաժարինք մեր իրաւունքներէն եւ առանձնաշնորհումներէն՝ Իր կամքը կատարելու սիրոյն: Ինչո՞ւ: Որովհետեւ Ան Աստուած է, մեր Ստեղծիչը, մեր Փրկիչը եւ Իր սէրը մեզի հանդէպ կատարեալ է: Ատիկա միայն մեզ ապահով կը պահէ խաբկանքէն:

Բայց արդեօք այդ ձեւի նուիրում կը տեսնենք արդի ժամանակներու հաւատացեալներուն մէջ: Իրականութիւնը շատ տարբեր է: Ապշեցուցիչ է նկատել, թէ Սուրբ Գիրքը գրողները ինչպէս մեր օրերը կանխատեսեցին աւելի ճշգրտօրէն քան ինչպէս մենք կը տեսնենք:

Անօրէնութեան Գաղտնի Ոյժը

Ուրիշ գործօն մըն ալ կայ, զոր պէտք է նկատի առնենք հասկնալու համար, թէ ինչո՞ւ անօրէնութիւնը այսքան տարածում գտած է մեր օրերուն: Սուրբ Գիրքը մեզի կը զգուշացնէ՝ «Որովհետեւ անօրէնութեան խորհուրդը [«գաղտնի ոյժը», անգլերէն տարբերակին համաձայն] արդէն կը ներգործէ» (Բ.Թս 2.7): Իբրեւ «անօրէնութիւն» թարգմանուած այդ բառին յունարէնը *անոմի'ան* է, զոր քննարկեցինք նախորդ գլուխին մէջ: Նկատի առէք, որ գաղտնի ոյժ մը կայ անոր ետեւը: Անգլերէն Աստուածաշունչի *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* տարբերակը կ'ըսէ՝ «անօրէնութեան խորհուրդը» [որ նոյնն է ինչպէս

վերոնշեալ հայերէն տարբերակը- *Թարգմանիչ*]: Խորհուրդը պահուած է անոր գաղտնի ոյժին մէջ: Հաւատացեալներուն պարագային, անօրէնութիւնը ազդու չ'ըլլար եթէ բացայայտ ըլլայ. այլ՝ միայն եթէ ծածուկ եւ խաբէական ըլլայ: Այդ է անոր խորհուրդը: Որո՞վհետեւ Աստուած չ'ուզեր, որ անգէտ ըլլանք այդ խորհուրդին կամ գաղտնի ոյժին նկատմամբ, Ան կը զգուշացնէ մեզ (տե՛ս Բ.Կր 2.11):

Սատանան խաբկանքի վարպետն է: Մտածէ՛ պահ մը. ան հրեշտակներուն մէկ երրորդը առաջնորդեց Աստուծոյ դէմ ըմբոստութեան մէջ (Յտ 12.3-4): Ատիկա տեղի ունեցաւ կատարեալ միջավայրի մը մէջ. մեր փառաւոր Տիրոջ ներկայութեան մէջ: Յիսուս զգուշացուց, որ Սատանան միայն խաբող մը չէ, այլ՝ խաբէութեան հայրը (տե՛ս Յհ 8.44): Յիսուս նաեւ զգուշացուց մեզ, որ Սատանայի խաբկանքները եւ խաբէութիւնները աւելի պիտի սաստկանան վերջին օրերուն, եւ որ եթէ կարելի ըլլար նոյնիսկ ընտրեալները պիտի մոլորին կամ իյնան անոր ծուղակներուն մէջ (տե՛ս Մտ 24.24):

Ինչո՞ւ պիտի զարմանանք: Եթէ ան կրցաւ միլիոնաւոր հրեշտակներ մոլորեցնել երկինքի մէջ, ինչո՞ւ դժուար պիտի ըլլայ բազմութիւններ մոլորեցնելը այս երկրաւոր միջավայրին մէջ, ուր ան կը կոչուի՝ «օդի իշխանութեան իշխան» (Եփ 2.2)⁵: Ներկայիս մենք կ'ապրինք ճիշդ այն օրերը, որոնց մասին Յիսուս խօսեցաւ: Ուստի ուշադրութեամբ քննէ՛ Կորնթոսի եկեղեցիին ուղղուած Պօղոսի սրտանց մտահոգութիւնը.

Բայց կը վախնամ որ ձեր միտքը ապականի եւ հեռանաք Քրիստոսի հանդէպ ամբողջական եւ մաքուր նուիրումէն, ճիշդ ինչպէս Եւան խաբուեցաւ օձին խորամանկ սուտերէն: (Բ.Կր 11.3)

5 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

Պօղոս հաւատացեալներուն խոցելիութիւնը կը բաղդատէ Եայի խաբուելուն հետ: Անկասկած որ Չարախօսին ամէնէն հանդիսաւոր քաջագործութիւններէն մէկը Եան խաբելն էր: Եա կ'ապրէր կատարեալ միջավայրի մը մէջ՝ ազատ դիւային իշխանութենէ եւ ազդեցութենէ: Եա կը քալէր Աստուծոյ ներկայութեան մէջ, եւ իր մարմնաւորը արգելք չէր ատոր: Ան որեւէ մէկ ձեւով չէր գայթակղած. ոչ ոք բռնաբարած էր զինք, գողցած էր իրմէ, բամբասած էր իր մասին, կոպիտ կերպով խօսած էր հետը կամ որեւէ տեսակի գայթակղութիւն, որ կրնայ պատահիլ մեր ինկած աշխարհին մէջ: Եան ըմբոստութեան առաջնորդելը Սատանային ամէնէն վարպետօրէն ծրագրած դաւերէն մէկն էր: Ան դիմեց ծածուկ եւ խորամանկ ձեւերու՝ Եային միտքը ապականելու համար: Եայի հետ անոր գործածած խաբելու ձեւերը հասկնալով, բացայայտած կ'ըլլանք Սատանայի հզօրագոյն զէնքը. կը հասկնանք, թէ ինչպէս ան կը փորձէ խաբել մեզ, ինչպէս նաեւ թէ ինչո՞ւ շատեր անհնազանդութեան մէջ կ'իյնան այսօր:

Յիշենք, որ Եա հրապուրուեցաւ կամ խորամանկօրէն առաջնորդուեցաւ դէպի անհնազանդութիւն, մինչ Ադամ գիտէր, թէ ճիշդ ինչ կ'ընէր: Ես տեսած եմ մարդիկ եկեղեցիին մէջ, որոնք բաց աչքերով կը խախտեն Աստուծոյ պատուէրները՝ ամբողջովին գիտակից իրենց ըրածին: Անոնք խաբուած չեն: Անոնք կը կոխեն վտանգաւոր գետինի վրայ եւ կը յառաջանան դէպի հոգեւոր մահ (տես Հռ 8.13): Անոնք կարծրացած սիրտ ունեցողներն են եւ դժուար հասանելիները: Ապա կան ուրիշներ, որոնք կը կազմեն եկեղեցւոյ մէջ անհնազանդներուն մեծամասնութիւնը. *խաբուածները*: Ինչպէս Եայի պարագային, անոնց խաբուելուն պատճառը եղած է տգիտութիւնը, որ անօրէնութեան գաղտնի ոյժն է:

Տգիտութիւնը այն մթնոլորտը կամ գետինն է, որուն մէջ խաբկանքը կը ծնի: Աստուած ըսաւ. «Ուստի իմ ժողովուրդս կը տարագրուի՝ քանի որ Տէրը չի ճանչնար [«գիտութիւն

չունի», անգլերէն տարբերակին համաձայն]» (Ես 5.13): Աստուծոյ ճամբաներուն եւ Աստուծոյ հոգեւոր օրէնքներուն վերաբերեալ մեզի յայտնուած գիտութիւնը կը պահպանէ մեզ թշնամիին խաբկանքներէն: Աստուծոյ ճշմարտութեան լոյսը կը բացայայտէ ամէն սուտ եւ կը պաշտպանէ մեզ:

Յայտնութիւն Ընդդէմ Հաղորդուած Գիտութիւն

Աստուած մարդը դրաւ Պարտէզին մէջ եւ ըսաւ. «Պարտէզին բոլոր ծառերէն համարձակ կեր. բայց բարիին ու չարին գիտութեան ծառէն մի՛ ուտեր. որովհետեւ այն օրը երբ անկէ ուտես, անշուշտ պիտի մեռնիս» (Ծն 2.16-17):

Ատկէ ետք Աստուած կինը հանեց մարդուն կողէն: Կրնանք ենթադրել, որ ատիկա տեղի ունեցաւ որոշ ժամանակ ետք, որովհետեւ մարդը անուանած եւ տեսած էր ամէն կենդանի եւ երկինքի թռչուն նախքան որ կինը հանուի իր կողէն:

Կինը պատուէրը ուղղակի Աստուծոյ բերանէն չլսեց ինչպէս Ադամ լսեց: Հաւանաբար Ադամ փոխանցեց այդ պատուէրը Եւային մինչ անոնք կը վայելէին Աստուծոյ Պարտէզը: Կրնանք ատիկա ենթադրել օձին տուած անոր պատասխանէն: Ուշադրութեամբ կարդա՛ հետեւեալ համարները.

Տէր Աստուծոյ ըրած դաշտին բոլոր գազաններէն աւելի խորամանկ էր օձը: Ան կնոջ ըսաւ. «Իրան Աստուած ըսաւ, թէ “պարտէզին որեւէ ծառէն մի՛ ուտէք”»: Կինը օձին ըսաւ. «Պարտէզին ծառերուն պտուղէն կ’ուտենք: Բայց պարտէզին մէջտեղը եղող ծառին պտուղին մասին՝ Աստուած ըսաւ. “Անկէ մի՛ ուտէք եւ անոր մի՛ դպչիք, որպէսզի չմեռնիք”»: (Ծն 3.1-3)

Նախ՝ նկատի առ, որ երբ օձը հարցականի տակ առաւ Աստուծոյ պատուէրը, կինը պատասխանեց՝ «կ’ուտենք...» եւ

ոչ թէ այսպիսի պատասխան մը, թէ՛ «Աստուած ըսաւ, որ...»: Ատիկա դասական պատասխան մըն է մէկու մը կողմէ, որ պատուէրներ կամ կանոններ լսած է ուրիշ մէկէ մը: Այդպէս չի պատասխաներ այն անձը, որ պատուէրը տուողին սիրտը կամ շարժառիթը ունի:

Երկու՝ նկատի առ, որ անոր պատասխանը տարբեր է Աստուծոյ նախնական կամ բուն պատուիրանէն: Ան ւաւելցուց՝ «Աստուած ըսաւ. “Անկէ մի՛ ուտէք եւ անոր մի՛ դպչիք, որպէսզի չմեռնիք”»: Աստուած որեւէ բան չըսաւ անոր դպչելու մասին: Պատկերացուր, որ Ադամ ու Եւան այդ հսկայ պարտէզին մէջ կը քալեն եւ անհամար ծառերու քովէն անցնելով, կը հասնին այդ յատուկ ծառին: Ադամ կ’ըսէ. «Հոգիս, նայէ՛, այս ծառին պէտք չէ դպչինք»: Ադամ գիտէր Աստուծոյ կեդրոնացումը նիւթին մէջ, բայց Եւա ատիկա չէր գիտեր: Ադամ պատկերաւոր ձեւով խօսեցաւ, բայց Եւա բառացիօրէն հասկցաւ զայն: Հոս ունինք ուրիշ օրինակ մը, թէ ինչ կը պատահի երբ ուրիշ մէկէ մը կը լսես Աստուծոյ մէկ ըսածը, փոխանակ որ անիկա ուղղակիօրէն քեզի յայտնուի Տիրոջ կողմէ:

Երբ Աստուած Իր խօսքը կը յայտնէ Իր Հոգիով, անիկա մեզի մաս կը կազմէ: Ատիկա կրնայ պատահիլ երբ գիրք մը կը կարդանք, երբ մտիկ կ’ընենք ուսուցումի մը կամ երբ առանձին ենք եւ Աստուածաշունչ կը կարդանք կամ հաղորդութեան մէջ ենք Աստուծոյ Հոգիին հետ: Ադամի համար Աստուծոյ պատուէրը այնքան իրական էր որքան իր շուրջը գտնուող ուրիշ ամէն բան. անիկա իր մէկ մասն էր: Ասոր հակառակ, երբ կը լսենք Աստուծոյ պատուէրը, բայց անիկա Իր Հոգիին կողմէ յայտնուած չըլլար մեզի, անիկա մեր մէկ մասը չ’ըլլար: Անիկա պարզապէս օրէնք մը կ’ըլլայ մեզի համար, եւ «մեղքին [անհնազանդութեան] զօրութիւնը օրէնքն է]» (Ա.Կր 15.56):

Շատ հաւանական է, որ Եւա անձնապէս Աստուծոյ չհարցուց այդ ծառին մասին: Ան պարզապէս ընդունեց Ադամի

տուած տեղեկութիւնը իբրեւ՝ «այսպէս պէտք է ըլլայ»: Եւայի համար անհկա յայտնուած գիտութիւն չէր, այլ՝ հաղորդուած գիտութիւն: Ուրիշ մէկէ մը լսելը զինք անելի խոցելի դարձուց խաբկանքի դիմաց: Այդ պատճառով օձը զինք ընտրեց իբրեւ թիրախ եւ ոչ՝ Ադամը:

Յայտնուած, ոչ հաղորդուած, գիտութիւնը մեր ամէնէն մեծ պահպանութիւնն է խաբկանքի դէմ: Շատեր կապուած են օրինապաշտութեամբ, որովհետեւ լսած են միայն Սուրբ Գիրքերուն գիտութիւնը, ցուցմունքները կամ գծած սահմանները: Անոնք այդ գիտութիւնը առած կըլլան ծնողներէ, Աստուածաշունչի ուսուցիչներէ, *փոփոքաստի*ներէ, ընկերային հաղորդամիջոցներէ կամ գիրքերէ, անոնք տակաւին պէտք ունին փնտռելու եւ գիտնալու Աստուծոյ սիրտը կամ բուն նպատակը այդ հարցին մէջ, ինչ որ իրենց պիտի տայ պէտք եղած հասկացողութիւնը զիրենք խաբկանքէ պահպանելու: Անոնք ունին գիրը առանց սիրտի զարկին: Անոնք նոյնիսկ կրնան գոց ըսել զլուխներ կամ համարներ, բայց կորսնցուցած են Սուրբ Գիրքերուն ետին գտնուող կեանքի շունչը:

Անոնք կրնան նոյնիսկ խանդավառ ըլլալ երբ կը բաժնեկցին սեմինարի մը կամ խորհրդաժողովի մը ընթացքին իրենց լսած մէկ նոր ուսուցումը: Սակայն կարծես անոնք չեն կրնար ապրիլ այն ինչ որ խանդավառօրէն կը բաժնեկցին: Անհկա իրենց մաս չի կազմեր: Անոնք կը կրեն բառերը, բայց տակաւին անպտուղ կը մնան եւ անկարող՝ Աստուծոյ կեանքը արտադրելու: Երբ ատիկա պատահի, անոնք դիրութեամբ կը փորձուին անելոցնել Աստուծոյ ըսածին վրայ կամ պակսեցնել անկէ: Անոնք դիրութեամբ կրնան խաբուիլ, որովհետեւ Աստուծոյ ձեւերուն մասին հասկացողութիւն չունին:

Ահա օրինակ մը, որ բազմիցս լսած եմ. «Բայց գիտէս, եղբայր, դրամը ամէն չարիքի արմատն է»: Աստուած այդպէս չըսաւ: Աստուած ըսաւ. «Բոլոր չարիքներու արմատը դրամասիրութիւնն է» (Ա.Տմ 6.10):

Եթէ դրամը ըլլար ամէն չարիքի արմատը, ապա Յիսուս Աստուծոյ հաստատած կարգէն դուրս էր, որովհետեւ Ան գանձապահ եւ գանձարկղ ունէր: Առիթով մը կին մը անուշահոտի պզտիկ շիշ մը կտորեց, որ կ'արժէր ամբողջ տարուան մը աշխատավարձը, եւ անուշահոտը թափեց Յիսուսի վրայ: Յուդա՝ որ դրամը կը սիրէր, բարկացաւ անոր այդ արարքին դէմ, մինչ Տէրը յանդիմանեց Յուդան եւ գովեց կինը (Յի 12.3-7):

Ո՛չ, ինքնին դրամը չէ, այլ՝ դրամի սէրը, որ արմատն է ամէն չարիքի. այն վատառողջ ցանկութիւնը դրամի հանդէպ եւ դրամէն կախեալ ըլլալու վիճակը: Այդ օրինապաշտական տեսակէտը պատճառ կ'ըլլայ, որ մարդիկ վատառողջ կեցուածք ունենան դրամի նկատմամբ. բան մը, որ բնաւ Աստուծոյ մտադրութիւնը չէր: Հետեւաբար անոնք բնաւ ֆինանսական մարզին մէջ չեն գործեր ճշմարտապէս բարեպաշտ ձեւով: Այդ տգիտութիւնը կը հաստատէ, որ Աստուծոյ Խօսքը չէ յայտնաբերուած իրենց սիրտերուն մէջ: Անոնք միայն հաղորդուած գիտութիւն մը ունին Աստուծոյ Խօսքին վերաբերեալ, եւ անոնք խաբկանքի թեկնածուներ են:

Ուստի ինչպէս կը ստանանք յայտնութեան գիտութիւն: Իտոնարի կերպով քալելով Աստուծոյ առջեւ՝ Աստուծոյ վախը եւ սէրը ունենալով մեր սիրտին մէջ: Աստուած ըսաւ.

Բայց ես սա՛ մարդոց պիտի նայիմ,
Այսինքն՝ դժբախտին, ընկճուած հոգի ունեցողին,
Եւ իմ Խօսքէս վախցողին: (Ես 66.2)

Ան, որ կը դողայ Անոր Խօսքէն, անմիջապէս պիտի հնազանդի Անոր, ատոր առաւելութիւնը տեսնէ կամ ոչ: Ա՛ն է, որ Աստուծոյ ճշմարիտ վախը ունի իր մէջ: Եւ Աստուծոյ Խօսքը յստակօրէն կը հռչակէ. «Տէրոջ մտերմութիւնը [«գաղտնիքը», ըստ անգլերէն տարբերակին] իրմէ վախցողներուն հետ է. իր ուխտը անոնց կը սորվեցնէ» (Սղ 25.14):

Լաւ կ'ըլլայ, որ հասկնանք Սողոմոնի ըրած հաստատումը իր կեանքի վերջին հանգրուանին. «Վախցի՛ր Աստուծմէ՛ ու պահէ՛ անոր պատուիրանները, որովհետեւ ասիկա է մարդուն ամբողջ պարտականութիւնը» (Ժղ 12.13): Աստուած կը յայտնաբերէ իր գաղտնիքները կամ ճամբաները անոնց, որոնք Իր վախը ունին իրենց մէջ, եւ Յովհաննէս այդ մարդոց խումբին ըսաւ.

Այս բաները ձեզի կը գրեմ, որպէսզի չըլլայ թէ մէկը ձեզ *մոլորեցնէ* [«խաբէ», ըստ անգլերէն տարբերակին]: Գալով ձեզի, որքան ատեն որ ձեր մէջ կը մնայ Սուրբ Հոգին, որով Քրիստոս ձեզ օծեց, պէտք չունիք ուրիշ մէկէն սորվելու: Հոգին ինք կը սորվեցնէ ձեզի ամէն բան, եւ կը սորվեցնէ ճշմարիտը, եւ ո՛չ թէ ստութիւնը [խաբկանքը]: Ուստի Քրիստոսի միացած մնացէք, ինչպէս որ Սուրբ Հոգին ձեզի սորվեցուց: (Ա.Յհ 2.26-27, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ասիկա մեզի ցոյց կու տայ, թէ ինչպէս յայտնուած Աստուծոյ խօսքը մեզ կը պահէ խաբկանքէ: Եւ խաբուելով անհնազանութիւն գործեց, որովհետեւ ան չունէր Աստուծոյ յայտնուած գիտութիւնը: Այդ պատճառով ան չնկատեց օձին խօսքերուն մէջ գտնուող խորամանկութիւնը եւ խեղաթիրումը:

Օձը Ինչպէս Ըրաւ Ատիկա

Շարունակենք նիւթը եւ պատասխանենք հետեւեալ հարցումին. Օձը ինչպէս խաբեց կինը: Ինչ էր անոր խորամանկ յարձակումի ձեւը: Պատասխանը գիտնալը կենսական է: Մտածէ՛ այդ մասին պահ մը: Օձը ինչպէս եւան տարաւ խաբկանքի մէջ: Եւս կ'ապրէր ամբողջովին կատարեալ միջավայրի մը մէջ: Ան իշխանութեան վրայ եղողէ մը սխալ վարմունք չէր տեսած բնաւ: Ան վատ փորձառութիւն մը չէր ունեցած հօր մը հետ, գործատիրոջ մը հետ կամ ծառայողի մը հետ: Ան կ'ապրէր

ծաղկուն պարտեզի մը մէջ՝ որ ազատ էր դիւային ճնշումէ: Ան միայն Աստուծոյ բարութիւնը եւ նախախնամութիւնը տեսած էր: Ան քալած եւ խօսած էր Աստուծոյ ներկայութեան մէջ: Ուստի օձը ինչպէս յաջողեցաւ խաբել զայն:

Յիշէ՛ Աստուծոյ պատուէրը. «Պարտեզին բոլոր ծառերէն համարձակ կեր. բայց բարիին ու չարին գիտութեան ծառէն մի՛ ուտեր. որովհետեւ այն օրը երբ անկէ ուտես, անշուշտ պիտի մեռնիս» (Ծն 2.16-17):

Աստուծոյ բարութիւնը իրենց շնորհեց՝ «համարձակ կեր»ը, մինչ Անոր իշխանութիւնը սահմանեց՝ «բայց բարիին ու չարին գիտութեան ծառէն»ը: Աստուած շեշտեց իրենց ազատութիւնը ուտելու բոլոր ծառերէն, բացի մէկէն:

Աստուծոյ էութիւնն է սիրելը եւ տալը: Ան կը փափաքէր Իր պարտեզին մէջ ունենալ ընկերակիցներ, որոնք պիտի ընտրէին ըլլալ եւ մնալ Իրեն հետ յարաբերութեան մէջ: Ան չէր ուզեր մարդամեքենաներ (*ռոպոթներ*), որոնք զուրկ էին ընտրութեան ազատութենէն: Ան կ'ուզէր Իր պատկերին նմանութեամբ զաւակներ, որոնք ազատ կամք ունէին: Երբ այդ ծառէն ուտելը արգիլեց, անոնց տուաւ ընտրութիւն՝ Իրեն հետ յարաբերութեան մէջ մնալու կամ զանհկա խզելու: Իրեն հետ յարաբերութիւնն էր, որ վերջ ի վերջոյ կը պաշտպանէր զիրենք մահուան դէմ: Ատոր մէջ կար անոնց ազատ կամքը: Արդե՞՞՞ք պիտի վստահէին եւ հնազանդէին: Առանց այդ պատուէրին, ընտրութիւն գոյութիւն պիտի չունենար:

Մօտէն քննէ՛ օձին բառերը. «Տէր Աստուծոյ ըրած դաշտին բոլոր զազաններէն աւելի խորամանկ էր օձը: Ան կ'նոց ըսաւ. “Իրա՛ւ Աստուած ըսաւ, թէ ‘պարտեզին որեւէ ծառէն մի՛ ուտէք’”» (Ծն 3.1): Անոր հարցումը աւելի այժմէական բառերով եթէ պիտի ըսենք, օձը ըսաւ. «Լսեցի, որ Աստուած ըսաւ, թէ չէք կրնար բոլոր ծառերէն ուտել: Այդպէ՛ս է»:

Օձը իր ռազմավարութիւնը սկսաւ նախ խեղաթիրելով

պատուէրին մէջ Աստուծոյ դրած շեշտը: Անոր իմաստը խեղաթիւրելով, ան հարցականի տակ առաւ Աստուծոյ շարժառիթը: Ան ուզեց Եւան առաջնորդել տրամաբանական ճամբու մը մէջ, ուր վերջաւորութեան կասկածի տակ պիտի առնէր Աստուծոյ բարութիւնը եւ պարկեշտութիւնը: Երբ ասիկա յաջողէր իրագործել, շատ դիւրին պիտի ըլլար Եւան Աստուծոյ իշխանութեան դէմ լարելը:

Օձը անտեսեց Աստուծոյ առատաձեռնութիւնը եւ մատնանշեց Անոր ըրած բացառութիւնը: Ան ձեւով մը հասկցուց, թէ իրենց համար լաւ բան մը կարծես կը պահուէր իրենցմէ: Մէկ հարցումով օձը խեղաթիւրեց այն միակ պատուէրը, որ տրուած էր մարդը պաշտպանելու համար՝ ստեղծելով այնպիսի տպաւորութիւն մը, որ կարծես անիկա տրուած էր լաւ բան մը անարդար կերպով մարդէն պահելու համար: Կրնամք լսել անոր հարցումին մէջի հեզնական ոճը. «Ուրեմն Աստուած ըսաւ, որ չէք կրնար բոլոր ծառերէն ուտել»: Հակառակ անոր որ այդ մե՛ծ պարտէզին մէջի բոլոր ծառերէն ուտելու իրաւունք տրուած էր իրենց, օձը Եւային ուշադրութիւնը կեդրոնացուց այն մէկ ծառին վրայ, որմէ ուտել արգիլուած էր իրենց: Ան այնպէս ըրաւ, որ Աստուած երեւի իբրեւ «առնող» մը եւ ոչ թէ այն «տողող»ը, որ Ան է:

զԱստուած անարդարի պատկերով ներկայացնելով, օձը կրցաւ յարձակում գործել Աստուծոյ իշխանութեան տարածքին վրայ: Սատանան անմիտ չէ. ան հարուածեց ուղղակի հիմը Աստուծոյ իշխանութեան. «Արդարութիւնն ու իրաւունքը անոր գահին խարիսխն են [«հիմն են», անգլերէն տարբերակին համաձայն]» (Սղ 97.2): Անոր գահը կը ներկայացնէ Անոր իշխանութիւնը: Եթէ Սատանան կարենայ աղաւաղել Անոր արդար նկարագիրը խաբկանքի եւ խեղաթիւրման ճամբով, ապա Անոր իշխանութեան հիմը հարցականի տակ կը դրուի Անոր ստեղծագործութեան աչքին:

Իբրեւ պատասխան օձին հարցումին, կինը սրբագրեց զայն, ըսելով. «Պարտէզին ծառերուն պտուղէն կ'ուտենք: Բայց պարտէզին մէջտեղը եղող ծառին պտուղին մասին՝ Աստուած ըսաւ. “Անկէ մի՛ ուտէք եւ անոր մի՛ դպչիք, որպէսզի չմեռնիք”» (ԾՆ 3.2-3):

Հաւանաբար մինչ Եւա հարցումին կը պատասխանէր, իր միտքին մէջ ինքն իրեն հարց կու տար այդ պատուէրին ետին գտնուող պատճառին մասին: Ան հիմա կեդրոնացած է այդ ծառին վրայ եւ հարցականի տակ կ'առնէ Աստուծոյ բարութիւնը: Կրնամք պատկերացնել անոր մտածումները: *Լաւ կ'երեւի... Չեմ գիտեր ինչնո՞ւ չենք կրնար այդ ծառէն ուտել: Ինչ վնաս պիտի տայ անհկա մեզի: Ինչ կայ անոր մէջ, որ այդքան վատ պիտի ըլլայ մեզի համար:* Աստուծոյ շարժառիթներուն նկատմամբ Եւայի մէջ արթնցած այդ նոր կասկածներով, ան բաց էր Աստուծոյ իշխանութիւնը հարցականի տակ առնելու:

Օձը օգտագործեց Աստուծոյ իշխանութիւնը, ճշմարտացիութիւնը եւ պարկեշտութիւնը ականահարելու առիթը՝ համարձակօրէն հակառակելով Անոր խօսքերուն. «“Ո՛չ թէ անշուշտ պիտի մեռնիք”»: Որովհետեւ Աստուած գիտէ թէ այն օրը երբ անկէ ուտէք՝ ձեր աչքերը պիտի բացուին, եւ աստուածներու պէս պիտի ըլլաք՝ բարին ու չարը գիտնալով» (ԾՆ 3.4-5):

Իսաբկանքի վարպետը փորձեց կործանել Եւայի հաւատարմութիւնը՝ բացայայտօրէն հակառակելով Աստուծոյ ըսածին եւ վստահեցնելով անոր, որ պիտի չմեռնէր: Ան իր ըսածին վրայ անմիջապէս աւելցուց հետեւեալ բացատրութիւնը, թէ՛ «Մեռնելու փոխարէն Աստուծոյ պէս պիտի ըլլաս: Առանձինդ պիտի կարենաս ընտրել բարիին եւ չարին միջեւ, որովհետեւ իմաստուն պիտի ըլլաս: Պէտք պիտի չունենաս ուրիշէ մը լսելու ամէն բան կամ ենթարկուելու անարդար պատուէրներու այլեւս»:

Մեղքը Կը Յղացուի. Ստրկութիւնը Կը Հետեւի Անոր

Եւս ցնցուեցաւ եւ շփոթի մատնուեցաւ: Մտածեց. *Աստուած ինչո՞ւ ուզեց պահել այդ պտուղը ինձմէ: Ան անգամ մը եւս նայեցաւ ծառին՝ անոր պտուղը ուսումնասիրելու համար, բայց այդ անգամ տարբեր աչքով: Ան որոշեց, որ պտուղը լաւ էր եւ հաճելի, եւ ոչ վատ ու վնասակար: Ան մտածեց. Ուրեղու համար լաւ կ'երեւի, եւ ամէնէն լաւը այն է, որ մեզ իմաստուն պիտի ընէ:*

Այդ գաղափարը կուրցուց զինք իր շուրջը գտնուող ամէն բանի նկատմամբ: Ան մոռցաւ իրենց տրամադրուած առատ լաւութիւնները՝ կեդրոնացած ըլլալով մէկ ծառի վրայ: Ան մտածեց. *Այս ծառը մեզի համար լաւ բան մը կը կրէ, եւ Աստուած զայն պահած է մեզմէ: Այսքան արեւն կրնայիք ուրեղ անոր պտուղէն: Ինչո՞ւ Աստուած ասիկա ըրաւ մեզի: Եթէ Աստուած այս ծառին լաւ պտուղը պահած է մեզմէ, արդեօք ուրիշ ինչ պահած է մեզմէ:*

Աստուծոյ նկարագիրը, պարկեշտութիւնը եւ բարութիւնը կասկածի տակ ըլլալով եւ պտուղին անվնաս ըլլալու վստահութիւնը ունենալով, այլեւս պատճառ չկար ենթարկուելու Աստուծոյ իշխանութեան այդ հարցին մէջ: Եւայի ինքնակամութիւնը գերիշխեց Հօրը կամքին: Եւս ձեռքը երկարեց պտուղին եւ շօշափեց զանիկա. բան մը չեղաւ: Օձը ճիշդ էր ուրեմն: Ապա ան կերաւ պտուղէն եւ զանիկա տուաւ նաեւ իր ամուսինին:

Երբ կերան պտուղէն, երկուքին աչքերը յանկարծ բացուեցան եւ ամօթի ու վախի ալիք մը զգացին՝ անդրադարձած ըլլալով, որ մերկ էին: Անոնց անհնազանդութեան հետ եկաւ նաեւ հոգեւոր մահ: Մարմնաւորը դարձաւ զօրաւոր գործավարը, որ պիտի իշխէր անոնց վրայ: Աստուծոյ խօսքը

հարցականի տակ առնելով եւ իրենց տրամաբանութեան հետեւելով խաբկանքի մէջ իյնալով, անոնք իրենց կեանքերը բացին անհնազանդութեան վարպետին դիմաց: Ան դարձաւ իրենց խաարի իշխանը: Ինչպէս Աստուծոյ Խօսքը կը հաստատէ. «Լաւ գիտցէք, թէ որո՞ւ ծառայութեան որ նուիրուիք եւ հնազանդիք՝ անոր ծառան եղած կ'ըլլաք: Մեղքին ծառայելով [Աստուծոյ իշխանութեան անհնազանդ գտնուելով]՝ մահուան կ'ենթարկուիք, մինչ Աստուծոյ հնազանդելով՝ կ'արդարանաք» (Հռ 6.16): Մահուան իշխանին ոչ միայն մուտք տրուեցաւ իրենց կեանքին մէջ, այլեւ օրինական մուտք դէպի աշխարհ, որովհետեւ Աստուած այդ տիրապետութիւնը կամ տարածքը տուած էր մարդկութեան: Ադամ զանիկա տուաւ Սատանային: Պօղոս հետեւեալ ձեով բացատրեց ասիկա. «Մէկ անձի մը պատճառով էր որ մեղքը աշխարհ մտաւ, եւ մեղքին պատճառով աշխարհ մտաւ մահը» (Հռ 5.12):

Նախքան իրենց անհնազանդութիւնը, չկար ատելութիւն, բարկութիւն, աններողամտութիւն, վէճ, բամբասանք, փտածութիւն, խարդախութիւն, դառնութիւն կամ կեղեքում: Չկար սեռային խտտորում, թմրանիւթերու գործածութիւն, գինովութիւն, մարդասպանութիւն կամ գողութիւն: Չկար կնոջ կամ զաւակի բռնաբարում: Հիւանդութիւն, անհանգստութիւն եւ աղքատութիւն գոյութիւն չունէին: Բնական աղէտներ, ժանտախտ եւ համաճարակներ անծանօթ էին մարդկութեան: Անասուններու աշխարհը կ'ապրէր կատարեալ ներդաշնակութեան մէջ: Երկիրին կլիման հանդարտ էր եւ Աստուծոյ կամքը կը տիրէր ամբողջ ստեղծագործութեան վրայ:

Անհնազանդութիւնը յառաջ բերաւ այդ ահաւոր վարմունքային հարցերը, որոնք կը տանջեն մարդկութիւնը, եւ ցանկը կը բազմապատկուի եւ անելի վատ կը դառնայ ամէն սերունդի հետ: Անոնց անհնազանդութեան մէկ քայլը նշեց սկիզբը անօրէնութեան գաղտնի ոյժին յայտնուելուն: Անոր խաբկանքին իբրեւ հետեւանք, մարդը կորսնցուց իր

աստուածային նախախնամութիւնը եւ պաշտպանութիւնը: Սատանային օրինակով ըմբոստութիւնը լայն բացած էր դուռը անոր տիրապետութեան եւ կործանումին դիմաց: Ան ամբողջութեամբ օգտագործեց իր առիթը ըլլալու Աստուծոյ նման, բայց ոչ՝ ենթակայ իրեն: Աստուծոյ ստեղծագործութիւնը գերելով, ան ինքզինք գահակալ դարձուց (տես Ես 14.12-14):

Ծրագիրը Այսօր ալ Տարբեր չէ

Սատանային գործելակերպը այսօր ալ շատ տարբեր չէ: Ան կը ջանայ խեղաթիւրել Աստուծոյ նկարագիրը, որպէսզի մեզ լարէ Աստուծոյ իշխանութեան դէմ: Յակոբոսի Գիրքը ասիկա շատ յստակ կը դարձնէ. «Հետեաբար՝ դուք ձեզ մի՛ խաբէք, սիրելի՛ եղբայրներս: Միայն բարի նուէրները եւ կատարեալ պարգեւներն են որ կու գան երկինքէն, Հօր Աստուծմէ, որ լոյսի արարիչն է, որուն կամքը անփոփոխ է, անդառնալի եւ անստուեր» (1.16-17):

Գրողը կ'ուզէր այնպէս ընել, որ մենք՝ հաւատացեալներս, չհյնանք անօրէնութեան նոյն գաղտնի ոյժին դիմաց, որուն դիմաց Եան ինկաւ: Ան զգուշացուց մեզ, որպէսզի պաշտպանէ մեզ, ինչպէս Պօղոս ըրաւ: Մենք պէտք է ուշադրութեամբ մտիկ ընենք անոր խօսքերուն եւ դնենք զանոնք մեր սիրտին մէջ. չկայ լաւ բան Աստուծոյ կամքի մարզէն դուրս: Բաներ կրնան լաւ երեւիլ, բայց եթէ բան մը չի համընկնիր Աստուծոյ կամքին հետ, վստահ եղիր, որ անոր մէջ լաւ բան մը չկայ մեզի համար:

Յակոբոս կրկնեց, թէ եթէ կը հաւատաս, որ բարիք կայ Աստուծոյ նախախնամութենէն դուրս, ապա կրնաս խաբուիլ, ճիշդ ինչպէս Եան խաբուեցաւ: Զգուշութեամբ նկատի առ ինչ խօսեցանք: Բան մը որքան ալ լաւ երեւի, լաւ համ ունենայ կամ լաւ զգացում տայ, որքան ալ հարուստ, իմաստուն կամ յաջող ընէ քեզ կամ առատութիւն տայ քեզի, եթէ անիկա

Աստուծմէ չէ, վերջ ի վերջոյ քեզ պիտի առաջնորդէ մեծ տառապանքի, զղջումի եւ վերջաւորութեան մահուան: Աստուածային նախախնամութիւնը եւ պաշտպանութիւնը պիտի խափանուին խաբկանքի միջոցաւ: Ամէն կատարեալ եւ բարի պարգեւ Աստուծմէ է. Ան է Աղբիւրը: Ընդունէ՛ այդ ճշմարտութիւնը եւ ամրագրէ զանհկա սիրտիդ մէջ. այդպիսով է, որ երեւոյթները պիտի չխաբեն քեզ: Եթէ Եւա ատիկա ըրած ըլլար, պիտի չշեղէր: Ան Աստուծոյ նախախնամութենէն անդին նայեցաւ՝ իր փափաքները գոհացնելու համար:

Քանիներ սխալ անձի մը հետ կ'ամուսնանան սխալ պատճառներով: Աստուած կրնայ անոնց զգուշացուցած ըլլալ ծնողներու կամ հովիւներու միջոցաւ, կամ ուղղակի իրենց սիրտին խօսելով, բայց իրենք արտօնած կ'ըլլան, որ իրենց տրամաբանութիւնը լռեցնէ այդ ձայները: Թերեւս մինակ կը զգային եւ ընկեր մը ուզեցին ունենալ: Թերեւս այդ անձը հաճելի էր իրենց աչքերուն եւ օգտակար եղաւ իրենց որոշումներ տալու մէջ: Անոնք անխուսափելիօրէն իրենց կամքը ընտրեցին փոխանակ Աստուծոյ կամքը եւ անոնցմէ շատերը մեծ տառապանք կրեցին:

Անշուշտ Աստուած կրնայ հատուցանել մեր սխալ դատողութիւններուն փոխարէն: Բեթսաբէն առնելու Դաւիթի մեղքը յետագային հատուցանուեցաւ Սողոմոնի ծնունդով: Սակայն Դաւիթ մեծ տառապանք կրեց իբրեւ հետեւանք իր այդ մեղքին, քանի որ սուրը բնաւ չբացակայեցաւ իր տունէն: Ան երեք երիտասարդ որդիներ կորսնցուց: Ո՛րքան ւաւելի լաւ կ'ըլլայ երբ ընտրենք հնազանդիլ:

Շատ յաճախ մարդիկ կը ձգեն այն վայրերը՝ գործ, եկեղեցի, քաղաք, ուր Աստուած ցանած է զիրենք, որովհետեւ անհամաձայնութիւն կ'ունենան իրենց վրայ դրուած իշխանութիւններուն հետ: Կամ թերեւս այնպէս կը զգան, որ իրենց կեանքը կը լճանայ կամ ապագայ չեն տեսներ իրենց

համար իրենց այդ եղած տեղին մէջ: Շուտով ուրիշ առիթ մը կը ներկայանայ իրենց եւ հակառակ ձգել-երթալու մասին իրենց մէջ Սուրբ Հոգիին վկայութիւնը չունենալուն, կ'երթան: Ոչ միայն այդքան, այլեւ իրենց ձգել-երթալով զիջումներ կ'ընեն այն մաքրութենէն, որուն Աստուած կանչած էր զիրենք: Անոնք կը մտածեն. *Ես բաւական ժամանակ է, որ դարակը դրուած եմ: Պէտք է բան մը ընեմ:* Վերջ ի վերջոյ անոնք Աստուծոյ կամքին հակառակ կը գործեն՝ հետապնդած ըլլալով այն ինչ որ կը հաւատան, թէ լաւ է իրենց համար: Կրնայ ըլլալ նիւթապէս աւելի լաւ վիճակի մէջ ըլլան, սակայն անոնց սիրտը շատոնց հեռացած կ'ըլլայ Տիրոջ հետ մտերմիկ եւ կրակոտ յարաբերութենէն:

Աւելի ընդհանուր գիծերու մէջ, քանիներ անհնազանդ կ'ըլլան Աստուծոյ կամքին: Անոնք կը հրապուրուին լաւով եւ հաճելիով: Թերեւս բարգաւաճման կամ յաջողութեան միջոց մը կը գտնեն Աստուծոյ Խօսքին դիտաւորութենէն դուրս: Զանիկա կը հետապնդեն եւ հաճոյք, ուրախութիւն եւ խանդավառութիւն կը գտնեն... Եղանակի մը համար: Անոնք «լաւ» կը գտնեն անոր մէջ, որուն համար Աստուած «ոչ» ըսած էր: Կը վախնան, որ Աստուած իրենցմէ կը պահէ գրաւիչ կամ հաճելի բաները: Կը կարծեն, որ Աստուած չի հասկնար իրենց պէտքերը կամ կ'անտեսէ իրենց փափաքներուն կարեւորութիւնը: Կը մտածեն, թէ Աստուած անհաւատարիմ է եթէ իրենց աղօթքները չպատասխանուին իրենց ուզած ժամանակամիջոցին: Կը մտածեն. «Ինչո՞ւ սպասեմ: Լաւ եւ հաճելին հիմա կ'ուզեմ»:

Նկատի Առ Յիսուսը

Նկատի առ Յիսուսը: Ան անապատն էր քառասուն ցերեկ եւ զիշեր առանց ջուրի, կերակուրի կամ հանգիստի: Անօթութեան սուր ցաւեր կ'ունենար փորին մէջ մինչ սովահարութիւնը սկսած էր իր խիստ աշխատանքը: Եթէ կերակուր եւ ջուր

չունենար շուտով, պիտի մեռնէր: Բայց ինչ էր առաջնակարգը
 Իրեն համար. կերակրողը կամ փորձութիւնը:

Այդ վիճակին մէջ էր, որ Սատանան եկաւ եւ հարցուց.
 «Եթէ Աստուծոյ Որդի ես, ըսէ որ այս քարերը հաց դառնան»
 (Մտ 4.3): Անգամ մը եւս թշնամին հարցականի տակ կ'առնէր
 այն ինչ որ Աստուած տակաւին նոր յստակօրէն յայտնած էր:
 Յորդանան Գետի ափին Հայրը բացէ ի բաց հռչակած էր,
 թէ Յիսուս Իր Որդին էր: Սատանան դարձեալ կը փորձէր
 աղաւաղել Աստուծոյ նկարագիրը. «Եթէ Աստուծոյ Որդին ես,
 ինչո՞ւ Ան քեզ հոս առաջնորդեց, որ սովահար ըլլաս: Ինչո՞ւ
 Ան կերակուրով չ'ապահովեր քեզ: Թերեւս ժամանակն
 է, որ դուն քեզի ապահովես: Եթէ շուտով չուտես բան մը,
 պիտի մեռնիս, կամ եթէ շատ ուշ ուտես, ֆիզիքական լուրջ
 հարցեր պիտի ունենաս: Իշխանութիւնդ գործածէ դուն քեզի
 ծառայելու համար: Այդ քարերը հացի վերածէ»:

Յիսուս դէմ դրաւ եւ սպասեց Աստուծոյ մատակարարումին:
 Ան չարտօնեց, որ թշնամին աղաւաղէ Աստուծոյ նկարագիրը
 Իր միտքին մէջ: Յիսուս գիտէր, որ Իր Հայրը կը հոգար Իր
 պէտքերը: Ան ենթարկուած մնաց Աստուծոյ իշխանութեան
 որքան ալ անհաճոյ ըլլար ատիկա ընելը այդ պահուն:

Հարցերը Իր ձեռով լուծելու Սատանային առաջարկին
 դէմ դնելէ ետք, «Սատանան ձգեց զինք ու հեռացաւ. եւ ահա
 հրեշտակները մօտեցան եւ կը ծառայէին Յիսուսի» (Մտ 4.11):
 Ինչո՞ւ: Եբրայիցներուն Նամակը գրողը հետեւեալ ձեռով կը
 նկարագրէ Յիսուսը. «Իր երկրաւոր կեանքի ընթացքին,
 Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց
 Աստուծոյ, որ կրնար զինք մահուրնէ փրկել: Եւ Աստուած
 զինք լսեց, որովհետեւ խոնարհ էր ան եւ հնազանդ:
 Թէպէտ Աստուածորդի էր, բայց իր չարչարանքներու
 փորձառութեամբ սորվեցաւ՝ թէ ինչ բան է հնազանդութիւնը»
 (Եբր 5.7-8): Աստուած լսեց Իրեն՝ աստուածային վախ

ունենալուն պատճառով: Ան չկասկածեցաւ Հօրը բարութեան վրայ: Նոյնիսկ մեծ փորձութեան եւ սաստիկ տառապանքի դիմաց՝ զորս ոեւէ մարդէ աւելի կրեց, Ան ընտրեց հնազանդութիւնը՝ հակառակ անոր որ ատիկա կը նշանակէր սաստիկ դժուարութիւններ:

Ադամի եւ Եւայի ունեցած փոխադարձ կեցուածքին հակառակ, այդ ձեւի հնազանդութիւնը եւ ենթարկուածութիւնը գոցեցին թշնամիիին դիմաց Իր կեանքէն ներս գործելու բոլոր ճամբաները: Ան վկայեց, ըսելով. «Ահա կու գայ այս աշխարհի իշխանը, որ իմ վրաս ո՛չ մէկ իշխանութիւն ունի: Բայց աշխարհը պէտք է գիտնայ թէ ես Հայրը կը սիրեմ եւ այդ է պատճառը, որ ինձի բոլոր պատուիրածները կը կատարեմ» (Յհ 14.30-31):

Հակառակ Ադամի, Յիսուս՝ որ վերջին Ադամը կը համարուի, կատարեալ հնազանդութեամբ քալեց Իր Հօրը առջեւ եւ կրցաւ վկայել, որ Սատանան ոչ մէկ իշխանութիւն ունէր Իր վրայ: Այդ պատճառով առաքեալը մեզ կը յորդորէ, ըսելով՝ «Ով որ կ'ըսէ թէ Քրիստոսի միացած կը մնայ, պէտք է ապրի այնպէս՝ ինչպէս Քրիստոս ինք ապրեցաւ» (Ա.Յհ 2.6): Ան է մեր օրինակը եւ նախակարապետը (առաջնորդը): Ան է, որ գինը վճարեց եւ լուսաւորեց ճամբան, որպէսզի անոր մէջ քալենք: Մենք այլեւս առաջին Ադամի եւ անոր անօրէնութեան ճամբայէն քալելու ստիպուած չենք, այլ՝ կանչուած ենք եւ լիազօրուած քալելու վերջին Ադամի հնազանդութեան ճամբուն մէջ:

Աստուածաշունչի *Տը Մասէճ* անգլերէն տարբերակը մեծ կրակով կը հոչակէ.

Թափեցէք ձեր ծանրութիւնները, սկսէք վազել եւ բնաւ մի՛ դադրիք [Աստուծոյ հնազանդելէ]: Առանց աւելորդ (անպէտք) հոգեւոր իղի, առանց մակաբուծական

մեղքերու: Ձեր աչքերը պահեցէ՛ք *Յիսուսի* վրայ, որ թէ՛ սկսաւ եւ թէ՛ աւարտեց այս մրցումը, որուն մէջ ենք մենք հիմա: Սերտեցէ՛ք, թէ ինչպէս ըրաւ ատիկա ան: Քանի որ ան իր աչքերը բնաւ չհանեց այն տեղէն, ուր ուղղուած էր՝ այդ զուարթացնող աւարտէն Աստուծոյ մէջ եւ հետ, ան կրցաւ տանիլ այդ ճամբուն ընթացքին իրեն հանդիպող ամէն բան. խաչը, ամօթը, ինչ որ կար: Եւ հիմա ան *հոն* է, պատուոյ դիրքին մէջ, ճիշդ Աստուծոյ կողքին: Երբ կը զգաք, որ յոգնեցաք հաւատքով քալելէն [հնազանդութեամբ քալելէն] կամ կորսնցուցած էք ձեր խանդավառութիւնը անոր մէջ, անգամ մը եւս կարդացէ՛ք այդ պատմութիւնը՝ ուշադիր ըլլալով անոր ամէն մէկ մանրամասնութեան, այդ շարունակ կրկնուող թշնամական արարքներուն, որոնցմէ ան հերկելով անցաւ: *Արիկա արդիւնալին* պիտի ցայտեցնէ ձեր հոգիին մէջ [պիտի խանդավառէ ձեր հոգին]: (Եբր 12.1-3, բառացի թարգմանութիւն)

Յաջորդ գլուխին մէջ պիտի խօսինք անհնազանդութեան հետեւանքներուն մասին: Անոնք միշտ անմիջապէս չեն երեւիր, բայց անպայման հետեւանքներ պիտի ըլլան: Մէյ մը որ անհնազանդութիւնը յստակօրէն կը բացայայտուի, բնաւ պէտք չէ զանիկա անգամ մը եւս հանդուրժելու մասին մտածես:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ Ա.

*Հաւարքը եւ հնազանդութիւնը ան-
բաժանելի են, որովհետեւ հնազան-
դութիւնը ապացոյցն է ճշմարիտ
հաւարքի:*

Շարք մը հետեւանքներ յառաջ կու գան
անհնազանդութենէն: Հետագայ ազդեցութիւնները
միշտ անմիջապէս չէ, որ կը ճանչցուին կամ կ'երեւին, բայց
ճիշդ ինչպէս ցանուած հունտերը հունձք մը յառաջ կը բերեն,
այդ հետեւանքներուն յայտնուիլն ալ նոյնքան վստահ է: Մեր
հոգիներուն թշնամին կ'ուզէ այդ գիտութիւնը պահել մեզմէ՝
յուսալով, որ թեթեւի կ'առնենք հնազանդութիւնը եւ դիւրաւ
զոհ կը դառնանք իր խաբուսիկ մարտավարութիւններուն:

Ոմանք ենթագիտակցաբար համոզուած կ'ըլլան, թէ
իրենց անհնազանդ որոշումին անմիջական շահը՝ ըստ
իրենց գնահատումին, աւելի ծանր պիտի կշռէ քան իրենց

անհնազանդութեան ունեցած որեւէ հետեւեանքը: Կ'ապշիմ, թէ ճիշդան տարածում գտած է այդ խաբուսիկ եւ մահացու մտայնութիւնը: Այդ է խորհուրդը կամ գաղտնի ոյժը անօրէնութեան: Կը յուսամ եւ կ'աղօթեմ, որ այս գալիք երեք գլուխները ձեր սիրտին մէջ կը դնեն անհնազանդութիւն չընելու յանձնառութիւնը:

Ադամի Որդիները

Պիտի սկսինք Կայէնով՝ Ադամի անդրանիկ որդին: Կայէն հողագործ էր ասպարէզով: Անոր եղբայրը՝ Աբել, Ադամի երկրորդ որդին, հովիւ էր: Աստուածաշունչը մեզի կը յայտնէ, թէ ժամանակ մը ետք Կայէն գետինին պտուղէն ընծայ բերաւ Տիրոջ, իսկ Աբել իբրեւ ընծայ բերաւ իր ոչխարներուն առաջիններէն: Կը կարդանք. «Տէրը նայուածքը դարձուց Աբելի ու անոր ընծային, բայց Կայէնի եւ անոր ընծային նայուածքը չդարձուց» (Ծն 4.4-5):

Առաւել, ատիկա կը հերքէ այն անկատար հաստատումը, որ յաճախ կը լսենք մեր եկեղեցիներուն մէջ այսօր, թէ՛ «Աստուած պիտի ընդունի քեզ ճիշդ ինչպէս որ ես»: Ատիկա ճիշդ է, բայց չենք կրնար հող կենալ. Աստուած մեզ կ'ընդունի ինչպէս որ ենք *եթէ զղջանք*: Փորձէ այդ մասնակի հաստատումը կիրարկել Անանիայի եւ Սափիրայի վրայ: Չի յարմարիր. անոնք մեռան (տես Գրծ 5.1-11):

Աստուած չընդունեց Կայէնի ընծան: Առաւել, Ան չընդունեց Կայէնը: Անոր Կայէնը մերժելը չի նշանակեր, որ Կայէնի ճակատագիրը մնայուն մերժումն էր, այլ՝ թէ Աստուծոյ առանց պայմանի ընդունելութեան մեր արդի ժամանակի աստուածաբանութիւնը ճշգրիտ չէ: Իրականութեան մէջ ատիկա վտանգաւոր է, քանի որ անիկա մեր սիրտէն կը հանէ Տիրոջ մեծարական վախը: Տիրոջ վախը կը պահպանէ մեզ եւ կ'օգնէ, որ հեռու մնանք մեղքէն (տես Ելք 20.20): Անանիայի

Եւ Սափիրայի մահէն ետք, Աստուածաշունչը մեզի կ'ըսէ, թէ. «Մեծ վախ մը պատեց ամբողջ եկեղեցին» (Գրծ 5.11): Այլեւս անհնազանդութիւնը պարզ հարց մը չէր:

Կ'ուզեմ քիչ մը արդիականացնել Ադամի երկու որդիներուն պատմութիւնը՝ անլի հասկնալի դարձնելու նպատակով: Անոր որդիները հասակ նետած էին տան մը մէջ, ուր Տիրոջ անունը կը կանչուէր: Երկուքն ալ Տիրոջ բերին ընծաներ, որոնք կը ներկայացնէին իրենց կեանքերը: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ մենք պէտք է մեր անձերը իբրեւ կենդանի զոհ նուիրենք Աստուծոյ (տես Հռ 12.1): Ամէն անգամ, որ զոհ մը կը բերուի Աստուծոյ առջեւ, անիկա կը ներկայացնէ մեր ծառայութիւնը Իրեն: Այնպէս չէր, որ Աբէլ Աստուծոյ կը ծառայէր, իսկ Կայէն՝ ոչ: Կայէն բախտախաղի ակումբներ, գիշերային ակումբներ կամ գինետուններ չէր յաճախեր՝ խուսափելով եկեղեցի յաճախելէ: Մի՛ կարծէք, որ Կայէն այնպիսի անձ մըն էր, որ ոչ մէկ կապ կ'ուզէր ունենալ Աստուծոյ հետ: Մեր ներկայի աշխարհին մէջ երկուքն ալ պիտի համարուէին հաւատացեալներ, որոնք հաղորդակցութեան մէջ էին Աստուծոյ հետ:

Երկուքն ալ ժրաջան աշխատողներ էին՝ Տիրոջ ընծայ բերելու համար: Իրականութեան մէջ կրնանք ապահովաբար ըսել, որ Կայէն անլի շատ կ'աշխատէր քան Աբէլը: Ես շատ բան չեմ գիտեր հողագործութեան մասին, բայց բաւարար բան գիտեմ ըսելու համար, թէ հովութիւնը ծանր աշխատանք է, բայց հողագործութիւնը անլի դժուար է: Հովութեան պարագային, ունիս պատասխանատուութիւններ առտու եւ կէսօրէ ետք: Բայց գոնէ օրուան ամէնէն տաք ժամերուն կրնաս հանգչիլ ծառի մը շուքին տակ եւ վայելել պաղ խմիչք մը:

Հողագործութիւնը անլի խիստ աշխատանք է: Կայէնի ընծան իր ճակտի քրտինքով յառաջ եկած էր՝ աշխատելով այն երկրիին վրայ, զոր Աստուած անիծած էր (տես Ծն 3.17-19): Կայէն հողը կը մաքրէր քարերէն, կոճերէն եւ այլ

բեկորներէ: Ապա ան կը հերկէր եւ կը մշակէր հողը: Ան կը ցանէր, կը ջրէր իր բերքը, պարարտացուցիչ կու տար անոր եւ կը պաշտպանէր զանիկա: Ան բաւական ջանք թափած էր ընծայ մը արտադրելու համար:

Աստուած Ինչո՞ւ Չընդունեց Կայէնը

Ուստի պէտք է հարց տանք, թէ Աստուած ինչո՞ւ չընդունեց Կայէնի ընծան երբ գիտէր, որ ան շատ աշխատած էր անոր համար: Պատասխանը կը գտնուի անոր ծնողքին քով: Պարտէզին մէջ ամէն բան, որ Աստուած ստեղծեց ունէր ծածկ մը: Անասունները ունին մուշտակ, ձուկերը ունին թեփ եւ թռչունները ունին փետուր: Բնաւ չես տեսներ արջ մը տափատ հագած. անիկա յաւելեալ ծածկի պէտք չունի:

Ադամը եւ Եւան ալ բացառութիւն չէին: Անոնք ֆիզիքական ծածկ կամ հագուստ չունէին, բայց փոխարէնը «պսակուած» էին փառքով (տես Սղ 8.5): «Պսակուիլ» բառը կը նշանակէ՝ շրջապատել: Անոնք ծածկուած էին փառքով: Այն փառքը, որ Աստուած անոնց վրայ դրաւ այնքան կշիռք ունէր կամ ներկայ էր, որ իրենց աչքէն ծածկած էր իրենց ֆիզիքական մերկութիւնը: Այդ պատճառով Սուրբ Գիրքերը կ'ըսեն. «Ադամ եւ իր կինը՝ երկուքն ալ մերկ էին, ու *չէին ամչնար*» (Ծն 2.25, շեշտադրումը՝ մեր կողմէ): Անոնք ինքնագիտակցութեամբ չէին կառավարուէր, այլ՝ իրենց կեանքը կ'ապրէին Աստուծոյ առջեւ: Հագուստի կարիքը ունենալու գաղափարը իրենց միտքէն չէր անցներ, որովհետեւ անհրաժեշտ չէր:

Ատիկա փոխուեցաւ այն պահուն, որ անհնազանդ գտնուեցան: Նախքան իրենց անհնազանդութիւնը իրենց հոգին էր, որ ամբողջութեամբ կը տիրէր իրենց վրայ, մինչ անհնազանդութենէն ետք մարմնաւորը տիրեց: Պտուղը ուտելէն անմիջապէս ետք առաջին բառերը, որ Աստուածաշունչին մէջ արձանագրուած են հետեւեալներն

են՝ «Եւ անոնց երկուքին աչքերը բացուեցան, ու գիտցան թէ մերկ էին» (Ծն 3.7): Բանալի բառը «գիտցան»ն է: Անոնք ունեցան գիտութիւն, որ չունէին ասկէ առաջ:

Բարիի եւ չարի գիտութեան սկզբունքը կեանքը ապրիլ է ճիշդի եւ սխալի հիման վրայ: Նախքան անկումը անոնց արարքները կը կառավարուէին ոչ թէ բարիի եւ չարի գիտութեամբ կամ ճիշդ ու սխալով, այլ՝ Աստուծոյ գիտութեամբ: Անոնք մղուած էին հնազանդութեան գիտակցութեամբ մը, որ կը ծնէր վստահութենէ եւ սէրէ: Ճիշդ ու սխալը իրենց միտքին մէջը չէին. անոնք Աստուծոյ ձեռքն էին: Մեզի կ'ըսուի, թէ՝

Ինք է Վէմը. Իր գործը անթերի է,
Որովհետեւ իր բոլոր ճամբաները արդար են:
Աստուած հաւատարիմ է, ու անիրաւութիւն չունի.
Ան արդար եւ ուղիղ է: (Բ.Օր 32.4)

Ադամ եւ Եւա Աստուծոյ հետ ներդաշնակութեամբ կ'ապրէին՝ Աստուծոյ հանդէպ ամբողջական գիտակցութեամբ: Բարիի ու Չարի Գիտութեան Ծառի պտուղէն ուտելով, անոնք գտան բարիի եւ չարի գիտութեան աղբիւր մը, որ Աստուծմէ դուրս էր: Մենք ատիկա կրնանք բացատրել իբրեւ տրամաբանութեան կամ դատողութեան սկզբունքը: Անոնք այլեւս կարիք չունէին Աստուծոյ, որ կառավարէր զիրենք. արդէն ունէին ճիշդի եւ սխալի գիտակցութիւն մը իրենց մէջ: Ատոր համար առաջին հարցումը, որ Աստուած հարցուց իրենց անկումէն ետք «Ո՞վ իմացուց քեզի»ն էր (Ծն 3.11):

Երբ որ Աստուած հարցում մը կը հարցնէ, Ան տեղեկութիւն չի փնտռեր: Ան քեզ ներս կը քաշէ Իր ըսել ուզածին մէջ: Աստուած արդէն գիտէր, որ անոնք կերած էին ծառին պտուղէն եւ կը խօսէին իրենց իմաստութենէն: Անոնք հնազանդութիւնը փոխարինած էին տրամաբանութեամբ

կամ դատողութեամբ: Ան իրականութեան մէջ կ'ըսէր. «Ուրեմն հիմա դուք գտած էք ճիշդի եւ սխալի Ինձմէ դուրս ուրիշ աղբիւր մը: Ըստ երեւոյթին կերած էք Բարիի եւ Չարի Գիտութեան Ծառէն»:

Անհնազանդութենէն անմիջապէս ետք, անոնք իրենց մերկութիւնը թուզի տերեւներով կամ *գեպրինի պտուղով* ծածկեցին: Հակառակ ծածկոյթին, անոնք տակաւին մերկ կը զգային եւ պահուրտեցան: Ապա Աստուած հարցուց. «Ո՞վ իմացուց քեզի թէ մերկ էիր» (Ծն 3.11): Ճիշդի եւ սխալի իրենց այդ նոր գտած գիտակցութեամբ անոնք փորձեցին իրենց աչքին ճիշդ եղածը ընել, սակայն տակաւին մերկ կը զգային: Այդ ծածկոյթը Աստուծոյ ձեւը չէր: Ան Իրեն ընդունելի եղող ծածկոյթը՝ կամ մերկութեան համար մատուցանուելիք ընծան, ցոյց տուաւ մորթելով անմեղ անասուն մը եւ Ադամն ու Եւան անոր մորթով ծածկելով: Այդ էր Աստուծոյ յանձնարարած ձեւը եւ ոչ թէ *գեպրինի պտուղը*:

Այդ ատեն Ադամն ու Եւան չէին գիտեր, թէ Աստուած ինչ կ'ուզէր: Բայց Կայէնը եւ Աբելը գիտէին: Իրենց ծնողները սորվեցուցած էին իրենց, թէ ինչ էր Աստուծոյ համար ընդունելի ընծան: Ուստի երբ Կայէն *գեպրինի պտուղներէն* բերաւ իր ընծան, դարձեալ անընդունելի ընծայ մըն էր: Ան Աստուծոյ կը ծառայէր իր ձեւով: Ան գործեց այն անէծքին համաձայն, որ կը գործէ տրամաբանութեան կամ դատողութեան ճամբով եւ ճիշդի ու սխալի համաձայն, եւ ոչ թէ մանկական հնազանդութեան մաքրութեամբ, ինչպէս իր եղբայրը՝ Աբել ըրաւ:

Դուն Տիրէ Անոր Վրայ

Աստուածաշունչը մեզի կ'ըսէ. «Իր հաւատքով էր, որ Աբել Կայէնէն շատ ատելի լաւ զոհ մատուցանեց Աստուծոյ, եւ այդ հաւատքին համար ալ Աստուած վկայեց իր արդար ըլլալուն մասին, ընդունելով իր մատուցած նուէրները: Եւ

թէպէտ Աբէլ մեռաւ, բայց իր հաւատքին օրինակը խօսուն կը մնայ միշտ» (Եբր 11.4): Նոր Կտակարանի այդ գիրքը գրողը Աբէլի հնազանդութիւնը կը հաւասարեցնէ հաւատքի հետ: Յետագայ գլուխներէն մէկուն մէջ պիտի տեսնենք, թէ ճշմարիտ հաւատքը կը հաւասարեցուի հնազանդութեան հետ ինչպէս նաեւ կը հիմնուի անոր վրայ: Ճշմարիտ հաւատքը կը գործէ հնազանդութեան մղումով եւ ոչ թէ ճիշդի եւ սխալի գիտակցութեամբ:

Երբ Կայէն անդրադարձաւ, որ իր ջանքերը եւ ընծան անընդունելի էին Աստուծոյ, «Կայէն շատ բորբոքեցաւ եւ երեսը կախեց» (Ծն 4.5): Ատիկա դասական կեցուածքն է կեղծաւոր կրօնասէր անձի մը երբ ճշմարտութեան դէմ յանդիման կ'ըլլայ: Ան կը բորբոքի կամ կը բարկանայ: Ատոր ճիշդ ըլլալը կը տեսնենք ամբողջ Աստուածաշունչին մէջ: Այդ բարկութիւնը կը հրահրուի հպարտութեամբ, եւ հպարտութիւնը կը մերժէ Աստուծոյ կամքը կամ ձեւը՝ իրենիսին կառչած մնալու համար:

Աստուած Իր բարեգթութեամբ կը փորձէ բանալ Կայէնի աչքերը՝ հարցումներ հարցնելով անոր. «Ինչո՞ւ բորբոքեցար, եւ ինչո՞ւ երեսդ կախեցիր. եթէ բարիք ընես, ընդունելի չ'ըլլամք» (Ծն 4.6-7): Բարիք ընելը Աստուծոյ հնազանդիլն է: Աստուած հնազանդութիւն կը նախընտրէ աւելի քան զոհ: Բազմաթիւ անգամներ Ան Իր ժողովուրդին ըսաւ, որ հրաժարին իրենց երգերէն եւ նուագարաններէն եւ այլեւս զոհեր չբերեն: Ինչո՞ւ: «Արդարեւ կանչեցի՝ բայց ո՛չ մէկը պատասխանեց, խօսեցայ՝ սակայն մտիկ չըրին» (Ես 66.4): Անոնք զոհեր մատուցանեցին, բայց մտիկ չըրին Իր ըսածներուն կամ չհնազանդեցան Իրեն: Պաշտամունքի բարձրագոյն ձեւը հնազանդութիւնն է:

Ատիկա գիտնալով, վերի համարին մէջ կրնանք *բարիք ընեսին* փոխարէն *Ինձի հնազանդիս* դնել առանց իմաստը փոխած ըլլալու: Այսպէս կ'ըլլայ համարը. «Կայէն, ինչո՞ւ

բորբոքեցար: Պէտք չունիս բորբոքելու: Դաս թող ըլլայ ասիկա քեզի: Եթէ հնազանդիս Ինձի ինչպէս եղբայրդ հնազանդեցաւ, քեզ եւ քու զոհդ կ'ընդունիմ ինչպէս ընդունեցի Աբէլը եւ իր զոհը»:

Տէրը զգուշացուց. «Եթէ բարիք չընես [Եթէ չհնազանդիս եւ շարունակես քու հիմակուան տրամաբանութեան կամ դատողութեան ձեւովդ], մեղքը դրան քով պառկած է. ան քեզի կը բաղձայ, բայց դուն տիրէ անոր վրայ» (Ծն 4.7): Երկու բաներ նկատի առ հոս: Առաջին՝ մեղքը (անհնազանդութիւնը) կը բաղձայ: Անօրէնութեան տէրը՝ Սատանան, անհնազանդութեան ետին գտնուող ոյժն է: Երբ այդ ոյժին մուտքի արտօնութիւն տրուեցաւ Ադամի կողմէ, անիկա մէկ նպատակ ունէր. կառավարել ամէն մարդ եւ ամէն բան կամ տիրել անոնց վրայ: Ատիկա կը նմանի չար գիտնականի մը, որ անպարունակելի քանակութեամբ շողարձակային կազեր կ'արձակէ մեր մթնոլորտին կամ օդին մէջ: Կազերը կը թափանցեն ամէն տեղ հակառակ անոր որ գիտնականը ինքնին ամէն տեղ չի կրնար թափանցել: Ան գործի լծեց մահացու եւ հզօր ոյժ մը: Միակ անձերը, որոնք պաշտպանուած պիտի ըլլան այդ մահացու կազերէն պիտի ըլլան անոնք, որոնք պաշտպանութեան դիմակներ հագած պիտի ըլլան: Աստուծոյ Խօսքը շատ յստակօրէն կ'ըսէ. «Գիտենք թէ մենք Աստուծմէ ենք, իսկ ամբողջ աշխարհը Չարին մէջ մխրճուած է» (Ա.Յհ 5.19):

Մեղքի ցանկութիւնը նկարագրելու համար կրնանք զանիկա նաեւ նմանցնել ձգողական ոյժին: Անիկա մնայուն ոյժ մըն է, որ միշտ հոն է եւ կ'ազդէ ամէն բանի վրայ: Եթէ շէնքի մը տանիքէն դէպի վար ձգես մարմինդ, պիտի տեսնես այդ ոյժին ազդեցութիւնը եւ անիկա քեզ պիտի քաշէ դէպի ամէնէն ցած կէտը եւ, իրականութեան մէջ, շատ զօրաւոր կերպով: Կրնայ ըլլալ, որ դուն չես ուզեր իյնալ կամ նոյնիսկ գիտակցութիւն կամ հաւատք չունիս ձգողական ոյժին

նկատմամբ: Սակայն ատով հանդերձ պիտի հանդիպիս անոր կամ ենթարկուիս անոր ազդեցութեան:

Օր մը գիտնականներ յայտնաբերեցին ուրիշ օրէնք մը եւս. վերցնելու օրէնքը: Անոնք տեսան, թէ վերցնելու օրէնքը կը գերակշռէ ձգողութեան օրէնքին եթէ ճիշդ պայմանները ներկայ ըլլան: Հնարամիտ մարդիկ օդանաւը ձեակերպեցին վերցնելու օրէնքին հիման վրայ: Երբ կը թռչիս օդանաւի մը մէջ, մակարդակի մը մէջ ես, ուր ազատ ես ձգողական ոյժէն եւ չես իյնար դէպի ամէնէն ցած կէտը: Աստուծոյ Խօսքը մեզի կ'ըսէ, թէ՝ «Կեանքի Հոգիին Օրէնքը՝ Քրիստոս Յիսուսով ազատեց զիս մեղքի եւ մահուան օրէնքէն» (Հռ 8.2)⁶: Ինչ հիանալի լուր:

Ես յաճախ կը ճամբորդեմ: Աշխարհի շուրջ Աւետարանը հոչակելու երեսուն տարուան ծառայութեանս ընթացքին, գրեթէ տասը միլիոն մղոն ճամբորդած եմ: Երբ կ'ելլեմ այդ օդանաւները, կ'ուրախանամ, որ վերցնելու օրէնքը կ'ազատագրէ զիս ձգողական ոյժի օրէնքէն: Սակայն եթէ օդաչուն որոշէ մարել մեքենաները եւ թեւերը իյնան կամ վար կախուին, օդանաւը ձգողական ոյժի օրէնքի ամբողջական ազդեցութիւնը պիտի զգայ եւ զօրաւոր կերպով պիտի իյնայ: Այլեւս ձգողական ոյժի յաղթահարումը պիտի չվայելենք, այլ՝ մենք մեզ պիտի գտնենք յաղթահարուած վիճակի մը մէջ այդ նախապէս գերիշխուած ոյժին կողմէ:

Այդ նոյն գլուխին մէջ Սուրբ Գիրքը նաեւ կը յայտարարէ՝ «Ուրեմն, եղբայրներ, պարտական ենք, բայց ո՛չ մարմինին՝ մարմինին համաձայն ապրելու համար: Որովհետեւ եթէ մարմինին համաձայն ապրիք՝ պիտի մեռնիք» (Հռ 8.12-13)⁷: Հակառակ անոր որ Կեանքի Հոգիին Օրէնքը մեզ կ'ազատէ մեղքի օրէնքէն, մեղքի օրէնքը տակաւին կը մնայ: Մեր

6 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Երբայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

7 Նոյնը

պաշտպանութիւնը կամ այդ օրէնքը յաղթահարելը կու գայ ճշմարիտ հաւատքէ կամ հնազանդութենէ, որ ծնունդ կ'անէ մեր սիրտին մէջ:

Կեանքի Հոգիին Օրէնքը նաեւ կը կոչուի Հաւատքի Օրէնքը (տես Հռ 3.27)⁸: Մենք գիտենք, որ հաւատքի օրէնքը կը գերիշխէ մեղքի օրէնքին: Ծշմարիտ հաւատքը կը բացատրուի իբրեւ հնազանդութեան համապատասխան գործեր ունենալ (կարդա՛ Յկ 2.19-23): Հաւատքն ու հնազանդութիւնը անբաժանելի են, որովհետեւ հնազանդութիւնը ապացոյց է ճշմարիտ հաւատքի:

Աբէլ յաղթահարեց մեղքի եւ մահուան օրէնքը հաւատքով կամ Աստուծոյ հնազանդութեամբ: Կայէնի հետ խօսելու ատեն, Աստուած զգուշացուց, ըսելով՝ «Մեղքը քեզի կը բաղձայ» (ատիկա տարբեր չէ որեւէ հաստատուն նիւթի վրայ ձգողական ոյժի բաղձանքէն կամ ազդեցութենէն). եթէ Ինձի հնազանդիս, պիտի յաղթահարես զանիկա (ճիշդ ինչպէս վերցնելու ոյժը կը գերիշխէ ձգողական ոյժին): Մեղքը կը յաղթահարուի հնազանդութեան միջոցաւ»:

Բաց Դուռ

Երկրորդ բանը, որ Աստուած Կայէնի ըսաւ այն էր, թէ՛ «Եթէ բարիք չընես [եթէ չհնազանդիս Ինձի] մեղքը դրան քով պառկած է» (Ծն 4.7): Նկատի առ դուռ բառը: Կայ պատկերաւոր դուռ մը ամէն անձի կեանքին մէջ. դուռ անոր գիտակից ըլլաս կամ ոչ, անիկա հոն է: Այդ դուռը կը ներկայացնէ մուտք դէպի քու կեանքը: Այս պարագային անիկա մուտք է մեղքի եւ դիւային իշխանութեան: Աստուած մեզի սկիզբէն կ'ըսէ, թէ ինչն է, որ այդ դուռը կը բանայ մեղքին առջեւ եւ ինչն է, որ զանիկա կը գոցէ: Անհնազանդութիւնը կը

⁸ Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

բանայ զանհկա, մինչ հնազանդութիւնը կը գոցէ զանհկա:

Ինչ պատահեցաւ Կայէնի հետ: Ան շարունակեց իր իմաստութեամբ եւ տրամաբանութեամբ կամ դատողութեամբ: Նախանձը մտաւ անոր սիրտը, որուն անմիջապէս յաջորդեց գայթակղութիւնը: Ապա եկաւ ատելութիւնը: Մարդասպանութիւն ծրագրեց եւ ոչ կարճ ժամանակ ետք գայրոյթէն մղուած սպաննեց իր եղբայրը: Ան յարձակողական վարմունք ունէր եւ կորսնցուցած էր Աստուծոյ վախը: Անոր ընդդիմութիւնը կը տեսնենք այն ատեն երբ Աստուած իրեն կը հարցնէ, թէ ի՞նչ է իր եղբայրը: Ան ըսաւ. «Չեմ գիտեր. միթէ ես իմ եղբորս պահապանն եմ» (Ծն 4.9): Ան ստեց Աստուծոյ, որովհետեւ շատ լաւ գիտէր, թէ ի՞նչ էր իր եղբայրը:

Առողջ միտք ունեցող ռեւէ մէկը պիտի անդրադառնար, որ Աստուած գիտէր Աբէլի տեղը, բայց այդ է, որ կը պատահի երբ մէկը կը վստահի իր տրամաբանութեան կամ դատողութեան եւ կ'արտօնէ անհնազանդութեան մուտքը իր կեանքէն ներս: Ան իր կապը կը կորսնցնէ հոգեւոր բաներու իրականութեան հետ: Կը փորձէ Աստուծոյ պատկերը իջեցնել իր մակարդակին եւ սահմանափակումներուն, եւ ինքզինք կը պատկերացնէ ըլլալ Աստուծոյ չափ իմաստուն, կամ երբեմն նոյնիսկ աւելի իմաստուն: Ան առողջ կերպով չի մտածեր: Արուեստը շատ լաւ օրինակ մըն է. անօրէնութենէ ծնած տրամաբանութիւնը կամ դատողութիւնը զինք առաջնորդեց հաւատալու, թէ կրնար տապալել զԱստուած: Ինչ մեծ անմտութիւն: Ատով հանդերձ ան շատեր առաջնորդած է իր ճամբով (կարդա՛ Ես 14.12-17):

Եթէ բարեկամ ըլլայիր Կայէնի եւ Աբէլի հետ եւ չգիտնայիր անոնց պատմութիւնը, կրնայիր շուարած ըլլալ բոլոր եղածներով: Ինչպէս կրնար մարդ մը՝ որ ժրաջանօրէն կը ծառայէր Աստուծոյ, վերջաւորութեան անպատկառ մարդասպան մը ըլլալ: Ինչպէս կրնար ըլլալ ատիկա: Անհնազանդութեան մէջ շարունակելով, ան իր հոգիին դուռը

բացած էր մեղքի օրէնքին: Լսամ՞ ես հետեւեալ ասացուածքը՝ «Մէկ *ինչ* տուր, մղոն մը պիտի առնեն»: Ատիկա շատ աղուոր ձեւով կը նկարագրէ անհնազանդութեան օրէնքը: Եթէ կեանքդ անոր առջեւ բանաս քիչ մը, ջրամբարի պատին մէջ եղող ճեղքի մը պէս կ'ըլլայ: Ջուրին ոյժը վերջաւորութեան կը փլէ պատը եւ ջրհեղեղ կ'ըլլայ:

Ես պատիւը ունիմ Աւետարանը հռչակելու ւաւելի քան երեսուն տարիէ ի վեր: Այդ ընթացքին ես այդ օրէնքը տեսած եմ անհամար դէպքերու մէջ: Տեսած եմ ինչպէս մարդիկ շատ կրակոտ կը սկսին ծառայել Աստուծոյ: Գործունեայ կ'ըլլան իրենց եկեղեցիին մէջ եւ շարունակ Յիսուսի մասին կը պատմեն ուրիշներու: Անոնք Կայէնի նման են, որ ժրաջան կերպով սկսաւ: Բայց ժամանակի ընթացքին կացութիւններ կ'ըլլան, որոնք մէջտեղ կը հանեն տակաւին իրենց մէջ գոյութիւն ունեցող ինքնակամութիւնը: Կամ Աստուծոյ ուղղակի իշխանութեան ճամբով, ինչպէս էր Կայէնի պարագային, կամ ալ Աստուծոյ կողմէ նշանակուած իշխանութեան ճամբով: Երկու պարագաներուն ալ միշտ իշխանութեան հետ հարց մը կ'ըլլայ:

Տեսած եմ ինչպէս ոմանք մերժած են ենթարկել իրենց կամքը եւ շարունակած են իրենց ճամբուն մէջ: Միայն ժամանակի հարց է անօրէնութեան իրենց կեանքին մէջ հեղեղի պէս ներխուժելը: Անպայմանօրէն մարդասպանութիւն չ'ըլլար, բայց մէկ բան որոշ է. անպայման ձեւով մը մէջտեղ կ'ելլէ: Թերեւս ազահութեան, ատելութեան, բարկութեան, աններողամտութեան, վէճերու, բամբասանքի, սեռային մեղքի հեղեղ մը կամ անհամար ուրիշ ձեւի կապանքներ կը բռնեն իրենց մարմնաւոր էութիւնը: Յաճախ այդ խաբուած եւ գայթակղած վիճակին մէջ անոնք կը պատկերացնեն, թէ լաւ յարաբերութեան մէջ են Աստուծոյ հետ, եւ բոլոր միւս իշխանութիւնները՝ ծայրայեղ, օրինապաշտ եւ անժամանակակից:

Կայէնի նման մարդոց պարագային, եթէ անոնք ըմբոստանան Աստուծոյ ուղղակի իշխանութեան դէմ, անոնք Աստուծոյ պատկերը, իշխանութիւնը եւ զօրութիւնը կ'իջեցնեն աւելի կառավարելի մակարդակի մը՝ այդպիսով հետզհետէ աւելի անկապ ըլլալով իրականութենէն: Անոնք կը դաւանին Աստուծոյ տիրութիւնը, բայց իրականութեան մէջ կը ծառայեն Յիսուսի մը, որ ձեակերպուած է իրենց պատկերին նմանութեամբ: Առանց անդրադառնալու, իրենց սիրտին մէջ անոնք իրենց տրամաբանութիւնը կամ դատողութիւնը բարձրացուցած կ'ըլլան Աստուծոյ գահէն եւ իշխանութենէն վեր: Այս կամ այն ձեւով անոնք կուրցած կ'ըլլան իրենց իսկական վիճակին՝ իրենց սիրտին խաբկանքին պատճառով:

Եթէ Կայէնին ըսէիր՝ երբ ան տակաւին աւելի փոքր էր եւ կակուղ սիրտ ունէր ու կը ծառայէր Աստուծոյ, թէ՛ «Օր մը եղբայրդ պիտի սպաննես», ան պիտի ցնցուէր եւ անմիջապէս պատասխանէր՝ «Ատիկա անկարելի է: Ես այդպիսի բան բնաւ չեմ ընէր»: Սակայն յետագային ան ինքզինք բացաւ անօրէնութեան դիմաց եւ վերջաւորութեան ըրաւ այն ինչ որ անկարելի էր իրեն համար:

Մարդիկը՝ Եկեղեցոյ անդամ եղողները եւ չեղողները, օր մը պիտի կանգնին Աստուծոյ առջեւ եւ դատուին իրենց անօրէնութեան համար: Սակայն եթէ անոնց կեանքի ընթացքին հետեւած ըլլայիր, բնաւ պիտի չպատկերացնէիր, որ անոնք կը հասնէին հոն, ուր որ հասած էին: Հիմա ալ անոնք իրենք զիրենք անօրէն չեն համարեր: Բայց Դատաստանի Օրը երբ ճշմարտութիւնը պիտի յայտնուի, անոնք իրենք իրենց հարց պիտի տան, թէ՛ *Ես ինչպէս այսքան հեռու սահեցայ Աստուծոյ ձեւերուն հանդէպ հնազանդութենէն:* Տխուր պատասխանը պիտի ըլլայ այն, որ անոնք չսիրեցին եւ չընդունեցին Իր ծածկոյթին տակ ըլլալու ճշմարտութիւնը:

Միայն մէկ յոյս կայ խաբկանքի մէջ եղող մարդոց համար. որ Աստուծոյ ողորմութիւնը բանայ իրենց աչքերը եւ որ Անոր ճշմարտութեան լոյսը փարատէ խաբկանքի խաւար քողը: Սիրտիս փափաքն է, ինչպէս նաեւ այս գիրքին նպատակը՝ պահպանել մարդիկը անօրէնութեան խաբէական իշխանութեան տիրապետութենէն եւ բացայայտել ճշմարտութեան լոյսը անոնց, որոնք արդէն ինկած են անոր թակարդին ճիրաններուն մէջ եւ հետեաբար ազատ արձակել զանոնք: Ես այս պատգամը քարոզած եմ ամբողջ աշխարհի շուրջ, եւ երբ հարցնեմ, թէ քանինքն ինկած են անհնազանդութեան մէջ, պատասխանը միշտ ցնցիչ է. յաճախ 50 տոկոսէն ատելին: Մեծամասնութիւնը կը խոստովանի, թէ՛ «Ես չէի գիտեր, որ ըմբոստութեան մէջ եմ մինչեւ որ ճշմարտութիւնը բացայայտեց զանիկա սիրտիս մէջ»:

Ես ալ իմ կարգիս կը խոստովանիմ, որ այս գիրքը չեմ գրեր իբրեւ մէկը, որ բնաւ չէ խաբուած անօրէնութեան այդ գաղտնի ոյժին կողմէ: Ոչ: Ես եղած եմ անոր սուկալի ճիրաններուն մէջ, եւ Աստուած Իր ողորմութեամբ բացայայտած է սիրտիս եւ ձեւերուս սխալ ըլլալը: Ես ձեզի հետ կը բաժնեկցիմ այն ինչ որ գիտեմ եւ ինչէն ազատագրուած եմ: Ես շատ երախտապարտ եմ մեր թանկագին Տիրոջ՝ Իր քանդոր ողորմութեան համար:

Աստուած շնորհալի կերպով կը փորձէ բանալ մեր աչքերը անհնազանդութեան մարզերուն: Բայց ինչպէս Կայէնի պարագային, մենք ճշմարտութիւնը պիտի չտեսնենք մինչեւ որ չխոնարհեցնենք մեր անձերը: Յաջորդ գլուխին մէջ պիտի տեսնենք այն հսկայ կարեւորութիւնը, որ խոնարհութիւնը կը խաղայ մեր ազատագրութեան մէջ, եւ միեւնոյն ատեն պիտի տեսնենք հպարտութեան հետեանքները:

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ Բ.

*Մասնակի հնազանդությունը բնաւ
հնազանդություն չէ Աստուծոյ աչքին:*

Ի սրայելի առաջին թագաւորին՝ Սաւուղի կեանքը մեզի կու տայ յստակ պատկեր մը, թէ ինչ կը պատահի երբ մէկը տեղի կու տայ անհնազանդութեան: Սաւուղի պատմութիւնը ողբերգական պատմութիւն մըն է, որ կ'ընդրգէ շատ մը օրինակները մեզի համար այսօր՝ իբրեւ հաւատարմութեան բանալիներ կան՝ պահուած Սաւուղի ուղղուած Աստուծոյ յանդիմանական խօսքին մէջ: Երբ անոր կեանքին նայինք, աւելի յստակօրէն կը հասկնանք հոգեւոր հետեւանքները աստուածային իշխանութեան ամբողջական ձեւով չհնազանդելուն: Եթէ արտօնենք, այդ հասկացողութիւնը պիտի զօրացնէ մեզ, եւ Սաւուղի ձախողութիւնը մեզի համար թէ դաս եւ թէ գգուազացում պիտի ըլլայ: Մեզի կ'ըսուի. «Ինչ որ սկիզբէն Սուրբ Գիրքին

մէջ գրուեցաւ՝ մեր դաստիարակութեան համար գրուեցաւ» (Հո 15.4), եւ՝ «Այս բոլորը անոնց պատահեցան՝ իբրեւ օրինակ գալիքին, եւ գրուեցան՝ իբրեւ ազդարարութիւն մեզի, որ ժամանակներու վախճանին մօտեցեր ենք» (Ա.Կր 10.11):

Մասնակի Հնազանդութիւն

Սկսինք այն տեղէն, ուր Իսրայէլի աւագ մարգարէն՝ Սամուէլ գնաց Սաւուդին՝ Աստուծոյ բերնէն ելած հրամանով մը: Ան զգուշացուց Սաւուդը, որ ուշադրութեամբ մտիկ ընէ թելադրանքներուն. «Հիմա գնա՛ եւ Ամաղէկը զմրկ: Անոր ամբողջ ունեցածը նզովէ: Մի՛ խնայեր անոր, հապա մեռցոր այր մարդիկն ու կիները, երախաները եւ ծծկերները, եզները, ոչխարները, ուղտերն ու էշերը» (Ա.Թգ 15.3): Հրամանը ուղղակի էր եւ շատ որոշակի: Ոչ մէկ բան, որ Ամաղէկ ունէր՝ մարդիկ կամ անասուններ, պէտք էր որջ պահուէր: Ամէն բան, որ կը շնչէր, պէտք էր կործանուէր:

Տեսէք Սաւուդի պատասխանը: Ան չըսաւ. «Չեմ ըներ ատիկա... Ատիկա շատ դաժան է»: Շատ յաճախ մենք ըմբոստութեան հասկացողութիւնը կը սահմանափակենք յայտնի բաներու շուրջ, ինչ որ բացայայտ անհնազանդութիւնն է: Սակայն շուտով պիտի յայտնաբերենք, որ ատիկա բնաւ ճշգրիտ չէ: Այնպէս չէր, որ Սաւուդ նախ համաձայնեցաւ եւ յետոյ փոխեց միտքը: Շատերս այդ տեսակի անհնազանդութիւնն ալ կը հասկնան: Ոչ ալ այնպէս եղաւ, որ Սաւուդ ըսուածը առաջնահերթութիւն դարձնելը անտեսեց եւ վերջաւորութեան անհնազանդ գտնուեցաւ մոռացութեան պատճառով: Մեծամասնութիւնս պիտի ընդունինք, որ ատիկա հնազանդութիւն պիտի չըլլար, բայց ներելի պիտի ըլլար՝ չար մտադրութեամբ կատարուած չըլլալուն պատճառով: Շատ հաւանաբար բոլորս ալ պիտի ընդունինք, որ վերը նշուած բոլոր *սենարիոն*երը անհնազանդ վարմունք

կը ներկայացնեն, բայց եկեք մեր ուշաադրութիւնը դարձեալ դարձնենք Սաւուղի:

Ան անմիջապէս հաւաքեց իր բանակը եւ պատրաստուեցան յարձակելու Ամաղէկի վրայ: Ամէն բան շատ լաւ կ'երեւէր: Ան յարձակեցաւ եւ սպաննեց ամէն տղամարդ, կին, պզտիկ եւ մանուկ: Տասնեակ հազարաւորներ անցան Սաւուղի եւ անոր հօր բանակին սուրէն:

Սակայն Սաւուղ խնայեց Ամաղէկի թագաւորը: Ինչո՞ւ: Հաւանաբար որովհետեւ կը փորձէր համակերպիլ իր ժամանակի մշակոյթին: Եթէ ազգ մը նուաճէիր եւ անոր առաջնորդը ողջ բռնէիր, զայն պալատ կը բերէիր իբրեւ ստրուկ՝ իբրեւ տեսակ մը կենդանի յաղթանշան:

Սաւուղ նաեւ մորթել տուաւ հազարաւոր անասուններ, սակայն ան խնայեց ոչխարներուն, եզներուն, հորթերուն, գառնուկներուն եւ ամէն լաւ բանի լաւագոյնները, եւ տուաւ զանոնք իր ժողովուրդին, որպէսզի զոհ մատուցանեն Աստուծոյ՝ Սուրբ Գրային պատուէրը կատարած ըլլալով: Պատկերացուցէք, թէ ժողովուրդին դիմաց ինչպէս երեցաւ անոր այդ արարքը: Մինչ այդ անասունները կը մատուցանէին Եհովային, անոնք կը մտածէին՝ *Ինչ բարեպաշտ թագաւոր մը ունինք, որ միշտ Տէրը առաջին կարգի կը դնէ:*

Բայց Աստուած ուրիշ տեսակէտ մը ունէր: Ան իր զղջումը արտայայտեց Սամուէլին, ըսելով՝ «Կը զղջամ որ Սաւուղը թագաւոր նշանակեցի, քանի որ ինձմէ հեռացաւ ու իմ հրամաններս չգործադրեց» (Ա.ԹԳ 15.11): Սաւուղ սպաննեց տասնեակ հազարաւորները, բայց խնայեց մէկը: Ան իրեն հրամայուածին 99 տոկոսը ըրաւ: Շատերս հնազանդութիւն կը տեսնենք անոր ըրածին մէջ, մինչ Աստուած անհնազանդութիւն տեսաւ: Իրականութեան մէջ մարգարէին միջոցաւ, քանի մը համար ետք, Սաւուղի ըրածը *ըմբոստութիւն* կոչեց: Ուստի կը տեսնենք, որ

մասնակի հնազանդութիւնը բնաւ ալ հնազանդութիւն չէ Աստուծոյ աչքին: Իրականութեան մէջ գրեթէ ամբողջական հնազանդութիւնը, նոյնիսկ 99 տոկոսը, հնազանդութիւն չի համարուիր: Ընդհակառակը, անիկա ըմբոստութիւն է:

Որքան յաճախ կը լսենք հետեւեալ խօսքը. «Ինչհո՛ւ չես նայիր իմ ամբողջ ըրածիս: Միայն կը կեդրոնանաս այն պզտիկ բաժինին վրայ, որ չըրի»: Սաւուղ վստահաբար այդպէս կրնար ըսել: Հակառակ անոր որ ատիկա կը համապատասխանէ մարդկային տրամաբանութեան կամ դատողութեան, անիկա չի համապատասխաներ աստուածայինին:

Սամուէլ ճամբայ ելաւ Սաւուղին երթալու, եւ երբ Սամուէլ հասաւ անոր քով, Սաւուղ խանդավառօրէն ողջունեց զինք, ըսելով. «*Դուն Տէրոջմէն օրհնեալ ըլլաս. Տէրոջ հրամանը գործադրեցի*» (Ա.Թգ 15.13): Կրնաս լսել անոր ձայնին մէջի ուրախութիւնը եւ վստահութիւնը: Ես ամբողջովին կը հաւատամ, որ Սաւուղ անկեղծ էր: Ան իրապէս կը հաւատար, որ ըրած էր իրեն հրամայուածը, սակայն Աստուած ըսաւ, որ ան ըմբոստացաւ:

Ինչպէս կրնանք բացատրել տեսակէտներու այն մեծ տարբերութիւնը, որ կար մէկ գիշեր առաջ Աստուծոյ ըսածին եւ իր սիրտին մէջ Սաւուղի հաւատացածին միջեւ: Պատասխանը կը գտնուի հետեւեալ բառերուն մէջ. «Այդ պատուիրանները լսելով մի՛ գոհանաք, այլ՝ կատարեցէք զանոնք. այլապէս դուք ձեզ խաբած կ'ըլլաք» (Յլ 1.22): Այն պահուն, որ մէկը անհնազանդ կը գտնուի իրեն յստակօրէն յայտնուած Աստուծոյ խօսքին, քող մը կ'իջնէ անոր սիրտին վրայ, եւ այդ քողը կը խեղաթիւրէ իր ըմբռնումը եւ արգելք կ'ըլլայ անոր: Ատիկա խաբկանք է: Սաւուղ խաբուած էր իր տրամաբանութեան կամ դատողութեան մէջ եւ ճիշդ բանը ըրած ըլլալու իր ինքնավստահութեան մէջ երբ, իրականութեան մէջ, ինք սխալ էր: Անոր համոզումը կը

հակասէր Աստուծոյ իրականութեան, հակառակ անոր որ անիկա կրնար համապատասխան ըլլալ մարդկային տրամաբանութեան կամ դատողութեան:

Ատիկա առաջին անգամը չէր, որ Սաուղ ամբողջական ձեւով չէր հնազանդած Տիրոջ խօսքին: Սամուէլ նախապէս յանդիմանած էր զինք անհնազանդ գտնուելուն համար (Ա.Թգ 13.1-13): Կրնայ ըլլալ, որ ուրիշ բաներ ալ պատահած էին, որոնք չեն արձանագրուած: Սաուղ շարունակ անհնազանդ կ'ըլլար: Երբ մէկը այդ սովորութեան մէջ կը դնէ ինքզինք, հետզհետէ անելի դժուար կը դառնայ ճշմարտութիւնը սխալէն զանազանելը:

Խաբկանքի Քողը

Կը յիշեն այն առաջին անգամը, որ մեղք գործեցիր փրկուելէդ ետք: Ես կը յիշեմ: Կարծես դանակ մը մխրճուեցաւ սիրտիս մէջ: Իբրեւ Աստուծոյ զաւակներ, մենք բոլորս ալ ծանօթ ենք այդ զգացումին: Անիկա Սուրբ Հոգիին յանդիմանութիւնն է եւ մեր սիրտերուն ապտակը: Բայց ինչ կը պատահի երբ մենք կ'արդարացնենք մեր ըրածը՝ այդպիսով մեր կոնակը դարձնելով ճշմարիտ զղջումին: Երկու բաներ: Առաջին՝ մենք մեզ դրած կ'ըլլանք նոյն անհնազանդութեան արարքը կրկնելու դիրքին մէջ: Երկրորդ՝ խաբկանքի քողը կը ծածկէ մեր սիրտը՝ այդպիսով պակսեցնելով Սուրբ Հոգիի յանդիմանութեան զգացումը, զանիկա փոխարինելով տրամաբանութեամբ կամ դատողութեամբ:

Յաջորդ խախտումին, մենք դանակը այդքան սուր կերպով չենք զգար, որովհետեւ քողը ծածկած է մեր սիրտը. փոխարէնը միայն քիչ մը անհանգիստ կը զգանք: Դարձեալ մենք մեզ կ'արդարացնենք, եւ ուրիշ քող մը եւս կը ծածկէ մեր սիրտը՝ տակաւին անելի եւս մեղմացնելով ճշմարտութեան կանչը: Յաջորդ անգամ, որ անօրէնութիւն կը գործենք,

պարզապէս շատ մեղմ յանդիմանութիւն մը կը զգանք: Եթէ նորէն արդարացնենք, մահուան ուրիշ քող մը եւս կը ծածկէ մեր սիրտը: Եթէ նորէն մեղք գործենք, քողը արդէն այնքան հաստ կ'ըլլայ, որ յանդիմանութիւն չենք զգար բնաւ. միայն արդարացում: Իսաբկանքը ճշմարտութիւնը պահած կ'ըլլայ մեզմէ, իսկ խիղճը կարծրացած կ'ըլլայ եւ դադրած զգացումներ զգալէ:

Այդ կէտին հասած անձը կրնայ հեռանալ բարեպաշտութեան կերպարանքէն կամ աւելի յաճախ կրնայ շարունակել ապրիլբարեպաշտութեան որոշ ձեւի մը մէջ, բայց անոր կեանքը շատ քիչ կը տարբերի Աստուծոյ հետ ուխտ չունեցողներուն կեանքէն: Հակառակ Քրիստոնեայ ըլլալը դաւանելուն, ան կ'ապրի բարիի եւ չարի իր մոլորած գիտութեամբ: Ճիշդի եւ սխալի անոր գիտակցութիւնը հիմա իր սիրտին կը հասնի Սուրբ Հոգիի ներշնչումով գրուած կենդանի Աստուծոյ Խօսքէն զատ ուրիշ աղբիւրէ մը: Ան կ'ապրի իր սիրտին խաբուած թելադրանքներուն համաձայն: Ատիկա կրնայ ըլլալ Սուրբ Գիրքերուն գիրը՝ որ կը սպաննէ (տես Բ.Կր 3.6)⁹, կամ այն ինչ որ ընկերութիւնը ճիշդ կամ սխալ կը տեսնէ: Երկու պարագաներուն ալ, ան անկապ կ'ըլլայ կենդանի Աստուծմէ, եւ միակ ձեւը, որով կարելի է անոր հասնիլ Աստուծոյ կողմէ դրկուած պատգամաբերի մը միջոցաւ է:

Երեք Հանգրուաններով Գործընթացը

Տէրը անձ մը կ'առաջնորդէ հետզհետէ աճող գործընթացով մը, որպէսզի հասնի անոր իր անհնազանդութեան մէջ: Առաջին՝ Ան միշտ կը փորձէ անձի մը հասնիլ Սուրբ Հոգիին ներքին յանդիմանութեան միջոցաւ: Բայց եթէ ան շարունակ անհնազանդութիւն գործած է եւ տեղ մըն է, ուր

9 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

կապը կտրուած է Աստուծոյ սիրտին եւ ցուցմունքներուն հետ՝ խաբկանքի քողին պատճառով, Աստուած կը դրկէ մարգարէական պատգամաբեր մը, ճիշդ ինչպէս Ան Սամուէլը դրկեց Սաուղին: Մարգարէի մը ծառայութիւնը կը բանայ աչքերը, որպէսզի Աստուծոյ ճամբաները տեսնէ: Աստուած կրնայ ոեւէ մէկը դրկել մարգարէական առաքելութեամբ: Պայման չէ, որ ուղղակի մարգարէ մը ըլլայ. պատգամը կրնայ գալ հովիւի մը, ծնողի մը, գործատիրոջ մը, ամուսինի մը կամ բարեկամի մը կողմէ: Յակոբոս կը բացատրէ. «Եղբայրներս, երբ ձեզմէ ոեւէ մէկը ճշմարտութեան ուղիէն մոլորի, եւ ուրիշ մը յաջողի զայն վերադարձնել, գիտցէ՞ թէ մեղաւորը իր մոլար ճամբէն դարձնողը թէ՛ անոր հոգին մահուընէ կը փրկէ եւ թէ՛ իր բազմաթիւ մեղքերուն թողութիւն կը գտնէ» (Յկ 5.19-20, շեշտադրումը՝ մեր կողմէ): Նկատի առ, որ այդ պատգամը ուղղուած էր մեղքի մէջ եղող հաւատացեալներու: Նաեւ նկատի առ «իր բազմաթիւ մեղքերուն» եզրը: Մոլորիլը արդիւնքն էր շարունակական անհնազանդութիւններու:

Մարգարէական պատգամաբերը (կամ պատգամաբերները) դրկուելէն ետք, եթէ տակաւին մտիկ չընենք, Աստուած կը փորձէ մեզի հասնիլ դատաստանով: Պօղոս կը գրէ. «Եթէ մենք մեզ *դատէինք*՝ չէինք *դատուեր*» (Ա.Կր 11.31, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹⁰: «Դատել» բառը երկու անգամ կ'երեւի այս համարին մէջ: Սակայն բնագիրին մէջ ամէն մէկուն համար տարբեր յունարէն բառ մը գործածուած է: Առաջինին՝ «Եթէ մենք մեզ *դատէինք*»ին մէջ գործածուածը յունարէն *դիաքրիս* բառն է, որ կը նշանակէ՝ ընդարձակօրէն բաժնել: (Ասիկա կը պատահի երբ կը քննենք մեր անձերը ամբողջական ձեւով՝ պիղծը թանկարժէքէն բաժնելու կամ վերցնելու համար:) Ատիկա կ'իրականացնենք խոստովանութեամբ եւ մեր անհնազանդութեան համար զղջումով: Երկրորդին՝ «չէինք

10 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

դատուեր»ին մէջ գործածուած յունարէն բառը *քրինո՛* բառն է, որ կը նշանակէ՝ պատժել կամ դատապարտել: Պօղոս կը շարունակէ՝ «Իսկ երբ կը դատուինք [*քրինո՛*, պատժուինք]՝ կը պատժուինք Տէրոջմէն, որպէսզի չդատապարտուինք աշխարհի հետ» (հմր 32)¹¹: Աստուած կ'ուզէ բաժնել մեզ մեր անհնազանդութենէն, որպէսզի չպատժուինք աշխարհի հետ (Մտ 7.20-23: Ղկ 12.45-48):

Ուստի հոս հարցուելիք հարցումն է. Աստուած ինչպէս կը դատէ կամ կը պատժէ Իր ժողովուրդը երբ կ'անտեսեն կամ կը մերժեն մարգարէական զգուշացումը: Պատասխանը ընդհանրապէս կու գայ դժուարութիւններու, հիւանդութեան կամ ուրիշ տեսակի դառնութեան մը ձեւով: Սաղմոսողը կը յայտարարէ.

Քանի տառապած չէի՝ կը մոլորէի,
Բայց հիմա քու հրամաններդ կը պահեմ:

Գիտեմ, ո՛վ Տէր, թէ քու դատավճիռներդ արդար են,
Եւ իրաւունքով տառապեցուցիր զիս: (Սղ 119.67,75)

Եթէ նայինք այդ եկեղեցիին ուղղուած Պօղոսի ըսածին ուրիշ թարգմանութեան մը մէջ, բաւական յստակ կը դառնայ գաղափարը. «Այս պատճառով ձեզմէ շատեր տկար եւ հիւանդ են, իսկ ուրիշներ նոյնիսկ մեռած են: Բայց եթէ մենք մեզ քննենք, պիտի չքննուինք Աստուծոյ կողմէ եւ այդ ձեւով դատուինք» (Ա.Կր 11.30-31)¹²:

Յստակ Օրինակ մը

Տեսած եմ շատ մը պարագաներ երբ մարդիկ, որոնք դատաստանի ենթարկուած են՝ Աստուծոյ ուղղիչ

11 Նոյնը

12 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլեյշըն* (NLT) տարբերակէն

գործընթացի առաջին երկու ձեւերուն չընդառաջելնուն համար: Յստակ օրինակ մը պատահեցաւ 1990-ականներուն երբ Թեքսասի մէջ երիտասարդներու ճամբարի մը ատեն քարոզ կու տայի: Շաբթուան սկիզբը ճակատումներով լեցուն էր, քանի որ պատանիներէն շատեր կորսնցուցած էին Տիրոջ հանդէպ իրենց զգայնութիւնը՝ մեղքի պատճառով: Շաբթ մը երիտասարդներ եւ երիտասարդուիիներ առջեւ եկան իւրաքանչիւր ծառայութեան ատեն եւ զղջացին իրենց մեղքերուն համար, որոնց մեծ մասը սեռային մեղքեր էին, եւ անոնք փառաւորապէս մաքրուեցան Յիսուսի արիւնով: Ես խանդավառուած էի եւ մեծ պայթում մը կ'ակնկալէի վերջին գիշերը՝ այդ բոլոր զղջումներուն պատճառով, որ կատարուած էին ամբողջ շաբթուան ընթացքին:

Երբ մտայ այդ վերջին ծառայութեան, անդրադարձայ, որ անիկա պիտի չսկսէր այն ձեւով, որ ես ակնկալած էի: Դարձեալ պէտք զգացի ուղղիչ կամ խրատական պատգամ մը տալու եւ ապաշխարութեան կոչ մը ընելու: Երբ ժամանակը հասաւ, որ խօսք առնեմ, բարձրախօսը առի եւ սկսայ աղօթել: Սուրբ Հոգին ինձի ըսաւ. *Տակաւին կայ անձ մը այս սրահին մէջ, որ ըմբոստութեան մէջ է: Առջեւ գալու առիթ մը եւս տուր այդ անձին:* (Ես արդէն ըմբոստութեան մասին քարոզած էի նախկին ծառայութիւններէն մէկուն ընթացքին:) Կոչը ուղղեցի, քանի մը երիտասարդներ առջեւ եկան, բայց սիրտիս մէջ գիտէի, որ անոնցմէ ոչ մէկը Սուրբ Հոգիին ըսած անձն էր: Կային զգայուն երիտասարդ- երիտասարդուիիներ, որոնք հաւանաբար ուրիշ տեսակի հարցերու համար լուծում կը փնտռէին:

Սուրբ Հոգին անգամ մը եւս խօսեցաւ սիրտիս. *Ըսէ՛ այդ անձին, որ եթէ այս գիշեր չընդառաջէ կոչին, դատաստան պիտի գայ իր կեանքին մէջ:* Ես Անոր ըսածը եղածին պէս յայտարարեցի եւ տակաւին ուրիշ երիտասարդներ ալ առջեւ եկան, բայց նորէն զգացի, որ Սուրբ Հոգիին ըսած անձը անոնց միջեւ չէր:

Սուրբ Հոգին դարձեալ խօսեցաւ սիրտիս մէջ. *Ըսէ՛ այդ անձին, թէ ինչ պիտի ըլլայ իր դատաստանը եթէ ան չընդատաջէ այսօր*: Ան մէջս տպաւորեց պատկեր մը, եւ ապա նորէն լսեցի Անոր ձայնը, որ կ'ըսէր. *Ըսէ՛ այդ անձին, որ ինքնաշարժի արկած մը պիտի ունենայ երեք շաբաթէն եթէ չընդատաջէ այսօր*:

Վախով եւ դողալով, ամուր կերպով կրկնեցի Սուրբ Հոգիին սիրտիս խօսած բառերը: Տակաւին ուրիշ երիտասարդ-երիտասարդուհիներ ալ առջեւ եկան, սակայն նորէն գիտէի, որ անոնցմէ ոչ մէկը Տիրոջ ըսած անձն էր: Տէրը արձակեց գիս, որ աղօթեմ եւ ծառայեմ անոնց, որոնք առջեւ եկած էին: Ես ալ այդպէս ըրի, եւ ատկէ ետք ունեցանք այն հզօր ծառայութիւնը, որ ակնկալած էի ունենալ: Մեծ թիւով երիտասարդներ ստացան Տիրոջ հպումը, ուրիշներ ալ Տիրոջ ծառայելու կոչումը ստացան: Ոմանք բժշկուեցան եւ ուղղութիւն ստացան իրենց կեանքին համար: Գիշեր մըն էր, որ ոչ մէկս մօտ ատենէ, եւ հաւանաբար նաեւ երբեւէ, պիտի մոռնար:

Քանի մը ամիս անցաւ, եւ երիտասարդներու հովիւը եւ ես հեռաձայնի վրայ իրարու կը խօսէինք: Ան ինձի հետեւողական տեղեկութիւններ կու տար այդ երիտասարդական ճամբարին մասին: Ան ըսաւ. «Ճոն, դպրոցական աղջիկ մը ունինք մեր խումբին մէջ, որ բոլորէն աւելի հարցեր պատճառած է մեզի: Ան միշտ անհնազանդ էր եւ խնդիրներ կը հանէր մեզի համար: Սիրտիս մէջ գիտէի, որ Սուրբ Հոգին անոր մասին էր, որ կը խօսէր այդ գիշեր: Շատ յուսախաբ եղայ երբ ան առջեւ չեկաւ»: (Ես գաղափար չունէի, թէ ո՞վ էր այդ աղջիկը:)

Հովիւը շարունակեց. «Ճամբարէն երեք շաբաթ ետք ան ինքնաշարժի արկած մը ունեցաւ ճիշդ այն ձեւով, որ դուն նկարագրեցիր այդ գիշեր: Ինքնաշարժը քշուելու ի վիճակի չըլլալով, քաշեցին տարին զանիկա»:

Կը դողայի: Կ'ուզէի գիտնալ, թէ ինչ պատահած էր անոր:

Գիտէի, որ Սուրբ Հոգիին ըսած խօսքերը խօսած էի, բայց կը յուսայի, որ այդ անձը կը լսէր Անոր կանչը նախքան որ այդ ողբերգութիւնը պատահէր իրեն:

Ան շարունակեց. «Աստուած փրկեց անոր կեանքը: Ծանր վիճակի մէջ էր արկածէն ետք, բայց արդէն ապաքինած է: Հիմա ան մեր եկեղեցւոյ ամէնէն կրակոտ ծառայողներէն մէկն է: Բոլորովին տարբեր անձ մըն է հիմա: Անոր կեանքը ամբողջովին փոխակերպուած է»: Միտքս հանգստացաւ եւ շատ ուրախացայ անոր համար: Ահա դարձեալ Դաւիթի խօսքերը. «Քանի տառապած չէի՝ կը մոլորէի, բայց հիմա քու հրամաններդ կը պահեմ»:

Հոս բան մը կ'ուզեմ յստակացնել: Աստուած չէ, որ այդ բաները մեր վրայ կը բերէ: Այլ՝ Ան Իր պաշտպանող ձեռքը կը վերցնէ եւ կ'արտօնէ, որ թշնամին մեր վրայ բերէ այն, որմէ հնազանդութիւնը պիտի պաշտպանէր մեզ: Սաղմոսողը կ'ըսէ.

Մեր գլուխներուն վրայ մարդիկ հեծցուցիր.
Կրակն ու ջուրը մտանք,
Սակայն մեզ դուրս հանեցիր՝ առատութեան
տեղը: (Սղ 66.12)

Ուրիշ թարգմանութիւն մը այսպէս կ'ըսէ. «Դուն մեզ դուրս հանեցիր հարուստ իրագործումի» (*Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն*, բառացի թարգմանութիւն): Այդ արկածը գրաւեց երիտասարդուիկին ուշադրութիւնը: Ան ապաշխարեց հիւանդանոցին մէջ եւ դուրս եկաւ հարուստ իրագործումի տեղ մը: Ատիկա սրբագրութիւն բերելու Աստուծոյ առաջին ընտրութիւնը չէր, բայց երբ միւսները արդիւնք չտուին, այդ ձեւը ազդու եղաւ:

Երանի կարենայի ըսել, որ բոլոր այդպիսի պարագաները նոյն արդիւնքը տուած են, բայց այդպէս չէ եղած: Ուրիշ օրինակ մը կու գայ միտքս: Երիտասարդ մը, որ նորէն

ըմբոստութեան մէջ էր, զգուշացուած էր հովիւի մը կողմէ, զոր կը ճանչնամ: Ան մտիկ չէր ըրած անոր եւ կարճ ժամանակ մը ետք ինքնաշարժի սոսկալի արկածի մը պատճառով կեանքը կորսնցուցած էր: Կրնամ անհամար ուրիշ վկայութիւններ ալ տալ, որոնցմէ շատեր ապաշխարեցին եւ օրհնուեցան, եւ ուրիշներ՝ որոնք ունեցան Սաւուղ Թագաւորի վախճանը:

Հնազանդութիւն Ընդդէմ Զոհ

Եկէք վերադառնանք Սաւուղի պատմութեան: Սամուէլ տեսաւ Սաւուղի խաբուած ըլլալը եւ անմիջապէս բուն նիւթին անցաւ, ինչպէս կ'ընէ մարգարէական պատգամաբեր մը: Սամուէլ հարցուց. «Հապա ինչ է այդ ոչխարներուն մայիւնը՝ որ ականջիս կը հասնի, ու արջառներուն բառաչը՝ որ կը լսեմ» (Ա.Թգ 15.14):

Սաւուղ անմիջապէս պատասխանեց. «Զանոնք Ամաղեկացիներէն բերին. արդարեւ ժողովուրդը լաւագոյն ոչխարներուն եւ արջառներուն խնայեց, որպէսզի զանոնք Տէրոջ՝ քու Աստուծոյդ զոհ մատուցանէ. սակայն միւսները անճիտեցինք» (Ա.Թգ 15.15):

Երբ ճշմարտութեան առջեւ գտաւ ինքզինք, ան մեղադրանքը իրմէ դարձուց ժողովուրդին: «Ես կ'ուզէի հնազանդիլ,» ձեռով մը ըսաւ ան, «բայց ժողովուրդը ստիպեց զիս»: Անզիղջ սիրտ ունեցող անձ մը երբ անհնազանդութեան մէջ բռնուի, մեղադրանքը կը շեղէ կամ կը դարձնէ ուրիշներու՝ այդպիսով պատասխանատուութիւն չվերցնելով իր ըրածներուն համար:

Ադամ զԱստուած մեղադրեց Եւային համար: Եւա մեղադրեց օձը: Ադամ ճիշդ էր. Աստուած իրեն տուած էր կինը, եւ կինը իրեն տուած էր պտուղը: Բայց ոչ ոք ստիպած էր իրեն, որ ուտէր: Ան իր ազատ կամքով կերած էր զանիկա: Այո, Եւա խաբուեցաւ, բայց տակաւին Ադամն էր, որ ընտրեց չհնազանդիլ:

Սաւուղ էր, որ կ'առաջնորդէր ժողովուրդը. ժողովուրդը չէր, որ կ'առաջնորդէր Սաւուղը: Սաւուղ հաշուետու էր ոչ միայն իր անհնազանդութեան համար, այլեւ ժողովուրդին անհնազանդութեան համար: Ան իշխանութեան գլուխ էր՝ առաջնորդելու եւ թելադրանքներ ընելու համար: Առաջնորդներ, ուշադրութեամբ մտիկ ըրէք. դրո՞ք հաշիւ պիտի տաք այն անհնազանդութեան համար, որ կ'արտօնէք կեանքերուն մէջ անոնց, որոնք ձեր հոգաճութեան վստահուած են:

Հեղի՝ Իսրայէլի առաջնորդը եւ Սամուէլի վերահսկիչը, գիտէր, թէ իր որդիները կ'արհամարհէին Աստուծոյ կանոնները, սակայն բան մը չըրաւ: Ան պարզապէս անոնց ձեւական յանդիմանութիւն տուաւ, բայց իր իշխանութիւնը չգործադրեց՝ զանոնք զսպելու համար: Հետեւաբար Աստուած վճռեց. «Ես իրեն իմացուցեր եմ, թէ իր տունը յաւիտեան պիտի դատեմ՝ իր գիտցած անօրէնութեան համար. քանի որ անոր որդիները իրենց վրայ անէճք բերին, սակայն ինք չյանդիմանեց զանոնք» (Ա.Թգ 3.13): Միայն իր որդիները չէին, որ դատուեցան. Հեղի եւս դատուեցաւ:

Յետոյ Սաւուղ իր անհնազանդութիւնը արդարացուց, քանի որ ոչխարները եւ եզները խնայուեցան՝ Տիրոջ զոհ մատուցանուելու համար: Կը հասկնաս, որ ան խաբուած էր, քանի որ կը մտածէր, թէ անհնազանդութեամբ կրնար ընդունելի զոհ կամ ծառայութիւն մատուցանել Աստուծոյ: Ատիկա ըմբոստութեան ծածուկ եւ խաբէական ձեւ մըն էր:

Յիսուս հետեւեալը ըսաւ. «Եթէ մէկը ուզէ ինձի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ» (Մտ 16.24): Ոմանք խաչը կ'առնեն եւ կը կեդրոնանան անոր տառապանքի պատկերին վրայ՝ իբրեւ զոհաբերութեան կեանքի տիպարը: Սակայն Յիսուսի այդ խօսքին միակ կամ ամբողջական կեդրոնացումը խաչը չէ: Կրնաս ապրիլ ինքնաուրացման եւ զոհողութեան կեանք մը եւ չիրագործել

Աստուծոյ նպատակը կամ կամքը: Իրականութեան մէջ կրնաս ընտրել ինքնաուրացման եւ զոհողութեան կեանքը եւ տակաւին Աստուծոյ դէմ ըմբոստութեան մէջ ըլլալ:

Յիսուսի ըսածին կեդրոնացումը *հնազանդութիւն* է: Միակ ձեւը, որ կրնանք հնազանդիլ՝ խաչը առնելն է: Որովհետեւ եթէ չմեռնինք մեր սեփական փափաքներուն եւ ծրագիրներուն, վերջաւորութեան Աստուծոյ կամքին եւ մարդկային փափաքին միջեւ ընտրութիւն ընելու հարցը պիտի ունենանք: Եթէ մեր կեանքը չզոհենք, ձեւ մը պիտի գտնենք իրականացնելու այդ փափաքները ընդդէմ Աստուծոյ փափաքներուն, եւ նոյնիսկ Սուրբ Գրային համարներ պիտի գործածենք ատիկա արդարացնելու համար, ճիշդ ինչպէս Սաւուղ ըրաւ: Մենք մեզի պէտք է հարց տանք. «Աստուծոյ ծառայութիւնը կը ներառէ՞ անհնազանդութիւն»: Եթէ այո, Սատանան փառք պիտի ստանայ մեր «աստուածաշնչական» կրօնական արարքներէն կամ զոհերէն, քանի որ ինքն է ըմբոստութիւն ծնողը եւ անոր տէրը:

Այդ պահուն Սամուէլ լռեցուց Սաւուղի պատճառաբանութիւնը.

«Կեցի՛ր որ քեզի հաղորդեմ ինչ որ Տէրը այս գիշեր ինձի ըսաւ»: Ան ալ [Սաւուղ] անոր ըսաւ. «Իսուէ»: Սամուէլ Սաւուղի ըսաւ. «Ահա՛ դուն՝ որ աչքերուդ պզտիկ կը թուէիր, Իսրայէլի տոհմերուն գլխաւորը եղար, ու Տէրը քեզ Իսրայէլի վրայ թագաւոր օծեց: Տէրը քեզի առաքելութիւն մը յանձնեց ըսելով. “Գնա՛, այդ մեղաւոր Ամաղեկացիները նզովէ՛ եւ անոնց դէմ պատերազմէ՛, մինչեւ որ զանոնք սպառես”»: Իսկ դուն ինչո՞ւ Տէրոջ խօսքը մտիկ չըրիր, ու աւարին վրայ նետուելով՝ Տէրոջ առջեւ չարիք գործեցիր»:
(Ա.Թգ 15. 16-19)

Սամուէլ ըսաւ. «Երբ դուն քու աչքիդ պզտիկ էիր, Իսրայէլի

տոհմերուն առաջնորդը չեղամր»։ Այլ խօսքով՝ Սաուղ, երբ դուն նոր թագաւոր եղար, ոչ-հաւակնոյր, խոնարհ եւ համեստ էիր։ Տեսանք, որ տարիներ առաջ երբ Սամուէլ առաջին անգամ Սաուղին ըսաւ, որ թագաւոր պիտի ըլլար, Սաուղ լսածին չհաւատալով պատասխանեց. «Ես Բենիամինեան չեմ՝ Իսրայէլի տոհմերուն ամէնէն պզտիկէն, եւ իմ ազգատոհմս Բենիամինի տոհմին բոլոր ազգատոհմերուն ամէնէն փոքրը չէ. ուստի ինչո՞ւ այդպէս կը խօսիս ինծի» (Ա.Թգ 9.21)։ Սաուղ ինքզինք իբրեւ թագաւոր չէր տեսներ։ Ան շուարած էր, թէ Աստուած ինչո՞ւ իրեն պէս անկարեւոր մէկը պիտի ընտրէր։

Յետագային երբ Տէրը ընտրեց զայն ամբողջ Իսրայէլին յայտնել, իւրաքանչիւր տոհմի համար վիճակ ձգուեցաւ։ Բոլորին մէջէն Բենիամինի տոհմը ընտրուեցաւ։ Անոնցմէ Սաուղի ընտանիքը ընտրուեցաւ։ Ապա Սաուղը ընտրուեցաւ։ «Բայց երբ զայն փնտռեցին, ան չգտնուեցաւ։ Անգամ մըն ալ Տէրոջ հարցուցին. “Արդեօք այդ մարդը [Սաուղ] հոս պիտի գայ”։ Տէրն ալ պատասխանեց. “Ահա՛ ան գոյքերուն մէջտեղը պահուլտած է”» (Ա.Թգ 10.21-22)։

Սաուղ չկրցաւ շալկել Աստուծոյ ժողովուրդը կառավարելու գաղափարը։ Ան պզտիկ էր ինքն իր աչքին։ Սամուէլ ասիկա յիշեցուց անոր եւ ապա շարունակեց. «Հիմա Տէրը քեզ կը դրկէ առաքելութեան մը եւ կ’ըսէ՝ “Գնա՛ եւ ամբողջովին կործանէ”... Հիմա ինչո՞ւ կը կարծես, որ Տիրոջմէ անելի գիտես։ Երբ քու իմաստութիւնդ գերազանցեց Աստուծոյ իմաստութեան։ Հիմա դուն Իր տէրը առած ես։ Ինչո՞ւ ճիշդը եւ սխալը Աստուծմէ զատ ուրիշ աղբիւրէ մը կը փնտռես։ Ինչ եղաւ այդ խոնարհ, ոչ-հաւակնոտ մարդուն»։

Մեզմէ ոեւէ մէկը Աստուծմէ անելի գիտէ։ Անշուշտ ոչ։ Բայց երբ անհնազանդ կ’ըլլանք, այդ է այն պատգամը, որ կը հաղորդենք Աստուծոյ եւ մեր շուրջիններուն։ Ո՛րքան անմտութիւն է մտածել, թէ մենք անելի իմաստուն ենք քան

Ան, որ նստած է փառքի գահի: Ան, որ ոչ միայն ստեղծեց տիեզերքը, բայց նաև կը բովանդակէ տիեզերքը: Ստեղծիչը, որ Իր մատներով աստղերը դրաւ երկինքի մէջ: Սակայն մենք Իրմէ աւելի բարձր դասած կ'ըլլանք պարզ մարդոց իմաստութիւնը երբ կ'անտեսենք Անոր խորհուրդը:

Ըմբոստութիւն եւ Կախարդութիւն

Սամուէլ իր աչքերը յառեց Սաւուդի եւ իր մարգարէական պաշտօնին տուած համարձակութեամբ հռչակեց.

Հնազանդութիւնը զոհէն աւելի լաւ է,
Եւ խօսքին ուշադիր ըլլալը՝ խոյերու ճարպէն:
Արդարեւ ըմբոստութիւնը դիւթութեան մեղքին պէս է,
Ու յամառութիւնը՝ կոռպաշտութեան պէս: (Ա.Թգ 15.22-23)

Սամուէլ ըմբոստութիւնը ուղղակիօրէն կապեց դիւթութեան հետ. «Արդարեւ ըմբոստութիւնը դիւթութեան մեղքին պէս է»: Անգլերէն Աստուածաշունչի *Քինկ Ճէյմզ Վըրժըն* եւ *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* տարբերակներուն մէջ «պէս է» եզրը շեղակի գրուած է: Անոնց մէջ սովորաբար այդպէս կը գրուին այն բառերը, որոնք նշուած չեն բնագիրին մէջ: Անոնք յետոյ աւելցուած են թարգմանիչներուն կողմէ՝ իմաստի յստակութեան համար: Աւելի ճշգրիտ (կամ բնագիրին աւելի հարազատ) թարգմանութիւն մը այդ տեղը պիտի գործածէր միայն «է» բայը (*Ինթըրիւնիլըր Պայպըլ*, Հատոր 2, էջ 750):

Այդ համարը այսպէս պիտի ըլլար. «Արդարեւ ըմբոստութիւնը դիւթութեան մեղքն է»: Ասիկա կը յստակացնէ այդ համարին պարունակը: Բան մըն է ըմբոստութիւնը դիւթութեան նմանցնելը, բայց ամբողջովին ուրիշ բան մըն է ըսելը, թէ ասիկա դիւթութիւն է: Յստակ է, որ ճշմարիտ Քրիստոնեայ մը բնաւ գիտակցաբար դիւթութիւն չ'ըներ: Բայց արդեօք քանինէր անոր ազդեցութեան տակ են անգիտակցաբար՝

ըմբոստութեան խաբկանքին պատճառով:

Դիւթութիւն երբ ըսենք մեր միտքը կու գան սեւ հագած, խորհրդաւոր խօսքեր արտասանող, աւելի մը երկար կոթին վրայ թռչող կամ բիրեղեայ գնդակի մը մէջ ապագան գուշակող եւ մէկ կողմէն բաց կրակի վրայ խոշոր կաթսայ մը եռացնող կիներու պատկերներ: Կամ թերեւս աւելի արդիական տարբերակն է մարդոց վրայ ազդեցութիւն բանեցնելու համար դիւթաբառեր եւ անէծքներ հոչակողներու: Եկէք ետին ձգենք երկու պատկերներն ալ եւ յայտնաբերենք դիւթութեան խորքը՝ ինչ պատկեր ալ որ անիկա ունենայ:

Դիւթութեան համար հոս գործածուած երբայերէն բառը *քէսէմ*ն է: Անոր անգլերէն հոմանիշներն են՝ *գուշակութիւն*, *դիւթութիւն* եւ *կախարդութիւն*: Սակայն մասնագէտներ կ'ըսեն, թէ այդ բառերուն իմաստը անպայմանօրէն կապուած չէ ծածուկ կրօններու հետ, ինչ որ պատճառն է տարբեր թարգմանութիւններու մէջ տարբեր բառերու գործածութեան (Հին Կտակարանի Աստուածաբանական Բառերու Գիրք, 3-րդ հատոր, էջ 805): Սակայն կարեւորը դիւթութեան ձեւը եւ մեթօտը չեն, այլ՝ անոր արդիւնքը եւ նպատակը:

Դիւթութիւնը մարդը ուղղակիօրէն կը բանայ դիւային աշխարհին: Անոր նպատակն է *հակակշռել* պայմանները, կացութիւնները կամ մարդիկը՝ զանազան միջոցներով, յաճախ առանց որ մասնակցողը հասկնայ, թէ ինչ կը պատահի հոգեւոր մարզին մէջ: Մէկ կողմէ կան մարդիկ, որոնք բնաւ գաղափար չունին պատահածներէն իսկ միւս կողմէ՝ մարդիկ, որոնք շատ լաւ գիտեն խաւարի ոյժերուն հետ իրենց գործակցիլը: Ուստի դիւթութիւնը կը կատարուի թէ՛ ամբողջական անգիտակցութեամբ եւ թէ՛ ամբողջական գիտակցութեամբ: Անոր նպատակը *հակակշռել* կամ կառավարել է, բայց անխուսափելիօրէն *հակակշռողը* կը դառնայ *հակակշռուածը*՝ դիւային աշխարհին հետ գործ ունենալուն պատճառով:

Ստրկութիւն՝ Անհնազանդութեան Ճամբով

Իբրեւ նախկին պատանիներու հովիւ, գործ ունեցած եմ ծածուկ կրօններու հետ: Մեր շրջանի դպրոցները լեցուն էին պատանիներով, որոնք զանազան մակարդակի կապ կամ գործ ունէին հոգեպաշտութեան հետ: Մեր պատանեկան ծառայութեան առաջնորդները յաճախ տեղեկութիւններ կու տային դիւթութեան կամ սատանայապաշտութեան հետ գործ ունեցող դասընկերներու մասին:

Ծածուկ կրօններու ծէսերուն հետ կապուած ամէնէն հետաքրքրական սկզբունքներէն մէկը, որուն մասին տեղեկացայ այն էր, որ երբ անձ մը պիտի ընդունուէր դիւթութիւն ընողներու խումբի մը մէջ, առաջնորդները կը քաջալերէին զինք, որ թմրեցուցիչ առնէր, գինովնար, ապօրինի սեռային յարաբերութիւններ ունենար, գողնար եւ ընէր զանազան արարքներ, որոնք հակառակ են Աստուծոյ եւ մեր երկրի օրէնքներուն: Ես վստահ չէի, թէ ինչո՞ւ, մինչեւ որ Աստուած բացաւ հետեւեալ ճշմարտութիւնը ինծի. «Ըմբոստութիւնը դիւթութիւն է»:

Անոնց կը սորվեցնեն, թէ որքան ըմբոստանաս, այդքան զօրութիւն կամ իշխանութիւն կը ստանաս, եւ անոնք զօրութիւն կամ իշխանութիւն կը փնտռեն: Ատիկա ճիշդ է, քանի որ ըմբոստութիւնը դիւթութիւն է: Ո՛րքան ըմբոստանան այդքան օրինական մուտք կու տան դիւային զօրութիւններուն, որ ազդեցութիւն բանեցնեն, հակակշռեն եւ հզօրացնեն իրենց կեանքերը: Աստուծոյ կարգին եւ օրէնքներուն եւ Իր նշանակած իշխանութեան դէմ ըմբոստանալով, անոնք գիտակցաբար իրենց կեանքին մէջ օրինական մուտք կու տան հակակշիռ բանեցնող դիւային մարզին:

Այդ գաղափարը տեղ կը գտնէ այսպէս կոչուած «սատանայական սուրբ գիրք»ին մէջ, ինչպէս կախարդները

կը կոչեն: Քանի մը տարի առաջ պանդոկի սենեակի մը մէջ երբ հեռատեսիլ կը դիտէինք ծառայութենէ մը ետք, կայաններ փոխելու ատեն կինս եւ ես հանդիպեցանք սատանայապաշտութեան եւ դիւթութեան վերաբերեալ յատուկ կայանի մը: Ես կը պատրաստուէի դարձնել կայանը՝ ինչ որ սովորաբար իմաստուն բան մըն է, որովհետեւ կը հաւատամ, որ այն ամէնը, որ պէտք ունինք գիտնալու հոգեւոր պատերազմի մասին պէտք է գայ Աստուծոյ Հոգիէն: Սակայն մղուեցայ դիտել պահ մը: Յայտագիրը կը խօսէր «սատանայական սուրբ գիրք»ին մասին: Լրագրողը նշեց առաջին պատուիրանը՝ «Ըրէ՛ այն ինչ որ կ'ուզես»:

Ատիկա ուշադրութիւնս գրաւեց: Աստուածաշնչական համարներ սկսան միտքս գալ անմիջապէս: Սաղմոսողը կը հռչակէ.

Այն ատեն ըսի. «Ահա՛ կու գամ.

(Իմ մասիս գրուած է գիրքի պատատին մէջ.)

Ո՛վ իմ Աստուածս, քու կամքդ գործադրելէն կ'ախորժիմ,

Ու քու Օրէնքդ իմ ներսս է»: (Սղ 40.7-8)

Յիսուս Ինքն Իր մասին ըսաւ. «Ո՛չ թէ իմ կամքս կը փնտոեմ, հապա անոր կամքը՝ որ ղրկեց զիս» (Յհ 5.30)¹³: Տարիներու սերտողութիւններէս գիտէի, որ Տէրը կը գրաւուի դէպի անոնք, որոնք հնազանդութեամբ կ'ապրին Իր առջեւ: Այդ պահուն հասկցայ, որ հակառակն ալ ճիշդ է. խաւարի հոգիները կը գրաւուին անոնց, որոնք ըմբոստութեան մէջ կ'ապրին: «Ըրէ՛ այն ինչ որ կ'ուզես» պատուէրը ուղղակի խեղաթիրում մըն է Աստուծոյ Խօսքին, եւ անիկա կը համապատասխանէ ճիշդ այն բանին, որ Աստուած կ'ըսէ ըմբոստութեան մասին:

Անոնք, որոնք կամովին իրենք զիրենք կը յանձնեն

13 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

Սատանայի ծառայութեան, կը հասկնան այդ սկզբունքը, սակայն ուրիշներ կը խաբուին: Անգէտները անօրէնութիւնը կը շփոթեն ազատութեան հետ: Բայց չկայ ազատութիւն ըմբոստութեան մէջ: Նոր Կտակարանը շատ յստակ պատկեր մը կու տայ, թէ ճիշդ ինչ տեղի կ'ունենայ: Անոնք գերի կը դառնան անառակութեան: Պետրոս անոնց սխալը բացայայտեց հետեւեալ ձեւով. «Անոնք [ըմբոստութիւն քաջալերող առաջնորդները] ազատութիւն կը խոստանան, բայց իրենք գերիներ են մեղքի եւ փտածութեան: Որովհետեւ մարդ գերի կ'ըլլայ անոր, որ կը հակակշռէ կամ կառավարէ զինք» (Բ.Պտ 2.19)¹⁴:

Ճշմարտութիւնը յայտնի է: Չկայ ազատութիւն. կան կապանք եւ հակակշիռ, որոնք հոգին կը բանան դիւային ճնշումի եւ հակակշիռի: Պօղոս ալ իր կարգին շեշտեց այդ կէտը. «Չէք անդրադառնար, որ կրնաք ընտրել ձեր տէրը: Կրնաք ընտրել մեղքը (մահուան հետ միասին) կամ հնազանդութիւնը (արդարացման հետ միասին): Անոր, որ կու տաս քու անձդ, անիկա քեզ պիտի առնէ եւ ըլլայ քու տէրդ, եւ դուն պիտի ըլլաս անոր ստրուկը» (Հռ 6.16)¹⁵:

Յիսուս շեշտեց հետեւեալ սկզբունքը. «Լաւ գիտցէք, թէ ով որ մեղք կը գործէ՝ ծառայ է մեղքին» (Յի 8.34): Յիշէ Կայէնի անհնազանդութիւնը Տիրոջ նուիրելիք իր ընծայի ընտրութեան մէջ: Ատկէ յետոյ Աստուած յստակ դարձուց անոր, որ իր ընտրութիւնները պիտի որոշեն իր վախճանը: Ան կրնար պատուել Աստուծոյ կամքը եւ գոցել դուռը մեղքի կողմէ կառավարուելուն (դիւթութեան) դիմաց, կամ կրնար ըմբոստանալ եւ առանց աստուածային պաշտպանութեան կամ զօրութեան դիմագրաւել «դրան քով պառկած» մեղքը, որ կ'ուզէր տիրել իր վրան կամ կառավարել զինք:

14 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

15 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Լիվինկ Պայպըլ* (TLB) տարբերակէն

Սամուելը զգուշացուց Սաուլը, ճիշդ ինչպես Աստուած զգուշացուց Կայէնը: Ըմբոստութիւնը անոր հոգին բացաւ կառավարող հոգիի մը ազդեցութեան դիմաց, ինչ որ պատճառ դարձաւ, որ վարուի այնպիսի ձեւով մը, որ երբեք պիտի չվարուէր եթէ առողջ կերպով մտածէր: Սաուլը իրապէս չզղջաց, եւ Ա.Թգ 16.14-ին մէջ Աստուածաշունչը կ'ըսէ, թէ իր ըմբոստութենէն կարճ ժամանակ ետք չար, չարչրկող հոգի մը եկաւ իր կեանքէն ներս եւ նեղութիւն կու տար իրեն: Իր ըմբոստութենէն ետք չար հոգին օրինական արտօնութիւն կամ մուտք ունեցաւ իր կեանքին մէջ: Հանգիստ չկար Սաուլի համար, որովհետեւ չկար իրական ապաշխարութիւն: Սաուլը շատ տարբեր մարդ մը դարձաւ քան երբ նոր ճանչցանք զինք Աստուածաշունչին մէջ:

Ան իշխանութիւններուն հնազանդող, ոչ-հաւակնոտ երիտասարդէ մը, որ կը յարգէր Աստուծոյ վերաբերեալ բաները՝ ինչպիսին էին իր հայրը եւ Սամուել մարգարէն, վերածուած էր մէկու մը, որ կը խախտէր ամէն ինչ որ ժամանակին սիրելի էր իրեն: Եթէ իր թագաւորութեան առաջին տարիներուն մօտենայիր եւ ըսէ՛ր իրեն՝ «Սաուլ, օր պիտի գայ երբ դուն ութսունհինգ անմեղ քահանաներ, իրենց կիները եւ զաւակները սպաննել պիտի տաս զայրոյթի պահի մը մէջ», ան պիտի անտեսէր քեզ իբրեւ խենթ մը: «Անկարելի է: Ես այդպիսի բան երբեք չեմ ըներ», պիտի ըսէր: Բայց տխուր իրականութիւնը այն է, որ ըրաւ (կարդա՛ւ Ա.Թգ 22)...

Չար հոգին տարաւ զինք նախանձի, բարկութեան, ատելութեան, պայքարներու, մարդասպանութեան եւ խաբկանքի մէջ: Անիկա կը կառավարէր Սաուլի կեանքը՝ անոր անզիջ ըմբոստութեան ճամբով: Սաուլը հալածեց եւ փորձեց սպաննել Դաւիթը՝ Աստուծոյ եւ իր ամէնէն հաւատարիմ ծառաներէն մէկը: Ան Դաւիթը դաւաճան համարեց, մինչ իրականութեան մէջ Դաւիթ Աստուծոյ սիրտին համեմատ մարդ էր: Այդ դիւային հակակշիռին

իբրեւ արդիւնք, Սաւուղ ճշմարտութեան անցողիկ նշոյլներ կը տեսնէր միայն՝ զինք պատած խաբկանքի թանձր ամպին պատճառով: Իրեն համար ճշմարտութիւնը սուտի վերածուեցաւ, եւ սուտերը վերածուեցան ճշմարտութեան:

Քանի անգամ տեսած եմ ատիկա... Ոչ միայն ուրիշներու այլեւ իմ կեանքիս մէջ: Ետ կը նայիմ կեանքիս մէջ որոշ եղանակներու երբ անհնազանդութեան մէջ էի, եւ լալս կու գայ երբ կը մտածեմ այն խաբկանքին մասին, որուն մէջ կ'ապրէի: Այդ ժամանակներուն բարեպաշտ իշխանութիւնները իբրեւ օրինապաշտական կամ սխալ կը տեսնէի, իսկ բարեպաշտ բարեկամները՝ իբրեւ թշնամիներս: Աւելի կը մօտենայի ուրիշ ըմբօստներու՝ այդպիսով քարիւղ թափելով արդէն իսկ բորբոքած անհնազանդութեան կրակիս վրայ: Մենք մեզ անելի մօտիկ կը համարէինք Տիրոջ, եւ համոզուած էինք, որ մենք այն «նոր տեսակի» ծառայողներն էինք, զորս Աստուած կը բարձրացնէր: Օ՛, Տէրը ճիշտն ողորմած եղած է ինձի հանդէպ: Թող աչքերդ լայն բացուին այդ ծուլակին, որպէսզի դուն ալ չխաբուիս ինչպէս ես խաբուած էի...

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱԽԱՐԴՈՒԱԾ

*Աստուծոյ Խօսքին լոյսը կը բացայայտէ
խաբկանքը եւ կը զանազանէ
խորհուրդները եւ մտադրութիւնները
մարդոց սիրտերուն:*

Ըմբոստութիւնը դիւթութիւն է: Անօրէնութեան այդ
ծածուկ սկզբունքին ազդեցութիւնները բացայայտ
են մեր ընկերութեան մէջ եւ ոչ աւելի նուազ բացայայտ մեր
եկեղեցիներուն մէջ, հակառակ անոր որ մուտքը հոն աւելի
աննկատ է: Այս գլուխին մէջ խորունկ ձեւով պիտի տեսնենք
դիւթութեան ազդեցութիւնը ըմբոստութեան մէջ եղող
հաւատացեալի մը վրայ: Մէջբերումներ պիտի ընենք Հին
Կտակարանէն եւ Նոր Կտակարանէն ինչպէս նաեւ պիտի
տեսնենք մեր ներկայէն քաղուած օրինակներ՝ սերտելու
համար այն հակակշիռը, որ կրնայ գալ մեր կեանքին մէջ
անհնազանդութեան պատճառով:

Անէծքը Կ'արգիլուի

Նախ եկէք նայինք Իսրայէլի: Իրենց անապատի թափառումներուն ընթացքին, Աբրահամի սերունդները բանակեցան Մովաբի դաշտերուն մէջ: Անոնք նոր յարձակած էին Բասանի վրայ եւ պարտութեան մատնած զանոնք: Ատկէ առաջ կործանած էին ամորհացիները երբ անոնք մերժած էին արտօնել, որ իրենց տարածքէն անցնին:

Մինչ իսրայէլացիները կը բանակէին Մովաբի դաշտերուն մէջ, Բաղակ եւ անոր առաջնորդած ժողովուրդը՝ մովաբացիները եւ մադիանացիները, մտահոգուեցան: Ժողովուրդը վախէն կը դողար: Տէրը իսրայէլացիներուն խոստացեր էր. «Իմ երկիւղս քու առջեւդ պիտի ղրկեմ եւ խուճապի պիտի մատնեմ այն ամբողջ ժողովուրդը՝ որուն քով կ'երթաս» (Ելք 23.27): Անոնք գիտէին, որ իսրայէլացիները նուաճած էին ամէն ազգ, որ դէմ կեցած էր իրենց, ինչպէս նաեւ ամբողջութեամբ կործանած էին ամէնէն հզօր երկիրը՝ Եգիպտոսը:

Բաղակ Թագաւոր դեսպաններ ղրկեց Բաղասմ մարգարէին՝ անկէ օգնութիւն խնդրելու համար: Բաղասմ ճանչցուած էր իր հոգեւոր ճշգրտութեամբ եւ խորաթափանցութեամբ: Թագաւորը գիտէր, որ Բաղասմի մարգարէութիւնները կը կատարուէին: Եթէ ան օրհնէր, դիմացիները կ'օրհնուէին: Իսկ եթէ անիծէր, անոնք կ'անիծուէին: Բաղակ երկու անգամ պատգամաբեր ղրկեց Բաղասմի, որ վերջ ի վերջոյ համաձայնեցաւ ճամբորդել այդ իշխաններուն հետ եւ երթալ թագաւորին, որ կը մտադրէր անիծել տալ Իսրայէլի որդիները: Թագաւորին ըրած դրամական վարձատրութեան եւ պատիւի առաջարկները գրաւեցին զինք:

Յաջորդ օրը անոնք մագլցեցան Բահաղի բարձր տեղերը եւ Բաղասմ դիտեց Իսրայէլի ժողովուրդը: Ան թագաւորին ըսաւ, որ եօթը զոհասեղան կառուցանէր եւ իւրաքանչիւրին

վրայ զոհ մը պատրաստէր: Ապա Բաղասամ իր բերանը բացաւ Իսրայէլը անհիծելու համար, բայց փոխարէնը ան օրհնութիւն հռչակեց անոնց վրայ:

Կարիք չկայ ըսելու անշուշտ, որ թագաւորը զայրացաւ: «Այդ ինչ ըրիր ինձի. ես քեզ բերի իմ թշնամիներս անհիծելու, եւ ահա՛ դուն բոլորովին օրհնեցիր» (Թւ 23.11):

Ուստի Բաղասամ առաջարկեց, որ աւելի բարձր տեղ մը ելլեն՝ յուսալով, որ Բաղակ կը ստանար իր փնտռածը կամ ուզածը: Թերեւս աւելի բարձր տեղի վրայ մթնոլորտը աւելի յարմար պիտի ըլլար անհիծելու համար: Դարձեալ եօթը զոհասեղաններ կառուցանուեցան եւ յաւելեալ զոհեր մատուցանուեցան: Բայց երբ Բաղասամ նորէն բացաւ իր բերանը դիպական անէծք մը արձակելու համար, նորէն փոխարէնը օրհնեց Իսրայէլը:

Եւ այդպէս շարունակուեցաւ: Ամէն անգամ որ Բաղասամ կը փորձէր անհիծել, կը մղուէր օրհնելու: Բաղասամի յաջորդ պատգամին մէջ հետեւեալ խորունկ հաստատումը կը գտնենք. «Արդարեւ Յակոբի դէմ հմայութիւն չ'ըլլար, ու Իսրայէլի դէմ՝ դիպական» (Թւ 23.23):

Բաղասամ յայտարարեց, թէ չկար հմայութիւն մը կամ դիպական մը, որ ազդու էր Աստուծոյ ժողովուրդին դէմ: Ինչ խանդավառիչ եւ հզօր հաստատում: Եթէ այդ հաստատումը այսօրուան պարունակին մէջ պիտի դնենք, կ'ըսենք. «Չկայ դիպական մը, որ կը գործէ Աստուծոյ ժողովուրդին դէմ, ոչ ալ որեւէ հմայութիւն՝ Անոր Եկեղեցիին դէմ»:

Այդ խոստումը պէտք է քաջալերէ մեզ: Վիուկները եւ կախարդները կրնան պոռալ-կանչել եւ վառել իրենց մոմերը: Կրնան արտասանել իրենց դիպականներն ու անէծքները: Բայց չեն կրնար վնաս հասցնել Աստուծոյ զաւակի մը: Անոնք պիտի ջաղթանակեն կենդանի Աստուծոյ Եկեղեցիին դէմ: Առ 26.2-ն կը հաստատէ այդ ճշմարտութիւնը. «Թոչկոտող

ճնճղուկի մը եւ սլացիկ ծիծեռնակի մը նման, անարժան անէծքն ալ չի գար հանգչելու»¹⁶:

Անէծքը Կը Շրջուի

Դարձեալ վերադառնանք պատանիներու հովիւի ծառայութեանս տարիներուն: Աղջիկ մը՝ որ իր դպրոցի գլխաւոր վիուկներէն մէկն էր, դարձի եկաւ: Անոր մայրը զինք Սատանային նուիրած էր երբ ան տակաւին իր մօրը արգանդին մէջն էր: Իր դարձէն ետք, ան իմ օգնականիս պատմած էր իր նախկին կեանքին մասին: Բան մը ըսած էր, որ գրաւած էր օգնականիս ուշադրութիւնը: Ան ըսած էր. «Մենք չէինք կրնար դիւթական անէծքներ արձակել քրիստոնէայ հաւատացեալներու դէմ»:

Օգնականս հարցուցած էր. «Ինչո՞ւ ոչ»:

Ան ալ ըսած էր. «Որովհետեւ երբ անէծք մը արձակէինք, անիկա ետ մեզի կու գար»: Օգնականս ոգետորուած էր:

Ինչպէս կը տեսնէք, անոր ըսածը կը համապատասխանէ Բաղասամի ըսածին: Իր առաջին պատգամին մէջ Բաղասամ հետեւեալ հարցումը հարցուց. «Աստուծոյ չանիծածը ի՞նչպէս անիծեն» (Թւ 23.8ա): Նոյնիսկ եթէ Բաղասամ անէծք մը *արձակէր* Իսրայէլի որդիներուն դէմ, անիկա իր գլխուն պիտի գար: Դաւիթ այս ձեւով ըսաւ ատիկա.

Պահէ՛ զիս չարագործներուն խորհրդաժողովէն,
Անօրէնութիւն գործողներուն *բազմութենէն*
[«*ըմբոսպրութենէն*», ըստ անգլերէն տարբերակին],
Որոնք իրենց լեզուները սուրի պէս կը սրեն,
Իրենց աղեղները կը լարեն՝ որ իրենց նետերը- լեղի խօսքերը-
Ծածուկ տեղէն արձակեն պարկեշտին.
Յանկարծակի անոր կ'արձակեն, ու չեն վախնար:
(Սղ 64.2-4, շեշտադրումը՝ մեր կողմէ)

16 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Ինթըրնաշնըլ Կըրժըն* (NIV) տարբերակէն

Անէծքները կ'արձակուին ըմբոստներուն կողմէ (անոնք, որոնք դիւթութիւն կ'ընեն), բայց անոնք չեն հանգչիր արդարներուն վրայ: Տես ինչ կը պատահի անոնց, որոնք անէծքներ կ'արձակեն.

Բայց Աստուած իր նետը անոնց պիտի արձակէ.

Անոնք յանկարծ պիտի վիրաւորուին:

Անոնց լեզուն զիրենք պիտի տապալէ իրարու վրայ

[«Անոնք իրենց լեզուին վրայ պիտի սայթաքին»,

ըստ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* տարբերակին]:

(Սղ 64.7-8)

Անոնք պիտի սայթաքին իրենց լեզուին վրայ: Այն քառերը, զորս կ'արձակեն՝ ուրիշներուն վնաս հասցնելու համար, իրենց պիտի վերադառնան: Դաւիթ հետեւեալ յստակ պատկերը գործածեց՝ ատիկա նկարագրելու համար. «Իմ քայլերուս ցանց պատրաստեցին, անձս կըքեցաւ. փոս փորեցին առջեւս, բայց իրենք ինկան անոր մէջ» (Սղ 57.6):

Հրապուրուած՝ Անհնազանդութիւն Ընելու

Բաղասման գիտէր, որ անկարելի էր անհիծել իսրայէլացիները իրենց այդ վիճակին մէջ: Ձեւ չկար, որ ան կարենար անէծք մը փակցնել անոնց վրայ, հակառակ անոր որ կ'ուզէր ատիկա ընել: Մովսէս պատմեց այդ պատմութիւնը, ըսելով. «Միջագետքի Փաթուր քաղաքէն Բէովրի որդին Բաղասմը քեզի դէմ վարձեցին՝ որպէսզի քեզ անհիծէ: Բայց Տէրը՝ քու Աստուածդ՝ չուզեց Բաղասմի մտիկ ընել, հապա Տէրը՝ քու Աստուածդ՝ անէծքը քեզի համար օրհնութեան փոխեց, որովհետեւ Տէրը՝ քու Աստուածդ՝ քեզ սիրեց» (Բ.Օր 23.4-5): Ատիկա ճիշդ է նաեւ մեզի համար:

Զայրացած Բաղակ Թագաւոր պոռաց. «Ես քեզ կանչեցի՝

որպեսզի իմ թշնամիներս անհիծես, բայց ահա՛ այս երեք անգամ է որ զանոնք օրհնեցիր: Ուստի հիմա քու տեղդ փախիր: Մտադրած էի քեզ շատ պատուել. բայց ահա՛ Տէրը քեզ արգիլեց պատիւ ստանալէ» (ԹՎ 24.10-11):

Թագաւորը ծրագրած էր Բաղասամի տալ մեծ նիւթական վարձատրութիւն մը եւ ընկերային պատիւ եթէ իր ճակատագրական թշնամին յաջողութեամբ անհիծէր: Բայց բունին մէջ թագաւորը կ'ըսէր. «Մոռցիր վարձատրութիւնդ: Յայտնի է, որ Աստուածդ չ'ուզեր, որ դուն զանիկա ունենաս: Հեռացիր աչքիս առջեւէն»:

Բաղասամ հարց մը ունէր. ան իրապէս կ'ուզէր այդ վարձատրութիւնը: Այդ էր պատճառը իր հոն ըլլալուն, եւ այնպէս կ'երեւէր, որ պիտի կորսնցնէր զանիկա: Այդ կորուստէն խուսափելու համար, ան Բաղակ Թագաւորին հետ յարձակումի ուրիշ ծրագիր մը ըրաւ: Հակառակ անոր որ գիտէր, որ չէր կրնար անհիծել իսրայէլացիները, գիտէր նաեւ ինչ ընէր, որ անոնք իրենք զիրենք անէծքի տակ դնէին:

Հասկցած ըլլալով ըմբոստութեան եւ դիպօթեան միջեւ գտնուող հոգեւոր յարաբերութիւնը, Բաղասամ թագաւորին խորհուրդ տուաւ, որ Մովաբի աղջիկները դրկէր Իսրայէլի բանակատեղին: Ըսաւ, որ իրենց կուռքերն ալ իրենց հետ առնէին եւ իսրայէլացի տղամարդիկը հրապուրէին՝ իրենց հետ սեռային յարաբերութիւն ունենալու համար՝ այդպիսով ըմբոստանալով Աստուծոյ օրէնքներուն դէմ: Ան գիտէր, որ ըմբոստութիւնը զանոնք դիպօթեան անէծքին տակ պիտի դնէր:

Գիտենք, որ ատիկա պատահեցաւ, որովհետեւ թէ՛ Մովսէս եւ թէ՛ Յիսուս ակնարկութիւն ըրին ատոր: Մովսէս ըսաւ. «Ահա՛ Բաղասամի խրատով ատոնք պատճառ եղան, որ Իսրայէլի որդիները Տէրոջ հանդէպ ուխտազանց ըլլան Փէովրի արարքին մէջ, եւ Տէրոջ համայնքին վրայ այն պատուհասը եղաւ» (ԹՎ 31.16, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Տարիներ ետք Յիսուս ըսաւ, թէ՛ Բաղասամ «Բալակի [կամ Բաղակի] սորվեցուց Իսրայէլի որդիները մեղքի մղել, որպէսզի անոնք կուռքերու զոհուած միս ուտեն եւ պոռնկութիւն ընեն» (Յտ 2.14, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Այդ ինքզինքին վրայ բերուած դիպութեան անէծքը մանրամասնօրէն կը նկարագրուի Սուրբ Գիրքերուն մէջ: Բաղասամի մարգարէութիւններէն անմիջապէս ետք կը կարդանք՝ «Իսրայէլ Սատիմի մէջ բնակեցաւ, եւ ժողովուրդը սկսաւ Մովաբի աղջիկներուն հետ պառկիլ: Անոնք ժողովուրդը հրաւիրեցին իրենց աստուածներուն զոհերուն, ու ժողովուրդը զոհերէն կերաւ եւ անոնց աստուածներուն երկրպագեց: Իսրայէլ Բահաղ-Փէովրի յարեցաւ, ուստի Տէրոջ բարկութիւնը Իսրայէլի դէմ բորբոքեցաւ» (Թւ 25.1-3): Իբրեւ արդիւնք, պատուհաս մը եկաւ Իսրայէլի ժողովուրդին վրայ եւ կործանեց զանոնք:

Անհնազանդութիւնը պատճառ դարձաւ, որ այդ ազգը, որուն վրայ անէծքը չէր ազդեր, պատուհասի անէծքին տակ գար. «Պատուհասէն մեռածները քսանչորս հազար հոգի էին» (Թւ 25.9): Քսանչորս հազար հոգի... Կ'անդրադառնամք այդ հաստատումին ճիշտ ողբերգական ըլլալուն: Այսօր եթէ օդանաւ մը ջախջախուի կամ փոթորիկ մը հարիւրաւոր կեանքեր խլէ, համաշխարհային լուր կ'ըլլայ ատիկա: Հոս չենք խօսիր հարիւրաւորներու մասին, այլ՝ քսանչորս հազար հոգիի մասին... Ատիկա ամէնէն մեծ կորուստն էր, որ Իսրայէլի ժողովուրդը ունեցաւ անապատին մէջ մէկ պատահարով, եւ ան ալ արդիւնքն էր ժողովուրդին ըմբոստութեան:

Արմատական անհնազանդութիւնը դուռ բացաւ արմատական պատուհասի մը: Անոնց ըմբոստութիւնը շատ բացայայտ էր: Իրականութեան մէջ անամօթ իսրայէլացի մարդ մը բացէ ի բաց մադիանացի կին մը ներկայացուց Մովսէսի եւ Իսրայէլի ամբողջ ժողովուրդին երբ անոնք կու լային Աստուծոյ առջեւ (տես Թւ 25.6):

Ինչն էր, որ վերջ դրաւ պատուհասին: Հաւանաբար կրցաք
ենթադրել. արմատական հնազանդութիւն մը:

Երբ Փենեհէս, Ահարոն քահանային որդիին՝ Եղիզարի
որդին, ասիկա տեսաւ, համայնքին մէջէն կանգնեցաւ,
ձեռքը գեղարդ մը առաւ, եւ իսրայէլացի մարդուն ետեւէն
սենեակը մտնելով՝ երկուքն ալ, այսինքն իսրայէլացի
մարդն ու կինը, փորէն խոցեց. ուստի պատուհասը
Իսրայէլի որդիներուն մէջէն դադրեցաւ: (Թւ 25.7-8)

Դարձեալ, արտօնեցէք, որ մատնանշեմ հետեւալը. Աստուած
չէ Հեղինակը պատուհասներու եւ հիւանդութիւններու:
Իսրայէլի որդիները բացայայտօրէն ըմբոստացան եւ
խախտեցին Աստուծոյ իշխանութիւնը: Այդպիսով Աստուծոյ
պաշտպանութեան ծածկոցը վերցուեցաւ իրենցմէ եւ թշնամին
օրինական մուտք ունեցաւ՝ Աստուծոյ արտօնութեամբ: Անգամ
մը ես ասիկա կը հաստատէ, թէ ըմբոստութիւնը դիւթութիւն է
եւ անիկա օրինական մուտքի արտօնութիւն կու տայ դիւային
ոյժերու, որոնք կ'ուզեն իշխել կամ կռուովարել: Իսրայէլ
կրցաւ փախուստ տալ գուշակի մը անէծքէն, միայն ջարդուելու
համար անհնազանդութեան պատճառով:

Ո՛վ Քեզ Անէծքի Տակ Բերած Է

Տեսանք Հին Կտակարանի օրինակ մը, ուր ըմբոստութիւնը
դիւթութիւն է, եւ կան շատ ուրիշներ: Հիմա եկէք սերտենք
Նոր Կտակարանը: Պօղոս Առաքեալ խիստ նամակ մը
գրեց Գաղատիոյ եկեղեցիներուն: Զգուշութեամբ կարդա՛
Պօղոսի հաստատումը. «Ո՛վ անմիտ գաղատացիներ, ղվ ձեզ
հրապուրեց» (Գղ 3.1ա):

Մէկ վայրկեան: Պօղոս եկեղեցիին կ'ըսէր, թէ դիւթութեան
անէծքի մը տակ էին... Կրնաս ըսել. «Կը կարծէի, որ Աստուծոյ

ժողովուրդին վրայ դիպօթօթինը կամ կախարդութիւնը չէին ազդեր»: Ատիկա ճիշդ է: Ոչ մէկ անէծք կրնայ արձակուիլ հնազանդ հաւատացեալին դէմ: Բայց յիշէ՛, որ ըմբոստութիւնը կամ անհնազանդութիւնը մարդը կը դնէ դիպօթօթեան ազդեցութեան տակ:

Յիշեցնեմ օգնականիս հանդիպումը նախկին վիուկին հետ, որ ազատագրուած էր կախարդութենէ: Երբ ան տեսաւ օգնականիս խանդավառութիւնը՝ լսելէ ետք, թէ անէծքները չեն ազդեր Քրիստոնեաներուն վրայ, անմիջապէս ասելցուց. «Բայց, հովիւ, մենք կրնայինք անէծք արձակել եկեղեցոյ զաղջ անդամներուն վրայ [անհնազանդներուն]»: Վերահաստատումի համար, տեսէք Պօղոս ինչ կ'ըսէ. «Ո՛վ հրապուրեց ձեզ, որ չհնազանդիք ճշմարտութեան» (Գղ 3.1, բառացի թարգմանութիւն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* տարբերակէն):

Հրապուրուելուն մէջ կար Աստուծոյ Խօսքին անհնազանդ գտնուիլը եւ ոչ՝ կախարդներուն արձակած անէծքները: Ինչո՞ւ: Որովհետեւ ըմբոստութիւնը դիպօթօթին է: Ձեռով մը Գաղատիոյ եկեղեցին դիպօթօթեան տակ եկած էր անհնազանդութեան պատճառով:

Նախքան ասելի յառաջանալը, պէտք է յստակացնեմ հետեւեալ կէտը: Մենք դիպօթօթեան տակ կ'ըլլանք երբ չենք հնազանդիր այն բանին, որ Աստուած յստակօրէն յայտնած է մեզի, եւ ոչ թէ երբ անհնազանդ կ'ըլլանք այն բանին մէջ, որ մեզի չէ յայտնուած: Ատիկա յստակ կ'ըլլայ երբ կը շարունակենք Պօղոսի ըսածը. «Ո՛վ հրապուրեց ձեզ, որ չհնազանդիք ճշմարտութեան, նկատի առնելով, որ ձեր աչքերուն առջեւ պատկերուեցաւ Յիսուս Քրիստոսի խաչին վրայ մահը» (Գղ 3.1, բառացի թարգմանութիւն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* տարբերակէն):

Այդ հրադարձութիւնը մեզի կու տայ տիեզերական ճշմարտութիւն մը: Աստուած շնորհքով տրուած Իր

փրկութիւնը յայտնած էր այդ եկեղեցիներուն Պօղոսի քարոզութեան միջոցաւ: Բայց կարճ ժամանակ ետք անոնք որդեգրած էին տրամաբանութիւնը կամ դատողութիւնը եւ ասանդութիւնները ուրիշներու, եւ անհնազանդ գտնուած էին այն բանին, որ ժամանակին շատ յստակօրէն յայտնուած էր իրենց Սուրբ Հոգիին կողմէ: Անոնք սկսած էին սորվեցնել այն համոզումը, թէ՛ փրկութիւնը կու գար Օրէնքին գործերը պահելով, եւ սկսած էին ապրիլ այդ համոզումին համաձայն: Սակայն այն տիեզերական հիմքը, որուն վրայ կ'ուզենք կեդրոնանալ հետեւեալն է. *Երբ անհնազանդ կ'ըլլանք այն բանին, որ Աստուած յստակօրէն յայտնած կ'ըլլայ մեզի, մենք մեզ կը դնենք դիւթութեան անէծքի ազդեցութեան տակ:* Ինչո՞ւ: Որովհետեւ ըմբոստութիւնը դիւթութիւն է:

Ես ատիկա տեսած եմ ամբողջ եկեղեցիներու կամ ընտանիքներու եւ անհատներու կեանքերուն մէջ: Հանդիպած եմ մեծ թիւով եկեղեցի յաճախողներու, որոնք այս կամ այն պատճառով կ'ապրին գրեթէ մնայուն անհնազանդութեան մէջ: Մեծ մասը անտեղեակ է ատոր ճիշտ լուրջ ըլլալէն, որովհետեւ թմրեցուած են ծուռ ուսուցումով մը, որ կը պակսեցնէ հնազանդութեան կարեւորութիւնը: Իրենց կեանքին մէջ տազնապ տազնապի ետեւէ կ'ունենան: Միշտ կայ հարց մը կամ մեղք մը, որուն մէջ կարծես յաղթանակը չեն կրնար ապրիլ: Փախուստ կու տան մէկ որոգայթէն եւ կ'իյնան ուրիշի մը մէջ: Իւրաքանչիւր *սենարիօ* կը թուի նախորդէն ատելի վատ ըլլալ: Այդ հարցերը կը սպառեն իրենց ժամանակը, ոյժը եւ կենսունակութիւնը: Տեղ մը օրինական մուտքի իրաւունք մը տրուած է դիւթին ճնշումի կամ ազդեցութեան: Անոնց անհնազանդութիւնը զիրենք խոցելի դարձուցած է:

Ես տեսած եմ ինչպէս անոնց ամուսնութիւնը կը վիրաւորուի կամ նոյնիսկ կ'աւարտի՝ ամուսնալուծման կոտրած վիճակի մը մէջ: Ուրիշներ գործի մէջ պաշտօնի բարձրացումի առիթներ կը կորսնցնեն կամ նոյնիսկ գործ կը կորսնցնեն:

Ոմանք զոհ կ'ըլլան կողոպուտի, ֆինանսական տազնապի եւ ողբերգութեան: Յուսալքուած ըլլալով, անոնք խենթի պէս կը փնտռեն մէկը, որուն վրայ կրնան մեղադրանք դնել: Շատ անգամ մեղադրանքը կը դնեն այն վարմունքին վրայ, որ տեսած են իրենց ծնողներէն, հովիւէն, գործատիրոջմէն, ամուսինէն, զաւակներէն, կառավարութենէն կամ ոեւէ մէկէն, որ չի համաձայնիր իրենց տրամաբանութեան կամ դատողութեան:

Երկու մեղակիցներ կան, որոնք իրարմէ կը սնանին: Առաջինը խաբկանքն է: Իսաարը կ'ամպոտէ անոնց սիրտերը, որովհետեւ հնազանդած չեն ըլլար Աստուծոյ Խօսքին: Երկրորդը հանգուցուած որոգայթն է կառավարող հոգիներու, որոնք կը յարձակին անհնազանդութեան պարագային: Պօղոս թելադրանքներ տուաւ անոնց, որոնք գործ կ'ունենան ըմբոստութեան մէջ եղող Քրիստոսը դաւանող հաւատացեալներու հետ. «Որպէսզի քաղցրութեամբ խրատէ հակառակողները, որովհետեւ Աստուած միշտ ալ առիթ կու տայ որ անոնք դառնան իրենց սխալէն եւ ճշմարտութիւնը ճանչնան, եւ զգաստանալով՝ դուրս գան Սատանայի որոգայթներէն, որոնց մէջ բռնուած՝ անոր կամքը կը կատարեն» (Բ.Տմ 2.25-26): Հարցը այն է, որ խաբուած գերիները ուրիշները կը մեղադրեն՝ իրենց անհնազանդութենէն պահուրտելու համար, եւ ասիկա ընելը կը կուրցնէ զիրենք ճիշդ այն բանին, որուն պէտք ունին ազատ ըլլալու համար:

Շնորհակալութիւն Աստուծոյ՝ Իր Խօսքին համար: Անոր լոյսը կը բացայայտէ խաբկանքը եւ կը զանազանէ մարդոց սիրտերուն խորհուրդները եւ միտումները: Դժբախտաբար երբ անհնազանդութեան պատճառով նեղութիւններ կը կրեն, մարդոց մեծ մասը կը մերժէ սորվիլ: Կը շարունակեն քալել անհնազանդութեան անապատին մէջ՝ մեղադրելով բոլորը փոխանակ սորվելու իրենց սխալներէն:

«Գուրթ Չունիս Բնաւ»

Կը յիշեմ դէպք մը, ուր մէկը սորվեցաւ իր սխալէն: Ես պատիւը ունէի շարունակ իբրեւ պատգամաբեր հրաւիրուելու միջազգային առաքելութեան մը կողմէ, որ կը բաղկանար եկեղեցիէ մը եւ Աստուածաշունչի Դպրոցէ մը: Կը սիրէի եւ կը յարգէի անոր առաջնորդը, որ մեծ ազդեցութիւն ունեցած էր կեանքիս վրայ: Օր մը առաջնորդը հեռաձայնեց ինծի եւ ըսաւ. «Ճոն, ես մեր առաքելութեան բոլոր մօտիկներուն կը հեռաձայնեմ ըսելու, թէ մօտ ատենէ ինչ պիտի պատահի, որպէսզի ուրիշ աղբիւրէ մը չլսէք: Կ'ուզեմ ձեզի ըսել, որ իմ կնոջմէս կ'ամուսնալուծուիմ: Տասնութ տարիէ ի վեր ամուսնացած ենք, եւ այնպէս կը թուի, թէ այլեւս տարբեր մտածելակերպեր եւ կեանքի հեռանկարներ ունինք: Միասին՝ իբրեւ զոյգ որեւէ մէկ բան չենք ըներ այլեւս, եւ մեր սիրած բաները այլեւս շատ տարբեր են: Տարիներէ ի վեր կը փորձենք բարելաւել մեր յարաբերութիւնը, բայց անիկա միայն դէպի աւելի վատը կ'երթայ»:

Չէի հաւատար լսածիս: Կը մտածէի. *Ո՛հ, հաճիք, մի՛ ընէք ապիկա*: Ես կը սիրէի այդ զոյգը եւ իրենց ծառայութիւնը: Այնքան ցնցուած էի, որ անխօս մնացի:

Լռութիւնս նկատելով, հովիւը շարունակեց. «Ճոն, գիտես, որ ես Յիսուսը շատ կը սիրեմ, եւ եթէ սխալ է ըրածս, Ան ցոյց կու տայ ինծի»: Ան այդ կացութեան մասին խօսեցաւ ինծի քանի մը վայրկեան եւս եւ ապա աւարտեցինք մեր հեռաձայնային խօսակցութիւնը: Ես շատ քիչ բան կրցայ ըսել, քանի որ տակաւին նոր կը փորձէի մարսել ամէն բան եւ ցնցուած էի:

Ամբողջ օրը լսածներուս մասին մտածեցի: Շարունակ ըսուած խօսքերը կը յիշէի: Կը մտածէի՝ *Ասիկա վապր երազ մը կը թուի ըլլալ*: Այդ խառն խորհուրդներուս մէջ զգացի,

որ Սուրբ Հոգին ինձի կ'ըսէր, որ հեռաձայնեմ այդ անձին եւ ճշմարտութիւնը ըսեմ:

Յաջորդ առտու հեռաձայնեցի: Գիշերը չհեռաձայնեցի, որպէսզի ինքնաբոլս հակազդեցութեան պէս չթուի, այլ՝ ընդունուի իբրեւ Հոգիէն առաջնորդուած կեցուածք մը: Ձայնս ճանչնալով, հովիւր ըսաւ. «Բարեւ, ճոն, ինչ կայ»:

Ըսի. «Կ'ուզեմ հետդ քիչ մը աւելի խօսիլ ամուսնալուծման որոշումիդ մասին: Կնոջդ կողմէ որեւէ անբարոյ արարք կատարուած է»:

Պատասխանը եղաւ. «Բացարձակապէս ոչ»:

Ապա ըսի. «Քու ըրածդ սխալ կը գտնեմ: Յիսուս յստակօրէն կ'ըսէ, թէ միակ պատճառը ամուսնալուծման մասին մտածելու սեռային անհաւատարմութիւնն է (Մտ 5.32), եւ Մաղաքիայի գիրքը մեզի կ'ըսէ, թէ Աստուած կ'ատէ ամուսնալուծումը, որովհետեւ ատիկա իր հանդերձով բռնութիւնը ծածկել է (2.16): Երէկ ինձի ըսիր, որ կը սիրես Յիսուսը եւ եթէ սխալ էր ըրածդ, Ան քեզի ցոյց պիտի տայ: Բայց ինչո՞ւ Ինք պէտք է քեզի ցոյց տայ երբ Ան արդէն իսկ Իր Խօսքին մէջ յստակ դարձուցած է Իր կամքը: Ինչպէս կրնաս կամովին Աստուծոյ Խօսքին հակառակը ընել: Եթէ առնես այդ քայլը, ինչպէս պիտի կենաս եկեղեցւոյդ կամ Աստուածաշունչի Դպրոցի աշակերտներուդ դիմաց եւ ըսել իրենց, որ սրբութեան մէջ քալեն՝ դէմ դնելով մեղքին: Դուն քեզ եւ առաքելութիւնը խնդիրներու եւ խաբկանքներու առջեւ կը դնես»:

Հովիւր ընդմիջեց զիս եւ խստօրէն ըսաւ. «Ճոն Պըվիր, դուն իմ կեանքս չես ապրած, եւ դուն գութ չունիս բնաւ»:

Յաջորդ բանը, որ լսեցի՝ անջատուած գիծի ձայնն էր: Հովիւր հեռաձայնը երեսիս գոցած էր: Կէս ժամ ետք լուր առի գրասենեակէս, թէ իրենց հետ ծրագրուած ծառայութիւնս ջնջուած էր: (Երեք ամիս ետք քարոզելու պիտի երթայի իրենց քով:) Կնոջս ըսի, «Գիտէի, որ այսպէս պիտի ընեն,

բայց ոչ այսքան շուտ»: Ամէն կապ իրենց հետ կտրուեցաւ, եւ յետագային ուրիշ հանրաժանօթ ծառայող մը, որ իրենց հանդիպած էր ինծի ըսաւ, որ անունս հոն «ցեխ» էր: Շարունակ կը մտածէի՝ *Ես պարզապէս փորձած էի ճշմարիտ բարեկամ մը ըլլալ:*

Արթնութիւն՝ Դատաստանի Պատճառով

Ի զարմանս ինծի, եօթը ամիս ետք հեռաձայն մը ստացայ այդ հովիւէն. «Ճոն, պէտք է անկեղծ խօսակցութիւն մը ունենամ հետդ: Գիտե՞ս ի՞նչ պատահեցաւ երբ հեռաձայնը երեսիդ գոցեցի եւ ջնջեցի քու այցելութիւնդ: Մէկ ամիս ետք երիկամունքներու դադրեցան աշխատելէ, եւ ապրելու յիսուն տոկոս հաւանականութիւն տուին ինծի: Երկրորդ անգամ երիկամունքներու լուացում ունենալէ ետք, արթնցայ եւ ես ինծի ըսի. “Ես ինչո՞ն կ’ամուսնալուծուիմ”: Անդրադարձայ, որ շատ սխալ քայլ մը կ’առնէի: Երիկամունքներուս կենալը արթննալու կանչ մըն էր ինծի համար: Կնոջս հեռաձայնեցի եւ զոչում յայտնեցի այդ առած որոշումիս համար: Եկեղեցիիս եւ Աստուածաշունչի Դպրոցիս դիմաց ալ զոչում յայտնեցի: Աստուածաշունչի Դպրոցի աշակերտներուն ըսի. “Ես ջնջեցի Ճոն Պըվիի այցելութիւնը, որովհետեւ ան ինծի ըսաւ, որ ամուսնալուծման որոշում առնելս սխալ էր: Պիտի հեռաձայնեմ իրեն եւ տեսնեմ եթէ ետ կու գայ մեր քով”: Ուստի, Ճոն, կու գամ մեր քով ծառայութեան համար»:

«Անշնչտ», պատասխանեցի: Ես շատ ուրախ էի այդ անձին համար եւ յարգանքս այդ առաջնորդին հանդէպ մեծապէս աճեցաւ: Այդ բոլորին կողքին, անոր ապաքինումը ակնկալուածէն շատ ատելի արագ եղաւ, եւ մէկ տարի ետք իրեն յարմար երիկամունք մը գտնուեցաւ: Այդ հովիւը մէկ ծառայութիւն իսկ չփախցուց, եւ անոր առողջական յառաջդիմութիւնը զարմացուց բժիշկները: Առաւել, այդ

զղջումի քայլը առնելով, մեծ հոգեւոր իշխանութիւն եւ զօրութիւն եկաւ այդ առաջնորդին կեանքին մէջ: Հիմա, տարիներ ետք, այդ հովիւը աւելի ազդու առաջնորդ մըն է քան երբեւէ եղած էր եւ փնտռուած պատգամաբեր մըն է՝ շատ ուրախ ընտանիքով մը: Ամէն անգամ որ ես այդ զոյգին հետ կ'ըլլամ, դիւրին է տեսնել անոնց սէրը իրարու հանդէպ: Բնաւ չես կրնար գիտնալ, որ քանի մը տարի առաջ անոնք քանի մը քայլ անդին էին ամուսնալուծումէ:

Հիանդ՝ Երեքուկէս Ամիս

Դիւրին էր ինծի համար չդատել այդ հովիւը, քանի որ անձնապէս ես նոյնանման փորձառութենէ մը անցած էի քանի մը տարի առաջ: Ամուսնութեանս մէջ չէր հարցը, բայց ծառայութեանս մէջ անհնազանդութեան մարզ մը ունէին: Երբ նոր հիմնեցինք *Մասենճըր Ինթըրնաշնըլը*, Տէրը մեզի յստակօրէն թելադրեց, որ ծառայութեան որեւէ առիթ չընդունինք պարզապէս որովհետեւ լաւ կը թուէր՝ առանց նախ իր կամքը հարցնելու:

Քանի մը տարի անցաւ եւ լաւ թուացող առիթ մը ներկայացաւ մեզի՝ առաքելութեան ընդարձակման համար: Սակայն երբ աղօթեցինք, Աստուած յստակօրէն «Ոչ» ըսաւ կնոջս եւ ինծի առանձին-առանձին. պէտք չէր ընդունէինք այդ առաջարկը: Բայց որովհետեւ առաջարկը յարատեւօրէն կը կատարուէր մեզի եւ ես շոյուած կը զգայի, մտիկ կ'ընէի: Երկար չտեսեց, որ սիրտիս վրայ Աստուծոյ դրած խօսքը սկսայ տրամաբանական պատճառաբանութիւններով անտեսել: Շփոթի մատնուեցայ, եւ միտքս սկսաւ ամպոտիլ այն բոլոր խօսքերով, որ լսած էի: Կինս շարունակ կ'ըսէր, որ սխալ ձեւով կը մտածէի, բայց ես չէի համոզուեր: Վերջաւորութեան ընդունեցի եղած առաջարկը:

Փրկուելէս ի վեր, Աստուծոյ շնորհքով, բնաւ չեմ հիանդա-

ցած (փառքը՝ Աստուծոյ): Շատ հազուադէպօրէն բանով մը կը վարակուիմ, իսկ եթէ ալ վարակուիմ, մէկ-մէկուկէս օրէն կ'անցնի: Կը հաւատամ, որ Յիսուս աստուածային առողջութիւն տուաւ ինծի մեղքերու թողութեան կողքին երբ մեռաւ խաչին վրայ (տէս Ես 53.4-5: Սղ 103.2-3): Բայց այն օրը, որ մեր առաքելութիւնը ընդարձակելու այդ առաջարկը ընդունեցի, հիւանդացայ եւ չէի լուսանար:

Ակսաւ ծանր հարբուխով (կամ *կրիփով*): Դուրս տուի՝ տասնինը տարեկանէս ի վեր երկրորդ անգամ ըլլալով: Քանի մը օր *կրիփին* դէմ պայքարելէ ետք, ժահրով մը վարակուեցայ: Կինս եւ ես քաղաքէն դուրս ելած էինք՝ մեր ամուսնութեան տարեդարձը տօնելու համար եւ օրերով ջերմութիւնս 38 աստիճանէն վեր էր, ինչ որ արեւց մեր արձակուրդը: Շաբթուան վերջաւորութեան քարոզ տուի բարձր ջերմութեամբ եւ դողով: Ջերմութիւնս մինչեւ յաջորդ շաբաթ շարունակուեցաւ երբ Քանատայի մէջ քարոզարշաւներու կը մասնակցէիք: Կը քարոզէի բարձր ջերմութեամբ եւ ապա կը վերադառնայի սենեակս եւ դողի մէջ անկողին կը մտնէի մինչեւ յաջորդ քարոզիս ժամանակը: Շատ քիչ ոյժ կար վրաս:

Ջերմութիւնս շարունակուեցաւ երեք շաբաթ: Չէինք հասկնար, թէ ինչ կը պատահէր: Ես բնաւ հիւանդութեան դէմ այդ ձեւով չէի պայքարած: Կ'աղօթէի եւ դէմ կը դնէի Աստուծոյ Խօսքով, բայց չէր երթար վրայէս: Բժիշկի գացի եւ ան զօրաւոր *անթիպայոթիք* մը դեղագրեց, եւ շուտով բնականիս դարձայ:

Բայց *անթիպայոթիք*ը վերջացնելէ մէկ շաբաթ ետք, դարձեալ *կրիփ* եղայ: Այն տեսակէն, որ ամբողջ ոյժդ կը քամէ քեզմէ: Ահաւոր էր վիճակս: Կոկորդի ցաւ, ծանր գլուխ եւ բոլոր միւս նեղացուցիչ վիճակները: Շաբաթներ տեւեց այդ ալ մինչ ես կը շարունակէի ծառայել:

Այդ *կրիփն* ալ անցընելէ ետք, ծունկս վիրաւորեցի երբ

պատ մը կը մաքլցէի: Այնքան վատ էր վիճակս, որ անհուով աթոռ կը գործածէի ճամբորդութիւններու ընթացքին եւ ատկէ ետք քանի մը շաբաթ կը կաղայի՝ ծունկիս վրայ յատուկ կապ մը դրած ըլլալով: Այդ բոլորէն ետք, անգամ մը եւս ժահրով մը վարակուեցայ: Ջերմութիւնս 38.5-39-ի բարձրացաւ, եւ դարձեալ վրայէս չէի կրնար նետել անիկա: Դարձեալ պէտք եղաւ, որ բժիշկէն դեղագիր մը առնէի եւ այդպէս լաւանայի: Կարծես մէկ շաբաթէն աւելի առանց անհանգստութեան մը չէի կրնար մնալ: Եւ այդ կացութիւնը շարունակուեցաւ երեքուկէս ամիս:

Բոլոր հիւանդութիւններու ընթացքին կինս հիւանդ չեղաւ բնաւ, ոչ իսկ մէկ օր: Ֆիզիքական հարցերուն կողքին, շարք մը ուրիշ հարցեր ալ ծագեցան: Պայքարի մէջ էի հակառակորդի մը դէմ, որ կը թուէր տեղէն չշարժիլ, քանի որ ինձմէ աւելի զօրաւոր էր: Իմ կամովին անհնազանդութիւնս զիս անէծքի տակ դրած էր:

Անմիջական Հանգիստ՝ Ճշմարիտ Զղջումի Շնորհիւ

Չորս ամիս անցաւ եւ ես ընդունեցի մեղքս: Սակայն տակաւին պէտք էր լուծէի այդ մարդոց հետ ըրած համաձայնութեանս հարցը, եւ եթէ հրաշք մը չըլլար, ելքի ճամբայ չէի տեսներ: Լիսան եւ ես ձեռք ձեռքի տուինք եւ աղօթքով Աստուծոյ առջեւ կեցանք: Ես ապաշխարեցի եւ խնդրեցի Աստուծոյ ողորմութիւնը: Աստուած մեզ հանեց երկար ժամկետով յանձնարութեան այդ ծուղակէն, որուն մէջ ես դրած էի մեզ:

Քանի մը ամիս ետք կինս եւ ես կը խօսէինք բոլոր անցած-դարձածներուն մասին, եւ եկանք այն եզրակացութեան, որ իմ ամբողջ հիւանդութիւնս անհնազանդութեանս պատճառով էր: Անդրադարձանք, որ հազիւ զղջացի, իմ նախկին

առողջութիւնս վերականգնուեցաւ: Այն միւս հարցերը, որոնք մեր վրայ եկած էին, բոլորը լուծուեցան եւ անհետացան:

Այդ ժամանակահատուածին Յակոբոսի խօսքերը յստակ դարձան ինծի համար: Ես յաճախ մէջբերած էի անոր հետեւեալ խօսքերը. «Դէմ դրէք չարախօսին՝ Սատանային, եւ հեռու պիտի փախչի ձեզմէ» (Յկ 4.7): Անցեալին երբ կը զգայի, որ յարձակում մը կու գար, Աստուծոյ խօսքով բուռն կերպով դէմ կը դնէի խաւարին, եւ միշտ արդիւնք կը քաղէի: Սակայն այդ անգամ տեղ մը չէի հասներ: Երբ անցայ այդ տագնապին մէջէն, անդրադարձայ, որ ես Յակոբոսի ըսածին միայն կէտը կը մէջբերէի: Համարը կ'ըսէ. «Հետեւաբար հնազանդեցէք Աստուծոյ, եւ դէմ դրէք չարախօսին՝ Սատանային, եւ հեռու պիտի փախչի ձեզմէ» (Յկ 4.7):

Մենք դէմ կը դնենք Չարախօսին՝ հնազանդօրէն ենթարկուելով Աստուծոյ իշխանութեան: Կրնանք աստուածաշնչական համարներ արտասանել մինչեւ որ մեր երեսը կապոյտ դառնայ, բայց եթէ անհնազանդութեան մէջ ենք, արդիւնք պիտի չառնենք:

Կարեւոր Յստակացում մը

Կը խնդրեմ, որ հասկնաք այս կէտը. ամէն անգամ որ մէկը դժուարութիւններ, հիւանդութիւններ, հարցեր կամ դժուարութիւններ կը դիմագրաւէ, պատճառը անպայմանօրէն անհնազանդութիւնը չէ: Շատեր կը տառապին հնազանդ կեանք մը ապրելու տեսն: Դաւիթ այդ ձեւի մարդ մըն էր: Ան որեւէ մէկ տեսակի ըմբոստութեան մէջ չէր: Սխալ բան մը չըրաւ՝ իր առաջնորդին բարկութիւնը իր վրայ բերելու համար: Սակայն հալածուեցաւ եւ շրջան մը քարայրներու, անապատի եւ վայրի բնութեան մէջ ապրեցաւ: Այդ շրջանին ան առանց տունի եւ առանց երկիրի մարդ մը եղաւ: Տարիներ ապրեցաւ իբրեւ թափառական մը՝ դժուար

պայմաններու մէջ: Ոմանք դատեցին զինք եւ մտածեցին, թէ ան կը տառապէր անհնազանդութեանը պատճառով, բայց զանազանելու կարողութիւն ունեցողը պիտի տեսնէր, որ Աստուծոյ ձեռքը նոր տեսակի թագաւոր մը կը դարբնէր Դաւիթի մէջ ինչպէս նաեւ պիտի հասկնար Աստուծոյ շնորհքը կամ օրհնութիւնը Դաւիթի կեանքին մէջ: Ատիկա յայտնի էր անոր իմաստութեան մէջ:

Կան բազմաթիւ օրինակներ հնազանդ մարդոց, որոնք տառապեցան. Յիսուս, Յովսէփ, Աննա, Դանիէլ, Երեսմիս, Յոբ եւ ուրիշներ: Հնազանդ անձին կրած դժուարութեան եւ դիպութեան տակ եղողին կրած դժուարութեան միջեւ տարբերութիւնը այն է, որ հնազանդ անձին կեանքին մէջ հոգեւոր յառաջդիմութիւն կայ: Անոնք իրենց գլուխը պատին չեն զարներ. լերան մը շուրջ չեն դառնար՝ առանց տեղ մը հասնելու:

Կային տարբեր պարագայ մըն էր: Անոր անհնազանդութիւնը մեծ տառապանք պատճառեց: Գայթակղած ըլլալով, մերժեց զղջալ, որուն պատճառով անէծքը մտաւ կեանքէն ներս: Ան իր կեանքը ապրեցաւ իբրեւ փախստական մը եւ թափառական մը: Անոր աննպատակ եւ անյոյս թափառումները օրինակ մը եւ զգուշացում մըն են ապագայի սերունդներուն համար:

Եզրակացնելու համար հետեւեալը կ'ուզեմ ըսել. վերջին երկու գլուխներուն ճշմարտութիւնները մի՛ առներ եւ գործածեր զանոնք ուրիշները դատելու համար: Անոնց դժուարութիւնները կրնան ըլլալ փորձութիւններ, որոնցմով Աստուած պիտի փառաւորուի: Այս գլուխին նպատակը օգնել է քեզի, որ անդրադառնաս Աստուծոյ իշխանութեան հանդէպ անհնազանդութեան լրջութեան: Եթէ անհնազանդութեան մէջ ես, թող այս ճշմարտութիւնները օգնեն քեզի, որ դուն քեզ դատես եւ վերադառնաս կեանքի ճամբուն:

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ



**ԱՍՏՈՒԾՈՅ ՆՇԱՆԱԿԱԾ
ԾԱԾԿՈՅԹԸ**

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՍՏՈՒԱԾ ԳԻՏԷ՛, ԹԷ Ո՛Վ Է ՂԵԿԱՎԱՐԸ

*Եթէ սորվինք ինչպէս հնազանդի
Աստուծոյ, բնաւ հարց պիտի չունենանք
Աստուծոյ իշխանութիւնը ճանչնալու
ուրիշի մը վրայ:*

Խօսեցանք Աստուծոյ ուղղակի իշխանութեան ենթարկուելու կարեւորութեան մասին: Հիմա խօսինք Աստուծոյ կողմէ յանձնարարուած իշխանութեան ենթարկուելու կարեւորութեան մասին, որ նոյնքան կարեւոր է որքան առաջինը: Նիւթը սկսելու համար պիտի վերլուծենք երկրորդ գլուխին մէջ մեր հանդիպած մէկ հատուածը:

«Ամէն մարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց, որովհետեւ առանց Աստուծոյ թոյլտուութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ, եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծմէ կարգուած են: Ուստի, ով որ իշխանութեանց կը

հակառակի՝ Աստուծոյ հրամանին է որ հակառակած կ'ըլլայ, եւ հակառակողները իրենք զիրենք դատապարտութեան տակ կը դնեն»: (Հռ 13.1-2)

Պետական իշխանութիւնները

Նախ, ղվ են այդ «պետական իշխանութիւնները»: Վերի հատուածին մէջ Պօղոս կը խօսէր քաղաքացիական կամ կառավարական իշխանութիւններու մասին: Սակայն այդ յորդորական խօսքերը կը վերաբերին ոչ միայն կառավարական ղեկավարներու, այլեւ յանձնարարուած իշխանութեան ուրիշ մարզերու եւս: Այն ինչ որ կը քաղենք այդ հատուածէն՝ պէտք է կիրարկենք յանձնարարուած իշխանութեան բոլոր մարզերուն:

Նոր Կտակարանը կը խօսի յանձնարարուած իշխանութիւններու չորս որոշակի բաժանմունքներու մասին. քաղաքացիական, եկեղեցական, ընտանեկան եւ ընկերային: Ընկերայինին մէջ կը ներառեմ գործատէրերը, ուսուցիչները եւ տնօրէնները: Նոր Կտակարանը որոշակի ուղղութիւններ կու տայ իւրաքանչիւր մարզի համար. սակայն պարագաներուն մեծ մասին մէջ տրուած խրատը կ'անցնի սահմաններէն անդին՝ յանձնարարուած իշխանութեան բոլոր մարզերուն:

Նկատի առ ինչպէս կը սկսի հատուածը. «Ամէն մարդ»: Ոչ մէկը զերծ է այդ թելադրանքէն, ուստի ամրագրէ ասիկա միտքիդ մէջ: Անիկա պատուէր մըն է եւ ոչ՝ առաջարկ մը: Տէրը ականարկութիւններ կամ առաջարկներ չ'ըներ:

Ան շարունակեց. «Ամէն մարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց»: «Հնազանդիլ» բառին յունարէնը *ուփոթասիս* է: Անիկա յունարէն զինուորական բառ մըն է, որ կը նշանակէ՝ «(զօրքերու զանազան բաժանմունքները) շարել զինուորական ձեւով՝ ղեկավարի

մը հրամանատարութեան տակ»: Իր ոչ-զինուորական գործածութեան մէջ անիկա կը նշանակէր՝ «յանձնուելու, համագործակցելու, պատասխանատուութիւն վերցնելու եւ բեռ կրելու կամաւոր կեցուածք մը» (Թէյլրի Յունարէն Բառարան): Պարզ ձեւով ըսելով, այն ձեւով որ այդ բառը գործածուած է վերի համարին մէջ կը յորդորէ մեզ, որ մենք մեզ կամաւորաբար ենթարկենք իշխանութիւններու՝ անոնց հնազանդելու ամբողջական մտադրութեամբ:

Ամէն մարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց, քանի որ Աստուած է, որ նշանակած է բոլոր պետական իշխանութիւնները մեր կեանքերուն մէջ: Ամէն իշխանութեան աղբիւրը Աստուած է: Չկայ որեւէ բացառութիւն: Իրականութեան մէջ *կարգուած* բառին տեղ գործածուած յունարէն բառը *թանսօն* է, որ կը նշանակէ՝ նշանակել կամ դնել: Հոգ գործածուած այդ բառը «պատահական»ի իմաստ չունի բնաւ: Անիկա ուղղակիօրէն նշանակուած ըլլալու իմաստը ունի: Քանի որ Աստուած նշանակած է բոլոր իշխանութիւնները, մենք անոնց ետին գտնուող իշխանութիւնը մերժած կ'ըլլանք եթէ անպատուենք զանոնք կամ մերժենք ենթարկուիլ անոնց: Գիտնալով կամ առանց գիտնալու, դէմ դրած կ'ըլլանք Աստուծոյ դրած կարգին կամ կանոնին: Երբ կը դիմադրենք Աստուծոյ կողմէ յանձնարարուած կամ նշանակուած իշխանութեան, դէմ դրած կ'ըլլանք ինքնին Աստուծոյ...

Երբ մենք՝ իբրեւ Քրիստոնեաներ կապ կ'ունենանք իշխանութիւններու հետ, պէտք է անհատականութենէ կամ վարմունքէ անդին տեսնենք եւ պատուենք դիրքը: Մենք կը հնազանդինք իշխանութեան վրայ եղող մարդոց, որովհետեւ Աստուծոյ իշխանութիւնը կայ անոնց վրայ: Անձին անհատականութեան կամ ղեկավարութեան ոճին հանդէպ համակրանք ունենանք կամ ոչ, կամ անկախ անկէ, թէ մեր կարծիքով ան այդ դիրքին վրայ պէ՛տք է ըլլայ կամ ոչ, մենք պէտք է պատուենք զանոնք: Շատ յաճախ հաւատացեալներ

Աստուծոյ ենթակայութիւն կամ հնազանդութիւն կը դաւանին, բայց կ'անտեսեն նշանակուած կամ յանձնարարուած իշխանութեան ենթարկուիլը: Անոնք խաբուած են:

Եթէ սորվինք Աստուծոյ հնազանդիլ, բնաւ հարց պիտի չունենանք ճանչնալու ուրիշի մը վրայ Աստուծոյ իշխանութիւնը: Կ'մն ժամանակներ երբ պէտք է ընտրութիւն ընենք Աստուծոյ ուղղակի իշխանութեան եւ Անոր կողմէ յանձնարարուած իշխանութեան միջեւ: Այո՛: Բայց ո՛չ այնքան յաճախ որքան հաւատացեալներուն մեծ մասը կը կարծէ: Կայ միայն մէկ բացառութիւն, որուն մասին մանրամասնօրէն պիտի խօսինք յառաջիկայի գլուխներէն մէկուն մէջ: Սակայն հոս հարցը այն է, որ մեծ թիով Քրիստոնէաներ կը կարծեն, թէ հնազանդութիւնն է բացառութիւնը եւ անձնական ազատ ընտրութիւնը օրէնքն է: Այդ ձեւի տրամաբանութեան հետեւիլը կրնայ մեզ առաջնորդել կործանման: Հետեւանքները, ինչպէս տեսանք նախորդ գլուխներուն մէջ, լուրջ են: Ատիկա ոչ միայն մեզ կ'ենթարկէ Աստուծոյ դատաստանին, այլեւ մուտքի օրինական իրաւունք կու տայ դիւային ոյժերուն: Եթէ կ'ուզենք հնազանդ մնալ Աստուծոյ եւ օրհնուած մնալ, ունինք միայն մէկ ընտրութիւն երբ հարցը կը վերաբերի յանձնարարուած իշխանութեան. ենթարկուիլ եւ հնազանդիլ:

Չար Իշխանութիւնները Աստուծոյ Կողմէ Նշանակուած են

Տեսանք, որ ամէն իշխանութիւն կը նշանակուի Աստուծոյ կողմէ եւ մեր կեցուածքը կամ վերաբերումը պիտի ըլլայ՝ յարգել այդ իշխանութեան դիրքը եւ ենթարկուիլ անոր: Յաճախ երբ այս նիւթը կը բացուի, պատեր կը բարձրանան մարդոց միտքերուն մէջ: Հասարակաց հերքումը այն է, թէ՛ «Ես գիտեմ ղեկավարներ, որոնք կոշտ են եւ ուղղակի չար: Ինչպէս կրնաս ըսել ինձի, որ անոնք Աստուծոյ կողմէ

նշանակուած են»: Դարձեալ, յիշեցնեմ, որ Պօղոս ըսաւ, թէ ամէն իշխանութիւն *Աստուծմէ* է եւ ոչ թէ ամէն իշխանութիւն աստուածային կամ *բարեպաշտ* է: Իշխանութիւնը Աստուծմէ է, բայց անձին վարմունքը կրնայ չըլլալ: Ուստի եկէք առնենք յոռեգոյն պարագայ մը. մէկը, որ Հիթերի կամ Ստալինի դասակարգումին մէջն է: Այդ երկուքը կը համարուին թերեւս երկու ամէնէն չար դեկավարները անցեալ դարու: Բոլորս ալ պիտի համաձայնինք, որ այդ դասակարգումին պատկանողները այնքան անգութ եւ չար են որքան ողբէ մարդ կրնայ ըլլալ: Ճիշդ եմ:

Խօսինք Փարաւոնին մասին՝ Եգիպտոսի կառավարիչին: Ան վստահաբար կ'իյնայ մեր վերը նշած դասակարգումին մէջ: Անոր իշխանութեան օրերուն, Իսրայէլի ժողովուրդին հետ չարաչար կը վարուէին: Ան ստրկացուցած եւ աղքատացուցած էր ժողովուրդը, ֆիզիքական եւ մտային բռնաբարումի կ'ենթարկէր զիրենք, եւ կարծես այդ բոլորը բաւարար չըլլային, ան անոնցմէ հազարաւորներ սպաննեց անգութօրէն: Ան անզիջող, անհաշտ եւ ամբարտաւան էր, եւ որեւէ արժէք չէր տար մարդկային կեանքին կամ Տիրոջ: Ո՛րկէ կու գար անոր իշխանութիւնը: Ինչպէս եղաւ, որ Աստուծոյ ժողովուրդը անոր իշխանութեան տակ դրուեցաւ: Արդեօք աստիկա պատահական էր:

Աստուծոյ Խօսքին համաձայն, Աստուած Մովսէսի միջոցաւ Փարաւոնին ըսաւ. «Քեզ նշանակեցի [*բարձրացուցի*], ըստ անգլերէն տարբերակին]» (Ելք 9.16): Պօղոս կը հաստատէ աստիկա հռոմայեցիներուն ուղղուած իր նամակին մէջ (տես Հռ 9.17): [Նոր Կտակարանի նոր թարգմանութեան մէջ (Անթիլիաս, 2001) կը գործածուի «Քեզ բարձրացուցի» արտայայտութիւնը, ինչպէս վերը նշուած Հին Կտակարանի մէջբերումի անգլերէն տարբերակին մէջ- *Թարգմանիչ*:] Այդ երկու նշումներէն կրնանք հասկնալ, որ աստիկա ճշգրիտ է եւ ոչ թէ սխալ մեկնաբանուած. բան մը, որ կը հաստատուի

երկու վկաներով (տե՛ս Յհ 8.17): Կասկած չկայ, որ Աստուած, ոչ թէ Չարախօսը, բարձրացուց Փարաւոնը եւ դրաւ զայն իշխանութեան դիրքի վրայ: Այլ խօսքով, Աստուած Փարաւոնին իշխանութիւն տուաւ Աբրահամի սերունդին վրայ: Ատիկա կատարելապէս կը յարմարի վերը նշուած «գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծմէ կարգուած են»ին:

Հիմա խօսինք անոր մասին, թէ ինչպէս Աստուծոյ ուխտի ժողովուրդը եղաւ այդ չար ղեկավարին իշխանութեան տակ: Աստուած Աբրահամի յայտնուեցաւ երբ Աբրահամ 75 տարեկան էր եւ անոր ըսաւ, որ մեծ ազգ մը պիտի ընէր զինք եթէ Աբրահամ հնազանդէր: Աբրահամ հնազանդեցաւ, եւ անոր հնազանդութիւնը հաճելի եղաւ Աստուծոյ այնքան որ Աբրահամ «հաւատքի հայր» կոչուեցաւ (տե՛ս Հռ 4.11-12): Աբրահամի հնազանդութեան իբրեւ պատասխան, Աստուած ուխտ մը կնքեց անոր հետ: Այդ ուխտը կնքելով, Տէրը ըսաւ. «Ստո՛յգ գիտցիր, թէ քու զարմդ իրը չեղող երկրի մը մէջ պանդուխտ պիտի ըլլայ, եւ ստրուկ պիտի ըլլայ: Հոն չորս հարիւր տարի պիտի տառապեցնեն զանոնք [«վատ կերպով պիտի վարուին անոնց հետ», ըստ անգլերէն տարբերակին]» (Ծն 15.13, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Ուրիշ անգլերէն թարգմանութեան մը մէջ (*Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն*) «վատ վարմունք»ին փոխարէն կը գործածուի «պիտի տառապեցնեն» կամ «պիտի վշտացնեն» բառը: Ինչ դժուար կլլելիք պատահ մը: Իբրեւ հայրը որդիներու եւ տղայ եւ աղջիկ թողներու, շատ պիտի չխանդավառուէի զաւակներուս, թողներուս եւ ծոռներուս այդ ձեւի ժառանգութիւն մը ունենալուն լուրը լսելով: Ես ասիկա շինութիւն բերող կամ մխիթարական մարգարէութիւն մը պիտի չկոչէի: Մտածէ այդ մասին պահ մը: Մենք կ'ապրինք նոր հազարամեակի մը առաջին դարուն մէջ: Այդ պատահարները իմ սերունդներուս վրայ պիտի ազդէին մինչեւ Ք.Ե. 2400 թուականը: Ես շատ դիւրութեամբ պիտի փորձուէի մտածել, թէ՛ *Ա՞յս էր խոստումս*

եւ օրհնութիւնս Աստուծոյ հնազանդելուս դիմաց: Աւելի հետաքրքրականը այն է, որ ատիկա կանխագուշակուեցաւ նախքան Իսահակի յղացումը:

Արդեօք Պատճառը Իրենց Վատ Վարմունքն Էր

Ոմանք կրնան այս ձեռով տրամաբանել. «Տէրը այդ մասին ժամանակէն առաջ ըսաւ Աբրահամին, որովհետեւ անոր սերունդները անհնազանդ պիտի ըլլային եւ հետեւաբար Փարաւոնի իշխանութեան տակ պիտի ըլլային՝ իբրեւ պատիժ իրենց վատ վարմունքին: Այսինքն, ատիկա Աստուած չէր ծրագրած իրենց համար»: Հիմա տեսնենք, թէ այդ տրամաբանական բացատրութիւնը ճշգրիտ է կամ ոչ:

Պատասխանելու համար, նախ պէտք է գիտնանք, թէ ինչպէս եղաւ, որ անոնք Փարաւոնի իշխանութեան տակ եղան: Աբրահամի որդին Իսահակ աստուածավախ մարդ մըն էր, որ կ'ապրէր հնազանդութեան եւ սրբութեան կեանք մը: Ինք եւ իր կինը Ռեբեկան ունէին երկու որդիներ. Եսաւ՝ անդրանիկը եւ Յակոբ՝ կրտսերը: Անոնք շատ մը ձեւերով իրարմէ շատ տարբեր մարդիկ էին: Աստուած Իր խորհուրդները յայտնեց նախքան անոնց ծնունդը երբ ըսաւ. «Յակոբը սիրեցի, իսկ Եսաւը ատեցի» (Հռ 9.13):

Հակառակ անոր որ Յակոբ սկիզբը քիչ մը ծուռ սկսաւ, վերջաւորութեան զինք արմատապէս փոխող հանդիպում մը ունեցաւ Աստուծոյ հետ Փանուէլի մէջ (կարդա՛ Մծ 32): Այդ հանդիպումը Աստուծոյ օրհնութեան ուխտը հաստատեց անոր կեանքին մէջ, եւ անոր անունը Յակոբէն փոխուեցաւ Իսրայէլի, որ կը նշանակէ՝ «Աստուծոյ հետ մարտնչող» [«Աստուծոյ Իշխանը», ըստ կարգ մը թարգմանութիւններու]: Ատկէ ետք մեծ նուիրում կը տեսնենք անոր կեանքին մէջ: Ան իր ընտանիքին պատուիրեց, որ հեռանան կռապաշտութենէն

եւ մաքուր մնան Աստուծոյ առջեւ: Իբրեւ արդիւնք, Աստուծոյ ահը ինկաւ անհաւատներուն վրայ մինչ իր ընտանիքը իր ճամբորդութիւնը կը կատարէր (կարդա՛ Օ՛ն 35):

Իսրայէլ հայրն էր տասներկու որդիներու: Տասնմէկերորդը՝ Յովսէփ, ատելի էր իր երէց եղբայրներուն համար, որովհետեւ հայրը իր բոլոր զաւակներէն ատելի կը սիրէր զայն: Աստուած Յովսէփին տուաւ երկու երագներ, որոնք մարգարէութիւններ էին՝ ըսելու համար, որ ան մեծ ղեկավար մը պիտի ըլլար եւ եղբայրները իրեն պիտի ծառայէին: Այդ երագները այնքան նեղացուցին իր եղբայրները, որ անոնք ծրագրեցին ձերբազատիլ իրմէ, եւ այդ ծրագիրը գործադրեցին Յովսէփը իբրեւ ստրուկ ծախելով Եգիպտոս գացող վաճառականներու:

Չափազանց մինակութեան եւ յուսախաբութեան ժամանակներու մէջ իսկ Յովսէփ Եգիպտոսի մէջ հաւատարիմ մնաց Տիրոջ: Փարաւոնի պաշտօնեաներէն մէկուն տասը տարի ծառայելէ ետք, զայն սխալ կերպով ամբաստանեցին իր տիրոջ կինը բռնաբարած ըլլալով: Ան ինքզինք գտաւ բանտը ատելի քան երկու տարի, բայց շարունակեց մնալ հաստատուն եւ հաւատարիմ: Ապա Տէրը գործածեց զինք՝ մեկնաբանելու համար երագները Փարաւոնի երկու ծառաներուն, որոնք եւս բանտարկուած էին: Անոնցմէ մէկը կախաղան հանուեցաւ, իսկ միւսը վերականգնուեցաւ կամ իր գործին վերադարձաւ: Բայց բաւական ժամանակ այդ վերականգնուածը չիշեց Յովսէփը ինչպէս Յովսէփ խնդրած էր իրմէ: Ատով հանդերձ Յովսէփ հաւատարիմ մնաց:

Յետոյ երբ Փարաւոն նեղացուցիչ երագ մը տեսաւ, այդ վերականգնուած ծառան Յովսէփի մասին ըսաւ իրեն: Յովսէփը կանչեցին բանտէն՝ Փարաւոնին երագը մեկնաբանելու համար: Մեկնաբանութիւնը կը զգուշացնէր խիստ սովի մը մասին, որմէ առաջ պիտի ունենային եօթը տարուան առատութիւն: Աստուած Յովսէփին տուաւ իմաստութիւն Փարաւոնին թելադրելու ինչպէս պարէն

ամբարել առատութեան տարիներուն: Փարաւոն այնքան մեծ ահի կամ հիացմունքի մէջ էր Յովսէփի իմաստութեան հանդէպ, որ անմիջապէս Յովսէփը բարձրացուց ըլլալու Եգիպտոսի թիւ երկու մարդը՝ ըլլալով միայն Փարաւոնէն վար:

Իր ձգած երկրին մէջ կար Յովսէփի բարեպաշտ հայրը՝ Իսրայէլը, որ բնաւ տեղեակ չէր պատահածէն: Աստուած այդ մասին բան մը չէր յայտնած անոր: Պահ մը կանգ առ եւ մտածէ այդ մասին: Աստուած Փարաւոնին ցոյց տուաւ աշխարհի վրայ ըլլալիքը, բայց զանիկա պահեց Իր հաւատարիմ ծառայէն՝ Իսրայէլէն: Պատճառը այն է, որ ատիկա պիտի ըլլար այն միջոցը, որով Աբրահամի ամբողջ սերունդը պիտի փոխադրուէր Եգիպտոս: Սովի երկրորդ տարին Աբրահամ իր որդիները Եգիպտոս դրկեց՝ ցորեն գնելու համար: Առանց պարէնի, անոնք պիտի կորսուէին: Եգիպտոսը միակ վայրն էր, ուր կրնային երթալ այդ մէկը ընելու համար, որովհետեւ միայն Եգիպտոս պատրաստուած էր սովին համար եւ զինուած էր Տիրոջ իմաստութեամբ: Աստուած հարստացուց այդ երկիրը՝ իբրեւ արդիւնք Փարաւոնին Իր յայտնածին: Ան կը պատրաստէր Եգիպտոսը ըլլալու աշխարհի ամէնէն հզօր եւ ազդեցիկ երկիրը: Այդ ալ նպատակի՛ մը համար էր:

Երբ Իսրայէլի որդիները հասան Եգիպտոս, անոնք ներկայացան Յովսէփի, բայց չճանչցան զինք: Բնական է: Ո՛վ պիտի պատկերացնէր ստրուկ մը տեսնել գահին վրայ: Յովսէփ, միւս կողմէ, ճանչցաւ զիրենք, եւ նոյնիսկ հաւանաբար կ'ակնկալէր ալ զիրենք, բայց իր ինքնութիւնը գաղտնի պահեց անոնցմէ: Յովսէփ օրինեց զանոնք ձրի ցորենով, բայց ծրագիր մը ըրաւ պահելու իր մէկ եղբայրը, որպէսզի պատճառ ըլլար, որ բոլորը վերադառնային: Երբ իրենց գնած պարէնը վերջ գտաւ, անոնք վերադարձան Իսրայէլի բոլոր որդիներով: Երբ անոնք բոլորը հաւաքուեցան, Յովսէփ ինքզինք յայտնեց անոնց:

Անոր ո՛վ ըլլալը գիտնալէ ետք, եղբայրները սարսափեցան: Յովսէփ այնպիսի դիրքի մը մէջ էր, որ կրնար վրէժ լուծել իրենցմէ՝ իրենց դաւաճանութեան համար: Բայց ասորը փոխարէն ան մխիթարեց զիրենք.

Ես ձեր եղբայրը՝ Յովսէփին եմ, որ Եգիպտոս տարուելու ծախեցիք: Ուստի հիմա մի՛ վշտանաք ու դուք ձեզի դէմ մի՛ բորբոքիք՝ որ զիս հոս ծախեցիք. որովհետեւ *Աստուած ղրկեց զիս* ձեր առջեւէն՝ ձեզ ողջ պահելու համար. արդարեւ ասիկա սովին երկրորդ տարին է երկրի վրայ, եւ տակաւին հինգ տարի կայ՝ որ ո՛չ վարուցան պիտի ըլլայ, ո՛չ ալ հունձք: Աստուած զիս ձեր առջեւէն ղրկեց, որպէսզի երկրի վրայ ձեզի պահեստ դնէ ու մեծ ազատամով ձեզ ողջ պահէ: *Ուրեմն հիմա զիս հոս ղրկողը դ՛րո՞ք չէք, հապա Աստուած է:* (Ծն 45.4-8, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Իր այդ պատասխանէն ետք կրնաս հարց տալ, թէ կրնայ ըլլալ, որ ան այնքան ժամանակ անցուցած էր Եգիպտոսի մէջ, որ իր տեսակէտները փոխուած էին: Թերեւս ան մոռցած էր ցափ, դաւաճանութեան եւ մի՛նակութեան տարիները: Վերջապէս սիրող Աստուած մը ինչպէս կրնար զինք այդքան տառապանքի մէջ դնել: Ինչպէս կրնար Ան արտօնել, որ Իսրայէլի ամէնէն հաւատարիմ եւ հնազանդ որդին ստրկութեան եւ բանտարկութեան դժուարութիւնները տանէր աւելի քան տասներկու տարի երբ ան իրականութեան մէջ անմեղադրելի էր: Երկարաժամկետ տեսանկիւնէն, Աստուած ինչպէս կրնար իր ուխտի ժողովուրդը տանիլ այն երկիրը, ուր վերջաւորութեան աշխարհի ամէնէն անգութ ղեկավարներէն մէկը պիտի իշխէր անոնց վրայ: Արդեօք Յովսէփ իրապէս կը հաւատար, որ Աստուած ոչ միայն արտօնեց ասիկա, այլեւ ծրագրեց:

Յիշեցնեմ, որ ամէն բան երկու վկաներով պէտք է հաստատուի: Տէն սաղմոսողը ինչ գրեց տարիներ ետք.

[Աստուած] Սով բերաւ երկրի վրայ.
Հացին ամբողջ գաւազանը կոտրեց:
Անոնց առջեւէն մարդ մը դրկեց,
Յովսէփը՝ որ իբր ստրուկ ծախուեցաւ:
Անոր ոտքերը կապանքով տառապեցուցին.
Անոր անձը երկաթի մէջ դրուեցաւ
Մինչեւ այն ժամանակը՝ երբ անոր
հաղորդածը իրագործուեցաւ.
Տէրոջ խօսքը փորձարկեց զայն: (Սղ 105.16-19)

Ուրեմն Յովսէփ սխալած չէր իր գնահատումին մէջ: Մօտէն նայինք այս հատուածին: Նախ՝ Աստուած եւ ոչ թէ Չարախօսը կամ պայմանները ծրագրեցին սովը: Երկրորդ՝ ինչպէս Յովսէփ ըսաւ, Աստուած իր ընտանիքին առջեւէն դրկած էր զինք: Երբ «Աստուած դրկեց» նախադասութիւնը կը կարդանք համարին մէջ, կը հասկնանք, որ ուրիշ մէկու մը պատճառով չեղան այդ բոլորը: Յովսէփ ուրացումի մէջ չէր. ան կը խօսէր Աստուծոյ Հոգիով: Երրորդ՝ այդ ամբողջ տառապանքը փորձութիւն մըն էր կամ մաքրագործման գործընթաց մը Յովսէփի համար: Եւ վերջապէս, զայն շղթաներով եւ երկաթներով կապեցին եւ տառապեցուցին: Այն օրերու բանտերը շատ շատ անելի վատ էին քան այսօրուան բանտերը: Բայց Յովսէփ չափազանց բարեպաշտ որդի մըն էր: Արդեօք ատիկա կը նշանակէ, թէ լաւ մարդիկ կրնան կոպիտ վարմունքի ենթարկուիլ իշխանութիւններու կողմէ, եւ թէ ատիկա պատահական կամ Չարախօսին մէկ ծրագիրը չ'ըլլար: Արդեօք ըսել կ'ուզենք, որ այդպիսի պայմանները կրնան իրականութեան մէջ Աստուծոյ ծրագիրը եւ նախախնամութիւնը ըլլալ:

Մեծ Ազատում մը

Շարունակենք պատասխանել այդ կարեւոր հարցումներուն: Անգամ մը եւս կարդանք Յովսէփի խօսքերը:

Յիշեցնեմ, որ ան կը խօսէր աստուածային ներշնչումով. «Աստուած զիս ձեր առջեւէն դրկեց, որպէսզի երկրի վրայ ձեզի պահեստ դնէ ու մեծ ազատումով ձեզ ողջ պահէ: Ուրեմն հիմա զիս հոս դրկողը դ՛րք չէք, հապա Աստուած է» (Ծն 45.7-8):

Մեծ ազատում: Մէկ վայրկեան: Ուրեմն Աբրահամի սերունդներուն անհնազանդութիւնը չէր, որ զիրենք Փարաւոնին իշխանութեան տակ դրաւ, այլ՝ Աստուծոյ ծրագիրը: Այդ բոլորին վրայ, Աստուած սկիզբէն գիտէր, որ Յովսէփի մահուրնէ կարճ ժամանակ ետք ուրիշ Փարաւոն մը պիտի գար իշխանութեան գլուխ եւ Իսրայէլի հետ անգթութեամբ պիտի վարուէր (Ելք 1.8-14): Տարիներ առաջ Աստուած Աբրահամի ըսած էր, թէ ժողովուրդը պիտի տառապէր չորս հարիւր տարի: Ուստի ա՛յդ էր Տիրոջ մեծ ազատումը: Ինչպէս կարելի է ատիկա ազատում կոչել երբ այդքան դժուարութիւններ ունեցան:

Ոմանք կրնան հարց տալ, թէ՛ «Ինչո՞ւ Աստուած Աբրահամի սերունդներուն չտուաւ այն իմաստութիւնը, որուն շնորհիւ իրենք, ո՛չ Եգիպտոսը, պիտի ունենային եօթը տարուայ սովին համար բաւարար պաշար: Այդ պարագային Յովսէփ կրնար խուսափիլ այդ ամբողջ տառապանքէն»: Պատճառը յստակ է. Աստուած կ'ուզէր, որ անոնք Փարաւոնին իշխանութեան տակ ըլլային: Աստուած ծրագրած էր ատիկա: Կրնաս ըսել. «Բայց Փարաւոն հին ժամանակի Հիթէրն էր: Ան հազարաւոր եբրայեցիներ սպաննեց եւ Աստուծոյ ժողովուրդին մեծ դժուարութիւն պատճառեց»: Այո, ճիշդ է, բայց պէտք է յիշենք, որ Աստուծոյ առաջնահերթութիւնը այն չէ, որ մենք այս աշխարհի հանգիստը եւ վայելքները ունենանք կամ վայելենք: Անոր առաջնահերթութիւնը փրկութիւնն է: Մտիկ ըրէ Աստուծոյ իմաստութեան երբ Ան խօսեցաւ Փարաւոնին. «Քեզ նշանակեցի, որպէսզի իմ կարողութիւնս քեզմով ցոյց տամ, եւ ամբողջ երկրի վրայ իմ անունս հռչակուի» (Ելք 9.16):

Այդ դէպքերէն առաջ միակ անձերը, որոնք Տէր Աստուածը գիտէին Աբրահամը, Իսահակը, Յակոբը եւ իրենց սերունդներն էին: Մնացեալ աշխարհը չէր գիտեր Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը: Ատոր համար երբ Մովսէս մօտեցաւ Փարաւոնին եւ Տիրոջ անունով հրամայեց անոր, որ ազատ արձակէ Իսրայէլը, Փարաւոն պատասխանեց. «Եհովան հմ է, որ անոր խօսքը մտիկ ընելով՝ Իսրայէլը արձակեմ: Եհովան չեմ ճանչնար, եւ Իսրայէլն ալ չեմ արձակեր» (Ելք 5.2): Փարաւոն եւ ամբողջ Եգիպտոսը չէին ճանչնար զԱստուած: Սակայն երբ Աստուած Իր նշանները ըրաւ՝ Իր ժողովուրդը ազատագրելու համար, ասիկա փոխուեցաւ:

Քանի մը պատուհաս ետք կարգ մը եգիպտացիներ մտիկ ըրին Աստուծոյ խօսքին: Նախքան կարկուտին գալը, կը կարդանք. «Փարաւոնին ծառաներէն ան որ՝ Տէրոջ խօսքէն կը վախնար, իր ծառաներն ու խաշինքը տուներու մէջ հաւաքեց» (Ելք 9.20): Շուտով անոնք սկսան Փարաւոնին աղաչել, ըսելով. «Մինչեւ ե՛րբ այս մարդը մեզի որոգայթ պիտի ըլլայ, արձակէ՛ մարդիկը, որ իրենց Աստուածը՝ Եհովան պաշտեն» (Ելք 10.7): Նոյնիսկ Եգիպտոսի մոգերը իրենց թագաւորին ըսին. «Ասիկա Աստուծոյ մատն է» (Ելք 8.19):

Եհովայի մասին անոնց նոր գիտութեան ապացոյցը յստակօրէն կը տեսնենք երբ կը կարդանք. «Մովսէս ալ յոյժ մեծ մարդ մըն էր Եգիպտոսի երկրին մէջ՝ Փարաւոնի ծառաներուն առջեւ եւ ժողովուրդին առջեւ» (Ելք 11.3): Անոնք խորապէս կը յարգէին Աստուծոյ մարդը, որովհետեւ անոնք այդ ատեն գիտցան, թէ հմ էր Տէրը: Նաեւ կը կարդանք, որ Աբրահամի սերունդներուն տրուեցաւ այն ինչ որ խնդրեցին Եգիպտոսի ժողովուրդէն, ինչպէս՝ արծաթ իրեր, ոսկի իրեր եւ հանդերձներ (տես Ելք 12.35-36): Նոյնիսկ Փարաւոն վերջ ի վերջոյ ըսաւ. «Եհովան արդար է, ու ես եւ իմ ժողովուրդս յանցաւոր ենք» (Ելք 9.27): Վերջաւորութեան Եգիպտոսի ամբողջ ժողովուրդը գիտցաւ, թէ հմ էր կենդանի Աստուածը:

Ամբողջ Երկիրը Ճանչցաւ

Ոչ միայն Եգիպտոս, այլև ամբողջ երկիրը ճանչցաւ Եհովան իբրեւ ճշմարիտ եւ կենդանի Աստուածը: Այդ գիտութիւնը ուղղակի արդիւնքն էր Անոր աշխարհի ամէնէն հզօր երկիրը խոնարհեցնելուն: Աստուած այդ ժողովուրդին իմաստութիւն տուաւ Յովսէփի միջոցաւ, ինչ որ զանոնք դարձուց աշխարհի ամէնէն հզօր երկիրը, որ հետագային պարտութեան մատնուեցաւ իսրայէլացի ստրուկներուն կողմէ: Այդ պարտութիւնը շատ անլի խորունկ ազդեցութիւն ունեցաւ դիտող աշխարհին վրայ քան եթէ ստրուկներ պարտութեան մատնած ըլլային աղքատ եւ տկար կամ նոյնիսկ միջակ ազգ մը կամ երկիր մը: Աստուած այնպիսի տպաւորութիւն մը ձգեց ամբողջ աշխարհի վրայ, որ անապատին մէջ Իսրայէլի թափառումներէն տարիներ ետք ազգերուն վրայ տակաւին Աստուծոյ վախը կար եւ կը դողային Իսրայէլի դիմաց:

Այդ ազդեցութիւնները կ'երեւէին ամբողջ սերունդ մը ետք: Յետո՛ւ Մովսէսի յաջորդը, երկու լրտեսներ դրկեց՝ Երիքովի հզօր երկիրը լրտեսելու համար: Այդ մարդոց դիմացը ելաւ Ռախաբ պոռնիկը, որ իրենց ըսաւ.

Ես գիտեմ, թէ Տէրը այս երկիրը ձեզի տուաւ. ձեր աիը մեր վրայ ինկաւ, ու ձեր պատճառով այս երկրին *բոլոր բնակիչները* հալեցան: Արդարեւ մենք լսեցինք, թէ ինչպէս Տէրը Կարմիր ծովուն ջուրերը ձեր առջեւէն ցամքեցուց, երբ Եգիպտոսէն ելաք [...] Ուստի երբ այս բաները լսեցինք՝ մեր սիրտը հալեցաւ, ու ո՛չ մէկուն վրայ համարձակութիւն մնաց ձեր պատճառով, *քանի որ ձեր Աստուածը՝ Եհովան միայն ինք Աստուած է, վերը՝ երկինքի մէջ, եւ վարը՝ երկրի վրայ:* (Յես 2.9-11, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ռախաբ հոչակեց Տիրոջ Աստուած ըլլալը եւ թէ՛ երկրին

բոլոր բնակիչները հալեցան: Տիրոջ անունը լսուած էր ամբողջ երկրի տարածքին:

Այդ գիտութիւնը միայն Իր փառքին համար չէր, այլեւ փրկութեան համար: Առաջին պտուղները մէջտեղ եկան երբ այդ օտարական պոռնիկը եւ անոր ամբողջ տունը փրկուեցան: Աւելի նշանակալիցը այն է, որ Ռախաբ Դաւիթ Թագաւորի մեծմօր մեծմայրերէն մէկը եղաւ եւ հետեւաբար նաեւ մտաւ Յիսուս Քրիստոսի ազգաբանութեան մէջ: Ատիկա պիտի չպատահէր եթէ Աստուած Իր անունը ամբողջ երկրի տարածքին հոչակած չըլլար Փարաւոնը խոնարհեցնելով. այն մարդը, զոր բարձրացուց՝ Իր ժողովուրդին վրայ իշխելու համար:

Եգիպտոսէն ելլելէն քանի մը հարիւր տարի ետք, տակաւին Աստուծոյ վախին ապացոյցը կար ազգերուն մէջ: Հեղիի օրերուն՝ որ քահանայ եւ դատաւոր էր Իսրայէլի վրայ, դարձեալ Աստուծոյ անունը յիշուեցաւ՝ Անոր Փարաւոնին ըրածին պատճառով: Իսրայէլ ճակատամարտի մէջ էր փղշտացիներուն հետ եւ կորուստ կրեց առաջին օրը: Յաջորդ օրը իսրայէլացիները Ուխտի Տապանակը բերին բանակատեղի: Անոնք հաւաքուեցան, եւ «ամբողջ Իսրայէլը մեծ գոչիւնով գոռաց, այնպէս որ գետինը դրդաց» (Ա.Թգ 4.5): Փղշտացիները լսեցին աղմուկը եւ իրենք իրենց մէջ հարց տուին, թէ ինչ կրնար նշանակել ատիկա: Յետոյ հասկցան, որ Տիրոջ տապանակը բերուած էր իսրայէլացիներու բանակատեղին: Նկատի առ անոնց կեցուածքը.

Փղշտացիները վախցան, որովհետեւ ըսին. «Աստուած [Երբայերէնով՝ *էլոհիմ*] բանակավայրը եկաւ»: Նաեւ ըսին «Վայ մեզի, քանի որ ասկէ առաջ այսպիսի բան եղած չէ: Վայ մեզի, ի՞նչ մեզ պիտի ազատէ այս զօրաւոր աստուածներուն [էլոհիմ] ձեռքէն: Ասոնք են այն աստուածները [էլոհիմ], որ Եգիպտոսը ամէն տեսակ պատուհասներով զարկին՝ անապատին մէջ»: (Ա.Թգ 4.7-8)

Աստուածներ բառին համար բնագիրի երբայերէնին մէջ գործածուած բառը *էլոհիմ* է: Այդ բառը ասելի քան 2000 անգամ գործածուած է Հին Կտակարանին մէջ՝ մեր ծառայած Տէր Աստուծոյն իբրեւ անուն: Անիկա 32 անգամ նշուած է Ծնունդներու Գիրքի առաջին գլուխին մէջ՝ ակնարկելով մեր Աստուծոյն եւ Ստեղծիչին: Հետեւաբար անիկա ճշգրտօրէն պիտի թարգմանուէր իբրեւ «Աստուած» եւ ոչ «աստուածներ»: Նոյնիսկ փղշտացիները կը դողային հարիւրաւոր տարիներ ետք. հակառակ անոր որ Անոր չէին ծառայեր, գիտէին, թէ ո՞վ էր ճշմարիտ եւ կենդանի Աստուածը:

Աստուծոյ Իմաստութեան Խորունկութիւնը

Աստուած անակնկալի չեկաւ երբ չար ղեկավար Փարաւոնը կ'իշխէր, «Որովհետեւ չկայ իշխանութիւն մը՝ որ Աստուծմէ չըլլայ, եւ անոնք որ կան՝ կարգուած են Աստուծմէ» (Հո 13.1): Տարիներու ընթացքին ամէն ղեկավար, որ օրինական իշխանութիւն ունեցած է, բարի կամ դաժան, նշանակուած եղած է Աստուծոյ կողմէ: Ան կարգուած եղած է որոշակի պատճառի մը համար, եւ ոչ երբեք պատահականօրէն:

Հիմա կրնաք հարց տալ, թէ՛ «Ի՞նչ բարի բան ելաւ Ստալինի կամ Հիթլերի նման ղեկավարներէ»: Պատասխանելու համար, կ'ուզեմ մէջբերում մը ընել Պօղոս Առաքեալէն.

Ուրեմն կ'ողորմի որոնն որ ուզէ, եւ կը խստացնէ
զայն որ ուզէ [...]

«Ո՛վ Աստուծոյ ճոխութեան, իմաստութեան ու
գիտութեան խորութիւնը.

Ինչպէս անքննելի են իր դատաստանները,

Եւ անզննելի՝ իր ճամբաները:

Որովհետեւ ո՞վ գիտցաւ Տէրոջ միտքը,

Կամ ո՞վ անոր խորհրդատու եղաւ: (Հո 9.18, 11.33-34)

Ան կրնայ ընել բաներ, որոնք անզննելի են մեզի համար: Մենք պետք է ընդունինք երբ Աստուած անյարմար կը նկատէ բաներ մեզի յայտնելը:

Ուրիշ տեղ մըն եւս Պօղոս Աստուծոյ իմաստութեան մասին կը խօսի եւ հարցումներ կը հարցնէ. «Բայց դուն ո՞վ ես, ո՞վ մարդ, որ կը դիմադարձես Աստուծոյ: Միթէ կերտուածը կրնայ ըսել զինք կերտողին. «Ինչո՞ւ անյայտ շինեցիր զիս»» (Հռ 9.20): Մտիկ ըրէ ինչ կ'ըսէ. «Դուն ո՞վ ես»: Այլ խօսքով, արդեօք մենք զԱստուած հարցաքննելու դիրքին մէջն ենք:

Աստուած Փարաւոնը բարձրացնելու ետին գտնուող Իր պատճառները մեզի ցոյց տուա՛ւ՝ մեզի տալու համար ձեւ մը ինչպէս նաեւ խորաթափանցութիւն եւ հասկացողութիւն, որպէսզի կարենանք վստահիլ Իր իմաստութեան եւ բարութեան: Սակայն Ան այդ բոլորը միշտ ցոյց չի տար մեզի ամէն ղեկավարի պարագային: Ան կ'ուզէ, որ վստահինք Իր իմաստութեան եւ բարութեան:

Իր իմաստութեան մէջ, Ան բնաւ տառապանք չ'արտօներ առանց նպատակի: Ան միշտ կը ծրագրէ, որ տառապանքը ծառայէ Իր փրկագործական նպատակներուն, նոյնիսկ երբ մենք անկարող ենք տեսնելու Իր նպատակները այդ պահուն կամ ժամանակին: Սակայն երկարաժամկետ եւ յաւիտենական տեսակետը կը յայտնաբերէ զանոնք: Իր բարութեան մէջ, Ան բնաւ չ'արտօներ, որ որեւէ վնաս հասնի մեզի՝ յաւիտենական դիտակետէն: Կրնաս ըսել՝ «Բայց շատ մեծ վնաս հասած է մարդոց փտած ղեկավարներու ձեռքով»: Ատիկա ճիշդ է ֆիզիքական առումով, սակայն Աստուած հոգեւորը ֆիզիքականէն աւելի բարձր կը դասէ: Աբէլի մահը թուեցաւ պարապի ըլլալ, բայց անոր արիւնը տակաւին կը խօսի (տե՛ս Եբր 11.4): Հազարաւոր Քրիստոնեաներ մահուան դատապարտուեցան փտած ղեկավարներու կողմէ Հաւատաքննութիւններու ժամանակ եւ անոնցմէ առաջ եւ ետք տեղի ունեցած հալածանքներուն ընթացքին, եւ սակայն

անոնց արիւնը պարապի չթափուեցաւ: Անոնց արիւնը տակաւին կը խօսի:

Մենք ունինք մեր խոնարհութեամբ, հնազանդութեամբ եւ աղօթքներով ղեկավարներուն վրայ ազդելու առիթներ: Երբ Աստուծոյ ժողովուրդը խոնարհի, աղօթէ, Աստուծոյ երեսը խնդրէ եւ հեռանայ իր չար ճամբաներէն, Աստուած պիտի լսէ զիրենք երկինքէն, պիտի ներէ իրենց մեղքը եւ բուժէ իրենց երկիրը: Ատոր մէկ օրինակն է բարեպաշտ ղեկավարներու նշանակումը, ինչպէս կը տեսնենք Դատաւորներուն Գիրքին մէջ: Նոր Կտակարանը կը թելադրէ. «Արդ, ամէն բանէ առաջ կը խնդրեմ, որ աղօթէք, խնդրանք, պաղատանք եւ գոհութիւն մատուցանէք բոլոր մարդոց համար, մանաւանդ թագաւորներուն եւ իշխանութեան գլուխ գտնուող բոլոր մարդոց համար, որպէսզի խաղաղ ու հանդարտ կեանք մը վարենք՝ կատարեալ աստուածպաշտութեամբ եւ պարկեշտութեամբ. որովհետեւ այդ է բարին եւ այդ կը փափաքի Աստուած, մեր Փրկիչը» (Ա.Տմ 2.1-3):

Գոյութիւն ունեցող ղեկավարութիւնը կ'ազդուի մեր աղօթքներէն: Ատոր ազդեցութիւնները կրնան ըլլալ մինչեւ ղեկավարներու նշանակումը եւ ընտրութիւնը: Սակայն այդ բոլորով հանդերձ կրնան բացառութիւններ գոյութիւն ունենալ: Առաջին Դարու Եկեղեցւոյ առաքեալները եւ սուրբերը յաճախ հանդիպեցան դաժան եւ անգութ իշխանութիւններու, որոնք հալածեցին զիրենք: Անոնք չտառապեցան իրենց անբարեպաշտ կենցաղին կամ աղօթքի կեանք չունենալնուն պատճառով, այլ՝ այդ ղեկավարները դեր խաղցան Աստուծոյ փրկարար նպատակներուն մէջ:

Հերովդէս Ագրիպաս Ա.

Տեսնենք այդ ղեկավարներէն մէկը՝ Հերովդէս Ագրիպաս Ա.ը: Հերովդէս անունը կը գործածուէր հռոմայեցի շարք

մը կառավարիչներու համար Պաղեստինի շրջանին մէջ նախքան Յիսուսի ծնունդը, Անոր երկրաւոր առաքելութեան նախօրեակին եւ Յիսուսի յարութենէն ետք: Հերովդէս Ագրիպպաս Ա. իշխանութեան գլուխ եկաւ Ք.Ե. 37 թուականին, Յիսուսի յարութենէն ետք: Ան ատիկա ըրաւ ճարպիկութեամբ եւ իր լաւ կենցաղագիտութեամբ: Իր հեռատեսութեամբ, ան մշակեց ամէն միջոց, որ կրնար յառաջ բերել իր պաշտօնի բարձրացումը: Անոր գլխաւոր քաղաքական խորամանկութիւնը եղաւ այն, որ Հռոմի Կալիգուլա Կայսեր սպանութենէն ետք օգնեց Կլաւդիոսի, որ իշխանութեան գլուխ գայ: Կլաւդիոս վարձատրեց Ագրիպպասի խորամանկ քաղաքական քայլը եւ զայն հաստատեց իր այդ դիրքին մէջ ինչպէս նաեւ Յուդան եւ Սամարիան աւելցուց անոր իշխանութեան տարածքին: Այդպիսով Հերովդէս դարձաւ կառավարիչը թագաւորութեան մը, որ նոյնքան մեծ էր որքան իր մեծիօրը՝ Մեծն Հերովդէսի թագաւորութիւնն էր:

Իր իշխանութեան օրերուն Հերովդէս Ագրիպպաս Ա. ստիպուած եղաւ կողմ բռնելու հրէութեան եւ Քրիստոնէայ աղանդին միջեւ գոյութիւն ունեցող պայքարին մէջ: Առանց վարանելու, ան Քրիստոնէաներու դառն հալածողի դերը ստանձնեց: Առաքեալներու Գործերը գիրքին մէջ կը կարդանք. «Այն օրերուն Հերովդէս [Ագրիպպաս Ա.] թագաւոր սկսաւ հալածանք հանել եկեղեցւոյ անդամներէն ոմանց դէմ: Նախ սուրով սպաննել տուաւ Յակոբոսը, Յովհաննէսի եղբայրը: Ապա տեսնելով որ ատիկա հրեաներուն հաճելի է, Պետրոսն ալ ձերբակալել տուաւ Բաղարջակերաց տօնի օրերուն» (Գրծ 12.1-3): Այդ կառավարիչը դաժան էր հաւատացեալներուն հանդէպ, որովհետեւ ատիկա կը ծառայէր իր քաղաքական նպատակներուն եւ շնորհք գտնել կու տար իրեն հրեաներուն մօտ (որոնք իր իշխանութեան տարածքի քաղաքացիներուն մեծամասնութիւնն էին): Ան սպաննել տուած էր Յակոբոսը՝ Յիսուսի երեք ամենամօտիկ առաքեալներէն մէկը, եւ կը

մտադրէր սպաննել տալ նաեւ Պետրոսը:

Պէտք է հարց տանք. «Ո՛րկէ կու գար Ագրիպպասի իշխանութիւնը»: Նոյնիսկ որ այնպէս կը թուէր որ անոր ճարպիկութիւնները իրեն իշխանութեան կը հասցնէին, ան իր իշխանութեան դիրքին չհասաւ առանց Աստուծոյ գիտութեան եւ Անոր կողմէ նշանակուելու:

Պետրոս՝ որ չարչարուած էր Ագրիպպասի ձեռքով, հաւատացեալներուն ըսաւ. «Աստուծմէ վախցէք. թագաւորը պատուեցէք» (Ա.Պոտ 2.17): Ինչ: Պատուեցէք թագաւորը, որ սպաննել տուած էր Յակոբբոսը: Աստուած ինչո՞ւ այդպիսի դաժան ղեկավար մը դրաւ երկրի մը վրայ, ուր Իր զաւակներէն շատերը կը բնակէին եւ ապա ըսաւ իրենց, որ «պատուեն զայն»: Մեր պատասխանին մէկ մասը կը գտնուի հետեւեալ համարին մէջ. «Մինչ Պետրոս բանտարկուած կը մնար, եկեղեցին անդադար Աստուծոյ կ'աղօթէր իրեն համար» (Գրծ 12.5): Իբրեւ արդիւնք, Աստուած հրեշտակ մը ղրկեց, որ հրաշալիօրէն ազատագրեց Պետրոսը բանտէն՝ զայն տանելով աղօթքի համար հաւաքուած տան մը ապահովութեանը մէջ: Եթէ հաւատացեալները չպատուէին թագաւորը, այլ՝ ըմբոստանային Աստուծոյ պատուիրանին դէմ, որ կը վերաբերի յանձնարարուած իշխանութեան, անոնք պիտի չտեսնէին Աստուծոյ հրաշալի միջամտութիւնը:

Պետրոսը մահապատիժի ենթարկելու Ագրիպպասի ծրագիրները խափանուեցան եկեղեցիին աղօթքներով եւ հնազանդութեամբ: Այդ դէպքը նշանակալից կերպով զօրացուց հաւատացեալները: Ինչպէս Փարաւոնին պարագային ըրած էր, Աստուած դարձեալ Իր զօրութիւնը ցուցադրեց փրկչական նպատակներով: Ատոր մեծագոյն վկայութիւնը կը գտնուի ինքնին Սուրբ Գիրքին մէջ. «Իսկ Աստուծոյ խօսքը կը տարածուէր եւ հաւատացեալներուն թիւը կը բազմանար» (Գրծ 12.24):

Սուրբերուն մնայուն աղօթքները եւ իշխանութիւնները պատուելու մէջ անոնց հնազանդութիւնը աւելի մեծ ազդեցութիւն ունէին դէպքերու ընթացքին վրայ: Մինչ կը շարունակենք կարդալ, կը տեսնենք, որ Հերովդէս Ագրիպպաս Ա. նշանակեց օր մը, որուն ընթացքին ժողովուրդին առջեւ ելաւ, գահին նստաւ արքայական տարազով եւ իր խօսքը ուղղեց ժողովուրդին: «Ամբոխը կ'աղաղակէր, ըսելով. “Մարդ մը չէ՛ խօսողը, այլ՝ Աստուած: Տեղնուտեղը Տիրոջ հրեշտակը հարուածեց զայն, քանի որ փառքը Աստուծոյ չվերագրեց: Որդնալից եղաւ եւ այդպէս շունչը փչեց”» (Գրծ 12.22-23):

Դատաստան եկաւ, բայց ատիկա եղաւ Տիրոջ սուրով եւ ոչ թէ Աստուծոյ ժողովուրդին կողմէ: Շուտով պիտի տեսնենք, որ Աստուած է Ան, որ դատաստան կը բերէ իշխանութիւններու վրայ: Մեզի պատուէր տրուած է աղօթել ղեկավարութեան մէջ եղողներուն համար ու պատուել անոնց իշխանութիւնը եւ ենթարկուիլ անոր: Եթէ պէտք ըլլայ դատաստանի, Աստուած կ'ըսէ, թէ մենք պէտք է առիթ տանք անոր:

Այս գլուխին մէջ գրածներս կը հաստատուին նաեւ ուրիշ աստուածաշնչական դէպքերով, եւ սակայն անոնք հակասական կը նկատուին եկեղեցիին մէջ շատերու ուսուցանածներուն կամ անոնց ըմբռնածներուն: Անոնք՝ որոնց համար իրենց հանգիստը աւելի վեր է քան փրկութեան ընթացքը, կոյր կ'ըլլան այդ մարզին մէջ Աստուծոյ աշխատանքներուն: Մեր սիրտը պէտք է բաց պահենք Աստուծոյ իմաստութեան դիմաց: Յիշէ, որ Ան մեր կողմն է եւ ոչ մեզի դէմ:

ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՊԱՏՈՒՔ ԹԱԳԱԽՈՐԸ

Պէտք է սորվինք պատուել՝ մեծարել, յարգել, իշխանութեան վրայ եղողներուն հանդէպ վարուիլ ենթարկուածութեամբ եւ հնազանդութեամբ, ինչպէս նաեւ կատարել անոնց հանդէպ մեր պարտականութիւնները:

Նախորդ գլուխին մէջ հակիրճ կերպով նշուած վճռական յորդոր մը Պետրոս Առաքեալի կողմէ պէտք ունի լուրջ ուշադրութեան, յատկապէս մեր օրուան եւ ժամանակին մէջ: Նախքան որ առանձնացնենք այդ համարը, եկէք քննենք անիկա իրմէ առաջ եկող համարներուն հետ. «Սիրելի բարեկամներ, դուք պանդուխտներ եւ օտարականներ էք այս երկրի վրայ: Ուստի կ'աղաչեմ, որ տեղի չտաք այն ցանկութիւններուն, որոնք ձեզի դէմ կը պայքարին: Միշտ այնպէս ըրէք, որ մարդիկ տեսնեն ձեր պատշաճ վարմունքը, հակառակ անոր որ անոնք կրնան տակաւին ամբաստանել

ձեզ սխալ ընելով» (Ա.Պտ 2.11-12)¹⁷: Մենք շուտով պիտի յայտնաբերենք, որ իշխանության ենթարկուիլը այն պատշաճ վարմունքն է, որուն մասին կը խօսի ան: Այն պայքարը, զոր կը նշէ իշխանության չհնազանդելու ըմբոստ ցանկության եւ հնազանդության միջեւ եղող պայքարն է: Սակայն շատ յաճախ մենք հակառակը կը մտածենք. չհնազանդելու ցանկութիւնը կը համարենք մեր դաշնակիցը, իսկ ենթարկուիլը՝ մեր թշնամին: Բայց այդ ըմբռնումը շատ հեռու է ճշմարտութենէն:

Պէտք չէ մոռնանք Պետրոսի գրածը, որովհետեւ նոյնիսկ երբ մենք ենթարկուինք եւ հնազանդինք, տակալին կրնանք ամբաստանուիլ «սխալ ընելով»: Լսած եմ մարդիկ ինչպէս կը պատճառաբանեն, թէ՛ «Ինչ օգուտ ունի: Ես կ'ենթարկուիմ, բայց տակալին կը մեղադրուիմ բաներու համար, որոնք սխալ չեմ ըրած»: Անոնք չեն տեսներ այն իրականութիւնը, որ իրենց հնազանդութիւնը Տիրոջ հանդէպ է եւ իրենց վարձատրութիւնը կու գայ Անկէ: Աստուածաշունչի անգլերէն *Տը Մասէճ* (MSG) տարբերակը շատ գեղեցիկ կերպով կը ներկայացնէ այդ կէտը.

Ծառայողներ [պաշտօնեաներ, եկեղեցւոյ անդամներ, քաղաքացիներ եւայլն] յարգալից կերպով հնազանդեցէք ձեր երկրաւոր տէրերուն [գործատէրեր, եկեղեցւոյ ղեկավարներ, քաղաքային իշխանութիւններ եւայլն], բայց միշտ ունենալով իրական Տիրոջ՝ Քրիստոսի հնազանդելու կեդրոնացումը: Մի՛ ընէք միայն այն ինչ որ բաւարար է, այլ՝ ամբողջ սիրտով աշխատեցէք՝ իբրեւ Քրիստոսի ծառաներ՝ ընելով այն ինչ որ Աստուած կ'ուզէ, որ ընէք: Եւ աշխատեցէք ձեր դէմքին վրայ ժպիտ ունենալով՝ միշտ ի մտի ունենալով, որ ո՛վ որ ալ է հրահանգները տուողը

17 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Քննթեմփորրորի Ինկլիշ Վըրժըն* (CEV) տարբերակէն

իրականութեան մէջ կը ծառայէք Աստուծոյ: Լաւ գործի համար լաւ վճարում պիտի ստանաք Տիրոջմէ, անկախ անկէ, որ ստրուկ էք կամ ազատ: (Եփ 6.5-8)¹⁸

Վերադառնալով Պետրոսի յորդորին՝ «Տիրոջ սիրոյն ենթարկուեցէք [հնազանդեցէք] անոնց, որոնք իշխանութիւն ունին այս աշխարհի վրայ. թագաւորին՝ որ բարձրագոյն իշխանութիւնն է, եւ ղեկավարներուն՝ որոնք ղրկուած են իր կողմէ» (Ա.Պտ 2.13-14)¹⁹: Սուրբ Հոգին կը յորդորէ մեզ Պետրոսի միջոցաւ, ճիշդ ինչպէս ըրաւ Պողոսի միջոցաւ, որ հնազանդինք բոլոր կառավարական իշխանութիւններուն: Միտքդ ունեցիր, որ այն թագաւորը, որուն կ'ակնարկէ ան շատ դաժան թագաւոր մըն էր, եւ հաւատացեալները դառն տառապանք կրեցին անոր իշխանութեան օրերուն: Պողոսի պէս Պետրոս ալ յորդորեց մեզ, որ ճանչնանք մարդուն տրուած Աստուծոյ իշխանութիւնը եւ ոչ թէ ինքնին մարդը: Ան երբեք պիտի չկարենար ենթարկուիլ Հերովդէս Ագրիպպաս Ա. մարդուն եթէ հասկցած եւ ճանչցած չըլլար Աստուծոյ իշխանութիւնը թագաւորի մը դիրքին մէջ: Դժուար է ենթարկուիլ յանձնարարուած իշխանութեան եթէ տակաւին Աստուծոյ իշխանութեան հետ հանդիպում չենք ունեցած: Որքան շատ կը փորձենք հնազանդիլ, այդքան դժուար կը դառնայ անիկա եթէ չկարենանք տեսնել ճշմարիտ իշխանութիւնը:

Պետրոս զգուշացուց մեզ, որովհետեւ գիտէր, որ անհնազանդութիւնը իրականութեան մէջ առջեւ կը տանի հակա-Քրիստոսի կամ հակա-Քրիստոնէութեան հոգիները: Որովհետեւ այդ ոյժը դէմ կը դնէ եւ կը հակառակի աստուած կոչուած որեւէ բանի (տես Բ.Թս 2.4), ներառեալ՝ ճշմարիտ, կենդանի Աստուծոյ ճամբաներուն, ձեւերուն, գործունէութիւններուն եւ նշանակումներուն: Մենք՝

18 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Մասէճ* (MSG) տարբերակէն

19 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Քոնյթեմփորըրի Ինկլիշ Վըրժըն* (CEV) տարբերակէն

հաւատացեալներս, պէտք է մենք մեզի հարց տանք, թէ՛ «Արդեօք մենք կ'օգնենք անօրէնութեան գործունէութեան կամ կը զսպենք կամ կ'արգիլենք զանիկա»: Եթէ կ'օգնենք անոր, գործած կ'ըլլանք Սատանայի (ըմբոստութեան) սկզբունքներուն համաձայն, ոչ Աստուծոյ:

Պետրոս շարունակեց. «Եղբայրները սիրեցէք. Աստուծմէ վախցէք. թագաւորը պատուեցէք» (Ա.Պտ 2.17): Ան ոչ միայն յորդորեց մեզ, որ ենթարկուինք, այլեւ պատուենք իշխանութիւնները: «Պատուել» բառին յունարէնը *թիմաւօ*-ն է, որ կը նշանակէ՝ «պատուել, ունենալ պատիւով, ակնածիլ, մեծարել»: Հոս գործածուած բառը նոյն բառն է, որ Յիսուս գործածեց երբ ըսաւ. «Ես Հայրս է, որ կը պատուեմ» (Յի 8.49): Ուեպօթըրի Բառարանը (1828-ի տարբերակը) *պատուել* բառը կը սահմանէ իբրեւ՝ «ակնածիլ, յարգել. վարուիլ յարգանքով եւ հնազանդութեամբ, եւ պարտականութիւններ կատարել մէկու մը հանդէպ»: Կրկնեմ. այն թագաւորը, որուն մասին Պետրոս կը խօսէր դառնօրէն կը հալածէր իր օրուայ հաւատացեալները: Անկարելի է, որ անոր ակնարկութիւնը ըլլար թագաւորին անձին. ան կը յորդորէ մեզ, որ զայն պատուենք իբրեւ Աստուծոյ կողմէ նշանակուած իշխանութիւն:

Սրտաճմլիկ Հարցազրոյց

Քանի մը տարի առաջ Հարաւի մէջ մեծ քաղաքի մը Քրիստոնէական հանրաժանօթ ձայնասփիւռի կայանի մը վրայ ուղիղ եթերով սփռուող հարցազրոյց մը տուի հեռաձայնի վրայ: Կը խօսէինք գիրքերէս մէկուն մասին: Հարցազրոյցը սկսելէն տասը վայրկեան ետք հաղորդավարը դադար մը առաւ: Այդ միջոցին լսեցի ծանուցումներ եւ յայտարարութիւններ արեւի ցած ձայնով, քանի որ ուղիղ եթերի վրայ չէի դադարի ատեն:

Յանկարծ ուշադրութիւնս գրաւեց ձայնը տղամարդու մը, որ կլիմային մասին տեղեկութիւն կու տար: Ան իր հարիւր հազարաւոր ունկնդիրներուն կ'ըսէր, թէ ինչպէս

այնքան պաղ էր տուեալ հիւսիսային նահանգի մը կլիման, որ նահանգապետին շրթունքները սառեր էին: Ան տուաւ նահանգապետին անունը եւ ըսաւ, որ անոր շրթունքները այնքան սառած էին, որ ան չէր կրնար իր բերանը բանալ եւ ըսել ապուշ բան մը, ինչպէս սովորաբար կ'ընէր:

Ես ցնցուած էի: Չէի հաւատար ականջիս լսածներուն: Խորհուրդներ սկսան ինձի գալ. *Ասիկա Քրիստոնէական կայան մըն է: Վստահաբար՝ ոչ: Յետոյ մտածեցի. Եթէ ասիկա Քրիստոնէական կայան մըն է, թերեւս այդ կլիմայի լուրերը իրենց եկած էին Աստիէթըր ֓ Փրէսի մէկ աղբիւրէն: Չէի կրնար ձերբազատիլ լսածիս իմ վրաս ունեցած ազդեցութենէն մինչեւ որ հաղորդավարը վերադարձաւ մեր հեռաձայնային յայտագիրին:*

Դարձեալ ուղիղ եթեր ելած էինք եւ ան հարցուց անստոյգ հարցում մը, որուն պատասխանեցի, թէ հրքան կարետր էր Աստուծոյ սիրտը ունենալը մեր բոլոր ըրածներուն մէջ: Միտքս տակաւին խանգարուած կամ անհանգիստ էր լսածներու պատճառով, եւ ըսի. «Ատոր մէկ լաւ օրինակը պիտի ըլլար այն ինչ որ լսեցի մեր դադարի ժամանակ»: Եւ ապա հարցուցի. «Ասիկա Քրիստոնէական կայան մըն է»:

Հաղորդավարը պատասխանեց. «Այո»:

«Թերեւս քիչ առաջ լսածս ձեզի հասած էր աշխարհիկ աղբիւրէ մը, որովհետեւ քանի մը վայրկեան առաջ ըսուածները Աստուծոյ սիրտը ունեցող մէկու մը խօսքերը չէին»:

Ան հարցուց. «Ինչ բանի կ'ականարկես»:

Պատասխանեցի. «Այն յայտարարութեան թէ՛ նահանգապետին բերանը սառած էր եւ գոցուած»:

Հարցազրոյց վարողին ձայնը փոխուեցաւ եւ նեղացած ոճով մը ըսաւ. «Այդ յայտարարութիւնը ընողը ես էի»:

Ըսի. «Աստուածաշունչը կ'ըսէ, թէ պէտք է վախճանք Աստուծմէ եւ պատուենք թագաւորը կամ իշխանութեան վրայ եղողները»:

Ան աւելի հաստատ ձայնով պատասխանեց. «Այո, բայց սխալ բան չկայ քիչ մը զուարթամտութեան մէջ»:

Արագօրէն աւելցուցի. «Բայց ոչ թէ անպատուելով այն ինչ որ Աստուած կ'ըսէ, որ պատուենք: Պօղոս Առաքեալ ըսաւ. “Քու ժողովուրդիդ առաջնորդին դէմ չարախօսութիւն մի' ընէր” (Գրծ 23.5)»:

Ան հարցազրոյցը ամարտեց որոշուած ժամանակէն առաջ եւ եզրակացուց ըսելով՝ «Ուրեմն ճոնը եւ ես համաձայն չենք ամէն բանի մէջ»:

Հեռաձայնը գոցեցի կոտրած սիրտով: Արդե՞ծք ատիկա նահանգապետը պատուել եւ մեծարել էր: Պէտք է ընդունիլ, որ այդ մարդը միշտ յարգարժան կերպով չէ վարուած, բայց ան նահանգապետի պաշտօնը կը գրաւէ: Իբրեւ Քրիստոնեաներ, պէտք է պատուենք այդ իշխանութեան դիրքը: Քանի՞ հաւատացեալներ ազդուեցան այդ անարգական զուարթամտութենէն: Զարմանալի չէ ուրեմն, որ կորսնցուցած ենք ընկերութեան շատ մը մասնիկներու յարգանքը:

Ատիկա շատ հեռու է առաջին դարու հալածուած եկեղեցւոյ վարմունքէն: Անոնք կը պատուէին իշխանութիւնները: Երբ այդ ձեւով կը վարուինք եւ կը խօսինք, կ'աւելցնենք ոյժը անօրէնութեան, որ կը գործէ այսօր: Սակայն Աստուածաշունչը մեզի կ'ըսէ. «Ներկայիս արդէն իսկ անօրէնութեան այդ խորհրդաւոր ոյժը գործի վրայ է. բայց պիտի չյայտնուի՝ մինչեւ որ անոր արգելք եղողը մէջտեղէն վերցուի» (Բ.Թս 2.7): Այդ վարմունքը կը պատերազմի Սուրբ Հոգիի զսպիչ զօրութեան դէմ: Ատիկա Սատանային սկզբունքն է...

Տիրոջ Վախը Պատիւ Կը Ծնի

Վերադառնանք Պետրոսի խօսքերուն. «Աստուծմէ վախցէք. թագաւորը պատուեցէք»: Անոնք, որոնք կը վախնան Աստուծմէ, իրենց առջեւ կը պահեն փառքի Տիրոջ բարձր եւ

վսեմ դիրքը: Անոնք հանդիպած կ'ըլլան Անոր հեռահաս կամ ընդարձակ իշխանութեան եւ սպառած կ'ըլլան անով: Անոնք կ'արժեւորեն այն ինչ որ ան կ'արժեւորէ, եւ կ'ատեն այն ինչ որ Ան կ'ատէ: Անոնց կեանքերուն մէջ ամուր կերպով ցանուած են մեծարական վախ եւ յարգանք բոլոր ղեկավարութեան դիրքի մէջ եղողներուն հանդէպ, որովհետեւ Աստուած Իր իշխանութիւնը յանձնարարած է անոնց:

Տիրոջ վախի Հոգիին բացակայութիւնը յայտնի կ'ըլլայ երբ իշխանութիւն չենք յարգեր: Յիշենք Յիսուսի մասին Եսայիի նկարագրութիւնը.

Անոր վրայ պիտի հանգչի Տէրոջ Հոգին,
Իմաստութեան ու խելացութեան Հոգին,
Խորհուրդի ու զօրութեան Հոգին,
Աստուծոյ ճանաչումին ու վախին Հոգին:
Ան *Տէրոջ վախով պիտի ներշնչուի* [պիտի ուրախանայ].
Իր աչքերուն տեսածին համաձայն պիտի չդատէ,
Եւ ականջներուն լսածին համաձայն պիտի չյանդիմանէ:
(Ես 11.2-3, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Յիսուսի ուրախութիւնը Տիրոջ վախին մէջ է: Անիկա կարող դարձուց զԱյն, որ չդատէ բնական տեսողութեամբ կամ լսողութեամբ: Այդ հաղորդավարը իր կեանքի պտուղով ցոյց տուաւ, որ ծանօթ չէր Տիրոջ վախին ինչ կը վերաբերի յանձնարարուած իշխանութեան: Քանի որ նահանգապետին վարմունքը պատուաւոր չէր, հաղորդավարը իր լսածին եւ տեսածին համաձայն դատած էր զայն, եւ այդ չափանիշներուն համաձայն, հաղորդավարը կրնար ճիշդ համարուիլ: Սակայն եթէ ան Տիրոջ վախի աչքերով նայած ըլլար, պիտի տեսնէր կառավարիչին կեանքին մէջ նշանակուած ըլլալու իշխանութիւնը: Կառավարական իշխանութեան դէմ չարախօսելը երբեք բարեպաշտ արարք մը չէ:

Յովհաննէս Մկրտիչ Հերովդէս անունով իշխանութեան գլուխ եղող մէկու մը հետ գործ ունեցաւ, սակայն անոր մօտեցումը շատ տարբեր էր այդ հաղորդավարին մօտեցումէն: Նախ՝ Յովհաննէս Հերովդէսին ըսաւ. «Մեր Օրէնքը չի թոյլատրեր որ անոր հետ ամուսնանաս» (Մտ 14.4): Ան ուղղակի մեղքի մասին խօսեցաւ իրեն եւ ոչ թէ անարգական ձեւով իր մասին: Երկրորդ՝ ան Հերովդէսի հետ խօսեցաւ իր իշխանութեան դիրքէն՝ իբրեւ Աստուծոյ մարգարէն: Եւ վերջապէս՝ Յովհաննէս անկապ կատակներ չէր ըներ թագաւորին մասին:

Աստուածաշունչին մէջ միակ բարեպաշտ անձը, որ կատակներ կ'ըներ ղեկավարութեան դիրքին մէջ եղող մարդոց մասին Եղիան էր (տէն Գ.Թգ 18.27): Ան ծաղրեց Բահաղի եւ Աստարովթի սուտ մարգարէները եւ այն աստուածները, զորս անոնք կը ներկայացնէին: Այդ մարդիկը, որոնք իսկական իշխանութիւն չունէին, այլ՝ կեղծ, բազմաթիւ իսրայէլացիներ դէպի խաւարը կ'առաջնորդէին: Անոնց դիրքերը Աստուծոյ կողմէ կարգուած չէին: Պէտք չունինք ենթարկուելու կամ հնազանդելու մարդոց, որոնք ծածուկ կրօնական կազմակերպութիւններ կը ղեկավարեն:

Վերադառնալով իսկական նշանակուած իշխանութեան, դժուար է պատուելը եւ հնազանդիլը երբ իշխանութիւնը չենք տեսներ Տիրոջ վախով լուսաւորուած աչքերով: Եւ սակայն տէն Աստուծոյ Խօսքը ինչ կ'ըսէ. «Ան [Աստուած] յատկապէս խիստ է անոնց հանդէպ, որոնք կը հետեւին իրենց չար, կրքոտ ցանկութիւններուն, եւ որոնք *կ'արհամարհեն իշխանութիւնները*: Այդ մարդիկը հպարտ են եւ ինքնահաւան՝ համարձակելով նոյնիսկ ծաղրել փառաւորները առանց իսկ սարսուռ մը ունենալու իրենց մէջ» (Բ.Պտ 2.10, շեշտադրումը՝ մեր կողմէ)²⁰: Սթափեցնող

20 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիւ Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

բանը այն է, որ Պետրոս եւ Յուդա կը խօսէին եկեղեցւոյ մէջ եղող մարդոց մասին (կարդայ Յդ 12: Բ.Պտ 2.13-15):

Այս գիրքի սկիզբը զգուշացուցի, որ շատերուն համար դժուար պիտի ըլլայ հոս գրուած կարգ մը բաները ընդունիլը, քանի որ շատ յաճախ մենք Աստուծոյ Թագաւորութիւնը կը տեսնենք ժողովրդավարական մտայնութեամբ: Ատոր համար մեզի կը թելադրուի, որ վերանորոգուինք հոգիով՝ մեր մտածելակերպը փոխելով (տես Եփ 4.23): Եթէ ձայնասփիւռի հաղորդավարին մտածելակերպը միայն իրեն յատուկ ըլլար, ես հաւանաբար պիտի չնշէի ատիկա, սակայն անոր այդ մտայնութիւնը տարածուած է ամբողջ Եկեղեցիին մէջ: Ես ատիկա յայտնաբերեցի Պիլ Քլինթընի նախագահութեան ժամանակաշրջանին:

Սխալը Կարելի Չէ Սրբագրել Սխալով

Երբ Պիլ Քլինթըն նախագահ ընտրուեցաւ 1992-ին, ես ընկճուածութիւն ունեցայ երեք օր մինչեւ որ Աստուած խօսեցաւ ինծի: Ան ինծի յստակօրէն ցոյց տուաւ, թէ ոչ ոք իշխանութեան գլուխ կու գայ առանց Իր գիտութեան, եւ իշխանութեան վրայ եղողները կը կրեն այդ պատասխանատուութիւնը: Երբ ատիկա յայտնուեցաւ ինծի, ես սկսայ կեդրոնանալ այն իշխանութեան վրայ, որ տրուած էր այդ մարդուն եւ ոչ անոր անձնական կեանքին: Երբ ատիկա ըրի, սկսաւ անկեղծ սէր մը աճիլ սիրտիս մէջ այդ ղեկավարին հանդէպ եւ բուն փափաք մը սկսայ ունենալ անոր խաբկանքէ ազատագրուելուն եւ ճշմարտութեան մէջ քալելուն համար:

Կը հաւատամ, որ նոյնն էր պարագան Հերովդէսի հանդէպ Յովհաննէս Մկրտիչի սիրտին: Հակառակ խստութեամբ խօսելուն, ան վստահաբար Աստուծոյ սիրտը ունէր փտած ղեկավարին հանդէպ: Ատոր համար Երեմիա լացաւ անոնց համար, որոնց շատ խստօրէն խօսեցաւ: Կան անոնք, որոնց

խօսքերը կ'ելլեն օրինապաշտական, ասելովթեամբ լեցուն սիրտերէ, եւ կան անոնք, որոնք կը խօսին Տիրոջ սրբագրիչ խօսքերը՝ ելած գութով վառող սիրտերէ:

Տէրը կը բարկացնեն անոնք, որոնք սխալներ կը գտնեն մարդոց մէջ՝ իրենց փարիսեցիական դատողութեան պատճառով: Ես Նախագահ Քլինթոնի նկատմամբ այդ վերաբերումը տեսած եմ շատ մը եկեղեցիներու մէջ: Նախքան շարունակելս, նորէն ըսեմ, որ ես Նախագահ Քլինթոնին չքուէարկեցի երկու ընտրութիւններուն ալ, եւ սիրտս կոտորած է այս երկրին մէջ անոր վարմունքին պատճառած ալիքին համար:

Ճամբորդութիւններու ընթացքին 1992-ին, հաւատացեալներ յաճախ կը քաջալերէին զիս, որ հեռատեսիլէն դիտեմ ելոյթները չափազանց պահպանողական անձի մը, որ կը թուէր շատ ըսելիքներ ունենալ մեր երկրի ազատական ղեկավարներուն մասին, յատկապէս նախագահին եւ անոր կնոջ: Ես հետեւեալ հաստատումները կը լսէի ամէն շաբաթ տարբեր քաղաքներու մէջ: Այդ մոլեռանդ մարդիկը կ'ըսէին. «Պէտք է լսես այդ մարդուն խօսածները: Ան շատ լաւ ձեռով կը մեկնաբանէ Ուաշինկթոնի մէջ տեղի ունեցածները»: Իրենց վստահելու պատճառով, մտածեցի. *Պէտք է գտնեմ այդ մարդը հեռաբեսիլին վրայ եւ մտիկ ընեմ խօսածները:* Ես յաճախ չէ, որ հեռատեսիլ կը դիտեմ, ուստի ինը ամիս ետք էր, որ վերջապէս տեսայ զայն:

Քալիֆորնիոյ մէջ ծառայութենէ մը ետք պանդոկի սենեակս վերադառնալով, հեռատեսիլի կայանները կը դարձնէ եւ յանկարծ տեսայ զայն: Ան շատ զուարճալի էր եւ խենթ փողկապ մը կապած էր վիզին: Սկսաւ խօսիլ Նախագահ Քլինթոնի մասին: Ատկէ հասկցայ, որ *այդ էր այն անձը, որուն մասին ամէն մարդ կը խօսէր ինձի:* Շատ խանդավառ էի վերջապէս այդ հոչակաւոր մարդուն խօսածը լսելու համար: Նստայ՝ պատրաստ դիտելու իրեն եւ լսելու, թէ ինչ ունէր ըսելու:

Քսան վայրկեան մտիկ ըրի ինչպէս ան նախագահը քննադատեց եւ անպէտք մէկու մը պէս ներկայացուց զայն: Կատակները շատ ծիծաղելի էին, եւ ըսածները՝ սրամիտ, բայց լման ժամանակը սխալ զգացում մը ունէի մէջս: Մտածեցի. *Ինչ է հարցը: Ամէն բան, որ ան կ'ըսէ՝ ճիշդ է: Ան ճիշդ ձեւով ըմբռնած է մեր նախագահին ազատական մտայնութիւնը: Յետոյ հարց տուի. «Տէր, ինչո՞ւ այսպիսի անհանգիստ զգացում մը ունիմ սիրիտս մէջ»:*

Սուրբ Հոգին անմիջապէս պատասխանեց. *«Քու ժողովուրդիդ առաջնորդին դէմ չարախօսութիւն մի՛ ընէր»* (Գրծ 23.5):

Ուրիշ աստուածաշնչական հատուած մըն ալ յայտնուեցաւ միտքիս մէջ. *Արդ, ամէն բանէ առաջ կը խնդրեմ, որ աղօթէք, խնդրանք, պաղապարանք եւ գոհութիւն մատուցանէք բոլոր մարդոց համար, մանաւանդ թագաւորներուն եւ իշխանութեան գլուխ գտնուող բոլոր մարդոց համար, որպէսզի խաղաղ ու հանդարտ կեանք մը վարենք՝ կարարեալ աստուած-պաշտութեամբ եւ պարկեշտութեամբ. որովհետեւ այդ է բարին եւ այդ կը փափաքի Աստուած, մեր Փրկիչը* (Ա.Տմ 2.1-3): Մէկ թոն աղիւսի ծանրութեամբ հարուածեց այդ գաղափարը ինծի: Աստուած պատուիրեց մեզի, որ պատուենք իշխանութեան մէջ եղողները, աղօթենք անոնց համար, բարեխօսենք անոնց համար եւ շնորհակալութիւն յայտնենք անոնց համար: Ան մեզի չէ ըսած, որ քարկոծենք, քննադատենք զանոնք կամ կռուինք անոնց հետ եւ ծաղրենք զանոնք: Հակառակ անոր որ հեռատեսիլի հաղորդավարը ճիշդ տեղեկութիւններ կու տար, սխալը չես կրնար սրբագրել սխալով...

Ես այդքան չնեղացայ այդ մարդէն քան այն հաւատացեալներէն, որոնք խանդավառ էին անոր պատգամներով: Ինչ կը վերաբերի հաղորդավարին, զայն տեսայ իբրեւ մէկը, որ աւելի լաւ ընել չէր գիտեր: Ինծի համար դժուար հասկնալի բանը այն էր, որ հաւատացեալներ նեցուկ կը կանգնէին անոր պատգամին եւ կը հռչակէին զայն: Ուրեմն

անոնք ինչպէս «կը պատուէին թագաւորը»: Աստուած մեզի ըսած է, թէ ինչ պէտք է ընենք. աղօթել, բարեխօսել եւ գոհութիւն մատուցանել: Պօղոս խօսեցաւ աստուածային դատաստանի մասին, որ պիտի գայ ոչ միայն անոնց վրայ, որոնք կը քալեն անօրէնութեան այլազան դրսեւորումներով, այլեւ անոնց, որոնք «հաւանութիւն կու տան ընողներուն» (Հռ 1.32):

Ինչ Օրէնքներու Համաձայն Կ'ապրինք

Ես այդ պանդոկի սենեակին մէջ պատահածին մասին քարոզեցի ամբողջ Միացեալ Նահանգներու տարածքին: Շատեր լուսաւորուեցան եւ ապաշխարեցին. ուրիշներ շատ բարկացան ինձմէ: Պատճառաբանեցին, թէ այդ հաղորդավարը կը ջատագովէր ճիշդ կերպով ապրիլը եւ մեր կառավարութեան շնորհած խօսքի ազատութիւնը: Ատիկա ճիշդ է, բայց մենք ունինք պատուէրներ, որոնք աւելի վեր են քան այդ վարմունքը: Արդեօք մենք կ'ապրինք ժողովրդավարական սկզբունքներով կամ Աստուծոյ Թագաւորութեան օրէնքով: Պարզապէս որովհետեւ մեր երկիրը կ'արտօնէ ալքրոլի գործածութիւնը եւ կարգ մը նահանգներու մէջ՝ մարիուանայի գործածութիւնը, պէտք է մենք՝ հաւատացեալներս, չափէն դուրս խմենք կամ ազատօրէն ծխենք:

Մենք աւելի բարձր օրէնք մը ունինք: Հռոմի մէջ անհաւատ մը հետեւեալը գրեց առաջին դարու Քրիստոնեաներուն մասին. «Անոնք իրենց օրերը երկրի վրայ կ'անցընեն, բայց երկինքի քաղաքացիներ են: Անոնք կը հնազանդին սահմանուած օրէնքներուն եւ միեւնոյն ատեն իրենց կեանքերով կը գերազանցեն այդ օրէնքները» (Նամակ Դիոգնետոսի, գլուխ 5):

Ինչ օգուտ ունի չարախօսութեան մտիկ ընելը: Ինչ պտուղ կու տայ ատիկա: Աւելի ազդեցիկ չէնք ըլլար եթէ այդ մարդուն պատգամները դիտելու եւ տարածելու

յատկացուած ժամանակը փոխարէնը գործածենք մեր երկրի ղեկավարներուն համար բարեխօսելու համար: Աստուած չըսա՛ւ, որ ատիկա ընենք՝ «որպէսզի խաղաղ ու հանդարտ կեանք մը վարենք՝ կատարեալ աստուածպաշտութեամբ եւ պարկեշտութեամբ»:

Կը ճանչնամ հովիւ մը, որ հանդիպում մը ունեցած էր Նախագահ Քլինթընի հետ եւ անոր ըսած՝ «Ոեւէ ղեկավար, որ օրինաւոր կը դարձնէ անմեղ մանուկներու սպանութիւնը Աստուծոյ դատաստանին պիտի ենթարկուի եւ դժոխքի մէջ պիտի այրի»: Այդ հովիւը վարուեցաւ ճիշդ այնպէս ինչպէս Յովհաննէս Մկրտիչ վարուեցաւ Հերովդէսի հետ: Աստուծոյ այդ պատգամաբերը խօսեցաւ սիրտին մէջի արդար բարկութենէն ինչպէս նաեւ անկեղծ սէրէն՝ չճնած մանուկներուն եւ նախագահին հանդէպ: Յարգելով հանդերձ նախագահին իշխանութիւնը, այդ ծառայողը ճշմարտութիւնը խօսեցաւ: Այդ անձը երբեք պիտի չըլլայ մէկը, որ կը ծաղրէ նախագահը: Երբ տղամարդիկ եւ կիներ մտիկ կ'ընեն հեռատեսիլի անձնաւորութիւններու իշխանութիւններուն դէմ ունեցած քննադատական կամ ծաղրական արտայայտութիւններուն, անոնք կը հեռանան Աստուծոյ սիրտէն: Չարախօսութեան մտիկ ընելը յաւիտենական պտուղ պիտի չբերէ:

Իշխանութիւնները Պատուելու Սիրտը

Մեր վարմունքին մէջ պէտք է երեւի իշխանութիւնները պատուելու սրտաբոլխ շարժառիթը, քանի որ մենք կը պատուենք Աստուծոյ նշանակումը: Պօղոս հետեւեալ յորդորը կու տայ մեզի.

Իշխողները վախ չեն պատճառեր բարիք գործողներուն, այլ միայն չարագործներուն: Դուն կ'ուզես իշխանութենէն չվախնալ: Բարիք գործէ, եւ անկէ գովասանք կը լսես.

որովհետեւ *Աստուծոյ պաշտօնեան* է անիկա՝ քու բարիքիդ համար կարգուած: Իսկ եթէ չարիք գործես՝ վախցիր անկէ, որովհետեւ զուր տեղը չէ, որ սուր կը կրէ. որպէս *Աստուծոյ պաշտօնեայ՝* բարկութեամբ կը դատէ եւ կը պատժէ չարագործները: Ահա թէ ինչու՝ պէտք է իշխանութեանց հնազանդիլ. ո՛չ միայն պատիժէն զերծ մնալու համար, այլ մանաւանդ՝ խիղճով հանգիստ ըլլալու համար: Ատոր համար է նաեւ, որ իշխանութեանց տուրք կը վճարէք, որպէսզի իբրեւ Աստուծոյ պաշտօնեաներ՝ շարունակեն *իրենց այդ դերը կատարել:* Հետեաբար անոնցմէ իւրաքանչիւրին հանդէպ ձեր պարտաւորութիւնը կատարեցէք, տուրքը տալով անոր՝ որուն տուրք պէտք է տաք, մաքսը տալով անոր՝ որուն մաքս պէտք է տաք, հնազանդելով անոր՝ որուն հնազանդութիւն կը պարտիք եւ յարգելով ան՝ որուն յարգանք կը պարտիք: (Հո 13.3-7, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ես ծանրութիւն վերցնելով մարզանք կ'ընէի մեր շրջանի մարզանքի սրահներէն մէկուն մէջ եւ խօսակցութիւն մը ունեցայ տղամարդու մը եւ կնոջ մը հետ, որոնք շատ լաւ, մարզանքով կոփուած մարմիններ ունէին: Տասը վայրկեան անոնց հետ խօսելէ ետք, իմացայ, որ անոնք Քոլորատո Սփրինկզի ոստիկանութեան մաս կը կազմէին: Անմիջապէս ըսի. «Ես մեծ յարգանք ունիմ ձեզի հանդէպ, քանի որ Աստուածաշունչը կ'ըսէ, թէ դուք Աստուծոյ պաշտօնեաներն էք»:

Ոստիկանին երեսին վրայ ցնցում եւ զարմանք տեսայ, եւ ան խանդավառութեամբ ըսաւ. «Հէյ, ճիշդ է ասիկա: Աստուածաշունչը իրապէս կ'ըսէ, թէ ես Աստուծոյ պաշտօնեան եմ»:

Հաստատեցի իր հարցումին պատասխանը՝ իրեն ցոյց տալով վերի համարը:

Յետոյ ան ըսաւ. «Ես այդ համարը պիտի դաջեմ (*թայթու* պիտի ընեմ) կռնակիս վրայ»:

Եւ իրապէս ալ քանի մը շաբաթ ետք զինք տեսայ մարզանքի սրահը եւ շապիկը վերցնելով ցոյց տուաւ իր նոր դաջուածքը (*թաթուն*): Ատիկա խորունկ յայտնութիւն մը եղած էր իրեն համար:

Այդ ճշմարտութիւնը շատ պէտք է շեշտել այս օրերուս: Աստուած իշխանութեան մէջ եղողները Իր «պաշտօնեաներ»ը կոչեց, եւ անոնք արժանի են ստանալու պատիւ եւ յարգանք: Ես այդ պատուելու զգացումը կ'ունենամ սիրտիս մէջ ամէն անգամ որ կը տեսնեմ ոստիկան մը, հրշէջ մը, քաղաքապետ մը, քաղաքացիական խորհուրդի մը մէկ անդամը, պետական օրէնսդիր մը, դատաւոր մը, խորհրդարանական մը կամ կառավարութեան որեւէ ճիւղի մէկ անդամը: Յարգանքի զգացումը կ'եռայ մէջս ամէն անգամ որ քաղաքապետական, նահանգային կամ դաշնակցային գրասենեակ մը կ'երթամ: Ունիմ բարեկամներ, որոնք ծերակուտականներ են եւ երբ տեսնեմ զիրենք, միշտ կը բարեւեմ «Ծերակուտական» ըսելով եւ ոչ իրենց առաջին անունով: Կ'ուզեմ յարգանքս ցոյց տալ այն դիրքին հանդէպ, զոր Աստուած շնորհած է իրենց: Անոնք Աստուծոյ պաշտօնեաներն են՝ Իր ժողովուրդին ծառայելու համար:

Առաւել, վերի համարին մէջ նկատի առ, որ իշխանութիւնները Աստուծոյ կողմէ իրենց տրուած դերը կատարած կ'ըլլան երբ իրենց պարտականութիւնները կը կատարեն: Այսպէս մտածէ. եթէ ինքնաշարժ արագութեան սահմանէն 15 մղոն աւելի արագ կը քշես եւ յանկարծ հայելիէդ նկատես, որ կարմիր լոյսեր կը փայլին ետեւդ, Չարախօսը կապելու աղօթքներ մի՛ ըներ: Ոստիկանները Չարախօսին հաշտոյն չեն աշխատիր. անոնք Աստուծոյ համար կ'աշխատին: Այդպիսի պահու մը դուն պէտք է Աստուծոյ ողորմութիւնը ստանալու աղօթք ընես:

Ես արագ քշելու համար քանի մը առիթով տուգանք ստացած եմ, եւ ամէն անգամ ալ ոստիկանին ըսած եմ. «Ես սխալ էի, եւ շնորհակալութիւն կը յայտնեմ, որ դուն քու

գործդ կ'ընես եւ մեր քաղաքին կը ծառայես: Կը խնդրեմ, որ ներես ինձի օրինազանցութիւնս»: Պէտք է տեսնես անոնց դէմքը երբ այդպէս կ'ըսես: Առիթով մը ոստիկանին երեսի արտայայտութիւնը ամբողջովին փոխուեցաւ: Ան խիստ արտայայտութիւն մը ունէր, բայց յետոյ մեղմացաւ երբ տեսաւ իր իշխանութեան նկատմամբ իմ յարգանքս: Նոյնիսկ կարծեցի, որ տուգանքս պիտի ջնջէր, հակառակ անոր որ այդ չէր իմ մտադրութիւնս:

Ունիմ բարեկամ մը, որ կը հովուէ եկեղեցի մը այն քաղաքին մէջ, որուն կառավարիչը անպատուեցաւ ձայնասփիւռի կայանի հաղորդավարին կողմէ: Ան կ'աղօթէր իր քաղաքին համար՝ հարցնելով Աստուծոյ, թէ ինչպէս կրնար փոփոխութիւն մը բերել: Այդ ժամանակ անոր եկեղեցին բաղկացած էր հաւատացեալներու փոքր խումբէ մը: Աստուած անոր սիրտին վրայ դրաւ, որ պատուէ իր քաղաքի քաղաքային իշխանութիւնները: Աւելի երկար աղօթելէ ետք ան գիտցաւ, թէ ինչ պէտք էր ընէր: Ինք եւ իր եկեղեցւոյ առաջնորդները ուսումնասիրութիւն մը ըրին գիտնալու համար, թէ ինչ էին իրենց քաղաքի մեծագոյն կարիքները: Յայտնաբերեցին, թէ իրենց քաղաքի հրշէջները կարիքը ունէին դիմակներու, որպէսզի կարենային մարդիկը տեսնել մովսին մէջ, բայց այդ դիմակներուն գումարը ներառուած չէր իրենց այդ տարուայ տարեկան պիտոճէին մէջ: Դիմակներէն իւրաքանչիւրը 25,000 տոլար էր: Ատիկա ահագին դրամ էր իրենց պէս փոքր եկեղեցիի մը համար:

Հովիւը այդ տեսիլքը բաժնեկցեցաւ իր ժողովուրդին հետ, եւ մէկ անգամ հաւաքուած սիրոյ նուէրներով հաւաքեցին իրենց պէտք եղած ամբողջ գումարը: Ինք եւ իր եկեղեցւոյ առաջնորդները վճարագիրը յանձնեցին քաղաքի կառավարիչներուն: Ան ինձի ըսաւ. «Ճոն, պիտի զարմանաս եթէ գիտնաս, որ ատիկա ինչպէս ծառայեց քաղաքի պաշտօնատարներուն: Անոնք չէին հաւատար, որ

եկեղեցի մը կրնար այդպիսի բարի գործ մը ընել: Անոնք վարժուած էին, որ մարդիկ իրենց պէտքերուն համար դիմեն քաղաքապետարան եւ ոչ թէ կամաւորաբար տան քաղաքին»:

Այդ օրուրն է ի վեր եկեղեցին մեծ աճ ունեցած է: Երբ այդ համայնքը եկեղեցւոյ նոր շէնքի մը նուիրումը կատարեց, շատ մը քաղաքային պաշտօնատարներ ներկայ եղան, եւ անոնցմէ ոմանք ատկէ ետք մնայուն կերպով սկսան այդ եկեղեցին յաճախել: Բաղդատէ՛ այդ հովիւին պտուղը ձայնասփիւռի հաղորդավարին պտուղին հետ:

Լսած եմ մեծ թիւով հաւատացեալներ, որոնք կը գանգատին իրենց վճարած տուրքերուն համար: Հանդիպած եմ մարդոց եկեղեցիին մէջ, որոնք գտած են ձեւեր տուրքերէ խուսափելու: Անոնք կ'ըսեն, թէ ատիկա իրենց սահմանադրական իրաւունքն է: Անոնց հետ խօսելու ատեն կ'ըսեմ՝ «Աստուծոյ յորդորը ւելի գերադաս է քան ձեր ենթադրեալ սահմանադրական իրաւունքը: Աստուած կ'ըսէ, թէ պէտք է տուրք վճարենք»: Յետոյ այդ մարդոց կ'ըսեմ. «Ո՛վ կը վճարէ ձեր գործածած ճամբաներուն նորոգութեան ծախսերը: Ո՛վ կը վճարէ ձեզի պաշտպան հանդիսացող ոստիկաններուն, հրշէջներուն եւ օրէնսդիրներուն»: Լսած եմ հաշուապահներ կը պատմեն, թէ ինչ ձեւերով հաւատացեալներ կը փախչին տուրքեր վճարելէ: Սիրտս կը կոտրուի: Ես մեր հաշուապահներուն ըսած եմ, որ այդպիսի բաներ չընեն բնաւ: Տուրք վճարելը առիթ մըն է տալու կառավարութեան, որ կը ծառայէ մեզի: Մեզմէ չեն կրնար գողնալ եթէ մենք կ'ընտրենք տալ: Երբ է, որ մենք հաւատացեալներս պիտի ուրախանանք այդ ճշմարտութեամբ:

Եթէ Քրիստոսի Մարմինը այդ ճշմարտութիւնը հասկնայ եւ անոր համաձայն ապրի, մենք ւելի մեծ վկայութիւն պիտի ունենանք տալու մեր երկրին եւ աշխարհին: Պէտք է սորվինք պատուել՝ ակնածիլ, յարգել, վարուիլ յարգանքով եւ հնազանդութեամբ, եւ մեր պարտականութիւնները կատարել,

անոնց հանդէպ, որոնք իշխանութեան գլուխ են: Այդպէս ընելով, կը պատուենք մեր Երկնաւոր Հայրը: Երբ կը պատուենք թագաւորը, ցոյց տուած կ'ըլլանք մեր վախը Աստուծոյ հանդէպ:

Նոյնպէս եւ իշխանութեան Բոլոր Մարզերուն Պարագային

Ինչպէս գրեցի նախորդ գլուխին մէջ, թագաւորը պատուելու պատուէրը ուղղակիօրէն կը ներկայացնէ քաղաքային իշխանութիւնները. այդ խրատը կամ խորհուրդը նաեւ կը վերաբերի յանձնարարուած իշխանութեան ուրիշ մարզերու: Նկատի առ պատուելու վերաբերեալ հետեւեալ համարները: Ընտանիքին վերաբերեալ Աստուած ըսաւ. «Պատուէ՛ք ու հայրդ ու մայրդ» (Եփ 6.2): Դարձեալ Ան պատուիրեց. «Ամէն կին պէտք է յարգէ իր ամուսինը» (Եփ 5.33): Ինչ կը վերաբերի ընկերային իշխանութիւններուն, «Անոնք որ ծառայութեան լուծին տակ են՝ թող բացարձակ յարգանք ցոյց տան իրենց տէրերուն, որպէսզի Աստուծոյ անունը եւ Քրիստոսի ուսուցումները հայիոյութեան առարկայ չդառնան» (Ա.Տմ 6.1): Իսկ եկեղեցւոյ իշխանութեան վերաբերեալ մեզի կը տրուի հետեւեալ պատուէրը. «Այն երէցները, որոնք լաւ վերակացութիւն կ'ընեն եկեղեցիին՝ կրկնակի վարձատրութեան արժանի թող նկատուին, մանաւանդ անոնք՝ որոնք կ'աշխատին թէ՛ քարոզելով եւ թէ՛ ուսուցանելով» (Ա.Տմ 5.17):

Ծառայութեան երեսուն եւ անլի տարիներուս ընթացքին շատ յաճախ տեսած եմ պատանիներ կամ երիտասարդներ, որոնք անարգական ձեւով կը խօսին իրենց ծնողներուն հետ: Այդ պատանիները կամ երիտասարդները յարգանք եւ պատիւ չունէին իրենց մէջ: Եղած են ժամանակներ երբ տեղւոյն վրայ սրբագրած եմ զիրենք եթէ իրենց ծնողները այդ մէկը չեն ըրած: Եթէ միայն գիտնային, որ իրենք իրենց մասս կը հասցնէին՝ պիտի չհամարձակէին ընել ատիկա: Աստուած

կ'ըսէ. «Անիծեալ ըլլայ ան՝ որ իր հայրը կամ մայրը կ'անարգէ. եւ ամբողջ ժողովուրդը “ամէն” թող ըսէ» (Բ.Օր 27.16): Այն անէծքը, որուն մասին խօսեցանք նախորդ գլուխներուն մէջ կու գայ անոնց, որոնք կ'անպատուեն իրենց ծնողները:

Միւս կողմէ, Աստուած մեծ օրհնութիւններ կը խոստանայ անոնց, որոնք կը պատուեն իրենց ծնողները. «“Պատուէ՛ք ու հայրդ ու մայրդ” պատուիրանը առաջինն է՝ որ իրեն հետ կապուած խոստում մը ունի. “որպէսզի միշտ բարիք գտնես եւ երկրի վրայ կեանքդ երկար ըլլայ”» (Եփ 6.2-3):

Աստուած իրականութեան մէջ զաւակի մը երկու որոշակի օրհնութիւններ կը խոստանայ երբ ան կը պատուէ իր ծնողքը: Առաջին՝ միշտ բարիք պիտի գտնէ: Այն անձը, որ չի պատուեր իր ծնողքը չի կրնար վստահ ըլլալ, որ կեանքին մէջ միշտ բարիք պիտի գտնէ: Ան անէծքի տակ կ'ըլլայ: (Ես այդ մասին իմ վկայութիւնս պիտի բաժնեկցիմ յետագայ գլուխներէն մէկուն մէջ:)

Երկրորդ խոստումը երկար կեանքն է: Ինչ մեծ շահ կամ օգուտ ծնողներդ պատուելուդ համար: Կրնաս մտածել. *Մէկ վայրկեան: Ես ճանչցած եմ զաւակներ, որոնք պատուած են իրենց ծնողները, բայց տակաւին երիտասարդ տարիքի մեռած են:* Ես վստահ գիտեմ, որ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ, թէ ատիկա առաջին պատուիրանն է խոստումով: Հարցերու մէջ կ'իյնանք երբ կ'արտօսենք, որ մեր շուրջը մեր տեսածները ժխտեն Աստուծոյ խոստումները: Հետեւեալը նկատի առ. մեր Հայրը կը խոստանայ վախէ ամբողջական ազատութիւն անոնց, որոնք Իրն են: Իր բառերով. «Դուն արդարութեամբ պիտի հաստատուիս. հարստահարութենէն հեռու պիտի ըլլաս, որ չվախնաս» (Ես 54.14): Ատով հանդերձ թանկագին Քրիստոնեաներ կ'ապրին վախի մէջ: Եթէ խոստումները ինքնաբերաբար կը կատարուին, ինչն շատեր կ'ապրին այդ տանջանքին մէջ: Այդ հարցումին պատասխանը այն

է, որ Աստուծոյ խոստումները կ'իւրացուին աղօթքով եւ կը շահուին հաւատքի բարի պատերազմով:

Աբրահամի որդին Իսահակը լաւ օրինակ մըն է: Աստուած Իսահակի մասին հետեւեալ խոստումը տուաւ. «Անոր հետ, եւ անկէ ետք՝ անոր զարմին հետ իմ ուխտս պիտի հաստատեմ, յաւիտենական ուխտ մը» (Ծն 17.19): Աստուած խոստումը հոչակեց, բայց ամուսնութենէ ետք գիտցան, որ Ռեբեկան՝ անոր միակ կինը, ամուլ էր: Հարցերը անլի բարդացնելու համար, Իսահակ չէր, որ ընտրած էր զայն. Սուրբ Հոգին ընտրած էր զայն: Կրնաս հարց տալ. «Ըսել կ'ուզես Աստուած Իր ձեռքով զատած էր ամուլ կին մը»: Այո: Խոստումը ինքնաբերաբար կատարուող չէր. անիկա պէտք էր իւրացուէր: Տեսէք ինչ կ'ըսէ Սուրբ Գիրքը. «Իսահակ թախանձեց Տէրոջ իր կնոջ համար՝ անոր ամուլ ըլլալուն պատճառով: Տէրը անոր թախանձանքը ընդունեց, եւ անոր կինը՝ Ռեբեկա յղացաւ» (Ծն 25.21):

Իսահակ պէտք ունէր պայքարելու՝ խոստումը ստանալու համար, եւ ատիկա ըրաւ Տիրոջ աղաղակելով: Ան աղօթեց Աստուծոյ կամքին համաձայն եւ անոր աղօթքը պատասխանուեցաւ: Աստուծոյ Խօսքը մեզ կը քաջալերէ. «Ուստի համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ, այն վստահութեամբ՝ որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք՝ կը լսէ մեզ: Եւ երբ գիտենք, թէ մեր խնդրանքները կը լսէ, գիտենք նաեւ՝ թէ պիտի ստանանք ինչ որ կը խնդրենք իրմէ» (Ա.Յհ 5.14-15):

Ծնողներդ պատուելով, կրնաս ստանալ Անոր ուխտի երկու խոստումները աղօթքով, եւ ունենալ բարի, երկար եւ պտղաբեր կեանք մը: Հիմնէ՛ հաւատքդ Աստուծոյ ուխտին վրայ, եւ ոչ՝ ուրիշներու կեանքերուն:

Թերեւս կը նեղանաս հիմա, որովհետեւ մինչեւ հիմա չես պատուած ծնողներդ: Ահա զղջումի առիթ մը քեզի: Աղօթքով

կեցիր Աստուծոյ առջեւ եւ ապա անձնապէս ծնողներուդ գնահատանց ներողամտութիւնը խնդրէ: Սկսէ պատուել զանոնք եւ հաւատալ, որ Իր ուխտի խոստումները պիտի դրսեւորուին կեանքիդ մէջ:

Նոյն սկզբունքը կիրարկելի է տնօրէններու, գործատերերու, ուսուցիչներու եւ այլ ընկերային իշխանութիւններու համար: Եթէ պատուենք զանոնք, մեզի համար լաւ պիտի ըլլայ ատիկա եւ Տիրոջմէ մեր վարձատրութիւնը պիտի ստանանք: Պօղոս հետեւեալը յանձնարարեց պաշտօնեաներուն. «Ինչ որ ալ ընէք՝ սրտանց ըրէք, այնպէս՝ ինչպէս պիտի ընէիք Տիրոջ, եւ ոչ՝ մարդոց: Գիտցէք, որ Տիրոջմէ է որ պիտի առնէք ձեր հատուցումը, որ խոստացաւ ձեզի տալ, քանի որ Տիրոջ՝ այսինքն Քրիստոսին է, որ կը ծառայէք: Իսկ անիրաւը իր անիրաւութեան հատուցումն է, որ պիտի ստանայ. Որովհետեւ Աստուած խտրութիւն չի դներ մարդոց միջեւ» (Կղ 3.23-25):

Յաջորդ գլուխին մէջ պիտի խօսինք այն հեռահաս օգուտներուն մասին, որոնք մեզի կը շնորհուին երբ Իր ծառաները կ'ընդունինք եկեղեցիին մէջ եւ պէտք եղած ձեւով կը պատուենք զանոնք: Նաեւ պիտի տեսնենք, թէ ինչ կը կորսնցնենք եթէ չկարենանք ճանչնալ անոնք, զորս Աստուած կը դրկէ մեզի:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿՐԿՆԱԿԻ ՊԱՏԻՒ

Շատ անգամ Աստուած մեզի պիտի դրկէ այն ինչ որ պէտք ունինք՝ ծրարի մը մէջ, զոր չենք ուզեր:

«Յարգ[եցէք] ան՝ որուն յարգանք կը պարտիք» (Հո 13.7): Այս գլուխին մէջ պիտի տեսնենք, որ գլխաւոր պատճառը, որ Աստուած կը թելադրէ մեզ, որ յարգենք կամ պատուենք մեր վրայ եղող իշխանութիւնները մեր սիրոյն կամ օգուտին համար է, ոչ՝ ուրիշներու համար: Խանդավառիչ է նշել, որ Աստուծոյ Խօսքի այդ պատուէրը գործադրելը օրհնութիւն կը բերէ: Ատոր մէկ օրինակը կը տեսնենք Ա.Թագաւորներուն Գիրքին մէջ:

Անարգանքը Դարձաւ Օրհնութիւն

Այն օրերուն երբ դատաւորներ կ'իշխէին Իսրայէլի վրայ, Աննա անունով ամուլ կին մը կար: Ան ամուսնացած էր Եղկանայի հետ, որ երկրորդ կին մը առած էր՝ Փենանա

անունով: Աննա կը տառապէր, քանի որ իր մրցակիցը կը վշտացնէր զինք իր ամուլութեան պատճառով: Շատ հաւանաբար Եղկանա երկրորդ կինը առաւ, քանի որ Աննա ամուլ էր: Աննա սիրուած էր եւ կը լեցնէր իր ամուսինին սիրտը, մինչ Փենանա կը լեցնէր անոր տունը: Ամէն տարի ընտանիքը կը ճամբորդէր Սելով՝ պաշտամունք կատարելու համար: Հոն յատկապէս Փենանա կը գրգռէր Աննան մինչեւ անոր քնանալը: Աննա չէր մխիթարուեր նոյնիսկ իր ամուսինին կողմէ:

Դէպի Սելով կատարուած տուեալ այցելութեան ընթացքին Աննա փլաւ: Դառն սիրտով ան լացաւ Տիրոջ առջեւ եւ ուխտ մը ըրաւ Անոր հետ. «Եթէ ինձի զաւակ մը տաս, ես ալ զայն ետ քեզի պիտի տամ, որպէսզի ծառայէ քեզի իր կեանքի բոլոր օրերուն», Աննա ըսաւ Տիրոջ:

Մինչ ան կ'աղօթէր, Հեղի՝ Իսրայէլի քահանայապետը եւ դատաւորը կը դիտէր զինք եւ՝ «Միայն շրթունքը կը շարժէր, բայց ծայնը չէր լսուեր. հետեւաբար Հեղի զայն գինով կարծեց: Ուստի Հեղի անոր ըսաւ. “Մինչեւ երբ պիտի գինովնաս. հրաժարէ քու գինիէդ”» (Ա.Թգ 1.13-14):

Ինչ մեծ անարգանք: Հեղի ոչ միայն անզգայուն էր անոր ցափն նկատմամբ, այլեւ ան այնքան հոգեւորապէս անզգայ էր, որ կարծեց, թէ Աննայի վշտալի արտայայտութիւնները յառաջ կու գային անոր գինովութենէն: Ան հեռացած էր իր մնայուն թշնամիէն՝ մխիթարութիւն գտնելու համար Տիրոջ ներկայութեան մէջ, բայց միայն չարիք մը ըրած ըլլալու ամբաստանութիւնը լսեց իրենց երկրի բարձրագոյն հոգեւոր իշխանութենէն: Ամէն տարի ան Սելով կու գար պարապ ձեռքով՝ առանց Տիրոջ ներկայացուելիք զաւակի մը: Ամէն տարի ան կը հանդիպէր իր շուրջիններուն նայուածքներուն, փսփսուքներուն եւ ծաղրանքին:

Դուն ինչ պիտի ընէիր եթէ հովիւդ ամէնէն մեծ ցաւը

ապրած մէկ պահուդ քեզ ամբաստանէր չարիք գործելով: Թերեւս պիտի մտածէիր. *Այս մարդը հիմա գլխաւոր հովիւն է: Չի գիտեր, որ ծովի մէջ եմ եւ Աստուծոյ կ'աղաղակեմ: Ո՛րքան անզգա, անհոգեւոր մարդ մըն է: Վերջին անգամն է, որ հոս կու գամ պաշտամունքի համար:*

Այդ խորհուրդները դիւրաւ կրնային այս ձեւի պոռթկում մը յառաջ բերել. «Դուն քեզ Աստուծոյ մարդ կը կոչես եւ չես կրնար ճանչնալ մէկը, որ ցաւի մէջ է... Չե՞ս կրնար ճանչնալ երբ մէկը խորունկ աղօթքի մէջ է: Ինչ տեսակի հովիւ ես դուն: Ինչ տեսակի եկեղեցի է ասիկա: Կը բաւէ այլեւս: Ուրիշ եկեղեցի մը պիտի գտնեմ, որ ունենայ հովիւ մը, որ աւելի զգայուն է ինծի հանդէպ եւ Աստուծոյ նկատմամբ»: Ասիկա արտասովոր կեցուածք մը չէ մեր եկեղեցիներուն մէջ այսօր. եթէ անամօթաբար հովիւին երեսին չեն ըսուիր այդ խօսքերը, ապա անոր կոնակէն կ'ըսուին անոնք՝ համայնքի անդամներուն:

Բայց տե՛ս Աննա ինչ պատասխանեց երբ այդպէս խիստ ձեռով նախատուեցաւ. «Ո՛չ, իմ տէրս. ես վշտացած սիրտով կին մըն եմ, եւ գինի կամ օղի խմած չեմ. հապա Տէրոջ առջեւ իմ սիրտս բացի: Քու աղախինդ անօրէն կին մի՛ կարծեր, քանի որ իմ գանգատներուս ու վիշտիս շատութեան համար մինչեւ հիմա խօսեցայ» (հմր 15-16): Աննա յարգանքով ու պատիւով պատասխանեց: Հակառակ անոր որ Հեղին վարմունքը եւ գնահատումը բնաւ արժանի չէին յարգանքի, Աննա պատուեց անոր իշխանութեան դիրքը: Ան նոյնիսկ բացատրութիւն տուաւ՝ զայն համոզելու համար, թէ ինք վատ մէկը չէր:

Իրականութեան մէջ վարմունքի հարցեր ունեցողը այդ ժամանակ Հեղին էր, եւ դատաստան կար վիզին վրայ կախուած: Սակայն Աննայի կեդրոնացումը Հեղիի վարմունքին վրայ չէր, այլ՝ իր: Աննա կին մըն էր, որ իրապէս Աստուծոյ վախը ունէր: Եթէ ղեկավարը որեւէ սխալ ունէր, Աստուած կը լուծէր այդ հարցը: Ո՛րքան կարիքը ունինք այսօր

այդ ձեւի իսկական ենթարկուածութեան եւ խոնարհութեան:
Աննայի հանդէպ Հեղիի կեցուածքը փոխուեցաւ.

Այն ատեն Հեղի պատասխանեց. «Գնա՛ խաղաղութեամբ, եւ Իսրայէլի Աստուածը քու խնդրածդ քեզի տայ, ինչ որ իրմէ խնդրեցիր»: Ան ալ ըսաւ. «Քու ստրկուիիդ թող շնորհք գտնէ առջեւդ»: Կինը իր ճամբան գնաց, ու կերաւ. երեսը անգամ մըն ալ չտրտմեցաւ: (հմբ 17-18)

Աննա բնաւ չշեղեցաւ Հեղիի հանդէպ իր ենթարկուածութենէն. ան պատուեց զայն իբրեւ Աստուծոյ մարդը եւ նոյնիսկ շնորհակալութիւն յայտնեց անոր օրհութեան համար:

Տէն ինչ պատահեցաւ. «Անոնք առտուն կանուխ ելան եւ Տէրոջ առջեւ երկրպագեցին. ապա Ռամա դարձան ու իրենց տունը գացին: Եղկանա իր Աննա կնոջ մօտեցաւ, եւ Տէրը զայն յիշեց: Աննա յղացաւ, ու երբ ժամանակը հասաւ՝ որդի մը ծնաւ» (Ա.Թգ 1.19-20):

Աստուած մարմնատր, անզգայ քահանայ մը կը գործածէ արձակելու համար բառեր, որոնք խոստումի մը յղացումը յառաջ պիտի բերէին: Իրականութեան մէջ ատկէ կարճ ժամանակ մը ետք Աստուած համարձակօրէն հոչակեց. «Հեղիի տան երդում ըրի, որ Հեղիի տան անօրէնութեան յաւիտեան քաւութիւն չըլլայ՝ զոհերով կամ ընծաներով» (Ա.Թգ 3.14): Բնաւ պիտի չուզէիր լսել, որ Աստուած այդ խօսքերը կ'ըսէ քու կամ ընտանիքիդ մասին: Աստուած՝ որ գթառատ եւ բարի է բայց նաեւ արդար, դարձեալ Հեղիի եւ իր ընտանիքին մասին ըսաւ. «Ժամանակ մը պիտի գայ երբ վերջ պիտի դնեմ քու ընտանիքիդ, որպէսզի անոնք այլեւս չծառայեն իբրեւ իմ քահանաներս: Ընտանիքիդ բոլոր անդամները պիտի մեռնին իրենց ժամանակէն առաջ: Անոնցմէ ոչ մէկը պիտի հասնի ծերութեան: Դուն նախանձով պիտի դիտես մինչ ես

բարգաւաճութիւն պիտի տամ Իսրայէլի ժողովուրդին» (Ա.Թգ 2.31-32)²¹: Ան վստահաբար բարեպաշտ հոգեւոր առաջնորդ մը չէր:

Գոցուած արգանդ մը բացուեցաւ, եւ կեանք դուրս եկաւ խաւարէն: Մէկ տարի ետք Աննա իր կուրծքին վրայ բռնած էր փոքրիկ Սամուէլը: Իր յղացուելէն առաջ Աստուծոյ նուիրուած այդ պատանին վերարթնութիւն պիտի բերէր Իսրայէլի մէջ: Այն ինչ որ Աննա փափաքած էր եւ անոր համար աղօթած էր տարիներ չշնորհուեցաւ իրեն մինչեւ որ ան պատուեց այն քահանան, որ անարգեց զինք: Հարցը շատ կապ չունէր քահանային վարմունքին հետ. անիկա աւելի կապ ունէր Աննայի զայն անկեղծօրէն պատուելուն եւ անոր իշխանութեան ենթարկուելուն հետ:

Ո՞վ է Դատաւորը

Ասկէ քաղուելիք հոյակապ սկզբունք մը կայ. երբ Աստուած Իր իշխանութիւնը կը դնէ անձի մը վրայ, անկախ անոր անձնական վարմունքէն, մենք տակաւին կրնանք անոր միջոցաւ օրհնութիւններ ստանալ եթէ մենք ասկէ անդին նայինք եւ պատուենք զինք իբրեւ մէկը, որ Աստուծոյ կողմէ դրկուած է: Յիսուս յստակ դարձուց, թէ մենք օրհնութիւններ պիտի ստանանք նոյնիսկ փտած ղեկավարներէ, ինչպէս Աննայի հետ պատահեցաւ: Ան ըսաւ. «Շատեր պիտի ըսեն ինձի. “Տէր, Տէր, չէ՞ որ քու անունովդ Աստուծոյ պատգամները փոխանցեցինք, քու անունովդ չար ոգիներ դուրս հանեցինք եւ քու անունովդ բազմաթիւ հրաշքներ գործեցինք”»: Այն ատեն պիտի յայտարարեմ անոնց. “Բնա՛ւ ձեզ չեմ ճանչնար: Հեռացէ՛ք ինձմէ դուրս բոլորդ, որ չարիք կը գործէք”» (Մտ 7.22-23):

Երբ կը կարդանք այդ համարը, մենք շատ յաճախ կը կեդրոնանանք այն *շարեքրուն* վրայ, որոնք հրաշագոր-

21 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

ծութիւններ ըրին Յիսուսի անունով, բայց մերժուեցան Անկէ: Ատիկա իրապէս շատ լուրջ բան մըն է եւ սթափեցնող: Բայց նայինք դրամին միւս կողմն ալ. կային անոնք, որոնք իսկական ծառայութիւն ստացան այդ անօրէնութիւն գործողներէն: Անոնք ստացան, որովհետեւ Աստուծոյ քով հասան անոնց միջոցաւ, ինչպէս Աննան: Անոնք, որոնց մասին Յիսուս խօսեցաւ, նման էին Հեղիին, որուն տան վրայ Աստուած յաւիտենական դատաստան բերաւ:

Ես այս գիրքը գրած եմ ո՛չ թէ փտած ծառայողներուն, այլ՝ իշխանութեան տակ եղողներուն համար: Սուրբ Գիրքերուն մէջ յստակօրէն կը տեսնենք, թէ կան փտած իշխանութիւններ եւ բարեպաշտ իշխանութիւններ: Եթէ իշխանութեան տակ եղողները դատելու լուծը իրենք իրենց վրայ առնեն, անոնք այլեւս ենթարկուած չեն ըլլար հաստատուած իշխանութիւններուն, այլ՝ իրենք զիրենք բարձրացուցած կ'ըլլան իբրեւ դատաւորներ իրենց ղեկավարներուն վրայ: Անոնց սիրտերը հպարտութեամբ բարձրացած կ'ըլլան անոնց վրայ, զորս Աստուած դրած է իբրեւ իշխանութիւն իրենց վրայ: Անոնք իրենք զիրենք բարձրացուցած կ'ըլլան Աստուծոյ դրած կարգէն եւ Աստուծոյ խորհուրդէն վեր: Անոնք անգիտակցաբար Աստուծոյ կ'ըսեն. «Դուն պէտք եղած ձեռով չես դատեր, ուստի ես իմ ձեռովս պիտի լուծեմ հարցերը»:

Աննա ճանչցաւ Հեղիի կեանքին վրայ դրուած Աստուծոյ իշխանութիւնը եւ պատուեց զանիկա: Հեղի դատեց եւ անարգեց Աննան, սակայն Աննա պատուեց զայն: Եթէ ան իր տեսածով եւ լսածով առաջնորդուէր, կրնար անոր վարմունքը դատել եւ հարցականի տակ առնել: Սակայն Աննա բնական տրամաբանութեամբ չէր ապրեր, այլ՝ Տիրոջ եւ աստուածային իշխանութեան նկատմամբ վախով: Ան կը վստահէր Աստուծոյ, որ արդարօրէն կը դատէ:

Աննա գիտէր այն ինչ որ Յիսուս հետագային հաստատեց.

«Լաւ գիտցէք, թէ ով որ կ'ընդունի ան՝ որ ես պիտի զրկեմ՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս կ'ընդունի՝ ընդունած կ'ըլլայ զիս զրկողը» (Յի 13.20): Լաւ յիշէ՛, որ Յիսուս Յուդան իշխանութեամբ զինեց եւ զրկեց հրաշքներ գործելու եւ դէտեր հանելու, հակառակ անոր որ գիտէր, որ ան վերջաւորութեան պիտի յայտնուէր իբրեւ չարագործ մը. «Չէ՛ որ ես էի որ ձեզ՝ տասներկուքդ ընտրեցի. բայց ձեզմէ՛ մէկը սատանայ է» (Յի 6.70): Յիսուս գիտէր ատիկա Աստուծոյ վախին մէջ գտնուող զանազանութեամբ, նոյնիսկ նախքան որ անոր մեղքը բացայայտուէր: Յուդա հրաշագործութիւններ ըրաւ եւ միւսներուն հետ միասին վերադարձաւ ցնծալով, թէ՛ դէտերը իրեն կ'ենթարկուէին Յիսուսի անունով (տես Մր 6.7-13: Ղկ 10.17): Մարդիկ ծառայութիւն ստացան Յուդայի ձեռամբ. նոյն այն ձեռքերէն, որոնք ծառայութեան զանձանակէն դրամ գողցած էին... Այր:

Երբ Հեռանալ

Շատ կարեւոր կէտ մը պիտի նշեմ: Եթէ բացայայտուի, որ եկեղեցիին իշխանութիւնը փտածութեան կամ մեղքի մէջ է, պէտք չէ շարունակենք խմել անոր պղծուած շատրուանէն: Մեզի յստակօրէն կը թելադրուի ետ քաշուիլ: Եթէ դեկավար մը շնութեան, միասեռականութեան, կեղեքումի, գողութեան, հերետիկոսութեան կամ այլ տեսակի մեղքի մը մէջ է եւ դուն գիտես այդ մասին, կամ բացայայտուած է ատիկա հանրութեան, եւ ան տակաւին անզիղջ կը մնայ, դուրս եկուր անոր ծառայութենէն: Աստուածաշունչը յստակ է այդ հարցին մէջ: Մենք նոյնիսկ պէտք չէ ճաշենք այդպիսի մարդու մը հետ (տես Ա.Կր 5.9-11): Հեղիի պարագային, յստակ չէ, թէ Աննա ամբողջովին տեղեմկ էր Հեղիի եւ անոր որդիներուն փտած վարմունքներէն կամ ոչ: Այն մարդիկը, որոնք ծառայութիւն ստացան Յուդայէն, շատ հաւանաբար

անտեղեակ էին անոր գող եւ հաւանական դաւաճան ըլլալէն:

Եկեղեցւոյ ղեկավարութեան ակնարկելով, Պօղոս ըսաւ. «Կարգ մը մարդոց մեղքերը ակներեւ (բոլոր աչքերուն բացայայտօրէն երեւելի) են, եւ իրենց առջեւէն կ'երթան դատաստանի [աթոռին առջեւ]՝ սկիզբէն յայտարարելով իրենց դատավճիռը: Բայց ուրիշներու մեղքերը յետոյ կը յայտնուին [յանցանք գործողին կը հետեւին դէպի դատաստանի ատեան եւ հոն ի յայտ կու գան]» (Ա.Տմ 5.24)²²:

Եզրակացութիւն. եթէ ղեկավարի մը կեանքը փտած է եւ Աստուծոյ դատաստանը տակաւին յայտնի չէ իր կեանքին մէջ, անիկա պիտի գայ կամ այս կեանքին մէջ կալ ալ գալիքին: Պէտք չունիս դատելու կամ բան մը բացայայտելու եթէ վստահ չես: Շատեր կը գործեն կասկածներու հիման վրայ, եւ շատ յաճախ ճշգրիտ չեն ըլլար իրենց գնահատումին մէջ եւ լուրջ վստաս կը հասցնեն իրենք իրենց եւ իրենց շուրջիններուն: Անոնց բերանէն կը փախի այն ինչ որ կը կասկածին (եւ որուն մէջ սխալ են): Անոնք իրենց գաղափարները կ'արդարացնեն իբրեւ հոգեւոր զանազանութիւն: Անոնք դժուար կը դարձնեն ուրիշներու համար, որ օրհնութիւն ստանան կարգուած ղեկավարներէ, եւ շատեր կը փախցնեն այն ինչ որ Աստուած կը փափաքէր իրենց տալ: Ատոր համար Աստուած կը զգուշացնէ՝ «Ուեւ երէցի մասին եղած ամբաստանութիւն մի՛ ընդունիր, առանց երկրորդ կամ երրորդ վկաներ լսելու» (Ա.Տմ 5.19): Վկան ան է, որ կրնայ փաստ բերել, ոչ թէ՛ ըսիրսաւ:

Աստուած ամէն բան կը դատէ իր ժամանակին, եւ եթէ Ան ժամանակը յարմար տեսնէ ղեկավարի մը անզիղջ մնացած սխալները բացայայտելու կամ անհրաժեշտ համարէ աստիկա ընելը, վստահաբար տեղեակ պիտի ըլլաս ատկէ եւ ժամանակը եկած պիտի ըլլայ, որ դուրս գաս այդ իշխանութեան տակէն: Պօղոս կ'ըսէ. «Եթէ ղեկավարներէն

22 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անիլիֆայր Պայպլը (AMP)* տարբերակէն

ոեւէ մէկը շարունակէ մեղք գործել, պէտք է յանդիմանուի ամբողջ խումբին դիմաց՝ իբրեւ զգուշացում մնացեալներուն» (Ա.Տմ 5.20)²³: Զգուշացում. մի՛ մասնակցիք անոնց մեղքերուն եւ դուրս եկէք անոնց իշխանութեան տակէն բացի եթէ անոնք ճշմարիտ զղջում ունենան:

Ժամանակ մը կը ծառայէի ղեկավարի մը տակ, որուն կեանքին մէջ վերջաւորութեան բացայայտ մեղք գտնուեցաւ: Ես հոն չէի երբ դէպքը պատահեցաւ, քանի որ արդէն տեղափոխուած էինք ուրիշ նահանգ մը, ուր պիտի ծառայէի իբրեւ պատանհներու հովիւ: Մեր տեղափոխուելէն քանի մը տարի ետք, այդ հովիւը ոտքի ելաւ հաւատացեալներու ամբողջ մարմինին դիմաց եւ ըսաւ, որ պիտի ամուսնալուծուէր իր կնոջմէն, քանի որ այլեւս չէր ուզեր անոր հետ ապրիլ: Կարճ ժամանակ մը ետք, ան անելի երիտասարդ կնոջ մը հետ ամուսնանալու իր ծրագիրները բաժնեկցեցաւ: Անոր կինը անմեղ էր սեռային որեւէ սայթաքումէ: Հովիւը պարզապէս միւս կնոջ հետ ըլլալ կ'ուզէր:

Այդ ժամանակ հազարաւորներ ձգեցին անոր եկեղեցին: Անոնք ատիկա ըրին լաւ պատճառով մը: Մնացողները սկսան նաւարկել վտանգաւոր ջուրերու մէջ, տրուած ըլլալով, որ այդ եկեղեցւոյ վարդապետութիւնը եւ ուսուցումը հետզհետէ անելի եւ անելի խեղաթիւրուեցաւ՝ պատշաճելով ղեկավարին եւ անոր նոր կնոջ նպատակներուն: Գիտեմ շատեր, որոնք ձգեցին այդ եկեղեցին եւ բարգաւաճեցան, քանի որ մերժեցին խօսիլ այդ հովիւին դէմ: Անոնք, որոնք յարձակումներ գործեցին անոր դէմ՝ տուժեցին:

Տարիներ ետք մեր ընտանիքը սկսաւ յաճախել ուրիշ հանրաժանօթ եկեղեցի մը, որուն հովիւը բացայայտ մեղքի մէջ կ'ապրէր, բայց Աստուած եղանակի մը համար ծածկուած կը պահէր ատիկա: Կարեւոր կողմնակի նշում մը. Տէրը

23 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Քոնթեմպորրըրի Ինկլիշ Վըրժըն* (CEV) տարբերակէն

երկայնամիտ է: Կը յուսար, որ այդ ղեկավարը ետ կը դառնար իր մեղքէն: Ան կը սիրէ այդ ղեկավարը, ուստի ժամանակ կու տար զղջումի: Վերջապէս Աստուծոյ համբերութիւնը հատաւ եւ մեր հովիւին մեղքը բացայայտուեցաւ: Ան յարաբերութեան մէջ էր միասեռական մարմնավաճառի մը հետ ինչպէս նաեւ թմրեցուցիչ կը գործածէր: Լուրը ցնցիչ էր եւ շատ լայն տարածում եւ ազդեցութիւն ունեցաւ, տրուած ըլլալով, որ ան ղեկավարն էր Աւետարանական Եկեղեցիներու Ազգային Ընկերակցութեան՝ շուրջ յիսուն հազար եկեղեցիներու խումբ մը:

Սակայն այդ ողբերգութեան վերջը նախկինէն շատ տարբեր եղաւ: Եկեղեցւոյ վերահսկիչները՝ հովիւներ չորս ուրիշ եկեղեցիներէ, անմիջապէս օգնութեան հասան եկեղեցիին եւ հովիւէն պահանջեցին, որ ներողութեան եւ պաշտօնէն հրաժարելու նամակ մը գրէր: Եկեղեցւոյ համայնքը պաշտպանուած զգաց եւ մեծ մասը մնաց եկեղեցիին մէջ: Նոր հովիւ մը նշանակուեցաւ եւ եկեղեցին վերջաւորութեան աճեցաւ ունենալու աւելի մեծ թիւ քան նախորդ հովիւին օրով:

Աւելի քան երեսունհինգ տարի ծառայութեան մէջ ըլլալով, ես ականատես եղած եմ բազմաթիւ այդպիսի ողբերգական կացութիւններու: Շատ կարեւոր է, որ այդ ինկած ղեկավարներուն իշխանութեան տակ եղողները բարեպաշտ կեցուածք որդեգրեն: Դաւիթ օրինակ էր պատշաճ վարմունք ցուցաբերողի մը: Դեւերու կողմէ տանջուող թագաւորի մը ներկայութենէն վնասուելէն ետք իսկ ան պատուեց Սաւուղը մինչեւ անոր մահուան օրը: Դաւիթ հասկցած էր, որ Սաւուղ Տիրոջ օճեալ ծառան էր: Մինչեւ այսօր ես կը ջանամ պատուել վերը նշուած երկու հովիւները, հակառակ անոր որ կը ցաւիմ անոնց ընտրութիւններուն հետեանքներուն համար եւ սիրտս կտորած է այդ պատահած ողբերգական անկումներուն պատճառով: Հակառակ անոր որ կը պատուեմ երկուքը, բայց այլեւս չեմ կրնար ապահով կամ առողջ համարել անոնց

վարդապետութիւնը կամ ծառայութիւնը, տրուած ըլլալով, որ վերականգնումը անտեսուեցաւ առաջինին պարագային եւ կէս ճամբան մնաց երկրորդին պարագային:

Տարբեր եղանակներու ընթացքին ես մեծապէս օրհնուած եմ այդ երկու մարդոց կողմէն ալ: Յետագային գիտցայ, որ անոնց անբարեպաշտ վարմունքը սկսած էր այն ժամանակներէն երբ ես կ'օրհնուէի իրենց ուսուցումներէն: Կային կարգ մը անյստակ նշաններ երկուքին ալ պարագային, բայց բացայայտ բան մը չկար: Երբ առաջին հովիւին տակ կը գործէի եւ առիթով մը քննադատական կեցուածք մը ունեցայ, Աստուած յանդիմանեց զիս: (Այդ մասին պիտի պատմեմ յաջորդ գլուխին մէջ:) Թերեւս Աստուած կը փորձէր հասնիլ այդ մարդուն: Այդ ատեն իմ գործս չէր բնաւ զայն քննադատելը: Աստուած զիս դրած էր անոր իշխանութեան տակ, եւ իմ գործս չէր դատելը թէ՛ կ'արժէր ստանալ անոր ձեռքէն կամ ոչ: Ճիշդ ինչպէս Աննա ստացաւ Հեղիէն, շատեր ալ ստացան այդ մարդէն այն ժամանակներուն:

Հոգեւոր Իշխանութեան Կարգը

Վերադառնանք Յիսուսի խօսքերուն՝ այս անգամ բարեպաշտ ղեկավարի մը մասին եւ ոչ թէ Հեղիի նման մարդու մը: Կարդանք Իր խօսքերը Մատթէոսի Գիրքէն.

Ան որ ձեզ կ'ընդունի՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս կ'ընդունի՝ զիս դրկողը ընդունած կ'ըլլայ: Ով որ մարգարէ մը կ'ընդունի մարգարէ ըլլալուն համար՝ մարգարէի յատուկ վարձատրութիւն պիտի ստանայ, եւ ան որ արդար մը կ'ընդունի արդար ըլլալուն համար՝ արդարի վարձատրութիւն պիտի ստանայ: Եւ ով որ այս փոքրիկներէն մէկուն նոյնիսկ գաւաթ մը պաղ ջուր կու տայ խմելու՝ իմ աշակերտս ըլլալուն համար, վստահ եղէք որ իր վարձատրութիւնը պիտի չկորսնցնէ: (Մտ 10.40-42)

Այս համարներուն մէջ Յիսուս երկու կէտ կը փոխանցէ: Նախ եւ առաջ, կայ իշխանութեան հոսք մը, որ կը սկսի Հօրմէն: Հայրն էր, որ դրկեց Յիսուսը եւ ամէն իշխանութիւն տուաւ Անոր: Յիսուսի խօսքերով. «Ամէն իշխանութիւն տրուեցաւ ինձի երկինքի մէջ եւ երկրի վրայ» (Մտ 28.18): Յիսուս Եկեղեցիին Գլուխն է եւ օրը պիտի գայ երբ Ան Թագաւորութիւնը Իր Հօրը պիտի յանձնէ՝ ամէն ըմբոստութիւն Անոր ոտքին տակ դնելէ ետք (տե՛ս Ա.Կր 15.24-26):

Այդ իշխանութեան կարգին մէջ յաջորդը մարգարէն է: Սկիզբը Սուրբ Գիրքերուն մէջ մարգարէները կը նկարագրուին իբրեւ Տիրոջ խօսնակները (տե՛ս Ելք 4.16, 7.1): Ատիկա կը ներկայացնէ այն հնգեակ ծառայութեան պարգեւներէն մէկը, զոր Ան տուաւ Եկեղեցիին երբ մեռելներէն յարութիւն առաւ (տե՛ս Եփ 4.8-13): (Անոնք Եկեղեցւոյ խօսնակներն են:) Երբ կը ստանանք ծառայութեան պարգեւ մը, Տիրոջմէ կը ստանանք այն ինչ որ Ինք կու տայ՝ յանձնարարուած իշխանութեան այդ պաշտօնին միջոցաւ:

Ապա Ան կ'անցնի արդար մարդոց եւ դուրս չի ձգեր փոքրիկները: Ես տեսած եմ անհաւատներու օրհնուիլը, որովհետեւ բարիք ըրած են ամէնէն մանուկ հաւատացեալներու: Հակառակ անոր որ անհաւատները չէին ծառայեր Աստուծոյ, անոնք յարգանք ցոյց տուին անոնց Տիրոջ: Երբ կ'ընդունինք եւ կ'օրհնենք սուրբերը, մենք վերջաւորութեան ընդունած եւ օրհնած կ'ըլլանք Հայրը: Աշակերտները՝ որոնց մէջ կան նաեւ փոքրիկներ, կ'ենթարկուին եկեղեցւոյ հնգապատիկ իշխանութեան՝ Յիսուսի գլխաւորութեամբ, որ կ'արտայայտէ Հօրը կամքը: Հետեւաբար չփրկուածները կը մտնեն Քրիստոսի մէջ մանուկներուն օրհնութեան տակ, որովհետեւ Թագաւորութեան մէջ ամէնէն յետինը անելի մեծ հոգեւոր իշխանութիւն ունի քան չփրկուածները: Յիսուսի խօսքերէն կը տեսնենք հաստատուած իշխանութեան կարգ մը:

Հոգեւոր Իշխանութիւն Ստանալուն Վարձատրութիւնը

Վերի համարներուն մէջ հաղորդուած երկրորդ կէտն է՝ այդ ծառայողները ընդունիլ իբրեւ վերջ ի վերջոյ Աստուծոյ կողմէ ղրկուածներ եւ համապատասխան վարձատրութիւնը ստանալ: Յիսուսի ծառայութիւնը կու տայ ատոր օրինակը:

Տուեալ քաղաքի մը քաղաքացիները յատկապէս դժուարութիւն կ'ունենային Յիսուսէն ստանալու, հակառակ անոր որ կը քարոզէին Մեսիային մասին իրականութիւնը եւ գիտէին Սուրբ Գիրքերէն, որ Անոր գալուն եղանակն էր: «Յիսուս ըսաւ անոնց. “Մարգարէն իր հայրենի քաղաքին, գերդաստանին եւ ընտանիքին մէջ յարգ չունի”: Եւ *չկրցաւ* որեւէ հրաշք գործել հոն, բայց միայն սակաւաթիւ հիւանդներ բժշկեց՝ անոնց վրայ ձեռքերը դնելով» (Մր 6.4-5, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Մենք ընդունած կ'ըլլանք մէկը իբրեւ Աստուծոյ կողմէ ղրկուած մը երբ կը պատուենք անոր դիրքը կամ պաշտօնը: Աստուած Մովսէսի միջոցաւ ըսաւ ժողովուրդին. «Քեզի նման մարգարէ մը պիտի հանեմ անոնց՝ իրենց եղբայրներուն մէջէն» (Բ.Օր 18.18): Բայց անոնք չպատուեցին Յիսուսը իբրեւ Հօրը քովէն եկած Խօսնակը կամ Մեսիան:

Ինչո՞ւ չընդունեցին զինք: Որովհետեւ Ան չեկաւ այն ձեւով, որ իրենք կուզէին, որ գար: Անոնց ակնկալութիւնները շատ տարբեր էին այն Անձէն, որ Ան իրականութեան մէջ էր: Անոնք Եսայիի մէջ կարդացած էին.

Որովհետեւ մեզի զաւակ մը ծնաւ,
Մեզի որդի մը տրուեցաւ,
Եւ գերիշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ [...]
Անոր գերիշխանութեան մեծնալուն ու խաղաղութեան

Սահման պիտի չըլլայ՝

Դաւիթի գահին վրայ եւ անոր թագաւորութեան վրայ,

Որպէսզի զայն իրաւունքով ու արդարութեամբ

Հաստատէ եւ ամրապնդէ: (Ես 9.6-7)

Ուստի անոնք կը սպասէին նուաճող թագաւորի մը գալուն, որ պիտի ազատէր զիրենք հռոմայական ճնշումէն եւ հաստատէր իր թագաւորութիւնը Երուսաղէմի մէջ: Բայց փոխարէնը Ան եկաւ իբրեւ ատաղձագործի մը որդին, որ շրջապատուած էր ձկնորսներով, նախկին պոռնիկներով եւ մաքսաւորներով: Անոնք իրենք իրենց մէջ կ'ըսէին՝ «Ասիկա չէ այն ձեւը, որով կ'ուզէինք կամ կ'ակնկալէինք, որ գար Մեսիան»:

Առաւել, նկատի առ, որ Սուրբ Գիրքերը մեզի կ'ըսեն, թէ Յիսուս «չկրցաւ» որեւէ հրաշք ընել: Չեն ըսեր, թէ՝ «Ան չուզեց ընել», ինչ որ կապ պիտի ունենար Անոր կամքին հետ: Կ'ըսէ՝ «Չկրցաւ», ինչ որ նշանակէ, թէ Ան արգելքի մը հանդիպած էր: Մտածէ՛ պահ մը: Աստուծոյ Որդին՝ լեցուած Սուրբ Հոգիով առանց չափի, արգելքի մը հանդիպած... Ինչո՞ւ: Պատասխանը երկպատիկ է. Ան չէր եկած այն ձեւով, որ իրենք կ'ուզէին, ուստի չընդունեցին կամ չպատուեցին զինք, եւ անոնք մօտէն ծանօթ էին իրեն. Ան սովորական մէկն էր իրենց համար: Մտիկ ընենք անոնց բառերուն.

Ժողովարանին մէջ սկսաւ ուսուցանել: Շատեր երբ կը լսէին, կը զարմանային անոր ուսուցումներուն վրայ եւ կ'ըսէին. «Ասիկա ուրկէ՞ այսչափ բան գիտէ: Այս ի՞նչ իմաստութիւն է, որ տրուած է իրեն: Ի՞նչպէս այսպիսի հրաշքներ կը կատարէ: Ասիկա ատաղձագործին եւ Մարիամի զաւակը չէ՞, Յակոբի, Յովսէփի, Յուդայի եւ Սիմոնի եղբայրը: Իր քոյրերը հոս մեր մօտ չեն բնակիր»: Եւ այս պատճառով կը դժուարանային հաւատալ իրեն: Յիսուս ըսաւ անոնց. «Մարգարէն իր հայրենի քաղաքին, գերդաստանին եւ ընտանիքին մէջ յարգ չունի»: (Մր 6.2-4, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ո՞ր է, որ մարգարէ մը պատիւ չ'ստանար: Շատ յաճախ ատիկա կը պատահի իր տան եւ իր ժողովուրդին մէջ: Դաւիթ այդ կացութիւնը դիմագրաւեց երբ տուն եկաւ իր ընտանիքը օրհնելու համար: Անոր յաղթանակը կը տօնէին ճամբաներուն մէջ, բայց ան անարգուեցաւ իր տան մէջ: Մեղքող չստացաւ այն օրհնութիւնը, որ Աստուած կանխորոշած էր իրեն համար: Դաւիթ ունէր իր ընտանիքը օրհնելու իշխանութիւնը: Ո՛րքան ատելի Յիսուս լիագօրուած էր օրհնելու Իր ժողովուրդը: Հակառակ անոր որ Ան անսահման էր օրհնելու Իր զօրութեան կամ իշխանութեան մէջ, Ան չկրցաւ շատ բան ընել անոնց համար (կարդա՛ Բ.Թգ 6):

Միայն անոնք, որոնք ծարաւ էին Աստուծոյ համար, սորվելու ատակ էին եւ Աստուծոյ առջեւ խոնարհ սիրտ ունէին, կրցան տեսնել Աստուծոյ ձեռքը Յիսուսի վրայ եւ կրցան ստանալ Անկէ: Ան այն Սուրն էր, որ բաժնեց Իր ժողովուրդը եւ մէջտեղ հանեց սիրտերը անոնց, որոնք իրապէս զԱստուած կը փնտռէին եւ անոնց, որոնք ունէին տեսակ մը բարեպաշտութիւն, բայց կուրցած էին իրենց անհնազանդ կամ ըմբոստ սիրտին պատճառով: Ինչպէս Սիմոն ըսաւ Մարիամի՝ Յիսուսի մօրը. «Այս մանուկը Իսրայէլի ժողովուրդէն շատերու անկումին եւ շատերու փրկութեան պատճառ պիտի ըլլայ: Անիկա նաեւ հակառակութեան նշան պիտի ըլլայ եւ շատերու սիրտերու խորհուրդները պիտի յայտնէ: Գալով քեզի, քու ալ սիրտդդ սուր մը պիտի անցնի» (Ղկ 2.34-35):

Յի 1.11-12-ը կը նկարագրէ հետեւեալ երկու անջատ խումբերը. «Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց իր իսկ ստեղծած մարդիկը զինք չընդունեցին: Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու»: Ասիկա հիմնական ճշմարտութիւն մը կը յայտնէ բոլորիս: *Շարք անգամ Աստուած մեզի պիտի դրկէ այն ինչ որ պէտք ունինք՝ ծրարի մը մէջ, որ չենք ուզեր:* Այդ ներկայացման

ձեւը մէջտեղ պիտի հանէ մեր սիրտի ճշմարիտ վիճակը՝ բացայայտելով մեր Անոր իշխանութեան ենթարկուած ըլլալը կամ անոր ընդդիմացող ըլլալը: Յիսուս ըսաւ. «Դուք ո՛չ զիս կը ճանչնաք, ո՛չ ալ Հայրս: Որովհետեւ եթէ զիս ճանչնայիք՝ Հայրս ալ ճանչցած պիտի ըլլայիք» (Յի 8.19): Անոնք, որոնք կը ճանչնան Հայրը, կը ճանչնան Անոր իշխանութիւնը յայտնուած անոնց մէջ, զորս Ինք կը դրկէ: Անիկա պայման չէ, որ բացատրուի, սորվեցուի կամ փաստուի:

Ատիկա կը բացատրէ, թէ ինչո՞ւ ծառայող մը կ'երթայ Ափրիկէ եւ կը տեսնէ կոյր աչքերու բացուիլը, անդամալոյծներու քալելը եւ խուլերու լսելը, եւ ապա կը վերադառնայ Ամերիկա եւ միայն քանի մը գլխացաւի եւ կոնակի պզտիկ հարցերու բուժուիլը կը տեսնէ: Կրնամ բազմաթիւ օրինակներ տալ: Ափրիկէի մէջ ծառայող տղամարդը կամ կինը կ'ընդունուի իբրեւ Աստուծոյ կողմէ դրկուած մէկը՝ անկախ իր արտաքին երեսոյթէն կամ ծրարումէն: Այդ ձեւով ալ ընդունուելուն եւ պատուուելուն պատճառով, Ափրիկէի թանկագին բնակչութիւնը կ'օրհնուի Աստուծոյ զօրութեամբ եւ ներկայութեամբ: Ամերիկայի մէջ, եթէ ծրարումը ճիշդ պէտք եղածին պէս չէ, պատիւը կը զլացուի կամ ետ կը պահուի: Անիկա համեմատական է: Այն աստիճան, որ կ'ընդունիս եւ կը պատուես պատգամաբերը իբրեւ Աստուծոյ կողմէ դրկուած մէկը, այդ աստիճան կը ստանաս Աստուծմէ՝ այդ մարդուն միջոցաւ: Անպատուէ, եւ ատիկա պիտի ըլլայ քու ընդունածդ: Մեծ պատիւ տուր, եւ պատիւ պիտի ըլլայ քու բաժինդ:

Ընկերս Կ'ըլլամ

Երբ պատանիներու հովիւ էի, հետաքրքրական հանդիպում մը ունեցայ տասնհինգ տարեկան պատանիի մը հետ, զոր պիտի կոչեմ՝ Թիմ: Նախքան որ ծառայութեան սկսիմ, Թիմ նախորդ պատանիներու հովիւին խումբին մէջն էր: Հովիւը այդ խումբը կազմած էր զանազան

գործունէութիւններու, պտոյտներու եւ մարգախաղերու մասնակցութեան ճամբով: Պատանիներուն դիմագրաւած հարցերն էին՝ անհնազանդութիւն, պատանի տարիքի յղութիւն եւ այլ բարոյական հարցեր: Ժամանակ մը ետք աւագ հովիւը արձակեց այդ հովիւը իր պաշտօնէն եւ ինծի առաջարկեցին այդ ծառայութիւնը: Նախկին պատանիներու հովիւը քանի մը մղոն անդին իր սեփական եկեղեցին սկսաւ՝ խումբ մը երիտասարդներով: Թիմը անոնցմէ էր, որ չգնաց անոր հետ:

Հակառակ անոր որ պատանիներուն մեծ մասը մնացած էին եկեղեցիին մէջ, ես պէտք ունէի նոր հիմեր դնելու: Տէրը ինծի թելադրեց, որ առաջին վեց ամիսը միայն քարոզեմ, աղօթենք եւ պաշտամունք ընենք: Այդ ամիսներուն ոչ մէկ տեսակի ընկերային գործունէութիւն չծրագրեցի: Պէտք չկայ ըսելու, որ ես ունէի «ծրարում» մը, որ ոչ ոք կ'ակնկալէր: Իբրեւ արդիւնք, Տիրոջ սուրը անցաւ մեր մէջէն: Ոմանք ձգեցին-գացին, ուրիշներ մնացին հետաքրքրութեան պատճառով եւ տակաւին ուրիշներ խանդավառուեցան. անոնցմէ շատեր ծառայողներ են այսօր:

Ես այդ ծառայութեան մէջ էի շուրջ չորս ամիսէ ի վեր երբ գիշեր մը ծառայութենէն ետք խօսեցայ Թիմի հետ: Ան անկեղծօրէն հարցուց. «Հովիւ ճոն, ընկերս կ'ըլլամ: Իմ նախկին հովիւս իմ ընկերս էր»: Ես իր փափաքած ծրարումին յարմարող անձը չէի:

Անոր հարցումը պէտք չէր թերթութեամբ առնուեր, եւ դէպի ներս կեդրոնացայ՝ գիտնալու համար, թէ ինչպէս պէտք էր պատասխանէի: Պատասխանը անմիջապէս եկաւ ինծի հարցումի մը ձեւով. «Թիմ, Յիսուս ըսաւ՝ “Ով որ մարգարէ մը կ'ընդունի մարգարէ ըլլալուն համար՝ մարգարէի յատուկ վարձատրութիւն պիտի ստանայ” (Մտ 10.41): Ատիկա կը վերաբերի նաեւ պատանիներու հովիւին: Եթէ հովիւ մը

ընդունիս հովիւ ըլլալուն համար, հովիւի մը վարձատրութիւնը պիտի ստանաս»:

Շարունակեցի. «Թիմ, դուն մեծ թիւով ընկերներ ունիս, չէ»:

Ան պատասխանեց. «Այո, հովիւ»:

«Բայց դուն միայն մէկ հովիւ ունիս, չէ»:

Պատասխանեց. «Այո, հովիւ»:

Հարցուցի. «Ի՞նչ կ'ուզես. ընկերո՞ջ մը վարձատրութիւնը կամ պատանհներու հովիւի մը վարձատրութիւնը: Որովհետեւ այն ձեռով, որ կ'ընդունիս զիս, այդ վարձատրութիւնը պիտի ստանաս Աստուծմէ»:

Կարծես լոյս մը վառեցաւ անոր մէջ: Իր աչքերուն մէջ տեսայ, թէ ինչպէս ըսածս իբրեւ յայտնութիւն արձանագրուեցաւ իր մէջը, եւ անմիջապէս պատասխանեց. «Հովիւի վարձատրութիւն կ'ուզեմ: Հասկցայ ձեր ըսածը»: Այդ օրէն ետք ան ծաղկեցաւ: Ան ուրիշ քաղաք տեղափոխուեցաւ քանի մը տարի ետք, բայց տակաւին կու գար եւ զիս կը գտնէր ամէն անգամ, որ իր քաղաքին մէջ ծառայութիւն մը ունենայի:

Իմ Անձնական Փորձառութիւնս

Գիրք մը գրած եմ այս նիւթին մասին, որուն վերնագիրն է՝ *Պատիւ Տալուն Վարձատրութիւնը*: Սիրտս կը կոտրուի երբ կը տեսնեմ, որ մարդիկ չեն ստանար Աստուծմէ, քանի որ չեն պատուեր Անոր ծառաները՝ զանոնք ընդունելով: Ծառայութեան մէջ անհամար անգամ տեսած եմ ատիկա. անոնք, որոնց հասնիլը ամէնէն դժուարն է անոնք են, որոնք Աստուծոյ ծառաները պարզութեամբ կ'առնեն: Ես յաճախ այդպիսի մարդիկ տեսած եմ Միացեալ Նահանգներու եկեղեցիներուն եւ Քրիստոնէական դպրոցներուն մէջ: Անոնք այնքան զինովցած են ծառայութիւններու առատ *պիւֆէն*,

որ ես իրենց համար պարզապէս նախապնակ մըն եմ ընտրութիւններու երկար շարքի մը մէջ:

Ամէնէն դիւրին մարդիկը, որոնց կրնաս քարոզել շատ հաւանաբար բանակայիններն են, որոնք կը հասկնան, թէ ինչ կը նշանակէ իշխանութիւն: Անոնցմէ ետք կու գան բանտարկեալները կամ չզարգացած երկիրներու բնակիչները, որոնք ուրիշ յոյս չունին եւ անօթի են: Աստուած այդ իմաստով բան մը ըսաւ Եզեկիէլին.

Որովհետեւ դուն դժուարիմաց խօսք եւ անըմբռնելի լեզու ունեցող ազգի մը չղրկուեցար, հապա՛ Իսրայէլի տան [...] Իսկապէս եթէ քեզ անոնց զրկած ըլլայի, անոնք քեզ մտիկ պիտի ընէին: Բայց Իսրայէլի տունը պիտի չուզէ քեզի մտիկ ընել, քանի որ չեն ուզեր ինծի մտիկ ընել. արդարեւ Իսրայէլի ամբողջ տունը պնդերես ու խստասիրտ է: (Եզ 3.5-7)

Իսրայէլի համար Եզեկիէլ պարզապէս մէկ ուրիշ մարգարէ մըն էր, որ աւելի խիստ էր քան միւսները, որոնք կը քարոզէին այն ինչ որ ժողովուրդը կ'ուզէր լսել: Ուստի ժողովուրդը չընդունեց Եզեկիէլը:

Օր մը Աստուած շուարցուց զիս հետեւեալ խօսքով. *Քեզ պիտի զրկեմ տեղեր, ուր պիտի չընդունին քեզ:*

Հարցուցի՝ «Ուրեմն պիտի զրկես զիս տեղեր, ուր նախքան զրկելը գիտես, որ պիտի չընդունին այն ինչ որ ունիմ ըսելու: Ինչո՞ւ»:

Տէրը պատասխանեց. *Այդպիսով անոնք բնաւ պիտի չկարենան ըսել, որ առիթ չտուի իրենց:*

Ես զացած եմ այդ տեղերը, եւ հոն եղած ատենս մտածած եմ. *Չիս ինչո՞ւ կանչեցին որ: Այնպէս կը վարուին, որ կարծես չեն ուզեր, որ հոս ըլլամ:* Ուրիշ առիթներով զացած եմ տեղեր, ուր (օգակայանին մէջ դիմաւորուած պահէս մինչեւ մեկնելու համար օգակայան տարուիլս) ինծի հետ վարուած

են խանդավառութեամբ, ազնուութեամբ եւ պատիւով. ծառայութենէն առաջ եւ ետք: Պանդոկի սենեակիս մէջ ինծի համար դրած եղած են պտուղներով եւ թեթեւ ուտելիքներով լեցուն կողով մը, եւ շարունակ ինծի հարցուցած են եթէ բանի մը պէտք ունէի: Ես յաճախ արուած ծայնապնակի պէս զգացած եմ երբ շարունակ կրկնած եմ՝ «Չէ, լաւ եմ, բան մը չեմ ուզեր», «Չէ լաւ եմ, բան մը չեմ ուզեր»: Յետադարձ նայուածքով, կը տեսնեմ, որ անհատներու կեանքերու կամ եկեղեցիներու փոփոխութեան մասին ամէնէն մեծ վկայութիւնները եկած են այդպիսի տեղերէ: Սկիզբը անհանգիստ կ'ըլլայի երբ այդքան լաւ վարմունքի կ'արժանանայի կամ երբ բուռն կերպով կը ծափահարէին երբ բեմ կը հրաւիրուէի: Կը մտածէի. *Ես ալ ճիշդ ձեզի պէս եմ: Մի՛ ընէք ասիկա:* Բայց շուտով հասկցայ, որ ինծի համար չէին այդ բոլորը:

Կամաց-կամաց Աստուած ինծի հասկցուց ըսելով. *Արքունէ՛, որ պատուեն քեզ իրենց համար, ոչ քեզի:* Աւելի դիւրին եղաւ ատիկա ընդունիլը երբ անդրադարձայ, որ անոնք զիս չէր, որ կը պատուէին, այլ՝ կեանքիս մէջ գործող Աստուծոյ պարգեւը: Անոնց դրական կեցուածքը կը բանար իրենց սիրտերը, որպէսզի ընդունէին Յիսուսէն այն ինչ որ ունէր իրենց տալու իմ միջոցաւ՝ իբրեւ անօթ մը: Հպարտութեան փոխարէն խորունկ խոնարհութիւն եւ Աստուծմէ կախեալ ըլլալու խորունկ կապուածութիւն մը կը զարգանար մէջս: Գիտէի, որ Իր ընտրութեամբ էր, ոչ թէ իմ կարողութեամբս: Ես անոնց տուած պատիւը կ'ուղղէի Իրեն եւ անմիջապէս կը դաւանէի Իրմէ կախեալ ըլլալս: Անոնք, որոնք պատիւ տուին՝ շատ դիւրութեամբ ստացան Աստուծմէ: Անոնք, որոնք չտուին՝ ավելի դժուար էր իրենց հասնիլը:

Կրկնակի Պատիւ

Պօղոս յանձնարարեց, ըսելով. «Այն երէցները, որոնք լաւ վերակացութիւն կ'ընեն եկեղեցիին՝ կրկնակի վարձատրութեան [«կրկնակի պատիւ», ըստ անգլերէն տարբերակին] արժանի թող նկատուին, մանաւանդ անոնք՝ որոնք կ'աշխատին թէ քարոզելով եւ թէ ուսուցանելով» (Ա.Տմ 5.17): Պօղոս ըսաւ՝ «կրկնակի պատիւ», այլ խօսքով՝ երկու անգամը այն պատիւին, որ պիտի տայիր աշխարհիկ իշխանութեան դիրքի մէջ եղողի մը:

Եթէ այդ համարը իր պարունակին մէջ կարդանք, կը տեսնենք, որ անիկա կը խօսի ծառայողները նիւթապէս պատուելու մասին: Ան շարունակեց. «Մշակը իր վարձքին արժանի է» (հմր 18): Աստուածաշունչի անգլերէն *Տի Ամփիլիֆայր Պայպըլ* (AMP) տարբերակը շատ յստակ կերպով կը ներկայացնէ ատիկա. «Այն երէցները, որոնք իրենց պաշտօնին պարտականութիւնները լաւ ձեռով կը կատարեն՝ կրկնակի պատիւի արժանի թող նկատուին [եւ համարժէք/համապատասխան նիւթական նեցուկի], յատկապէս անոնք՝ որոնք հաւատարմօրէն կ'աշխատին քարոզելու եւ ուսուցանելու մարզերուն մէջ» (Ա.Տմ 5.17-18, բառացի թարգմանութիւն): *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակը կ'ըսէ. «Այն երէցները, որոնք իրենց գործը լաւ ձեռով կ'ընեն՝ պէտք է յարգուին եւ լաւապէս վճարուին» (բառացի թարգմանութիւն):

Այդ սկզբունքը բնաւ չի ձախողիր: Եթէ եկեղեցին հոգ տանի իր հովիւներուն եւ երէցներուն, որոնք կը ծառայեն իրեն՝ ընտանիքներ, շուկայի մարդիկ եւ ուրիշ անդամներ կը բարգաւաճին եւ կ'օրհնուին: Անոնք կը վայելեն երկինքի տնտեսութիւնը: Բայց եթէ անոնք կձծի ըլլան, տեսած եմ, որ այդպիսիներ կը գանգատին, թէ իրենցմէ դրամ կը գողցուի եւ թէ սակաւութեան մէջ են, կամ կը գանգատին այս ներկայի

աշխարհի տնտեսութեան վատ պայմաններէն:

Կ'անդրադառնամ, որ այդ ճշմարտութիւնը շահագործուած է հովիւներու կողմէ յատկապէս Արեւմուտքի մէջ: Կը ցաւիմ երբ հովիւներ շարունակ կը խօսին դրամի եւ նիւթական բաներու մասին: Անոնք ունին ճշմարտութիւն մը, բայց կորսնցուցած են ծառայութեան սիրտը եւ շեղած դէպի վարձկաններու ճամբան: Այդպէս կ'ապրէին փարիսեցիները: Պատճառ կ'ըլլային, որ շատեր ետ կենային պատուելու վերաբերեալ սուրբ գրային սկզբունքներէն, որովհետեւ կը տեսնէին փարիսեցիներուն կողմէ անոնց շահագործուիլը: Հովիւներու այդ վարմունքը կը վսասէ իրենց հոգատարութեան տակ եղող մարդոց, որոնք պէտք ունին, որ ճշմարտութիւնը ներկայացուի առողջ ձեւով մը:

Ես այդ վսասը տեսայ ծառայութեան համար ճամբորդութիւններու սկսելուս առաջին տարին՝ 1990-ին: Ծառայեցի շուրջ հարիւր անդամ ունեցող եկեղեցիի մը մէջ: Ծառայութիւններս լաւ անցան, եւ հաւատացեալներու համայնքը շատ քաղցր մարդիկ էին: Իջեւանեցինք հովիւին տունը եւ նկատեցինք, որ նիւթապէս սեղմ վիճակի մէջ էին: Կինը լման ժամով կ'աշխատէր իբրեւ օդանաւի մէջ հիւրընկալող (*հոսթէս*) եւ չէր կրնար մարդոց ծառայել ինչպէս որ կ'ուզէր: Ան չէր ուզեր գործը ձգել եւ եկեղեցիէն ամսական սկսէր առնել, մտածելով, որ ատիկա ծանր կ'ըլլար եկեղեցիին համար: Ես զիրենք շատ լաւ կը հասկնայի: Հովիւը եւ ես ժամանակին կը ծառայէինք նոյն եկեղեցիին մէջ, որուն մասին նշեցի վերը: Մեր այնտեղի հովիւը կը չափազանցէր նիւթականի եւ սիրոյ նուէրներու մասին ուսուցումը: Ուստի երկուքս ալ զգոյշ էինք այդ նիւթին նկատմամբ՝ չուզելով նոյն բանը ընել: Բայց առանց անդրադառնալու զացած էինք միւս ծայրայեղութեան: Սակայն այդ օրերուն Աստուած ինձի կը սորվեցնէր, որ երկու ծայրայեղութիւններն ալ լաւ չէին: Ան կ'ուզէր ատելի ճշմարիտ հաւասարակշռութիւն մը:

Մեր ծառայութիւնները սկսան Կիրակի առտու եւ շարունակուեցան մինչեւ Չորեքշաբթի գիշեր: Առաջին երեքը լաւ էին, բայց բան մը կար, որ ետ կը պահէր եկեղեցին: Երեքշաբթի ամբողջ օրը Աստուած ինծի խօսեցաւ այդ հովիւին մասին եւ եկեղեցւոյ ֆինանսներու կարգաւորման ձեւին մասին: Անդադար այդ մասին կը մտածէի, եւ սակայն ես ինծի հարց կու տայի, թէ՛ ինչ կրնայի ընել:

Ծառայութենէն անմիջապէս առաջ հովիւը ինծի ըսաւ, թէ կ'ուզէր, որ այդ գիշեր հաւաքուելիք սիրոյ նուէրները ես առնէի: Մինչ ամպիոնը ինծի կը յանձնէր, ան ըսաւ. «Քեզի ազատութիւն կու տամ սիրոյ նուէրը յանձն առնելու»:

Ուրախացայ: Անդրադարձայ, որ Աստուած այդ դուռը բացած էր, որպէսզի կարենայի գործել այնպէս ինչպէս ինծի ցոյց տուած էր կամ խօսած էր ամբողջ օրը: Այդ գիշեր խօսեցայ նիւթ մը, որ կը պարունակէր վերը նշածներս: Կարդացինք Առաջին Տիմոթէոսի հատուածը, եւ իրենց ըսի, որ իրենց հովիւը եւ կինը նիւթապէս պէտք եղած ձեւով չէին վարձատրուեր: Յստակ դարձուցի եկեղեցիին, որ ժամանակը եկած էր, որ այլեւս հովիւին կինը ամէն երեք-չորս օրը մէյ մը թռիչք չունենար որպէսզի իրենց ընտանիքի ապրուստը ապահովէր: Ըսի, թէ հովիւը ազատութիւն տուած էր ինծի սիրոյ նուէրը յանձն առնելու, բայց մենք այդ գիշեր հաւաքուած դրամը մեր առաքելութեան համար պիտի չառնէինք, այլ՝ պիտի ձգէինք հովիւին եւ իր կնոջ: Ժողովուրդը շատ խանդավառուեցաւ իրենց հովիւը օրհնելու այդ առիթով եւ պէտք եղած քայլը առաւ: Այդ գիշեր հաւաքուած սիրոյ նուէրը երեք անգամ ատելի մեծ էր քան մինչեւ այդ օրը այդ եկեղեցիին մէջ հաւաքուած ամէնէն մեծ գումարը: Հովիւին կնոջ աչքերը լեցուեցան, իսկ հովիւը ապշած էր:

Պիտի զարմանաք եթէ պատմեմ ձեզի այն ճեղքումները, որ տեղի ունեցան յաջորդ քսանչորս ժամուան ընթացքին:

Զոյգ մը տասը հազար տողարի վճարագիր մը ստացաւ յաջորդ օրը: Ուրիշ մէկը դրան առջեւ թուղթէ պահարան մը գտաւ, որուն մէջ կար հազար հինգ հարիւր տողարի վճարագիր մը: Եւ ատիկա պարզապէս սկիզբն էր: Մինչեւ յաջորդ Կիրակի օրը վկայութիւնները այնքան մեծ եւ շատ էին, որ հովիւը քարոզ չտուաւ: Ամբողջ ծառայութեան ընթացքին մարդիկ վկայեցին, թէ Աստուած ֆինանսական իմաստով ինչ ըրած էր իրենց գործին եւ անձնական կեանքին մէջ այդ շաբաթ: Հովիւը դրկեց ինծի ձայնագրութիւնը այդ ծառայութեան, որ ծրագրուածին պէս չէր ընթացած:

Յաջորդ երկու տարուան ընթացքին եկեղեցին պայթումի պէս աճեցաւ: Անոնք գնեցին նոր շէնք մը՝ դպրոցի ամբողջ տարածք մը, նորոգեցին զայն եւ մեծ աճ արձանագրեցին հոն: Անոնց անդամներուն թիւը հարիւրի շուրջ էր տարիներ: Այս եւ անհամար ուրիշ օրինակներ ինծի սորվեցուցած են, թէ Աստուած կ'ուզէ, որ պատուենք անոնք, որոնք կ'աշխատին եկեղեցիին մէջ՝ մեզի համար:

Հիմա որ արդէն շուրջ երեսուն տարի է, որ կը ճամբորդեմ ծառայութեան համար, կրնամ ըսել ձեզի, որ բնաւ բացառութիւն մը չեմ տեսած աստուածաշնչական այդ ճշմարտութեան համար: Այցելած եմ բազմաթիւ եկեղեցիներ, որոնք համեստ կերպով կը վարձատրեն իրենց հովիւները: Անոնց մտայնութիւնը հետեւեալն է. *մենք կրնանք ւսելի գործ ընել միսիոնարութեան եւ մարդոց հասնելու [կամ ւսետարանչութեան] ծառայութիւններուն մէջ եթէ լաւ չվճարենք մեր հովիւներուն*: Այդ եկեղեցիները հարիւր հազարաւոր տողար կու տան միսիոնարութեան ամէն տարի:

Նաեւ հրաւիրուած եմ եկեղեցիներ, որոնք շատ լաւ կը վճարեն իրենց հովիւներուն: Այդ եկեղեցիները տարեկան միլիոններ կու տան մարդոց հասնելու [կամ ւսետարանչութեան] եւ միսիոնարութեան ծառայութիւններու:

Հետեւեալ հարցումը կը ծագի. Ո՞վ աւելի շատ կ'ընէ մարդոց հասնելու [կամ աւետարանչութեան] եւ միսիոնարութեան համար: Պատասխանը պարզ է. այն եկեղեցիները, որոնք լաւ կը վճարեն իրենց հովիւներուն: Ինչո՞ւ: Որովհետեւ այդ եկեղեցիները կը հնազանդին Աստուծոյ Խօսքին թելադրանքներուն, մինչ միւս եկեղեցիները կը հաւատան, որ իրենք Աստուծմէ աւելի՛ իմաստուն են:

Ես եղած եմ զարգացող կամ աղքատ երկիրներու մէջ եւ գրեթէ լացած եմ տեսնելով անոնց վարմունքը ինծի հանդէպ: Նիւթական առումով կրնայ ըլլալ, որ իրենց ըրածը փոքր էր ամերիկեան չափանիշներով, որովհետեւ ես շատ աւելի մեծ չափով նուէր ստացած եմ կարգ մը անտարբեր ամերիկեան եկեղեցիներէ: Ամէնէն աւելի իմ սիրտիս դպածը այդ երախտապարտ մարդոց նուէրին ետին գտնուող սէրն էր: Տարբեր չէր այն այրիէն, որուն համար Յիսուս ըսաւ, որ բոլոր միւսներէն աւելի տուած էր, հակառակ անոր որ տուած գումարը ամէնէն քիչն էր: Ան իր նուէրով պատուեց զԱստուած: Այդ թանկագին սուրբերը կը պատուեն եւ կը գնահատեն այն ծառաները, զորս Աստուած կը դրկէ իրենց: Թող ասիկա թափանցէ սիրտիդ մէջ: Հետամուտ եղէք պատուելու ձեր մէջ եղող այն տղամարդիկն ու կիները, որոնք կը գործեն Աստուծոյ Խօսքին համաձայն:

Անոնք, Ձորս Ղեկավարները Կը Նշանակեն

Անգամ մը ես նայինք Յիսուսի ըսածին. «Լաւ գիտցէք, թէ ով որ կ'ընդունի ան՝ որ ես պիտի դրկեմ՝ զիս ընդունած կ'ըլլայ» (Յի 13.20): Մատթէոսի Գիրքին մէջ Յիսուս կը բացատրէ կարգի շղթան. Հայրը դրկեց Յիսուսը, եւ Յիսուս կը դրկէ ծառայութիւններու հնգեակը: Եթէ ընդունինք Իր նշանակած ծառայողները, ընդունած կ'ըլլանք զինք, եւ զինք ընդունելով՝ ընդունած կ'ըլլանք Հայրը:

Կարգի շղթան կանգ չ'առնելու ծառայութիւններու հնգեակով: Անիկա կը շարունակուի այդ ծառայողներուն կողմէ նշանակուածներով: Բնաւ չեմ մոռնար, թէ ինչ դուրս եկաւ բերանէս Կիրակի առտուայ ծառայութեան մը ընթացքին: Եկեղեցին ունէր լաւ հովիւ մը: Ան իր իշխանութեամբ կը գործէր՝ ժողովուրդը պաշտպանելու համար, եւ անոնք կը յարգէին զինք: Սակայն այդ յարգանքը չէր կիրարկուեր իրմէ վար անձնակազմի միւս անդամներուն եւ ծառայողներուն հանդէպ: Նկատեցի, որ մարդիկ չէին պատուեր հովիւին նշանակած ծառայողները, ինչպէս՝ հիւրընկալողները, կառատան պատասխանատուները, օգնողները եւ օգնական հովիւները:

Այդ ծառայութեան ընթացքին կը գործէի մարգարէական շունչով: Երբ այդ ձեռով կը քարոզեմ, շատ անգամ բառերը բերանէս ելլելէն ետք կը լսեմ ըսածներս: Մատով ցոյց տուի ծառայող մը եւ ըսի. «Այն ձեռով, որ կը վարուիք այս անձին հետ, այդ ձեռով վարուած կ'ըլլաք այս հովիւին հետ: Այն ձեռով, որ կը վարուիք իրեն հետ, իրականութեան մէջ այդ ձեռով վարուած կ'ըլլաք Յիսուսի հետ»:

Պէտք էր տեսնէիք կարգ մը եկեղեցւոյ անդամներու աչքերը: Յայտնութեան լոյսը բացայայտեց անոնց կեցուածքը: Անիկա առողջ եկեղեցի մըն էր, եւ անդամները ուրախութեամբ ընդունեցին սրբագրութիւնը: Բերանէս ելած խօսքերը նաեւ ինծի ծառայեցին: Երբ ես եկեղեցւոյ մը մէջ կը ծառայեմ, կամ ներկայ կ'ըլլամ իմ անդամակցած եկեղեցիիս մէջ, կը պատուեմ անոնք, որոնք կը ծառայեն: Անոնք նշանակուած են հովիւին կողմէ, որ նշանակուած է Յիսուսի կողմէ, որ նշանակուած է Հօրը կողմէ: Պէտք է Աստուծոյ իշխանութիւնը տեսնենք մեր հանդիպած մարդոց մէջ:

Գերազանց աստուածաշնչական օրինակ մըն է սուրիական բանակի սպարապետ Նէեմանի պատմութիւնը: Ան բորոտ էր եւ բժշկուելու յոյս չուներ: Անոր եբրայեցի աղախինը իրեն

ըսաւ, թէ Իսրայէլի մէջ մարգարէ մը կար, որ կրնար բժշկել զինք Իսրայէլի Տէր Աստուծոյ զօրութեամբ:

Սուրիոյ թագաւորը արտօնութիւն տուաւ Նէեմանի եւ զրկեց զայն Իսրայէլի թագաւորին, որ զայն զրկեց Եղիսէի տունը. «Նէեման իր ձիերով եւ կառքով գնաց ու Եղիսէի տան մուտքը կայնեցաւ: Եղիսէ պատգամաւոր մը զրկեց անոր՝ ըսելով. «Գնա՛, Յորդանանի մէջ եօթը անգամ լուացուէ, եւ մարմինդ քեզի պիտի վերադառնայ ու պիտի մաքրուի»» (Դ.Թգ 5.9-10):

Ատիկա լսելով, Նէեման զայրացաւ: Ըսաւ. «Ահա՛ ես կը կարծէի, թէ անիկա անտարակոյս իմ քովս պիտի գայ ու կայնի, եւ իր Աստուծոյն՝ Եհովայի անունը պիտի կանչէ ու ձեռքը հիանդ տեղին վրայ երերցնէ, եւ բորոտութիւնը բուժէ» (հմր 11):

Անոր սխալ ակնկալութիւնը գրեթէ պատճառ պիտի ըլլար, որ փախցնէր այն ինչ որ Աստուած կ'ուզէր տալ իրեն: Ան ուրախութեամբ պիտի ստանար Եղիսէէն եթէ ան անձամբ դուրս գար եւ ոչ թէ սոսկ պատգամաւոր մը կամ պաշտօնեայ մը զրկէր. վերջապէս Նէեման կարելոր անձնաւորութիւն մըն էր: Ան վիրաւորուած էր Եղիսէի հետ ուղղակի հանդիպում չունենալուն պատճառով: Սակայն իբրեւ սպարապետ մը, ան պէտք էր հասկցած ըլլար յանձնարարուած իշխանութեան գաղափարը: Լաւ լուրը այն է, որ իր ծառան համոզեց զինք, որ մարգարէին ըսածը ընէր, եւ ան գնաց ու եօթը անգամ լուացուեցաւ Յորդանան գետին մէջ եւ կատարելապէս բժշկուեցաւ: Եղաւ ճիշդ այնպէս ինչպէս Եղիսէի պատգամաւորը ըսած էր իրեն: Վերջապէս ան Աստուծոյ իշխանութիւնը ունեցող մարդուն ենթակայ էր:

Սիրտս կը տխրի երբ կը լսեմ եկեղեցիներու մասին, ուր ներկաներուն թիւը կը պակսի երբ հովիւը ներկայ չըլլար պաշտամունքի ծառայութիւններուն: Այդ մարդոց կը պակսի ճշմարիտ իշխանութեան հասկացողութիւնը: Ճիշդ սիրտը ունենալով, ժողովուրդը նոյնքան ազդու կերպով պիտի

ստանայ օգնական հովիւէն կամ այցելու քարոզիչէն, քանի որ անոնք նշանակուած են հովիւին կողմէ: Հովիւը հոն է Յիսուսի փոխարէն: Եթէ հասկնանք թագաւորութեան իշխանութիւնը, կ'անդրադառնանք, որ անիկա անհատականութեան մրցոյթ մը չէ, այլ՝ տուեալ մարդուն վրայ դրուած իշխանութիւնն է, որ ետ կ'երթայ մինչեւ Յիսուս:

Իբրեւ հաւատացեալներ, պէտք է պատուենք քաղաքային ղեկավարները, գործատէրերը, ուսուցիչները եւ ուրիշներ, որոնք նշանակուած են: Պէտք է պատուենք տան մէջ իշխանութիւնը, եւ երբ ատիկա կ'ընենք, վարձատրութիւն կը խոստացուի մեզի: Վերջապէս, եկէք կրկնակի պատիւ տանք անոնց, որոնք ծառայութեան մէջ են, յատկապէս անոնց, որոնք ուսուցանելու եւ Աստուծոյ Խօսքը մատակարարելու ծառայութեան մէջ են:

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՆԹԱՐԿՈՒՄ

*Կրնանք հնազանդիլ եւ ոչ անպայման
ենթարկուած ըլլալ:*

Ենթարկուելու գաղափարը հաւանաբար ամէնէն շատ սխալ հասկացողութիւնները կը պատճառէ հաւատացեալներու միջեւ: Այս յաջորդ երեք գլուխներուն մէջ պիտի խօսինք դժուար նիւթերու մասին: Վերջին երեսունհինգ տարուան ընթացքին՝ երբ ծածկոյթի տակ ըլլալու մասին ուսուցումներ տուած են, շարունակ լսած են այս ձեւի հարցումներ.

- Հնազանդութիւնը անպայմանակամն է:
- Հապա եթէ չհամաձայնիմ ղեկավարիս որոշումներուն հետ...
- Հապա եթէ իշխանութիւնները սխալ որոշումներ կու տան...

- Հապա եթէ իշխանութիւնները ինձմէ խնդրեն, որ սխալ բան մը ընեմ...
- Ո՞ր պէտք է գծեմ սահմանը:

Ասոնք գերազանց հարցումներ են, որոնք պէտք է պատասխանուին եթէ մենք ինքնավստահօրէն պիտի ենթարկուինք իշխանութիւններու: Սկսելու համար, նայինք Եբրայեցիներուն Գիրքին.

Մտիկ ըրէք ձեր առաջնորդներուն խօսքը [«Հնազանդեցէք ձեր առաջնորդներուն խօսքին», ըստ անգլերէն տարբերակին], որովհետեւ անոնք անքուն կը հսկեն ձեր հոգիներուն համար, գիտնալով՝ որ հաշիւ պիտի տան ձեզի համար. եւ հնազանդ եղէք [«ենթարկուեցէք», ըստ անգլերէն տարբերակին] անոնց, որպէսզի ուրախութեամբ կատարեն իրենց պաշտօնը եւ ո՛չ թէ հառաչելով, որովհետեւ ատիկա ձեր օգուտին համար չ'ըլլար: (Եբր 13.17)

Եբրայեցիներուն Նամակը գրողը որոշակիօրէն կը յորդորէ մեզ, որ ընենք երկու բան. (1) Հնազանդինք անոնց, որոնք կ'իշխեն մեր վրայ, եւ (2) Ենթարկուինք անոնց, որոնք կ'իշխեն մեր վրայ: Ասոնք տարբեր պատուէրներ են, եւ հոս է, որ շատեր կը շփոթին: Կրնանք հնազանդիլ, բայց անպայմանօրէն չ'ենթարկուիլ: Բացատրելու համար, բաժնեկցիմ անձնական օրինակ մը:

Չկերակրուիլ

Ինչպէս նշեցի նախորդ գլուխներէն մէկուն մէջ, քսանական տարիներուս երկրաչափութեան մարզին մէջ կարճ ժամանակ մը աշխատելէ ետք, մեծ եկեղեցիի մը մէջ սկսայ պաշտօնավարել Միացեալ Նահանգներու հարաւային բաժինին մէջ: Ես հոն ծառայեցի չորսուկէս տարի՝ իբրեւ

հովիւին անձնական օգնականը: Ես կ'ընէի հովիւին եւ իր կնոջ անձնական գործերը, ինչպէս նաեւ հոգ կը տանէի անոնց գաւակներուն:

Ատիկա սորվելու հոյակապ առիթ մըն էր, եւ առաջին տարին յաճախ կը զգացուէի, որ Աստուած արտօնած էր ինծի, որ այդ մարզին մէջ ծառայեմ Իր Թագաւորութեան մէջ: Կը յիշեմ, որ կը մտածէի. *Ես պէտք է Աստուծոյ տամ փոխադարձաբար՝ ինծի այս գործը տալուն համար*: Յատուկ կերպով կը յիշեմ, որ առիթով մը իրենց ընտանիքին համար ուտեստեղէն գնելէ ետք, *սուփրոմարքէթին* կառատան մէջ ինքնաշարժին մէջ նստած լացի: Մեր եկեղեցին ունէր անելի քան ուր հազար անդամ: Ինչո՞ւ ինծի տրուած էր այդ պատիւը: Այդ մեղրալուսնի հանգրուանը տեսց շուրջ մէկ տարի: Ապա սկսաւ մարիլ. սկիզբը մեղմօրէն ապա՝ արագ վայրէջքով:

Որքան մօտեցայ իրենց, այդքան թերութիւններ սկսայ տեսնել: Գործին նոր ըլլալը եւ բերած խանդավառութիւնը այլեւս իբրեւ քող չէին ծառայեր: Դժուարութիւն կ'ունենայի հասկնալու կարգ մը բաներ, որոնց ականատես կ'ըլլայի, եւ կարճ ժամանակ ետք այդ պատկերները արդէն սկսան նեղութիւն տալ ինծի: Սկսայ անհամաձայնութիւններ ունենալ եկեղեցիին մէջ գործերու կատարման ձեւին, հարցերու լուծման ոճին եւ որոշումներ կայացուելու եղանակին հետ:

Խօսքեր կը խօսուէին, որ բնաւ տարբեր չէին այն վիրաւորական արտայայտութիւններէն, զորս լսած էի աշխարհիկ գործի միջավայրներու մէջ: Եթէ այդ խօսքերը կ'ըսուէին պաշտօնեաներու մասին, յստակ էր ինծի համար, որ մօտ ատենէ անոնք կամ գործէ պիտի արձակուէին կամ ալ այնպէս պիտի ճնշուէին, որ իրենք հրաժարիլ պիտի ուզէին: Շատ յաճախ անոնք կը փոխարինուէին անելի շողոքորթութեամբ խօսող խաբեբայ մարդոցմով: Նորեկներէն շատեր անմիջապէս կը բարձրանային վարչական

պաշտօններու կամ այլ բանալի պաշտօններու: Հովիւս կը թուէր աւելի հաճոյք ստանալ այդ մարդոց ընկերակցութեամբ քան աւելի բարեպաշտներուն: Ան կը խնդար եւ կը քրքջար անոնց անպատշաճ արտայայտութիւններուն, եւ սակայն անտարբեր եւ անհետաքրքրուած ձեւով կը վարուէր անկեղծ հաւատացեալներու ընկերակցութեան մէջ: Ես շփոթի մէջ էի անոր վարմունքին նկատմամբ եւ շուտով սկսայ քննադատող ըլլալ:

Կային նաեւ ուրիշ անհամաձայնութիւններ, եւ ես կը կեդրոնանայի անոնց բոլորին վրայ: Անիկա միջազգային առաքելութիւն մըն էր, եւ Միացեալ Նահանգներուն մէջ բոլորին աչքին առջեւն էր: Բոլոր ծրագիրները շատ մարդուժ եւ մեծ գումարներ կը պահանջէին՝ հաստատուած մեքենաները շարժուն պահելու համար: Առաքելութիւնը ունէր 250 անդամներէ բաղկացած անձնակազմ մը, եւ ամէն մարդի մէջ ամէնէն արդիական սարքերը եւ միջոցները ունէինք: Խորհրդականներ վարձուեցան, որպէզի օգնէին դրամահաւաքի մէջ՝ գոյութիւն ունեցող ծրագիրներուն եւ ապագայի գաղափարներուն նեցուկ կանգնելու համար: Ես էի զանոնք հիւրընկալելու պատասխանատուն: Անոնց հետ եղած ատենս լսեցի հովիւիս հետ իրենց ունեցած հանդիպումներուն տեղի ունեցած խօսակցութիւններուն մասին: Ես ինծի հարց կու տայի. *Արդեօք ասիկա շահ ընող պիզնէս մըն է կամ Քրիստոնէական առաքելութիւն մը:* Որքան աւելի բան կը լսէի, այդքան աւելի կը մտածէի. *Ասիկա խաբէական է: Այս մարդիկը իրապէս կը հոգան մարդոց համար կամ պարզապէս դրամի համար կ'ընեն այս գործը:* Հովիւս ինչո՞ւ ինքզինք կը շրջապատէ այդ ձեւի մարդոցմով:

Լման ժամանակը շրջապատուած էի ընկերներովս, որոնք ինծի չափ քննադատող էին: Յատկապէս կը յիշեմ ընթրիք մը, որ ունեցանք զոյգի մը հետ իրենց տան մէջ: Երկու տղամարդիկս ալ ուղղակիօրէն հովիւին եւ իր կնոջ

հաշուետու էինք: Կը խօսէինք անոր մասին, թէ ինչպէս այլեւս չէինք ստանար այդ առաքելութենէն: Կը յիշեմ, որ ըսի. «Վերջին վեց ամիսներուն ամպիոնէն ուսուցանուածներէն ոչ մէկ բան առած եմ»: Բոլորս ալ համաձայն գտնուեցանք, բացի կնոջմէս, որ լուռ կը մնար:

Շարունակ կը լսէի հետեւեալ խօսքը. «Այլեւս չենք կերակրուիր»: Համաձայեցանք, որ այդ առաքելութեան մէջ մեր ծառայութեան ժամանակը իր ասարտին կը հասներ: Շատ հոգեւոր կը զգայինք մենք մեզ այդ ամբողջ նիւթին մէջ եւ համոզուած էինք, որ Աստուած կը պատրաստուէր արծակելու մեզ այն ծառայութիւններուն, զորս Ինք կարգած էր մեզի համար: Շատ ինքնավստահ էինք, որ այդ առաքելութեան մէջ մեր պաշտօնավարութեան օրերը իրենց ասարտին կը հասնէին եւ կը պատրաստուէինք պաշտօնի բարձրացում ունենալու:

Հարցը Ես Էի

Քանի մը օր ետք երբ կ'աղօթէի, Աստուած Իր գթառատութեամբ յիշեցուց այդ զոյգին տան մէջ մեր խօսածները: «Չեմ կերակրուիր» եզրը այդ գիշերուան յատուկ չէր: Ես այդ եզրը յաճախ գործածած էի կնոջս հետ մեր խօսակցութիւններուն ընթացքին վերջին վեց ամիսներուն՝ մինչ ամէն ծառայութեան ընթացքին կ'ունկնդրէինք հովիւին ուսուցումները: Մինչ կը մտածէի *չկերակրուելուս* պատճառով իմ այդ ատենուայ սովի մէջ ըլլալու մասին, Սուրբ Հոգին հաստատ կերպով ինծի տեղեկացուց՝ *Հարցը հովիւի չէ: Հարցը դինն ես:*

Տնցուեցայ եւ գրեթէ չէի հաւատար լսածիս. Աստուած իրապէս այդպէս ըսաւ ինծի: Անցեալին երբ այդ ձեւի սրբագրումներ կը ստանայի Տիրոջմէ, շատ անգամ պահ մը կ'երկմտէի եւ կը մտածէի, թէ արդեօք լսածս ճիշդ էր: Միտքս հարց կու տար. *Վստահ ես, որ ճիշդ մարդուն հետ կը խօսիս:* (Մինչ կ'աճիւնք, այդ

հարցաքննութիւնը պէտք է անելի նուազ յաճախ տեղի ունենայ, քանի որ կու գանք անդրադառնալու, որ *իրապէս* ճիշտ քիչ քան գիտենք եւ ճիշտ պէտք ունինք աճելու:)

Բարձրաձայն հարց տուի. «Ինչո՞ւ համար ես եմ հարցը»:

Տէրը պատասխանեց. *Դուն շարունակ կը խօսիս չկերակրուելուդ մասին: Եսայիի Գիրքը կ'ըսէ. «Եթէ ուզէք հնազանդիլ՝ երկրին բարիքը պիտի ուրէք. բայց եթէ զիս մերժելով ընդվզիք, սուրը պիտի սպառէ ձեզ» (1.19-20):*

Ես այդ հատուածը բաւական լաւ գիտէի եւ բողոքեցի. «Ես շատ հնազանդ եղած եմ»:

Բայց Սուրբ Հոգին պատասխանեց. *Կը հնազանդիս ամէն բանի, որ կ'ըսուի, որ ընես այս առաքելութեան մէջ: Բայց ես չըսի. «Եթէ հնազանդիք, երկրին բարիքը պիտի ուրէք»: Ըսի. «Եթէ ուզէք հնազանդիլ...», եւ ուզելը կը վերաբերի քու կեցուածքիդ: Իսկ քու կեցուածքդ հոգւած է...*

Ապա Ան ինձի յիշեցուց, թէ երբ երկրորդական վարժարանի աշակերտ էի՝ նախքան վերստին ծնունդ ստանալս, Չորեքշաբթի գիշերուայ նախասիրած հեռատեսիլի յայտագիրս *Պարեթթան* էր, որ Նիու Ճըրզիի Նիուարք շրջանին մէջ գաղտնի ոստիկանի մը մասին էր: Աղբը տանելու օրը Հինգշաբթի էր, եւ առտու շատ կանուխ կ'անցնէին մեր տունէն: Աղբը պէտք էր մէկ գիշեր առաջ դուրսը դրուած ըլլար, եւ ատիկա իմ պատասխանատուութիւնս էր, քանի որ ես մեր ընտանիքի միակ տղան էի: Այնպէս կ'ըլլար, որ ամէն շաբաթ մայրս ներս կը մտնէր յայտագիրի գազաթնակետին՝ ճիշդ այն ատեն երբ *Պարեթթան* կը ստանար այն կարեւոր տեղեկութիւնը, որ պիտի օգնէր իրեն, որ խնդիրը լուծէր, եւ կը հարցնէր. «Տղաս, աղբը դուրս հանեցի՞ր»:

Ես ալ կը պատասխանէի. «Ոչ տակաւին»:

Մայրս ալ կ'ըսէր. «Կ'ուզեմ, որ հիմա ելլես եւ դուրս հանես աղբը»:

Ես ալ կը պատասխանէի. «Սիրով», եւ կ'ընէի ըսածը:

Եթէ ոեւէ մէկը հեռուէն դիտէր իմ վարմունքս, պիտի ըսէր, թէ ճիշտն հնազանդ էի, եւ ճիշդ պիտի ըլլար ըսածը: Ան նաեւ պիտի ըսէր, թէ նաեւ *ուզելով* ըրած էի պարտականութիւնս: Բայց լեզուիս տակէն ես կը գանգատէի. «Չեմ հաւատար, որ ան միշտ կու գայ հեռատեսիլի յայտագիրիս ամէնէն կարեւոր պահուն: Ինչո՞ւ չի կրնար տասը վայրկեան սպասել մինչեւ որ յայտագիրս վերջանայ»:

Սուրբ Հոգին ըսաւ. *Դուն հնազանդ էիր, եւ նոյնիսկ այնպէս կ'երեւէր, որ պատրաստակամ էիր, բայց չէիր: Մօրդ հանդէպ կեցուածքդ ճիշդ չէր: Այս եկեղեցիին մէջ չկերակրուելուդ (Իմ թագաւորութեանս բարիքներէն չուտելուդ) պատճառը այն է, որ հակառակ անոր որ հնազանդ ես, պատրաստակամ չես...*

Տեսայ, թէ ինչպէս հովիւիս նկատմամբ կեցուածքս ինձի հասցուցած էր տեղ մը, ուր չէի ստանար Աստուծմէ, ինչպէս նաեւ զիս կ'առաջնորդէր դէպի վտանգաւոր տարածքներ: Եբր 13.17-ը կ'աւարտի այս բառերով. «Որովհետեւ ատիկա ձեր օգուտին համար չ'ըլլար»:

Աչքերս բացուեցան: Անմիջապէս ապաշխարեցի: Յաջորդ Կիրակի ես յաճախեցի նոյն եկեղեցին, նստայ նոյն նստարանին վրայ եւ մտիկ ըրի նոյն հովիւին ուսուցումը նոյն նիւթերու շարքէն: Բայց այդ առտու ամէն բան տարբեր էր: Երկինքը բացուեցաւ, եւ ես ապշած էի այն յայտնութիւնով, որ Աստուած տուաւ ինձի հովիւիս քարոզին ընդմէջէն: Նստած էի յուզուած եւ կը մտածէի, թէ ինչ կորսնցուցած էի վերջին վեց ամիսներուն ընթացքին իմ վատ վարմունքիս պատճառով այն իշխանութեան հանդէպ, որուն տակ դրած էր զիս Աստուած:

Վիճակս լաւ չէր վերջին վեց ամիսներուն ընթացքին՝ իմ քննադատական եւ անպատրաստակամ կեցուածքիս պատճառով հովիւիս հանդէպ եւ եկեղեցիին մէջ գործերը կատարուելու ձեւին հանդէպ:

Երբ մենք չենք ենթարկուիլ մեր վրայ դրուած իշխանութիւններուն, դէմ դրած կ'ըլլանք Աստուծոյ իշխանութեան, որովհետեւ անոնք նշանակուած են Իր կողմէ: Աստուած կ'ուզէ, որ կարենանք ձրիօրէն վայելել բարիքները այն խնճոյքի սեղանին, որ Աստուած կը պատրաստէ մեզի համար անոնց միջոցաւ, զորս Ինք կը տրամադրէ մեզի:

Հնազանդութիւնը կապ ունի իշխանութեան հանդէպ մեր *արարքներուն* հետ: Իսկ ենթարկուիլը կապ ունի իշխանութեան հանդէպ մեր *կեցուածքին* հետ: Ասիկա է, որ շատերս չենք հասկնար: Աստուած կը նայի մեր արտաքին արարքներուն եւ մեր սիրտերուն թաքուն կեցուածքներուն: Դաւիթ հետեւեալ խօսքերը ըսաւ իր որդիին՝ Սողոմոնի երբ գահը անոր կը փոխանցէր. «Եւ դո՛ւն, Սողոմո՛ն, որդեանկս, ճանչցիր քու հօրդ Աստուածը, եւ պաշտէ՛ զայն կատարեալ սիրտով ու *յօժար կամքով*. արդարեւ Տէրը կը քննէ բոլոր սիրտերը, եւ կը հասկնայ *մտածումներուն բոլոր նպատակները*» (Ա.ԼՄն 28.9, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Այդ պատճառով Եբրայեցիներուն Նամակը գրողը մեզի կը յորդորէ, որ ոչ միայն հնազանդինք մեր վրայ եղող իշխանութիւններուն, այլեւ ենթարկուած ըլլանք անոնց: Երբ Պօղոս ըսաւ՝ «Ամէն մարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց», հնազանդութեան կ'ընկերանար ուզելը:

Ենթարկուած Վերաբերում, Բայց՝ Ոչ Հնազանդ

Հիմա սերտենք Եբրայեցիներուն Նամակի այդ համարը ուրիշ թարգամանութենէ մը. «Հնազանդեցէ՛ք ձեր ղեկավարներուն եւ ենթարկուեցէ՛ք անոնց իշխանութեան» (13.17, *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT), բառացի թարգմանութիւն): Բացատրեցի, թէ ինչպէս կրնանք հնազանդ ըլլալ, բայց՝ ոչ ենթարկուած: Սակայն հակառակն ալ կրնայ ըլլալ: Կրնանք մեր կեցուածքին մէջ ենթարկուած ըլլալ, բայց՝ ոչ հնազանդ: Լաւ օրինակ մըն է երկու որդիներու առակը, որ

Յիսուս պատմեց եւ որուն մասին խօսեցանք երրորդ գլուխին մէջ: Որդիներէն մէկը պատրաստակամ էր: Ըսաւ. «Այո, կ'երթամ եւ կ'աշխատիմ այգիիդ մէջ», սակայն չհնազանդեցաւ: Յիսուս ըսաւ, որ ան չկատարեց իր հօրը կամքը, հակառակ անոր որ կեցուածքը շատ լաւ էր եւ միտքով համաձայնած էր ընել հօրը պատուէրը:

Յաճախ այդ է պարագան եկեղեցիներուն այսօր: Ունինք լաւ մտադրութիւններ, մեր գլուխները կը շարժենք հաւանութեան նշանով, կը ժպտինք եւ կը համաձայնինք մեր իշխանութիւններուն հետ: «Ես պիտի ընեմ այդ ըսածդ», կ'ըսենք: Յետոյ չենք ըներ, որովհետեւ ատիկա կարելոր չէ մեզի համար: Ես ատիկա կը կոչեմ *քնքոյշ ըմբոստութիւն*: Մի՛ խափուիր. քնքոյշ ըմբոստութիւնը նոյնքան վտանգաւոր է որքան բացայայտ ըմբոստութիւնը սխալ կեցուածքով: Անոնցմէ ոչ մէկը կը պատուով Աստուծոյ Թագաւորութեան մէջ:

Յայտնութեան Գիրքին մէջ եկեղեցիներուն ուղղուած Յիսուսի խիստ խօսքերը կը հաստատեն ատիկա: Ան իւրաքանչիւր եկեղեցի ողջունեց, ըսելով. «Գիտեմ քու գործերդ» (Յյտ 2-3): Եկեղեցիները լաւ մտադրութիւններ ունէին եւ անոնցմէ մէկը ինքզինք *ողջ* կը կոչէր, բայց Յիսուս ըսաւ, որ իրենց գործերուն մէջ իրենց անհնազանդութեան պատճառով, անոնք *մեռած* էին: Յիշէ՛, որ Յիսուս Ան է, որ՝ «իւրաքանչիւրին պիտի հատուցանէ՛ անոր գործերուն համաձայն» (Հռ 2.6): Լաւ մտադրութիւնները կանգուն չեն մնար Աստուծոյ դատաստանին մէջ: Միայն ճշմարիտ հաւատքը, որուն կ'ընկերանան համապատասխան հնազանդութեան գործեր, կանգուն պիտի մնան Աստուծոյ առջեւ:

Ո՞ր է Սահմանը

Դարձեալ Աստուծոյ պատուէրն է՝ «Հնազանդեցէք ձեր առաջնորդներուն խօսքին եւ ենթարկուեցէք անոնց»: Ինչպէս

Նախապես ալ ըսի, մարդիկ յաճախ ամենայն անկեղծութեամբ կը հարցնեն ինձի, թէ՛ «Ո՞ր է սահմանը: Արդե՞ծք Աստուած մեզմէ կ'ակնկալէ, որ հնազանդինք իշխանութիւններուն ինչ որ ալ ըսեն, որ ընենք: Հապա եթէ ինձի ըսուի, որ ընեմ բան մը, որ մեղք է...» Աստուածաշունչը մեզի կը սորվեցնէ առանց պայմանի ենթարկում իշխանութիւններու, բայց Աստուածաշունչը չի սորվեցներ առանց պայմանի հնազանդութիւն: Յիշէ՛, որ ենթարկումը կապ ունի կեցուածքի հետ, իսկ հնազանդութիւնը կը վերաբերի մեզի ըսուածը կատարելուն:

Միակ պարագան, եւ կ'ուզեմ շեշտել՝ *միակ* բացառութիւնը, որուն պարագային պէտք չէ հնազանդինք իշխանութիւններուն, այն ատեն է երբ մեզի կ'ըսուի, որ ընենք բան մը, որ ուղղակիօրէն հակառակն է Իր Խօսքին մէջ Աստուծոյ մէկ ըսածին: Այլ խօսքով, մենք արձակուած ենք հնազանդութեան պատուէրէն միայն երբ ղեկավարներ մեզի ըսեն, որ մեղք գործենք: Սակայն նոյնիսկ այդ պարագաներուն պէտք է խոնարհ եւ ենթարկուած կեցուածք ունենանք:

Բաբելոնի թագաւորը՝ Նաբուգոդոնոսոր, անգութ էր եւ Իսրայէլի սերունդները կորսնցուց ու կործանեց անոնց երկիրը: Սակայն Աստուած զայն «*Իմ ծառաս*» կոչեց (տես Եր 25.9, 27.5-7)՝ դարձեալ հաստատելով, որ Աստուած Ինքն է, որ իշխանութիւն կու տայ մարդուն: Այդ թագաւորը Աստուծոյ ժողովուրդի մնացորդ մը գերի առաւ եւ բերաւ Բաբելոն: Անոնց մէջն էին Սեդրաք, Միսաք եւ Աբեղնագովը:

Այդ թագաւորը հրապարակեց հրամանագիր մը, որ ամբողջ ժողովուրդէն կը պահանջէր, որ երկրպագեն եւ պաշտեն ոսկեայ արձան մը երբ լսէին երաժշտական գործիքներու նուագ մը: Հրամանագիրը կ'ըսէր, թէ այդ հրամանին չենթարկուողները հետեւանքներ պիտի կրէին. անոնք պիտի նետուէին կրակի հնոցին մէջ: Այդ երբայեցիներուն համար Աստուծոյ վախը աւելի մեծ էր քան

հնոցին վախը, ուստի չհնազանդեցան հրամանագիրին, քանի որ անիկա ուղղակիօրէն կը խախտէր Թորային կամ Օրէնքին մէջ նշուած Աստուծոյ կողմէ Մովսէսին տրուած երկրորդ պատուիրանը: Անոնք անհնազանդ եղան մարդուն օրէնքին, որպէսզի հնազանդ ըլլային Աստուծոյ օրէնքին:

Շատ չանցած անոնց անհնազանդութեան լուրը հասաւ Նաբուգոդոնոսոր Թագաւորին: Ան զայրացաւ Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագովէն, եւ իր առջեւ բերել տուաւ զանոնք՝ հարցաքննութեան համար: Մտիկ ըրէ անոնց պատասխանը. «Ո՛վ Նաբուգոդոնոսոր, հարկաւոր չէ, որ քեզի պատասխանենք այս նիւթին մասին: Ահա՛ մեր պաշտած Աստուածը կրնայ մեզ ազատել բորբոքած կրակի հնոցէն. քու ձեռքէդ ալ մեզ պիտի ազատէ, ո՛վ թագաւոր: Նոյնիսկ եթէ չընէ, գիտցի՛ր, ո՛վ թագաւոր, թէ մենք քու աստուածներդ պիտի չպաշտենք եւ քու կանգնեցուցած ոսկիէ արձանիդ պիտի չերկրպագենք» (Դն 3.16-18):

Անոնք հաստատ մնացին Աստուծոյ պատուէրին իրենց հնազանդութեան մէջ, եւ սակայն թագաւորին հետ յարգանքով խօսեցան: Անոր դիմեցին «Ո՛վ թագաւոր»ով: Չըսին՝ «Անպէտք մարդ, բնաւ պիտի չընենք քու ըսածներդ»: Այդ ձեւի անարգական խօսքերով արտայայտուիլը ըմբոստութիւն պիտի ըլլար: Պէտք է ենթարկուինք իշխանութիւններուն, նոյնիսկ երբ ստիպուած ենք անհնազանդ ըլլալու իրենց հրամանին:

Կը տեսնենք այդ մասին ակնարկութիւն մը կիներուն ուղղուած Պետրոսի թելադրանքներուն մէջ. «Դուք ալ, կիներ, հնազանդ եղէք ձեր ամուսիններուն, որպէսզի նոյնիսկ եթէ ձեր ամուսիններէն ոմանք Աստուծոյ խօսքին հաւատացող չեն՝ հաւատքի գան առանց խօսքի, պարզապէս դիտելով կիներուդ ընթացքը, ձեր պարկեշտ եւ *երկիրօճ* կենցաղը» (Ա.Պտ 3.1-2, շեշտադրումը՝ մեր կողմէ): Կին մը պէտք է հնազանդի իր ամուսինին (տե՛ս Տիտ 2.5) ինչպէս նաեւ

պատուէ իր ամուսինը՝ ենթարկուած կեցուածքով: Պետրոս անգամ մը եւս զուգահեռ մը գծեց վարմունքի եւ ենթարկումի միջեւ: Ապա անոնց կը միանայ մաքրութեան եւ ականածանքի կենցաղը: Կնոջ կը թելադրուի, որ *ականածանքով* վարուի իր ամուսինին իշխանութեան դիրքին նկատմամբ նոյնիսկ երբ ան հաւատացեալ չէ: Կնոջմէ պահանջուած չէ, որ անպայմանական ձեւով հնազանդի եթէ իրմէ պահանջուի, որ մեղք գործէ, բայց ան կոչուած է անոր իշխանութեան դիրքին նկատմամբ անպայմանական ենթարկումի եւ պատիւ տալու:

Հաւանական օրինակ մը կրնայ ըլլալ այն, որ հաւատացեալ կին մը հեռաձայնին կը պատասխանէ, հեռաձայնողը ամուսինին հետ խօսիլ կ'ուզէ, բայց ամուսինը չ'ուզեր խօսիլ անոր հետ եւ կնոջ կ'ըսէ. «Ըսէ՛, որ հոս չեմ»:

Պատշաճ պատասխան մը պիտի ըլլայ. «Հոգիս, ես սուտ պիտի չխօսիմ: Կ'ուզեմ, որ իրեն ըսեմ, որ հիմա յարմար չէ, որ խօսիս, բայց յետոյ դուն իրեն կը զանգես: Կամ ըսեմ, որ չես ուզեր հեռաձայնի վրայ խօսիլ հիմա»: Այդպիսով, կինը ականածանքով վարուած կ'ըլլայ ամուսինին իշխանութեան դիրքին նկատմամբ, առանց հնազանդած ըլլալու սուտ խօսելու անոր պահանջին:

Պետրոս շարունակեց ըսելով.

Ձեր զարդը արտաքին թող չըլլայ, ո՛չ մազերուն յարդարանքը, ո՛չ ոսկեղէնները եւ ո՛չ ալ զարդարուն հագուստները, այլ՝ սրտին մէջ ծածկուած, հեզ եւ խաղաղ հոգիի մը անկորնչելի գեղեցկութիւնը. եւ այդ է թանկագինը Աստուծոյ համար: Որովհետեւ անցեալին ալ, Աստուծոյ յուսացող հաւատացեալ կիները իրենք զիրենք այդպէս կը զարդարէին՝ իրենց ամուսիններուն հնազանդելով, ինչպէս Սառա Աբրահամի կը հնազանդէր՝ զայն «սէր» կոչելով: Դուք Սառայի դուստրերը եղած կ'ըլլաք՝ եթէ բարիք ընէք ուրիշներուն եւ որեւէ բանէ չվախնաք ու չխոռովիք: (Ա.Պտ 3.3-6)

Սառայի ակնածանքը յայտնի էր Աբրահամը իբրեւ իր տէրը պատուելուն եւ անոր հնազանդելուն մէջ: *Տէրը կ'արտացոլացնէր անոր ենթարկուած կեցուածքը, եւ հնազանդութիւնը ցոյց կու տար, թէ ան տեղի չէր տար վախի առջեւ: Վախը սոսկայի գործավարմըն է: Վախը կ'ըսէ. «Ես չեմ կրնար վստահիլ Աստուծոյ՝ ամուսինիս կամ որեւէ ուրիշ իշխանութեան ենթարկուելու մէջ: Ես պէտք է ինքզինքս պաշտպանեմ»: Եկէք յիշենք, որ ենթարկուիլ պատուիրողը Աստուած է եւ ոչ իշխանութեան ծարաւ եղող ռեւէ տղամարդ: Մինչ կը հնազանդինք Անոր, Անոր պաշտպանութիւնը մերը կ'ըլլայ:*

Պատուէրը Խեղաթիւրել

Ես կը ցաւիմ երբ կը լսեմ պատմութիւններ կիներու, որոնք անպայմանական ենթարկումի պատուէրը կիրարկած են այնպէս, որ անիկա ընդգրկէ նաեւ անպայմանական հնազանդութիւն: Լսած եմ այնքան այլանդակ պատմութիւններ, ուր հաւատացեալ ամուսիններ իրենց կիներէն պահանջած են, որ իրենց հետ անառակ սեռային *վիպէր*ներ դիտեն՝ սեռային գրգռութեան համար եւ կիները ենթարկուած են այդ պահանջին՝ մտածելով, որ ասիկա չընելու համար աստուածաշնչական նեցուկ չունին: Կը ճանչնամ ամուսիններ, որոնք իրենց կիներէն պահանջած են, որ անպարկեշտ վարմունք ունենան իրենց համար, եւ անոնք ունեցած են: Լսած եմ ամուսիններու մասին, որոնք արգիլած են իրենց կիներուն եկեղեցւոյ ծառայութիւններու ներկայ ըլլալը, եւ կիները իրապէս դադարած են եկեղեցի յաճախելէ: Այդ պահանջներուն պէտք չէ հնազանդիլ, քանի որ Աստուծոյ Խօսքի խախտումներ են:

Աւելի առջեւ երթանք: Գիտեմ ամուսիններու մասին, որոնք կը ծեծեն իրենց զաւակները կամ կիները, եւ կիները կը ծածկեն այդ բռնաբարումները: Ուրիշ պարագաներու, զաւակները սեռային

բռնաբարումի ենթարկուած են, եւ կիները բան մը չեն ըրած: Ատիկա խախտում է ամէն հիմնատրուումի, որուն վրայ Աստուած կը հաստատէ իշխանութիւնը, եւ կիները այդ կացութիւններուն մէջ պէտք է անդրադառնան, որ Աստուած երբեք պիտի չուզէր, որ ետ կենան եւ բան մը չընեն: Եթէ ամուսին մը կեանք վտանգելու վարմունք ունի, կիները պէտք է ինքզինք եւ զաւակները հեռացնէ անկէ եւ չվերադառնան անոր քով մինչեւ որ կինը վստահ ըլլայ, որ ամբողջական զոջում տեղի ունեցած է:

Նոյնիսկ Դաւիթ, որ պատերազմիկ էր եւ զօրաւոր մարդ մը, պալատը ձգեց երբ Սաուլը նիզակներ սկսաւ նետել իր վրան: Ան հեռացաւ եւ սկսաւ անապատին մէջ ապրիլ, բայց բնաւ չկորսնցուց իր յարգալիր վարմունքը Սաուլի իշխանութեան նկատմամբ: Դաւիթի ենթարկումը Սաուլի իշխանութեան չդադրեցաւ, հակառակ անոր որ ան փախուստ տուաւ Սաուլի ներկայութենէն եւ սպասեց կամ ճշմարիտ զոջումի կամ ալ Աստուծոյ արդար դատաստանին:

Աստուած Կ'օրհնէ Անոնք, Որոնք Չեն Հնազանդիր Մեղք Գործելու Պատուէրներու

Կան իշխանութեան չհնազանդելու ուրիշ պարագաներ ալ: Փարաւոն եբրայեցի մանկաբարձներուն պատուիրեց, որ սպաննեն եբրայեցի կիներուն ծնած տղայ մանուկները: Սակայն Աստուածաշունչը կը նշէ. «Բայց մանկաբարձները Աստուծմէ վախցան, ու չըրին այնպէս՝ ինչպէս Եգիպտոսի թագաւորը իրենց ըսեր էր. հապա տղաները ողջ պահեցին» (Ելք 1.17): Անոնց այդ վարմունքը այնքան հաճեցուց զԱստուած, որ Սուրբ Գիրքը կը նշէ. «Քանի որ մանկաբարձները Աստուծմէ վախցան, ան ալ անոնց տուներ շինեց» (հմր 21): Տէրը վարձատրեց զանոնք մեղք գործելու փարաւոնին հրամանին չհնազանդելնուն համար:

Ատեանի անդամները աշակերտներուն «ազդարարեցին,

որ բնաւ Յիսուսի մասին չխօսին ու չքարոզեն: Իսկ Պետրոս եւ Յովհաննէս պատասխանեցին. “Դ՛ր՛ք դատեցէք, թէ Աստուծոյ աչքին որն է լուրիղը. ձեզի՛ հնազանդիլ, թէ՛ Աստուծոյ: Որովհետեւ մենք չենք կրնար մեր տեսածին ու լսածին մասին չխօսիլ”» (Գրծ 4.18-20): Ի՛նչպէս կրնային հնազանդիլ այդ ղեկավարներուն երբ Յիսուս արդէն իսկ իրենց ըսած էր. «Գացէք ամբողջ աշխարհը եւ բոլոր մարդոց քարոզեցէք Աւետարանը» (Մր 16.15): Չէին կրնար հնազանդիլ այդ ղեկավարներուն: Ատեանը աշակերտներուն պատուիրած էր ընել բան մը, որ դէմ էր Յիսուսի պատուէրին, ուստի անոնք յարգալիր կերպով մերժեցին: Տէն Աստուածաշունչը ինչ կ’ըսէ, որ եղաւ իբրեւ արդիւնք անոնց որոշումին. «Առաքեալները զօրաւոր կերպով կը վկայէին Տէր Յիսուսի յարութեան, իսկ հաւատացեալները բոլորն ալ Աստուծմէ մեծ շնորհք կը վայելէին» (Գրծ 4.33): Աստուծոյ հանդէպ անոնց վախը մեծ օրհնութիւն եւ զօրութիւն բերաւ:

Սակայն աշակերտի մը ակնածանքի կամ ենթարկումի կեցուածքը կը տեսնենք նոյն ատեանին առջեւ Պօղոսի վարմունքին մէջ: Երբ ատեանին առջեւ բերուեցաւ, անոր պաշտպանութեան առաջին բառերը եղան. «Եղբայրներ, մինչեւ այսօր ես կատարելապէս հանդարտ խիղճով ապրած եմ Աստուծոյ առջեւ» (Գրծ 23.1): Այդ բառերը լսելով, Անանիա քահանայապետը սպասաւորներուն հրամայեց, որ բերանին զարնեն: Ապա Պօղոս ըսաւ. «Թող Աստուած քեզի զարնէ, ճերմկցուած պատ» (հմր 3): Ապա կը կարդանք. «Սպասաւորները ըսին. “Աստուծոյ քահանայապետը կը նախատես”: Եւ Պօղոս ըսաւ. “Եղբայրներ, չէի գիտեր, որ քահանայապետ է. որովհետեւ Սուրբ Գիրքը կ’ըսէ. ‘Քու ժողովուրդիդ առաջնորդին դէմ չարախօսութիւն մի՛ ըներ”» (հմր 4-5):

Երբ գիտցաւ, որ Անանիա իշխանութեան մարդ է, Պօղոս զղջաց իր վարմունքին եւ խօսքերուն համար: Աշակերտները չէին հնազանդեր պատուէրներու, որոնք կը

հակասելին Սուրբ Գիրքերուն, բայց ենթարկուած վարմունք ունէին, որովհետեւ գիտէին, թէ՛ «գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծմէ կարգուած են»:

Աւելի Բարձր Օրէնքի մը Հնազանդելու Դանիելի Որոշումը

Դանիելի օրերուն օրէնք մը կարգուեցաւ, թէ՛ ան որ թագաւորէն զատ ուրիշ աստուծմէ մը կամ մարդէ մը բան մը խնդրէր, առիծներու գուբը պիտի նետուէր: Նախանձ վարչապետներ եւ սատրապներ այդ օրէնքը յառաջ բերին՝ Դանիելը սպաննել տալու համար: Այդ փտած ղեկավարները խաբէբայութեամբ մը Դարեհ Թագաւորին ստորագրել տուին այդ օրէնքը: Դանիել այդ օրէնքին հնազանդիլ չմտածեց անգամ. ան ընտրեց հնազանդիլ Աստուծոյ: Ան կառչած մնաց սաղմոսողին ծրագիրին, թէ՛ «Իրիկունը, առտուն եւ կէսօրին պիտի գանգատիմ ու հառաչեմ [անգլերէն տարբերակին մէջ կ'ըսէ՝ «պիտի աղօթեմ եւ բարձրաձայն աղաղակեմ»], ան ալ պիտի լսէ իմ ձայնս» (Սղ 55.17):

Տէն Դանիել ինչ ըրաւ. «Երբ Դանիել տեղեկացաւ, թէ հրովարտակը ստորագրուեցաւ՝ իր տունը գնաց, որուն վերնատան պատուհանները դէպի Երուսաղէմ կը բացուէին, ու շարունակեց օրը երեք անգամ ծնրադրելով աղօթել եւ Աստուծմէն շնորհակալ ըլլալ՝ իր վաղեմի սովորութեան պէս» (Դն 6.10):

Դանիելի անհնազանդութեան մասին տեղեկացուցին թագաւորին, որ ստիպուած եղաւ Դանիելը նետել տալ առիծներու գուբը: Ատով հանդերձ Դանիելի ենթարկումը բնաւ չխախտեցաւ՝ նոյնիսկ այդ անարդարութեան դիմաց: Աստուած ազատեց զինք եւ գոցեց անօթի առիծներուն բերանները՝ մինչ Դանիել քնացաւ գուբին մէջ առանց վնասուելու: Երբ թագաւորը տեսաւ պատահածը, Դանիելի

դէմ դաւ նիւթողները նետել տուաւ անօթի առիւծներուն դիմաց, որոնք լափեցին զանոնք:

Միշտ Չէ, որ Արդիւնքը Հաճելի Կ'ըլլայ

Աստուած ազատեց այդ սուրբերը, բայց միշտ չէ, որ այդ արդիւնքը կ'ունենանք: Եբրայեցիներուն ուղղուած նամակին մէջ կը կարդանք.

Շատեր տանջանքի տակ մեռան՝ մերժելով ազատութիւնը, որպէսզի լաւագոյն կեանքի մը համար յարութիւն առնեն: Ուրիշներ նախատինքներու եւ ծեծերու ենթարկուեցան, շղթաներու եւ բանտերու համը առին: Քարկոծուեցան, սղոցուեցան, փորձութեանց մատնուեցան, սուրով սպաննուեցան, ոչխարի կամ այծի մորթով ծածկուած շրջեցան՝ զրկանք, հալածանք ու չարչարանք կրելով, թափառական ապրելով անապատներու մէջ կամ լեռներու վրայ, քարայրներու կամ խոռոչներու մէջ: Արդարեւ աշխարհը արժանի չէր այդ մարդոց: (11.35-38)

Այդ տղամարդիկն ու կիները դաժան եւ անարդար վարմունքի արժանացան ղեկավարներու կողմէ:

Տէրտիւփանոս, որ Առաջին Դարու Եկեղեցւոյ մէջ ուսուցիչ մըն էր եւ ապրած է Ք.Ե. 140-էն 230 թուականներուն, հռոմայեցի ղեկավարներուն եւ քաղաքացիներուն յիշեցուց, թէ իրենց հալածանքը միայն կը զօրացնէր Քրիստոնէութեան դատը: Ան գրեց. «Որքան կը կրճատէք մեզ, այդքան մեր թիւը կը շատնայ: Քրիստոնէաներուն արիւնը հունտ է» (*Ափոլոնճի* («Ջատագովութիւն»), Գլուխ 50):

Կ'ուզեմ կրկնել բառերը անձանօթ հռոմայեցիի մը, որ նկարագրած է հալածուող հաւատացեալները.

Անոնք իրենց երկիրներուն մէջ կը բնակին իբրեւ պանդուխտներ: Անոնք մարմինի մէջ կ'ապրին, բայց մարմինի պահանջներուն ետեւէն չեն: Անոնք երկրի վրայ իրենց օրերը կ'անցընեն, բայց երկինքի քաղաքացիներ են: Կը հնազանդին դրուած օրէնքներուն եւ միեւնոյն ատեն կը գերազանցեն այդ օրէնքներուն իրենց կեանքերով: Անոնք, որոնք կ'ատեն զիրենք անկարող են որեւէ պատճառ տալու իրենց ատելութեան համար: (Նամակ՝ Դիոկնեթուսին, Գլուխ 5)

Անոնք հնազանդեցան եւ ենթարկուեցան, սակայն գերազանցեցին սոսկ հնազանդութեան՝ իրենց ակնաճական կամ ենթարկուած վարմունքով: Դարձեալ, ինչպէս տեսանք Պետրոսի յորդորին մէջ, անարդար ղեկավարներու դիմաց այդ հաւատացեալներուն վարմունքը շփոթի մատնեց զանոնք եւ պատճառ եղաւ, որ անոնցմէ ոմանք Տիրոջ գան:

Չկան Մոխրագոյն Տարածքներ

Աստուած կը թելադրէ, որ ենթարկուած վարմունք ունենանք իշխանութեան հանդէպ՝ ըլլայ անիկա քաղաքային, ընտանեկան, եկեղեցական կամ ընկերային, եւ թէ պէտք է գործնապէս հնազանդինք, բացի եթէ իշխանութիւնները մեզի ըսեն, որ ընենք բան մը, որ Սուրբ Գիրքերուն մէջ *յարակօրէն* կը նշուի իբրեւ մեղք: Շեշտեմ յստակօրէն բառը: Վերը նշուած պարագաներուն մէջ հաւատացեալները չհնազանդեցան երբ իրենց հրամայուեցաւ ուրանալ Քրիստոսը, սպաննել, ուրիշ աստուածներ պաշտել կամ ուղղակիօրէն խախտել Յիսուսի մէկ պատուէրը: Անոնց համար մոխրագոյն տարածքներ կամ ինքնագլուխ որոշումներ չկային:

Ահա օրինակ մը մոխրագոյն տարածքի, որ լսած եմ մարդոցմէ, որոնք կ'աշխատին Քրիստոնէական

առաքելություններու մէջ. «Հովիւս ինծի ըսած է, որ խորհրդատուութիւն չընեմ կամ չաղօթեմ մարդոց հետ գրասենեակի ժամերուն, բայց ասիկա Աստուծոյ սիրոյն հակառակ է, եւ Աստուծոյ սիրոյն մէջ չքալելը մեղք է, ուստի պէտք է շարունակեմ ընել ասիկա»: Ասիկա ինքնագլուխ որոշում մըն է իշխանութեան տակ եղող հաւատացեալներու կողմէ: Ասիկա իրենց մեկնաբանութիւնն է: Հովիւր իրենցմէ չի պահանջեր, որ Աստուծոյ Խօսքի խախտում մը ընեն: Առաւել, անոնց աշխատավարձ կը տրուի, որ մեքենագրեն, ծրարեն, տուեալներ մշակեն կամ ուրիշ տեսակի գործեր ընեն, ոչ թէ աղօթեն:

Իրենց անհնազանդութեան պատճառով, այդ մարդիկը վերջաւորութեան գողութիւն կ'ընեն: Եթէ իրապէս իրենց սիրտին մէջ ունին ուրիշներու համար աղօթելու բեռը, պէտք է հովիւէն հրաման առնեն, որ աղօթքի կարիք ունեցողներուն հեռաձայնեն իրենց հանգիստի կամ դադարի ժամերուն կամ գործի ժամերէն ետք: Եթէ հովիւը տակաւին հանգիստ չէ այդ գաղափարին հետ, կը նշանակէ, թէ այնպէս կը զգայ, որ առաքելութեան պաշտօնեաները ատակ չեն կամ պէտք եղած մարզումը չեն ստացած խորհրդատուութիւն ընելու անոնց, որոնք կը հեռաձայնեն առաքելութիւն՝ օգնութիւն ստանալու համար: Եթէ հովիւին դրած այդ օրէնքը սխալ է, ան Աստուծոյ հաշիւ պիտի տայ անոր համար, բայց իր իշխանութեան տակ եղողները պէտք չէ անձնական կամ ինքնագլուխ որոշում տան այդ առումով: Ասիկա պարզապէս հարիւար օրինակներէն մէկն է, բայց սորվելիք բանը մէկ է. կրնանք անհնազանդ ըլլալ իշխանութիւններուն միայն երբ յստակ խախտում մը կայ գրաւոր Աստուծոյ Խօսքին նկատմամբ:

Տակաւին կրնաս հարց տալ. «Բայց եթէ իմ վրաս եղող իշխանութիւնը ինծի ըսէ, որ ընեմ բան մը, որուն համաձայն չեմ ես: Կամ եթէ ուզէ, որ ընեմ բան մը, որ բացայայտօրէն

անիմաստ է: Կամ եթե իշխանությունը ինձի ըսէ բան մը, որուն հակառակը տեսած եմ կամ ստացած եմ աղօթքի ատեն»: Այս հարցումներուն համար աստուածաշնչական պատասխաններ պիտի տամ յաջորդ գլուխին մէջ:

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱՊԱ ԵԹԷ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՆԾԻ ԸՍԷ...

Մեր փնտրածը իշխանութեան յայտնութիւն մըն է, որ ինքնին Աստուծոյ մասին յայտնութիւն մըն է, որովհետեւ Ինք եւ Իր իշխանութիւնը անբաժանելի են:

Բոլորս ալ հանդիպած ենք մարդոց, որոնք դժգոհութիւն ունին իրենց վրայ եղող ղեկավարներէն: Կը գանգատին անոնց անազդու *թեքնիքներէն* կամ անիմաստուն որոշումներէն եւ թէ ինչպէս անոնք ժխտականօրէն ազդած են իրենց կեանքին վրայ: Կը գանգատին, որ իրենց որոշ բաներ խոստացուած էին իրենց ղեկավարներուն կողմէ, բայց տակաւին կը սպասեն անոնց իրականացման: Իրականութեան մէջ ամէն բան կը թուի ետեւ երթալ: Անոնք վստահ են, որ իրենց հովիւը մոռցած է այդ մասին եւ հիմա կը մտածեն, որ իր իշխանութիւնը Աստուծմէ անջատ է: Այդ

մտածումը դուռ կը բանայ գանգատի, որ վերջ ի վերջոյ ինքզինք կը յայտնէ անհնազանդ վարմունքի մը միջոցաւ: Այլեւս միայն ժամանակի հարց կ'ըլլայ անոնց խաբկանքի մէջ ինչալը եւ հեռանալը այն իշխանութենէն, որ Աստուած դրած է իրենց վրայ՝ աճման եւ պաշտպանութեան համար:

Աւելի Լաւ Էինք Առանց Քեզի

Իսրայէլի որդիները շարունակ այդ վարմունքը կը կրկնէին: Կար ժամանակ մը երբ Մովսէսի ղեկավարութիւնը անազդու եւ նոյնիսկ վնասակար համարեցին իրենց համար: Սակայն այդպէս չսկսաւ պատմութիւնը: Երբ Մովսէս իր անապատի կեցութիւնը ձգելով կը յայտնուի տեսարանին մէջ, ան հանդիպում կ'ունենայ Իսրայէլի ղեկավարներուն հետ՝ նախքան Փարաւոնին հետ հանդիպիլը: Անոնց ըսաւ, թէ ինչպէս Տէրը ղրկած էր զինք՝ զիրենք ազատելու համար եւ «բարձրացնելու այդ երկրէն դէպի լաւ եւ ընդարձակ երկիր մը, կաթ ու մեղր հոսեցնող երկիր մը» (Ելք 3.8): Երբ անոնք լսեցին այդ հոյակապ լուրը, հաւատացին Մովսէսի եւ պաշտեցին զԱստուած: Մեծ ուրախութիւն կար անոնց մէջ մինչ իրենց առջեւ կը տեսնէին Աստուծոյ խոստացած ղեկավարը, որ զիրենք պիտի առաջնորդէր գերութենէ դուրս:

Այդ ժողովը ձգելով, Մովսէս գնաց Փարաւոնին եւ լերան վրայ Աստուծոյ իրեն տուած պատգամը բառացիօրէն փոխանցեց, ըսելով. «Իսրայէլի Աստուածը՝ Եհովան սա՛ կը յայտարարէ. “Արձակէ իմ ժողովուրդս”» (Ելք 5.1):

Փարաւոն պատասխանեց. «Եհովան ո՞վ է, որ անոր խօսքը մտիկ ընելով՝ Իսրայէլը արձակեմ: Եհովան չեմ ճանչնար, եւ Իսրայէլն ալ չեմ արձակեր [...] Ինչո՞ւ ժողովուրդը կը հեռացնէք իրենց գործերէն [...] Փարաւոն այդ օրը ժողովուրդին գործավարներուն եւ անոր ոստիկաններուն պատուիրեց [...] Գործը այս մարդոց վրայ թող ծանրանայ» (հմր 2-9):

Այլեւս յարդ պիտի չտրուէր իրենց՝ աղիւս շինելու արդէն իսկ դժուար գործին համար: Ուստի անոնք պէտք էր յարդ հաւաքէին գիշերը, եւ աղիւս շինէին ցերեկը: Տակաւին պահանջուած աղիւսի թիւը պիտի չպակսէր, հակառակ անոր որ յարդ չէր տրուէր իրենց:

Իսրայէլացիները ցրուեցան ամբողջ երկրին մէջ՝ յարդի տեղ խոզան հաւաքելու համար: Եգիպտացի գործավարները աշխատողները փութացնելով, կոպիտ կերպով կը պոռային. «Ձեր օրական աղիւսի քանակը պէտք է արտադրէք, ինչպէս առաջ կ'ընէիք»:

Փարաւոնի գործավարները ծեծեցին Իսրայէլի որդիներուն ոստիկանները՝ ըսելով. «Ինչո՞ւ երէկ եւ այսօր չարտադրեցիք աղիւսներու պէտք եղած քանակը»:

Ուստի Իսրայէլի որդիներուն ոստիկանները դիմեցին Փարաւոնին, աղերսելով. «Կը խնդրենք, որ այդպէս չվարուիք մեզի հետ: Մեզի յարդ չի տրուիր, բայց տակաւին նոյն քանակութեամբ աղիւս կը պահանջուի մեզմէ: Ծեծի կ'ենթարկուինք բանի մը համար, որ մեր յանցանքը չէ: Քու գործավարներդ այդպիսի անտրամաբանական պահանջներ պէտք չէ ընեն»:

Իսկ Փարաւոն պատասխանեց. «Ծո՛ղյ էք դուք, ծո՛ղյ: Ըստ երեւոյթին շատ գործ չունիք ընելու: Եթէ ունենայիք, պիտի չըսէիք. “Եկէք երթանք եւ Տիրոջ զոհ մատուցանենք”։ Վերադարձէք ձեր գործին: Յարդ պիտի չտրուի ձեզի, բայց տակաւին նոյն քանակութեամբ աղիւս պիտի արտադրէք»:

Քանի որ Փարաւոն ետ չկեցաւ իր պահանջէն, Իսրայէլի որդիներուն ոստիկանները հասկցան, որ շատ լուրջ խնդիրի մը մէջ էին: Փարաւոնին քովէն հեռանալով, գացին Մովսէսի ու Ահարոնի մօտ, որոնք դուրսը իրենց կը սպասէին եւ ըսին. «Տէ՛րը ձեզի նայի ու դատէ. որովհետեւ մեզ սոսկալի կացութեան մէջ ձգեցիք Փարաւոնին առջեւ: Իրեն պատրուակ տուիք մեզ սպաննելու» (տես Եւր 5.10-21, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Իսրայելի ժողովուրդը դժգոհ էր Մովսէսի ղեկավարութենէն: Անոր քարոզը եւ թելադրանքները տառապանք եւ դժուարութիւններ բերած էին իրենց: Սկսան անջատել անոր իշխանութիւնը Աստուծոյ իշխանութենէն, ինչ որ յայտնի կ'ընէ անկէ, որ ուզեցին, որ Աստուած դատէ զայն:

Կը մտածէին, թէ Մովսէսի սխալն էր: Եթէ զիրենք ազատ ձգած ըլլար, Փարաւոն այդքան խստութիւն պիտի չընէր իրենց հետ: Չկրցան անդրադառնալ, որ Աստուած էր եւ ոչ շփոթի մէջ եղող եւ անհմաստուն ղեկավար մը, որ ծրագրած էր կամ կը կառավարէր այդ բոլորը: Ոչ մէկ բան պատահած էր, որ Անոր մեծ ծրագիրէն կամ կանխագիտութենէն դուրս էր: Տէրը Մովսէսին ըսաւ, որ խօսի Փարաւոնին հետ: Աստուած, ոչ Չարախօսը կամ Մովսէս, կարծրացուց Փարաւոնին սիրտը: Ատիկա յստակ կը դառնայ յատկապէս երբ քանի մը տեղ կը կարդանք. «Տէրը կարծրացուց Փարաւոնի սիրտը» (Ելք 11.10: Նաեւ տե՛ս Ելք 9.12, 10.1,20,27): Որքան կարծրացաւ Փարաւոնի սիրտը այդքան անելի սոսկալի եղաւ կեանքը Աբրահամի սերունդներուն համար:

Շատ տառապանքէ եւ հալածանքէ ետք, իսրայէլացիները ազատագրուեցան Եգիպտոսէն՝ միայն ընդարձակ անապատին մէջ թափառելու համար: Առանց ջուրի եւ պարէնին կամաց-կամաց սպառելուն պատճառով, ժողովուրդը սկսաւ հարց տալ. Մովսէս իրենց ազատութիւն եւ առատութիւն չէ՞ր խոստացած: «Լաւ եւ ընդարձակ երկիր մը, կաթ ու մեղր հոսեցնող երկիր մը»: Ընդարձակ էր, այո, բայց լաւէն այնքան հեռու որքան կարելի էր ըլլալ, եւ կաթն ու մեղրը չէին երեւեր հորիզոնին վրայ: Ա՛յդ էր ազատութեան եւ նախատեսութեան կամ պարէնի իր գաղափարը: Արդեօք ան իրապէս Աստուծոյ կողմէ ղրկուած էր:

Երեք օր առանց ջուրի եւ կերակուրի մնալէ ետք, Մովսէս առաջնորդեց զիրենք Մարա անունով վայր մը, ուր ջուր գտան: Հաւանաբար մտածեցին. *Լաւ, թերեւս կացութիւնը պիտի*

սկսի փոխուիլ: Սակայն շուտով անդրադարձան, որ ջուրէն չէին կրնար խմել, քանի որ դառն էր: Չէին հաւատար իրենց հետ պատահածին, եւ պոռթկում մը բարձրացաւ ժողովուրդին մէջ: Անոնց քննադատութիւնները սկսան աւելի սրուիլ եւ սկսան մրմռալ իրարու միջեւ եւ գանգատներ ներկայացնել Մովսէսին: Դժգոհութիւնը քաղցկեղի նման թաքուն կերպով տարածուեցաւ ամբողջ ժողովուրդին մէջ: Թերեւս Մովսէս միայն գիտէր ժողովուրդը դժուար հանել, բայց ոչ՝ ներս մտցնել:

Ժողովուրդը գանգատեցաւ Մովսէսին եւ Ահարոնին, ըսելով. «Երանի՜ թէ Տէրոջ ձեռքով մեռած ըլլայինք Եգիպտոսի մէջ, երբ միսի կաթսաներուն քով նստած էինք ու կուշտ հաց կ'ուտէինք, արդարեւ մեզ այս անապատը հանեցիք, որ այս ամբողջ համախմբումը անօթութենէ մեռցնէք» (Ելք 16.3):

Անոնց հանդուրժողութիւնը իր ծայրին հասած էր: Մովսէսի ղեկավարութեան ձիրքերը անպտուղ դուրս եկած էին շատ մը ձեւերով: Կեանքը աւելի լաւ չէր իրենց համար նախքան Մովսէսի իշխանութեան գլուխ գալը: Մովսէսի տուած պատգամներէն եւ ղեկավարութեան գալէն ետք միայն դժուարութիւններ եւ ճնշումներ ապրած էին Եգիպտոսի մէջ: Այդ բոլորը վերջ պիտի գտնէին արդեօք: Անոնք փախուստ կու տային մէկ դժուարութենէն միայն ուրիշի մը մէջ իյնալու համար: Իրենց ղեկավարը իրենց խոստացած էր երկիր մը, ուր կաթ եւ մեղր կը հոսէր, բայց անոնք միայն չորցած գետին, օձեր եւ կարիճներ կը տեսնէին անապատին մէջ: Մովսէս տեղ մը սխալ ճամբայ առած էր կամ ալ հաւանաբար չար էր: Փարաւոնի իշխանութեան տակ գոնէ կերակուր ունէին: Մովսէս կը թուէր մտադրած ըլլար զիրենք չարչարանքի մատնել եւ սովամահ ընել: Կեանքը աւելի լաւ էր Եգիպտոսի մէջ: Անոնց գանգատները շատցան այն աստիճան, որ իրարու ըսին. «Մեր վրայ զօրագլուխ մը կարգենք ու Եգիպտոս վերադառնանք» (Թւ 14.4):

Բայց մտիկ ըրէ այն խօսքը, որ Մովսէս ըսաւ անոնց, որոնք արդէն յոգնած էին Աստուծոյ նշանակած ղեկավարէն. «Պիտի

գիտնաք, թե Տէրը լսած է իրեն դէմ ձեր ըրած տրտունջը: Մենք ղվ ենք. ձեր տրտունջը մեզի դէմ չէ, հապա՛ Տէրոջ դէմ» (Ելք 16.8):

Այդ տղամարդիկն ու կիները կը կարծէին, որ իրենց անհնազանդութիւնը Մովսէսի դէմ էր եւ որեւէ ձեռով կապուած չէր Աստուծոյ հետ: Կը կարծէին, որ յաջող կերպով անջատած էին երկուքը: Անոնք տրամաբանութեամբ կ'ապրէին փոխանակ հնազանդութեան սկզբունքով: Անոնք, որոնք կը քալեն սահմանափակ տրամաբանութեամբ՝ իրենց տեսածներուն եւ պայմաններուն նայելով, իրենք զիրենք կը գտնեն յիմարութեան ճամբուն մէջ: Անոնք պիտի չհասնին հոն, ուր պէտք էր հասնէին: Մինչ անոնք, որոնք կը ճանչնան իշխանութիւնը եւ կը հնազանդին անոր, պիտի մտնեն խոստումներուն մէջ, ինչպէս Յեսու եւ Քաղէբ մտան:

Հապա Եթէ Զանազանութեան Կարողութիւնովս Բաներ Հասկնամ...

Կրնաս դուն քեզ ւելի իմաստուն համարել Իսրայէլի որդիներէն, որոնք դատեցին իրենց ղեկավարին որոշումներուն բացայայտ եւ անմիջական ազդեցութիւններուն հիման վրայ: Կրնայ ըլլալ, որ մտածես, որ դուն Իսրայէլի ժողովուրդէն ւելի հոգեւոր ես եւ թէ ւելի Յեսուի նման ես: Եթէ այն ատեն ապրած ըլլայիր հաւանաբար պիտի զանազանէիր, որ Մովսէս ճիշդ էր եւ բնաւ Իսրայէլի որդիներուն նման չվարուէիր. պիտի ըլլայիր հոն, ուր Յեսուն էր:

Ատիկա կրնայ ճիշդ ըլլալ, բայց պէտք է զգոյշ ըլլանք երբ այդպիսի ենթադրութիւններ կ'ընենք: Փարիսեցիները յամառօրէն կը պնդէին՝ «Եթէ մենք մեր հայրերուն ժամանակը ապրած ըլլայինք, մարգարէներու սպանութեան մասնակից պիտի չլլայինք» (Մտ 23.30): Սակայն Յիսուս ըսաւ, որ անոնք իրենց նախահայրերուն հոգին ունէին: Միշտ դիւրին է ճիշդը սխալէն զանազանել երբ ամբողջ պատմութիւնը բացուած է

Եւ գիրքեր գրուած են: Յետուն իր ընկերներէն տարբեր ընողը անոր զանազանութեան կարողութիւնը չէր, այլ՝ ճշմարիտ իշխանութիւնը ճանչնալու եւ անոր հնազանդելու անոր կարողութիւնը: Ատիկա է, որ կը ծնի ճշմարիտ զանազանութիւն:

Անհաւանութեան արձագանգներ կը լսեմ ծայներուն մէջ շատերու, որոնք կ'ըսեն, թէ զանազանելու կարողութիւն ունին, սակայն անհնազանդ սիրտեր ունին: Նոյնիսկ այս գիրքը գրած ատենս, նոր տակալին, վերջին քսանչորս ժամուան ընթացքին, ստացայ նամակ մը, ուր կարդացի՝ «Կ'ենթարկուիմ եթէ համաձայն ըլլամ» եւ «զանազանելու կարողութիւն»: Այդ ձեւով մտածողները սխալած կ'ըլլան հաւատալով, որ իրաւունք ունին չհնազանդելու մէջ:

Ո՞վ Դրաւ Զինք Այդ Դիրքին Վրայ

Կրնաս հարց տալ. «Հապա եթէ զանազանելու կարողութիւնովս հասկնամ, որ առաջնորդս լաւ ընտրութիւն մը չի կատարեր: Արդեօք տակալի՞ն պէտք է հնազանդիմ անոր, գիտնալով, որ դէպի ձախորդութիւն մը կ'առաջնորդուինք»: Երբ ետ կը նայիմ իշխանութեան տակ ծառայելու օրերուս, կը յիշեմ, որ շատ անգամ ունեցած եմ այդ յուսախաբութիւնը, թէ՛ «Վատ որոշում մը կու տան: Չեն հասկնար, թէ Աստուած ինչ կ'ըսէ: Ժխտական ազդեցութեան մը տակ են: Ես պարզապէս չեմ կրնար ենթարկուիլ ասոր»: Սակայն այդ պարագաներուն շատ յաճախ իմ չկոտրած սիրտս կը դրսեւորէր իր անկախութիւնը:

Մէկ տարի ծառայեցի իբրեւ հովիւիս վարչական գործերու օգնականը եւ շատ մը որոշումներ հարցականի տակ առի: Կը տեսնէի անոր թելադրանքները կամ պատուէրները սեղանիս վրայ նախքան որ անոնք բաժնուէին բաժանմունքներու պատասխանատուներուն: Անհամար անգամ անոր որոշումները անիմաստուն համարեցի եւ մրմռացի անոր դէմ սիրտիս

մէջ: Օր մը Հոգին ինծի ըսաւ. *Հարցում մը ունիմ քեզի:*

Փորձառաբար գիտեմ, որ երբ Աստուած հարցում հարցնէ ինծի, կը պատրաստուի մէջտեղ հանել թերի իմաստութիւնս: Ըսի. «Այո, Տէր»:

Ես քեզ դրի հովիւի պաշտօնին, կամ զինք դրի հովիւի պաշտօնին:

Ըսի. «Չինք դրիր հովիւի պաշտօնին»:

Տէրը արագօրէն ըսաւ. *Արիկա ճիշդ է: Հետեւաբար ես իրեն ցոյց պիտի տամ բաներ, որ պէտք չունիմ քեզի ցոյց տալու, եւ շար անգամ ես իր որոշումին իմաստութիւնը դիտմամբ պիտի պահեմ քեզմէ, որպէսզի տեսնեմ, որ դուն իրեն պիտի հետեւիս այնպէս ինչպէս ինք Ինծի կը հետեւի:*

Ընդհանրապէս ամիսներ ետք հովիւին որոշումին իմաստուն ըլլալը մէջտեղ կ'ելլէր: Կը տեսնէի զանիկա, լոյսեր կը վառէին մէջս եւ անգամ մը եւս կ'անդրադառնայի, որ շեղած էի տրամաբանութեանս պատճառով՝ զանիկա ատլի վեր դասելով քան հնազանդութեան սկզբունքը: Ճիշդ ատիկա է, որ բաժանումներ կը յառաջացնէ եկեղեցիներու, տուներու եւ ընկերութիւններու մէջ: Աստուած իշխանութիւններուն հանդէպ մեր հնազանդութիւնը չսահմանափակեց միայն այն ատեններուն երբ կը տեսնենք անոնց իմաստութիւնը, կը համաձայնինք անոնց հետ կամ կը սիրենք անոնց մեզի ըսածները: Ան պարզապէս ըսաւ. «Հնազանդեցէք»:

Յետոյ Տէրը խօսեցաւ սիրտիս, ըսելով. *Ճոն, եթէ ես մտադրած ըլլայի, որ ամէն հաւատացեալ Ինծի հետ աղօթքի եւ հաղորդութեան մէջ սրանայ իր ամբողջ տեղեկութիւնը, իմաստութիւնը եւ ուղղութիւնը, ապա եկեղեցիին մէջ իշխանութիւն երբեք չէի հաստատուիր: Ես եկեղեցիին մէջ իշխանութիւն կարգեցի այն մտադրութեամբ, որ զուակներս պիտի չկարենային իրենց բոլոր պէտքերը սրանալ պարզապէս աղօթքի միջոցաւ: Պէտք էր սորվէին ճանչնալ եւ լսել Իմ ձայնս իրենց ղեկավարներուն միջոցաւ եւ:*

Մեր պատասխանատուութիւնը չէ ղեկավարութեան որոշումներուն վերաբերեալ կարծիք ունենալ կամ դատել անոր արդիւնքները: Ան՝ որ այդ անձը իշխանութեան վրայ դրած է, պիտի ընէ ատիկա: Եթէ իսրայէլացիներուն արտօնուած ըլլար դատել Մովսէսի որոշումները, ան դժուար կացութեան մէջ պիտի ըլլար եւ ժողովուրդը Եգիպտոս պիտի վերադառնար:

Ղեկավարները պիտի դատուին, մենք ալ պիտի դատուինք: Ղեկավարները պիտի դատուին իրենց որոշումներուն համար, եւ անոնց դատաստանը անելի խիստ պիտի ըլլայ քան մերինը: Այդ պատճառով Յիսուս զգուշացուց. «Որուն որ շատ տրուած է՝ շատ պիտի պահանջուի, իսկ որուն որ անելի շատ տրուած է՝ շատ անելի պիտի պահանջուի» (Ղկ 12.48): Յակոբոս եւս կը զգուշացնէ. «Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, շատերդ ուսուցիչ պէտք չէ ըլլաք եկեղեցիին մէջ, որովհետեւ մենք, որ կ'ուսուցանենք անելի խստութեամբ պիտի դատուինք Աստուծոյ կողմէ» (3.1)²⁴:

Միւս կողմէ, մեր դատուիլը պիտի ըլլայ մեր հնազանդութեան հիման վրայ, որովհետեւ իշխանութիւնը Աստուծմէ է: Յանձնարարուած իշխանութեան դէմ դնելը Աստուծոյ իշխանութեան դէմ դնել է: Մենք մեր վրայ պէտք չէ առնենք ղեկավարներուն ճիշդ կամ սխալ ըլլալը սկիզբէն զանազանելու ճնշումը: Ոչ ալ պէտք է դատենք որոշումներուն արդիւնքները: Ատիկա մեր բեռը չէ, այլ՝ Աստուծոյ: Միայն Աստուած գիտէ եւ կրնայ փոխել սիրտերը այնպէս ինչպէս կը փափաքի:

Ղեկավարին Սիրտը Աստուծոյ Ձեռքերուն Մէջն Է

Վերադառնալով երկրորդ գլուխին մէջ տուած վկայութեանս, երբ հովիւս յայտարարեց եկեղեցիին համար

24 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

տուներու մէջ փոքր խումբերու հանդիպումներուն ջնջումը, ես ոչ միայն կը հաւատայի, որ ան սխալ էր, այլեւ կը հաւատայի, որ ան ինծի դէմ այդ որոշումը տուած էր մէկու մը ազդեցութեան տակ ըլլալուն պատճառով: Ուրիշ մթնոլորտ մը կար մեր եկեղեցոյ ղեկավարութեան կառոյցին մէջ, որուն մասին չնշեցի ասկէ առաջ եւ որուն պատճառը գրասենեակի գործավարն էր: Ան չէր սիրեր զիս եւ աշխատանք կը տանէր զիս գործէն դուրս դնելու:

Ատիկա կարենալ յաջողցնելու համար, ան բաժանումի պատ մը շինեց իմ եւ աւագ հովիւին միջեւ՝ մեզմէ իւրաքանչիւրին ժխտական լուրեր տալու միսին մասին: Ըսածներուն մեծ մասը բացայայտօրէն անճիշդ էին: Առաւել, ան ամբողջ անձնակազմին տարբեր տեսակի նամակներ դրկած էր յատկապէս ինծի դէմ: Պաշտօնեաներ կ'ըսէին կ'նոջս՝ որ իր կարգին եւս անձնակազմին մէջ էր, թէ՛ «Ինչո՞ւ ան պարզապէս ամուսինիդ անունը չի դներ այս նամակին վրայ (շատ յայտնի էր, որ իմ մասիս կը խօսէր)»: Գիտէի ինչ կը փորձեր ընել ան, բայց ձեռքերս կապուած էին:

Երբ աւագ հովիւը ջնջեց տուներու մէջ հանդիպումները, ես ատիկա տեսայ իբրեւ ինծի դէմ յարձակում մը եւս, որ արդիւնքն էր այն սուտերուն եւ կասկածներուն, որ այդ գործավարը ցանած էր անոր մէջ: Ես վստահ էի, որ ճշգրիտ կերպով «կը զանազանէի»: Ես ւելի արդարացուած եւ ւելի անպատրաստական զգացի ենթարկուելու աւագ հովիւի իշխանութեան: Վերջապէս ան սխալ առաջնորդութիւն ստացած էր եւ սխալ որոշում մը կու տար, մտածեցի: Ինչպէս կրնար ըլլալ, որ Աստուած կ'ուզէր թափել ութ ամսուայ մեծ աշխատանքը, որ մեծ թիով հոգիներու փրկութեան առիթ մը պիտի ըլլար: Այդ բոլոր պատճառներուն համար այդ ժողովին ընթացքին քսան վայրկեան դէմ դրի աւագ հովիւին: Ժողովէն հեռացայ ինքզինքս ճիշդ եւ արդարացուած զգալով, միայն յանդիմանուելու համար Սուրբ Հոգիէն երբ տուն հասայ:

Ապա ունեցայ այդ մեծ յայտնությունը, թե՛ ես գործ ունեի ոչ թե՛ մարդու մը իշխանութեան հետ, այլ՝ Աստուծոյ:

Կարճ ժամանակ ետք Տէրը աստուածաշնչական համար մը ամրագրեց սիրտիս մէջ: Անիկա յստակութիւն բերաւ նոյնանման պարագաներու եւ ուղղութիւն՝ դժուար կացութիւններու մէջ.

Թագաւորին սիրտը ջուրի առուններու պէս է
Տէրոջ ձեռքին մէջ.
Զայն կը հակեցնէ որ կողմ որ ուզէ: (Առ 21.1)

Թագաւորը կը ներկայացնէ քու վրադ եղող իշխանութիւնը: Ըլլայ ան բարեպաշտ կամ դաժան, անոր սիրտը տակաւին Տիրոջ ձեռքին մէջն է: Համարը չ'ըսեր. «Բարի թագաւորին սիրտը Տէրոջ ձեռքին մէջն է»: Կարեւոր չէ, թե՛ ինչ ազդեցութեան տակ է, անոր սիրտը կը շարունակէ մնալ Տիրոջ ձեռքին մէջ: Որովհետեւ չ'ըսեր. «Այնքան ատեն, որ թագաւորը սխալ ազդեցութեան տակ չէ, անոր սիրտը կրնայ հակեցնել (ուղղել) Տէրը»:

Հապա Եթէ *Վստահ Գիտնանք*, թէ Անիկա Վատ Որոշում մըն Է...

Հապա եթէ միայն չենք զանազաներ, այլ՝ վստահ ենք, որ իշխանութիւնը վատ որոշում մը կու տայ: Հապա եթէ յստակ փաստ ունինք, որ մեր առաջնորդը չարամիտ տեղեկութիւններու ազդեցութեան տակ է... Չկայ որեւէ օգնութիւն կամ ետ դարձնելու միջոց: Չկայ բան մը, որ կրնանք ընել մեր առաջնորդին օգնելու համար: Պատասխանը «Այո» է:

Եսթեր ատոր մէկ լաւ օրինակն է: Աբրահամի որդիները գերի էին պարսկական իշխանութեան տակ: Չար ծրագիր մը նիւթուած էր չար Համանի կողմէ, որ համոզած էր պարսիկ

Ասուերոս Թագաւորը, որ ստորագրէր բոլոր հրեաները սպաննելու հրամանագիր մը: Թագաւորը ինք ճշդաճ էր այդ բանը պատահելուն օրը:

Եսթեր Թագուհի Աբրահամի սերունդէն էր, բայց այդ մասին մէկու մը բան չէր ըսած՝ իր հօրեղբօր Մուրթթէի թելադրանքով: Մուրթթէ կ'երթայ Եսթերին եւ կը թելադրէ, որ ներկայանայ թագաւորին՝ իր ժողովուրդին համար: Ան գիտէր, որ այդպէս ընելը Եսթերի համար կրնար մահ նշանակել: Եսթեր ամէն բան կորսնցնելու վտանգին մէջ էր եւ սակայն շահելիք մը չունէր: Ան թագուհին էր, եւ չկար այն վտանգը, որ իր գաղտնիքը կրնար մէջտեղ ելլել:

Եսթեր որոշեց դիմել թագաւորին: Երեք օր ծոմապահութիւն ընելէ ետք, ան ներկայացաւ Ասուերոս Թագաւորին՝ պալատին ներքին գաւիթին մէջ, եւ Աստուած այնպէս ըրաւ, որ Եսթեր շնորհք գտնէր թագաւորին առջեւ: Թագաւորը հարցուց, թէ ինչ էր պահանջը, Եսթեր ալ թագաւորը եւ Համանը խնճոյքի հրաւիրեց: Թագաւորը հաւանութիւն տուաւ, եւ ինք եւ Համան գացին կերակուր ուտելու թագուհիին հետ:

Այդ գիշեր թագաւորը չկրցաւ քնանալ, եւ իր ծառաներուն հրամայեց, որ ժամանակագրութեան կամ յիշատակներու գիրքը կարդան իրեն: Ընթերցումէն յիշեց, որ հրեայ Մուրթթէն իր կեանքը ազատեր էր եւ սակայն բնաւ չէր վարձատրուած: Թագաւորը կը սկսի մտածել, թէ ինչ ձեւով կրնար պատուել Մուրթթէն, եւ Համանի խորհուրդը կը հարցնէ այդ մասին: Համան կը կարծէ, որ թագաւորը զինք պատուել կ'ուզէ, ուստի շատ փառաւոր ձեւ մը կ'առաջարկէ: Թագաւորը ապա կ'ըսէ, թէ Մուրթթէն է պատուելիք անձը եւ Համանին կը պատուիրէ, որ իր փոխարէն նախագահէ արարողութեան, ինչ որ շատ տհաճ կ'ըլլայ Համանի համար: Աստուած արդէն իսկ գործի վրայ էր՝ պատրաստելով թագաւորին սիրտը այն խօսքերուն համար, որ Եսթեր պիտի ըսէր խնճոյքին:

Երբ Եսթեր ուրիշ խնճոյք մըն ալ կազմակերպեց

թագաւորին եւ Համանի համար, թագաւորը դարձեալ հարցուց, թէ ինչ կը պահանջէր:

Եսթեր թագուհին պատասխանեց. «Եթէ քու առջեւդ շնորհք գտայ, ո՛վ թագաւոր, ու եթէ թագաւորին հաճելի է, խնդրանքիս փոխարէն իմ կեանքս թող շնորհուի ինձի, եւ պահանջիս փոխարէն՝ իմ ժողովուրդս: Արդարեւ թէ՛ ես եւ թէ՛ իմ ժողովուրդս ծախուած ենք՝ կոտորուելու, սպաննուելու եւ կորսուելու. եթէ ծախուած ըլլայինք իբր ստրուկ կամ ստրկուհի՝ լուռ կը կենայի, թէպէտ թշնամին թագաւորին կրած վնասը չէր կրնար հատուցանել»: (Եսթ 7.3-4)

Կան քանի մը կէտեր, զորս պէտք է նշենք: Առաջին՝ թագաւորը ըստ երեւոյթին անտեղեակ ըլլալով սոսկալի որոշում մը տուած էր, եւ տակաւին Եսթեր անոր խօսեցաւ յարգանքով՝ ենթարկուած կեցուածք պահելով: Երկրորդ՝ ան թագաւորին իմաստուն խօսքեր փոխանցեց մեծ հեզութեամբ ինչպէս նաեւ թագաւորին օգուտին համար, ոչ միայն իր: Ան դիմեց թագաւորին օգնութեան, բայց արտօնեց, որ թագաւորը տար վերջին որոշումը: Ան չըսաւ. «Անմիտ ամուսին, դուն մարդասպանի մը խօսքերուն մտիկ ըրած ես: Չէն տեսներ այն ամէնը, որ պիտի կորսնցնես այն հրամանով, որ արձակած ես»: Ան վստահած էր մէկ բանի. որ Աստուած թագաւորին սիրտը պիտի ուղղէր: Տէրը փոխել տուաւ անոր հրամանը, եւ թագաւորը կախել տուաւ չար Համանը: Հրեաները ազատեցան ջարդէն:

Եսթեր շոշափելի փաստ ունէր, ոչ միայն զանազանութիւն, թէ իր առաջնորդը չունէր ճիշդ տեղեկութիւնները: Անոր գնաց խոնարհութեամբ եւ իր դատը ներկայացուց այնպիսի ձեւով մը, որ թագաւորը կարող եղաւ որոշում տալու: Ան չնուաստացուց, չստիպեց կամ չխաբեց զայն: Ան պարզապէս վստահեցաւ Սուրբ Հոգիի զօրութեան, որ պիտի ուղղէր իր տիրոջ սիրտը:

Բոլոր Տեղեկությունները Չունենալ

Ատիկա կը տեսնենք Սուրբ Գիրքերուն մէջ, ոչ միայն երբ ղեկավարը սխալ ազդեցութեան տակ կ'ըլլար, այլ՝ երբ ղեկավարը որոշում կու տար նախքան բոլոր տեղեկությունները ունենալը կամ լման նիւթը լսելը: Ունինք Դաւիթի եւ Սաուղի օրինակը: Փղշտացի հսկան մարտահրաւէր ուղղեց Աստուծոյ բանակներուն քառասուն օր շարունակ: Կը պահանջէր, որ Իսրայէլ իր առջեւը պիտոյեան մը հանէր մենամարտի համար՝ այդպիսով վերջ դնելու համար երկու բանակներուն ճակատումին: Դաւիթ տեսաւ, որ բոլոր զինուորները սարսափած էին՝ չկարենալով պատասխանել հսկային սպառնալիքներուն: Աստուած Դաւիթը մղեց, որ ելլէ հսկային դիմաց: Բայց Սաուղ Թագաւոր անոր նայեցաւ եւ ըսաւ. «Անկարելի է: Դուն պարզապէս պատանի մըն ես եւ երբ պարտուիս, բոլորս ստիպուած պիտի ըլլանք ծառայելու այդ բանակին»:

Երբ Դաւիթ լսեց ատիկա, չվիճաբանեցաւ, այլ՝ փորձեց համոզել.

Դաւիթ Սաուղի ըսաւ. «Մինչ քու ծառադ իր հօր ոչխարները կ'արածէր, երբ առիւծ մը կամ արջ մը գար ու հօտերէն ոչխար մը տանէր, ես անոր ետեւէն երթալով՝ զայն կը զարնէի եւ անոր երախէն կ'ազատէի: Եթէ իմ վրաս յարձակէր, զայն մօրուքէն կը բռնէի, կը զարնէի ու կը մեռցնէի: Քու ծառադ առիւծ ալ մեռցուցած է, արջ ալ, եւ այս անթլփատ Փղշտացին ալ անոնցմէ մէկուն պէս պիտի ըլլայ, քանի որ ապրող Աստուծոյն զօրասիւնները նախատեց»:

Նաեւ Դաւիթ ըսաւ. «Առիւծին եւ արջին ձեռքէն զիս ազատող Տէրը՝ այս Փղշտացիին ձեռքէն ալ պիտի ազատէ»: (Ա.Թգ 17.34-37)

Յարգանք կար անոր վարմունքին մէջ երբ տեղեկությունները

վոխանցեց իշխանութեան: Ան ներկայացուց այն ինչ որ գիտեր եւ որ թագաւորը չէր գիտեր իր առաջին որոշումը տալու ատեն: Ատկէ ետք Դաւիթ վստահեցաւ իր տիրոջ սիրտը ուղղելու Աստուծոյ կարողութեան: Ան վստահեցաւ, որ այն ինչ որ Աստուած դրաւ իր սիրտին մէջ պիտի կատարուէր թագաւորին որոշումով: Խոնարհ եւ ենթարկուած մնալով, Աստուծոյ գործունեայ մասնակցութիւնը ապահովեց: Տէրը Սաւուղի սիրտը ուղղեց եւ ըսաւ. «Գնա՛, ու Տէրը քեզի հետ ըլլայ» (հմր 37):

Ճմարիտ Բարեխօսութիւն

Աբիգեան ուրիշ աստուածաշնչական օրինակ մըն է, թէ ինչպէս կարելի է խնդրանքով մը դիմել ղեկավարի մը երբ ան արդէն իր որոշումը տուած է: Աբիգեա ամուսնացած էր Նաբաղ անունով բիրտ եւ չար մեծահարուստի մը հետ: Դաւիթ ուտեստեղէնի կարիքը ունէր, քանի որ Սաւուղ կը հալածէր զինք եւ կեանքին կը սպառնար: Դաւիթ Նաբաղին դիմեց՝ իրեն պարէն ապահովելու համար. գիտէր, որ տօնախմբութեան ժամանակ էր եւ առատութիւն պէտք էր ըլլար: Դաւիթ նախապէս պատշպանած էր Նաբաղի ծառաները եւ ասոր դիմաց որեւէ բան չէր առած անկէ:

Նաբաղ ոչ միայն մերժեց Դաւիթի դիմումը, այլեւ անարգեց զայն: Նաբաղի վարմունքը զայրացուց Դաւիթը, եւ ան իր մարդոցմէ չորս հարիւր մարդ հաւաքեց՝ Նաբաղէն վրէժ լուծելու համար: Ան կ'ուզէր կործանել Նաբաղը եւ անոր բոլոր մարդիկը:

Լուր հասաւ Աբիգեայի՝ Նաբաղի կնոջ, եւ ան աճապարանքով նուէր մը պատրաստեց Դաւիթի համար, որուն մէջ կար՝ հաց, զինի, միս, ցորեն, չամիչ եւ թուգ: Ապա ան ծի հեծաւ եւ ելաւ դիմաւորելու Դաւիթը եւ իր մարդիկը: Երբ տեսաւ զինք, իջաւ իր ձիէն եւ երեսին վրայ Դաւիթի ոտքերուն առջեւ ինկաւ: Ապա հետեւեալ խնդրանքը ըրաւ.

Իմ վրաս, յանցանքը իմ վրաս թող ըլլայ, իմ տէրս, բայց կ'աղերսեմ, քու աղախինդ թող խօսի առջեւդ, եւ աղախինիդ խօսքերը մտիկ ըրէ: Կ'աղերսեմ, իմ տէրս թող ուշադրութիւն չդարձնէ այս անօրէն մարդուն՝ Նաբաղի, քանի որ ինչպէս իր անունն է, այնպէս ալ ինք է: Անոր անունը Նաբաղ է, եւ անզգամութիւնը իրեն հետ է. բայց ես՝ քու աղախինդ՝ իմ տիրոջս զրկած երիտասարդները չտեսայ: Հիմա, իմ տէրս, Տէրը կ'ապրի՜ ու քու հոգիդ ալ կ'ապրի՜. Տէրը քեզ արգիլեց որ արիւն թափես եւ վրէժդ քու ձեռքովդ առնես: Հիմա քու թշնամիներդ ու տիրոջս չարիք ուզողները Նաբաղի պէս ըլլան: Հիմա այս ընծան, որ քու ստրկուհիդ իմ տիրոջս բերաւ, տիրոջս հետեւող երիտասարդներուն թող տրուի: Կ'աղերսեմ, քու աղախինիդ յանցանքը ներէ. արդարեւ Տէրը իմ տիրոջս անպատճառ հաստատ տուն պիտի շինէ, որովհետեւ իմ տէրս Տէրոջ պատերազմները մղեց, ու քու կեանքիդ բոլոր օրերուն մէջ վրադ չարութիւն մը չգտնուեցաւ [...] Երբ Տէրը իմ տիրոջս բարիք ընէ, քու աղախինդ յիշէ: (Ա.Թգ 25.24-31)

Կէտ առ կէտ պիտի ըսեմ, թէ այդ կինը ինչ ըրաւ իր ամուսինին համար, իր տան համար եւ Դաւիթի համար.

1. Ան Դաւիթի հետ խօսեցաւ մեծ յարգանքով՝ շարունակ ինքզինք ներկայացնելով իբրեւ անոր աղախինը:
2. Ան Դաւիթի եւ իր մարդոց առատաձեռն նուէր մը տարաւ՝ ցոյց տալով իր հոգատարութիւնը եւ ուշադրութիւնը անոնց բարօրութեան վերաբերեալ:
3. Ան բարեխօսեց իր տան համար՝ ինքն իր վրան առնելով եղածին պատասխանատուութիւնը: Պատահածը իր «յանցանքը» կոչեց:
4. Ան վախով եւ դողով Դաւիթին մատնանշեց, թէ արիւն թափելը մեղք պիտի ըլլար:

5. Դաւիթին յիշեցուց, որ Աստուած վրէժ պիտի լուծէր իրեն հետ պատահածներուն համար եւ պիտի կատարէր իրեն ըրած խոստումները:
6. Ան Դաւիթէն խնդրեց, որ յիշէ զինք երբ Աստուած զինք բարձրացնէ:

Կրնաս հարց տալ, թէ՛ «Այդ կինը ինչ ձեւով պատուեց իր ամուսինը»: Ինչայեց զայն սպաննուելէ: Անոր ամուսինը մեղանշած էր այդ մարդոց դէմ եւ Տիրոջ օծեալին: Անոր վարմունքը արդարացնելը աւելի եւս պատճառ պիտի տար Դաւիթի, որ վրէժ առնէր: Ան վառելանիւթ լեցուցած պիտի ըլլար անոր կրակին վրայ եւ զայն մղած իր կործանումին: Ինչ օգուտ ունի մակերեսային պատիւը, որուն վերջաւորութեան ամուսինիդ մահը կայ:

Ան իրապէս անպատուած պիտի ըլլար Նաբաղը եթէ ըսէր. «Ես հոսկէ ելլեմ-երթամ եւ ձգեմ, որ ամուսինս ստանայ իրեն արժանի պատիժը, քանի որ անպէտք մըն է»: Կամ եթէ Դաւիթին երթար եւ ըսէր. «Տես, ես այդ բոլորին հետ ոչ մէկ կապ ունէի: Ես ըլլայի, պիտի տայի քեզի այն ինչ որ պէտք ունիս: Երբ լսեցի անմիտ ամուսինիս ըրածին մասին, ես քեզի եկայ՝ քեզի եւ մարդոցդ համար ուտեստեղէնով, բայց կրնաս գործադրել ամուսինս սպաննելու ծրագիրդ, որովհետեւ ան անպէտք մըն է եւ սրիկայ մը: Արժանի է այն բանին, որ պիտի ընես իրեն»: Եթէ այդպէս ընէր, անպատուած պիտի ըլլար իր ամուսինը:

Մէկու մը համար բարեխօսութիւն ընել չի նշանակեր անտեսել անօրէնութիւնը. ընդահակառակը՝ ընդունած կ'ըլլաս անիկա: Ապա ինքզինքդ կը դնես իր եւ դատաստանին միջեւ: Հիմնականօրէն ըսած կ'ըլլաս. «Գիտեմ, որ դատաստանի արժանի է, բայց ողորմութիւն կը խնդրեմ իրեն համար: Ես իմ վրաս կ'առնեմ եղածը եւ կը կենամ իր փոխարէն»:

Ճիշդ այդ էր, որ Աբիգեա ըրաւ: Դաւիթ եկաւ դատաստան

բերելու, Աբիգեա եկաւ ողորմութիւն խնդրելու: Աբիգեայի խօսքերով. «Կ'աղերսեմ, քու աղախինիդ յանցանքը ներէ՛»:

Ան այդ ձեռով խօսեցաւ՝ արգիլելու համար Դաւիթի վրէժ լուծելով մեղք գործելը: Աստուծոյ Խօսքը կը պատուիրէ. «Վրէժ մի՛ առնէր, եւ ոխ մի՛ պահէր քու ժողովուրդիդ որդիներուն դէմ» (ՂԼ 19.18): Աբիգեա ողորմութիւն փնտռեց մինչ կանգնեցաւ բացութեան մէջ, եւ արդարութիւն փնտռեց Դաւիթի համար:

Աբիգեա իր դրացիներուն կամ բարեկամներուն հետ չէր բամբասեր, ըսելով. «Գիտէք, որ ես ամուսնացած եմ սրիկայի մը հետ: Ան ամէնէն անպէտք մարդն է, որ երբեւէ ճանչցած եմ»: Ոչ ալ Դաւիթին իր ամուսինին մասին խօսեցաւ ոխով, բարկութեամբ, զգուանքով, անարգանքով կամ վրէժխնդրութեամբ: Ան խօսեցաւ կեանքեր փրկելու համար: Տես ինչ իրագործեց անոր բարեխօսութիւնը.

Դաւիթ Աբիգեայի ըսաւ. «Օրհնեա՛լ ըլլայ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը, որ այսօր քեզ դրկեց՝ զիս դիմաւորելու. քու դատողութիւնդ օրհնեա՛լ ըլլայ, եւ դո՛ւն ալ օրհնեա՛լ ըլլաս, որ այսօր զիս արգիլեցիր՝ արիւն թափելէ ու վրէժս իմ ձեռքովս առնելէ: Բայց Տէրը՝ Իսրայէլի Աստուածը, որ զիս արգիլեց քեզի չարիք ընելէ, կ'ապրի՛. եթէ դուն շտապելով չգայիր եւ զիս չդիմաւորէիր, մինչեւ արշալոյս Նաբաղէն մէկ այր մարդ պիտի չմնար»: Դաւիթ անոր բերած ընծաները ձեռքէն առաւ, եւ անոր ըսաւ. «Խաղաղութեամբ գնա տունդ. ահա՛ խօսքդ մտիկ ըրի, ու խնդրանքդ ընդունեցի»: (Ա.Թգ 25.32-35)

Երբ Աբիգեա տուն վերադարձաւ, ամուսինը խնճոյք կ'ընէր: Բնաւ գաղափար չունէր, թէ ինչ կրնար պատահած ըլլալ քիչ առաջ: Աբիգեա ընտրեց բան մը չըսել իրեն այդ գիշեր: Յաջորդ առտու ամուսինին ըսաւ, թէ ինչպէս կեանքը

փրկած էր: Անոր սիրտը իր ներսը մեռաւ, քարի պէս եղաւ: Տասը օր ետք Տէրը զարկաւ Նաբաղը, եւ ան մեռաւ: Դաւիթի կամ Աբիգեայի ձեռքով չէր, այլ Աստուծոյ ձեռքով վրէժ առնուեցաւ այդ չար մարդէն:

Իշխանութեան Վրայ Եղողին Սիրոյն

Մովսէս ինքզինք գտաւ կացութեան մը մէջ, ուր ստիպուած եղաւ հարցականի տակ առնել Իշխանութեան մը որոշումը. Աստուծոյ: Ատիկա պատահեցաւ աւելի քան մէկ անգամ: Տեսնենք առաջին պատմութիւնը: Իսրայէլ մեղք գործած էր ոսկիէ հորթ մը շինելով եւ ապա զանիկա պաշտելով: Աստուած այնքան զայրացաւ, որ Մովսէսի ըսաւ, թէ կ'ուզէր մեռցնել բոլորը եւ Մովսէսէն նոր ազգ մը յառաջ բերել: Մտիկ ըրէ Մովսէսի աղաչանքը.

Բայց Մովսէս Տէրոջ՝ իր Աստուծոյն պաղատեցաւ՝ ըսելով. «Ո՛վ Տէր, ինչո՞ւ քու բարկութիւնդ բորբոքի քու ժողովուրդիդ դէմ, որ Եգիպտոսի երկրէն հանեցիր մեծ կարողութեամբ եւ ուժեղ ձեռքով: Ինչո՞ւ եգիպտացիները խօսին ու ըսեն. “Չարիքի համար հանեց զանոնք, որպէսզի լեռներուն մէջ մեռցնէ եւ զանոնք երկրագունդի մակերեսէն սպառէ”»: Կասեցնո՞ր քու բորբոքած բարկութիւնդ ու հրաժարէ՛ այս չարիքը քու ժողովուրդիդ վրայ բերելէ: Յիշէ՛ քու ծառաներդ՝ Աբրահամը, Իսահակը եւ Իսրայէլը, որոնց քու անձովդ երդում ըրիր, ու ըսիր անոնց. “Ձեր զարմը երկինքի աստղերուն պէս պիտի բազմացնեն, եւ այս ամբողջ երկիրը՝ որուն մասին խօսեցայ, ձեր զարմին պիտի տամ ու զայն պիտի ժառանգեն յաւիտենապէս”»: (Ելք 32.11-13)

Կան շարք մը կէտեր մատնանշելիք: Առաջին՝ Մովսէս խօսեցաւ ամբողջական ենթարկումով եւ վախով ու դողով: Երկրորդ՝ Մովսէս բուն կերպով աղաչեց Աստուծոյ կամ խնդրանքով մը դիմեց Անոր. ան բնաւ չհրամայեց կամ

չպատուիրեց: Երրորդ՝ ան խօսեցաւ Աստուծոյ կողմէ կամ համար, նախ եւ առաջ, ոչ՝ ժողովուրդին: Հիմնականին մէջ Մովսէս կ'ըսէր. «Հապա Քու համբաւդ, որուն համար չորս հարիւր տարի աշխատեցար, որ հիմնես... Քու անունդ հիմա արդէն ճանչցուած է ամբողջ երկրի վրայ, եւ արատաւորած պիտի ըլլաս զայն եթէ չկարենաս ասարտել սկսած բանդ»: Քանի որ Մովսէս աստիկա ըրաւ գլխաւորաբար Տիրոջ համար, ան կրնար հարցականի տակ առնել Աստուծոյ որոշումը: Անոր շարժառիթը իրեն համար օգուտ մը ապահովելը չէր, այլ՝ ուրիշներու համար:

Առաջնորդի մը խնդրանքով մը դիմելէ առաջ պէտք է մենք մեզի հարց տանք. «Գլխաւորաբար որո՞ն համար է աստիկա»: Նոյնիսկ երբ Մովսէս Աստուծոյ յիշեցուց Աբրահամին տուած Իր խոստումին մասին, անիկա տակաւին գլխաւորաբար Տիրոջ համար էր: Ան Աստուծոյ յիշեցուց Իր Խօսքին կարեւորութեան մասին: Մովսէս ճիշդ կեդրոնացումը ունէր, որովհետեւ սիրտը ճիշդ էր: Ան Աստուծոյ ծառան էր, ուստի նախ Աստուծոյ մասին մտածեց՝ ինքն իր եւ Իսրայէլի որդիներուն մասին մտածելէ առաջ: Ահա Աստուծոյ պատասխանը. «Եւ Տէրը հրաժարեցաւ այն չարիքէն, որուն համար ըսեր էր թէ իր ժողովուրդին պիտի ընէ» (Ելք 32.14):

Աստուած Իր միտքը փոխեց... Որոշումը շրջուեցաւ: Կ'ուզեմ ուրիշ կարեւոր կէտ մըն ալ նշել: Մովսէս այդպիսի ուղղակի ձեւով կրցաւ խօսիլ Աստուծոյ հետ, որովհետեւ անգամ առ անգամ իր հաւատարմութիւնը փաստած էր: Այդ սկզբունքին վերաբերեալ մերօրեայ օրինակ մը տամ: *Մասենճըր Իթըրնաշընըլի* մէջ ունինք անդամներ, որոնք տարիներու ընթացքին փաստած են Լիսայի եւ ինծի հանդէպ իրենց հաւատարմութիւնը: Անոնք աւելի շնորհք ունին մեր քով եւ մեզի խնդրանքներով դիմելու աւելի մեծ կարելիութիւն ունին քան անոնք, որոնք նոր գործի սկսած են մեզի հետ: Պէտք է իրաւունք շահիս ղեկավարի մը կեանքին մէջ խօսելու

համար: Ատիկա կրնաս իրագործել հաւատարմութեամբ եւ պարկեշտութեամբ: Ամէն մարդ չէ, որ կարողութիւնը ունի դեկավարի մը կեանքին մէջ այդ ձեւով խօսելու:

Ուրիշ նշանակալից կէտ մըն ալ այն է, որ Մովսէս Աստուծոյ որոշումին մասին ուրիշ մէկու մը հետ չխօսեցաւ: Ան Աստուծոյ հետ խօսեցաւ: Անոր որոշումին մասին: Իսրայէլի որդիները շարունակ զայրացուցին Տէրը, որովհետեւ Անոր ձեւերուն մասին մնայուն կերպով կը մրմնային իրարու միջեւ: Ատիկա ալ տրտունջ է, եւ Աստուած կ'ատէ ատիկա: Այդ վարմունքը շատ վտանգաւոր է եւ պէտք է ամէն գնով խուսափինք անկէ: Երբ մենք մեր միջեւ կը մրմնանք եւ կը տրտնջանք մեր վրայ եղող իշխանութիւններուն կողմէ տրուած որոշումի մը մասին, դժգոհութիւն եւ ըմբոստութիւն կը ցանենք: Ուրիշ զուլիսի մը մէջ պիտի տեսնենք, որ ատիկա որոշ դատաստան կը բերէ:

Ես հետեւեալ համաձայնութիւնը կ'ընեմ ինծի հետ աշխատող մարդոց հետ: Եթէ տամ որոշում մը, որ իրենք կը հաւատան, որ ճիշդ տեղեկութիւններու կամ բաւարար տեղեկութիւններու վրայ հիմնուած չէ, կրնան դիմել ինծի մէկ անգամ, կամ եթէ մէջտեղ ելլեն նոր տեղեկութիւններ, որոնք կրնան օգնել որոշումիս մէջ, կրնան նորէն դիմել ինծի: Երբ ինծի կը դիմեն, կարելի է, որ զգուշութեամբ մտածած ըլլան անոր մասին եւ նիւթը ինծի ներկայացնեն այնպիսի ձեւով մը, որ ատիկա օգնէ ինծի, որ տեսնեմ այն ինչ որ կ'ուզեն ինծի ըսել: Ես յաճախ փոխած եմ որոշումներ երբ նոր տեղեկութիւն ստացած եմ: Սակայն եթէ դիմեն ինծի եւ ես տակաւին սկիզբի որոշումիս վրայ մնամ, ապա համաձայնաբար յառաջ կ'երթանք: Եթէ միութեան մէջ յառաջ երթանք եւ ես սխալ ըրած ըլլամ, Աստուած տակաւին պիտի պաշտպանէ մեզ: Ան պիտի պաշտպանէ զիս ինչպէս նաեւ իմ իշխանութեանս տակ եղողները եթէ մենք սիրտի պարկեշտութեամբ շարժած ըլլանք: Դաւիթ ըսաւ. «Պարկեշտութիւնը եւ ուղղամտութիւնը թող պաշտպանեն զիս, որովհետեւ քեզի յուսացի» (Սղ 25.21):

Հապա Եթէ Իշխանութիւնը Ընէ Աստուծոյ Ինծի Յոյճ Տուածին Հակառակը...

Կրնայ ըլլալ, որ տակաւին հարց կու տաս. «Հապա եթէ իշխանութիւնը ինծի ըսէ, որ ընեմ աղօթքի ատեն ստացածներուս հակառակը...»: Ատիկա լաւ հարցում մըն է եւ պէտք է խօսուի այդ մասին: Պատասխանելու համար այդ հարցումին, կ'ուզեմ վերադառնալ երկրորդ գլուխին մէջ տուած օրինակիս: Նախքան այդ ամբողջ տուներու հաւաքոյթներու ծրագիրը սկսինք, ես շարունակ Տիրոջ կամքը փնտոցցի աղօթքի մէջ եւ վստահ եմ, որ Աստուած ինծի ըսաւ, որ ընենք այդ ծրագիրը: Մինչեւ այսօր ես կը հաւատամ, որ Ան ինծի ըսաւ, որ ընենք տուներու հաւաքոյթները, քանի որ, ըստ երեւոյթին, այդ ամբողջ պատմութիւնը քննութիւն մըն էր տեսնելու, թէ Աստուծոյ իմ վրաս դրած իշխանութեան պիտի հնազանդէի կամ ոչ:

Աստուածաշունչը լեցուն է Աստուծոյ կողմէ Իր ժողովուրդը փորձելու օրինակներով: Երբ Աստուած Աբրահամէն ուզեց, որ Իսահակը զոհէր Իրեն համար, Աստուածաշունչը որոշակիօրէն կ'ըսէ. «Աստուած Աբրահամը փորձարկեց» (Ծն 22.1): Տիրոջ մտադրութիւնը այն չէր բնաւ, որ Աբրահամ իր որդին սպաննէր, սակայն Ան արտօնեց Աբրահամի, որ դէպի լեռը երեք օրուայ ճամբորդութեան մը ելլէր եւ չկասեցուց զայն մինչեւ որ ան իր դանակը վերցուց: Աստուած տեսաւ Աբրահամի աներեր հաւատարմութիւնը՝ անոր հնազանդութեան արարքներուն ընդմէջէն: Արդեօք Ան նոյնը մեր մէջ կը տեսնէ՞ այսօր:

Պօղոս Առաքեալ Կորնթոսի եկեղեցիին ուղղած իր առաջին նամակին մէջ տուաւ պատուէր մը, զոր սակայն փոխեց իր երկրորդ նամակին մէջ: Երբ փոխեց եկեղեցիին ուղղուած իր պատուէրը, հետեւեալ ուշագրաւ հաստատումը ըրաւ.

Ձեզի գրելուս նպատակը այս էր՝ փորձել ձեր կեցուածքը եւ տեսնել եթէ պիտի յաջողիք այդ քննութեան. թէ արդեօք հնազանդ էք եւ ամբողջովին յօժար էք [իրահանգներու հետեւելու] ամէն բանի մէջ: (Բ. Կր 2.9)²⁵

Պօղոս անոնց պատուէրներ տուաւ մէկ նպատակով. տեսնելու համար, թէ պիտի ենթարկուէին իր իշխանութեան կամ ոչ: Ես ունիմ շատ իմաստուն բարեկամ մը, որ տարիներէ ի վեր հովիւ է: Ան ինձի ըսաւ, որ ան իրեն հետ ծառայողներուն մէջի անհնազանդները գտնելու համար անոնց կու տայ անտրամաբանական պատուէր մը: Ան ըսաւ. «Ճոն, շուտով կը լսեմ ըմբոստներուն դժգոհութիւնները եւ գանգատները: Այդ հարցը կը լուծեմ եւ ապա կը վերադառնանք բնական գործունէութեան»:

Պօղոս պատուէր տուաւ՝ տեսնելու համար, թէ պիտի հետեւէին իր հրամաններուն *ամէն բանի* մէջ կամ ոչ: Բանալի եզրն է՝ *ամէն բանը*: Անոր պատուէրը դժուար էր, ինչ որ ինքնին նպատակ մը ունէր: Նպատակը այն էր, որ եթէ հետեւէին այդ թելադրանքին, պիտի հետեւէին իրեն ուրիշ ամէն բանի մէջ:

Աստուած ճիշդ ատիկա ըրաւ Աբրահամի հետ: Ան գտաւ Աբրահամի հնազանդելուն համար ամէնէն դժուար բանը: Անկէ կ'ուզէր, որ հրաժարէր իր կեանքի ամէնէն կարեւոր բանէն. այն խոստումէն, որուն համար քսանհինգ տարի սպասած էր: Աբրահամի ջանքով չէր եղած անիկա, այլ՝ Աստուած աղօթքի մը ընթացքին խոստացած էր իրեն: Աբրահամի համար ասելի դիրքին պիտի ըլլար ինքզինքը դնել այդ խորանին վրայ, բայց Աստուած ուզեց ամէնէն կարեւոր բանը: Եթէ Աբրահամ հնազանդ ըլլար ատոր մէջ, ան հնազանդ պիտի ըլլար բոլոր բաներուն մէջ:

Իմ աւագ հովիւս ինձմէ ուզեց, որ հրաժարիմ այն բանէն,

25 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիֆայր Պայպըլ* (AMP) տարբերակէն

որմէ հրաժարիլը ամէնէն դժուարն էր ինծի համար: Ես այդ ծրագիրին վրայ ամիսներ աշխատած էի, եւ ամէն մարդ գիտէր այդ մասին: Ինծի այնպէս կը թուէր, որ այդ ծրագիրը չփրկուած հոգիներու Թագաւորութեան մէջ մտնելու խոստում մը ունէր իր մէջ: Անիկա ինծի համար բանալի կարեւորութիւն ունէր՝ իբրեւ պատանհներու ծառայութեան հովիւ յաջողելուս մէջ: Համբաւս վտանգուած էր, որովհետեւ ես բոլորին ըսեր էի, որ անիկա Աստուծոյ կամքն էր: Աղօթքի ատեն լսեր էի, որ Աստուած կ'ըսէր, թէ պէտք էր առջեւ տանէի այդ ծրագիրը: Ես չէի գիտեր, որ անիկա քննութիւն մըն էր, եւ յաճախ Աստուծոյ քննութիւններուն պարագային, ըլլալիքը ըլլալէն ետք միայն կը ճանչնանք անոնց քննութիւն ըլլալը, քանի որ անոնք մէջտեղ կը հանեն մեր սիրտը:

Մեր կազմակերպած տնային հաւաքոյթները բազմաթիւ հոգիներ պիտի բերէին Թագաւորութենէն ներս, բայց Աստուած ատելի հետաքրքրուած է անով, որ Իր իշխանութիւնը դրսեւորուի մեր սիրտերուն մէջ քան մեր սեփական ձեւերով Իր գործերը կատարելով: Ան Աստուած է, եւ ունի բազմաթիւ թարմ գաղափարներ չփրկուած հոգիներուն հասնելու: Սակայն այն բանը, որ չի փոխուիր մարդուն սիրտին ենթարկուած կամ հնազանդ ըլլալու սկզբունքն է, որովհետեւ ատկէ բացի ուրիշ ձեւով մարդ չի կրնար Թագաւորութիւն մտնել, եւ անհնազանդ կամ չենթարկուող սիրտի մը համար չկայ ուրիշ այլընտրանք:

Մենք պէտք է ճակատագրական եւ դժուար սկզբունք մը հաստատենք մեր սիրտերուն մէջ: Երբ Աստուած Իր իշխանութիւնը կը յանձնարարէ մարդոց, Ան զանիկա չի շրջանցեր: Միակ բացառութիւնը կը պատահի երբ ղեկավար մը ուղղակիօրէն կը խախտէ Աստուծոյ գրաւոր Խօսքը կամ օրէնքները: Աստուած Ինք չի շրջանցեր Իր հաստատած յանձնարարուած իշխանութիւնը: Մենք ալ չենք կրնար շրջանցել յանձնարարուած իշխանութիւնը եւ մենք մեզ միայն

Աստուծոյ ենթակայ հռչակել: Մովսէս այդ սկզբունքին մասին խօսեցաւ Իսրայէլի տոհմապետերուն.

Ահա՛նասիկ ինչ որ Տէրը պատուիրեց. «[...] Եթէ կին մը Տէրոջ ուխտ ընէ եւ պարտաւորութիւն մը ստանձնէ իր երիտասարդութեան ատեն՝ իր հօր տան մէջ, ու անոր հայրը լսէ անոր ուխտը եւ անոր ստանձնած պարտաւորութիւնը, բայց անոր հայրը լռէ անոր հանդէպ, անոր բոլոր ուխտերը պիտի հաստատուին. նաեւ անոր ստանձնած ամէն պարտաւորութիւն պիտի հաստատուի: *Իսկ եթէ անոր հայրը մերժէ անոր ուխտը՝ իր լսած օրը, անոր ուխտերէն եւ անոր ստանձնած պարտաւորութիւններէն ո՛չ մէկը պիտի հաստատուի, ու Տէրը անոր պիտի ներէ, քանի որ անոր հայրը մերժած է անոր ուխտը:* (Թ՝ 30.1-5, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Մովսէս յաւելեալ կերպով կը շեշտէ այդ սկզբունքը՝ զանիկա կնոջ մը եւ իր ամուսինին յարաբերութեան կիրարկելով: Աստուած՝ գերագոյն կամ ուղղակի իշխանութիւնը, վեր կը պահէ այն բանը, որուն յանձնարարուած իշխանութիւնը հաւանութիւն տուած է: Ան նաեւ չեղեալ կը համարէ այն ինչ որ յանձնարարուած իշխանութիւնը ջնջած է: Քանի որ երիտասարդուի մը իր հօրը իշխանութեան տակն է կամ ամուսնացած կին մը՝ իր ամուսինին, Աստուած հօրը կամ ամուսինին հետ հարցը կը լուծէ, բայց կ'արձակէ կինը:

Այդ սկզբունքը կը գտնուի Աստուածաշունչի ընդհանուր խորհուրդին մէջ, ոչ միայն ընտանիքին վերաբերեալ, այլ՝ յանձնարարուած իշխանութեան բոլոր մարզերուն վերաբերեալ: Դարձեալ կ'ուզեմ շեշտել, թէ բացառութիւն կը համարուին այն պարագաները երբ իշխանութիւնները մեզի կ'ըսեն, որ ընենք բան մը, որ ուղղակիօրէն կը հակասէ Աստուծոյ պատուէրներուն: Կը ցաւիմ երբ կը լսեմ, որ ծառայութեան մէջ եղող մարդիկ կ'ըսեն. «Հովիւս ըսաւ,

որ այդ բանը չընեն, բայց չեն կարծեր, որ ան Աստուծմէ լսած է ատիկա, ուստի ես տակաւին պիտի շարունակեմ ընել ինչ որ կ'ընէի, բայց շրջուած կամ անուղղակի ձեւով մը»: Կարելի է, թէ ինչ լսած ես աղօթքի ատեն. դուն ըմբոստացած կ'ըլլաս Աստուծոյ իշխանութեան դէմ եթէ ընես բան մը, որ հակառակ է կեանքիդ մէջ գոյութիւն ունեցող իշխանութիւններուն քեզի թելադրածներուն...

Անհամար օրինակներ կրնամ տալ: Ես յայտնաբերած եմ, որ երբ յայտնութեան գիտութիւն մը կը դրոշմուի մեր սիրտին մէջ, շատ մը հարցումներ կը պատասխանուին եւ բազմաթիւ հարցեր կը լուծուին: Ասիկա չի կրնար ըլլալ գիրք մը, որ ունի անխտիր բոլոր օրինակները եւ բացատրութիւնները: Մեր նպատակն է յայտնութիւն մը ընել իշխանութեան մասին, որ ինքնին Աստուծոյ յայտնութիւնն է, քանի որ Ինք եւ Իր իշխանութիւնը անբաժանելի են: Ինչպէս քաջալերեցի ձեզ Ծանօթութիւն բաժինին մէջ, ամբողջ սրտով դիմեցէք Աստուծոյ եւ խնդրեցէք, որ աստուածային ենթարկումի սկզբունքը դրոշմէ ձեր սիրտին վրայ մինչ կը կարդաք այս գիրքը: Եթէ այդպէս չընէք, գիրքի վերջաւորութեան ատելի շատ հարցումեր պիտի ունենաք քան երբ սկսաք:

Յաջորդ գլուխին մէջ պիտի տեսնենք, թէ ինչպէս պէտք է վարուինք անարդար վերաբերումի դիմաց եւ ինչ կեցուածք առնենք իշխանութեան մը նկատմամբ, որ կոպիտ կերպով կը վարուի մեզի հանդէպ: Պիտի տեսնենք, որ Աստուած փառաւոր ծրագիր մը ունի մեզի համար այդպիսի կացութիւններու մէջ:

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՆԱՐԴԱՐ ՎԱՐՄՈՒՆՔ

*Կոտրած ըլլալ չի նշանակեր տկարացած
ըլլալ: Անիկա կապ ունի իշխանութեան
ենթարկուելու կամ հնազանդելու հետ:*

Աստուած՝ մեր Հայրը, որոշ նպատակ մը ունի իրագործելիք մեզմէ իւրաքանչիւրիս մէջ: Զգուշացնեմ, որ անիկա կրնայ զուարճալի, բոլորին կողմէ գնահատուած կամ ցաւէ զուրկ չըլլալ, բայց անիկա լաւագոյնն է մեզի համար: Անոր փափաքն է մեզ կոտրել: Աստուածաշունչը շատ պարզ կերպով կ'ըսէ ատիկա.

Արդարեւ զոհէ չես ւխտօժիր՝ որ զայն մատուցանեմ.

Ողջակէզի ալ չես հանիր:

Աստուծոյ հաճելի զոհը՝ կոտրած հոգին է.

Կոտրած ու ճմլուած սիրտը, ո՛վ Աստուած,

Դուն չես արհամարհեր: (Սղ 51.16-17)

Տէրը մօտ է անոնց՝ որոնց սիրտը կոտրած է,
Ու հոգիով ճմլուածները կը փրկէ: (Սղ 34.18)

Տիրոջ հետ մտերմութեան նախապայմաններէն մէկը կոտրած սիրտն է: Հակառակ անոր որ գործընթացը հաճելի չէ, Անոր ներկայութեան մօտիկութիւնը աւելի ծանր կը կշռէ քան գործընթացին մէջ գոյութիւն ունեցող դժուարութիւնները: Դաւիթ ատիկա սորվեցաւ երիտասարդ տարիքին: Կարելի է անոր կոտրած սիրտը եւ անոր հետ կապուած իրականութիւնները նկատել ամբողջ Սաղմոսներու Գիրքին ընթացքին: Անիկա ձեռք կը ձգուի ոչ զոհողութիւններու կեանք մը ապրելով կամ զոհեր մատուցանելով, այլ՝ հնազանդութեամբ:

Կոտրածութիւնը Կը Լուծէ Իշխանութեան հետ Եղած Հարցը

Բացատրեմ: Պատերազմի ձի մը յարմար չէ ծառայութեան համար մինչեւ որ անոր կամքը կոտրուի: Հակառակ անոր որ անիկա կրնայ աւելի զօրաւոր, արագ եւ շնորհալի ըլլալ քան ախոռի միւս բոլոր ձիերը, ան չի կրնար ծառայել մինչեւ որ կոտրուի: Ան ախոռը պիտի մնայ մինչ միւս, նուազ շնորհալի ձիերը պատերազմի կ'երթան: Կոտրած ըլլալ չի նշանակեր տկարացած ըլլալ: Անիկա կապ ունի իշխանութեան ենթարկուելու կամ հնազանդելու հետ:

Ձիին պարագային, անոր տէրը զայն հեծնողն է: Եթէ ձիւն յաջող կերպով կոտրուի եւ մարզուի, կարելի կ'ըլլայ անոր վստահիլ որեւէ պայմանի եւ բոլոր պայմաններուն մէջ: Ճակատամարտի գագաթնակէտին՝ մինչ կապարներ կամ նետեր կը սլանան օդին մէջ, անիկա պիտի չցնցուի եւ պիտի չփախչի: Մինչ սուրեր եւ կացիներ կը բախին իրարու, անիկա պիտի չնահանջէ: Մինչ զէնքեր կը վերցուին եւ թնդանօթներ կը պայթին, անիկա պիտի չշեղի իր տիրոջ փափաքներէն: Անիկա հաստատ կերպով ենթարկուած պիտի մնայ իր

տիրոջ, ո՛վ ալ ըլլայ իր տէրը: Անիկա պիտի շրջանցէ ինքզինք պաշտպանելու կամ իրեն համար օգուտ ապահովելու ամէն առիթ՝ զինք հեծնողին հրամանները կատարելու համար:

Այդ կոտրելու գործընթացը իւրաքանչիւր անհատի մէջ իւրայատուկ կերպով կ'հրագործուի՝ Տիրոջ որդեգրած ձեւին համաձայն: Ան միակն է, որ գիտէ, թէ գործընթացը իրապէս երբ վերջ կը գտնէ եւ դուն պատրաստ կ'ըլլաս այն տեսակի ծառայութեան, որ կը փափաքի ընել քու միջոցաւ: Ամէն նոր մակարդակ կոտրուելու ուրիշ հանգրուան մը կ'ենթադրէ:

Լաւ կը յիշեմ այն գործընթացները, որոնցմէ անցած եմ անցեալին: Շատ յաճախ ինքզինքս պատրաստ եւ յարմար զգացած եմ յաջորդ մակարդակի ծառայութեան համար՝ իրապէս պատրաստ ըլլալէս երկար ժամանակ առաջ: Ես վստահօրէն հռչակած եմ. «Ես ամբողջապէս ենթարկուած եմ Քու Իշխանութեանդ: Ես գիտեմ, որ պատրաստ եմ այն ծառայութեան, որուն կանչած ես զիս»: Սակայն զիս շրջապատող հասուն ծառայողները գիտէին, որ տակաւին երկար ճամբայ ունէի կտրելու կոտրուելու գործընթացին մէջ: Եւ իրապէս ալ կարճ ժամանակ ետք դարձեալ անցած էի ընդդիմանալու, ցաւէն գալարուելու եւ իրաւունք պահանջելու մէկ ուրիշ հանգրուանէ մը:

Ինչ Կը Վերաբերի Կոպիտ Ղեկավարներու...

Ինչպէս ձիերու պարագային, մեր կոտրուելու հանգրուանը կապ ունի իշխանութեան հանդէպ մեր կեցուածքին հետ: Մեզմէ իւրաքանչիւրիս համար Աստուած պատշաճեցուցած է յատուկ գործընթաց մը, եւ անիկա միշտ կապուած կ'ըլլայ տեսակ մը ղեկավարութեան հետ: Այդ պատճառով Պետրոս գրեց.

Տիրոջ սիրոյն՝ հնազանդեցէք բոլոր մարդկային իշխանութիւններուն [...] Ծառանէր, ամենայն երկիւղածու-

թեամբ հնազանդեցէք ձեր տէրերուն. ո՛չ միայն անոնց՝ որոնք ազնիւ են ու բարի, այլ նաեւ անոնց՝ որոնք անգութ են: (Ա. Պտ 2.13,18)

Եթէ ատիկա դնենք ներկայի պարունակին մէջ, ծառաները կրնանք նմանցնել այսօրուայ պաշտօնեաներուն, աշակերտներուն, եկեղեցւոյ անդամներուն կամ քաղաքացիներուն: Տէրերը կրնան նմանցուիլ գործատէրերու, ուսուցիչներու, մարզիչներու, եկեղեցւոյ առաջնորդներու կամ կառավարութեան անդամներու: Շատերս ունինք լաւ եւ ազնիւ ղեկավարներ եւ կը սիրենք զիրենք: Դիւրին է անոնց ենթարկուիլը: Սակայն Աստուած կը պատուիրէ, որ հնազանդինք ոչ միայն լաւ եւ ազնիւ ղեկավարներուն, այլեւ կոպիտներուն...

«Կոպիտ»ին յունարէնը *սքոլիոսն* է, զոր Թէյլըրի Յունարէն Բառարանը զանիկա կը սահմանէ իբրեւ՝ «ծուռ, կամակոր, չար, անարդար եւ ամբարտաւան»: Վայնի Բառարանը բառը կը կապէ «բռնատիրական կամ անարդար տէրերու» հետ: Արդեօք Տէրը մեզի կ'ըսէ, որ ենթարկուինք այդ ձեւի ղեկավարներու:

Նայինք Աստուածաշունչի կարգ մը ուրիշ թարգմանութիւններու: *Նիու Սենչըրի Վըրժըն*ին մէջ վերի համարը այսպէս կը կարդանք. «Ոչ միայն անոնց, որոնք բարի եւ ազնիւ են, այլեւ անոնց, որոնք անպարկեշտ են» (բառացի թարգմանութիւն): *Քոնթեմփորըրի Ինկիշ Վըրժըն*ը կ'ըսէ. «Ատիկա ըրէք ոչ միայն անոնց, որոնք ազնիւ եւ հոգածու են, այլեւ անոնց, որոնք անգութ են» (բառացի թարգմանութիւն): *Տը Նիու Ամերիքըն Սթանփըրըր Պայպըրը* կը նշէ. «Ոչ միայն անոնց, որոնք բարի ու ազնիւ են, այլեւ անոնց, որոնք անխոհեմ են» (բառացի թարգմանութիւն): Չենք կրնար անտեսել այդ պատուէրը, ուստի Աստուծոյ իմաստութիւնը փնտռենք անոր մէջ:

Պետրոսի բառերը սկիզբը անհանգիստ կրնան դարձնել մեզ, բայց ժամանակի ընթացքին կը սորվինք ճիշդը

ընել եւ կը դիրանայ ամէն բան: Պետրոս կը շարունակէ, ըսելով. «Աստուած կը հաճի երբ խիղճդ մաքուր պահելու համար համբերութեամբ կը տոկաս *անարդար վարմունքի*» (Ա.Պտ 2.19, շեշտադրումը՝ մեր կողմէ)²⁶:

Կանգ առ եւ մտածէ պահ մը կարդացածիդ մասին: Բոլորս ալ կ'ուզենք հաճեցնել զԱստուած. ատիկա փափաքն է ամէն մարդու, որ ինքզինք Անոր որդին կամ դուստրը կը համարէ: Ինչն է, որ կը հաճեցնէ զԱստուած: Երբ մեզի հանդէպ անարդարօրէն կը վարուին եւ փոխարէնը մենք ճիշդ վարմունք կ'ունենանք:

Կը յիշեմ դէպք մը, որ պատահեցաւ կնոջս եւ աւագ որդիներէս մէկուն հետ: Տղաս զգաց, որ եղբօրը բաժինը իրմէ աւելի էր եւ թէ անարդար էր ատիկա: Ան բողոքեց. «Մամ, ատիկա արդար չէ»:

Կինս հանդարտ կերպով պատասխանեց. «Տղան, կեանքը արդար չէ»:

Տղաս կնոջս նայեցաւ կարծես ըսել կ'ուզէր՝ «Ինչպէս կրնաս ատիկա ըսել: Դուն իմ մամաս ես»:

Լիսան անոր հարցուց. «Արդամր էր, որ Յիսուս մեր պատիժը իր վրան առաւ եւ մեռաւ խաչին վրայ երբ Ինք սխալ բան մը չէր ըրած»:

Տղուս աչքերը ցոյց տուին, որ հասկցաւ փոխանցուած իմաստութիւնը, եւ լռեց:

Քրիստոսի Անձնական Օրինակը

Պետրոս շարունակեց ըսելու. «Որովհետեւ ասորը *կանչուած էք դուք*» (Ա.Պտ 2.21²⁷, շեշտադրումը՝ մեր կողմէ): Ամէն անգամ,

26 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

27 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիլֆայր Պայպըլ* (AMP) տարբերակէն

որ այս համարին վրայ հիմնուած ուսուցում մը կու տամ, ներկաներէն կը խնդրեմ, որ ինծի նային, եւ խանդավառութեամբ կ'ըսեմ. «Ամէն մարդ թող այս բառերը ըսէ. “Ասիկա իմ կոչումս է”»: Մենք միշտ կը խօսինք մեր կեանքին մէջ մեր կոչումին մասին: Ահա՛ ատիկա անոնցմէ մէկն է: Տէն Պետրոս ինչ կ'ըսէ. «Որովհետեւ ատոր կանչուած էք դուք [անբաժանելի է ձեր կոչումէն]: Որովհետեւ Քրիստոս ալ ձեզի համար տառապանք կրեց, ձեզի ձգելով [Իր Անձնական] օրինակը, որպէսզի հետեւիք Իր ոտնաքայլերուն» (Ա. Պտ 2.21)²⁸:

Ինչպէս տառապանք կրեց Յիսուս: Նախորդ համարին մէջ Պետրոս անիկա բացատրած էր իբրեւ՝ անարդար վարմունք յանձնարարուած իշխանութիւններէն: Երբեմն Աստուած մեզ կը դնէ կացութիւններու մէջ, ուր անխոհեմ վարմունքի կ'արժանանանք իշխանութիւններու կողմէ, ինչպէս Ան ըրաւ Դաւիթի, Յովսէփի, Դանիէլի, Պօղոս Առաքեալի եւ ուրիշներու հետ: Մեր կոչումն է ճիշդ կերպով պատասխանել անոնց, եւ Յիսուս մեզի Իր Անձնական օրինակը ձգեց թէ՛ ինչպէս պէտք է ընենք ատիկա:

Կրնաս հարց տալ. «Ինչ լաւ բան կ'իրագործէ ղեկավարներու կողմէ կոպիտ վարմունքի արժանանալը»: Գաղափարը հակառակ է մեր բնական միտքին, քանի որ անոր ետին գտնուող տրամաբանութիւնը անհերթեթ կը թուի ըլլալ: Սակայն Աստուծոյ իմաստութիւնը ենթարկուող սիրտ մը կը ձեւակերպէ մարդուն մէջ այդ տեսակի վարմունքի միջոցաւ, եւ ատիկա կը կատարուի երեք ձեւերով: Առաջին՝ անիկա առիթ կու տայ Աստուծոյ արդար դատաստանին: Երկրորդ՝ անիկա մեր մէջ կը շինէ Քրիստոսի նկարագիրը: Երրորդ՝ այդ վարմունքին դիմաց մեր ենթարկուած կեցուածքը կը փառաւորէ զԱստուած:

28 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիլֆայտ Պայպլը* (AMP) տարբերակէն

Պետական իշխանություններուն հնազանդելու մասին խօսելէ առաջ Պօղոս հետեւեալը ըսաւ. «Սիրելիներ, երբեք դուք անձամբ վրէժ լուծելու մասին մի՛ մտածէք, այլ ձգեցէք, որ Աստուծոյ բարկութիւնը ընէ ատիկա. որովհետեւ Տէրը Սուրբ Գիրքին մէջ կ'ըսէ. “Իմն է դատելու եւ պատժելու իրաւունքը. են պիտի հատուցանեմ”» (Հռ 12.19): Պաշտպանութիւն, սրբագրութիւն, վրիժառութիւն կամ ուրիշ պատշաճ պատասխաններ պէտք է գան Աստուծմէ, ոչ մարդէն: Այն անձը, որ ինքն իր վրէժը կ'առնէ չունի Քրիստոսի խոնարհութիւնը:

Ոչ ոք երկրի վրայ ունի ատելի մեծ իշխանութիւն քան Յիսուս, սակայն Ան բնաւ Ինքզինք չպաշտպանեց իշխանութիւններուն դիմաց: Երթանք ճիշդ այն կացութեան, որուն ակնարկեց Պետրոս, որ էր՝ Յիսուսի դատաւարութիւնը. «Աւագ քահանաները բազմաթիւ ամբաստանութիւններ կ'ընէին, բայց Յիսուս պատասխան չէր տար» (Մր 15.3):

Պատկերացուր դատարան մը, բայց ոչ որեւէ դատարան, այլ՝ երկրին ամէնէն բարձրը, ուր ամէն բան, որ կը խօսուէր վկաններուն կողմէ պաշտօնապէս պիտի գործածուէր Յիսուսի դէմ: Վկայութիւն տուողները Անոր ազգի կրօնական եւ քաղաքական ղեկավարներն են: Անոնք ազդեցիկ մարդիկ էին, որոնց խօսքերը մեծ կշիռ ունէին, բայց ճշմարտութեան նշոյլ մը չկար անոնց ըսածներուն մէջ: Անոնք ամբողջապէս սուտ խօսեցան, սակայն Յիսուս լուռ մնաց զինք ամբաստանողներուն դիմաց եւ Ինքզինք չպաշտպանեց... «Պիղատոս կրկին անգամ հարցուց Յիսուսի. “Պատասխան չե՞ս տար, տեն, որքան ամբաստանութիւն կ'ընեն քեզի դէմ”: Յիսուս դարձեալ պատասխան չտուաւ, այնքան՝ որ Պիղատոս շատ զարմացաւ» (Մր 15.4-5):

Պիղատոս իբրեւ դատաւոր նստած էր երկրի բարձրագոյն աթոռին: Անհամար անգամ ան տեսած էր դատի մէջ եղող մարդիկ եւ դիտած ինչպէս անոնք իրենք զիրենք կը

պաշտպանէին խենթի պէս՝ դատաստանէ խուսափելու համար: Երբ դատապարտուէին, բանտ կը դրուէին, կ'արտաքսուէին կամ կը գլխատուէին: Աւելի բարձր վերաքննիչ դատարան չկար: Ան բնաւ չէր տեսած դատապարտեալի մը լուռ մնալը: Պիղատոս գիտէր, որ ղեկավարները Յիսուսը դատի տուած էին նախանձի պատճառով, եւ ամէնէն խիստ պատիժը կ'ուզէին Անոր համար, որն էր՝ խաչի վրայ մեռնիլը: Ան նաեւ գիտէր, որ Յիսուս չէր ան ինչպէս անոնք կ'ուզէին ներկայացնել զինք: Սակայն Յիսուս կը մերժէր Ինքզինք պաշտպանել: Անոր վարմունքը պատճառ եղաւ, որ կառավարիչը զարմանար Անոր կեցուածքին վրայ:

Յիսուս ինչո՞ւ չպաշտպանեց Ինքզինք: Պատճառը. մնալ Իր Հօրը դատաստանին եւ հետեւաբար Անոր պաշտպանութեան տակ: Պետրոս ըսաւ. «Ան չհակադարձեց երբ անարգուեցաւ: Երբ տառապեցաւ, չսպառնաց վրէժ լուծել: Ան իր դատը ձգեց ձեռքերուն մէջ Աստուծոյ, որ միշտ արդարօրէն կը դատէ» (Ա. Պտ 2.23)²⁹:

Երբ կը մերժենք մենք մեզ պաշտպանել, կը ծածկուինք Աստուծոյ շնորհքի եւ դատաստանի ձեռքին տակ: Չկայ ատիկ ապահով վայր. «Ո՛վ է, որ պիտի մեղադրէ Աստուծոյ ընտրեալները: Ո՛չ ոք, քանի Աստուած է արդարացնողը» (Հռ 8.33):

Միւս կողմէ, անոնք, որոնք իրենք զիրենք կը պաշտպանեն՝ իրենք զիրենք կը դնեն զիրենք ամբաստանողներուն օրինական իշխանութեան եւ դատաստանին տակ, այդպիսով կորսնցնելով աստուածային միջամտութիւնը: Կը յիշեմ դէպք մը երբ ես ինծի պաշտպանեցի իմ վրաս եղած իշխանութեան դիմաց: Ատկէ ետք Աստուած կարճ տեսիլք մը ցոյց տուաւ ինծի: Տեսայ Տէրը քովս կանգնած՝ ձեռքերը ետեւը: Ետ կը կենար ինծի պէտք եղած օժանդակութիւնը տալէ: Երբ դադրեցայ ինքզինքս արդարացնելէ, Ան սկսաւ գործել ինծի համար:

29 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Յիսուս բնաւ աչքը չվերցուց Իր վերջնական Դատաւորին վրայէն նոյնիսկ երբ կանգնած էր յանձնարարուած իշխանութեան դիմաց: Յիշէ, որ թագաւորին սիրտը Տիրոջ ձեռքին մէջն է: Ինքնապաշտպանութենէ հրաժարելով, Ան մնաց Աստուծոյ պաշտպանութեան տակ: Այն պահուն, որ կ'արդարացնես եւ կը պաշտպանես ինքզինքդ, դուն քեզ յանձնած կ'ըլլաս ամբաստանողին՝ իբրեւ դատաւորի: Կը կորսնցնես պաշտպանութեան հոգեւոր իրաւունքդ, որովհետեւ ան քեզմէ աւելի վեր կը բարձրանայ հոգեւոր մարզին մէջ մինչ կը պատասխանես իր քննադատութեան: Անոր ազդեցութիւնը կ'աւելնայ քու ինքնապաշտպանութեանդ պատճառով: Երբ կը փորձես քու անմեղութիւնդ փաստել, քեզ ամբաստանողին գութին կը յանձնես դուն քեզ: Այդ պատճառով Յիսուս յորդորեց.

Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ՝ դատարան չինկած, այլապէս քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին, եւ բանտ կը նետուիս: Վստահ եղիր թէ բանտէն պիտի չելլես, մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես: (Մտ 5.25-26)

Այդ առակին համաձայն, պիտի ստիպուիս վճարել այն ինչ որ քեզ ամբաստանողը կը պահանջէ իբրեւ փոխհատուցում: Որքան մեծ ըլլայ յանցանքդ անոր դէմ այդքան նուազ գութացոյց կու տայ ան: Պարտքիդ վերջին լուման անգամ պիտի կորզէ քեզմէ, իր աչքին ատիկա արդար ըլլայ կամ ոչ:

Մանուկի մը Հաւատքը

Երբ մեր աւագ որդին՝ Ատիսընը երրորդ դասարան էր, օր մը ընթրիքի ատեն Լիսային եւ ինծի ըսաւ հարցի մը մասին, որ կ'ունենար դպրոցը: Այնպէս կը զգար, որ իր ուսուցիչներէն

մէկը կը հակառակէր իրեն: Ըստ Ատիսընի, ուսուցիչը չէր սիրեր զինք եւ զինք կը մեղադրէր ամէն անգամ, որ խօսակցութիւն կամ անկարգութիւն ըլլար դասարանին մէջ: Ատիկա երկարատենէ ի վեր տեղի կ'ունենար, եւ ուսուցիչը պաշտօնական գանգատ ներկայացուցած էր իրեն դէմ եւ այդ մասին նօթ մը դրկած էր տուն: Ատիսըն չափազանց խղճամիտ է, եւ այդպիսի ժխտական տեղեկագիր մը ունենալը տանելի չէր իրեն համար: Մինչ ան իր յուսախաբութիւնը եւ վախերը կը բաժնեկցէր մեզի հետ, ան սկսաւ լալ:

Մենք իրեն վստահեցուցինք, որ մենք իր մէջ լաւագոյնը կը տեսնէինք եւ խնդրեցինք իրմէ, որ մանրամասնութիւնները պատմէր մեզի: Ան հառաչեց եւ ըսաւ. «Ես կը մեղադրուիմ ամէն բանի համար: Նոյնիսկ երբ մէկէ աւելի անձեր կ'ըլլան նիւթին մէջ, ամբողջ յանցանքը տակաւին իմ վրաս կը դրուի: Կը մեղադրուիմ բաներու համար, որ ես չեմ ըրած: Օրինակ այսօր քովս նստած երկու տղաքը կը խնդային, իսկ ես լուռ էի: Ուսուցիչը դարձաւ եւ ինծի պռռաց»: Անոր շրթունքը կը դողար տեղի ունեցած անարդարութեան պատճառով: Ինը տարեկան պատանիի մը համար ատիկա անյոյս տագնապ մըն էր:

Միւս ուսուցիչներուն տեղեկագիրներուն համաձայն, Ատիսընի վարքը բացառիկ էր: Ուստի գիտէինք, որ այդ ուսուցիչին հետ պատահածը անջատ հարց մըն էր: Մինչ Լիսան փորձեց մխիթարել զինք, եւ հարցուցի. «Ի՞նչ ըսիր երբ ան յանդիմանեց քեզ այսօր»:

Ատիսըն պատասխանեց այս անգամ աչքերուն մէջ կրակով. «Իրեն ըսի. «Ես չէի խօսողը: Այդ երկու տղաքն էին»»:

Հարցուցի. «Ընդհանրապէս այդպէս կը պատասխանես երբ յանդիմանէ քեզ»:

Ատիսըն պատասխանեց. «Այո, եթէ ես չըլլամ ընողը»:

Ես իրեն նայեցայ եւ ըսի. «Տղան, հարցը ճիշդ հոգ է: Դուն քեզ կ'արդարացնես քու վրադ իշխանութիւն եղող անձին

դիմաց, եւ երբ դուն քեզի կը պաշտպանես, Աստուած չի պաշտպաներ քեզ»:

Բաժնեկցեցայ իրեն հետ այս գլուխին մէջ մեր կարդացած աստուածաշնչական հատուածները: Որպէսզի ասելի օգնեմ իրեն, որ հասկնայ, բաժնեկցեցայ իրեն հետ հետեւեալ փորձութիւնը, որմէ ես անցած էի մեր եկեղեցւոյ գործավարին հետ, որուն մասին խօսեցայ նախորդ գլուխին մէջ:

Վերակացու մը, որ Մտադրած է Վնաս Հասցնել

Այդ մարդուն տղան մեր պատանիներէն էր: Ես սրբութեան, աղօթքի եւ Յիսուսի տիրութեան մասին հզօր պատգամներ կը քարոզէի այդ շրջանին: Շատ մը երիտասարդներ կը փոխակերպուէին: Առիթով մը այդ տղան եկած էր կնոջս եւ լալով հարցուցած, թէ ինչպէս կարելի էր մաքուր եւ սուրբ կեանք մը ապրիլ երբ այդքան անբարեպաշտ վարմունք կար տան մէջ: Ապա ան մանրամասնութիւններ ալ ըսած էր, ինչ որ օգնեց ինծի, որ հասկնամ, թէ ինչո՞ւ ինծի դէմ կը գործէր իր հայրը:

Քանի մը ամիս ետք չորս տարբեր պատանիներ ինծի ըսին, թէ ճիշտն տխուր էին, որ ես գործէս պիտի արձակուէի: Պատանիներէն հասկցայ, որ այդ լուրը ելած էր անոր որդիէն, որ ինծի ըսաւ, որ իր հօրմէն լսած էր ասիկա:

Գացի հօրը քով, ընդունեց, որ այդպիսի բան մը ըսած էր, բայց յանցանքը նետեց ասագ հովիւին վրայ՝ ըսելով, որ անոր մտադրութիւնն էր զիս արձակելը: Շաբաթներ անցան, եւ կացութիւնը բարդացաւ: Երթալու կամ մնալու անորոշութեան պատճառով ընտանիքս մնայուն ճնշումի տակ էր: Տուն գնած էինք, կինս յդի էր, դրամ չունէինք եւ ուրիշ երթալիք տեղ չունէինք: Չէի ուզեր կենսագրական կետերս (*ռէզիւմէներ*) դրկել հոս-հոն: Կը հաւատայի, որ Աստուած հոգ բերած էր

զիս եւ պիտի մնայի հոն՝ առանց երկրորդ ծրագիրի մը: Կինս ջղային էր եւ մտահոգ, եւ քաջալերեց զիս, որ քայլ մը առնեմ. «Հոգիս, գիտեմ, որ քեզ գործէ պիտի արձակեն: Ամէն մարդ ինձի կ'ըսէ, թէ այդպէս պիտի ըլլայ»:

Կինս ճիշդ էր: Աւագ հովիւը վերջապէս համաձայնեցաւ զիս գործէ արձակելու: Կիրակի առտուայ պաշտամունքի մը ընթացքին ան յայտարարեց, թէ գլխաւոր փոփոխութիւններ պիտի կատարուէին պատանիներու ծառայութեան մէջ: Ես տակաւին չէի խօսած անոր հետ: Ժամադրութիւն ունէի իրեն եւ գործավարին հետ հանդիպելու յաջորդ օրը: Աստուած ինձի ըսաւ, որ ինքզինքս չպաշտպանեմ:

Երբ մտայ աւագ հովիւին գրասենեակը յաջորդ օրը, ան առանձին էր: Ըսաւ. «Ճոն, Աստուած քեզ հոս դրկեց: Ես պիտի չարձակեմ քեզ»: Ան իր միտքը փոխած էր: Ես հանգստացայ. Աստուած պաշտպանած էր զիս վերջին վայրկեանին: Ապա հովիւը ըսաւ. «Ինչո՞ւ իմ գրասենեակի գործավարս կ'ուզէ, որ դուն գործէ արձակուիս»: Պատասխանեցի, թէ չէի գիտեր, եւ իր խնդրանքով համաձայնեցայ ընել ամէն բան, որ կրնայի, խաղաղութիւն հաստատելու համար:

Կարճ ժամանակ ետք ես գրաւոր ապացոյց ստացայ որոշումի մը մասին, որ այդ գործավարը տուած էր, որ մէջտեղ կը հանէր անոր շարժառիթները: Կը պատրաստուէի զանիկա աւագ հովիւին տանելու: Կ'ուզէի, որ ան տեսնէր, թէ ինչ կը պատահէր առանց իր տեղեկութեան: Քառասունհինգ վայրկեան առջեւ-ետեւ քալեցի եւ աղօթեցի՝ փորձելով յաղթահարել այն անհանգստութեան զգացումը, որ ունէի: Կը շարունակէի թեզս պաշտպանել Աստուծոյ դիմաց, ըսելով. «Աստուած, այս մարդը անպարկեշտ է: Պէտք է բացայայտուի: Ան կործանարար ոյժ մըն է այս առաքելութեան մէջ: Պէտք է աւագ հովիւին ըսեմ, թէ ճիշդ ինչ տեսակի մէկն է ան»: Զայն բացայայտելու մտադրութիւններս աւելի եւս արդարացնելու

համար, Աստուծոյ ըսի. «Ամէն տեղեկութիւն, որ գրաւոր ձեւով պիտի տանիմ աւագ հովիւին, իրականութիւն է եւ փաստագրուած: Զգացական քայլ մը չէ, որ կ'առնեն: Եթէ չկասեցուի, անոր փտած վարմունքը պիտի թափանցէ այս ամբողջ եկեղեցիին մէջ»:

Վերջապէս, յուսախաբութեանս մէջ բերանէս փախաւ. «Աստուած, չես ուզեր, որ բացայայտեմ զինք, չէ՛»: Երբ ատիկա ըսի, Աստուծոյ խաղաղութիւնը ներխուժեց սիրտս: Գլուխս շարժեցի ապշած: Գիտէի, որ Աստուած չէր ուզեր, որ բան մը ընեմ, ուստի թափեցի ունեցած ապացոյցս: Յետագային երբ կրնայի արդէն առարկայականօրէն նայիլ կացութեան, անդրադարձայ, որ իրականութեան մէջ կ'ուզէի ինքզինքս պաշտպանել եւ վրէժ լուծել աւելի քան պաշտպանել ունէ մէկը: Պատճառաբանութիւններով ինքզինքս համոզած էի, որ շարժառիթներս անձնասէր չէին: Ունեցած տեղեկութիւնս ճշգրիտ էր, բայց շարժառիթներս՝ անմաքուր:

Ժամանակ անցաւ եւ օր մը երբ կ'աղօթէի եկեղեցւոյ բակին մէջ, նախքան աշխատանքային ժամիս սկսիլը, այդ մարդը ինքնաշարժով մօտեցաւ: Աստուած ըսաւ, որ ես քովը երթամ եւ ինքզինքս խոնարհեցնեմ: Անմիջապէս յարձակողական եղայ. «Ո՛հ, Տէր, ի՛նք պէտք է քովս գայ: Ի՛նքն է բոլոր խնդիրները յառաջ բերողը»: Շարունակեցի աղօթել, բայց Աստուած լուռ էր: Քսան վայրկեան ետք դարձեալ Տէրը պնդեց, որ ես անմիջապէս քովը երթամ եւ ինքզինքս խոնարհեցնեմ: Գիտէի, որ Աստուած էր ըսողը: Հեռաձայնեցի այդ մարդուն եւ գացի գրասենեակը: Սակայն այն ինչ որ ըսի եւ այն ձեւով որ ըսի անիկա շատ տարբեր էր անկէ, որ պիտի ընէի նախքան Աստուծոյ այդ մասին ինծի հետ խօսիլը եւ ինծի սորվեցնելը: Ամենայն անկեղծութեամբ ներողութիւն խնդրեցի իրմէ: Ըսի, որ քննադատող եւ դատող վարմունք ունէի իրեն հանդէպ: Ան կակուղցաւ, եւ գրուցեցինք քիչ մը: Այդ օրուրն է ետք ինծի դէմ անոր հակառակութիւնները դադրեցան:

Վեց ամիս ետք երբ քաղաքէն դուրս էի, անոր ըրած բոլոր սխալները մէջտեղ ելան եւ աւագ հովիւը գիտցաւ այդ բոլորին մասին: Անոր ըրածները շատ աւելի գէշ էին քան ինչ որ ես գիտէի: Ան անմիջապէս գործէ արձակուեցաւ: Դատաստան եկաւ, բայց ոչ իմ ձեռքովս: Այն բանը, որ ինք կ'ուզէր ընել ինծի, իրեն հետ պատահեցաւ: Սակայն երբ ատիկա պատահեցաւ, ես չուրախացայ: Յաւեցայ իրեն եւ իր ընտանիքին համար: Հասկցայ իր ցաւը. ես ալ նոյն ցաւէն անցած էի իր ձեռքով: Քանի որ արձակած էի զինք վեց ամիս առաջ, կը սիրէի զինք եւ չէի ուզեր, որ այդպիսի բաներ ըլլային իրեն հետ:

Ես այդ եկեղեցին յաճախեցի տասնմէկ տարի եւս եւ յաճախ կը դիմէին ինծի քարոզելու համար: Այդ մարդուն կողմէ իմ անունիս բերուած ամօթը վերցուած էր եւ փոխարինուած էր պատիւով: Երբ ետ նայիմ, կ'անդրադառնամ, որ ես աճեցայ այդ դժուարութեան հանգրուանին, եւ յետոյ Աստուած բարձրացուց զիս այն մարդոց դիմաց, որոնք շատ սխալ տեղեկութիւններ լսած էին իմ մասին: Ճիշդ ինչպէս Հայրը բարձրացուց Յիսուսը, այդպէս ալ Ան կը պատուէ Իր զաւակները, որոնք կը հետեւին այն օրինակին, զոր Յիսուս ձգեց մեզի:

Տարուան Աշակերտը

Աստուածաշնչական համարները եւ այս պատմութիւնը Ատիսընի հետ բաժնեկցելէ ետք, ըսի. «Տղաս, ունիս ընտրութիւն մը: Կրնաս շարունակել դուն քեզի պաշտպանել եւ մնալ ուսուցիչին դատաստանին տակ կամ կրնաս անդրադառնալ, որ իր ըրած ամբաստանութիւններուն բարեպաշտ ձեւով չես պատասխանած: Ապա կրնաս երթալ ուսուցիչիդ, խոնարհեցնել քու անձդ եւ ներողութիւն խնդրել անարգական վարմունքիդ եւ անոր իշխանութիւնը դիմադրելուդ համար, եւ Աստուած միջամուխ կ'ըլլայ հարցիդ մէջ»:

Ատիսըն հարցուց. «Ուրեմն ի՞նչ կ'ընենք երբ կ'ամբաստանուիմ բանով մը, որ չեմ ըրած»:

«Թող Աստուած պաշտպանէ քեզ: Դուն քեզ պաշտպանելը արդիւնք տուամ»:

Ատիսըն պատասխանեց. «Ոչ, կ'ուզեմ, որ Աստուած պաշտպանէ զիս»:

Յաջորդ օրը ան գնաց իր ուսուցիչին եւ խոնարհեցուց ինքզինք: Ան ուսուցիչէն խնդրեց, որ ներէ իրեն՝ յանդիմանութիւն ստանալու ատեն դէմ դնելուն համար:

Ուսուցիչը ներեց իրեն, եւ յաջորդ շաբաթը Ատիսըն ընտրուեցաւ իբրեւ իր դասարանի այդ շաբթուան աշակերտը: Ատիսըն անգամ մըն ալ այդպիսի հարց չունեցաւ: Ան տարին աւարտեց իր ուսուցիչէն բարձրագոյն պատիւի մրցանակը ստանալով մրցանակաբաշխումի արարողութեան ընթացքին:

Եթէ ինը տարեկան պատանի մը կրնայ խոնարհեցնել ինքզինք եւ Աստուծոյ Խօսքին ճշմարիտ ըլլալը փաստել տագնապի մը ատեն, հրքան աւելի մե՛նք պէտք է այդպէս ընենք: Կը կարծեմ, որ ատիկա ցոյց կու տայ, թէ Յիսուս ինչո՞ւ ըսաւ. «Արդ, ով որ իր անձը այս մանուկին պէս կը խոնարհեցնէ՝ անիկա է մեծը երկինքի արքայութեան մէջ» (Մտ 18.4):

Դաւիթի Հանդիպումը Անխոհեմ Իշխանութեան հետ

Ատիսըն սորվեցաւ այն ինչ որ Դաւիթ՝ Յեսսէի որդին, սորվեցաւ: Աստուած արդար Դատաւոր է, եւ եթէ մենք իշխանութեան մեզի հանդէպ ըրած անարդարութիւնը իր ձեռքերուն մէջ ձգենք, Ան միշտ արդար դատաստան կ'ընէ: Երբ Դաւիթի մասին կը խօսինք, պէտք է յիշենք, որ Աստուած էր, ո՛չ Չարախօսը, որ Դաւիթը դրաւ Սաւուղ անունով

անխոհեմ եւ վերջաւորութեան նաեւ անգութ դեկավարին իշխանութեան տակ:

Պատմութիւնը սկսաւ նոյնիսկ նախքան որ անոնք հանդիպին երբ Սամուէլ՝ Իսրայէլի աագ մարգարէն, Դաւիթը օծեց իբրեւ Աստուծոյ ժողովուրդին վրայ յաջորդ թագաւորը: Դաւիթ շատ հաւանաբար խանդավառուած էր եւ մտածեց. *Այս է այն մարդը, որ օծած էր ներկայի թագաւորը: Ես թագաւոր պիտի ըլլամ...*

Սաւուղ անհնազանդ գտնուած էր Աստուծոյ հանդէպ եւ կը չարչարուէր չար ոգիի մը կողմէ: Հանգիստ կը գտնէր միայն երբ մէկը քնար կը նուագէր իրեն համար: Անոր օգնականները մէկը կը փնտռէին, որ նստէր իրեն հետ եւ ծառայէր իրեն, եւ թագաւորին ծառաներէն մէկը առաջարկեց Դաւիթը՝ Յեսսէի որդին: Սաւուղ Թագաւոր մարդ դրկեց, որպէսզի Դաւիթը իրեն բերէին պալատ, որպէսզի ծառայէր իրեն: Դաւիթ հաւանաբար մտածեց. *Աստուած արդէն իսկ սկսաւ իրագործել մարգարէին միջոցաւ իր տուած խոստումը:* Ան ինքն իրեն հաւանաբար ըսաւ. *Ասիկա իմ սկսնակի մակարդակի գործս ըլլալու է:*

Ժամանակ անցաւ եւ իրեն ըսուեցաւ, որ ուտեստեղէն տանի իր աագ եղբայրներուն, որոնք պատերազմի մէջ էին փղշտացիներուն դէմ: Ճակատի գիծ հասնելով, տեսաւ ինչպէս փղշտացի հսկան՝ Գողիաթ, կը ծաղրէր Աստուծոյ բանակը եւ գիտցաւ, որ այդ ծաղրանքը քառասուն օրէ ի վեր կար: Ան գիտցաւ նաեւ, որ թագաւորը խոստացեր էր իր աղջիկը իբրեւ կին տալ այն մարդուն, որ կ'ելլէր այդ հսկային դիմաց եւ պարտութեան կը մատնէր զայն: Դաւիթ թագաւորին գնաց եւ արտօնութիւն խնդրեց հսկային դէմ ելլելու: Ան սպաննեց Գողիաթը եւ շահեցաւ Սաւուղի աղջիկը: Ան նաեւ շնորհք գտաւ Սաւուղի առջեւ, եւ անոր աղջկան հետ ամուսնանալով, եղաւ թագաւորին փեսան:

Յոմնաթան՝ Սաւուղի երէց որդին, Դաւիթի հետ յաիտենական բարեկամութեան ուխտ մը ըրաւ: Ամէն բան, որ Սաւուղ կու տար Դաւիթի, որ ընէր, Աստուծոյ ձեռքը Դաւիթի վրան կ'ըլլար եւ կը յաջողէր: Թագաւորը ըսաւ, որ Դաւիթ նստի իր սեղանին՝ իր որդիներուն հետ միասին: Ամէն բան լաւ կ'ընթանար, եւ Դաւիթ շատ ուրախ էր: Ան կ'ապրէր պալատին մէջ, կ'ուտէր թագաւորին սեղանէն, ամուսնացած էր թագաւորին աղջկան հետ, Յոմնաթանի ընկերն էր եւ կը յաջողէր իր ստանձնած բոլոր պարտականութիւններուն մէջ: Ան նաեւ ժողովուրդին կողմէ սիրուած էր: Ան կը տեսնէր մարգարէութեան հանգրուանային կատարումը իր աչքերուն առջեւ: Սաւուղը Դաւիթը կը սիրէր իր բոլոր միւս ծառաներէն աւելի, ուստի զայն իր զինակիրը ըրաւ: Սաւուղ հօր մը պէս եղած էր Դաւիթի համար, որ վստահ էր, որ Սաւուղ պիտի առաջնորդէր եւ մարզէր զինք եւ օր մը մեծ պատիւով գահին վրայ դնէր զինք: Դաւիթ կը ցնծար Աստուծոյ բարութեան եւ հաւատարմութեան համար:

Կտրուկ Փոփոխութիւն

Բայց մէկ օրուայ մէջ ամէն բան փոխուեցաւ: Սաւուղ եւ Դաւիթ կը վերադառնային ճակատամարտէ մը քով քովի, երբ Իսրայէլի բոլոր քաղաքներէն կիներ դուրս եկան պարելով եւ երգելով՝ «Սաւուղ իր հազարաւորները զարկաւ, եւ Դաւիթ՝ իր բիրաւորները»: Ատիկա զայրացուց Սաւուղը, եւ այդ օրուընէ անդին ան ատեց Դաւիթը: Սաւուղ սկսաւ նիզակներ նետել Դաւիթի վրայ, եւ դաւ նիւթեց զայն սպաննելու: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Սաւուղ կ'ատէր Դաւիթը, քանի որ գիտէր, որ Աստուած անոր հետ էր: Սաւուղ գիտէր, որ Աստուած հեռացած էր իրմէ: Դաւիթ ստիպուած եղաւ իր կեանքը ազատելու համար փախչելու: Փախչելու ուրիշ տեղ չգտնելով, ան փախաւ դէպի անապատ: Դաւիթ

հաւանաբար մտածեց. «Ինչ կը պատահի: Խոստումը հետզհետէ կը կատարուէր, իսկ հիմա փշուր-փշուր եղած է: Այն մարդը, որ պէտք էր առաջնորդս եւ զիս մարզողը ըլլար, կը փորձէ սպաննել զիս: Ինչ կրնամ ընել: Սաւուղ Աստուծոյ օծեալ ծառան է: Եթէ ան ինծի դէմ է, ինչ առիթ ունիմ ես: Ան է թագաւորը, Աստուծոյ մարդը, Աստուծոյ ժողովուրդին վրայ դրուած: Աստուած ինչո՞ն կ'արտօնէ ասիկա»:

Սաւուղ կը սկսի Դաւիթը հալածել անապատէ անապատ, քարայրէ քարայր՝ Իսրայէլի լաւագոյն պատերազմիկներէն երեք հազարին ընկերակցութեամբ, մէկ նպատակ ունենալով՝ սպաննել Դաւիթը: Այդ հանգրուանին խոստումը պարզապէս ուրուական մըն էր մինչ Դաւիթ փախուստ կու տար՝ գոյատեւելու համար: Դաւիթ այլեւս չէր ապրեր պալատին մէջ կամ ուտեր թագաւորին սեղանէն: Անոր բնակութիւնը խոնաւ քարայրներու մէջ էր, եւ կ'ուտէր անապատի գազաններուն աւելցուքները: Այլեւս թագաւորին կողքին չէր հեծներ իր ձին, այլ՝ կը հալածուէր մարդոց կողմէ, որոնց հետ ժամանակին ուս ուսի պատերազմած էր: Չունէր տաքուկ անկողին, չունէր ծառաներ, չկային թագաւորական պալատի գովասանքները: Իր կինն ալ տրուած էր ուրիշին:

Ինչպէս կրնար այն ղեկավարը, որուն իշխանութեան տակ դրած էր զինք Աստուած, այդպիսի բան մը ընել: Դաւիթ հաւանաբար բարկութեան, յուսախաբութեան եւ հիասթափութեան խորհուրդներու դէմ պատերազմ կ'ընէր: *Ինչո՞ն Աստուած բան մը չ'ըներ արոր համար: Արդեօք կը սիրէ՞ զիս: Հապա Աստուծոյ խոստումները... Ինչո՞ն Ան Իր ձեռքը կը դնէ այդպիսի անգութ մարդու մը վրայ, որպէսզի Իր ուխտի ժողովուրդը առաջնորդէ:*

Սաւուղ այնքան վճռորոշ էր ամէն գնով սպաննելու այդ երիտասարդը, որ իր խենթութիւնը աւելցաւ: Նոք քաղաքին մէջ քահանաներ կային, որոնք Դաւիթին հայթայթեցին

ապաստանարան, կերակուր եւ Գողիաթի սուրը: Անոնք բնաւ տեղեակ չէին Դաւիթի Սաւուղէն փախուստ տալէն, եւ կը կարծէին, որ ան առաքելութեան մը ղրկուած է թագաւորին կողմէ: Անոնք Աստուծոյ հարցուցին իրեն համար եւ ճանապարհեցին զինք:

Երբ Սաւուղ գիտցաւ այդ մասին, բորբոքեցաւ: Ան սպաննեց ութսունհինգ անմեղ քահանաներ եւ ամբողջ Նոբ քաղաքը սուրէ անցուց. ամէն տղամարդ, կին, պզտիկ, նորածին մանուկ եւ անասուն: Ան անոնց՝ անմեղներու, դէմ գործադրեց այն դատաստանը, որ իրականութեան մէջ պէտք էր գործադրէր ամաղեկացիներուն դէմ: Աստուծոյ ղեկավարի ընտրութիւնը հասկնալը արդէն անկարելի էր: Սաւուղ մարդասպան մըն էր: Աստուած ինչպէս կրնար Իր Հոգին դրած ըլլալ այդպիսի մարդու մը վրայ:

Շատեր կ'ըսեն, թէ Սաւուղ ժողովուրդին ընտրութիւնն էր, իսկ Դաւիթ՝ Աստուծոյ: Այդ սխալ տեղ տանող հաստատումը կ'ուսուցանուի մարդոց կողմէ, որոնք չեն կրնար պատկերացնել, որ Աստուած դաժան մարդ մը կրնայ դնել ղեկավարութեան դիրքի մը վրայ: Ճիշդ է, որ ժողովուրդը թագաւոր մը ուզեց, սակայն Աստուած ընտրեց թէ՛ Սաւուղը եւ թէ՛ Դաւիթը: Աստուած ըսաւ. «Սաւուղը թագաւոր նշանակեցի» (Ա.Թգ 15.11):

Առիթով մը Սաւուղի տեղեկացուցին, որ Դաւիթ Ենգադդիի անապատին մէջն է, եւ ան ճամբայ ելաւ երեք հազար պատերազմիկներով՝ անոր դէմ ելլելու համար: Իրենց ճամբորդութեան ընթացքին անոնք հանգիստ ըրին այն քարայրին առջեւ, ուր Դաւիթ պահուրտած էր: Երբ Սաւուղ եւ իր զինուորները իրենց հանդերձները հանեցին՝ լոգանք առնելու համար, Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Դաւիթի մարդիկը իրեն ըսին. «Ահա՛ օրը, որուն մասին Տէրը քեզի ըսաւ. “Ահա՛ քու թշնամիդ ձեռքդ պիտի մատնեմ, որ քեզի

հաճելի եղածը ընես անոր» (Ա.Թգ 24.5):

Դաւիթ ելաւ եւ Սաուլի պարեգօտին քղանցքը գաղտնի կերպով կտրեց: Ատկէ ետք սակայն ան խղճահարուեցաւ ատիկա ընելուն համար. «Իր մարդոց ըսաւ. “Տէրը չարտօնէ, որ Տէրոջ օծեալին՝ իմ տիրոջս այս բանը ընեմ, ձեռքս անոր վրայ երկարելով. որովհետեւ ան Տէրոջ օծեալն է”»: Դաւիթ այս խօսքերով իր մարդիկը սանձահարեց, ու չթոյլատրեց, որ Սաուլի վրայ յարձակին: Սաուլը քարայրէն դուրս ելաւ եւ իր ճամբան գնաց» (հմր 7-8): Ինչ կը վերաբերի անոր խղճահարութեան, անգլերէն *Քինկ Ճէյմզ Կըրթըն* տարբերակը կ'ըսէ. «Դաւիթի սիրտը ապտակեց զինք» (բառացի թարգմանութիւն): Անոր սիրտը տակաւին կակուղ էր իր ղեկավարին հանդէպ, որ այդքան մեծ դժուարութիւն բերած էր իր կեանքին մէջ: Ըստ երեւոյթին, ան դէմ դրած էր բարկութեան, վախի եւ յուսախաբութեան իր խորհուրդներուն եւ իրեն ննթարկած զանոնք:

Քանի որ արդէն կտրած էր իր թագաւորին պարեգօտին մէկ ծայրը, ան ընտրեց ատիկա գործածել իր անմեղութիւնը փաստելու համար անոր. «Յետոյ Դաւիթ ալ կանգնեցաւ, քարայրէն դուրս ելաւ, ու Սաուլի ետեւէն պոռալով՝ ըսաւ. “Ո՛վ թագաւոր, իմ տէրս”»: Երբ Սաուլը ետեւը նայեցաւ, Դաւիթ դէմքը մինչեւ գետին խոնարհեցնելով՝ երկրպագեց: Դաւիթ Սաուլի ըսաւ [...] “Տես, իմ հայրս, այո՛, տես, քու պարեգօտիդ քղանցքը ձեռքիս մէջ է [...] Հասկցիր եւ տես, թէ ձեռքիս մէջ *ո՛չ չարութիւն կայ, ո՛չ ալ յանցանք* [«*ըմբոսպոութիւն*», ըստ անգլերէն տարբերակին], ու քեզի դէմ մեղանշած չեմ, բայց դուն զիս կը հետապնդես՝ որ բռնես”» (հմր 9-11, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Դաւիթ մտահոգ էր, որ Սաուլը կը կարծէր, թէ ինք ըմբոստ եւ չար էր: Դաւիթ հաւանաբար քննած էր իր սիրտը, թէ՛ «Ինչը սխալ ըրի: Ինչպէս Սաուլի սիրտը ինձի դէմ դարձաւ

այդքան արագօրէն»: Ատոր համար պոռաց. «Ինձի ըսին, որ քեզ մեռցնեն [...] պարեգօտիդ քղանցքը կտրեցի, բայց քեզ չմեռցուցի, հասկցիր եւ տես, թէ ձեռքիս մէջ ո՛չ չարութիւն կայ, ո՛չ ալ յանցանք [«ըմբոստութիւն», ըստ անգլերէն տարբերակին]» (հմր 11-12): Ան չէր հաւատար, որ Սաւուղ առածինը այդպէս մտածելու սկսաւ: Մէկը թունաւորած էր անոր սիրտը Դաւիթի դէմ, ուստի ան ուզեց իր հաւատարմութիւնը փաստել Սաւուղին: Ան մտածեց, որ եթէ կարենար ասիկա ընել, Սաւուղի աչքին նորէն շնորհք պիտի գտնէր, պիտի վերականգնուէր, Սաւուղ նորէն ազնուօրէն պիտի վարուէր իրեն հետ եւ մարգարէութիւնը պիտի կատարուէր:

Անոնք, որոնք մերժուած են իր մը կամ ղեկավարի մը կողմէ կը միտին ամբողջ յանցանքը իրենց վրայ առնել: Անոնք իրենք զիրենք կը բանտարկեն զիրենք չարչրկող խորհուրդներու մէջ, թէ՛ *Ինչ ըրի ես: Արդեօք սիրտս անմաքհոր էր:* Անոնք կը կրեն իրենց անմեղ ըլլալը իրենց ղեկավարներուն առջեւ շարունակ փաստելու բեռը: Կը հաւատան, որ եթէ միայն կարենան իրենց հաւատարմութիւնը եւ արժէքը ցոյց տալ՝ պիտի ընդունուին: Բայց որքան փորձեն, այդքան մերժուած կը զգան:

Սաւուղ ճանչցաւ Դաւիթի բարութիւնը երբ տեսաւ, որ կրնար մեռցնել զինք, բայց չմեռցուց, ուստի թագաւորը եւ իր մարդիկը ձգեցին գացին: Դաւիթ հաւանաբար մտածեց. *Թագաւորը պիտի վերականգնէ զիս: Հիմա մարգարէութիւնը պիտի կատարուի: Վստահաբար կը տեսնէ իմ սիրտս եւ հիմա աւելի լաւ պիտի վարուի հետս: Ան պիտի ըլլայ բարի եւ ազնիւ ղեկավար մը: Օ՛, որքան հեռու էր ասիկա իրականութենէն:*

Ան Որոշած Է Կործանել Զիս

Միայն կարճ ժամանակ մը ետք, Սաւուղին ըսին, թէ Դաւիթ եքեղայի բլուրն էր: Սաւուղ դարձեալ անոր ետեւէն ելաւ՝ նոյն երեք հազար պատերազմիկներով:

Դարձեալ Սաւուղ փորձեց սպաննել Դաւիթը: Վստահ եմ, որ Սաւուղի շարունակ զինք հալածելը նեղացուց Դաւիթը: Ան անդրադարձաւ, որ եղածը սխալ հասկացողութիւն մը չէր, այլ՝ Սաւուղ դիտումնաւոր կերպով, առանց ոեւէ մէկուն դրդումով հետամուտ էր զինք սպաննելու:

Սաւուղ գիտէր, որ Դաւիթ ըմբոստ չէր կամ չար մտադրութիւն չունէր, եւ տակաւին կը հալածէր Դաւիթը: Դաւիթ համոզուեցաւ այն իրականութեան, զոր լման ժամանակը յուսացած էր, որ ճիշդ չըլլայ. թէ՛ գործ ունէր չար ղեկավարի մը հետ: Ինչպէս կրնար Աստուած Իր օծութիւնը դնել այդպիսի մարդու մը վրայ:

Դաւիթ Յովաբի եղբօր՝ Աբեսայի հետ միասին, որ արիւնարբու երիտասարդ մըն էր, գաղտնաբար մտաւ Սաւուղի բանակատեղին: Աստուած բոլորը խոր քունի մէջ դրած էր: Երկուքը կրցան հասնիլ հոն, ուր Սաւուղ քնացած էր: «Աբեսա Դաւիթի ըսաւ. “Աստուած այսօր թշնամիդ քու ձեռքդ մատնեց. հիմա թոյլատրէ՛, որ նիզակով մէկ անգամէն գետինը գամեմ զինք, ու չկրկնեմ հարուածը”» (Ա.Թգ 26.8):

Աբեսա շատ մը լաւ պատճառներ ունէր Դաւիթէն խնդրելու, որ հրամայէր իրեն, որ սպաննէր Սաւուղը: Նախ եւ առաջ, Սաւուղ սպաննել տուաւ ութսունհինգ անմեղ քահանաներ, իրենց կիները եւ զաւակները պաղարիւնութեամբ: Ազգը վտանգի մէջ էր այդպիսի խենթ մարդու մը ղեկավարութեամբ: Այս օրերուս շատեր այդպէս կը մտածեն, յատկապէս եկեղեցւոյ ղեկավարներու հետ կապուած: Պարզապէս այսօրուան ղեկավարները այդքան չար արարքներ չեն ըներ:

Երկրորդ՝ Աստուած Դաւիթը օժած էր ըլլալու Իսրայէլի յաջորդ թագաւորը՝ Սամուէլի խօսքով: Ժամանակն էր, որ Դաւիթ տիրանար իր ժառանգութեան: Կ'ուզէր մեռնիլ Սաւուղի ձեռքով եւ բնաւ չիրականացնել մարգարէութիւնը: Ես այդ

պատճառաբանութիւնները լսած եմ բազմաթիւ անգամներ եկեղեցւոյ հիասթափուած անձնակազմի անդամներէ:

Երրորդ՝ Սաւուղ երեք հազար բանակով չէր ելած Դաւիթը եւ իր մարդիկը սպաննելու: Ժամանակն էր կամ սպաննելու եւ կամ սպաննուելու: Վստահաբար ինքնապաշտպանութիւն կը համարուէր ատիկա: Արեսսա գիտէր, թէ որեւէ դատարան իրաւունք պիտի տար իրենց: Անշուշտ այդ պատճառաբանութիւնը ընդդիմութիւն չի գտներ մեր օրերուն. մենք ուղղակի կ'ընդունինք զանիկա առանց երկու անգամ մտածելու այդ մասին:

Չորրորդ՝ Աստուած չէր, որ բանակը այնքան խոր քունի մէջ դրած էր, որ անոնք կրցան անոնց մէջէն քալելով անցնիլ, հասնիլ մինչեւ Սաւուղի քնացած տեղը՝ կատարելու համար ազգը այդ չար ղեկավարէն ազատելու Աստուծոյ կամքը: Անոնք ունէին առիթ մը, որ կրնար երբեք չգալ իրենց նորէն: Ժամանակն էր մարգարէութեան իրականացման: Քանի՛ եկեղեցւոյ տնօրէն ժողովի անդամներ կամ անձնակազմի անդամներ ատիկա մտածած են երբ իրենց ղեկավարը ինկած եղած է: Անոնք կը մտածեն. *Աստուած զայն դրած է տեղի մը մէջ, ուրկէ կրնանք հիմա վերցնել զինք մեզ ղեկավարելու դիրքէն:* Այդ տրամաբանութիւնը միայն կը բացայայտէ անոնց անհնազանդ սիրտերը:

Այդ բոլոր պատճառները լաւ կը հնչէին: Տրամաբանական էին, եւ Դաւիթ ունէր քաջալերանքը ուրիշ հաւատարիմ եղբօր մը: Ուստի եթէ Դաւիթ ունենար նուազագոյն չափի ըմբոստութիւն իր սիրտին մէջ, ինքն իրեն իրաւունք պիտի տար հրամայելու իր օգնականին, որ սուրը խրէր Սաւուղին մէջ, եւ ինքզինք ամբողջովին արդարացուած պիտի զգար: Սակայն տես Դաւիթ ինչ կը պատասխանէ. «Զինք մի՛ մեռցներ. արդարեւ ո՞վ կրնայ ձեռք երկարել Տէրոջ օծեալին եւ անպատիժ մնալ» (հմր 29): Այսօրուայ մեր բառերով եթէ

պիտի ըսենք. «Մի՛ դպչիր իրեն խօսքերով կամ արարքներով, քանի որ ո՛վ կրնայ յարձակում գործել իր ղեկավարին դէմ եւ յանցաւոր չըլլալ»:

Դաւիթ չուզեց սպաննել Սաուղը, հակառակ անոր որ Սաուղ անմեղ մարդիկ սպաննել տուեր էր եւ զինք սպաննել կ'ուզէր: Դաւիթ ինքն իրեն համար վրէժ չուզեց առնել. ան ատիկա ձգեց Աստուծոյ ձեռքերուն մէջ: Աւելի դիւրին պիտի ըլլար վերջ դնել այդ հարցին հող եւ այդ ատեն. ավելի դիւրին Դաւիթի համար էւ Իսրայէլի ժողովուրդին: Ան գիտէր, որ ժողովուրդը առանց ճշմարիտ հովիւի ոչխարներու պէս էին: Ան գիտէր, որ չար ղեկավարը կը բռնաբարէր ժողովուրդը՝ իր սեփական անձնասիրական փափաքներուն համար: Դժուար էր չպաշտպանել ինքզինքը, բայց թերեւս ավելի դժուար էր չազատել այն ժողովուրդը, զոր կը սիրէր, խենթ թագաւորէ՛ մը:

Դաւիթ այդ որոշումը տուաւ նոյնիսկ որ գիտէր, որ Սաուղի միակ մխիթարութիւնը զինք սպաննելն էր: Դաւիթ իր սիրտի մաքրութիւնը ցուցաբերեց երբ խնայեց Սաուղի կեանքը առաջին անգամ: Սակայն տակաւին չէր ուզեր դպչիլ անոր: Սաուղ իր ղեկավարն էր եւ Աստուծոյ օճեալ ծառան էր, ուստի Դաւիթ Սաուղի դատաստանը ձգեց Աստուծոյ ձեռքերուն մէջ: Դաւիթ իմաստուն էր ատիկա ընելուն համար հակառակ անոր որ ըրածը հակառակ էր սովորական տրամաբանութեան:

Կրնաս հարց տալ. «Ո՞վ գործածեց Աստուած դատելու համար Սաուղը՝ Իր ծառան»: Պատասխան. փղշտացիները: Տէրը շատ անգամ պիտի գործածէ չփրկուած մարդիկ կամ այս աշխարհի հիմնարկութիւնները՝ դատաստան բերելու համար Իր Եկեղեցւոյ ղեկավարներուն վրայ: Սաուղ պատերազմի ատեն ինկաւ իր որդիներուն հետ միասին: Սակայն երբ լուրը հասաւ Դաւիթին, ան չտօնակատարեց: Ան սգաց:

Իրականութեան մէջ Դաւիթ սպաննել տուաւ այն մարդը, որ ըսաւ, թէ սպաննած էր Սաուղը, հակառակ անոր որ

իրականութեան մէջ չէր ալ սպաննած: Մարդը կը յուսար շնորհք գտնել Դաւիթի առջեւ, բայց հակառակ ազդեցութիւնը ունեցաւ: «Դաւիթ անոր ըսաւ. “Ի՞նչպէս չվախցար ձեռքդ երկարելու եւ Տէրոջ օծեալը մեռցնելու”» (Բ.Թգ 1.14): Զայն սպաննել տալէ ետք, Դաւիթ մեռած երիտասարդին ըսաւ. «Ինքնադատապարտութեամբ մեռար, որովհետեւ դուն ինքդ խոստովանեցար, որ սպաննեցիր Տիրոջ օծեալը» (Բ.Թգ 1.16)³⁰:

Ապա Դաւիթ սիրոյ երգ մը գրեց, որ Յուդայի ժողովուրդը երգէ ի պատիւ Սաւուղի եւ իր որդիներուն: Ան ժողովուրդէն պահանջեց, որ ջայտարարեն աստիկա փղշտացիներու քաղաքներու փողոցներուն մէջ, որպէսզի թշնամին չուրախանայ: Ան անձրեւ կամ բերք չհոջակեց այն վայրին մէջ, ուր Սաւուղ սպաննուած էր: Ան ամբողջ Իսրայէլին կոչ ուղղեց, որ լայ Սաւուղի համար: Այդ բոլորը չելան սիրտէն մարդու մը, որ վրէժխնդրութիւն կը փնտռէր եւ որ այլեւս չէր պատուեր իր ղեկավարը: Ոչ, այդպիսի մարդ մը պիտի ըսէր. «Գտաւ իրեն արժանին»:

Դաւիթ աւելի անդին գնաց: Ան չսպաննեց Սաւուղի ընտանիքի մնացեալ անդամները: Ընդհակառակը, ազնուութեամբ վարուեցաւ անոնց հետ: Անոնց հող եւ կերակուր տուաւ, անոր սերունդին տեղ մը տուաւ թագաւորի սեղանին վրայ: Արդեօք ասոնք գործերն են մարդու մը, որ ուրախ էր իր ղեկավարին դատաստանովը: Անոնք, որոնք ըմբոստ են իրենց սիրտին մէջ, կ'ուրախանան երբ իրենց հոգեւոր ղեկավարը կ'իյնայ: Կը մտածեն. *Ստացաւ այն, որուն արժանի էր*: Անոնք ընդհանրապէս իրենց չարախօսութեամբ եւ վիրաւորական խօսքերով կ'օգնեն զանոնք աւելի վար հրելու մէջ: Անոնք չունին Դաւիթի սիրտը: Անոնք Աստուծոյ սիրտին համաձայն սիրտ չունին:

30 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն Նիու Լիվինկ Թրանսլէյշըն (NLT) տարբերակէն

Օրհնուելու Դիրքին Վրայ

Պէտք չէ մոռնանք, որ բարի նպատակով մըն է, որ Աստուած կ'արտօնէ, որ անարդար վարմունքի ենթարկուինք իշխանութիւններու կողմէ: Ան ատիկա կը գործածէ մեզի օրհնութեան մը հասցնելու համար: Պետրոս կը շարունակէ իր յորդորը, ըսելով. «Չարին փոխարէն չար մի՛ հատուցանէք, ոչ ալ նախատինքի փոխարէն՝ նախատինք. ընդհակառակը օրհնեցէք. Աստուած *ապոր համար կանչեց ձեզ*, որպէսզի դուք ալ օրհնութիւն ժառանգէք» (Ա.Պտ 3.9, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Օրհնութիւնը կրնայ բաղկացած չըլլալ բնական կամ շօշափելի բաներէ, հակառակ անոր որ շատ անգամ այդպէս կ'ըլլայ, այլ՝ կրնայ գալ անելի կարելոր մարզերու մէջ կամ ձեւերով, ինչպէս օրինակ՝ Քրիստոսանման նկարագիրի ձեւով, Թագաւորութիւնը յառաջ տանելու ձեւով, անելի մեծ մակարդակի իշխանութեան կամ յալիտենական վարձատրութիւններու ձեւով: Երբ կ'ենթարկուինք Աստուծոյ իշխանութեան, ոչ մէկ վնաս կրնայ հասնիլ մեր հոգեւոր բարօրութեան: Պետրոս յստակ դարձուց ատիկա երբ հարցուց. «Ո՞վ ձեզի չարիք կը հասցնէ, եթէ դուք բարին գործելու նախանձախնդիր ըլլաք» (Ա.Պտ 3.13): Այս հաստատումին պարունակը Յիսուսի անձնական օրինակին հետեւիլն է:

Ինչ կը վերաբերի Քրիստոսանման նկարագիրին, Պետրոս կը խրատէ. «Քրիստոս ալ, մէկ անգամուան համար չարչարուեցաւ մեր մեղքերուն համար [...] Արդ, որովհետեւ Քրիստոս մեզի համար չարչարուեցաւ մարմինով, դուք ալ նոյն մտածումով զինուեցէք, որովհետեւ մարմինով չարչարուողը կը դադրի մեղանչելէ» (Ա.Պտ 3.18, 4.1):

Պետրոս մեզի թելադրեց, որ զինենք մենք մեզ նոյն այն չարչարանքներուն համար, զորս Քրիստոս ապրեցաւ, եւ որ իր նամակին պարունակին համաձայն, իշխանութիւններու

կողմէ անարդար վարմունքն է: Կրնան պատկերացնել, որ զինուորականներ ճակատամարտի կ'երթան առանց զինամթերքի: Առանց զէնքի, առանց կապարի, առանց դանակի. առանց որեւէ բանի: Ո՛րքան ծիծաղելի: Սակայն մեծ թիւով հաւատացեալներ զինուած չեն դիմագրաւելու անխոհեմ վարմունք: Երբ յարձակում մը ըլլայ իրենց դէմ, անոնք կը ցնցուին, կը շփոթին կամ կը զարմանան: Անոնք կը *հակազդեն* իրենց տրամաբանութեան եւ պատճառաբանութիւններուն հիման վրայ փոխանակ *գործելու* իշխանութեան վերաբերեալ Աստուծոյ Խօսքին ուսուցանած սկզբունքներուն հիման վրայ:

Տամ ուրիշ օրինակ մը զինուած անձի մը: Ճամբորդատար օդանաւերու օդաչուի մարզումներուն մէջ կարելոր տեղ ունին համակարգիչի վրայ արուեստական թռիչքներ կատարելու փորձերը կամ քննութիւնները (*Ֆլայթ սիմիւլէյթըրը*): Այդ համակարգչային թռիչքներուն ատեն, մարզուող օդաչուները կը դրուին թռիչքի ատեն տեղի ունենալիք ամէն տեսակի հաւանական տագնապի առջեւ: Այդ ապահով պայմաններուն մէջ օդաչուները կը սրեն իրենց հակադարձելու ձիրքերը մինչեւ որ յաջողին դիմակայել զանոնք: Այդ պատրաստութիւնը կը զինէ զիրենք անակնկալ, տագնապալի կացութիւններ դիմագրաւելու համար: Եթէ բան մը պատահի իրական թռիչքի մը ատեն, օդաչուները խուճապի չեն մատնուիր, այլ՝ կը հակադարձեն երկար մարզումներուն ատեն ձեռք ձգուած գիտութեան եւ փորձառութեան օժանդակութեամբ եւ առաջնորդութեամբ: Հակառակ անոր որ ճամբորդները կրնան խուճապի մատնուիլ, ցնցուիլ եւ ջղագրգիռ ըլլալ, օդաչուները հանդարտ կը մնան եւ ամբողջական հակակշիռի տակ: Այն քննիչները, որոնք կը քննեն արկածի հանդիպած եւ ինկած օդանաւներու սեւ տուփերուն արձանագրութիւնները, կը զարմանան օդաչուներուն հանդարտութեան վրայ: Ընդհանրապէս չկայ խուճապ անոնց ձայնին մէջ նոյնիսկ

մինչեւ ջախջախուելու պահը: Անոնք զհնուած կ'ըլլան:

Այս գիրքը կրնայ ծառայել իբրեւ թոյնաքի համար մարզուելու ձեռագիրք մը: Այս պատգամին մէջի Աստուծոյ Խօսքը կը զինէ կամ կը պատրաստէ քեզ այն անկիւնադարձերուն համար, որոնց կեանքի ընթացքին կրնաս հանդիպիլ՝ իշխանութիւններու հետ յարաբերութեան իմաստով: Եթէ ճիշդ կեցուածք որդեգրես, օրհնութիւն պիտի վայելես: Պետրոս մեզի ըսաւ, թէ անոնք, որոնք կը հետեւին Քրիստոսի չարչարանքներու օրինակին, կը դադրին մեղանչելէ: Ինչ խօսք: Այլ խօսքով, անոնք, որոնք ճիշդ կերպով կը վարուին իշխանութիւններու կողմէ անարդար վարմունքի դիմաց, կը հասնին հոգեւոր հասունութեան:

Կայ տակաւին ւելի մեծ խոստում մը: Պօղոս վստահեցուց, ըսելով.

Հետեւեալը ճիշդ խօսք մըն է.

Եթէ մեռնինք իրեն հետ,

Նաեւ պիտի ապրինք իրեն հետ:

Եթէ դիմանանք դժուարութիւններուն,

Իրեն հետ պիտի թագաւորենք: (Բ.Տմ 2.11-12)³¹

Հոգեւոր իշխանութիւն կը խոստացուի անոնց, որոնք կը տառապին Քրիստոսի նման: Ո՛րքան ւելի մեծ դժուարութեան տոկաս, այդքան ւելի մեծ իշխանութիւն կը վստահի Աստուած քեզի: Դարձեալ, կը տեսնենք, որ Աստուած քեզ կը պատրաստէ օրհնութեան համար՝ երբ կը հանդիպիս անխոհեմ իշխանութեան: Բայց արդեօք ճիշդ ձեւով պիտի պատասխանես եւ ընդունիս Աստուծոյ օրհնութիւնը, կամ պիտի դժգոհիս եւ դառնանաս: Ընտրութիւնը քուկդ է: Ընտրէ՛ յաղթահարողի ճամբան, որ կեանք է:

31 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

ՏԱՍՆՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԻՆՔՉԻՆՔ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԴՆԵԼ

*Անոնք, որոնք կը պատուեն
իշխանությունները, կը քալեն մեծ
իշխանության մէջ, եւ յարգանքը
կը հեղեղի իրենց:*

Ամէն մարդ չէ, որ իշխանութեան հանդէպ կը վարուի կ'ուրախանանք երբ կը տեսնենք մեր իշխանութիւններուն թերութիւնները, եւ ապա կ'արդարացնենք մենք մեզ երբ մէկ կողմ կը դնենք մեր զսպուածութիւնը: Սակայն ուրիշներու մեղքերուն նկատմամբ մեր կեցուածքը, յատկապէս ղեկավարութեան դիրքի վրայ եղողներուն, մեծագոյն նշաններէն մէկն է մեր հոգեւոր հասունութեան: Այդ պատճառով, Աստուած յաճախ կը գործածէ իշխանութեան վրայ եղողներուն թերութիւնները եւ սխալները՝ մեր

սիրտերուն իսկական վիճակը մէջտեղ հանելու համար: Այդպիսի բան մը պատահեցաւ Նոյի որդիներէն մէկուն հետ:

Ճիշդ, Բայց Սխալ

Ջրհեղեղէն ետք, Նոյ սկսաւ մշակել հողը եւ ցանեց այգի մը: Օր մը չափէն աւելի գինի խմելէ ետք, գնաց իր վրանը եւ գինով վիճակի մէջ հանեց հազուատները եւ մերկ-մերկ քնացաւ:

Քամ՝ անոր որդիներէն ամէնէն կրտսերը, մտաւ այն վրանը, ուր Նոյ քնացած էր, տեսաւ անոր մերկութիւնը, դուրս ելաւ եւ իր երկու եղբայրներուն՝ Սէմի եւ Յափէթի պատմեց այդ մասին: Ան միայն «ընտանիքի անդամներու» ըսաւ: Ան հաւանաբար ըսաւ. «Տղաք, պապան “ժանտակուզի մը չափ գինով” եւ “կաշաղակի մը պէս մերկ” է»³²: Կամ աւելի վատ հաւանականութիւնը այն է, որ ան թերեւս կանչեց իր եղբայրները, որ իրենց հոգետոր առաջնորդը տեսնեն մերկ վիճակի մէջ:

Երբ Սէմ եւ Յափէթ պատմութիւնը լսեցին, հանդերձ առին, իրենց ուսերուն վրայ դրին, ու դէպի ետեւ երթալով՝ իրենց հօր մերկութիւնը ծածկեցին: Երբ Նոյ արթնցաւ իր գինովութենէն, գիտցաւ, թէ Քամ ինչ ըրած էր: Տէս Նոյ ինչ հոչակեց.

Ապա ան անիծեց Քամի որդիին՝ Քանանի սերունդները.

«Անիծեալ ըլլայ Քանան.

«Թող ծառաներուն ամէնէն յետինները ըլլան

«Սէմի եւ Յափէթի սերունդներուն»:

Ապա Նոյ ըսաւ.

«Թող Սէմ օրհնուի Տիրոջ կողմէ, իմ Աստուծոյս.

«Եւ թող Քանան ըլլայ անոր ծառան:

«Թող Աստուած ընդարձակէ Յափէթի տարածքը,

32 Անգլերէն ասացուածքներ, որոնք թարգմանուած են բառացիօրէն, եւ որ կը նշանակեն՝ գինով եւ ամբողջութեամբ մերկ:

«Եւ թող բաժնեկցի Աէմի բարգաւաճումը,
«Եւ թող Քանան անոր ծառան ըլլայ»: (Ծն 9.25-27)³³

Այս գիրքին սկիզբները խօսեցանք Աստուծոյ իշխանութեան անհնազանդ ըլլալու հետեւանքներուն մասին: Անոնք, որոնք կամովին կ'ըմբոստանան՝ անէծքի մը տակ կը դնեն իրենք զիրենք: Քամ դժուար ձեւով սորվեցաւ այդ ճշմարտութիւնը: Ան անպատուեց եւ այդպիսով արհամարհեց Նոյի Աստուծմէ յանձնարարուած իշխանութիւնը, ինչ որ անէծք բերաւ Քամի սերունդներուն վրայ: Հետաքրքրական է, որ Քամի յանցանքը խիստ հետեւանքներ բերաւ անոր վրայ, մինչ Նոյի գինովութիւնը հետեւանք մը չբերաւ անոր կեանքին մէջ, առնուազն չէ արձանագրուած այդ մասին:

Նոյի բարոյական անկումը քննութիւն մը եղաւ անոր երեք որդիներուն՝ յայտնաբերելով իւրաքանչիւրին սիրտը: Անոնցմէ մէկը ըմբոստ էր եւ անմիտ, իսկ միւս երկուքը՝ պատուաւոր եւ ողորմած: Նոյ լաւագոյն օրինակը չէր իր գինով վիճակին մէջ, սակայն անոր վարմունքը Աստուծոյ լուծելիք հարցն էր, ոչ իրմէ վար եղողներունը: Երկու որդիները հասկցան ատիկա եւ շարունակեցին պատուել զայն: Մէկը որոշեց անպատուել եւ ամօթի մէջ ձգել իր հայրը եւ ինքն իր գլխուն բերաւ այն անէծքը, որ կը կարծէր, թէ պիտի ըլլար իր հօրը ճակատագիրը:

Աէմ եւ Յափէթ չկրցան իսկ նայիլ իրենց հօր ծախողութեան: Անոնք չուզեցին դիտել կամ արտօնել, որ ուրիշներ (կիները եւ զաւակները) տեսնեն անոր վիճակը, ուստի ծածկեցին զայն: Քանի որ անոնք մեծարանք ցոյց տուին իրենց հօրը դիրքին նկատմամբ, անոնք իրենց սիրտին մէջ պաշտպանեցին անոր դիրքը: Քամ, սակայն, ծաղրեց եւ վարկաբեկեց իր հայրը՝ հաւանաբար փորձելով վարկաբեկել անոր կառավարելու կարողութիւնը: Ատիկա

33 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Քամին տուաւ պատրուակ մը չհնազանդելու իր հօրը երբ արդէն ինք ներքնապէս չէր ուզեր հնազանդիլ: Այդ կ'ըլլայ պարագան ունէմէկուն, որուն սիրտին մէջ անհնազանդութիւն կը բնակի: Իշխանութիւնը վարկաբեկելով, ան ինքզինք արձակեց ենթարկուելէն կամ հնազանդութենէն: Իր սիրտին մէջ արձակեց ամէն զսպուածութիւն:

«Աստուծոյ Հռչակատրոններու Սրահ»ին մէջ (*Հոյ աֆ Ֆէյմ*)՝ որ Եբր 11-ն է, Աստուած կը գովէ Նոյի հաւատքը եւ հնազանդութիւնը, բայց հոն չենք գտներ Քամի անունը: Քամ ճիշդ չէր: Նոյ գինով եւ մերկ չէր: Այո, *Քամ հարիւր փոկոս ճշգրիտ էր իր փոլած փեղեկութեան մէջ, սակայն ան սխալ էր իր սկզբունքին մէջ:* Պատճառաբանութիւնը կրնար արդարացնել անոր արարքները: Ան պատմեց միայն այն ինչ որ տեսաւ. ան պարզապէս «ճշմարտախօս»ի պէս վարուեցաւ: Եւ սակայն հնազանդութեան եւ մեծարանքի սկզբունքները ուրիշ բան կ'ըսեն: Սէմ եւ Յափէթ պատուեցին իրենց հայրը եւ օրհնուեցան:

Շատեր, Քամի նման, ճշգրիտ տեղեկութիւններ կու տան ղեկավարներու մասին, սակայն անոնք սխալ են Աստուծոյ չափանիշներով: Անոնք կ'անպատուեն ուրիշ մը եւ կը կորսնցնեն իրենց օրհնութիւնը: Անոնք կ'ապրին իրենց անձնական հասկացողութեան եւ տրամաբանութեան անմտութեամբ: Անոնք չունին Դաւիթի, Սէմի եւ Յափէթի սիրտը: Երբ Սաւուդի անկումը իր աւարտին հասաւ, Դաւիթ վշտացաւ եւ հռչակեց.

Գէթի մէջ մի՛ պատմէք,

Ասկաղոնի փողոցներուն մէջ մի՛ անտէք.

Որ փղշտացիներուն աղջիկները չորախանան,

Որ անթլփատներուն աղջիկները չհրճուին [...]

Սաւուդ ու Յովնաթան

Իրենց կեանքին մէջ շատ սիրելի ու հաճելի ըլլալով՝

Իրենց մահուան մէջ ալ իրարմէ չզատուեցան:

Արծիւներէն անլի թեթեւաշարժ

Ու առիժներէն աւելի զօրաւոր էին:

Ո՛վ Իսրայէլի աղջիկներ, լացէ՛ք Սաւուդին վրայ,

Որ ձեզի վայելուչ կարմիրներ կը հագցնէր

Ու ձեր հանդերձներուն վրայ ոսկիէ զարդեր կը դնէր:

(Բ.Թգ 1.20,23-24, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Տասնչորս տարի Դաւիթ լուրջ դժուարութիւններ կրեց այդ ղեկավարին պատճառով: Բնական հասկացողութիւնը եւ մարմնաւոր տրամաբանութիւնը պիտի մղէին զինք, որ ցնծար եւ յաղթանակ հռչակէր: Եւ սակայն Դաւիթ փաստեց, որ ինք կ'ապրէր իշխանութեան սկզբունքներով, եւ իր օրինակը աստիկա հաղորդեց իր իշխանութեան տակը եղող մարդոց: Իբրեւ արդիւնք, ան մեծ ղեկավար մը եղաւ թագաւորութեան մէջ: Անոնք, որոնք կը պատուեն իշխանութիւնը, մեծ իշխանութեամբ կ'ընթանան, եւ յարգանքը կը հետեւի իրենց: Անոնք դէպի իրենց կը գրաւեն Աստուծոյ օրհնութիւնը: Անոնք, որոնք կը զրպարտեն իշխանութիւնները կամ չեն յարգեր զանոնք, կը հնձեն անարգանքի հունձքը եւ պատճառ կ'ըլլան, որ դատաստանը հետեւի իրենց:

Ինքզինք Դատապարտութեան Տակ Դնել

Անգամ մը եւս քննենք յանձնարարուած իշխանութեան մա-
սին խօսող մեր հիմնական աստուածաշնչական հատուածը:

Ամէն մարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց, որովհետեւ առանց Աստուծոյ թոյլտուութեան իշխանութիւն չի կրնար ըլլալ, եւ գոյութիւն ունեցող իշխանութիւնները Աստուծմէ կարգուած են: Ուստի, ով որ իշխանութեանց կը հակառակի՝ Աստուծոյ հրամանին է որ հակառակած կ'ըլլայ, եւ հակառակողները *իրենք զիրենք դատապարտութեան փակ կը դնեն*»: (Հն 13.1-2, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Դատաստան կու գայ անոնց վրայ, որոնք դէմ կը դնեն իշխանութեան: Դպչէ՛ իշխանութեան, դպած կ'ըլլաս Աստուծոյ: Ես աշխատած եմ երկու միջազգային առաքելութիւններու մէջ՝ նախքան մեր անձնականը հիմնելը: Ես շարունակ ականատես եղած եմ դատաստաններու՝ իբրեւ արդիւնք իշխանութեան դէմ ելլելու: Այդ դատաստանը կու գար զանազան ձեւերով, սակայն անպայման կու գար: Անիկա յատկապէս յայտնի կ'ըլլար երբ պաշտօնեաներ գործէ կ'արձակուէին: Որքան ալ անտրամաբանական ըլլար ղեկավարը կամ պայմանները, եթէ անոնք քննադատէին կամ զրպարտէին ղեկավարը, եթէ խմէին դառնութեան բաժակէն, վերջաւորութեան մեծ դժուարութիւններու մէջ կը գտնէին իրենք զիրենք: Ոմանց համար նիւթական դժուարութիւններ էին, ուրիշներու համար՝ գործի մէջ հարցեր, ուրիշներու համար՝ առողջական հարցեր, ուրիշներու համար՝ զուակներու հետ կապուած հարցեր, տակաւին ուրիշներու համար՝ ամուսնութեան մէջ հարցեր: Յանկը երկար է, բայց արտասովոր դժուարութիւններու թելը միշտ ալ կ'անցնէր կեանքին ընդմէջէն այն անձին, որ չէր պատուեր իր հոգեւոր վերակացուները:

Տեսայ շատեր, որոնց հետ վատ վարուած էին երբ գործէ արձակած էին զիրենք, բայց անոնք շարունակած էին քաղցրաբարոյ մնալ: Մերժած էին խօսիլ իրենց նախկին գործատիրոջ կամ ղեկավարին մասին կամ մտիկ ընել անոնց դէմ խօսողներուն: Փոխարէնը անոնք օրինա՛ծ եւ պատուա՛ծ էին զանոնք ամէն առիթի: Անոնք գիտէին, որ Աստուած էր իրենց Աղբիւրը եւ Ան պիտի հայթայթէր իրենց, հոգար իրենց եւ բարձրացնէր զիրենք: Տեսայ ինչպէս անոնք գործի ընդունուեցան աւելի լաւ դիրքերու վրայ քան ինչ որ ունէին մեր անձնակազմին մէջ: Տարիներ ետք պատահեցաւ, որ հանդիպիմ անոնց եւ անոնք տակաւին օրինուած կեանքեր կ'ապրէին:

Ինչպէս կը շարունակես քաղցրաբարոյ մնալ: Յիսուս տուաւ մեզի ատոր գաղտնիքը: «Իսկ ես կ'ըսեմ. “Սիրեցէ՛ք

ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները, բարիք ըրէք ձեզ ատողներուն եւ աղօթեցէք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն» (Մտ 5.44): Ան մեզի ըսաւ, որ պէտք է աղօթենք անոնց համար, որոնք կը չարչարեն կամ կը չարաշահեն մեզ: Երբ ատիկա կ'ընենք, մեր սիրտերը կը բուժուին եւ չեն կրնար քննադատող կամ վիրաւորուած ըլլալ:

Պարգեւ Ընդդէմ Իշխանութիւն

Աստուածաշունչէն ստրկած եմ եւ կեանքի փորձառութիւններու մէջ հաստատուած տեսած եմ այն իրականութիւնը, թէ անոնք, որոնք իշխանութեան դէմ կը խօսին, դատապարտութիւն կը բերեն իրենք իրենց վրայ: Նկատի առ Մարիամն ու Ահարոնը. «Մարիամ ու Ահարոն Մովսէսի դէմ խօսեցան՝ անոր առած եթովպիացի կնոջ համար- քանի որ ան եթովպիացի կին առած էր» (ԹԻ 12.1):

Նախ ըսենք, թէ ո՛վ էին Մարիամ ու Ահարոն: Մարիամ Մովսէսի քոյրն էր: Նշեմ նաեւ, որ ան անոր ասագ քոյրն էր: Աստուած զայն մարգարէուհի կոչեց (Ելք 15.20): Ահարոն Մովսէսի ասագ եղբայրն էր ինչպէս նաեւ քահանայապետը: Ուստի կը խօսինք հանրաձանօթ երկու հոգիի մասին, որոնք ղեկավարութեան մէջ կարելոր դիրքեր ունէին:

Անոնք քննադատեցին Մովսէսը եթովպիացի կնոջ մը հետ ամուսնանալուն համար: Եթովպիան հիւսիսարեւելեան Ափրիկէի մէջ երկիր մըն է: Կինը Աբրահամի սերունդներէն չէր. ան Աբրահամի հետ ուխտէն դուրս էր:

Մարիամ եւ Ահարոն կը հաւատային, որ Մովսէս մեղք գործած էր, կամ՝ լաւագոյն պարագայի, սխալ որոշում մը տուած էր փրկեցի մէկու մը հետ ամուսնանալով, յատկապէս որ ղեկավար մըն էր: Արդեօք անոնք ճիշդ էին իրենց կարծիքին մէջ: Այդպէս կը թուէր ըլլալ, յատկապէս Օրէնքին

համաձայն: Աստուած Իսրայելի որդիներուն յայտնած էր իրենք իրենց միջեւ ամուսնութիւններ ընելու Իր փափաքը: Ան զգուշացուցած էր, որ օտար կիներ առնելը պատճառ պիտի ըլլար, որ իրենց սիրտերը շեղէին դէպի ուրիշ աստուածներ: Այդ պատուէրը կը կարդանք Բ.Օրէնքի Գիրքին մէջ: Մովսէսի օտարի մը հետ ամուսնանալը կը թուէր հակասութիւն մը ըլլալ: Հաւանաբար մտածեցին, թէ որովհետեւ Մովսէս ժողովուրդին վրայ բացայայտ եւ մեծ ազդեցութիւն ունեցող մէկն էր, անոր այդ վարմունքը վնասակար էր: (Նշեմ, որ այսօր մեզի ուղղուած պատուէրը միայն այն է, որ անհաւատներու հետ լծակից չըլլանք: Այլեւս հարցը արեան սերունդի հետ կապուած չէ, այլ՝ հոգեւորութեան: Տես Գղ 3.28-ը: Նոր Կտակարանին համաձայն, բնաւ հարց չէ, որ երկու տարբեր ցեղերէ եկած մարդիկ ամուսնանան իրարու հետ:)

Ուստի Մարիամ եւ Ահարոն ճիշդ էին իրենց գնահատումին մէջ, սակայն սխալ՝ ինչպէս Քամ էր: Մովսէս իրենց ղեկավարն էր: Զայն դատելը եւ քննադատելը կարգէ դուրս բան մըն էր: Իբրեւ անոր աւագ եղբայրն ու քոյրը, անոնք կրնային այդ մասին խօսիլ իրեն հետ՝ իբրեւ ընտանեկան հարց մը, բայց իրենք իրենց մէջ բամբասելը կամ ժողովուրդին մէջ անոր վարմունքին մասին խօսիլը մեղք էր:

Ինչն էր, որ իրենց առիթ տուաւ, որ խօսին իրենց ղեկավարին դէմ: Պատասխանը կը գտնուի յաջորդ համարին մէջ. «Եւ ըսին. “Միթէ Տէրը միայն Մովսէսի միջոցով խօսեցաւ, մեր միջոցով ալ չխօսեցա՞ւ”. ու Տէրը լսեց» (Թւ 12.2):

Աստուած իրենց միջոցով խօսած էր: Անշուշտ: Աստուած Ահարոնի մասին ըսաւ, թէ Մովսէսի բերանն էր կամ մարգարէ էր: Ահարոն Աստուծոյ պատգամները խօսեցաւ փարաւոնին: Մարիամ մարգարէական սաղմոս մը երգեց, որ արձանագրուած է Սուրբ Գիրքին մէջ: Անոնք վստահաբար ունէին հոգեւոր պարգեւներ: Բայց անոնց սխալը այն էր, որ

հոգեւոր պարգեւները կամ կարողութիւնները իշխանութենէն աւելի վեր դասեցին: Անոնք մտածեցին, թէ քանի որ Մովսէս մեղք գործած էր եւ իրենք՝ ոչ, եւ Աստուած զիրենք բոլորը գործածած էր խորունկ ձեւով մը, Մովսէս այլեւս աստակ չէր իշխանութիւն ըլլալու իրենց վրայ: Անոնք արտօնեցին, որ իրենց հոգեւոր շնորհքը բարձրացնէր զիրենք աւելի վեր այն իշխանութենէն, զոր Աստուած դրած էր իրենց վրայ:

Ինչ կը վերաբերի Նոր Կտակարանին, Պօղոս ըսաւ. «Շնորհքները զանազան են, բայց նոյն Հոգին է տուողը» (Ա.Կր 12.4): Այս եւ ուրիշ աստուածաշնչական հաստուածներ կ'ըսեն, թէ այդ պարգեւներուն վերակացուն Սուրբ Հոգին է: Պարգեւներէն ոմանք են՝ առաջնորդելու կարողութիւնը, ուսուցանելու կարողութիւնը, տալու շնորհքը, մարգարէութիւնը, բժշկութեան պարգեւները, Հոգիէն տրուած պարգեւները ճանչնալու կարողութիւնը եւ հրաշագործութիւնը (Ա.Կր 12.7-10: Հո 12.6-8):

Պօղոս շարունակեց ըսելով. «Զանազան հոգեւոր պաշտօններ կան, այո՛ր, բայց նոյն Տէրն է զայն բաշխողը» (Ա.Կր 12.5): «Պաշտօններ»ուն համար գործածուած յունարէն բառը *տրիպոնիան* է: Ըստ Թէյլրի Յունարէն Բառարանին, այդ բառը կը գործածուի նկարագրելու համար՝ «առաքեալներու պաշտօնը եւ անոնց վարչութիւնը, ինչպէս նաեւ մարգարէներու, աւետարանիչներու, երէցներու եւայլն պաշտօնները»: Պարզ ձեւով ըսելով, այդ բառը կը գործածուի նկարագրելու համար եկեղեցիին մէջ հոգեւոր իշխանութեան հինգ պաշտօնները: Այս համարին մէջ կը տեսնենք, որ Տէրն է՝ Յիսուս, որ այդ պաշտօնները կու տայ: Ուրիշ հաստուած մըն ալ կը հաստատէ ատիկա: Երբ Յիսուս յարութիւն առաւ մեռելներէն, Պօղոս գրեց. «Եւ ինքը՝ Քրիստոսն էր, որ “պարգեւներ բաշխեց մարդոց”, որպէսզի ոմանք առաքեալ ըլլան, ոմանք՝ մարգարէ, ոմանք՝ աւետարանիչ, ոմանք՝ հովիւ եւ ուսուցանող. Աստուծոյ ժողովուրդը պատրաստելու

եւ Աստուծոյ ծառայութեան մէջ դնելու համար, որպէսզի Քրիստոսի մարմինը՝ եկեղեցին աճի ու զօրանայ» (Եփ 4.11-12):

Թագաւորութեան իշխանութիւնը վար կը հոսի պաշտօններուն միջոցաւ, ոչ պարգեւներուն, այն ատենուընէ երբ ամէն իշխանութիւն Յիսուսի տրուեցաւ՝ Հօրը կողմէ, Անոր յարութենէն ետք (տե՛ս Մտ 28.18): Յիսուս Իր կարգին տուաւ ծառայութիւններու հնգեակը՝ ինչպէս կը նշուի Եփեսացիներուն Նամակին մէջ: Հետեւաբար անոր իշխանութիւնը կը հոսի նշանակուած պաշտօններու միջոցաւ: Մենք մեր առջեւ պէտք է պահենք այն իրականութիւնը, որ անձ մը կրնայ ատելի շնորհալի կամ պարգեւներով օժտուած ըլլալ քան իր հովիւը, սակայն հովիւը՝ որ կը կենայ իշխանութեան պաշտօնին մէջ, ատելի բարձր է քան այդ շնորհալի կամ պարգեւներով օժտուած անձը:

Կրնամ բազմաթիւ օրինակներ տալ այն ողբերգական հետեւանքներուն վերաբերեալ, որոնք տեղի կ'ունենան երբ շնորհալի կամ պարգեւներով օժտուած անձ մը ինքզինք կը բարձրացնէ ինքն իր աչքին: Անոնցմէ մէկը օգնական հովիւ մըն էր եկեղեցւոյ անձնակազմին մէջ, որ շատ շնորհալի էր քարոզելու եւ ուսուցանելու մէջ: Անոր ուսուցանած դասապահերուն սրահը միշտ լեփ-լեցուն կ'ըլլար. միայն ոտքի կենալու տեղ մնացած կ'ըլլար: Անոր կեանքին մէջ Աստուծոյ պարգեւը բացայայտ էր: Ան աղօթքի պահեր կ'առաջնորդէր շաբաթը մէկ անգամ, որոնց ընթացքին եւս սրահը լեփ-լեցուն կ'ըլլար:

Որքան հոչակաւոր կը դառնար ան, այդքան ազատ կը զգար քննադատելու եկեղեցւոյ մէջ հաստատուած օրէնքները եւ ինքնին աւագ հովիւը: Ան կ'ըսէր, թէ աւագ հովիւին որդեգրած ձեւերը կը սահմանափակէին Սուրբ Հոգիին գործունէութիւնը, եւ իր շուրջիններուն հետ կը բաժնեկցէր իր այդ համոզումները: Անոր քննադատական կեցուածքը փոխանցուեցաւ ուրիշ օգնական հովիւի մը եւս: Ժամանակ

մը ետք երկուքը միասնաբար առաջնորդեցին անոր աղօթքի պահը: Օր մը գլխատոր հովիւը սրահին ետեւի կողմէն ծածուկ կերպով մտաւ՝ տեսնելու համար, որ երկու օգնական հովիւները աղօթքի պահը կ'առաջնորդէին ճիշդ այն ձեւով, որ իրենց ըսած էր, որ չընեն: Փոխանակ բարեխօսութիւն ընելու եկեղեցիին, քաղաքին եւ չփրկուածներուն համար, անոնք մարդիկը կ'առաջնորդէին ուրիշ տեսակի աղօթքներու եւ կը յանդիմանէին զիրենք երբ այնպէս կը զգային, որ մարդիկ ճիշդը չէին ըներ: Ներկաները շփոթի մէջ էին:

Երկու օգնական հովիւներն ալ շնորհալի կամ պարզեւնեքով օժտուած անձեր էին, սակայն ենթարկուած չէին եկեղեցւոյ իշխանութեան: Անոնց յանցանքին լրջութիւնը ծածկուած էր այն իրականութեամբ, որ Տէրը կը գործածէր զիրենք խօսելու եւ ծառայելու մէջ Իր ժողովուրդին:

Ենթարկուիլ Սորվիլ Դատաստանի Պատճառով

Մովսէս շատ հեզ մարդ մըն էր՝ երկրագունդի մակերեսին վրայ եղած բոլոր մարդոցմէն աւելի: Իսկոյն Տէրը Մովսէսի, Ահարոնի եւ Մարիամի ըսաւ. «Դուք երեքդ ալ դձուրս ելէք՝ դէպի Հանդիպումի վրանը». երեքն ալ դուրս ելան: (Թւ 12.3-4)

Այս հատուածին միջոցաւ կը տեսնենք Իրեն համար փափաքելի դեկավարներուն համար Աստուծոյ պահանջած նկարագրի գիծերէն մէկը, որն է՝ խոնարհութիւնը: Մովսէս ամէնէն խոնարհ մարդն էր երկրի վրայ: Բայց ասիկա պիտի չըլլար Մարիամի եւ Ահարոնի նկարագրութիւնը Մովսէսի համար: Անոնք աւելի պիտի ըսէին, թէ *Մովսէս ինքնահաւան դարձած էր:*

Տէրը երեքը կանչեց վրան: Ուրիշ թարգմանություններ *իսկոյնի* փոխարէն կը գործածեն *յանկարծ* բառը: Դատաստանը յաճախ կու գայ առանց զգուշացումի: Մինչ անոնք ուղղուած էին դէպի վրանը, հաւանաբար Մարիամ Ահարոնին գլուխով նշան ըրաւ եւ ըսաւ. «Պատրաստովիր: Մովսէս մեծ սխալ մը գործեց այդ օտար կնոջ հետ ամուսնանալով: Աստուած քեզ առաջնորդ պիտի ընէ, որովհետեւ շատ ճիշդ ձեռով վարուեցար»: Այդ ձեւի մտածելակերպ կ'ունենանք երբ մենք մեզ կը բանանք խաբկանքի առջեւ՝ իշխանութեան դէմ ելլելով:

Անշուշտ իրական պատահածը շատ տարբեր էր: Աստուած Ահարոնն ու Մարիամը առջեւ կանչեց եւ անոնց յիշեցուց, թէ՛ Մովսէս իր ամբողջ տանը մէջ հաւատարիմ էր եւ թէ Մովսէսի հետ կը խօսէր բերանէ բերան, յայտնապէս, ո՛չ թէ հանելուկով: Ապա Աստուած հետեւեալ հարցումը հարցուց. «Ուստի ինչո՞ւ չվախցաք իմ ծառայիս Մովսէսի դէմ խօսելէ» (հմր 8): Երբ մենք կը քննադատենք իշխանությունները, ցոյց կու տանք, թէ Աստուծոյ վախը չունինք: Տես, թէ ինչ պատահեցաւ. «Տէրոջ բարկութիւնը անոնց դէմ բորբոքեցաւ, եւ ինք գնաց: Ամպն ալ հեռացաւ վրանէն, ու ահա՛ Մարիամ ձիւնի պէս բորոտ եղաւ» (Թւ 12.9-10):

Իշխանութեան դէմ դնելով, մենք մեր վրայ դատաստան կը բերենք: Այդ դատաստանը կրնայ ըլլալ Աստուծոյ ներկայութեան վերցուիլը ինչպէս նաեւ տեսակ մը փորձանք: Վերադառնալով երկու օգնական հովիւներուն, որոնց մասին վերը նշեցինք, կարճ ժամանակ մը ետք երկուքն ալ ձգեցին եկեղեցին: Մէկը գործէն արձակուեցաւ, իսկ միւսը ինք հրաժարեցաւ նախքան արձակուիլը: Մէկը ինքն իր եկեղեցին սկսաւ քիչ մը անդին, եւ ունեցաւ փոքր համայնք մը, որուն թիւը հարիւրը չանցաւ: Իբրեւ օգնական հովիւ, ան վեց հարիւրէն աւելի մարդ ունէր իր հոգատարութեան տակ: Եկեղեցին ձգելէն ետք, ան ընտանեկան ողբերգութիւն մը ապրեցաւ:

Միս օգնականը ձգեց քաղաքը եւ ծառայութեան մէջ որոշ յաջողութիւն գտաւ կարճ եղանակի մը համար: Անոր եկեղեցին աճեցաւ ըլլալու քանի մը հարիւր հոգի, բայց ան մեկուսացած կը զգար եւ անվստահութիւն ունէր գրեթէ բոլորին հանդէպ: Աւելի քան քսան տարուայ ընթացքին ան բազմաթիւ բաժանումներ տեսաւ իր եկեղեցիին մէջ եւ ղեկավարութեան անոր ոճը մեծ շփոթ ստեղծեց իր համայնքին մէջ: Վերջաւորութեան ան հեռացաւ քաղաքէն: Տարիներ առաջ ան ամէնէն ներշնչիչ եւ փնտռուած քարոզիչն էր մեր մեծ եկեղեցիին մէջ. շատեր կը հաւատային, որ ան մեծ ազդեցութիւն պիտի բերէր ամբողջ երկրին մէջ: Ըստ երեւոյթին, անոր յամառութիւնը փոխեց անոր կեանքի ընթացքը:

Երբ դատաստանը եկաւ, Ահարոն անմիջապէս զղջումի խօսքեր աղաղակեց իրեն եւ Մարիամի համար: Աստուած ներեց անոնց, բայց Աստուծոյ պատուէրով Մարիամ տակաւին պէտք էր եօթը օր մեկուսացուէր ժողովուրդէն: Կան շատ հարցումներ, թէ ինչո՞ւ Մարիամ ստացաւ Տիրոջ հարուածը եւ ոչ Ահարոն: Պատճառներէն մէկը կրնայ ըլլալ այն, թէ՛ Մարիամ ավելի ծանր խօսքեր խօսեցաւ քան Ահարոն: Ինչ ալ որ էր պատճառը, այդ դէպքը ցոյց կու տայ, թէ Աստուած որքան լուրջ կերպով կը նայի այդ հարցին:

Հոգեւոր իշխանութեան դէմ դնելու համար դատաստանի ենթարկուիլը շատ յաճախ սորվելու եւ աճելու առիթ մըն է: Այդպիսի մագապուրծ ազատումէ մը ետք, անոնք, որոնք զղջում կ'ունենան, յաճախ եկեղեցիին մէջ ամէնէն հաւատարիմները կ'ըլլան: Ընդդիմութիւնը միշտ չի գար չար սիրտէ մը. անիկա յաճախ կը կատարուի անգիտութեան պատճառով: Երբ անձը կ'անդրադառնայ՝ անմիջապէս կ'ապաշխարէ: Երբեմն ատիկա կրնայ որոշ ժամանակ առնել, որովհետեւ կարգ մը մարդիկ ավելի երկար ժամանակ կը հանդուրժեն այն ցաւը, որ կ'ունենան գամերը հակառակ ուղղութեամբ հարուածելէն:

Վստահ որ Մարիամ բնաւ չմոռցաւ իր այդ խայտառակութեան ժամանակը: Ան չկրկնեց իր այդ վարմունքը, քանի որ անգամ մը եւս չըմբոստացաւ: Սակայն բոլորը չեն, որ Մարիամի եւ Ահարոնի նման դարձ կ'ունենան կամ կը սորվին անոնց օրինակէն: Նոյն համայնքին մէջ ուրիշներ եւս ոտքի ելան ընդդէմ Աստուծոյ հաստատած իշխանութեան: Անոնք չզղջացին եւ յաւիտենական դատաստանի արժանացան:

Ինչո՞ւ Դուք Ձեզ Կը Բարձրացնէք

Ժողովուրդէն երեք հոգի՝ Կորիւնը, որ Ղեւիի սերունդէն էր, եւ Ռուբէնի որդիներէն Դաթան եւ Աբիրոն 250 տոհմի իշխաններ, համայնքի երեւելիներ եւ անուանի մարդիկ Մովսէսի ու Ահարոնի դէմ հաւաքելով, ըսին. «Ա՛լ կը բաւէ ձեր ըրածը, որովհետեւ ամբողջ համայնքը սուրբ է, անոնցմէ իւրաքանչիւրը, ու Տէրը անոնց մէջ է. ինչո՞ւ դուք ձեզ կը բարձրացնէք Տէրոջ համախմբումէն վեր» (Թւ 16.3):

Աւելի պարզ բառերով, այն տղամարդիկը, որ ղեկավարի դիրքի մէջ էին Մովսէսի եւ Ահարոնի տակ, ըսին. «Տղաք, ինչո՞ւ դուք ձեզ կը բարձրացնէք մեր վրայ իբրեւ ղեկավարներ: Բոլորս ալ Աստուծոյ ժողովուրդն ենք, եւ կրնանք հնազանդիլ Իրեն առանց որ դուք մեզի հրամաններ արձակէք»: Հաւանաբար լսած էք այդպիսի խօսքեր ասկէ առաջ: Եթէ ոչ այդ նոյն բառերով, ապա վստահաբար այդ պատգամը յաճախ փոխանցուած է վարմունքով կամ արտաքին մեղմ բառերով, բայց ատիկա տակաւին նոյն հոգին է: Կրնայ ըլլալ լսես. «Բոլորս ալ հաւասար ենք» կամ «Բոլորս ալ եղբայրներ եւ քոյրեր ենք» կամ «Բոլորս ալ Սուրբ Հոգին ունինք. ինչո՞ւ պիտի ենթարկուինք անոնց ղեկավարութեան»: Այդ մարդիկը համոզուած են, թէ իրենք եւս կրնան լսել Տիրոջմէ որքան ուրիշ մէկը:

Կը պատմեն, թէ Եկեղեցիին մէջ «աշակերտել» կոչուած շարժում մը կար, որ հակակշիռէ դուրս ելաւ 1970-ականներուն՝

երբ ղեկավարներու հանդէպ ենթարկուածութիւնը հաւասարակշռութենէ դուրս ելաւ: Մարդիկ իրենց հովիւներուն կը հարցնէին, թէ արձակուրդի կրնային երթալ կամ ոչ, որոշ ինքնաշարժ մը կամ տուեալ մեծ ապրանք մը կրնային գնել կամ ոչ, կամ թէ՛ կրնային տուեալ անձի մը հետ ամուսնանալ կամ ոչ: Ես այդպիսի բանի մը մասնակից չեմ եղած, ուստի ճիշդ չեմ գիտեր, թէ որքան սահմանէն անդին անցած էր այդ երեւոյթը, բայց ոմանք, որ մասնակից եղած են, կը պատմեն, թէ անիկա սկսած էր արդէն ոչ-աստուածաշնչական բնոյթ ունենալ:

Այդ շարժումը եւ ղեկավարութեան դիրքի ուրիշ չարաշահումներ պատճառ դարձան, որ մարդիկ հակառակ ուղղութեամբ քայլ առնեն: Քանի որ հոգեւոր իշխանութիւնը սխալ կերպով կը գործածուէր, մարդիկ սկսած էին ասել զանիկա: Ատոր իբրեւ արդիւնք մէջտեղ եկան ազատ գործակալներ եւ հոգեւոր թափառաշրջիկներ, որոնք սկսան վազել եկեղեցիէ եկեղեցի եւ խորհրդատուովէ խորհրդատուով: Անոնք իրենց սեփական աղօթքի հանդիպումները սկսան ունենալ եւ ծնան իրենց սեփական եկեղեցիները, յաճախ որովհետեւ չկրցան գտնել հովիւ մը, որ իրենց ուզածին պէս կատարեալ ըլլար եւ կարենային անոր ենթարկուիլ: Այդ մտայնութիւնը նպաստեց անօրէնութեան գաղտնի ոյժի տարածման, որուն մասին Պօղոս զգուշացուց, թէ՛ պիտի պատահէր մեր օրերուն:

Այդ տղամարդիկը, որոնք Մովսէսի դէմ ելան փարաւոնի չարաշահող իշխանութեան տակ եղած էին: Ապա Մովսէս եկաւ եւ իրենց կեանքին մէջ մտաւ եւ անոր իշխանութիւնն ալ ծայրայեղ թուեցաւ, բայց ուրիշ իմաստով: Երբեմն ան անոնց համար աւելի մեծ դժուարութիւն ստեղծեց քան ինչ որ ապրած էին փարաւոնի հետ: Թերեւս մտածեցին, որ արդէն Եգիպտոսէն դուրս էին, փարաւոնէն հեռու էին, Մովսէս ծառայած էր իր նպատակին եւ ամէն մարդ ինքն իրեն էր արդէն: Այդ մարդիկը այլեւս յագեցած էին իշխանութեան

ենթարկուել: Արդէն ամէն մարդ ինքն իր տէրն էր: Վերջապէս անոնք Աստուծոյ ժողովուրդն էին, եւ իշխանութիւն կը նշանակէր դժուարութիւններ: Ուստի անոնցմէ ոմանք իրարու քով հաւաքուեցան եւ ըմբոստացան Մովսէսի դէմ:

Իմ ճամբորդութիւններուս ընթացքին այդ պատմութիւնը շատ յաճախ տեսած եմ: Գործարարներ, բարեխօսականի խումբեր, խորհրդատու մարմիններ կամ եկեղեցիին մէջ այլ խումբեր կը հաւաքուին հովիւներու դէմ: Բոլորն ալ կ'ըսեն, թէ Աստուծմէ բան մը առած են եւ հովիւը չի հասկնար աստիկա: Եթէ միայն գիտնային, թէ ինչ հոգիէ դրդուած էին:

Հոգեւոր Իշխանութիւնը Կը Նշանակուի

Ինչպէս ասկէ առաջ ըսած եմ, արեւմուտքցիները շատ յաճախ դժուարութիւն կ'ունենան թագաւորութեան սկզբունքներուն հետ: Մենք կ'ապրինք ազատ ձեռնարկութիւններու ժողովրդավարական ընկերութեան մը մէջ, որ մեծապէս կը տարբերի թագաւորութենէ մը: Թագաւորութիւնը կ'ունենայ թագաւոր մը՝ ծնունդի իրաւունքով, եւ նշանակուած ղեկավարութիւն մը: Ժողովրդավարական երկիր մը ինք կ'ընտրէ իր կառավարիչները: Ազատ ձեռնարկութիւններու համակարգին մէջ ղեկավարութիւնը ճիշդէն տրամադրելի է որոշուած անձերու, որոնք դրամ, կարողութիւն, ազդեցութիւն կամ տաղանդներ ունին: Բայց այդպէս չէ Աստուծոյ Թագաւորութիւնը, ուր ղեկավարները կը նշանակուին:

Յիսուս կը նշանակէ ծառայութեան պաշտօնները: Ոչ որ կրնայ մարդ արարած մը դնել իշխանութեան դիրքի մը վրայ բացի Տիրոջմէ, եւ Ան աստիկա կ'ընէ Աստուծոյ Հոգիով: Երբ իշխանութեան դիրք մը յանձն կ'առնենք առանց Աստուծոյ կողմէ նշանակուած ըլլալու, մենք մեզ բարձրացուցած կ'ըլլանք: Աստիկա կը վերաբերի նաեւ անոնց, որոնք կոչուած են, բայց տակաւին չեն նշանակուած: Պօղոս կը զգուշացնէ.

«Ինծի տրուած Աստուծոյ շնորհքով հետեւեալ պատուէրը կու տամ իւրաքանչիւրիդ.- Մեծամիտ մի՛ ըլլաք. ընդհակառակը, միշտ համեստ եղէք եւ միայն Աստուծմէ՛ ձեզի տրուած հաւատքին չափով գնահատեցէք դուք ձեզ» (Հռ 12.3):

Եբրայեցիներուն Նամակը գրողը կ'ըսէ, թէ կարելոր է, որ մարդ ինքն իրմէ հոգեւոր ղեկավարութիւն չստանձնէ. «Ոեւէ մէկը չի՛ կրնար ինքն իրեն քահանայապետութեան պատիւը առնել» (Եբր 5.4): Ատկէ յստակօրէն կը հասկնանք, թէ անձը պէտք է նշանակուած ըլլայ: Ան կը շարունակէ. «Նոյնպէս ալ Քրիստոս, ինքն իրեն չառաւ քահանայապետութեան պատիւը» (հմր 5): Նոյնիսկ Յիսուս ինքն իրմէ չառաւ Իր ղեկավարութեան պաշտօնը. Հայրը նշանակեց զինք:

Տես Պօղոս ինչպէս կը նկարագրէ ինքզինք. «Ես, Պօղոս, ծառան եմ Քրիստոս Յիսուսի, որ զիս կանչեց իր առաքեալը ըլլալու եւ պաշտօն տուաւ Աստուծոյ Աւետարանը քարոզելու» (Հռ 1.1): Ան կ'ըսէ՝ *կանչեց* եւ ապա *պաշտօն տուաւ*: «Պաշտօն տուաւ» նաեւ կը նշանակէ՝ *նշանակեց*: Պօղոս կոչուած էր իբրեւ առաքեալ՝ աշխարհի հիմնադրութենէն ի վեր, հակառակ անոր որ ան այդ պաշտօնին վրայ չկարգուեցաւ իր փրկուած պահուն: Ունեցաւ փորձարկումի ժամանակաշրջան մը՝ երբ ենթարկուեցաւ Անտիոքի եկեղեցւոյ ղեկավարներուն: Այդ քննութիւնը տարիներ տեւեց, եւ իր անձնական փորձառութենէն ան հետեւեալ թելադրանքները գրեց ղեկավարներուն. «Ասոնք ես նախ պէտք է փորձուիմ եւ ապա միայն, եթէ անմեղադրելի ըլլան, իրենց պաշտօնին անցնին» (Ա.Տմ 3.10):

Պօղոսի կեանքը աստուածաշնչական ձեւ մը հաստատեց այսօրուայ համար: Երբ Պօղոս յաջողութեամբ անցաւ օգնողներու ծառայութեան մէջ հաւատարմութեան քննութենէն, ան բարձրացաւ ուսուցանողի պաշտօնին (Բ.Տմ 1.11: Գրծ 13.1): Պաշտօններու եւ դիրքերու Տիրոջ աստուածային կարգը կը տեսնենք Աստուածաշունչին

մէջ. «Այդ մարմինին, այսինքն՝ եկեղեցիին մէջ Աստուած բազմաթիւ անդամներ կարգեց՝ զանազան ծառայութեանց համար. նախ՝ առաքեալները, երկրորդ՝ մարգարէները, երրորդ՝ ուսուցանողները, ապա [...] ուրիշներուն օգնելու ընդունակները» (Ա.Կր 12.28):

Պօղոս քննուեցաւ ոչ միայն օգնողներու ծառայութեան մէջ, այլեւ ուսուցանողի պաշտօնին մէջ: Պաշտօնի բարձրացում տալու Աստուծոյ ձեռք կը տեսնենք Պօղոսի ուսուցանողէն առաքեալի պաշտօնին բարձրացումին մէջ. «Անտիոքի եկեղեցիին մէջ մարգարէներ եւ ուսուցիչներ կային, ինչպէս՝ Բառնաբասը եւ Շմաւոնը, որ Նիկէր կը կոչուէր, Կիրենացի Ղուկիոսը եւ Մանայէնը, որ Հերովդէս չորրորդապետի սննդակիցն էր, եւ Սօղոսը» (Գրծ 13.1): Սաւուղ, որ հետագային Պօղոս կոչուեցաւ, կը նշուի Անտիոքի եկեղեցոյ ուսուցիչներու եւ մարգարէներու շարքին: Ա.Տմ 2.11-էն գիտենք, որ ան մարգարէներէն մէկը չէր, այլ՝ ուսուցիչ էր: Երբ շարունակենք, կը տեսնենք, թէ՛ «Օր մը, երբ ասոնք Տիրոջ պաշտամունք կը մատուցանէին ծոմ վիճակով, Սուրբ Հոգին ըսաւ. “Տրամադրեցէք Բառնաբասն ու Սօղոսը այն գործին՝ որուն կոչած եմ զիրենք”» (Գրծ 13.2):

Սուրբ Հոգին ըսաւ. «Տրամադրեցէք»: Ժամանակը եկած էր: Ո՛չ մէկ շաբաթ առաջ կամ ետք. հիմա: Տէրը որոշեց թէ՛ ժամանակը եւ թէ՛ անձերը, որոնք Իրեն պէտք էր տրամադրուէին: Տարիներ Պօղոս գիտէր, որ առաքեալի կոչում ունէր: Ատիկա իրեն յայտնուած էր Դամասկոսի ճամբուն վրայ Տիրոջ հետ իր հանդիպումէն երեք օր ետք (տես Գրծ 9.15): Իսկ հիմա Յիսուս կ'ուզէր, որ Իրեն տրամադրէին այն անձը, զոր տարիներ առաջ Ինք կանչած էր: Պօղոս հաւատարմօրէն ծառայած էր՝ առանց ինքզինք բարձրացնելու:

Տէրը գործածեց հաստատուած ղեկավարութիւնը այն եկեղեցոյ, ուր Պօղոս հաւատարմօրէն աշխատած էր: Երէցներ նշանակուած էին նոյն ձեւով: Շարունակելով, կը կարդանք.

«Այն ատեն ծոմապահութեամբ եւ աղօթքով ձեռք դրին անոնց վրայ եւ ղրկեցին: Հետեւաբար, Բառնաբասն ու Սօղոսը Սուրբ Հոգիէն ղրկուած՝ իջան Սելեւկիա» (Գրծ 13.3-4):

Նկատի առ, որ անոնք «ղրկեցին»: Հաստատուած ղեկավարութիւնը ղրկեց Պօղոսն ու Բառնաբասը: Եւ ապա յաջորդ համարը կ'ըսէ՝ «Սուրբ Հոգիէն ղրկուած»: Յիսուս նշանակեց եւ ղրկեց Պօղոսն ու Բառնաբասը Սուրբ Հոգիին կողմէ՝ հաստատուած ղեկավարութեան միջոցաւ: Այլ խօսքով, Յիսուս ատիկա ըրաւ հաստատուած իշխանութեան շղթային միջոցաւ: Յիսուս Անտիոքի մարգարէական բարեխօսութեան խումբը չգործածեց, ոչ ալ Պօղոսն ու Բառնաբասը ղրկեց մարգարէական ծառայութեան հանդիպումի մը ուրիշ քաղաքի մը մէջ կամ նոյն քաղաքին մէջ ուրիշ եկեղեցիի մէջ, ուր Պօղոս իշխանութեան մը հանդէպ ենթարկուած չունէր: Ան չգործածեց հոգեւոր պարզեմներ ունեցող անձ մը եկեղեցիին մէջ՝ այդ մարդիկը ղեկավարութեան մէջ դնելու համար:

Տէրը գործածեց Անտիոքի եկեղեցիին մէջ Իր հաստատած իշխանութիւնը: Ատոր համար Աստուած զգուշացուց. «Մի՛ աճապարեր որեւէ մէկուն վրայ ձեռք դնելու» (Ա.Տմ 5.22): Ղեկավարները կը հսկեն եկեղեցիին մէջ ծառայողներուն հաւատարմութեան, որպէսզի երբ Աստուած խօսի իրենց սիրտին՝ մէկը պաշտօնի մը վրայ նշանակելու մասին, վստահ ըլլան, որ անիկա Տիրոջ նշանակումն է: Այս է Տիրոջ ձեւը մարդիկ նշանակելու Նոր Կտակարանի եկեղեցւոյ ղեկավարութեան պաշտօններուն վրայ:

Կոչումին Համար՝ Տաս

Մովսէս կանչուած էր, եւ ատիկա կանուխէն գիտէր:

Երբ քառասուն տարիքը բոլորեց, որոշեց իր ազգակից իսրայէլացիներուն վիճակով հետաքրքրուիլ: Եւ տեսնելով, որ անոնցմէ մին կ'անիրաւուի, զայրացաւ եւ

անիրաւուածին վրէժը առաւ՝ սպաննելով եգիպտացին: Կը խորհէր, թէ իր ազգակիցները ասիկա իմանալով՝ պիտի հասկնան, թէ իր ձեռքով Աստուած պիտի փրկէ զիրենք, բայց անոնք չհասկցան: Յաջորդօրը հանդիպեցաւ երկու ազգակիցներու, որոնք կը կռուէին, եւ փորձեց զանոնք հաշտեցնել, ըսելով. «Ո՛վ մարդիկ, իրարու եղբայրներ էք, ինչո՞ւ զիրար կ'անիրաւէք»: Իսկ ան, որ իր ընկերը կ'անիրաւէր՝ մէկ կողմ հրեց զինք, պատասխանելով. «Ո՛վ քեզ մեր վրայ իշխան եւ դատաւոր կարգեց»: (Գրծ 7.23-27)

Այն ժողովուրդը, զոր պիտի առաջնորդէր չճանչցաւ իր իշխանութիւնը: Անոնցմէ մէկը ըսաւ գրեթէ նոյն այն բառերը, որ Կորիս, Դաթան եւ Աբիրոն ըսին յետագային. «Ո՛վ քեզ մեր վրայ իշխան եւ դատաւոր կարգեց»: Սակայն այն ատեն ատիկա ըսողը հետեւանք չկրեց, քանի որ Մովսէս տակաւին կարգուած չէր: Հակառակ անոր որ կոչումը տեղ գտած էր իր սիրտին մէջ, Աստուծոյ իշխանութիւնը տակաւին անոր վրան չէր:

Կը հաւատամ, որ պատճառներէն մէկը, որ հետագային անապատին մէջ ժողովուրդը այդքան բուռն կերպով դէմ ելաւ անոր այն էր, որ տեսան իր վրայ Աստուծոյ իշխանութիւնը, բայց չսիրեցին զանիկա: Ատով կրնանք հասկնալ Աստուծոյ այն խօսքը, թէ՛ ժողովուրդը իրականութեան մէջ Իրեն դէմ կը կռուէր եւ ո՛չ Մովսէսի: Շատ յաճախ այսօր ալ կացութիւնը տարբեր չէ: Անոնք, որոնց կեանքին մէջ իրապէս Աստուծոյ իշխանութիւնը կայ յաճախ ամէնէն ատիկի ընդդիմութիւն կ'ունենան, որովհետեւ մարդիկ իրականութեան մէջ կը մարտնչին աստուածային իշխանութեան դէմ:

Ինքնանշանակումը Խաբէական եւ Վտանգաւոր Է

Երբ Կորիս, Դաթան եւ Աբիրոն ընդդիմացան Մովսէսի, ան վստահաբար նշանակուած էր արդէն իր պաշտօնին եւ

անոր իշխանութեան դրսեւորումը բացայայտ էր բոլորին: Բայց անոնք իրենք զիրենք նշանակած եւ հպարտ մարդիկ էին: Անոնց մտածումները կամ պատճառաբանութիւնները խաբէական եւ վտանգաւոր տեսակի ըմբոստութիւն մըն էին: Իսաբէական՝ այն իմաստով, որ անոնք տակաւին կը կարծէին, թէ Աստուծոյ կը ծառայէին իրենց ըմբոստութիւնով: 250 ղեկավարները իրենք զիրենք համոզած էին, թէ իրենք պարզապէս կ'ընդդիմանային Մովսէսի եւ Ահարոնի: Անոնք որեւէ մէկ ձեռով չէին մտածեր, թէ իրենց ընդդիմութիւնը ուղղուած էր Աստուծոյ, քանի որ կ'ուզէին ծառայել Անոր: Տեղ մը կորսնցուցած էին իրենց ճամբան, եւ Մովսէսի վրայ Աստուծոյ իշխանութիւնը չէին տեսներ այլեւս, ինչ որ մղեց զիրենք, որ դէմ ելլեն անոր: Ատիկա վտանգաւոր էր, որովհետեւ յաճախ ատոր կ'ընկերանայ մեծագոյն դատաստանը: Ատիկա Արուսեակի անկումին պէս բան մըն է:

Այդ մարդոց խօսքերը լսելէ ետք, Մովսէս ճանչցաւ անոնց ետին գտնուող հոգին եւ իր երեսին վրայ գետին ինկաւ: Ան չվիճաբանեցաւ անոնց հետ: Անոնք, որոնք Աստուծոյ կողմէ կարգուած են, ունին Անոր սիրտը եւ չեն կռուիր՝ իրենց դիրքը պաշտպանելու համար: Մովսէս զԱստուած մտերմօրէն կը ճանչնար, ուստի գիտէր, որ Աստուած պիտի հաստատէր իր նշանակուած ղեկավարի դիրքը: Մովսէս ըսաւ.

Քիչ բան կը թուի ձեզի, որ Իսրայէլի Աստուածը՝ ձեզ իրեն մօտեցնելու համար՝ Իսրայէլի համայնքէն զատեց ձեզ, որպէսզի Տէրոջխորանին ծառայութիւնը ընէք ու համայնքին առջեւ կայնիք՝ անոնց սպասարկելու: Քեզ, եւ բոլոր եղբայրներդ՝ Ղեւիի որդիները՝ քեզի հետ իրեն մօտեցուց, ու դուք քահանայութիւն ալ կը պահանջէք: Ուրեմն դուն եւ քու ամբողջ համայնքդ Տէրոջ դէմ հաւաքուեցաք. ո՛վ է Ահարոն, որ անոր դէմ տրտնջէք: (Թւ 16.9-11)

Անոնք փորձեցին ձեռք ձգել անելին քան ինչ որ յանձնարարուած էր իրենց եւ անակնկալօրէն իրենք զիրենք գտան Տիրոջ դէմ հաւաքուած: Հետամուտ եղան իշխանութեան մակարդակի մը, զոր Աստուած իրենց չէր տուած: Մովսէս կրկնեց. «Ա՛լ կը բաւէ ձեր ըրածը, ո՛վ Ղեւիի որդիներ» (Թւ 16.7- «Դուք ձեր վրայ պէտք եղածէն անելի բան կ'առնէք, Ղեւիի որդիներ» (*Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն*, բառացի թարգմանութիւն)):

Երբ յայտնի եղաւ, որ այդ մարդիկը ետ պիտի չկենային իրենց յամառութենէն, Տէրը Մովսէսին ըսաւ. «Խօսէ՛ համայնքին ու ըսէ՛. “Հեռացէ՛ք Կորխի, Դաթանի եւ Աբիրոնի բնակարանին շրջակայքէն”»: Ուստի Մովսէս կանգնեցաւ ու Դաթանի եւ Աբիրոնի գնաց. Իսրայէլի երէցներն ալ անոր հետեւեցան: Խօսեցաւ համայնքին՝ ըսելով. “Կ'աղերսեմ, այդ ամբարիշտ մարդոց վրաններուն քովէն գացէ՛ք ու անոնց որեւէ մէկ բանին մի՛ դպչիք, որպէսզի անոնց բոլոր մեղքերով չկորսուիք”»: Ուրեմն անոնք Կորխի, Դաթանի եւ Աբիրոնի բնակարանին շրջակայքէն հեռացան. Դաթան եւ Աբիրոն, անոնց կիները, որդիներն ու մանուկները դուրս ելան եւ իրենց վրաններուն մուտքը կայնեցան:

«Մովսէս ըսաւ. “Սմայէս պիտի գիտնաք, թէ Տէրը զիս ղրկած է՝ այս բոլոր գործերը կատարելու, եւ ո՛չ թէ ես ինձմէ կատարեցի զանոնք: Եթէ ասոնք ամէն մարդու մահով մեռնին, կամ եթէ ամէն մարդու պատահածը ասոնց ալ պատահի, Տէրը զիս ղրկած չէ: Բայց եթէ Տէրը հրաշք մը գործէ, գետինը իր բերանը բանայ ու զանոնք եւ անոնց ամբողջ ունեցածը կլլէ, ու անոնք ողջ-ողջ դժոխք իջնեն, պիտի գիտնաք, թէ այս մարդիկը Տէրը անարգեց”»:

«Երբ աւարտեց այս բոլոր խօսքերը ըսելը, անոնց տակի գետինը ճեղքուեցաւ, երկիրը իր բերանը բացաւ ու զանոնք, անոնց տուները, Կորխի ունեցած բոլոր մարդիկը եւ անոնց ամբողջ ինչքը կլլեց: Անոնք ու անոնց բոլոր ունեցածները ողջ-

ողջ դժոխք իջան, երկիրը ծածկեց զանոնք, եւ համախմբումին մէջէն կորսուեցան: Ամբողջ Իսրայէլը՝ որ անոնց շուրջն էր, անոնց ծայնէն փախաւ. արդարեւ կ'ըսէին. «Երկիրը մեզ ալ թող կլլէ»: Եւ Տէրոջմէն կրակ ելաւ ու խունկ մատուցանող երկու հարիւր յիսուն մարդիկը սպառեց» (Թւ 16.24-35):

Այդ մարդոց վրայ եկած խիստ դատաստանը մեզի կը յայտնէ երկու կարեւոր իրականութիւններ: Առաջին՝ անոնք իրապէս կը հաւատային, որ տակաւին Աստուծոյ ծառայութիւն կ'ընէին երբ իրականութեան մէջ անոնք Աստուծոյ դէմ կը գործէին: Երկրորդ՝ Նոր Կտակարանին մէջ Յուդա զգուշացուց, որ այդպիսի մարդիկ պիտի ըլլան եկեղեցիին մէջ վերջին օրերուն. «Այս երազատես մարդիկը եւս իրենց մարմինները կը պղծեն, Աստուծոյ տէրութիւնը արհամարհելով եւ հոգեղէն փառաւոր էակները անարգելով» (հմր 8): Ապա Յուդա ըսաւ. «Վայ անոնց, որոնք Կայէնի գացած ճամբով գացին [...] եւ իրենց ապստամբութեան համար ալ պիտի կորսուին, Կորխին պէս» (հմր 11):

Ըմբոստութիւնը Վարակիչ Է

Աստուածաշունչի այս գլուխին մէջ կան ըմբոստութեան երկու տարբեր դէպքեր: Առաջինը կը վերաբերի Կորխի, Դաթանի եւ Աբիրոնի եւ 250 ղեկավարներուն: Երկրորդը պատահեցաւ յաջորդ օրը երբ ամբողջ ժողովուրդը ոտքի ելաւ Մովսէսի եւ Ահարոնի դէմ: Տրտնջեցին անոնց դէմ եւ ըսին. «Դուք Տէրոջ ժողովուրդը մեռցուցիք» (Թւ 16.41): Անոնք անշուշտ ցնցուած էին մէկ օր առաջ պատահածէն, բայց անոնց սխալը այն էր, որ Մովսէսէն նեղացած էին եւ զայն կը մեղադրէին: Այդ ըմբոստ մարդոց ազդեցութիւնը այնքան խոր էր եւ այնքան համոզած էր ժողովուրդը, որ նոյնիսկ որ ականատես եղան երկրին բացուելուն եւ ըմբոստներուն կլլուելուն, չէին հասկցած պատգամը թէ՛ ճիշտ վտանգաւոր

Եւ մահացու բան մըն էր ըմբոստութիւնը: Ատիկա սթափեցնող դէպք մըն է, եւ ես մեր օրերուն ալ տեսած եմ այդպիսի ըմբոստութեան արարքներու ազդեցութեան վերաբերեալ նոյնանման դէպքեր:

Երբ ժողովուրդը Մովսէսի եւ Ահարոնի դէմ ելաւ, Աստուած այնքան բարկացաւ, որ ուզեց բոլորը կործանել: Բայց Մովսէս եւ Ահարոն բարեխօսեցին ժողովուրդին համար: Իբրեւ արդիւնք, ամբողջ ազգը փրկուեցաւ: Սակայն Տէրը հարուածեց ժողովուրդը, եւ այդ պատուհասին իբրեւ արդիւնք 14,700 հոգի մեռաւ: Ատիկա շատ ատելի մեծ թիւ է քան մէկ օր առաջ մեռածները...

Աստուծոյ ժողովորդ, զգուշացնեմ ձեզ. ըմբոստութիւնը վարակիչ է եւ մահացու: Աստուածաշունչը չ'ըսեր Աստուած չ'ախորժիր: Աստուածաշունչը յստակօրէն կ'ըսէ, թէ Աստուած կ'ատէ: Անոր կեցուածքը շատ ատելի լուրջ է քան պարզապէս չախորժիլը: Արուսեակէն չխնդրեցին, որ հեռանար երկինքէն երբ ըմբոստացաւ. ան երկինքէն վար նետուեցաւ կայծակի արագութեամբ (տե՛ս Ղկ 10.18): Ըմբոստ անձի մը հետ ընկերակցութիւնը մահուան առաջնորդուելու պէս բան մըն է: Այդ պատճառով Հռոմի եկեղեցիին ուղղած Պօղոսի վերջին յորդորները հետեւեալներն էին.

Կը խնդրեմ, եղբայրներ, որ զգուշանաք անոնցմէ՝ որոնք երկպառակութեանց եւ գայթակղութեանց պատճառ կ'ըլլան՝ շեղելով այն վարդապետութենէն, որ դուք սորվեցաք: Հեռո՛ւ փախէք անոնցմէ, որովհետեւ այդպիսիները մեր Տիրոջ՝ Քրիստոսի չէ որ կը ծառայեն, այլ՝ իրենց որովայնին, քաղցր խօսքերով ու կեղծ գովասանքներով պարզամիտները խաբելով: (Հռ 16.17-18)

Անոր վերջին բառերը այս գլուխին համար իմ վերջին բառերս են նաեւ: Կ'ընդունիմ, որ այս պատգամը

Խանդավառություն բերող պատգամ մը չէ, բայց անիկա կրնայ փրկել կեանքդ: Յիշէ՛, որ ասիկա ճշմարտութեան պատուաստում մըն է: Հաճելի չէ, բայց անոր պաշտպանութիւնը շատ անելի ծանր կը կշռէ քան անոր պատճառած տհաճութիւնը: Կ'աղօթեմ, որ Աստուծոյ սէրը տեսնես այս պատգամին մէջ: Ան Իր զգուշացումի խօսքերը կ'ըսէ՝ քու պաշտպանութեանդ համար:

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄԷԿ

Իշխանութիւնը յառաջ կը բերէ այն միութիւնը, որ կը հրաւիրէ Աստուծոյ փառքը:

Կայ անլի բարձր նպատակ եւ օգուտ աստուածային իշխանութեան տակ ապրելու մէջ քան ինչ որ մինչեւ հիմա քննարկեցինք: Պատասխանը՝ անկասկած այր: Եւ անիկա Աստուծոյ Թագաւորութիւնը ազդու կերպով յառաջ տանիլն է:

Յիսուս Եկեղեցիին համար նպատակ մը դրաւ. *ըլլալ մէկ*: Մեծ օգուտ կայ այդ նպատակին հասնելուն մէջ: Յիսուս աղօթեց.

Ձեմ աղօթեր միայն իրենց համար, այլ նաեւ անոնց համար՝ որոնք անոնց քարոզութեամբ ինձի պիտի հաւատան: Կ'աղօթեմ, որ անոնք բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս որ դուն, ո՛վ Հայր, իմ մէջս ես եւ ես քու մէջդ, այնպէս ալ անոնք մեր մէջ ըլլան, որպէսզի աշխարհը հաւատայ, որ դուն ղրկեցիր զիս: Այն *փառքը* որ ինձի տուիր՝ իրենց տուի, որպէսզի մէկ ըլլան, ինչպէս որ ես եւ դուն մէկ ենք: (Յհ 17.20-22, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Կայ մեզի վերապահուած *փառք* մը, բայց անիկա ուղղակիօրէն կապուած է մեր մէկ ըլլալուն հետ: *Փառքը* բառ մը չէ, որ յաճախ կը գործածենք խօսակցութիւններու մէջ: *Միրիսամ-Ուեպսթըր Տիքշընըրի* բառարանին համացանցային տարբերակը «փառք» բառը կը սահմանէ իբրեւ՝ «մեծ գեղեցկութիւն եւ շքեղութիւն»: Յունարէն *տիքսա* բառը ունի նոյնանման սահմանում: Սակայն *Քոմփլիթ Ուրրտ Սթապի Տիքշընըրի* բառարանը իր սահմանումին մէջ նաեւ կ'աւելցնէ. «Աստուծոյ փառքը ըստ էութեան Անոր ինչ ըլլալն է»:

Հին Կտակարանին մէջ *տիքսային* համապատասխան բառը եբրայերէնով *քապոյն* է. շքեղութիւն, հարստութիւն, ոյժ, առատութիւն, փառաւորութիւն եւ ծանրութիւն բառերը անոր կարգ մը մէկ բառնոց սահմանումներն են: Կանգ առ պահ մը եւ մտածէ այդ բառի ծաւալին մասին: Երբ Աստուածաշունչը կը խօսի *Աստուծոյ փառքին* մասին, անիկա ակնարկութիւն է Անոր փառաւոր շքեղութեան, Անոր անքննելի հարստութեան, Անոր ամենազօրութեան, Անոր ո՛վ ըլլալուն առատութեան, Անոր մեծ պատիւին եւ Անոր էութեան մեծափառութեան: Վերջին սահմանումը՝ *ծանրութիւնը* ցոյց կու տայ, թէ այդ յատկանիշները սակաւութեամբ չեն, այլ՝ ամբողջական ոյժով: Պարզ ձեւով ըսելով, անիկա *Անոր մեծութեան կշիռքն* է:

Յիսուս Աստուած է՝ յայտնուած իբրեւ մարդ: Պէտք է միշտ յիշենք Անոր կարեւոր խօսքը. «Ով որ զիս տեսաւ՝ Հայրը տեսած եղաւ» (Յհ 14.9): Յովհաննէս Առաքեալ ըսաւ, թէ՛ սկիզբէն Բանը Աստուած էր: Ապա գրեց. «Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր *փառքը*» (Յհ 1.14, շեշտադրումը՝ մեր կողմէ): Անոր փառքը՝ յայտնուած զանազան ձեւերով, բայց յատկապէս Անոր զօրութեան ճամբով: Ատիկա բացատրող զանազան հատուածներէն մէկն է Յհ 2.11-ը. «Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլեայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր *փառքը* յայտնեց» (շեշտադրումը՝ մեր կողմէ): Իր երկրի վրայ քալած ատենը Ան դրսեւորեց *Աստուծոյ մեծութեան կշիռքը*:

Նախքան երկրէն ելլելը, Ան մեզի յանձնարարեց. «Ինչպէս որ Հայրս զիս դրկեց, ես ալ ձեզ կը դրկեմ» (Յի 20.21): Այդ հսկայ յանձնարարութիւնը կատարելու համար, Յիսուս աղօթեց, որ *Իր մեծութեան կշիռքը* ըլլայ մեր վրայ: Սակայն, ինչպէս արդէն ըսինք, այդ խոստումը մօտէն կապուած է մեր միութեան մէջ քալելուն հետ՝ իբրեւ մէկ մարմին: Մեզի կ'ըսուի. «Ահա ճրջափ վայելուչ եւ ճրջափ հաճելի է՝ որ եղբայրներ իրարու հետ միաբանութեամբ բնակին [...] Որովհետեւ Տէրը հոն *սպասուկեց* օրհնութիւնը» (Սղ 133.1-3): Չկայ ասելի մեծ օրհնութիւն քան Անոր փառքին մէջ ըլլալը. Անոր ներկայութեան լեցունութեան փորձառութիւնը ունենալը: Ատիկա կարելի չէ բաժնուած եկեղեցիի մը պարագային, այլ՝ միացեալ եկեղեցիի մը:

Կատարեալ Օրինակ մը

Առաջին դարու եկեղեցին այդ ճշմարտութիւնը շատ գեղեցիկ կերպով կը ներկայացնէ: Յիսուս երկինք համբարձաւ եւ Անոր հաւատարիմ հետետորդները հնազանդեցան Վերնատան մէջ մնալու Անոր պատուէրին (տե՛ս Գրծ 1.4): Անոր յարութեան յաջորդող քառասուն օրերուն Յիսուս երեցաւ առնուազն 500 տղամարդոց եւ կիներու (տե՛ս Ա.Կր 15.6), սակայն տասը օր ետք միայն 120 հոգի մնացին Երուսաղէմի մէջ: Ո՞ր էին մնացեալ հարիւրաւոր մարդիկը: Չենք գիտեր, թէ ո՞ր էին, բայց գիտենք, որ անոնք չհնազանդեցան Հօրը խոստումին սպասելու Յիսուսի պատուէրին:

Վերնատան տղամարդիկն ու կիները միութեան մէջ էին Անոր Խօսքին իշխանութեան տակ, այսինքն՝ Անոր ուղղակի իշխանութեան տակ: Ի՞նչ կեցուածք պիտի ունենային Անոր նշանակած ղեկավարութեան հանդէպ:

Նախքան համբարնալը, Յիսուս Պետրոսին վստահեցաւ Իր հետետորդները: Պետրոս տարբեր էր միւս աշակերտներէն:

Ան ցոյց տուած էր, որ մեծ ծարաւ ունէր Աստուծոյ բաները գիտնալու մէջ, իրեն տրուած էին բացատրութիւններ, որ ուրիշներուն չէին տրուած եւ ան ազդեցութիւն ունէր միւս աշակերտներուն վրայ: Վստահաբար ղեկավարութեան պարգեւը ունէր: Սակայն յաճախ ան ինքնաբոլիս էր եւ Աստուծոյ կամքին անհամապատասխան: Երբ ան համարձակօրէն ըսաւ, թէ Յիսուս Քրիստոսն է՝ կենդանի Աստուծոյ Որդին, Յիսուս գնահատեց անոր ներըմբռնումը եւ օրինեալ հոչակեց զայն, քանի որ այդ ճշմարտութիւնը Աստուծոյ կողմէ յայտնուած էր իրեն: Սակայն քանի մը վայրկեան ետք՝ «Յիսուս Պետրոսի դառնալով ըսաւ. “Ետին գնա, Սատանայ, դուն արգելք ես ինձի, որովհետեւ Աստուծոյ ծրագիրը չէ, որ կը խորհիս, այլ՝ մարդոց մտահոգութիւնը կ'արտայայտես”» (Մտ 16.23):

Ուրիշ ատեն Պետրոս ջուրին վրայէն քալեց մինչ միւս աշակերտները նաւուն մէջ մնացին եւ միայն դիտեցին: Անգամ մը եւս ան առաջնորդի դերին մէջ էր: Քանի մը վայրկեան ետք, սակայն, նախքան որ միանները իր օրինակին հետեւելով քայլ առնեն եւ ելլեն ջուրին վրայէն քալելու, ան սկսաւ ընկղմիլ: Յիսուս ըսաւ. «Թերահաւատ, ինչո՞ւ կասկածեցար» (Մտ 14.31):

Տակաւին ուրիշ առիթով մը Պետրոս, Յովհաննէսի եւ Յակոբոսի հետ միասին, ընտրուեցաւ Յիսուսի ընկերակցելու համար դէպի լեռը: Հոն հասնելէն ետք, Յիսուս այլակերպուեցաւ. Անոր դէմքը արեւու նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի նման ճերմակ եղան: Մովսէսն ու Եղիան երեւցան եւ խօսեցան Յիսուսի հետ: Ինչ առանձնաշնորհում, ինչ պատիւ այդ երեքին համար, որ ականատես ըլլան այդպիսի բացառիկ երեւոյթի մը: Երեւումին աւարտելէն առաջ սակայն Պետրոս առաջարկեց վրաններ շինել՝ երկուքը Եղիայի եւ Մովսէսի համար: Դարձեալ, ան առաջնորդի դեր կը կատարէր, բայց Աստուծոյ կամքին համապատասխան չէր, նոյնիսկ մեծ փառքի այդ մթնոլորտին մէջ:

Յիսուսը ուրանալու Պետրոսի մեծ ձախողութիւնն ալ թարմ էր տակաւին այդ հետետրոդներուն յիշողութիւններուն մէջ: Յարութենէն ետք, Յիսուսի գերեզմանին քով հրեշտակը յատուկ կերպով Պետրոսը յիշեց երեք կիներուն տուած իր պատուէրին մէջ. «Այժմ գացէք, ըսէք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա ինք [Յիսուս] ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլեա. հոն պիտի տեսնէք զինք» (Մր 16.7): Այդ կիները՝ միւս աշակերտներէն շատերուն նման, շատ հաւանաբար կը կարծէին, որ Պետրոս հրաժարած էր:

Ուստի գլխաւոր հարցումը այն էր, թէ այդ նոր եկեղեցոյ անդամները պիտի կարենան՞յին ենթարկուիլ եւ հնազանդիլ մարդու մը, որ այդպիսի անկայուն անցեալ մը ունէր: Անոր ինքնաբոլս վարմունքը, հասկնալու ձեւը, տրամաբանութիւնը եւ որոշումները յաճախ թերի եւ սխալելու ենթակայ եղած էին: Ան ամէնէն լաւ թեկնածուն չէր ղեկավարելու երիտասարդ եկեղեցի մը տազնապալի ժամանակներու ընթացքին:

Ատիկա ի մտի ունենալով, քննենք Պետրոսի առաջին որոշումը իբրեւ ղեկավարը առաջին եկեղեցիին: Քանի մը օր ետք ան մարգարէական խօսք մը գտաւ Սաղմոսներու Գիրքին մէջ, որ ուղղակիօրէն կապուած էր Յուդայի Յիսուսը դաւաճանելուն հետ: Պետրոս հետեւեալը կարդաց Վերնատան մէջ հաւաքուած համայնքին. «Արդ, Սաղմոսներու գիրքին մէջ գրուած է [...] *“Իր պաշտօնը ուրիշ մէկը թող առնէ”*» (Գրծ 1.20): Անգամ մը եւս Պետրոս կը տեսնէր այն ինչ որ ուրիշներ չէին տեսներ: Արդեօք այդ ներըմբռնումը ճիշդ ձեւով պիտի կիրարկէր:

Ինչ որ պիտի գրեմ վստահաբար կրնայ ենթադրութիւն համարուիլ, բայց յուսամ բաւարար աստուածաշնչական մէջբերումներ կ'ընեմ՝ ըսելիքս անելի իրական դարձնելու համար: Ես ամբողջովին կը հաւատամ, որ անգամ մը եւս Պետրոսի որոշումը անհամապատասխան էր Աստուծոյ կամքին հետ: Ան առաջարկեց, որ հաւաքեն բոլոր մարդիկը, որոնք իրենց հետ

եղած էին սկիզբէն, որպէսզի «վիճակ ձգեն»՝ տեսնելու համար, թէ Աստուած գրով ընտրած էր Յուդայի տեղը առնելու համար:

Ոչ մէկ տեղ Նոր Կտակարանին մէջ պիտի տեսնես, որ Աստուած առաքեալ մը կ'ընտրէ «վիճակ ձգելով» (վիճակախաղի ձեւ մը...): Յիսուս երեքուկէս տարի այդ մարդոց ցոյց տուաւ Աստուծոյ ձեւերը եւ անոնց ձգած էր օրինակ մը. Ան ամբողջ գիշեր մը աղօթեց եւ Աստուծոյ հարցուց, այդպէս էր, որ տասներկու աշակերտները ընտրեց (տես Ղկ 6.12-13): Ամէնէն լաւը պիտի ըլլար, որ Պետրոս հետեւէր Յիսուսի ձեւին: Առաւել, այն իրականութիւնը, որ քանի մը տարի ետք Անտիոքի եկեղեցիին մէջ մարգարէները եւ ուսուցիչները Յիսուսի օրինակին հետեւեցան՝ ծոմ պահել եւ աղօթել, նախքան որ Պօղոսը իբրեւ առաքեալ արձակեն (տես Գրծ 13.1-4), տակաւին ուրիշ հաստատում մըն է, որ Պետրոս հապճեպ որոշում մը տուած էր:

120-ը երկու թեկնածուներ առաջարկեցին. Բարսաբա կոչուած Յովսէփը եւ Մատաթիան: Կրնանք տեսնել Պետրոսի որոշումին պտուղը: Մատաթիան շահեցաւ վիճակախաղը եւ աշակերտներուն շարքին համարուեցաւ (տես Գրծ 1.23-26), սակայն անոր անունը անգամ մը եւս չենք գտներ Նոր Կտակարանին մէջ: Ինչո՞ւ: Որովհետեւ Սօղոս (կամ Պօղոս) էր Աստուծոյ ընտրութիւնը Յուդան փոխարինելու, եւ ոչ՝ Մատաթիան: Ատոր համար Պօղոս գրեց.

Ան [Յիսուս] երեցաւ Յակոբոսին եւ ապա բոլոր առաքեալներուն: Վերջատրութեան, *կարծես սիսալ ժամանակի մէջ ծնած ըլլամ*, եւ ալ տեսայ զինք: Որովհետեւ եւ առաքեալներուն յետինն են: (Ա.Կր 15.7-9, շեշտադրումը՝ մեր կողմէ)³⁴

34 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Պօղոս ինքն իր մասին ըսաւ՝ «կարծես սխալ ժամանակի մէջ ծնած ըլլամ»: այլ խօսքով, ան հաւանաբար շատ երիտասարդ էր առաջին տասներկուքէն մէկը ըլլալու համար: Ուսումնասիրութիւններու մէջ տեսայ, որ տարբեր տեսակէտներ կան Պօղոսի երբ ծնած ըլլալուն մասին. մինչեւ տասնչորս տարուայ տարբերութիւն կայ տարբեր աղբիւրներու միջեւ: Ուստի Նոր Կտակարանի ժամանակագիծին նայինք՝ գաղափար մը առնելու համար անոր տարիքին մասին: Արձանագրութիւններուն մեծ մասին համաձայն, Ստեփանոսի նահատակութիւնը տեղի ունեցաւ Յիսուսի յարութենէն չորս տարի ետք: Անոր քարկոծումին մասին խօսելով, Աստուածաշունչը Սօղոսի (Պօղոսի) մասին կ'ըսէ՝ «երիտասարդ մը» (Գրծ 7.58): Նոր Կտակարանի Յունարէն-Անգլերէն Բառարանը կ'ըսէ, թէ «երիտասարդ» բառին յունարէնը կը նշանակէ արբունքի շրջանը նոր աւարտած պատանի մը: Ուրեմն բաւական հաւանական է, որ Պօղոս շատ երիտասարդ էր սկիզբի աշակերտներէն համարուելու համար:

Ես ամբողջութեամբ կը հաւատամ, որ Աստուծոյ ընտրութիւնը Պօղոս էր: Ան յստակօրէն ունէր առաքելի մը պտուղը եւ իշխանութիւնը, ւելի քան Մատթիան: Գլխաւոր կէտս այն է, որ կը հաւատամ, որ Պետրոս ինքնաբոլիս ղեկավարութեան որոշում մը տուաւ, որ անհամապատասխան էր Աստուծոյ ծրագիրին հետ: Եթէ մերօրեայ եկեղեցիին մէջ ան այդպիսի որոշում մը տար, հաւանաբար եկեղեցին պիտի բաժնուէր այդ որոշումին պատճառով: «Վիճակախաղով առաքելալ ընտրելուն դէմ եղող խումբ»ը պիտի բաժնուէր եւ «Վիճակախաղով առաքելալ ընտրելուն համաձայն եղող խումբ»ը պիտի մնար: Սակայն տես այդ դէպքէն անմիջապէս ետք Աստուածաշունչը ինչ կ'ըսէ.

Երբ Պենտէկոստէի օրը հասաւ, բոլոր հաւատացեալները *միասնաբար* մէկտեղուած էին: (Գրծ 2.1, շեշտադրումը՝ մեր կողմէ)

«Միասնաբար» բառը յունարէնի մէջ *հոմոթիմապոն* բառն է: *Տը Քոմփլիթ Ուլըրդ Սթապի Տիքշընըրին* այդ բառը կը սահմանէ իբրեւ՝ «Մէկ միտք ունենալ, միաձայնութեամբ համաձայն ըլլալ, միասնաբար, բոլորը միասին»: Այդ սահմանումէն կը տեսնես, որ տեղ չկայ բաժանումի համար՝ ո՛չ մտապէս, ոչ ալ վարմունքով: Անոնք միացած էին իրենց նպատակով, միտքով, սիրտով եւ հոգիով:

Ինչ էր արդիւնքը այդ խորունկ միութեան: Աստուած Իր փառքը դրսեւորեց այդ 120-ին, որոնք *մէկ* էին սիրտով, միտքով եւ վարմունքով, եւ ոչ՝ այն 380-ին, որոնք ուրիշ տեղ էին: Երուսաղէմ քաղաքը նոյնը պիտի չըլլար նորէն շնորհիւ Աստուծոյ փառքին, որ դրսեւորուեցաւ այդ Քրիստոսի հետեւորդներուն վրայ:

Վերնատան տղամարդիկն ու կիները հարց չունէին ենթարկուելու Պետրոսի թելադրանքին երկու պատճառներով: Առաջին՝ մեղք չէր առաքեալ մը ընտրելը վիճակաձգութեան ձեւով, հակառակ անոր որ շատ հաւանաբար անհամապատասխան էր Աստուծոյ ծրագրին հետ: Եւ երկրորդ՝ անոնք ամբողջութեամբ ենթարկուած էին Աստուծոյ նշանակած ղեկավարին:

Աստուծոյ ուղղակի եւ յանձնարարուած իշխանութիւններուն միջեւ կապակցութեան աստուածաշնչական ճշմարտութիւնը դարձեալ կը հաստատուի: Կան մարդիկ, որոնք կ'ըսեն՝ «Ես կ'ենթարկուիմ Աստուծոյ», բայց միեւնոյն ատեն դէմ կը դնեն Անոր նշանակած ղեկավարներուն: Անոնք խաբուած են: Եթէ մենք իրապէս ենթարկուած ենք Աստուծոյ, պիտի ենթարկուինք նաեւ մեր ղեկավարներուն երկու պատճառներով: Առաջին՝ Անոր ուղղակի իշխանութիւնը կը պատուիրէ մեզի, որ մեր վրայ նշանակուած ղեկավարներուն ենթարկուինք: Եւ երկրորդ՝ որովհետեւ կը ճանչնանք Անոր իշխանութիւնը անոնց կեանքին մէջ, պիտի ենթարկուինք մեր ղեկավարներուն:

Ուստի բացի եթէ յանձնարարուած իշխանութիւնը մեզի կը թելադրէ, որ մեղք գործենք, թէ՛ բարեպաշտ եւ թէ՛ օգտակար է հնազանդիլ մեր ղեկավարներուն: Ատիկա ընելը դուռը կը բանայ Աստուծոյ փառքի դրսեւորումին եւ Թագաւորութեան, որ արագօրէն կը յառաջանայ:

Դժուար Իրականութիւն մը

Պէտք է հարցնենք հետեւեալ դժուար հարցումները.

- Արդեօք մենք խափանամ՞ ենք Աստուծոյ փառքի դրսեւորումը եկեղեցւոյ իշխանութեան ենթարկուելու մեր անկարողութեան պատճառով:
- Արդեօք մեր ենթարկուիլը կախեալ է իշխանութեան հետ մեր համաձայնելէն կամ չհամաձայնելէն:
- Արդեօք մենք նպաստած ենք բաժանումներու յառաջացման:

Վստահ եմ, որ Վերնատան մէջ կային աշակերտներ, որոնք Պետրոսէն տարբեր ձեւով պիտի վարուէին: Անկասկած, որ աւելի իմաստուն ընտրութիւնը պիտի ըլլար հետեւիլ Յիսուսի օրինակին եւ Աստուծոյ հարցնել՝ նախքան որ ներկաներէն մէկը ընտրելու որոշումը տրուէր: Ատիկա աւելի իմաստուն քայլ մը պիտի ըլլար փոխանակ հարցը ստիպողական վիճակի հասցնելով՝ վիճակ ձգելու եւ առաքեալի պաշտօնին յանձնարարելու մէկը, որ կանչուած չէր Աստուծոյ կողմէ այդ դիրքին վրայ ըլլալու:

Հակառակ անոր որ աւելի լաւ ձեւը կար հարցը լուծելու, այդ սենեակին մէջ գտնուողները աւելի բարձր ճամբայ մը տեսան. մնալ *մէկ*՝ իրենց ղեկավարին ռազմավարութիւնը որդեգրելով: Իւրաքանչիւրը որդեգրեց անոր որոշումը կարծես *իր սեփական գաղափարը* ըլլար: Ո՛րքան յաճախ կը

բաժնուիւնք՝ մեր ծառայութեան ձեւերուն մէջ ամէնէն անպէտք կամ ամէնէն պզտիկ անհամաձայնութիւններուն պատճառով, կամ վարդապետական համոզումներու պատճառով, որոնք պէտք չէ բաժնեն մեզ. ինչպէս օրինակ՝ Յիսուս պիտի վերադառնայ հալածանքէն առաջ, հալածանքի ընթացքին կամ հալածանքէն ետք: Չենք սիրեր հովիւին հագուածքը. կ'ուզենք, որ պաշտօնական հագնի, իսկ ան *ճինգ* կը հագնի: Չենք սիրեր այն ծուխի եւ լոյսի խաղերը, որոնք յատուկ ազդեցութիւն մը կը ձգեն կամ մթնոլորտ մը կը ստեղծեն պաշտամունքի ընթացքին: Հովիւը շատ երկար կը քարոզէ կամ ոչ բաւարար չափով երկար: Պէտք եղած չափով երկար չաղօթեցինք կամ որոշ նիւթի մը շուրջ չաղօթեցինք: Անկեղծօրէն, պատճառները անհամար են: Այլ խօսքով, սիրտի ցաւ կը պատճառէ տեսնելը, թէ հրքան դիւրութեամբ բաժանումներ կ'ըլլան մեր մէջ: Բայց ահա ահազանգային իրականութիւնը. ամէն բաժանում դիւրաճանաչելի չէ: Նոր Կտակարանը յաճախ կը պատուիրէ մեզի, որ ըլլանք մէկ շատ աւելի ձեւերով քան սոսկ մեր արարքներով: Ահա կարգ մը օրինակներ.

Ուրախութիւնս կատարեալ ըրէք՝ *միաբանելով*, նոյն սէրը ունենալով իրարու հանդէպ, եւ *համերաշխու համախորհուրդ* ըլլալով: (Փլպ 2.2, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Կատարեալ ըլլալու աշխատեցէք, քաջալերուեցէք: *Համերաշխ* եւ խաղաղութեամբ ապրեցէք իրարու հետ, եւ այն ատեն խաղաղութեան ու սիրոյ Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ: (Բ.Կր 13.11, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Արդ, նայեցէք որ Քրիստոսի Աւետարանին վայել ձեռով ապրիք [...] Ձեր մասին իմանամ, թէ հաստատուն կը մնաք, *մէկ շունչ մէկ հոգի*, եւ միասնաբար կը պայքարիք Աւետարանի հաւատքին համար: (Փլպ 1.27, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Բաժանումը միայն կապուած չէ հակառակ խօսքերու կամ արարքներու հետ. անիկա աւելի խորունկ կրնայ ըլլալ՝ միտքին, սիրտին եւ հոգիին մէջ: Մենք կրնանք արտաքննապէս միութեան մէջ ըլլալ, բայց բաժնուած՝ մեր շարժառիթներուն եւ խորհուրդներուն մէջ: Մայրս եւ հայրս տարիներ ապրեցան Ամերիկայի արեւելեան ափի Ֆլորիտա նահանգի Վերո Պիչ կոչուած քաղաքին մէջ: Վերո Պիչէն շուրջ տասներեք մղոն դէպի հիւսիս վայր մը կայ, որ կը կոչուի Սեպասթիըն՝զ Ինլեթ: Անիկա տեղացիներուն ծանօթ է իր զօրաւոր ենթահոսանքներով: Ենթահոսանքը երեւոյթ մըն է, որ նկատելի չէ պարզ աչքով: Ովկիանոսին մակերեսի բոլոր ջուրը կը թոփ հոսիլ իբրեւ մէկ, միահամուռ կերպով դէպի ծովեզերք: Սակայն մակերեսին տակը, ջուրը արագօրէն կը շարժի հակառակ ուղղութեամբ: Այդ ջուրը կը բռնէ իր զոհերը եւ կը քաշէ զանոնք դէպի ծովուն խորերը, յաճախ առնելով անոնց կեանքը:

Արդե՞ծք կան ենթահոսանքներ մեր եկեղեցիներուն մէջ, որոնք արգելք կ'ըլլան Աստուծոյ փառքին յայտնուելուն: Միութեան մէջ եղող աշակերտներուն միջոցաւ էր, որ ամբողջ Երուսաղէմը լսեց Յիսուսի յարութեան մասին. Անոր ներկայութեան եւ զօրութեան մեծութիւնը հզօր տպաւորութիւն եւ ազդեցութիւն ձգեցին: Եթէ պահ մը մտածես այդ մասին... չկար հեռատեսիլ, ձայնասփիւռ կամ որեւէ տեսակի ընկերային հաղորդամիջոց՝ հաւաքոյթները ծանուցանելու համար, եւ սակայն հազարաւորներ փրկուեցան չծանուցանուած ինքնաբոլիս հաւաքոյթներու ընթացքին:

Ահա ամէնէն սթափեցնող հարցումը: Մեզմէ քանիներ Յիսուսի առջեւ պիտի կենան դատաստանի օրը՝ ցնցուած եւ շուարած այն բաներով, զորս Ան պիտի յայտնաբերէ: Արդե՞ծք Ան մեզի ցոյց պիտի տայ՝ Իր թագաւորական այտերէն արցունքներ հոսեցնելով, թէ ինչպէս մենք արգելք եղանք մեր միջավայրներուն մէջ Սուրբ Հոգիի դրսեւորումներուն:

Մեր անհամաձայնությունները ենթահոսանք մը դարձան, որ արգելք կ'ըլլան բազմություններուն, որ փրկութեան գան: Մենք անհամաձայն գտնուեցանք մեր ղեկավարներուն հետ մեր սիրտին եւ միտքին մէջ ինչպէս նաեւ գործերով: Այո, կրնայ ըլլալ, որ մենք իրաւունք ունէինք, կրնայ ըլլալ, որ կային աւելի լաւ, աւելի աստուածաշնչական ռազմավարություններ կամ գործելու ձեւեր, բայց ո՞ր մէկը աւելի լաւ է՝ ճիշդ ըլլալ կամ Աստուծոյ փառքին մէջ ըլլալ: Ճիշդ ըլլալ կամ տեսնել բազմություններ կու գան Աստուծոյ Թագաւորութենէն ներս:

Տարբեր Մեթոտներ

Գաղտնիք չէ: Ղեկավարներ կրնան անհամապատասխան ըլլալ աստուածային ծրագիրներուն եւ ռազմավարութիւններուն: Յաւով կը գրեմ, որ իբրեւ ղեկավար՝ ես շատ անգամ սխալ որոշում տուած եմ: Սակայն հիանալի է, որ Աստուած ինչպէս տակաւին կրնայ իրագործել Իր նպատակները, յատկապէս երբ մենք միութեան մէջ ըլլանք, մէկ կ'ըլլանք: Ատիկա թեթեւի առնուելիք բան մը չէ կամ Իր կամքը փնտռելու մէջ թափթփած ըլլալու պատճառ մը, այլ՝ պէտք է ծառայէ իբրեւ մխիթարական խօսք ինծի պէս ղեկավարներու համար, որոնք սխալներ գործած են:

Հիմա կ'ուզեմ խօսիլ ուրիշ իրականութեան մը մասին, որ կրնայ արգելք ըլլալ մեզի, որ միութեան մէջ ըլլանք, մէկ ըլլանք: Ատիկա եկեղեցիին մէջ տարբեր գործունէություններու գոյութեան գիտակցութեան պակասն է: Այլ խօսքով, կան տարբեր ձեւեր Թագաւորութիւնը յառաջ տանելու նպատակը իրագործելու համար: Պօղոս Կորնթոսի եկեղեցիին ըսաւ, թէ կան զանազան պարգեւներ եւ պաշտօններ եկեղեցիին մէջ, բայց յետոյ գրեց. «Կան *գործունէութեան* [բաներ իրագործելու համար աշխատանքի] *բնորոշ այլազանություններ*, բայց նոյն Աստուածն է, որ կը ներշնչէ զանոնք եւ կենսունակութիւն կու

տայ բոլորին» (Ա.Կր 12.6, շեշտադրումը՝ մեր կողմէ)³⁵: Կան գործունեության բնորոշ այլազանություններ: Այլ խօսքով, Թագաւորութիւնը յառաջ տանելու մեր առաքելութեան մէջ ծառայութիւնները յաջողութեամբ գործած կ'ըլլան երբ տարբեր մեթոտներով կ'աշխատին:

Պօղոս Առաքեալ յաճախ զինուորական բառամթերք կը գործածէ՝ եկեղեցիին ցուցմունքներ տալու համար: Ատիկա միայն պատկերներ գծելու կամ պատկերներով բացատրելու համար չէ, այլ՝ մենք իրապէս Աստուծոյ բանակն ենք երկրի վրայ: Ես ալ իր օրինակին պիտի հետեւիմ՝ ծառայութեան տարբեր գործողութիւնները բացատրելու համար: Մեր Միացեալ Նահանգներու բանակը կը բաղկանայ այլազան ճիւղաւորումներէ: Ունինք ցամաքի բանակը, նաւատորմը, օդուժը, ծովուժը եւ ծովեզերքի պահպանութեան ոյժը: Այդ ճիւղաւորումները ունին տարբեր գործունեութիւններ՝ իրենց նպատակները եւ պատասխանատուութիւնները իրագործելու համար: Այդ մեթոտները յատուկ են իւրաքանչիւր ճիւղի համար: Այդ ճիւղերը, սակայն, նոյն կողմին կը պատկանին երբ հարցը կը վերաբերի մեր երկիրը պաշտպանելուն եւ անոր ծառայելուն:

Օդուժի զինուոր մը յատուկ կերպով կը մարզուի՝ իբրեւ Միացեալ Նահանգներու Օդուժի անդամ: Անոր մարզումին մեծ մասը կը վերաբերի օդին մէջ մարտավարական գործողութիւններ ընելուն, քանի որ անոր ծառայութեան ճիւղը կը գործէ գլխաւորաբար օդին մէջ: Սակայն Եթէ ան ցամաքային բանակի անդամ պիտի ըլլայ, նոր մարզումներու կարիքը պիտի ունենայ: Անշուշտ կան զանազան մարզումներ, որոնք երկու ճիւղերուն մէջ ալ կան: Սակայն քանի որ ցամաքի բանակին գործունեութիւնը մեծապէս տարբեր է ծովուժի գործունեութենէն՝ տրուած ըլլալով որ

35 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիլիֆայր Պայպլը (AMP)* տարբերակէն

անիկա գլխատրաբար կը գործէ գետնի վրայ, այդ նախկին օդուժի զինուորը պէտք պիտի ունենայ սորվելու գետնի վրայ գործադրուող մարտավարական խաղեր եւ զինուորական ռազմավարութիւններ:

Այս օրինակը ի մտի ունենալով, կարդանք Կորնթոսի եկեղեցիին ուղղուած Պողոսի խօսքերը.

Ուրեմն կ'աղաչեմ ձեզի, նմանեցէք ինծի: (Ա.Կր 4.16)³⁶

Պօղոս այդ եկեղեցիին ըսաւ, որ իրեն նմանին: Ան հոս չգրեց. «Շտուաբար ինծի նմանեցէք, ինչպէս ես՝ Քրիստոսի». ատիկա յետոյ գրեց (Ա.Կր 11.1): Բայց կայ պատճառ մը, որ հոս այդպէս չգրեց: Անոր յաջորդ բառերը կը յստակացնեն, թէ ինչն է.

Ուրեմն կ'աղաչեմ ձեզի, նմանեցէք ինծի: Ասոր համար ձեզի դրկեցի Տիմոթէոսը, որ սիրելի զաւակս է, ու հաւատարիմ է Տէրոջմով. ան պիտի վերյիշեցնէ ձեզի *իմ ճամբաներս՝ որ Քրիստոսի մէջ են*, ինչպէս ամէնուրեք բոլոր եկեղեցիներուն մէջ կը սորվեցնեմ: (Ա.Կր 4.16-17, շեշտադրումը՝ մեր կողմէ)³⁷

Ան (իր հիմնած) եկեղեցիին ըսաւ, որ իրեն նմանին եւ ապա ըսաւ. «Ասոր համար ձեզի դրկեցի Տիմոթէոսը»: Ինչն է իրենց կը դրկէ Տիմոթէոսը: Յիշեցնելու համար *Պողոսի ճամբաները, որոնք Քրիստոսի մէջ են*: Նկատի առ, որ ան չ'ըսեր. «Տիմոթէոս ձեզի պիտի յիշեցնէ Յակոբոսի ճամբաները, որոնք Քրիստոսի մէջ են»: Յակոբոս եկեղեցւոյ մէջ առաքեալ մը չ'էր: Անշուշտ: Ան բարեպաշտ ղեկավար մըն

36 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

37 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

էր: Անշուշտ, այր: Արդե՞ծք Յակոբոս Պօղոսէն աւելի երկար ժամանակ առաքեալ եղած էր: Դարձեալ, այր: Արդեօք անոր ճամբաները, մեթոտները կամ գործողութիւնները տարբեր էին Պօղոսիններէն: Պատասխանը դարձեալ «Այո» է: Արդեօք Պօղոսի թելադրանքները Յակոբոսի ճամբաները, որոնք Քրիստոսի մէջ են, անվաւեր կը դարձնեն: Անշուշտ ոչ: Սակայն Յակոբոսի ճամբաները յարմար չէին Կորնթոսի եկեղեցիին, որ հիմնուած էր Պօղոսի կողմէ: Ատիկա կը նմանի այն իրականութեան, որ *օդուժի շարք մը ձեւերը* չեն գործեր նաւատորմին մէջ: Կան շատ մը ձեւեր, որոնք նոյնն են, բայց շատեր ալ կան, որոնք տարբեր են:

Քիչ մըն ալ մտածենք այդ մասին: Պօղոս չըսաւ, թէ Տիմոթէոս այդ եկեղեցիին պիտի սորվեցնէր «Պետրոս Առաքեալի ճամբաները», որոնք Քրիստոսի մէջ են, կամ «Յուդա Առաքեալի ճամբաները», որոնք Քրիստոսի մէջ են, կամ «Յովհաննէս Առաքեալի ճամբաները», որոնք Քրիստոսի մէջ են եւայլն: Ո՛չ: Պօղոս հիմնեց այդ եկեղեցին եւ շարունակեց իր ղեկավարութեան մշակոյթը հաստատել անոր մէջ: Անոր մեթոտները տարբեր էին միւսներուն մեթոտներէն, բայց անոնք հարազատ էին Քրիստոսի հիմնական ուսուցումներուն: Առաջին դարու եկեղեցւոյ բոլոր ղեկավարները ունէին նոյն հիմնական համոզումները եւ ուսուցումները: Բայց անոնցմէ իւրաքանչիւրը տարբեր մեթոտներ կը գործածէր՝ բոլոր ազգերը աշակերտելու պատուէրը կատարելու համար:

Մտածէ՛ այդ իրականութեան մասին այն եկեղեցիին հետ կապուած, որուն կը պատկանիս: Ըսենք, որ քու աւագ հովիւներուդ անուններն են՝ Ճիմ եւ Լիսա Սմիթ: Անոնք եւ իրենց ղեկավարներու խումբը Աստուծոյ շնորհքով աճեցուցած են եկեղեցին տասնհինգ հազար անդամի, եւ ատիկա ընելու ատեն հաստատած են ձեւեր՝ մշակոյթ եւ մեթոտներ, որոնք իւրայատուկ են իրենց ղեկավարութեան

ոճին: Քու եկեղեցիիդ պտղաբերութիւնը նշանակալից ձեւով մը ազդեցութիւն ունեցած է քու համայնքիդ վրայ: Քու եկեղեցիդ շրջանին մէջ ծանօթ է, բայց միայն այդքան:

Սակայն ըսենք, որ շրջանին մէջ աւելի հանրաձանօթ եկեղեցի մը կայ, որ համաշխարհային ճանաչում ունի: Անոնց աւագ հովիւներուն անուններն են՝ Տակ եւ Հետըր Ճոնզ: Անոնք նորոյթներ յառաջ կը բերեն եւ առաջատար են ծառայութեան մէջ թարմ, նոր ձեւեր յառաջ բերելու մէջ: Անոնք ազդեցութիւն կ'ունենան շատ աւելի մեծ թիւով մարդոց վրայ քան քու հովիւներդ: Որո՞նք ճամբաներուն պիտի հետեւիս. Ճոնզերոն կամ Սմիթներուն (քու հովիւներուդ): Փորձութիւնը պիտի ըլլայ հետեւիլ հանրաձանօթ, համաշխարհային ճանաչում ունեցող եկեղեցոյ ճամբաներուն եւ փորձել քու եկեղեցիիդ առաջնորդները քաջալերել, որ որդեգրեն այդ հովիւներուն մեթոտները: Դուն ալ, կորնթացիներուն նման, պէտք է հետամուտ ըլլաս գիտնալու քու ղեկավարներուդ ճամբաները եւ հետեւելու անոնց՝ միութեան եւ փառքի սիրոյն: Իրականութիւնը այն է, որ Ճոնզերը չեն քու հովիւներդ, Սմիթներն են:

Ընդհանուր Տեսակէտ մը

Ես շաբաթական դրութեամբ ամբողջ աշխարհի շուրջ կը ճամբորդեմ երեսուն տարիէ ի վեր: Պատիւը ունիմ ներկայ եղած ըլլալու աւելի քան հազար խորհրդաժողովի եւ եկեղեցի՝ քառասունինը նահանգներու եւ աւելի քան վաթսուն երկիրներու մէջ: Պատիւը ունեցած եմ տեսնելու տարբեր գործունէութիւնները մեծ թիւով եկեղեցիներու ցանցերու: Երբ իբրեւ հիւր կը հրաւիրուիմ, գլխաւոր նպատակակէտերէս մէկը կ'ըլլայ ճանչնալ եկեղեցոյ մշակոյթը:

Եթէ իմ տունս այցելէիր իբրեւ հիւր, ինձի թելադրանքներ պիտի չընէիր, թէ ինչպէս պէտք է վարեմ իմ տունս եւ

ընտանիքս: Պիտի ընթանայիր մեր տան կարգ-կանոնին կամ գործունեության համաձայն: Իբրեւ հիւր, դուն պիտի չորոշէիր ընթրիքի ժամը կամ թէ ինչ պիտի հրամցուի ընթրիքին: Ընդհակառակը, պիտի հարցնէիր՝ «Երբ է ընթրիքը»: Ապա դուն ներկայ պիտի ըլլայիր ճաշի սեղանին շուրջ երբ ընթրիքը պիտի հիւրասիրուէր եւ երախտագիտութեամբ ընդունէիր տանտիրոջ քեզի հրամցուցածը:

Իբրեւ հիւր, եկեղեցւոյ ղեկավարին կը հարցնեմ. «Ինչ կը հագնիք երբ կը քարոզէք»: Եւ ապա կը փորձեմ իր ըսածին համաձայն բան մը հագնիլ: Կը յիշեմ, որ առիթով մը ճամբորդած էի խորհրդաժողովի մը ընթացքին ծառայելու համար, եւ պայուսակիս մէջ ունէի միայն *ճիւղ* եւ կոճակներով շապիկներ, որոնք մտադիր էի հագնելու քարոզելու ատեն: Պաշտօնական հագուստներ հագած չորս տղամարդիկ եկան մեզ օդակայանէն առնելու՝ երկու ճերմակ *լիմուզին*ներով, որոնցմով մեզ պիտի փոխադրէին դէպի պանդոկ եւ յետոյ ծառայութեան վայր: Եթէ ես աւագ հովիւր ըլլայի եկեղեցիի մը, ես հիւրերս ուրիշ ձեւով պիտի դիմաւորէի: Տղաներէս մէկը կամ խումբիս վստահելի անդամներէն մէկը պիտի ղրկէի՝ ամենօրեայ պարզ հագուստներով, որ մաքուր ինքնաշարժով մը կամ ինքնաշարժներով առնէին հիւրերը օդակայանէն: Բայց ատիկա իմ եկեղեցիիս կազմակերպած խորհրդաժողովը չէր: Դիւրին էր հասկնալ, որ արտաքին տեսքով դիմացինը պատուելը կարեւոր բան մըն էր այդ եկեղեցիին մէջ: Անմիջապէս գիտցայ, որ ծառայութեան համար որոշած հագուելիքս անարգական պիտի ըլլար իրենց մշակոյթին եւ մեթոտներուն համար, հետեւաբար անմիջապէս կարգադրութիւններ ըրի պաշտօնական հագուստ ապահովելու:

Իբրեւ հիւր, կը հարցնեմ. «Ո՞րքան ժամանակ կ'ուզէք, որ խօսիմ»: Կը յարգեմ իրենց պահանջը եւ կը փորձեմ մնալ ինծի տրուած ժամանակին մէջ: Սակայն առաջ այդպէս չէի ըներ: Ես իբրեւ հիւր քարոզիչ խօսած եմ իմ հերոսներէս մէկուն՝

Թոմի Պարնէթի եկեղեցիին մէջ ամէն տարի աւելի քան տասնհինգ տարիներ շարունակ: (Անոր եկեղեցին ծանօթ էր իբրեւ՝ *Ֆինիքս Ֆրոյսթ Ասամպլի*, բայց հիմա անիկա կը կոչուի՝ *Ֆինիքս Տրիմ Սենթըր*, եւ անոր որդին՝ Լուքը, աւագ հովին է:) Առաջին այցելութեանս Կիրակի առտուն ան ինծի քառասուն վայրկեան քարոզելու եւ ծառայելու ժամանակ տուաւ: Ինծի ըսաւ, որ ամպիոնին դիմաց կար ժամացոյց մը, որ ինծի տրամադրուած ժամանակը կը նշէր եւ ապա դէպի վար կը հաշուէր, եւ ասիկա կրնար օգնել ինծի գիտնալու, թէ երբ պէտք էր աւարտէի ծառայութիւնս: Ես տասը վայրկեան աւելի ժամանակ առի:

Ան ծառայութենէն ետք անմիջապէս դուրս ելաւ՝ առանց հետս բառ մը խօսելու: Գիտցայ, որ նեղացած էր: Ամբողջ կէսօրէ ետքը մտածեցի ըրածիս մասին: Նախքան երեկոյեան ծառայութիւնը, մենք առանձին էինք իր գրասենեակին մէջ եւ հարցուցի եթէ յուսախաբ եղած էր ինձմէ այդ առտուն:

Պատասխանեց. «Այո»:

Հարցուցի. «Արդեօք անոր համար, որ ես երկար խօսեցայ»:

Ըսաւ. «Այո»:

Կանգ առաւ պահ մը եւ ըսաւ. «Կը սիրեմ քեզ, Ճոն, ուստի պիտի ըսեմ, թէ ինչն է նեղացայ: Շատեր ունինք, որոնք որոշ ժամանակացոյցի վրայ են: Մեր մանուկներու ծառայութեան մէջ ծառայողները ծրագրուած յայտագիրներ ունին, որոնք կ'արտացոլացնեն մեր գլխաւոր ծառայութեան ժամանակացոյցը: Երբ տասը վայրկեան աւելի ժամանակ կ'առնես, ասիկա խանգարում կը յառաջացնէ անոնց քով: Մենք աւելի քան երեսուն փոխադրակառքեր ունինք, որոնք ծառայութենէն ետք ժողովուրդը կը վերադարձնեն դէպի աղքատ շրջաններ եւ որոնք մեքենաները աշխատցուցած դուրսը կը սպասեն: Ինչ պիտի ընեն անոնք»:

Եւ ցանկը երկար էր:

Ապա ան եզրակացուց, ըսելով. «Դուն չյարգեցիր մեր հոս հաստատած ձեւը, որովհետեւ ուզեցիր տասը վայրկեան անելի խօսիլ»:

Յանդիմանուեցայ լաւ ձեւով մը եւ սորվեցայ իմ այդ սխալէս:

Իբրեւ հիւր, կը հարցնեմ ղեկավարին. «Երբ փրկութեան կոչ կ'ընէք, մարդիկը առջեւ կը կանչէք, կամ կ'ըսէք, որ ոտքի կենան կամ ալ պարզապէս ձեռք վերցնեն»: Ես զգուշութեամբ մտիկ կ'ընեմ աւագ հովիւին պատասխանին եւ կը փորձեմ իրենց մշակոյթին համապատասխան ձեւով ընել ծառայութեան այդ բաժինը: Ես հաստատօրէն կը հաւատամ, որ մէկը կրնայ անկեղծօրէն փրկուիլ այդ երեք ձեւերէն որեւէ մէկով:

Ասոնք պարզապէս հարցումներէն քանի մը հատն են, որ կը հարցնեմ: Երբեմն եթէ իմ ծրագիրս տարբեր է իրենց մշակոյթէն բայց այնպէս կը զգամ, որ անելի լաւ կ'ըլլայ եթէ իմ ծրագրածիս պէս ընեմ, աւագ հովիւին կը հարցնեմ եթէ հարց չէ, որ ծառայութիւնը քիչ մը տարբեր ընենք: Ասոնք միշտ կը գնահատեն իմ հարցնելս եւ գրեթէ ամէն անգամ ուրախութեամբ արտօնութիւն կու տան ինծի:

Կան շատ ուրիշ օրինակներ, զորս կրնամ տալ, բայց վստահ եմ, որ ասոնք բաւարար են, որ հասկնաք, թէ ընդհանուր նպատակս այնտեղի ղեկավարին հաստատած մեթօտով գործելն է. անոր «ճամբաներով, որոնք Քրիստոսի մէջ են»: Սակայն եթէ ղեկավարը ըսէ. «Մենք չենք հաւատար փրկութեան կոչ ուղղելուն, որովհետեւ կը հաւատանք, որ Քրիստոս պարզապէս ձեւերէն *մէկն* է Աստուծոյ հասնելու, եւ կը հաւատանք, որ շատ մը տարբեր ձեւեր կան յաւիտենական կեանքին հասնելու», կը մերժեմ իրենց ձեւին հետեւիլ, որովհետեւ այդ պարագային ծառայելու տարբեր ձեւի մը մասին չէ խօսքը, այլ՝ ղեկավարը հակառակ կը գործէ Քրիստոնէութեան հիմնական ճշմարտութեան մը:

Տարիներու ընթացքին երբ Քրիստոսի Մարմինը դիտած

եմ ընդհանուր տեսակետե՛ մը, ականատես եղած եմ շատ մը ցաւալի իրադարձութիւններու, որոնք արդիւնքը եղած են մարդոց այդ հիմնական ճշմարտութիւնը չգիտնալուն: Տեսած եմ ինչպէս մարդիկ յաճախած են ղեկավարութեան կամ Աստուածաշունչի մարզումներու դպրոցներ, որոնք ամբողջութեամբ տարբեր մշակոյթներ ունին քան այն եկեղեցիները, ուր իրենք հասակ նետած են: Յաճախ այդ դպրոցները կապուած են աւելի մեծ եկեղեցիներու, որոնք ընդհանուր մշակոյթը ճշդած են այդ դպրոցներուն: Ուստի այդ ուսանողները փորձառութիւնը կ'ունենան անոնց գործունէութեան ձեւին թէ՛ դպրոցին մէջ եւ թէ՛ շաբաթավերջին իրենց յաճախած եկեղեցիներու ծառայութեան ընթացքին:

Աւարտելէ ետք, այդ աշակերտները կը վերադառնան ծննդավայր՝ կրակով եւ խանդավառութեամբ լեցուն եւ կը սկսին փորձեր ընել փոխելու իրենց եկեղեցւոյ մշակոյթը: Կրնան ճիշդ ըլլալ անոր մէջ, որ իրենց սորված ձեւերը աւելի նոր եւ ազդու են, բայց եթէ պէտք եղածէն աւելի պնդեն իրենց տեսակետին վրայ, դիւրութեամբ կրնան ենթահոսանք մը ըլլալ: Ամէնէն լաւը պիտի ըլլայ այն, որ եթէ իրենց առաջարկած ձեւերը մերժուին, աղօթեն եւ Աստուծոյ հարցնեն եթէ պէտք է ուրիշ եկեղեցի մը երթան կամ պարզապէս ամբողջ սրտով կամ անկեղծօրէն ենթարկուին իրենց ղեկավարին ձեւերուն:

Իբրեւ պատանիներու խումբի հովիւ իմ առաջին տարիներուս, տարբեր գործունէութիւններու, ձեւերու եւ մեթոտներու գոյութեան վերաբերեալ գիտակցութեան պակասս պատճառ եղաւ, որ բուռն կերպով դէմ դնեմ հովիւիս: Լուիզիանայի եկեղեցին այցելած էի եւ տեսած էի մեթոտ մը, որ շատ լաւ կերպով կը գործէր իրենց քով: Այնքան հիացած էի անոնց յաջողութեամբ, որ չկրցայ աւելի խորը նայիլ եւ հարց տալ կամ քննել, թէ անիկա պիտի յարմարէր մեր եկեղեցւոյ մշակոյթին կամ ոչ: Դէպի ետեւ նայելով, հիմա շատ յստակ է ինձի համար, որ այդ ձեւը պիտի

չպատշաճ էր հովիւիս «ճամբաներուն, որոնք Քրիստոսի մէջ են»: Լուիզիանայի եկեղեցւոյ գլխաւոր ղեկավարը շատ տարբեր էր իմ աւագ հովիւէս: Երկուքն ալ ունէին մեծ համաշխարհային ճանաչում եւ հետետորդներ, երկուքն ալ ազդեցիկ էին, երկուքն ալ բազմութիւններ կ'առաջնորդէին դէպի Աստուծոյ Թագաւորութիւն, բայց անոնք տարբեր էին իրենց գործելու ձեւերուն մէջ:

Մենք ամէն ժամանակէ աւելի շարժուն ընկերութիւն մըն ենք: Մեզմէ շատերը առնուազն մէկ անգամ, կամ նոյնիսկ քանի մը անգամ, իրենց կեանքին ընթացքին իրենց բնակութեան շրջանը փոխելու պատճառով իրենց եկեղեցին պիտի փոխեն: Շատ կարելոր է, որ երբ նոր համայնքի մը մէջ կը մտնենք՝ սորվինք անոնց մշակոյթը: Ատիկա բան մըն է, որ դիտումնաւոր կերպով պէտք է ընենք: Որքան արագ կրնանք համակերպիլ անոնց *ճամբաներուն, որոնք Քրիստոսի մէջ են*, այդքան զօրաւոր պիտի ըլլանք թէ՛ իբրեւ անհատներ եւ թէ՛ իբրեւ մէկ մասը ընդհանուր մարմինին:

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՀԱԿԱՌԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՎԵՐՋԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

*Երբ ճշմարտապես կը փրկուինք եւ
Աստուծոյ կամքը կը փնտռենք, պիտի
ճանչնանք օրինական իշխանութիւնը
եկեղեցիին մէջ:*

Նախորդ գլուխներուն մէջ մեր կեդրոնացումը ընդհանրապէս եկեղեցիին եւ քաղաքային իշխանութիւններուն վրայ էր: Սակայն ինչպէս ասկէ առաջ ըսի, սկզբունքներուն մեծ մասը կը վերաբերի իշխանութեան բոլոր դասակարգումներուն: Այս գլուխին մէջ պիտի խօսինք իշխանութեան տարբեր մարզերու՝ յատկապէս ընտանիքին վերաբերող որոշակի թելադրանքներու մասին, որոնք նշուած են Աստուծոյ Խօսքին մէջ: Թելադրանքներուն մեծ մասը միայն որոշ դասակարգումի մը կը վերաբերին եւ հետեւաբար պէտք է անջատ կերպով խօսուի անոնց մասին: Դիւրին պիտի ըլլար ամբողջ գիրք մը գրել այն նիւթին

մասին, զոր պիտի քննարկենք այս գլուխին մէջ: Սակայն եթէ կիրարկենք այն սկզբունքները, որ սորվեցանք արդէն եւ զանոնք կապենք այս գլուխին մէջ մեր խօսելիքներուն հետ, գիրքը պիտի գրուի մեր սիրտին մէջ: Այս գլուխին մէջ նաեւ պիտի խօսինք կարգ մը ընդհանուր թելադրանքներու մասին, որոնք այդքան բացարձակ չեն, որ անոնց մասին ամբողջ գիրք մը գրուի: Այդ պատճառով ես այս գլուխին վերնագիրը դրած եմ՝ Հակառակութիւններ եւ Վերջաւորութիւններ:

Ընտանիքը

Նախքան որ եկեղեցի, քաղաքային կառավարութիւն կամ ընկերային իշխանութիւն գոյութիւն ունենային, կար ընտանիքը: Անոր գործունէութիւնը ամէնէն ճակատագրականն է, որովհետեւ միւս երեքին առողջութիւնը կախեալ է անկէ: Կրնաս թերութիւններ ունենալ յանձնարարուած իշխանութեան ուրիշ մարզերու հետ յարաբերութեանդ մէջ, եւ ընտանիքը կրնայ անկախօրէն զօրաւոր մնալ: Բայց չես կրնար ունենալ ընտանիք մը, որուն կարգը խախտած է եւ ատիկա չազդէ միւսներուն վրայ: Ընտանիքին մէջ իշխանութիւնը կենսական հիմ մըն է միւսներուն համար:

Ընտանիքին մէջ կը գտնենք աստուածային իշխանութիւն, որուն մասին կը խօսի Աստուածաշունչը.

Զուակներ, ամէն բանով հնազանդ եղէք ձեր ծնողներուն, որովհետեւ Տէրը այդպէս կ'ուզէ: (Կղ 3.20)

Ամուսին մը իր կնոջ գլուխն է, այնպէս՝ ինչպէս Քրիստոս գլուխն է եկեղեցիին [...] Հետեաբար, ինչպէս եկեղեցին Քրիստոսի կը հնազանդի, այնպէս ալ կիները ամէն բանի մէջ իրենց ամուսիններուն թող հնազանդին: (Եփ 5.23-24)

Այդ պատուէրները, որոնք նաեւ կը գտնուին Նոր Կտակարանին մէջ ուրիշ տեղեր, կը նկարագրեն տան մէջ Աստուծոյ հաստատած իշխանութեան կառոյցը: Զաւակները պէտք է հնազանդին ծնողներուն ամէն բանի մէջ, ինչ որ կը պարունակէ կեանքի *ամէն* մարզ: Այդ պատուէրը կիրարկելի չէ մի'այն երբ ծնողքը զաւակներուն կ'ըսէ, որ ընեն Աստուծոյ Խօսքին հակառակ բան մը, ինչպէս ծնողներէն մէկուն հետ սեռային սխալ յարաբերութիւն քաջալերել, սուտ խօսիլ, գողնալ կամ ծնողներուն միջեւ ընտրութիւն կատարել, եւ ուրիշ այդ ձեւի վարմունքներ:

Այդ բացառութեան մէկ լաւ օրինակը պատահեցաւ իմ ընտանիքիս մէջ: Երբ Փըրտիւ Համալսարանը մեքենագիտութիւն կ'ուսանէի, կեանքս նուիրեցի Յիսուս Քրիստոսի: Կարճ ժամանակ ետք հասկցայ, որ կանչուած էի Աւետարանը քարոզելու: Արձակուրդի մը տուն վերադարձայ եւ ծնողներու՝ որոնք նուիրուած կաթողիկէներ էին, ըսի, թէ երկրաչափական դպրոցը ասարտելէ ետք, Աստուածաշունչի Դպրոց պիտի յաճախէի: Տուած լուրս նեղացուց զիրենք, եւ այնպէս զգացին, որ որոշումս զգացական հակազդեցութիւն մըն էր եւ արագ տրուած որոշում մը: Իրականութեան մէջ մայրս ըսաւ. «Դիակիս վրայէն քալելով Աստուածաշունչի Դպրոց կ'երթաս»:

Մօրս պատասխանեցի խնարհութեամբ եւ յարգանքով. «Մամ, կը սիրեմ քեզ եւ երախտապարտ եմ ինձի համար բոլոր ըրածներուդ համար, բայց պէտք է հնազանդիմ Աստուծոյ»: Այդ բառերը ոչ մէկ ձեռով մխիթարեցին կամ հաճեցուցին զինք: Անոնք աւելի՛ եւս բարկացուցին զինք:

Յիսուս մեզի ըսաւ. «Ով որ իր հայրն ու մայրը աւելի կը սիրէ քան զիս՝ արժանի չէ ինձի: Եւ ով որ իր տղան կամ աղջիկը աւելի կը սիրէ քան զիս՝ արժանի չէ ինձի» (Մտ 10.37): Զօրացած այդ եւ անոր նման շատ մը ուրիշ աստուածաշնչական

խօսքերով, գիտելի, որ պէտք էր ընտրութիւն ընէի մօրս եւ հօրս՝ զորս շատ կը սիրէի, եւ Յիսուսին ծառայելու կոչին միջեւ: Չկար վարանում իմ որոշումիս մէջ:

Քանի մը տարի մեր յարաբերութիւնը քիչ մը անհանգիստ վիճակ մը ունէր: Շարունակեցի սիրել եւ յարգել ծնողներս, իրականութեան մէջ ամէն ժամանակէ աւելի, քանի որ այդ ատեն արդէն Աստուծոյ շնորհքը ունէի կեանքիս մէջ: Ժամանակ մը ետք, անոնք սկսան կեանքիս մէջ Յիսուսի ըրածներուն պտուղը տեսնել, եւ տասնութ տարի ետք՝ երբ հայրս եօթանասունինը տարեկան էր, պատիւը ունեցայ երկու ծնողներուս հետ միասին Յիսուսը իբրեւ Տէր ընդունելու աղօթքը աղօթելու: Ատկէ ետք, անոնք սկսան կարդալ մեր գիրքերը, դիտել մեր *վիտէոն*երը եւ իրենց բարեկամներուն ալ տալ զանոնք: Մեր յարաբերութիւնը լաւագոյն վիճակի մէջ էր քան երբեւէ եղած էր:

Յիսուս ալ նոյնանման կացութիւն մը դիմագրաւեց: Իր ծնողներուն ենթարկուելու հետ կապուած կը կարդանք. «Ան անոնց հետ իջաւ Նազարէթ եւ [սովորաբար կամ շատ անգամ] հնազանդ էր անոնց» (Ղկ 2.51)³⁸: Սակայն երբ ծառայութեան սկսաւ, սուրը սկսաւ անցնիլ անոնց սիրտերէն՝ ինչպէս Սիմոն մարգարէացած էր երբ Յիսուս տակաւին մանուկ էր (տես՝ Ղկ 2.35), եւ բացայայտել անոնց սիրտի խորհուրդները: Յիսուսի հզօր պատգամները սկսած էին շատերը անհանգիստ ընել եւ բարկացնել՝ ներառեալ Իր ընտանիքը: Անոնց զգացումները բորբոքած էին այն աստիճան, որ Իր մայրը ընդդիմացաւ Իրեն.

Երբ Իրեն պատկանողները (Իր ազգականները) լսեցին ատիկա, ելան, որպէսզի բռնեն զինք, քանի որ շարունակ կ'ըսէին, թէ Ան խենթացած էր (ինքզինքը չէր, խելագար էր կամ խանգարուած) [...] Ապա Անոր մայրը եւ եղբայրները

38 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիֆայր Պայպըլ (AMP)* տարբերակէն

Եկան եւ դուրսը կեցած՝ լուր դրկեցին Իրեն, որ իրենց քով գար: Բազմութիւն մը կար Անոր քով նստած երբ Իրեն լուր բերին, թէ՛ «Մայրդ եւ եղբայրներդ դուրսն են եւ քեզի կը կանչեն»: Ան պատասխանեց. «Ո՞վ են իմ մայրս եւ եղբայրներս»: Եւ շուրջը նայելով անոնց, որոնք բոլորակի ձեւով նստած էին Իր շուրջը, ըսաւ. «Տեսէք, հոս են իմ մայրս եւ եղբայրներս, քանի որ ան որ կ'ընէ այն բաները, որոնք Աստուած կը կամի, ան է իմ եղբայրս եւ մայրս»: (Մր 3.21,31-35)³⁹

Ան հնազանդ էր Իր ծնողներուն ամէն բանի մէջ մինչեւ որ ուզեցին, որ Իր Հօրը պատուէրին հակառակ բան մը ընէր: Լաւ լուրը այն է, որ քանի մը տարի ետք Անոր ընտանիքը հոն էր Վերնատան մէջ՝ լեցուելու համար Սուրբ Հոգիով: Անոնք արդէն Տիրոջ հետեւորդները դարձած էին:

Միշտ Բարիք Չգտայ

Վերադառնալով ընդհանուր կանոնին եւ ոչ բացառութեան, իրենց ծնողները պատուելու եւ անոնց հնազանդելու զաւակներուն ուղղուած պատուէրը առաջինն է, որ երկպատիկ խոստում ունի. որպէսզի *միշտ բարիք գտնեն* եւ *երկար ապրին* (տես Եփ 6.1-2: Կղ 3.20):

Ես այդ պատուէրին չհնազանդելու հետեւանքները դժուար ձեւով սորվեցայ: Փըրտիւ Համալսարանը աւարտելէ ետք, *Ռոքուէլ Ինթըրնաշընըլի* մօտ գործի ընդունուեցայ: Սկսայ յաճախել այն եկեղեցին, որուն մասին ասկէ առաջ խօսեցայ: Երկրորդ անգամ ծառայութեան ներկայ գտնուելէ ետք, ճաշի ելանք խումբ մը տարեկիցներով: Ծանօթացայ չափահաս չամուսնացածներու խումբի առաջնորդներէն մէկուն հետ: Ան պէտք ունէր բնակութեան վայրի մը, ես ալ նոր փոխադրուած

39 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիլֆայր Պայպըլ* (AMP) տարբերակէն

էի քաղաք: Որոշ ժամանակ իրարու հետ խօսելէ ետք, մտածեցինք, որ լաւ կ'ըլլար եթէ նոյն տան մէջ ապրէինք: Ես շատ ուրախացայ, քանի որ այդպիսով բաւական դրամ կրնայի խնայել, տրուած ըլլալով, որ համալսարանը նոր աւարտած սնանկացած մըն էի օրին:

Յաջորդ օրը հօրս հեռաձայնեցի եւ լաւ լուրը տուի: Կարծեցի պիտի բաժնեկցի ամիսը քանի մը հարիւր տոլար խնայելու իմ խանդավառութիւնս: Բայց այդպէս չեղաւ: Փոխարէնը ան ըսաւ. «Տղան, չսիրեցի գաղափարը: Մի՛ ըներ: Չես գիտեր այդ տղուն»: Փորձեցի համոզել զինք՝ իրեն ըսելով, որ անիկա առաջնորդ մըն էր եւ թէ որքան նուիրուած ծառայող մըն էր եւայլն, բայց ան չփոխեց իր կարծիքը:

Երբ հեռաձայնը գոցեցի, եզրակացուցի, թէ հայրս չէր հասկնար այս բաներուն մասին, քանի որ հաւատացեալ չէր: Վերջապէս տղան կարեւոր դիրք մը ունէր եկեղեցւոյ ղեկավարութեան մէջ: Ես անտեսեցի հօրս խօսքերը եւ յաջորդ օրը յարկաբաժին մը գտանք միասին եւ ստորագրեցինք վարձելու պայմանագիրը: Երբ գացինք մեր ապրանքներ փոխադրելու համար փոխադրակառք ապահովելու, նոր սենեկակիցս խնդրեց, որ ես վճարեմ, քանի որ ըսաւ, որ մոռցեր էր վճարագիրի տետրակը հետը առնելու: Երբ գացինք յարկաբաժինին կանխիկ վճարումը ընելու, ան նոյն բանը ըրաւ: Շարունակ նոյն վարմունքը կ'ունենար, եւ վերջաւորութեան առաջին երկու ամսուան բոլոր ծախսերը ես ըրի, ներառեալ՝ ելեկտրականութեան, կազի եւայլն վճարումերը ինչպէս նաեւ նահանգէն դուրս իր կատարած հեռաձայնները (որոնք օրին բաւական սուղ էին):

Քանի մը անգամ իմ ինքնաշարժս տուի իրեն, քանի որ ինք ինքնաշարժ չունէր: Ամէն անգամ ալ ինքնաշարժս ետ եկաւ յաջորդ առտուն՝ ծովսի հոտով լեցուն: Ան պատրուակներ ըրաւ, թէ աւետարանչութիւն ըրած էր կարիքաւոր

մարդոց: Առտու մը տեսայ, որ ինքնաշարժիս մէկ կողմը ամբողջութեամբ ներս մտած էր: Շատ նեղացայ, բայց ցոյց չտուի նեղացած ըլլալս: Ուրիշ օր մը ննջասենեակէս դուրս ելայ առաւօտեան ժամը 4-ին եւ օտարական մը տեսայ նստասենեակը՝ գարեջուրի թիթեղ մը եւ ծխախոտ մը ձեռքերուն մէջ: Ան ինծի նայեցաւ այնպէս, որ կարծես ես ըլլայի դրսեցին:

Իմ տանս մէջ կը տանջուէի, բայց իբրեւ նոր հաւատացեալ մը, շարունակ կը մտածէի. *Սիրով պէտք է վարուիմ: Բարկացկոտ եւ դատող պիտի չըլլամ:* Ուստի չէի լուծեր հարցերը: Ասոնք այդ տղուն հետ ունեցած ամենօրեայ դժուարութիւններէս քանի մը հատն էին միայն:

Քանի մը շաբաթ տանջուելէ ետք, գիտցայ, որ սենեկակիցս միասեռական էր եւ միասեռականի կեանքը կ'ապրէր: Խնդրեցի, որ անմիջապէս ելլէր տունէն, բայց դժկամեցաւ: Ես էի ամէն բանի համար վճարողը մինչ ինք մեղքի կեանք կ'ապրէր: Գրեթէ նոյն ատենն էր երբ չամուսնացածներու ծառայութեան հովիւր յայտնաբերեց անոր ապրած կեանքը, եւ անկէ առնուեցաւ առաջնորդի իր պաշտօնը: Ես վերջին գիտցողներէն էի: Իմ անհնազանդութիւնս կուրցուցած էր աչքերս եւ անկարող դարձուցած զանազանելու:

Որովհետեւ անտեսեցի ինչ որ խրատը, հարիւրաւոր տղար կորսնցուցի ինչպէս նաեւ խաղաղութիւնս: Տնցուած էի. կեանքիս ամէնէն դժուար երկու ամիսը անցուցած էի: Երբ ամէն բան վերջացաւ, Աստուծոյ աղաղակեցի, ըսելով. «Տէր, ինչո՞ւ ատիկա պատահեցաւ ինծի: Ես Քեզի վստահեցայ առաջնորդութեան համար»:

Տէրը ինծի ցոյց տուաւ, որ առաջնորդութիւն տուած էր ինծի, բայց ես մերժած էի զանիկա: Շփոթի մատնուեցայ, եւ հարցուցի. «Ինչպէս առաջնորդեցիր զիս»:

Ան պատասխանեց. *Հօրդ միջոցաւ, բայց մտիկ չըրիր:*

«Բայց հայրս վերստին ծնունդ ստացած մէկը չէ», հակաճանեցի:

Եւ Տէրը ինձի յիշեցուց, թէ Իր Խօսքը չ'ըսեր. «Զաւակներ, հնազանդեցէք ձեր ծնողներուն միայն եթէ անոնք վերստին ծնունդ ստացած են»: Ան բացատրեց. *Դուն Իմ զաւակս ես. հետեւաբար ես Իմ իմաստութիւնս եւ թելադրանքներս կը դնեմ ծնողներուդ սիրտերուն մէջ՝ քեզի առաջնորդութիւն տրալու եւ քու պաշտպանութեանդ համար:*

Արագօրէն պատասխանեցի. «Բայց հիմա ես առանձին եմ: Հայրս աւելի քան հազար մղոն հեռու կ'ապրի, եւ ինք չէ, որ իմ ծախսերս կը հոգայ»:

Ան ըսաւ. *Պարզապէս որովհետեւ դուն քու ծախսերդ կը հոգաս եւ ծնողներդ հազարաւոր մղոն հեռու են, չի նշանակեր, որ անոնց հնազանդելու պատուէրս այլեւս կիրարկելի չէ:* Անոր պատուէրը կը խոստանայ, որ միշտ բարիք պիտի ըլլայ մեզի եթէ պահենք զանիկա, եւ ես կրնամ վկայել, որ ինձի հետ միշտ բարիք չեղաւ...

Յետոյ ինձի ցոյց տուաւ, թէ երբ մարդ մը կ'արձակուի իր հօր եւ մօր իշխանութենէն: Սկիզբէն Աստուած պատուիրեց. «Ատոր համար մարդը հայրն ու մայրը պիտի թողու, եւ իր կնոջ պիտի յարի, ու մէկ մարմին պիտի ըլլան» (Ծն 2.24):

Վերջին թելադրանքը, որ ծնող մը կու տայ իր զաւակին անոր ամուսնական զոյգը օրհնելն է: Ի միջի այլոց ըսեմ, որ երբ Լիսայի հայրը տուաւ իր օրհնութիւնը, որ մենք ամուսնանանք, Լիսան ըսաւ, որ զարմացած էր: Հարցուցի, թէ ինչո՞ւ, եւ ան ըսաւ. «Որովհետեւ ինձի ըսաւ, որ չէր սիրած քեզ քանի որ հաւատացեալ ես»: Այդ փորձառութիւնը ծառայեց իբրեւ հաստատում մը, որ թագաւորին (մեր վրայ իշխանութիւն ունեցողներուն) սիրտը Աստուծոյ ձեռքին մէջն է:

Վերադառնալով Աստուծոյ պատուէրին, անոր խօսքերը կը շեշտեն, թէ երբ տղամարդ մը եւ կին մը կը միանան

ամուսնութեամբ, իշխանութեան նոր կարգ մը կը հաստատուի: Պատճառը, որ Աստուած Իր Խօսքին մէջ չի նշեր կնոջ մը իր ծնողները ձգելը այն է, որ կինը չէ, որ նոր ընտանիքի կարգը կը հաստատէ. տղամարդն է, որ կը գլխավորէ իշխանութիւնը:

Երբ զաւակները կ'ամուսնանան, անոնք այլեւս իրենց ծնողներուն հնազանդելու պատուէրին տակ չեն, բայց տակաւին պէտք է պատուեն զանոնք: Կը յիշեմ, որ առիթով մը հարցուցի ծնողներուս, որ ինչո՞ւ խրատ չտուին կնոջս եւ ինձի երբ կը տեսնէին, որ խնդիրներ կ'ունենայինք: Անոնք պարզապէս ըսին. «Դուք բնաւ խրատի համար մեզի չդիմեցիք»: Ո՛րքան բարեպաշտ կերպով վարուած էին: Տեսած եմ ինչպէս ծնողներ կը միջամտեն եւ խրատներ կու տան ճիշդ ինչպէս առաջ կ'ընէին՝ նախքան իրենց զաւակներուն ամուսնանալը: Զգացումներ կը վիրաւորուին եւ անհասկացողութիւններ կ'ըլլան քանի որ անոնք իրենց զաւակները արձակած չեն ըլլար թելադրուածին պէս:

Որոշակի Զգուշացումներ Զաւակներուն

Քանի մը տարի իբրեւ պատանիներու հովիւ ծառայելէ ետք, տեսայ այն վտանգաւոր ճամբան, որ շատ մը երիտասարդներ կ'առնեն: Կ'ուզեմ կարգ մը որոշակի խրատներ մէջբերել Աստուծոյ Խօսքէն՝ ծնողներ պատուելու կարեւորութեան վերաբերեալ: Ատիկա պիտի ընեմ այն յոյսով, որ ամէն պատանի կամ երիտասարդ, որ կը կարգայ ասիկա, խուսափի այն թթխմորէն, զոր այդ մեղքը կը տարածէ երիտասարդներուն մէջ, քանի որ անիկա վարակիչ է եւ մահացու: Աստուծոյ Խօսքը կը հռչակէ. «“Անիծեալ ըլլայ ան՝ որ իր հայրը կամ մայրը կ'անարգէ”»: Եւ ամբողջ ժողովուրդը “Ամէն” թող ըսէ» (Բ.Օր 27.16):

Գրասեղանիս դիմաց նստած էին ամուսին չունեցող

մայր մը եւ իր պատանի որդին: Խօսակցութեան ընթացքին այդ երիտասարդը շարունակ անարգական ոճով կը խօսէր մօրը հետ, կարծես կինը ապուշ կամ ստորադաս ըլլար: Արդէն քանի մը անգամ նկատողութիւն տուած էի իրեն, եւ խորհրդատուութեան պահի վերջաւորութեան, ի զարմանս ինծի, յանկարծ իրեն ըսի. «Ո՛վ երիտասարդ, եթէ չզղջաս մօրդ հանդէպ կեցուածքիդ եւ վարմունքիդ համար, վերջդ բանտը պիտի ըլլայ»: Իրենց չափ եւ ալ ցնցուեցայ իմ խօսքերէս: Այդ երիտասարդը հաւատացեալ մըն էր եւ մեր պատանիներու խումբի մէկ անդամը: Ինչպէս այդպիսի բան պիտի պատահէր:

Գրեթէ վեց տարի ետք (երբ ես արդէն պատանիներու հովիւ չէի, այլ՝ շրջող քարոզիչ-ուսուցանող մըն էի), այդ տղուն մայրը տեսաւ զիս Կիրակի առտու մը, ծառայութենէն ետք: Ան ըսաւ. «Հովիւ ճոն, կը յիշե՞ս, որ տղուս ըսիր, որ վերջը բանտը պիտի ըլլար: Գիտե՞ս, քանի մը տարի է, որ ան բանտն է»:

Ես գրեթէ մոռցած էի այդ մասին, բայց անմիջապէս յիշեցի երբ ան նիւթը բացաւ: Ստածեցի. *Ինչպէս կրնայ ըլլայ, որ այս մայրը այսքան խանդավառ էր այդ լուրը տալու պարէն:* Գիտցայ ինչո՞ւ: Ան շարունակեց. «Հիմա ան շատ կրակոտ հաւատացեալ մըն է: Կը վկայէ միւս բանտարկեալներուն եւ հոգեւոր ծառայութիւն կ'ընէ բանտին մէջ: Ան քու գիրքերդ կը կարդայ եւ շատ բան կը սորվի անոնցմէ»:

Ահի մէջ էի, թէ ինչպէս Աստուծոյ դատաստանը այդ երիտասարդին կեանքին մէջ ամէն բան շրջած էր: Աւելի լաւ պիտի ըլլար եթէ ան պէտք չունենար սորվելու տառապանքով, այլ՝ մտիկ ըրած ըլլար տարիներ առաջ խօսուած խօսքին: Բայց կարեւոր բանը՝ Աստուծոյ հանդէպ իր կրակը, հիմա արդէն իր սիրտին մէջն է:

Երբ կը կարդանք, թէ Հին Կտակարանին մէջ ինչպէս կը վարուէին զաւակներուն հետ երբ անոնք ֆիզիքապէս կամ բերանացի յարձակումներ կընէին ծնողներուն դէմ, կը

հասկնանք, թե՛ հրքան լուրջ բան մըն է ասիկա: «Իր հայրը կամ մայրը ծեծողը՝ անշուշտ պիտի մեռցուի» (Ելք 21.15), եւ՝ «Իր հայրը եւ մայրը անիծողը անշուշտ պիտի մեռցուի» (Ելք 21.17): Յիսուս Հին Կտակարանի պատուէրները մէջբերեց երբ ըսաւ. «Արդարեւ Աստուած պատուիրեց. “Պատուէ՛ հայրդ ու մայրդ. եւ ո՛վ որ անիծէ իր հայրը կամ մայրը, մահով թող վախճանի”» (Մտ 15.4):

Մովսէս ցուցմունքներ տուաւ, թե՛ ինչպէս պէտք է վարուիլ ըմբոստ զաւակի մը հետ.

Եթէ մարդ մը ապստամբ եւ անհնազանդ որդի մը ունենայ, որ իր հօր խօսքը մտիկ չ’ըներ, ո՛չ ալ իր մօր խօսքը, ու երբ զինք խրատեն՝ անոնց չի հնազանդիր, անոր հայրն ու մայրը զայն թող բռնեն եւ դուրս հանեն՝ իր քաղաքին երէցներուն քով, իր բնակած տեղին դուռը, ու իր քաղաքին երէցներուն ըսեն. «Մեր այս որդին ապստամբ եւ անհնազանդ է. մեր խօսքը մտիկ չ’ըներ, որկրամուլ ու արբեցող է»: Հետեւաբար անոր քաղաքին բոլոր մարդիկը թող քարկոծեն զայն, որպէսզի մեռնի. այսպէս՝ չարութիւնը քու մէջէդ պիտի բնաջնջես, եւ ամբողջ Իսրայէլը լսելով պիտի վախնայ: (Բ.Օր 21.18-21)

Եթէ այդ խօսքերը այսօր գործադրուէին՝ կանոնաւոր դրութեամբ պատանիներ եւ երիտասարդներ պիտի մեռցուէին մեր եկեղեցիներուն մէջ: Նոյնիսկ որ պատիժի այդ ձեւը այլեւս գոյութիւն չունի, մենք տակաւին կը տեսնենք, որ ըմբոստ վարմունքի նկատմամբ Աստուծոյ կեցուածքը բաւական որոշակի եւ խիստ է: Անոր այդ կեցուածքը չէ՛ փոխուած պարզապէս որովհետեւ դատաստանի ձեւը փոխուած է: Մենք պէտք չէ ըմբոստութիւն արտօնենք մեր սիրտերուն մէջ, որովհետեւ անիկա կը սպաննէ:

Ես զգուշացուցած եմ իմ զաւակներուս, որ իրենք զիրենք

պահեն որեւէ տեսակի ըմբոստութենէ: Ամէնէն խաբէական եւ ծածուկ ձեւը տրտնջելն է: Անիկա կ'անարգէ իշխանութիւնը՝ ականաջ յայտարարելով. «Չեմ սիրեր զիս առաջնորդելու քու ձեռք. ես տարբեր ձեռով պիտի ընէի այս կամ այն բանը»: Ատիկա անարգական է ղեկավարութեան մը համար: Կրնամք տեսնել հիմա, թէ ինչո՞ւ տրտնջելը պատճառ եղաւ, որ Իսրայէլի որդիները դուրս մնան Խոստացուած Երկիրէն: Անոնց տրտնջելը ցոյց տուաւ Աստուծոյ հանդէպ անոնց արհամարհանքը, նոյնիսկ որ անիկա ուղղուած էր Մովսէսի դէմ: Հիմնականին մէջ անոնք Աստուծոյ ըսին, որ ճիշդ չէր ըլներ, եւ թէ իրենք տարբեր ձեռով պիտի առաջնորդէին:

Մեր ծնողները պատուելը մեր կեանքին մէջ կ'իրականացնէ երկար եւ լաւ կեանքի մը խոստումը: Ես կեանք պիտի ընտրէի, ոչ՝ դատաստան: Այդ հարցը պէտք է լուծուի մեր սիրտին մէջ:

Ամուսնութիւնը

Մեր ուշադրութիւնը դարձնենք ամուսնութեան աստուածային կարգին: Աստուածաշունչը մեզի կ'ըսէ, թէ կիները պէտք է հպատակին իրենց ամուսիններուն «ամէն բանի մէջ» (Եփ 5.24): Այդ պատուէրը կիրարկելի է ոչ միայն հոգեւոր բաներու մէջ, այլեւ կեանքի բնական մարզերուն մէջ: Պօղոս ըսաւ՝ «իրենց ամուսիններուն»: Ուրիշ տղամարդիկ չունին իշխանութիւն կնոջ վրայ. միայն իր ամուսինը: Հովիւ մը իշխանութիւն ունի ուրիշ մէկու մը կնոջ վրայ՝ եկեղեցոյ եւ հոգեւոր հարցերու մէջ: Գործատէր մը իշխանութիւն ունի անոր վրայ՝ անոր գործին մէջ տունէն դուրս: Եւ քաղաքային իշխանութիւնները իշխանութիւն ունին անոր վրայ քաղաքացիական հարցերու մէջ: Բայց երբ հարցը կը վերաբերի տան, ամուսինն է անոր իշխանութիւնը:

1980-ականներու կէսերուն կինս եւ ես սխալ ուսուցումի մը զոհը գացինք: Մեզի ըսուեցաւ, որ Նոր Կտակարանը գրուած

է շովինական (կիներու դէմ նախապաշարուած) տղամարդոց կողմէ եւ պէտք չունինք հետեւելու անոնց խօսքերուն ինչ կը վերաբերի ամուսինի մը եւ կնոջ մը յարաբերութեան մէջ իշխանութեան հարցին: Մեզի ըսուած էր, որ Յիսուս հաւասար փրկութիւն տուաւ բոլորին: Ատիկա վստահաբար ճիշդ է, բայց փրկութիւնը չի ժխտեր իշխանութիւնը: Տարիներ մենք խաղաղութիւն չունէինք մեր տան մէջ: Մենք շարունակ պայքարի մէջ էինք ղեկավարութեան համար:

Տարիներու կռիւներէն ետք, օր մը կնոջս ըսի. «Աստուած գիտ գլուխը ըրած է այս տան, եւ ես պիտի ղեկավարեմ, դուն ինծի հետեւիս կամ ոչ»: Հարցերը սկսան փոխուիլ ինծի համար, բայց ոչ՝ կնոջս: Տէրը ինծի ցոյց տուած էր, որ մինչ կը ղեկավարէի՝ բնաւ պէտք չէր ստիպել իմ իշխանութեանս տակ եղող մէկու մը, որ հետեւէր ինծի: Յիսուս բնաւ չ'ստիպեր մեզի: Եթէ մեր իշխանութեան տակ եղողները չեն հետեւիր մեզի, իրենք կը տուժեն:

Ես մտայ աստուածային հանգիստի եւ խաղաղութեան մէջ: Սակայն Լիսան կը շարունակէր կրել տան ամբողջ ճնշումը: Ան համոզուած էր, որ ես անպատասխանատու ղեկավար մըն էի: Ես տակաւին երիտասարդ էի եւ շատ մը թերութիւններ ունէի, ուստի անոր մտահոգութիւններէն շատերը կ'արդարացուէին իմ անցեալի սխալներուս պատճառով: Երբեմն անոր վախերը այնքան ծայրայեղ էին, որ կէս գիշերին կ'արթնցնէր զիս՝ յիշեցնելու համար, թէ ես իմ բաժին բեռս չէի կրեր եւ ինք իր բաժինէն շատ աւելին կ'ընէր: Ես պարզապէս կ'առաջարկէի, որ իր ամբողջ հոգերը Աստուծոյ տար եւ ետ կը քնանայի, մինչ ան արթուն վիճակի մէջ պառկած կը մնար կողքիս՝ սոսկալով ամէնէն վատ հաւանականութիւններէն:

Բեռը շատցաւ Լիսային վրայ: Մտահոգութիւնները շարունակ կը հալածէին զինք: Անոր միտքը բնաւ հանգիստի

մէջ չէր, այլ՝ շարունակ խառնաշփոթ վիճակի մէջ էր, մինչ ան միտքով կը վազվզէր մեր ընտանիքին հանդիպելիք ամէն տեսակի հաւանական տագնապներէն մէկէն միւսը:

Կարճ ժամանակ մը ետք, անոր կրած ճնշումը գրեթէ անտանելի դարձաւ: Ան երկար լոգանքներ կ'առնէր՝ մեղմացնելու համար ճնշումը: Գիշեր մը երբ ան այդ երկար լոգանքներէն մէկը կ'առնէր՝ մինչ իմ մասիս կը տրտնջէր, Աստուած խօսեցաւ իրեն, ըսելով. *Լիսա, կը կարծես, որ ճոնը լաւ դեկավար մըն է:*

Ան արագօրէն պատասխանեց. «Ո՛հ, չեմ կարծեր: Ես չեմ վստահիր իրեն»:

Լիսա, դուն պէտք չունիս ճոնին վստահելու, պատասխանեց Ան: Դուն միայն Ինծի պէտք ունիս վստահելու: Դուն չես կարծեր, որ ճոնը լաւ գործ կ'ընէ իբրեւ դեկավարը այս փան: Այնպէս կը զգաս, որ դուն աւելի լաւ գործ կրնաս ընել: Այն ճնշումը եւ անհանդարտութիւնը, զորս կ'ունենաս, կշիռքը եւ ճնշումն են փան մը գլուխը ըլլալու: Անիկա լուծ մըն է քեզի համար, մինչ՝ վերարկու մը (կամ պաշտօն մը) ամուսինիդ համար: Վարձ գէշ զանիկա:

Լիսան անմիջապէս հասկցաւ ըսուածը: Աստուած, եւ ոչ իշխելու ծարաւը ունեցող տղամարդ մըն էր իրեն ըսողը, որ ենթարկուի իր ամուսինին: Մեր տան դեկավարութիւնը ճնշիչ էր իրեն համար, որովհետեւ ատիկա իր պաշտօնը չէր կատարելու: Աստուած արտօնած էր իրեն, որ ունենար փորձառութիւնը պատասխանատուութեան բեռը կրելու՝ առանց զանիկա կրելու օծութեան կամ շնորհքին, որ Ան կու տայ ամուսինին: Ան այդ լոգանքէն դուրս ելաւ լալով եւ ներողութիւն խնդրելով: Ան մտաւ այն խաղաղութեան եւ հանգիստին մէջ, ուր ես մտած էի քանի մը ամիս առաջ, եւ մեր տունը՝ տարիներէ ի վեր առաջին անգամ ըլլալով, իրական ներդաշնակութիւն ունեցաւ:

Սուրբ Հոգիին խօսքը այդ գիշեր իրեն օգնեց, որ անդրադառնայ, թե Աստուած չ'ըսեր՝ «Ենթարկուեցէք միայն եթէ կը համաձայնիք կամ կը սիրէք ձեր ամուսինին ընտրութիւնները կամ որոշումները»: Ան անդրադարձաւ, որ եթէ ենթարկուէր Աստուծոյ պատուէրին՝ Անոր պաշտպանութիւնը պիտի ունենար: Այդ ժամանակէն մինչեւ հիմա ես սխալներ գործեցի: Անշուշտ: Շատ: Սակայն Աստուած պաշտպանեց Լիսան այդ սխալներուս ատեն եւ խաղաղութիւն տուաւ իրեն: Երբ ան կ'ենթարկուի, Աստուծոյ պաշտպանութիւնը կ'ունենայ, անկախ անկէ, թէ ինչ անիմաստուն որոշումներ իր ամուսինը կու տայ:

Անխոհեմ կամ Չփրկուած Ամուսիններ

Իրենց ամուսիններուն ենթարկուելու կիներուն տրուած այդ պատուէրը միայն չէ տրուած անոնց, որոնք հաւատացեալ ամուսիններ ունին: Պետրոս ըսաւ. «Դուք ալ, կիներ, հնազանդ եղէք ձեր ամուսիններուն, որպէսզի նոյնիսկ եթէ ձեր ամուսիններէն ոմանք Աստուծոյ խօսքին հաւատացող չեն՝ հաւատքի գան առանց խօսքի, պարզապէս դիտելով կիներուդ ընթացքը, ձեր պարկեշտ եւ երկիւղած կենցաղը» (Ա.Պտ 3.1-2):

Նախ եւ առաջ քննենք «Դուք ալ, կիներ» եզրը: Պետրոս նոր աւարտած էր իշխանութիւններու կողմէ անարդար վարմունքի արժանանալու պարագային ինչ ընելու նիւթը: (Ասոր մասին խօսեցանք 13-րդ գլուխին մէջ:) Եւ յետոյ անմիջապէս նոյնանման թելադրանքներ տուաւ կիներուն ինչ կը վերաբերի իրենց ամուսիններուն: Եթէ այդ երկու թելադրանքները իրարու քով ըլլային, այսպէս պիտի կարդայինք.

Ծառաներ, ամենայն երկիւղածութեամբ հնազանդեցէք ձեր տէրերուն. ո՛չ միայն անոնց՝ որոնք ազնիւ են ու բարի,

այլ նաեւ անոնց՝ որոնք անգութ են: Որովհետեւ Աստուծոյ մէկ շնորհքն է, երբ Աստուծոյ կամքը գիտնալով՝ մարդ կը համբերէ անիրաւ տեղ կրած նեղութիւններուն [...] Դուք ալ, կիներ, հնազանդ եղէք ձեր ամուսիններուն, որպէսզի նոյնիսկ եթէ ձեր ամուսիններէն ոմանք Աստուծոյ խօսքին հաւատացող չեն՝ հաւատքի գան: (Ա.Պտ 2.18-19, 3.1)

Ատիկա տխուր իրականութիւնն է: Ես հանդիպած եմ կարգ մը «հաւատացեալ» ամուսիններու, որոնք աւելի դաժան կամ կոպիտ են քան ոչ-հաւատացեալները: Սակայն իբրեւ ընդհանուր օրէնք մը, ենթարկուելու կամ հնազանդ ըլլալու համար ամէնէն դժուար ամուսինները չփրկուածներն են: Դարձեալ կ'ուզեմ շեշտել, որ եթէ ամուսին մը իր կնոջ թելադրէ, որ Աստուծոյ խօսքին հակառակ ուղղութեամբ ընթանայ, կիներ պէտք չէ հնազանդի անոր թելադրանքին, բայց պէտք է ենթարկուած վարմունք ունենայ:

Պետրոս կը շարունակէ, ըսելով, թէ՛ ինչպէս այդ ենթարկուած վարմունքը ամէնէն հզօր վկայութիւնը պիտի ըլլայ ամուսինին, նոյնիսկ աւելի քան քարոզուած խօսքը: Կը ճանչնամ կին մը, որուն ամուսինը հաւատացեալ չէր: Տարիներ ան քարոզած էր անոր: Անոր աշխատանքի սեղանին վրայ հոգեւոր թերթիկներ կը դնէր, անկողինին քով եւ անոր նախասիրած նստելու տեղին քով՝ Աստուածաշունչ, ինչպէս նաեւ նստասենեակի մէջտեղի սեղանին վրայ՝ Քրիստոնէական ամսաթերթեր: Ան ընթրիքի կը հրաւիրէր զոյգեր, որոնց ամուսինները նուիրուած հաւատացեալներ էին՝ այն յոյսով, որ կը վկայեն ամուսինին:

Օր մը Աստուած խօսեցաւ իրեն, ըսելով. *Տակաւին ճիշտապէս ժամանակ արգելք պիտի ըլլաս քու ամուսինիդ դարձի գալուն:*

Յնցուած, հարցուց. «Ես իմ ամուսինիս դարձին արգելք կ'ըլլամ: Ինչպէս»:

Տէրը իրեն ցոյց տուաւ, որ այնքան ատեն, որ ան իր ամուսինին կը քարոզէր եւ կեղծ պայմաններ կը ստեղծէր, չէր ըներ այն ինչ որ Աստուած թելադրած էր իրեն: Աստուած անոր ցոյց տուաւ Ա.Պետրոսի վերի համարը եւ ըսաւ. *Վերցնիր թերթիկները, ամսաթերթերը եւ Աստուածաշունչերը, եւ այլեւս ամուսինիդ քարոզելու նպատակով զոյգեր ընթրիքի մի՛ հրաւիրեր:*

Այդ կինը ինձի ըսաւ. «Ճոն, ատկէ ետք ես պարզապէս սիրեցի գինք եւ ենթարկուեցայ իրեն, եւ քանի մը ամիս ետք, ամուսինս կեանքը Յիսուսի տուաւ»: Ես պատահած է, որ գիշերեմ իրենց տունը, եւ գիտեմ, որ այդ մարդը շատ կը սիրէ Տէրը:

Եթէ մենք պարզապէս հաւատանք, վստահինք եւ հնազանդինք Աստուծոյ խօսքին ըսածներուն, հրաշքներ պիտի տեսնենք մեր տուներուն մէջ եւ պիտի վայելենք խաղաղութիւն, որ հասկացողութենէ վեր է: Չեմ կրնար պէտք եղածին չափ շեշտել այն իրականութիւնը, որ Աստուած գրել տուած է այդ խօսքերը եւ ոչ կառավարելու ծարաւ, խարդախող, իշխանութեան ծարաւ առաջնորդներ: Աստուած այդ խօսքերը խօսեցաւ մեր ապահովութեան եւ պաշտպանութեան համար, եւ անոնցմէ ոմանք պիտի տեսնենք յաջորդ գլուխին մէջ: Դժուարութիւններու մէջ եղած ատեն կրնանք վստահիլ Անոր խոստումին. «Քանի որ ձեզի համար մտածած ծրագիրներս գիտեմ,- կը պատգամէ Տէրը.- ո՛չ թէ չարիքի, ձեզի ապագայ մը ու յոյս մը տալու համար» (Եր 29.11):

Ընկերային Իշխանութիւն

Գործի եւ դպրոցի մարզերուն մէջ ինչպէս վարուելու մասին եւս որոշակի թելադրանքներ տրուած են մեզի Նոր Կտակարանին մէջ: Պօղոս կ'ըսէ.

[Ըսէ՛] ստրուկներուն, որ ենթարկուած ըլլան իրենց տէրերուն, ըլլան հաճելի անոնց եւ գոհ ձգեն զանոնք

ամէն ձեւով: [Զգուշացոր անոնց, որ] չհակաճառեն կամ չհակասեն, ոչ ալ գողնան՝ պզտիկ բաներ իւրացնելով, այլ՝ թող փաստեն իրենց իրապէս հաւատարիմ եւ ամբողջովին վստահելի ըլլալը, որպէսզի ամէն բանի մէջ ըլլան օրինակ եւ պատիւ բերեն այն ուսուցումին [որ է] Աստուծմէ՝ մեր Փրկիչէն եւ Աստուծոյ՝ մեր Փրկիչին մասին: (Տիտ 2.9-10)⁴⁰

Ինծի համար մեծ ուրախութիւն է միշտ երբ անհաւատ գործատէրեր, տնօրէններ կամ ընկերութիւններու տէրեր ինծի կ'ըսեն, թէ ինչպէս Յիսուսը կը տեսնեն իրենց պաշտօնեաներուն կամ գործաւորներուն մէջ, ոչ որովհետեւ անոնք կը քարոզեն, այլ՝ որովհետեւ անոնք ցոյց կու տան Անոր նկարագիրը դժուար պայմաններու մէջ ինչպէս նաեւ գործի մէջ իրենց պարկեշտութեան մէջ: Անոնք ինծի ըսած են. «Անոնք բնաւ չեն վիճաբանիր, տրտնջեր կամ հակաճառեր» կամ՝ «Անոնք միւս պաշտօնեաներէն/գործաւորներէն աւելի կ'աշխատին» կամ՝ «Անոնք ամէնէն անկեղծ եւ վստահելի պաշտօնեաներն/գործաւորներն են, որ ունիմ»: Այդ մարդիկը բաց կ'ըլլան լսելու ինչ որ կ'ըսեմ իրենց Յիսուսի մասին՝ իրենց պաշտօնեաներուն/գործաւորներուն վկայութեան շնորհիւ:

Սակայն ես հակառակին ալ փորձառութիւնը ունեցեր եմ: Առիթով մը օդանաւին մէջ նստայ մարդու մը քովը, որ մեծ քաղաքի մը մէջ *թաքսի* երկրորդ ամէնէն մեծ ընկերութեան տէրն էր: Հաճելի խօսակցութիւն մը կ'ունենայինք մինչեւ որ գիտցաւ, որ քարոզիչ եմ: Ատկէ ետք ան կաշկանդուեցաւ եւ այլեւս նոյնքան ազատ չէր խօսեր հետս: Քանի որ մենք արդէն լաւ յարաբերութիւն մը հաստատած էինք, դիւրին էր ինծի համար, որ իրեն հարցնէի, թէ ինչո՞ր իր վարմունքը փոխուեցաւ:

Ան ըսաւ. «Լաւ, պիտի ըսեմ քեզի: Կին մը կար, որ մեր ընկերութեան մէջ կ'աշխատէր: Ան այդ “վերստին ծնած

40 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիլիֆայր Պայպըլ (AMP)* տարբերակէն

Քրիստոնեաներ”էն էր: Ան գրասենեակին մէջ բոլորին կը քարոզէր, ինչ որ արգելք կ’ըլլար իր եւ ուրիշներու գործի արտադրողականութեան: Երբ ձգեց գործը, իրեն հետ տարաբաններ, որոնք իրը չէին, ինչպէս նաեւ ինծի ձգեց ութ հազար տոլարի հեռաձայնի հաշուեցոյց մը, որ արդիւնքն էր Գերմանիա գտնուող իր որդիին հետ իր խօսակցութիւններուն»:

Սիրտս կոտրուեցաւ: Այդ գրասենեակին մէջ բոլորը կը դժկամէին Աստուծոյ Խօսքին մասին լսելու՝ անոր այդ անհնազանդութեան եւ գողութեան պատճառով: Այդ պատճառով Պօղոս ըսաւ. «[Զգուշացնուի անոնց, որ] չհակաճառեն կամ չհակասեն, ոչ ալ գողնան՝ պզտիկ բաներ իրացնելով, այլ՝ թող փաստեն իրենց իրապէս հաւատարիմ եւ ամբողջովին վստահելի ըլլալը»: Երբ կ’ենթարկուինք, պարկեշտօրէն կ’աշխատինք եւ կը հնազանդինք մեր գործատէրերուն/տնօրէններուն եւ դպրոցներուն օրէնքներուն եւ կանոններուն, մենք վկաները եղած կ’ըլլանք մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքին:

Ուրիշ տեղ մը Պօղոս ըսաւ.

Ծառաներ, ամէն բանի մէջ հնազանդեցէք անոնց, որոնք ձեր երկրաւոր տէրերն են, ոչ միայն երբ անոնց աչքերը ձեր վրան են՝ ինչպէս մարդոց հաճութիւնը փնտռողները կ’ընեն, այլ՝ նպատակի պարզութեամբ [ձեր ամբողջ սրտով], Տիրոջ հանդէպ ձեր ականաճանքին պատճառով եւ իբրեւ անկեղծ արտայայտութիւն Անոր հանդէպ ձեր նուիրումին: Ինչ ալ ըլլայ ձեր գործը՝ աշխատեցէք սրտանց (ձեր հոգիէն)՝ իբրեւ [բան մը, որ կ’ընէք] Տիրոջ համար, ոչ թէ մարդոց: (Կղ 3.22-23)⁴¹

Նկատի առ «Ամէն բանի մէջ հնազանդեցէք» եզրը:

41 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիլիֆայր Պայպըլ* (AMP) տարբերակէն

Կարելուր չէ, թէ որքան անխոհեմ կը թուի գործատէրդ/ տնօրէնդ կամ ուսուցիչդ: Անոր հանդէպ քու հնազանդութիւնդ իրականութեան մէջ Տիրոջ հանդէպ հնազանդութիւնդ է:

Պօղոս շարունակեց, ըսելով. «Գիտնալով [ամենայն վստահութեամբ], որ Տիրոջմէ [ոչ մարդոցմէ] պիտի ստանաք ժառանգութիւնը, որ ձեր [իրական] վարձատրութիւնն է: [Անոր, որուն] իրապէս կը ծառայէք Տէր Քրիստոսն [է] (Մեսիային)» (Կղ 3.24)⁴²: Եթէ այդ կինը գիտնար, որ իրականութեան մէջ Տիրոջմէ կը գողնար, երբեք պիտի չընէր այդպիսի բան մը: Անոր կը պակսէր հասկացողութիւն եւ Տիրոջ վախը:

Պօղոս կը շարունակէ յաջորդ համարին մէջ. «Բայց ան, որ սխալ կը գործէ իրեն պիտի հատուցանուի իր ըրածին համար, եւ չկայ կողմնակցութիւն կամ աջառութիւն»: Կը սիրեմ *Տը Մասէճ* տարբերակին ըսած ձեւը. «Դաժան ծառան, որ անպիտան գործեր կ'ընէ՝ պատասխանատուութեան պիտի կանչուի: Քրիստոնեայ ըլլալը չի գոցեր վատ գործերուն վրան»:

Կինը շատ հաւանաբար պատասխանատուութեան պիտի չկանչուի *թաքսիի* ընկերութեան տիրոջ կամ քաղաքային կառավարութեան կողմէ. փոխարէնը, ան պատասխանատուութեան պիտի կանչուի Տիրոջ կողմէ եւ պիտի կանչուի հաշիւ տալու Քրիստոսի դատաստանի աթոռին առջեւ. «Ուստի, այս մարմինին մէջ մնանք թէ հեռանանք, մեր միակ ձգտումն է՝ Աստուծոյ հաճելի ըլլալ: Որովհետեւ բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք, որպէսզի իւրաքանչիւրը իր մարմինով ընդունի հատուցումը երկրի վրայ իր կատարած բարի կամ չար գործերուն» (Բ. Կր 5.9-10):

Ընդհանուր Հարցեր

Շատեր կ'ըսեն, թէ մտիկ պիտի չընեն ղեկավարներու, որոնք չեն ապրիր այն ինչ որ կը քարոզեն: Սակայն արդեօք

42 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անիլիֆայր Պայպըլ* (AMP) տարբերակէն

այդ մտայնությունը կու գայ հնազանդութենէ կամ բնական տրամաբանութենէ: Կը կարդանք. «Ապա Յիսուս ըսաւ բազմութիւններուն եւ Իր աշակերտներուն. դպիրներն ու փարիսեցիները նստած են Մովսէսի [իշխանութեան] աթոռին: Ուստի պահեցէք եւ գործադրեցէք ամէն ինչ որ անոնք կ'ըսեն ձեզի. բայց մի՛ ընէք այն ինչ որ անոնք կ'ընեն, որովհետեւ կը քարոզեն, բայց չեն գործադրեր» (Մտ 23.1-3)⁴³:

Յիսուս պատուիրեց, որ ենթարկուինք նոյնիսկ փտած դեկավարներու, որոնք չեն գործադրեր այն ինչ որ կը քարոզեն: Ան բազմութիւններուն մատնանշեց իրենց վրայ եղող իշխանությունը, եւ ոչ անոնց անձնական կեանքերը: Ուսչման Լի գրեց.

Ինչ *ոհսք* առած է Աստուած իշխանութիւնները հիմնելով: Ինչ կորուստ պիտի կրէ Աստուած եթէ Իր յանձնարարած իշխանութիւնները սխալ կերպով ներկայացնեն զինք: Սակայն անվեհեր կերպով Աստուած հաստատած է իշխանութիւնները: Շատ աւելի դիրին է մեզի համար, որ անվախօրէն հնազանդինք իշխանութիւններուն քան որ Աստուած հիմնէ զանոնք: Ուրեմն արդեօք չենք կրնար հնազանդիլ անոնց առանց վարանելու, քանի որ Աստուած Ինք չէ վախցած մարդոց իշխանութիւն վստահելու: Ճիշդ ինչպէս Աստուած համարձակօրէն հաստատած է իշխանութիւնը, եկէք մենք ալ քաջաբար հնազանդինք անոնց: Եթէ բան մը սխալ ընթանայ, յանցանքը մերը չէ, այլ՝ իշխանութիւններունը, որովհետեւ Տէրը կը յայտարարէ. «Ամէն մարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց» (Հո 13.1):

Հնազանդողները միայն պէտք ունին հնազանդելու. Տէրը մեզ պատասխանատու պիտի չհամարէ որեւէ

43 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիֆայր Պայպլը* (AMP) տարբերակէն

սխալ հնազանդութեան համար, փոխարէնը Ան պատասխանատու պիտի համարէ իշխանութիւնը իր սխալ արարքին համար: Անհնազանդութիւնը, սակայն, ըմբոստութիւն է, եւ ատոր համար իշխանութեան տակ եղողը Աստուծոյ պատասխան պիտի տայ: (*Հոգեւոր Իշխանութիւն*, էջ 69-71)

Ատիկա գրուած էր մարդու մը կողմէ, որ անարդար վարմունքի ենթարկուած էր իշխանութիւններու կողմէ: 1930-ական եւ 1940-ական թուականներուն ան օժանդակեց Չինաստանի մէջ տեղական եկեղեցիներու հիմնադրութեան՝ ամբողջովին անկախ օտար միսիոնարական կազմակերպութիւններէ, ինչպէս նաեւ կարեւոր դեր ունեցաւ շատեր Աստուծոյ Թագաւորութեան մէջ բերելու առումով: Անոր գործունէութիւնը զայրացուց իշխանութիւնները, եւ ան ձերբակալուեցաւ 1952-ին՝ յանցաւոր գտնուելով մեծ թիւով սխալ ամբաստանութիւններու համար: Ան բանտարկուեցաւ մինչեւ իր մահը, որ պատահեցաւ 1972-ին: Սակայն Տիրոջ հանդէպ անոր մեծարական սէրը բանտին մէջ վկայութիւն եղաւ շատերու, եւ շատեր փրկուեցան անոր վկայութեամբ: Անոր գրութիւնները տակաւին կը խօսին բազմութիւններուն այսքան երկար տարիներ ետք:

Ճանչնալ Իշխանութիւնը

Այս ամբողջ պատգամին ընթացքին ես մատնանշած եմ, թէ ինչպէս կրնանք ճանչնալ նշանակուած իշխանութիւնները, բայց մինչ կ'եզրափակեմ այս գլուխը, նպատակայարմար կ'ըլլայ շեշտել մինչեւ հիմա ըսուածները: Քաղաքային եւ ընկերային մարզերու մէջ, օրինական իշխանութիւնը ճանչնալը դժուար չէ: Կը կարդանք. «Ենթարկուող եղէք ամէն մարդկային հիմնարկութեան եւ իշխանութեան՝ Տիրոջ սիրոյն»

(Ա.Պտ 2.13)⁴⁴: Կը ճանչնանք հանրային պաշտօնեաները իբրեւ անոնք, որոնք երդում կու տան պաշտօն մը ստանձնելու համար կամ կը վարձուին իբրեւ կառավարական պաշտօնեաներ: Ապա կան ընկերութիւններու ղեկավարները կամ ուսումնական հիմնարկութիւններու մէջ գործի առնուած ուսուցիչները եւ տնօրէնները, եւ գիտէնք, որ անոնց իշխանութիւնը վաւերական է:

Տան մէջ իշխանութիւնը դիւրութեամբ կը ճանչցուի: Երբ կին մը կ'ամուսնանայ տղամարդու մը հետ, ան կ'ըլլայ անոր իշխանութեան, պաշտպանութեան եւ հոգատարութեան տակ: Երբ զաւակ մը կը ծնի ընտանիքի մը մէջ, ծնողները անոր իշխանութիւնն են: Եթէ զաւակ մը որդեգրուած է, ան պէտք է պատուէ իր ծնողները այնպէս որ կարծես անոնք իր կենսաբանական ծնողները ըլլային: Որբանոցի կամ մանուկներու հոգատարութեան կեդրոնի մը մէջ եղող պզտիկ մը պէտք է յարգէ պատասխանատուները՝ իբրեւ իր վրայ իշխանութիւն:

Օրինական իշխանութիւնը զանազանելը քիչ մը անելի բարդ է եկեղեցիին մէջ: Աստուածաշունչը կը զգուշացնէ եկեղեցւոյ մէջ գտնուող սուտ առաքեալներու, մարգարէներու եւ ղեկավարներու դէմ. մենք պէտք չէ անոնց ենթարկուինք: Պօղոս ըսաւ. «Բայց վայրկեան մը իսկ տեղի չտուինք անոնց» (Գղ 2.5): Սուտ ղեկավարները կրնան երեւիլ երկու ձեւերով: Առաջին՝ կ'ուսուցանեն վարդապետութիւն մը, որ չի համապատասխաներ Աստուծոյ Խօսքին: Պօղոսի վերը ըսածին պարունակին մէջ, դարձեալ Պօղոս գրեց. «Բայց ով որ մեր քարոզածէն տարբեր աստարան մը քարոզէ ձեզի, ով ալ ըլլայ՝ նոյնիսկ մենք կամ երկինքէն հրեշտակ մը՝ անիծեալ ըլլայ» (Գղ 1.8): Այդ պատճառով Պօղոս պիտի չպատուէր այդ ձեւի ղեկավարները՝ ենթարկուելով անոնց:

44 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիֆայր Պայպըլ* (AMP) տարբերակէն

Երկրորդ՝ սուտ ղեկավարներ եկեղեցիին մէջ կը բարձրանան՝ իրենք զիրենք դիրքերու վրայ նշանակելով: Աստուծոյ նշանակումը կը կատարուի Սուրբ Հոգիին միջոցաւ եւ կը հաստատուի իշխանութեան վրայ եղող երէցներուն կողմէ, որոնք մօտէն հետեւած կ'ըլլան թեկնածուին կեանքին: Հին Կտակարանին մէջ, այդ գործընթացը կը տեսնենք Յեսուի կարգումին մէջ: Աստուած ըսաւ Մովսէսին.

Ա՛ն քեզի Նաւէի որդին՝ Յեսուն, որուն վրայ Հոգի կայ, եւ դիր ձեռքդ անոր վրայ: Կայնեցնոր զայն Եղիազար քահանային ու ամբողջ համայնքին առջեւ, պատուէր տուր անոր՝ անոնց աչքերուն առջեւ, եւ դիր քու պատիւդ անոր վրայ, որպէսզի Իսրայէլի որդիներուն ամբողջ համայնքը անոր հնազանդի: (Թւ 27.18-20)

Աստուած ընտրեց Յեսուն, բայց Իր ընտրութիւնը հաստատեց գոյութիւն ունեցող նշանակուած իշխանութիւններուն միջոցաւ՝ Մովսէսի եւ Եղիազարի: Այդ մարդիկը տարիներ դիտած էին Յեսուի կեանքը: Այդ ձեւը կ'երեւի Նոր Կտակարանին մէջ եւս (կարդա՛ Գրծ 13.1-4):

Պօղոս պնդեց. «Իսկապէս ընտրուածը ան չէ՛, որ ինքզինք կը գովէ, այլ ան՝ որ Տիրոջ կողմէ կը գովուի» (Բ.Կր 10.18): Իրենք զիրենք իշխանութեան վրայ նշանակածներու ենթարկուիլը վտանգաւոր քայլ մըն է: Աստուած միշտ պիտի հաստատէ Իր նշանակումները եկեղեցիին առջեւ, ուր թեկնածուները հաւատարմօրէն ծառայած են: Յիսուս յանդիմանեց Թիասիորի հաւատացեալները Եզաբէլ կոչուած ինքզինք մարգարէութիւն հռչակած մէկուն ուսուցումներուն եւ կեղծ իշխանութեան ենթարկուելնուն համար (տես Յյտ 2.20-25): Ես գրած եմ ամբողջ գիրք մը իրենք զիրենք պաշտօնի վրայ նշանակած ծառայողները ինչպէս ճանչնալու մասին՝ «Այսպէս կ'ըսէ Տէրը» («*Suu Utjթ Sr Lորտ*») վերնագիրով, որուն կրնաք դիմել՝ այս

նիւթին մասին յաւելեալ գիտութիւն ձեռք ձգելու համար: Անիկա կը խօսի հոգեւոր իշխանութիւնը սխալ ձեւով գործածելու ինչպէս նաեւ կեղծ իշխանութեան մասին:

Երբ մենք իրապէս փրկուած ենք եւ Աստուծոյ կամքը կը փնտռենք, կը ճանչնանք օրինական իշխանութիւնը եկեղեցիին մէջ: Յիսուս ըսաւ. «Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ՝ թէ Աստուծմէ՛ է այս վարդապետութիւնը, թէ ես իմ հեղինակութեամբս կը խօսիմ» (Յհ 7.17): Բանալին կը գտնուի հետեւեալ բառերուն մէջ. «Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել»: Երբ մեր սիրտը Աստուծոյ կամքը կը փնտռէ, Ան մեզի կու տայ զանազանութիւն Սուրբ Հոգիին միջոցաւ: Ինչպէս Յովհաննէս հաստատեց. «Սակայն դուք Սուրբ Հոգիին պարգեւը ունիք, որովհետեւ անով էր, որ ձեզ օծեց Սուրբը, Քրիստոս, եւ դուք գիտէք ամէն բան» (Ա.Յհ 2.20):

Ուաչման Նի գրեց. «Եթէ մենք իրապէս սորվինք ինչպէս հնազանդիլ Աստուծոյ, բնաւ հարց պիտի չունենանք ճանչնալու, թէ որո՞ն վրան հանգչած է Աստուծոյ իշխանութիւնը» (*Հոգեւոր Իշխանութիւն*, էջ 62): Ճանչնալ զԱստուած կը նշանակէ՝ ճանչնալ իշխանութիւն, որովհետեւ Աստուած եւ Անոր իշխանութիւնը անբաժանելի են:

Աստուած կը վարձատրէ անոնք, որոնք ժրաջանօրէն կը փնտռեն զԻնք եւ կը հնազանդին Իրեն: Յաջորդ գլուխին մէջ պիտի տեսնենք իշխանութեան ենթարկուելու մեծ օգուտներէն քանի մը հատը:

ՏԱՍՆԵՕԹՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄԵԾ ՀԱԻԱՏՔ

*Ողբան մեծ ըլլայ մեր ենթարկուելու մակարդակը,
այդքան մեծ կ'ըլլայ մեր հաւատքը:*

Այս վերջին գլուխին մէջ պիտի խօսինք «պատուաստ» առնելու օգուտներուն մասին, այլ խօսքով՝ այն հսկայական վարձատրութիւններուն եւ օրհնութիւններուն, որոնք կ'ըլլան կեանքերուն մէջ անոնց, որոնք կու գան ծածկոյթի տակ: Հատորներ կրնան գրուիլ ատոր օգուտներուն մասին միայն: Հակառակ անոր որ մենք միայն քանի մը հատին մասին պիտի խօսինք, կրնաս ւաւելին յայտնաբերել քու անձնական ուսումնասիրութիւններուդ եւ Քրիստոսի մէջ փորձառութիւններուդ միջոցաւ:

Տէր, Աւելցուր Մեր Հաւատքը

Քանի մը տարի առաջ գրասենեակ գացի առաւօտեան ժամը 5:30-ին՝ աղօթելու համար, ինչպէս ըրած էի շատ մը առտուններ ատկէ առաջ: Սակայն նախքան որ կարենամ

սկսիլ, լսեցի Սուրբ Հոգին մէջէս կ'ըսէր. *Բայց Ղուկասի 17-րդ գլուխը եւ սկսէ՛ կարդալ 5-րդ համարէն:*

Խանդավառօրէն բացի այդ հատուածը եւ նկատեցի, որ շատ ծանօթ էր ինծի: Նոյնիսկ պատգամներ քարոզած էի անկէ առկէ առաջ, բայց ատիկա արգելք չեղաւ իմ խանդավառութեանս: Անցեալի փորձառութենէս գիտէի, որ երբ Աստուած ինծի կ'ըսէր, որ կարդամ որոշ հատուածներ, ուրեմն անկէ պիտի սորվէի բան մը, որ չէի նկատած առկէ առաջ: Նայինք այդ համարին:

Առաքեալները Տիրոջմէ խնդրեցին, որ իրենց հաւատքը ւաւելցնէր (տե՛ս Ղկ 17.5): Նախքան որ շարունակենք խօսիլ անոր մասին, թէ Ան ի՛նչ ցոյց տուաւ ինծի այդ առտու, կ'ուզեմ մատնանշել, թէ այդ մարդիկը ինչո՛ւ աղաղակեցին, որ իրենց հաւատքը ւաւելնայ: Արդեօք Յիսուս մեռելի մը յարութիւն տուած էր: Արդեօք Ան հինգ հազմորը կերակրած էր քանի մը հացով եւ ձուկով: Կամ հանդարտեցուցած էր փոթորկոտ ծովը՝ պարզապէս խօսելով անոր: Պատասխաններն են՝ ոչ, ոչ, ոչ... Յիսուս այդ մարդոց ըսած էր՝ «Զգուշացէք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՛ յանդիմանէ՛ զինք, եւ եթէ զղջայ՝ ներէ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի դէմ մեղանչէ եւ եօթն անգամ քեզի գալով ըսէ՛ “Կը զղջամ”, պէտք է ներես իրեն» (հմր 3-4):

Մեծ զօրութիւն ցոյց տուող հրաշքներ չէին ներշնչած ւաւելի մեծ հաւատք ունենալու անոնց աղաղակը: Այլ՝ իրենց հանդէպ սխալածներուն ներելու պարզ պատուէր մը: Այդ մարդիկը կ'ապրէին Օրէնքին տակ եւ վարժուած էին իրենց դէմ գործուած սխալի մը հանդէպ «աչքի դէմ աչք» եւ «ակոյաի դէմ ակոյայ» մտայնութեամբ մօտենալու: Յիսուս իրենց կը թելադրէր, որ քալեն ամբողջովին անտրամաբանական թուացող ձեւով մը: Աստուծոյ նկարագիրով ապրելու պատուէրը ցնցեց զիրենք: Ինչպէս կրնային հնազանդիլ այդպիսի դժուար պատուէրի մը: Պատասխանը՝ «Աւելցնիր մեր հաւատքը»: Այդ մարդիկը

գիտեին, որ հնազանդութիւնը եւ հաւատքը ուղղակիօրէն կապուած էին իրարու, բան մը, զոր շուտով պիտի սկսէի տեսնել ամբողջովին նոր լոյսի մը տակ:

Աւելի մեծ հաւատքի անոնց աղաղակը լսելով, Յիսուս հետեւեալ առակը ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկի մը չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին. “Արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ”, պիտի հնազանդի ձեզի» (հմր 6): Զգացի, որ կը հասկնայի անոր ըսածը: Ես այդ մասին ուսուցումներ ալ տուած էի ինչպէս նաեւ ծանօթ էի Աստուծոյ հանդէպ հաւատք ունենալու Յիսուսի ուսուցումին, եւ թէ՛ եթէ ըսենք լերան, որ ելլէ եւ ծովը նետտուի եւ չկասկածինք մեր սիրտին մէջ, կ’ունենանք այն ինչ որ կ’ըսենք (տես Մր 11.22-24): Ասիկա ալ տարբեր չէր ատկէ: Ան պարզապէս թթենիի մը օրինակը կը գործածէր փոխան լերան:

Նաեւ այս հատուածին մէջ կը պարզուի, որ հաւատքը կը տրուի ամէն հաւատացեալի՝ իբրեւ մանանեխի հատիկ մը: Անիկա հունտ ցանելու եւ հունձք հաւաքելու Թագաւորութեան սկզբունքն է. «Աստուծոյ Թագաւորութիւնը այնպէս է, որպէս թէ մարդ մը հողին մէջ հունտ ցանէ» (Մր 4.26)⁴⁵: Երբ մենք փրկուեցանք, մեզի շնորհուեցաւ հաւատքի չափ մը (տես Հռ 12.3): Այդ հաւատքը հունտի ձեւով է, եւ մեր պատասխանատուութիւնն է մշակել եւ աճեցնել զանիկա: Ինչպէս կ’աճի անիկա: Պատասխանը՝ յառաջիկային:

Ծառայի մը Համար Կերակուր Ուտելու Ճիշդ Ժամանակը

Ուշադրութեամբ կարդացի, քանի որ յաջորդ չորս համարները միշտ շփոթի կը մատնէին զիս: Շուտով պիտի տեսնէի, որ Յիսուս Իր աշակերտներուն իրենց հաւատքը

45 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Երբայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

աւելցնելու սոսկ բանաձեւեր չէր տար: Ան զանոնք կ'առաջնորդէր կեանքի ձեւի մը, որ ուղղակիօրէն կապ ունէր իշխանութիւններու հնազանդելու հետ: Մտիկ ըրէ անոր պատմած առակը.

Ենթադրենք, որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ. «Անմիջապէս գնա՛, ճաշդ կեր»: Բնականաբար ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. «Ընթրիքս պատրաստէ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինձի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ, անկէ ետք կրնաս ուտել ու խմել»: Կը կարծէ՞ք, որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեմ կարծեր: (Ղկ 17.7-9)

Ես միշտ հարց կու տայի, թէ ինչո՞ւ Տէրը, ըստ երեւոյթին, նիւթը կը փոխէ: Ան ծառեր արմատախիլ ընող հաւատքի մասին խօսելէ կ'անցնի ծառայի մը վարուելագիտութեան: Պարզապէս չէի հասկնար... բայց այդ առտու հասկցայ:

Այդ համարները դարձեալ դանդաղօրէն կարդալով, կեդրոնացայ սիրտիս մէջ՝ ներշնչում մը առնելու համար: Յանկարծ լսեցի. *Ինչ է վերջնական նպատակը ծառայի մը, որ արտիդ մէջ կ'աշխատի: Ինչ է վերջնական նպատակը ծառայի մը, որ հօտին հոգ կը տանի: Ինչ է վերջնական արդիւնքը:*

Մտածեցի պահ մը: Յետոյ հասկցայ. կերակուր դնել տիրոջ սեղանին վրայ: Անդրադարձայ, որ Յիսուս ատիկա կ'ըսէր ինձի: Եթէ ծառային աշխատանքին վերջնական արդիւնքը կերակուր դնել էր իր տիրոջ սեղանին վրայ, ինչո՞ւ ծառան պիտի ուտէր նախքան որ իր տէրը սպասարկուէր: Պէտք չէր, որ նախ իր գործը կատարէր: Անշնչտ: Չաւարտած գործ մը կրնայ նոյնքան վատ ըլլալ որքան չսկսած գործ մը: Ինչո՞ւ պիտի հերկես արտերդ եւ չուտես անոնցմէ: Ինչո՞ւ հոգ պիտի տանիս

հօտերուդ եւ չգործածես անոնց բուրթը, միսը կամ կաթը:

Մէյ մը որ հասկցայ ատիկա, կարդացի Յիսուսի յաջորդ խօսքը. «Դուք ալ նոյնպէս, երբ *կը կատարէք* ինչ որ [*«ամէն ինչ որ»*], ըստ անգլերէն տարբերակին] *հրամայուած է* ձեզի, ըսէք. “Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք”» (Ղկ 17.10, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Ան օրինակը ետ մեզի դարձուց: Մինչ կը կարդայի, *ամէն ինչ որ* եւ *հրամայուած է* եզրերը էջէն դուրս ցատկեցին: Յիսուս իր տիրոջ հանդէպ այդ ծառային հնազանդութիւնը կապեց Աստուծոյ հանդէպ մեր հնազանդութեան հետ: Ատիկա ընելով, ան երեք կարեւոր կէտեր նշեց հաւատքի անւնալուն մասին.

1. Կայ ուղղակի կապ հաւատքի եւ իշխանութեան հանդէպ հնազանդութեան միջեւ:
2. Հաւատքը կ'անւնայ միայն երբ կ'ամբողջացնենք այն ինչ որ պատուիրուած էր մեզի:
3. Ճշմարիտ խոնարհութեան կեցուածք ունենալը չափազանց կարեւոր է:

Իրաքանչիւր կէտի մասին խօսինք՝ աստուածաշնչական մէջբերումներով:

Հաւատքի եւ իշխանութեան Հանէպ Հնազանդութեան Միջեւ Կապը

Առաջին կէտը՝ հաւատքի եւ հնազանդութեան միջեւ գոյութիւն ունեցող ուղղակի կապը կը տեսնենք Աւետարաններուն մէջ զինուորական պաշտօնատարի մը Յիսուսի հետ հանդիպումի պատմութեան մէջ: Յիսուս մտաւ Կափառնաում եւ հռոմայեցի հարիւրապետ մը իրեն մօտեցաւ եւ աղաչեց, որ Յիսուս բժշկէր իր ծառան, որ անդամալոյժ

վիճակի մէջ էր եւ սաստիկ կը տառապէր: «Յիսուս ըսաւ. “Ես կու գամ ու կը բժշկեմ զայն”» (Մտ 8.7):

«Հարիւրապետը պատասխանեց. “Տէ՛ր, ես արժանի չեմ քեզ իմ յարկիս տակ ընդունելու. միայն բան մը ըսէ, եւ ծառաս պիտի առողջանայ”» (Մտ 8.8):

Յիսուս կ’ուզէր եւ պատրաստ էր երթալու մարդուն տունը, բայց այդ զինուորականը ինքզինք անարժան համարեց եւ աղաչեց իրեն, որ չերթայ: Ան Յիսուսէն խնդրեց, որ իր եղած տեղէն հրամանը արձակէր՝ հաւատալով, որ իր ծառան պիտի բժշկուէր: Հարիւրապետը բացատրեց, թէ ինչո՞ւ այդպէս ըսաւ. «Որովհետեւ ես ալ, որպէս իշխանութեան ենթակայ մարդ, ձեռքիս տակ զինուորներ ունիմ. մէկուն կ’ըսեմ՝ “Գնա՛”, եւ կ’երթայ, ուրիշի մը կ’ըսեմ՝ “Եկո՛ւր”, եւ կու գայ. ծառայիս կ’ըսեմ՝ “Այս բանը ըրէ՛”, եւ կը կատարէ» (Մտ 8.9):

Իսօսինք անոր դիրքին մասին: Հռոմայական լէգէոնի մը մէջ կային վեց հազար զինուորներ: Անոր մէջ կային վաթսուն հարիւրապետներ, որոնք հաշուետու էին լէգէոնի հրամանատարին: Իւրաքանչիւր հարիւրապետ հարիւր զինուոր ունէր իր հրամանին տակ:

Հռոմայեցի զինուորականը Յիսուսի ըսաւ, թէ ինք իր զինուորներուն յարգանքը եւ հնազանդութիւնը ունէր, որովհետեւ ինք անձամբ ենթարկուած էր իր հրամանատարին: Հետեւաբար ինք ունէր իր հրամանատարին նեցուկը, որ իր կարգին ունէր Հռոմի իշխանութիւններուն նեցուկը: Աւելի պարզ ձեւով, ան ըսաւ. «Ես իշխանութեան տակ եմ. հետեւաբար՝ իշխանութիւն ունիմ: Ուստի ամբողջ ընելիքս խօսք մը խօսիլն է եւ իմ հրամանիս տակ եղողները անմիջապէս կ’ընդառաջեն հրամանիս»:

Ան ըսաւ. «Որովհետեւ ես ալ...»: Ան ճանչցաւ, որ Յիսուս Աստուծոյ Ծառան էր՝ Անոր Թագաւորութեան իշխանութեան տակ: Հետեւաբար զինուորը գիտցաւ, որ Յիսուս իշխանու-

թիւն ունէր հոգեւոր աշխարհի երկնային մարգերուն մէջ, ճիշդ ինչպէս զինուոր մը իշխանութիւն ունի զինուորական աշխարհին մէջ: Ան հասկցաւ, որ միակ անհրաժեշտ բանը հրամանն էր, եւ հիւանդութիւնը պիտի ենթարկուէր անոր, ճիշդ ինչպէս իր իշխանութեան տակ եղողները ոտքի կը ցատկէին երբ ինք հրաման տար անոնց:

Ինչպէս պատասխանեց Յիսուս: «Յիսուս երբ լսեց, հիացաւ եւ իր հետեւորդներուն ըսաւ. “Կ’ըսեմ ձեզի, թէ նոյնիսկ Իսրայէլի մէջ այսպիսի հաւատք [«մեծ հաւատք», ըստ անգլերէն տարբերակին] ունեցող մը չգտայ”» (Մտ 8.10):

Երկրի վրայ Իր ապրած անլի քան երեսուներեք տարիներուն ընթացքին մեծագոյն հաւատքը, որ Յիսուս գտաւ Յովհաննէս Մկրտիչի կամ Իր մօրը Մարիամի հաւատքը չէր: Զանիկա չգտաւ Իսրայէլի որդիներուն մէջ, որոնք բժշկութիւն կամ հրաշք ստացան: Տասներկուին մէջ ալ չգտաւ: Այլ՝ անիկա գտաւ հռոմայեցի քաղաքացիի մը մէջ, որ զինուոր էր եւ Իսրայէլը նուաճողներէն մէկը: Ինչն էր, որ անոր հաւատքը մեծ կոչեց Յիսուս: *Քանի որ ան կը հասկնար իշխանութեան հնազանդիլը եւ կը քալէր հնազանդութեան մէջ:*

Ա՛յդ էր, որ Յիսուս կ’ուզէր ըսել ինչպէս մեծ հաւատք ունենալու մասին Իր առակին միջոցաւ: Այն իշխանութիւնը, որով կը գործենք ուղղակիօրէն համեմատելի է իշխանութեան մեր ենթարկուելուն կամ հնազանդելուն հետ: *Ո՛րքան մեծ ըլլայ մեր ենթարկուածութիւնը, այդքան մեծ կ’ըլլայ մեր հաւատքը:* Հիմա կապէ՛ ատիկա Յիսուսի ըսածին հետ Իր աշակերտներուն, որոնք ուզեցին, որ իրենց հաւատքը անլցնէ. «Եթէ մանանեխի հատիկի մը չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին. “Արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ”, պիտի հնազանդի ձեզի» (Ղկ 17.6): Ըսաւ, որ ձեր ընելիքը միայն խօսք մը ըսել է եւ ծառը պիտի հնազանդի ձեզի... Որո՞ն կը հնազանդի թթենին: Անոր, որ իրեն տրուած հրամանները կը կատարէ (տես Ղկ 17.9):

Հնազանդութիւն՝ Մինչեւ Գործին Ամբողջացումը

Երկրորդ կարեւոր կէտը, զոր Յիսուս փոխանցեց այն է, որ հաւատքը կ'աւելնայ երբ կ'ամբողջացնենք այն ինչ որ հրամայուած է մեզի, որ ընենք: Անոր ճիշդ բառերն են. «Դուք ալ նոյնպէս, երբ *կը կատարէք* ինչ որ [*«ամէն ինչ որ»*, ըստ անգլերէն տարբերակին] *հրամայուած է ձեզի»* (հմր 10, շեշտադրումը՝ մեր կողմէ): Ծառայ մը պատասխանատու է իր տիրոջ կամքը ամբողջական ձեով կատարելու, ոչ միայն մաս մը: Շատ յաճախ կը սկսինք կատարել պարտականութիւններ, որոնք բնաւ չենք ասարտեր, քանի որ մեր հետաքրքրութիւնը կը կորսնցնենք կամ աշխատանքը եւ տառապանքը կը սաստկանան: Ճշմարիտ եւ հաւատարիմ ծառան կ'ամբողջացնէ յանձն առած պարտականութիւնը՝ իր քան ալ մեծ ըլլան դժուարութիւնները կամ արգելքները: Ան կ'աշխատի արտերուն մէջ, իր աշխատանքին պտուղը կը բերէ իր տիրոջ եւ կերակուրը կը պատրաստէ: Անոր ըրածները կը ներկայացնեն ճշմարիտ հնազանդութիւն:

Աբրահամ կը կոչուի հաւատքի հայրը (տե՛ս Հռ 4.11-12): Աբրահամ զաւակ չունէր: Աստուած անոր յայտնուեցաւ անոր եօթանասունհինգ տարեկանին եւ խոստացաւ իրեն տալ զաւակ մը, որուն միջոցաւ ան պիտի ըլլար հայրը շատ մը ազգերու: Տարիներ սպասելէ եւ հնազանդելէ ետք, Աբրահամ ունեցաւ խոստացուած որդին՝ երբ հարիւր տարեկան էր:

Աստուած արտօնեց Աբրահամին, որ շատ մօտիկ ըլլայ Իսահակի հետ: Երբ անոնց սէրը զօրացաւ, Աստուած փորձեց զայն՝ հրամայելով, որ Իսահակը Մորիա տանի եւ մեռցնէ զայն՝ իբրեւ զոհ: Աստուածաշունչը կը գրէ. «Աբրահամ առտուն՝ կանուխ ելաւ» (Ծն 22.3): Նկատի առ անոր անմիջապէս հնազանդիլը: Ոմանք կը մտածեն օրեր,

ամիսներ եւ երբեմն նոյնիսկ տարիներ՝ փորձելով որոշումի յանգիլ, թէ պիտի հնազանդին Աստուծոյ կամ ոչ: Անոնք չունին սուրբ վախ, որուն պատճառով է, որ չունին մեծ հաւատք: Երբ կը գիտնանք, թէ Աստուած է խօսողը, պէտք է անմիջապէս ընդառաջենք: Սակայն եթէ անիկա կը վերաբերի կեանքի մեծ փոփոխութեան մը, իմաստուն բան ըրած կ'ըլլանք եթէ մեր վրայ եղող իշխանութիւններուն խորհուրդը հարցնենք եւ հաստատում ստանանք:

Երեք օր տեւեց, որ Աբրահամ Մորիա հասնի: Երեք օրուայ ճամբորդութիւնը անոր առիթն էր մտածելու ըլլալիքին մասին: Եթէ ետ պիտի դառնար, այդ ընթացքին արդէն ըրած պիտի ըլլար ատիկա: Բայց ան ետ չդարձաւ: Աբրահամ շարունակեց ճամբան դէպի լեռան գագաթը եւ իր միակ զաւակը կապեց այն խորանին, զոր միասին շինած էին: Ան դանակը վերցուց մեռցնելու համար Իսահակը երբ տիրոջ հրեշտակը կեցուց զինք եւ ըսաւ. «Տղային վրայ ձեռք մի՛ դնէր եւ անոր ոչինչ ըրէ, քանի որ հիմա գիտցայ, թէ Աստուծմէ կը վախնաս» (Ծն 22.12):

Աբրահամ հնազանդեցաւ մինչեւ վերջ: Ան կէս ճամբայէն ետ չդարձաւ նոյնիսկ երբ պահանջուածը հրաժարիլ էր իր կեանքի ամէնէն կարեւոր բանէն՝ Իսահակէն՝ իր ժառանգորդէն, իր յոյսէն, Աստուծոյ կողմէ իր խոստումէն: Իսահակի մահը պիտի ներկայացնէր իր անձնական կեանքէն հրաժարիլը: Աբրահամ փաստեց, որ հնազանդութեան հանդէպ իր լրջութիւնը աւելի կը կշռէր քան խոստումներուն հանդէպ իր փափաքը: Մենք ալ մեր սիրտերուն մէջ պէտք է այդ վճռականութիւնը ունենանք: *Օ՛, Տէր, այդ ձեւի պղամարդոց եւ կիներու սերունդ մը բարձրացնիր այսօր:*

Իբրեւ արդիւնք, Աստուած ըսաւ.

Իմ վրաս երդում ըրի,- կը պատգամէ Տէրը.- որովհետեւ այս բանը ըրիր ու քու որդիդ, քու մէկ հասիկ զաւակդ ինձմէ չխնայեցիր, քեզ մեծապէս պիտի օրհնեմ: Քու

զարմդ մեծապէս պիտի բազմացնեն՝ երկինքի աստղերուն եւ ծովեզերքը եղող աւազին պէս. քու զարմդ իր թշնամիներուն քաղաքներուն պիտի տիրանայ, ու երկրի բոլոր ազգերը քու զարմովդ պիտի օրհնուին, որովհետեւ իմ խօսքս մտիկ ըրիր: (Ծն 22.16-18)

Տեն ինչ խոստացուած էր Աբրահամին, ինչպէս նաեւ անոր սերունդներուն՝ Աբրահամի մինչեւ կատարում հնազանդութեան շնորհիւ: «Քու զարմդ իր թշնամիներուն քաղաքներուն պիտի տիրանայ»: Ինչո՞ւ կը կարծես, որ Յիսուս ըսաւ, թէ դժոխքի դռները պիտի ջաղթեն եկեղեցիին: Հայր Աբրահամի հնազանդութիւնը դուռը բացաւ, որ Յիսուս ատիկա կարենար տալ եկեղեցիին: Անոր հաւատքը կամ հնազանդութիւնը տակաւին կը խօսին:

Հիմա ուշադրութեամբ կարդա՛, թէ եբրայեցիներուն նամակը գրողը ինչ կ'ըսէ Աբրահամի հնազանդութեան մասին.

Եւ մենք կը փափաքինք, որ ձեզմէ իւրաքանչիւրը մինչեւ վերջ [ամբողջացում, կատարում] շարունակէ նոյն փութաջանութիւնը ցուցաբերել, որպէսզի ձեր յոյսը միշտ հաստատուն մնայ: Չենք ուզեր որ թուլնաք. *այլ նմանեցէք անոնց՝ որոնք հաւատարմով եւ համբերութեամբ կը փորձեն Աստուծոյ խոստումը ժառանգել*: Երբ Աստուած այդ խոստումը կ'ընէր Աբրահամին, քանի որ չկար իրմէ գերիվեր մէկը՝ որպէսզի անոր վրայ երդում ընէր՝ ինքն իր անձին վրայ երդում ըրաւ, ըսելով. «Ճշմարիտ որ մեծապէս պիտի օրհնենք քեզ եւ անսահմանօրէն պիտի բազմացնենք քու սերունդներդ»: Եւ Աբրահամ համբերութեամբ սպասեց, եւ այդպէս ալ ստացաւ Աստուծոյ խոստացածը: (Եբր 6.11-15, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Աբրահամ փութաջան էր մինչեւ վերջ: Ան հնազանդեցաւ մինչեւ ամբողջացում կամ կատարում. ան հնազանդօրէն

դիմացաւ: Բաղդատէ՛ անոր հնազանդութեան արարքները Սաւուղի վարմունքին հետ, որուն մասին խօսեցանք նախորդ գլուխներէն մէկուն մէջ: Ան փութաջան էր պատերազմի երթալու եւ ամբողջացուց իրեն հրամայուածներուն աւելի քան 99 տոկոսը: Ան խնայեց լաւագոյնին միայն մէկ մասը, եւ պատճառաբանեց, որ ատիկա Տիրոջ կը պատկանէր: Եզրակացութիւն՝ ան չամբողջացուց այն ինչ որ Աստուած հրամայած էր իրեն: Արտաքնապէս ան մօտեցաւ ամբողջացումի, սակայն անոր անհնազանդութիւնը մեծ գին վճարել տուաւ իրեն: Ան շատ մօտեցաւ «Տիրոջ սեղան»ին կերակուր դնելու, բայց անոր սիրտին շարժառիթները յայտնուեցան այն իրականութեամբ, որ ինքն իրեն համար բաներ պահեց՝ հակառակ անոր որ Աստուած հրամայած էր, որ այդպիսի բան չընէր: Ան հրամանը դարձուց իրեն համար օգտակար բանի մը՝ փոխանակ պատուելու Ան, որուն կը ծառայէր:

Քանի՛ հոգի, Սաւուղի նման, խանդավառութեամբ կը սկսի, ապա երբ հարցերը անհանգիստ եւ դժուար դառնան կամ երբ արդիւնքները ակնկալուածին չափ արագ չգան, անհնազանդ կը գտնուի: Կամ ուրիշներ իրենց համար օգուտ քաղելու առիթ մը կը գտնեն՝ միայն քիչ մը շեղելով իշխանութեան հրամաններէն: Լման ատենը անոնք կ'արդարացնեն իրենց ըրածը կրօնական նպատակներով կամ պատճառաբանութիւններով, ինչպէս Սաւուղ ըրաւ երբ խնայեց լաւագոյն ոչխարները՝ Աստուծոյ զոհելու համար, մինչ ոչխարները պէտք էր, որ կործանուէին, ըստ Տիրոջ խօսքին: Եթէ հնազանդութիւնը ամբողջական չէ, հաւատքը չ'աճիր, այլ՝ կը նուազի:

Աբրահամ խոստումներուն տիրացաւ՝ ճշմարիտ հաւատքի եւ յարատեւութեան միջոցաւ, ինչ որ կը թարգմանուի իբրեւ հնազանդութիւն մինչեւ ամբողջացում: Անոր հաւատքը եւ հնազանդութիւնը անբաժանելի էին, ինչպէս Յակոբոս շատ յստակօրէն մատնանշեց: (Այս վարի համարին մէջ ես գործեր բառը պիտի փոխարինեմ *հնազանդութեան արարքներ* եզրով:)

Հետեւաբար հասկցիր, անմի՛տ մարդ, որ առանց *հնազանդութեան արարքներու՝* հաւատքը անօգուտ է: Աբրահամ, մեր նախահայրը, իր *հնազանդութեան արարքներով* չէ՛ր, որ արդարացաւ, երբ իր զաւակը՝ Իսահակը զոհասեղան բարձրացուց զոհ մատուցանելու համար: Կը տեսնես, թէ հաւատքը անոր *հնազանդութեան արարքներուն* ընկերացաւ, *հնազանդութեան արարքներուն* ընդմէջէն ալ հաւատքը իր կատարելութեան հասաւ: Այսպէս կատարուեցաւ այն՝ ինչ որ Ծննդոց գիրքը կ'ըսէր, թէ «Աբրահամ Աստուծոյ հաւատաց, եւ այդ հաւատքին համար ալ Աստուած զինք արդար համարեց». եւ Աբրահամ Աստուծոյ բարեկամ կոչուեցաւ: Կը տեսնէ՞ք, թէ մարդ իր *հնազանդութեան արարքներով* կ'արդարանայ, եւ ի՛նչ թէ միայն հաւատքով [...] Հետեւաբար, ինչպէս մարմինը առանց հոգիի մեռած է, այնպէս ալ հաւատքը առանց *հնազանդութեան արարքներու* մեռած է: (2.20-24,26, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Վերջին համարին մէջ հաւատքը եւ հնազանդութեան արարքները կը բաղդատուին մարդուն մարմինին եւ հոգիին հետ: Իր օրինակին մէջ պիտի տեսնես, որ հաւատքը կը բաղդատուի ֆիզիքական մարմինին, եւ հնազանդութեան արարքները կը նմանցուին մարդու մը հոգիին: Երկուքը պէտք ունին մէկը միւսին՝ իրենք զիրենք արտայայտելու համար այս աշխարհի վրայ: Եթէ հոգին հեռանայ մարմինէն, մարմինը կը մեռնի: Երբ հոգին հեռանայ, կարելի չէ յարութիւն տալ մարմինին եթէ հոգին չվերադառնայ, ինչպէս եղաւ Ղազարոսի պարագային: Ուստի Յակոբոս իր օրինակով ցոյց տուաւ, թէ ինչպէս հաւատքը ամբողջութեամբ կախեալ է հնազանդութեան արարքներէն: Ատոր համար Յակոբոս ըսաւ. «Եթէ կրնաս՝ ցոյց տուր հաւատքդ, առանց *հնազանդութեան արարքներու*: Սակայն ես կրնամ

հնազանդութեան արարքներուս ընդմէջէն քեզի ցոյց տալ իմ հաւատքս» (Յկ 2.18, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Հաւատքը ճշմարիտ հաւատք չէ առանց հնազանդութեան: Մի՛ խաբուիր ուրիշ ձեւ մտածելով: Աստուածաշունչը յստակ կը դարձնէ, թէ՛ հնազանդութեան արարքներուն ընդմէջէն է, որ հաւատքը իր կատարելութեան կը հասնի:

Առաքեալները աղաղակեցին. «Տէր, աւելցր՛ւր մեր հաւատքը»: Յիսուս ատկէ ետք խօսեցաւ հնազանդութեան արարքներու եւ զանոնք ամբողջացումի հասցնելու մասին: Սիրելի հաւատացեալ եղբայր, կրնամ հիմա տեսնել, թէ ինչո՞ւ այս գիրքին սկիզբը խօսեցայ այս պատգամին հրատապութեան եւ կարեւորութեան մասին: Բոլորս ալ պէտք ունինք մտիկ ընելու այս խօսքերուն՝ անօրէնութեան շատնալու այս օրերուն:

Կրնաս ըսել. «Կը կարծէի, որ հաւատքը կու գայ լսելով եւ հաւատալով»: Այո, ատիկա ճիշդ է, բայց հաւատքի ապացոյցը դաւանութեան ընկերակցող արարքներն են: Այդ պատճառով մեզի կ'ըսուի, թէ եթէ լսենք խօսքը եւ չհնազանդինք, խաբուած կ'ըլլանք: Այդ պարագային մեր հաւատքը իրական չէ, այլ՝ կեղծ:

ՄԵԾ Համարձակութիւն Հաւատքի մէջ

Այդ ճշմարտութիւնը դարձեալ կը տեսնենք երբ Պօղոս Առաքեալ կը նկարագրէ անոնք, որոնք կը ծառայեն եկեղեցիին մէջ. «Նախքան որ նշանակուին իբրեւ սարկաւազներ, պէտք է անոնց տրուի ուրիշ պատասխանատուութիւններ եկեղեցիին մէջ՝ իբրեւ քննութիւն անոնց նկարագիրին եւ կարողութեան: Եթէ լաւ գործ ընեն, ապա կրնան ծառայել իբրեւ սարկաւազներ» (Ա.Տմ 3.10)⁴⁶: Սարկաւազը ղեկավար մը չէ, այլ՝ մէկը, որ

46 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

կը գործադրէ ուրիշի մը հրամանները կամ պատուէրները: *Տապըլեու. Ի.* Վայն կ'ըսէ, թէ «սարկաւազ» բառին յունարէնը գլխաւորաբար կը նշանակէ՝ «ծառայ»: Ան նաեւ կը նշէ, թէ այդ բառը կը նկարագրէ ուրիշին իշխանութեան տակ եղող մը: Պօղոս մեզի ըսաւ, թէ երբ սարկաւազները հաւատարմօրէն կը ծառայեն, անոնց հնազանդութիւնը զիրենք կը դնէ հետեւեալ դիրքին մէջ. «Որովհետեւ լաւ ծառայութիւն ընողները թէ՛ իրենք իրենց համար վարկ կը շահին եւ թէ՛ մեծ համարձակութեամբ կրնան խօսիլ Քրիստոս Յիսուսի հանդէպ ունեցած իրենց հաւատքին մասին» (Ա.Տմ 3.13):

Երկու բաներ կը խոստացուին այն ծառաներուն, զորս Յիսուս նկարագրեց մեր բացումի առակին մէջ. (1) լաւ դիրք, որ կը պարունակէ հոգեւոր յառաջացումներ (տես Սղ 75.7) եւ (2) մեծ հաւատք անոնց, որոնք ամբողջապէս կը հնազանդին: Հաւատքն ու հնազանդութեան արարքները Սուրբ Գիրքերուն մէջ կը տեսնուին իբրեւ անբաժանելի եւ իրարմէ կախեալ բաներ: Օրինակներ կան ամբողջ Աստուածաշունչին մէջ.

- Աբէլի հաւատքը յայտնուեցաւ անոր հնազանդութեամբ, եւ անոր վկայութիւնը տակաւին կը խօսի հազարաւոր տարիներ ետք (Եբր 11.4):
- Ենովքի հաւատքը՝ դրսեւորուած հնազանդութեամբ, պատճառ դարձաւ, որ քալէ Աստուծոյ հետ եւ ապա վերցուի Աստուծոյ կողմէ՝ առանց մահ տեսնելու:
- Նոյի հաւատքը յայտնի եղաւ անոր հնազանդութեամբ, եւ փրկութիւն շնորհուեցաւ իր ընտանիքին՝ մինչ մեղքով լեցուն աշխարհը դատապարտուեցաւ:
- Աբրահամի հաւատքը՝ որուն փաստը անոր հնազանդութիւնն էր, զայն ազգերու հայր դարձուց:
- Յովսէփի հաւատքը՝ դրսեւորուած անոր հնազանդութեամբ, փրկութիւն բերաւ իր ընտանիքին:

- Յեսուի եւ Քաղէբի հաւատքը՝ իրենց հնազանդութեան միջոցաւ, իրենց տուաւ խոստացուած երկրի ժառանգութիւնը: Յեսու հաւատարիմ էր Մովսէսին ծառայելու մէջ եւ եղաւ անոր յաջորդը: Ան էր, որ ժողովուրդին աւելի երիտասարդ սերունդը մտցուց կաթ ու մեղր բխող խոստացուած երկիրը:
- Ռախաբ պոռնիկը «արդարացաւ երբ իսրայէլացի լրտեսները իր տունը հիւրընկալեց եւ օգնեց՝ որ ուրիշ ճամբով փախչին» (Յկ 2.25): Անոր հնազանդութիւնը փրկեց իր ամբողջ ընտանիքը: Ատիկա այն փաստն էր, որ ան ճշմարիտ հաւատք ունէր:
- Աննայի հնազանդութիւնը եւ ենթարկուած վարմունքը զինք անարգող քահանային հանդէպ բացաւ արգանդ մը, որ վերարթնութիւն պիտի բերէր ազգին:
- Իր ղեկավարին դէմ քայլ չառնելու Դաւիթի հնազանդութիւնը զինք մեծ թագաւոր մը ըրաւ՝ Աստուծոյ հաճելի սիրտով եւ ոչ Սաւուղի օրինակով:
- Դանիէլի, Սեդրաքի, Միսաքի եւ Աբեղնագովի հնազանդութիւնը մեծ շնորհք գտնել տուաւ անոնց Աստուծոյ եւ թագաւորին առջեւ:

Ալ ինչ շարունակեմ. ժամանակս չի բաւեր, որ պատմեմ Գեղէտնի, Բարակի, Սամփսոնի, Յեփթայէի, Դաւիթի ու Սամուէլի եւ միւս մարգարէներուն մասին, որոնք իրենց հաւատքով՝ թագաւորներ պարտութեան մատնեցին, արդարութիւն գործեցին եւ Աստուծոյ խոստումներուն տիրացան: Առիւծներու բերանները գոցեցին, կրակին զօրութիւնը մարեցին, սուրին բերանէն ազատեցան: Իրենց տկարութեան մէջ Աստուծով զօրացան, պատերազմի մէջ անպարտելի դարձան եւ օտարներուն բանակները ընկճեցին: Հաւատքով՝ կիներ տեսան իրենց

մեռելներուն յարութիւն առնելը: Շատեր տանջանքի տակ մեռան՝ մերժելով ազատութիւնը, որպէսզի լաւագոյն կեանքի մը համար յարութիւն առնեն: Ուրիշներ նախատինքներու եւ ծեծերու ենթարկուեցան, շղթաներու եւ բանտերու համը առին: Քարկոծուեցան, սղոցուեցան, փորձութեանց մատնուեցան, սուրով սպաննուեցան, ոչխարի կամ այծի մորթով ծածկուած շրջեցան՝ զրկանք, հալածանք ու չարչարանք կրելով, թափառական ապրելով անապատներու մէջ կամ լեռներու վրայ, քարայրներու կամ խոռոչներու մէջ: Արդարեւ աշխարհը արժանի չէր այդ մարդոց: Ասոնք բոլորը իրենց հաւատքով վկայուած ըլլալով [...]: (Եբր 11.32-39)

Եբրայեցիներուն նամակը գրողը հաւատքը կը միախառնէ հնազանդութեան արարքներու հետ: Անոնք անբաժանելի են: Եթէ հաւատքը տրուած ըլլար միայն հրաշքներ ստանալու համար, ապա ինչո՞ւ ան իր ցանկին մէջ պիտի նշէր նաեւ անապատին մէջ եւ լեռներուն վրայ թափառողները, նեղութիւններ կրողները եւ չարչարուածները: Այդ տղամարդիկն ու կիները լաւ ասարտեցին: Անոնք հնազանդեցան մինչեւ ամբողջացում: Ատիկա է ճշմարիտ հաւատքը:

Եթէ կ'ուզես մեծ հաւատք, ապա հնազանդէ՛ Աստուծոյ իշխանութեան, ըլլայ ուղղակի կամ յանձնարարուած, ամբողջ ժամանակը մինչեւ ամբողջացում: Հաւատքդ ուղղակի համեմատական է հնազանդութեանդ հետ...

Խոնարհութեան Ապահովութիւնը

Վերջին կէտը, զոր Յիսուս ուզեց շեշտել իր աշակերտներուն խոնարհ կեցուածք պահելն էր: Ան ըսաւ. «Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ինչ որ հրամայուած է ձեզի, ըսէք. “Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր

էինք ընել՝ կատարեցինք» (Ղկ 17.10, շեշտադրումը՝ մեր կողմէ): Երբ այդ կեցուածքը կ'ունենանք, մենք մեզ կը դիրքաւորենք այն վարձատրութեան համար, որ կու գայ Տիրոջմէ: Անոնք, որոնք կը մեծարեն իրենք զիրենք, պիտի խոնարհին: Սակայն անոնք, որոնք իրենք զիրենք ցած մակարդակի կը տեսնեն, Տէրը կը մեծարէ զիրենք: Յակոբոս թելադրեց. «Դուք ձեզ խոնարհեցուցէք Տիրոջ առջեւ, եւ ինք ձեզ պիտի բարձրացնէ» (4.10):

Սիրտին մէջ խոնարհ մնալ կը նշանակէ՝ մնալ դիրքաւորուած հնազանդութեան վարձատրութիւնները ստանալու համար: Քու հնազանդութեամբդ հպարտանալը կը նշանակէ՝ ինզինքդ դիրքաւորել անկումի մը, հակառակ անոր որ հնազանդ եղած ես: Ատիկա կրնայ կործանել ամէն բան, որուն կառչած էիր մինչեւ այդ ատեն: Կրնաս հետեւիլ այս գիրքին մէջի խորհուրդներուն եւ Աստուծոյ Խօսքին, սակայն հպարտութեամբ կրնաս կորսնցնել ամէն ինչ որ շահած ես հնազանդութեամբ:

Արուսեակ օծուած էր: Ան կատարելութեան կնիքն էր՝ իմաստութեամբ լեցուն եւ գեղեցկութեան մէջ կատարեալ: Ան հաստատուած էր Աստուծոյ կողմէ, եւ կը բնակէր Աստուծոյ սուրբ լեռը: Ան կատարեալ էր իր ճամբաներուն մէջ մինչեւ որ հպարտութիւն գտնուեցաւ անոր մէջ: Ապա ան երկինքէն դուրս նետուեցաւ այնքան արագ որքան կայծակը կ'իյնայ երկինքէն: Պօղոս թելադրեց, որ իշխանութեան դիրքի վրայ նշանակուած մէկը՝ «Պէտք չէ հաւատքի մէջ նորադարձ մը ըլլայ, որպէսզի չըլլայ որ հպարտանալով՝ դատապարտութեան տակ իյնայ Սատանային պէս» (Ա.Տմ 3.6):

Պօղոս շատ բաներ իրագործեց՝ Աստուծոյ կոչին նկատմամբ իր հնազանդութեան շնորհիւ: Բայց որքան ապրեցաւ, այդքան աճեցաւ խոնարհութեան մէջ: Ք.Ե. 56 թուականին, ան նամակ մը գրեց եկեղեցիի մը, զոր հիմնած էր Կորնթոսի կոյս

տարածքին մէջ իր չորս առաքելական ճամբորդութիւններէն երրորդին ընթացքին: Ան տաս-տասնմէկ տարի ետք պիտի գլխատուէր եւ արդէն փորձառու վեթերան մըն էր Յիսուսի ծառայութեան մէջ: Եւ սակայն մտիկ ըրէ անոր բառերուն. «Արդարեւ, առաքեալներուն մէջ յետինն եմ ես եւ արժանի իսկ չեմ առաքեալ կոչուելու» (Ա.Կր 15.9):

Կը լսեն անոր բառերուն մէջի խոնարհութիւնը: Ան ինքզինք նոյնիսկ արժանի չէր համարեր «առաքեալ» տիտղոսին: Կ'ուզեմ մատնանշել, թէ ատիկա սուտ խոնարհութիւն չէր: Կեղծ խոնարհութիւնը գիտէ ինչպէս գործածել ճիշդ բառեր խոնարհ *երեւելու* համար՝ առանց սիրտի կամ միտքի խոնարհութեան: Ատիկա խաբուսիկ է եւ ճշմարտութենէն հեռու: Բայց Սուրբ Հոգիին ներշնչումով Սուրբ Գիրք գրելու ատեն մարդ չի կրնար ստել... Ուստի երբ Պօղոս ըսաւ, թէ ինք առաքեալներուն մէջ յետինն էր, ան ճիշդ բառեր չէր փորձեր գործածել. ան ճշմարիտ խոնարհութիւն կ'արտայայտէր:

Հիմա տեն Պօղոսի յաջորդ հաստատումը. «Բոլոր առաքեալներէն անելի են աշխատեցայ, թէպէտ ինչ որ ըրի՝ ես չըրի, այլ իմ մէջս գործող Աստուծոյ շնորհքը» (Ա.Կր 15.10): «Բոլոր առաքեալներէն անելի են աշխատեցայ»: Մէկ վայրկեան: Արդեօք Պօղոս կը յոխորտամր: Այդ խօսքը գոռոզի մը խօսքին պէս կը հնչէ, սակայն այդպէս չէ: Անիկա կու գայ Աստուծմէ կախեալ ըլլալու Պօղոսի մէկ ուրիշ հոչակումէ մը առաջ: Ինքն իր մասին ըրած գնահատումէն ետք՝ թէ առաքեալներուն յետինն էր, ան կը նշէ, թէ ամէն ինչ որ ըրած էր՝ ըրած էր միմիայն Աստուծոյ շնորհքով: Ան ամբողջովին գիտակից էր, թէ իր բոլոր հոգետոր իրագործումները կատարուած էին այն կարողութեամբ, զոր Աստուած տուած էր իրեն:

Ինքն իրեն համար գործածած Պօղոսի «առաքեալներուն մէջ յետինը» նկարագրութիւնը դժուար կ'լլուելիք է: Իր օրին եւ ամբողջ Եկեղեցւոյ պատմութեան մէջ ան գնահատուած է իբրեւ մեծագոյն առաքեալներէն մէկը: Իսկ հիմա

նկատի առ Պողոսի ըսածը եփեսացիներուն ք.Ե. 62 թուականին՝ իր աշխարհէն հեռանալէն 4-5 տարի առաջ: Կորնթացիներուն առաջին նամակը գրելէն ետք այդ քանի մը տարիներուն, ան աւելի բան իրագործեց քան իր կեանքի որբւէ ժամանակահատուածի ընթացքին: Ան ինքզինք այսպէս նկարագրեց. «Ինծի՝ որ Աստուծոյ ժողովուրդին մէջ յետիններուն յետինն եմ՝ Աստուած այս շնորհքը տուաւ, որպէսզի բոլոր ազգերուն աւետիս տամ՝ թէ ինչպիսի աներեւակայելի գանձ մըն է Քրիստոս» (Եփ 3.8):

Տարիներ առաջ ան ինքզինք կոչեց առաքեալներուն յետինը, իսկ հոս ինքզինք կը նկարագրէ իբրեւ՝ Աստուծոյ ժողովուրդին մէջ յետիններուն յետինը... Ինչ: Եթէ ունէ մէկը կրնար յոխորտալ իր Քրիստոնեայ ըլլալովը եւ ղեկավարութեամբը, վստահ որ ատիկա Պողոսը կրնար ըլլալ: Եւ սակայն որքան երկար ժամանակ, որ ան Տիրոջ ծառայեց, այդքան պզտիկ տեսաւ ինքզինք: Անոր խոնարհութիւնը հետզհետէ աւելցաւ: Արդեօք ատոր համար Աստուծոյ շնորհքը անոր կեանքին մէջ աւելցաւ՝ իր տարիքով մեծնալուն հետ համեմատաբար: Կրնայ ըլլալ ատոր համար էր, որ Աստուած Իր ճամբաները Պողոսի յայտնեց այնքան մտերիմ կերպով, որ նոյնիսկ Պետրոս Առաքեալ շփոթեցաւ (տես Բ.Պտ 3.15-16): Սաղմոսողը կ'ըսէ, թէ՝ «Իր ճամբան պիտի սորվեցնէ հեզերուն» (Սղ 25.9): Ասոր լոյսին տակ, կրնայ ըլլալ, որ այդ պատճառով նաեւ Մովսէս այդքան լաւ գիտէր Աստուծոյ ճամբաները. այն մարդը, զոր Աստուած կը նկարագրէ իբրեւ՝ «Շատ հեզ մարդ մը [...] երկրագունդի մակերեսին վրայ եղած բոլոր մարդոցմէն աւելի» (Թւ 12.3): Թերեւս երկուքն ալ գիտէին գաղտնիք մը Աստուծմէ մեծ հաւատք ստանալու, զոր ուրիշ քիչեր միայն գիտէին:

Պողոսի կեանքի վերջաւորութեան՝ ք.Ե. շուրջ 64-66 թուականին, ան երկու նամակ ղրկեց Տիմոթէոսին, որոնց մէջ ինքզինք նկարագրեց իբրեւ՝ «Սա՛ վստահելի եւ բոլորովին

ընդունուելու արժանի խօսք մըն է, թէ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ՝ փրկելու մեղաւորները, որոնց գլխաւորը ես եմ» (Ա.Տմ 1.15)⁴⁷: Ան ինքզինք կոչեց՝ «գլխաւոր մեղաւորը»... Նկատի առ որ ան ինքզինքին համար չըսաւ՝ «ես գլխաւորն էի»:

Ո՛չ, տարիներու ընթացքին մեծ իրագործումներու տէր ըլլալով, անոր դաւանութիւնը չեղաւ՝ «ես ըրած եմ այդ բոլորը, եւ իմ մեծ առաքելութիւնս պէտք է յարգուի»: Ոչ ալ յոխորտաց, ըսելով. «ես մեծ գործ ըրած եմ եւ արժանի եմ ճշմարիտ առաքեալի մը յարգանքին»: Ան նոյնիսկ չգրեց. «ես առաքեալներուն յետինն եմ», ինչպէս գրած էր քանի մը տարի առաջ: Ոչ ալ գրեց. «Աստուծոյ ժողովուրդին մէջ յետիններուն յետինն եմ»: Ան յայտարարեց. «ես բոլոր մեղաւորներուն մէջ գլխաւորն եմ»: Հակառակ անոր որ ան հասկցած էր, թէ Քրիստոսի մէջ ինք Աստուծոյ արդարութիւնն էր (տես Բ.Կր 5.21), ան միշտ գիտակից էր Աստուծոյ շնորհքին եւ ողորմութեան: Իրականութեան մէջ որքան երկար ապրեցաւ, այդքան կախեալ եղաւ Աստուծոյ շնորհքէն: Անոր կեցուածքը շարունակ այս էր. «ես անպիտան ծառայ մըն եմ. ըրած եմ միայն այն բաները, որոնք պարտական էի ընել»:

Ասիկա կը բացատրէ Պօղոսի մէկ ուրիշ խօսքը իր կեանքի վերջին հանգրուանին. «Եղբայրներ, ինքզինքս դեռ կատարելութեան հասած չեմ համարեր. բայց կ'աշխատիմ անցեալը մոռնալ եւ գալիքին նայիլ, եւ ուշադիր կերպով կը վազեմ դէպի նպատակակէտը, իբրեւ մրցանակ ստանալու համար յաւիտենական կեանքը, որուն կը հրաւիրէ մեզ Աստուած, Քրիստոս Յիսուսով» (Փլպ 3.13-14): Կրնամս լսել անոր բառերուն մէջի խոնարհութիւնը: «ես տակաւին չեմ հասած, եւ այն ինչ որ իրագործած եմ, անոնց մասին չեմ մտածեր»: Ան իր իրագործումները ոչինչ կը համարէ՝ բաղդատաբար Քրիստոս Յիսուսը ամբողջապէս ճանչնա-

47 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

լու իր փնտռտուփին: Յիշէ՛, որ Աստուած Ինքզինք կը յայտնէ խոնարհներուն... Պօղոս ըսաւ՝ «Կը վագեմ դէպի նպատակակէտը»: Անգլերէն Աստուածաշունչին մէջ գործածուած բառը «կը հրեմ»ն է, որ կը նշանակէ, թէ ընդդիմութիւն եւ հակառակութիւն կայ: Դէպի վեր բարձրանալու ամէնէն մեծ հակառակութիւններէն մէկը *հպարտութիւնն* է:

Մինչ կը սերտենք Յիսուսի կեանքը, կը տեսնենք, որ Ան չընդունեց գովաբանութիւն, այլ՝ զանիկա ուղղեց Իր Հօրը: Ան նոյնիսկ անոնց, զորս բժշկեց ըսաւ, որ մարդոց չըսեն այդ մասին, այլ՝ փառք տան Աստուծոյ:

Մեծահարուստ մարդը ըսաւ Յիսուսի՝ «Բարի՛ Վարդապետ»: Սակայն Յիսուս արագօրէն պատասխանեց, թէ միայն Աստուած բարի է: Ինք Աստուծոյ Որդին չէր: Ինք բարի չէր: Անշնչտ, որ էր: Սակայն մարդոց կողմէ գովասանք չէր ընդուներ. Ան միայն Իր Հօրը փառաւորուիլը կ'ուզէր: Սակայն այն արժանիքը, որով յոխորտաց խոնարհութիւնն էր: Ան ըսաւ. «Ձեր վրայ առէք իմ լուծս եւ ինձմէ սորվեցէք, որովհետեւ հեզ եմ եւ *սրտով խոնարհ*, եւ դուք ձեր հոգեկան հանգստութիւնը պիտի գտնէք» (Մտ 11.29, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Աստուծոյ սէրը իսկական խոնարհութիւն կը ծնի: Կը կարդանք, թէ սէրը «չի գոռոզանար, չի հպարտանար» (Ա.Կր 13.4): Հպարտութիւնը իրը կը փնտռէ. սէրը իրը չի փնտռեր: Հպարտութիւնը կ'արհամարհէ ամէն հնազանդութիւն, որ օգուտ չի բերեր իր սեփական ծրագիրներուն կամ փափաքներուն. սէրը կը փնտռէ փառքը Անոր, որուն կը ծառայէ: Մենք կը հնազանդինք, քանի որ կը սիրենք. մենք յաջողութիւն կը փափաքինք, որովհետեւ կ'ուզենք, որ Ինք փառաւորուի: Կը փափաքինք Իր փառաւորուիլը տեսնել: Թերեւս ասոր համար Պօղոս ըսաւ. «Եթէ [...] նոյնիսկ լեռները տեղափոխելու չափ զօրաւոր հաւատք ունենամ, բայց սէր չունենամ, ոչինչ կ'արժեմ» (Ա.Կր 13.2):

Իրագործէ՛ Կոչումդ

Մենք կանչուած ենք պտուղ արտադրելու եւ ախոյեաններ ըլլալու մեր Աստուծոյ համար: Միայն երբ Անոր ճամբաներուն մէջ քալենք, իրապէս կրնանք պատիւ բերել Անոր հրաշալի անուան: Կ'աղօթեմ, որ այս պատգամը տեսնես իբրեւ պատգամ մը, որ թէ՛ քու օգուտիդ համար է եւ թէ՛ Աստուծոյ փառքին համար: Աստուծոյ Խօսքին կառչիլը անմտութիւն կը թուի տրամաբանութեան գործընթացին, բայց Ան չըսաւ. «Աստուած բարեհաճեցաւ քարոզութեան յիմարութեամբ փրկել անոնք՝ որ կը հաւատան» (Ա.Կր 1.21)⁴⁸: Միա կողմէ, մեզի կ'ըսուի, թէ՛ «Աստուծոյ յիմարը մարդոցմէ աւելի իմաստուն է, եւ Աստուծոյ տկարը մարդոցմէ աւելի ուժեղ է» (Ա.Կր 1.25)⁴⁹: Յիշեցնիր դուն քեզի, թէ մենք պէտք է «հերքենք առարկութիւններ եւ տեսութիւններ եւ *տրամաբանութիւններ* եւ ամէն հպարտ ու բարձրամիտ բան, որ ինքզինք կը դիրքատրէ Աստուծոյ [ճշմարիտ] գիտութեան դէմ, եւ մենք ամէն խորհուրդ եւ նպատակ գերի կ'ընենք՝ *հնազանդեցնելով* Քրիստոսի» (Բ.Կր 10.5, շեշտադրումը՝ մեր կողմէ)⁵⁰:

Այն պատճառաբանութիւնը, որ հակառակ է հնազանդութեան՝ հպարտ է: Անիկա կ'ընդդիմանայ Աստուծոյ խորհուրդին դէմ: Անիկա չի ճանչնար Աստուծոյ Խօսքը իբրեւ վերջնական իշխանութիւն: Ինչպէս տեսանք այս ամբողջ գիրքին ընթացքին, անիկա վտանգատու է: Այս օրերուն Աստուած պիտի ունենայ ժողովուրդ մը, որ կը քալէ մեծ հաւատքով, իշխանութեամբ եւ համարձակութեամբ: Պօղոսի համաձայն, անոնք պիտի պատժեն որեւէ անհնազանդութիւն, երբ իրենց հնազանդութիւնը ամբողջական ըլլայ (տես Բ.Կր 10.6):

48 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

49 Նոյնը

50 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիլֆայր Պայպլը* (AMP) տարբերակէն

Ժամանակը կարճ է, ուստի պետք է ազդու ըլլանք: Հնազանդութիւնը մեզ ազդու կը պահէ: Երբ նոր վերստին ծնունդ ունեցայ, բաւական գործունեայ էի, բայց թերի էի հնազանդութեան մէջ: Անազդու էի, չըսելու համար՝ երբեմն վնասաբեր: Որքան աճեցայ, այդքան անդրադարձայ, որ հնազանդութեան մէջ ժրաջանութիւնս՝ որքան ալ որ յայտնի չըլլար, թէ որեւէ տեղ կը տանէր զիս, վերջաւորութեան կը փաստէր ազդու ըլլալ:

Աստուծոյ մէջ քու կոչումդ առջեւդ է: Երբ հնազանդութիւն կ'ընտրես՝ կ'ընտրես կատարել կոչումդ: Ոչինչ եւ ոչ մէկը կրնայ կեցընել քեզ: Տարիներ Դաւիթի կեանքը մռայլ կ'երեւէր, ինչպէս նաեւ Յովսէփինը, Մովսէսինը, Յեսուիինը, Աննայինը, Նոյինը, Եսթերինը եւ բոլոր միւս նահապետներունը: Բայց յիշէ, որ «Աստուծոյ Հռչակաւորներու Սրահ» մը (*Հոլ աֆ Տէյս*) կայ անոնց համար, որոնք կատարեցին իրենց կոչումը: Եւ այս վերը նշուածները այդ խումբին մէջն են: Այս վերջին օրերուն Աստուած կը փնտռէ տղամարդիկ եւ կիներ, որոնք կրնան աւելցուիլ նահապետներուն ցանկին վրայ, որպէսզի պատուուն Քրիստոսի դատաստանի աթոռին առջեւ: Կ'աղօթեմ, որ կարենանք ըլլալ անոնցմէ, որոնք կը կատարեն մեր հիանալի Տիրոջ փառք բերելու յանձնարարութիւնը:

ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այն պարտը, որ կ'ուրենք մինչ կը բնակինք Անոր ծածկոյթին տակ, մեզ կ'առաջնորդէ Անոր խնճոյթին: Հոն է, որ մենք կը մասնակցինք Անոր առաքույթեան:

Այս գիրքին սկիզբը խօսեցանք առաջին ամուսնացած զոյգին ողբերգական որոշումին մասին: Այդ ամուսին եւ կինը դուրս ելան Ամենազօրին ծածկոյթէն, եւ ճիշդի ու սխալի ուրիշ աղբիւր մը գտան Աստուծոյ հովանիէն դուրս: Անոնք արհամարհեցին Անոր իշխանութիւնը, բայց մենք սորված ենք եւ տակաւին կը սորվինք անոնց ձախողութենէն, ինչպէս նաեւ ձախողութենէն անոնց, որոնք իրենցմէ ետք եկան:

Եզրակացնենք դրամին հակառակ կողմով. այն մրցանակով, որ պիտի տրուի անոնց, որոնք կը մնան Ամենակարողին հովանիին տակ:

Անոր *հովանիին* տակ ցանկալի է նստիլ, եւ *անոր պտուղը քաղցր է* իմ քիմքիս: Չիս խնճոյքին տունը տարաւ, ու վրաս իր սիրոյ դրօշակը պարզեց: (Երգ 2.3բ-4, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Անոր հովանիին տակ կեանքի ծառն է: Անոր պտուղը մնայուն քաղցրութիւն ունի: Ադամի եւ Եայի կերած պտուղը լաւ կ'երեւէր տրամաբանութեան աչքով, բայց վերջաւորութեան մահ բերաւ: Ատիկա ճիշդ է այն բոլոր պտուղներուն համար, որոնք կ'ուտուին տրամաբանութեան ծառէն: Այն պտուղը, որ կ'ուտենք մինչ կը բնակինք Անոր ծածկոյթին տակ, մեզ կ'առաջնորդէ Անոր խնճոյքին: Հոն է, որ մենք կը մասնակցինք Անոր առատութեան:

Այս գիրքը կարդալու ատեն բաւական հաւանական է, որ յանցանքի ցաւը զգացիր: Յաւը միշտ գէշ բան մը չէ: Այս պարագային անիկա երկու բան ցոյց կու տայ: Առաջին՝ անիկա ցոյց կու տայ, որ խիղճդ կակուղ է եւ զգայուն՝ Սուրբ Հոգիին: Երկրորդ՝ կայ կացութենէն ելլելու ձեւ մը. անիկա կը կոչուի զղջում կամ ապաշխարութիւն: Կայ հիմնական տարբերութիւն յանցաւորի զգացումին եւ դատապարտութեան միջեւ: Երկուքին ալ ցաւ կ'ընկերակցի, բայց մէկէն ելք կայ, մինչ միւսէն՝ ոչ: Ապաշխարութիւնը պարզապէս սիրտի փոփոխութիւն մըն է, որ կ'արտադրէ միտքի եւ արարքներու փոփոխութիւն: Այդ ընելով, Աստուծոյ կ'ըսես. «Տէր, իմ ձեռովս ըրի եւ տեսայ իմ ձեւիս անպտուղ ըլլալը: Հիմա կ'ընտրեմ ենթարկուիլ Քու ձեւերուդ»: Ընտրութիւն է՝ հրաժարիլ Բարիի ու Չարի Գիտութեան Ծառէն ծնած տրամաբանութենէն եւ վերադառնալ հնազանդութեան:

Աղօթքի եւ խոսկումի միջոցաւ բաց սիրտդ եւ արտօսէ՛, որ Սուրբ Հոգին մատնանշէ կեանքիդ մէջ անհնազանդութեան մարզերը: Եթէ պէտք ըլլայ նո գնա եւ վերաքանդ ըրէ կարգ մը գլուխներ, որոնք յատուկ կերպով կը խօսին քու կացութեանդ

մասին: Արսունէ, որ Աստուծոյ Խօսքը քննէ կեանքդ: Իր Խօսքին լոյսը կը բացայայտէ անհնազանդութեան մարզեր: Այդ մարզերը կրնան վերաբերիլ կամ Աստուծոյ ուղղակի իշխանութեան կամ ալ Անոր կողմէ յանձնարարուած իշխանութեան: Թուէ՞ զանոնք թուղթի մը վրայ: Երբ ատիկա ընես, աղօթենք միասին՝ ներում եւ վերականգնում ստանալու համար:

Երկնաւոր Հայր, Յիսուսի անունով ներէ՛ ինձի անհնազանդութեան եւ չենթարկուելու համար: Ես իմ սեւիական տրամաբանութեամբս ապրած եմ եւ հեղեարար ըմբոստացած հեղեւեալ մարզերուն մէջ.

Ես... [Քու ցանկէդ խոստովանէ՛ Իր իշխանութեան հանդէպ գործած մեղքերուդ իրաքանչիւր մարզը: Նկատի առ թէ՛ ուղղակի իշխանութիւնը Աստուծոյ եւ թէ՛ յանձնարարուածը]:

Կ'ապաշխարեմ մտածումի եւ վարմունքի այդ իրաքանչիւր մարզին համար: Կը խնդրեմ, որ ներես ինձի եւ մաքրես զիս իմ Տիրոջս՝ Յիսուսի արիւնով:

Ես որոշած եմ ենթարկուիլ Քու իշխանութեանդ, եւ ադիկա ընելով՝ պիտի ենթարկուիմ նաեւ ընտանեկան, քաղաքացիական, եկեղեցական եւ ընկերային իշխանութիւններուն, որոնք դրած ես իմ վրաս: Տուր ինձի Քու շնորհքդ, որպէսզի ոչ միայն փափաքիմ, այլեւ ընեմ Քեզի հաճելի եղածը: Կը խնդրեմ, որ ինձի տաս սիրտ մը, որ կ'ուրախանայ ենթարկուելով եւ հնազանդութեամբ: Ես իմ կեանքս կը նուիրեմ իմ Տիրոջս՝ Յիսուս Քրիստոսի, եւ կը հրաժարիմ ըմբոստութեան ամէն ձեւէ: Ես եռանդով կ'ենթարկուիմ այն ձեւին, որով կանչած ես զիս Քու անունդ փառաւորելու: Ամէն:

Յարմարութեանդ համաձայն, անձնապէս այցելէ կամ

Նամակ մը գրէ քու ցանկիդ մէջ տեղ գտած իշխանութեան դիրքի մէջ եղողներուն եւ ներողութիւն խնդրէ անոնցմէ: Ասիկա ժամանակ չէ մեղադրանք դնելու կամ դատող պաշտպանելու. ասիկա առիթ է քեզի համար, որ պատասխանատուութիւն վերցնես քու բաժինիդ համար՝ նոյնիսկ որ դժուար է: Ասիկա քեզ պիտի դնէ դիրքի մը մէջ, ուր Աստուծոյ միջամտութիւնը պիտի տեսնես ի նպաստ քեզի:

Շնորհակալութիւն, որ ընտրեցիր ճամբայ մը, որ հակառակ է այս աշխարհի ընթացքին: Մեր հնազանդութեամբ, կ'արագացնենք կատարումը մեր հոյակապ Թագաւորին նպատակներուն: Հնազանդութեանդ վարձատրութիւնը մեծ պիտի ըլլայ:

Արդ, անոր՝ որ կրնայ ձեզ անկումներէ փրկել, պահել անարատ եւ անբիծ, եւ անխառն ուրախութեամբ լեցուն՝ իր փառաւոր ներկայութեան կանգնեցնել, միակ Աստուծոյն՝ որ մեր փրկիչն է՝ փառք տուէք, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Անհր են փառքը, մեծութիւնը, զօրութիւնն ու իշխանութիւնը, թէ բոլոր ժամանակներէն առաջ, թէ այժմ եւ թէ գալիք բոլոր ժամանակներուն: Ամէն:

– Յդ 24-25

Յիշէ՛

Մնա՛ ծածկոյթի տակ...

ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Եթե այս գիրքը կը կարդաս Ծածկոյթի Տակ Վիպէր-դասերուն ընկերակցութեամբ (ինչ որ բացառիկ գաղափար մըն է), կը յանձնարարեմ, որ դիտես ամէն շաբթուայ Վիպէր-դասը եւ անցնիս դասին վերաբերող քննարկումի հարցումներուն վրայէն՝ խումբի մը հետ: Վիպէր-դասերը զուգահետ կ'ընթանան այս գիրքի գլխատր նիւթերուն հետ ինչպէս նաեւ կ'ընդլայնեն զանոնք: Ուստի իտէպլական կ'ըլլայ եթէ խումբին բոլոր անդամները թէ՛ դիտեն դասերը եւ թէ՛ կարդան գիրքը:

Բարի վայելում:

Դաս 1

Լուսարձակի տակ առնուած նիւթեր՝ Առաջին եւ Երկրորդ Գլուխներէն

1. Երբ կը լսես «իշխանութիւն» բառը, ինչ կ'ըլլայ առաջին կեցուածքը: Զանիկա կը կապես լմբ բանի մը հետ, ինչպէս՝ պաշտպանուած ըլլալ տանիքի մը տակ փոթորիկի մը ատեն: Կամ արդեօք կը մտածես ժխտական բանի մը մասին, ինչպէս՝ գործատէր մը, որ կեանքդ կը կործանէ:
2. Դէպի ետեւ նայելով, եղամ՞ են ժամանակներ երբ հետեւանքներ կրած ես «ծածկոյթի տակ» չըլլալով պատճառով:

3. Դժուար է հասկնալ թագաւորութեան սկզբունքները ժողովրդավարական մտայնութեամբ: Ինչ ձեւերով իշխանութեան համար Աստուծոյ ձեւին մօտեցած եւ ժողովրդավարական մտայնութեամբ: Ատիկա ինչ ձեւով ազդած է ղեկավարներուդ հետ վերաբերումիդ վրայ:
4. Ինչ կը վերաբերի պզտիկ խումբերու հաւաքոյթներուն, Աստուած ինձի ցոյց տուաւ, որ հովիւիս որդեգրած ուղղութեան հետեւելու անպատրաստականութիւնս ըմբօստութիւն էր: Արդեօք այդ բնորոշումը զարմացո՞ց քեզ: Այս դասէն առաջ արդեօք դուն պիտի արդարացնէ՞իր իմ կեցուածքս:

Դաս 2

Լուսարձակի տակ առնուած նիւթեր՝ Երրորդ, Չորրորդ, Հինգերորդ, Վեցերորդ եւ Եօթներորդ Գլուխներէն

1. Դասին սկիզբը եւ ներկաներէն խնդրեցի, որ ըսեն առաջին բառերը, որ կու գան իրենց միտքը երբ կը լսեն *մեղք* բառը: Ինչ էին քու առաջին միտքերդ երբ այդ հարցումը հարցուեցաւ: Ինչ ձեւով փոխուեցան քու խորհուրդներդ:
2. Պատահածէ, որ ստացուածքդ, գործդ կամ յարաբերութիւններդ ասելի վեր դրած եւ Աստուծոյ պատուէրին հնազանդելէն: Ինչ պատահեցաւ երբ այդ բաներէն մէկուն առաջնահերթութիւն տուիր Աստուծոյ հնազանդելէն ասելի վեր:
3. Մասնակի հնազանդութիւնը հնազանդութիւն չէ: Անիկա ըմբօստութիւն է: Բաժնեկցի՞ր փորձառութիւն մը երբ մինչեւ կատարում հնազանդեցար: Ապա բաժնեկցի՞ր փորձառութիւն մը երբ միայն մասնակիօրէն հնազանդեցար: Ինչ էին գլխաւոր տարբերութիւնները եւ ինչպէս ազդեցին վրայդ:
4. Աստուածաշունչը կ'ըսէ, թէ ըմբօստութիւնը կռապաշտութիւն է (Ա.Թգ 15.23): Ինչ է կախարդութեան վերջնական նպատակը: Այդ ճշմարտութիւնը ինչ ձեւով ազդեց ըմբօստութեան նայած ձեւիդ վրայ կամ ինչպէս փոխեց զանիկա:

5. Աստանայական գիրքի առաջին պատուիրանն է՝ *Ըրէ այնպէս ինչպէս կը կամօս*: Ատիկա հակառակն է Յիսուսի օրինակին երբ ըսաւ. «Կը գործադրեմ ո՛չ թէ իմ կամքս, այլ կամքը անոր՝ որ զիս ղրկեց» (Յի 5.30): Ինչ են այն կարգ մը բաները, որ ըրած ես քու կամքդ Աստուծոյ կամքէն աւելի առաջ դնելով: Ինչ արդիւնք տուաւ ատիկա քեզի համար: Ինչ կրնաս ընել, որպէսզի գործնապէս Աստուծոյ կամքը փնտռես եւ հնազանդիս անոր քու կամքէդ վեր:

Դաս 3

Լուսարձակի տակ առնուած նիւթեր՝ Ութերորդ, Իններորդ եւ Տասներորդ Գլուխներէն

1. Հռ 13.1-2-ին մէջ կը տեսնենք, թէ յանձնարարուած իշխանութեան դէմ դնելը Աստուծոյ դրած կարգին դէմ դնել է: Ինչ պիտի ըլլար կեցուածքդ եթէ Յիսուս քեզմէ ուզէր, որ գործի, ընտանիքի կամ ընկերային միջավայրիդ մէջ բան մը ընէիր Իրեն համար: Ինչ պիտի ընէիր եթէ տնօրէնդ, մարզիչդ, ոստիկան մը կամ այլ իշխանութեան տիպար մը նոյն բանը ուզէր քեզմէ: Անոնց ալ պիտի պատասխանէիր այնպէս ինչպէս Յիսուսի պատասխանեցիր:
2. Աստուածաշունչը կ'ըսէ. «Ամէն մարդ պէտք է հնազանդի պետական իշխանութեանց» (Հռ 13.1): «Հնազանդի» բառին յունարէնը կը գործածուի թէ՛ զինուորական եւ թէ՛ ոչ-զինուորական իմաստով: Ոչ-զինուորական իմաստով անիկա կը նշանակէ՝ պատրաստակամ եւ կամատր կեցուածք ինքզինք իշխանութեան տակ դնելու: Աստուածաշունչի այդ պատուէրը ինչպէս կը փոխէ քու կեցուածքդ յանձնարարուած իշխանութիւններուն հանդէպ:
3. 1992-ի նախագահական ընտրութենէն ետք ես դժուար ժամանակ մը ունեցայ: Ընկճուածութիւն ունէի, եւ Տէրը ինձի յիշեցուց, թէ Ինք չի զարմանար նախագահական ընտրութիւններու արդիւնքներով: Պատահած է բնաւ, որ քաղաքական իրադարձութիւն մը յուսախաբութիւն պատճառած

է քեզի: Իմ պատմությունս ինչ ձեռով ազդեց ընտրուած պաշտօնատարներուն հանդէպ քու կեցուածքիդ վրայ:

4. Ես 1.19-ը մեզի կ'ըսէ, թէ եթէ պատրաստակամ ենք եւ հնազանդ, պիտի ուտենք երկրին բարիքը: Կրնաս հնազանդ ըլլալ, բայց ոչ պատրաստակամ, կամ պատրաստակամ՝ բայց ոչ հնազանդ: Բաժնեկցիի ժամանակի մը մասին երբ ոչ-պատրաստակամ կերպով հնազանդեցար: Բաղդատէ՛ ատիկա ժամանակի մը հետ երբ թէ՛ պատրաստակամ եւ թէ՛ հնազանդ էիր:
5. Աստուածաշունչը կը սորվեցնէ առանց պայմանի ենթարկումի մասին, բայց ոչ՝ առանց պայմանի հնազանդութեան մասին: Մենք պէտք չէ՛ հնազանդինք մեր ղեկավարներուն եթէ անոնք մեզի կ'ըսեն, որ ընենք բան մը, որ հակառակ է Աստուծոյ Խօսքին: Պատահած է, որ ղեկավար մը քեզմէ ուզէ, որ ընես բան մը, որ հակառակ է Աստուծոյ Խօսքին: Ինչպէս վարուեցար: Ինչ էր արդիւնքը:

Դաս 4

Լուսարձակի տակ առնուած նիւթեր՝ Տասնմէկերորդ եւ Տասներկուերորդ Գլուխներէն

1. Աստուածաշունչը կ'ըսէ, թէ քաղաքային իշխանութիւնները Աստուծոյ ծառաներն են: Ինչ է պատշաճ ձեւը Աստուծոյ ծառայի մը հետ վարուելու: Ինչ ձեռով կը վարուիս քաղաքային ղեկավարներուդ հետ:
2. Չարախօսը շատ վարպետ է սխալ գտնելու մէջ, մինչ Յիսուս հաւատարմօրէն կը բարեխօսէ մեզի համար: Ինչ կը վերաբերի քաղաքային ղեկավարներուն, դուն կը գործես իբրեւ ամբաստանող մը կամ բարեխօսող մը: Կը խնդմս երբ շուրջիններդ կը ծիծաղին քաղաքային ղեկավարներու վրայ: Սիրտդ կը ցաւի՞ երբ մէկը կը չարախօսէ ղեկավար մը ընկերային հաղորդամիջոցներու վրայ:
3. Մենք պէտք է յարգենք մեր ընկերային ղեկավարները, տնօրէնները, ուսուցիչները, մարզիչները եւ ուրիշ

իշխանութեան վրայ եղողներ ինչպէս նաեւ ենթարկուինք կամ հնազանդինք անոնց՝ տրուած ըլլալով, որ անոնք կը ներկայացնեն զԱստուած: Պատկերացնոր, թէ ինչպէս պիտի ըլլար Յիսուսի համար աշխատիլը: Ճիշդ ժամուն գործի պիտի գայիր: Ժամանակ կամ դրամ խնայելու համար, կրճատումեր պիտի ընէիր ձեռնարկներ ծրագրելու ընթացքին: Այդ գաղափարը ինչ ձեւով փոխեց ընկերային ղեկավարներու հետ վարմունքը:

4. Աստուածաշունչին մէջ շատ յստակ կերպով կը ներկայացուի ընտանեկան կառոյցը: Ինչն է, քու կարծիքովդ, որ արգելք կ'ըլլայ մեզի, որ տան մէջ Աստուծոյ իշխանութեան ձեւը կիրարկենք: Աստուծոյ վստահիլը ինչ ձեւով կենսական դեր կը խաղայ առողջ ընտանեկան մթնոլորտ ստեղծելու մէջ:

Դաս 5

Լուսարձակի տակ առնուած նիւթեր՝ Տասներեքերորդ եւ Տասնչորրորդ Գլուխներէն

1. Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Յիսուս Անձնապէս նշանակեց ղեկավարութեան պաշտօնները եկեղեցիին մէջ (տես Եփ 4.11-12): Միջամուխ կ'ըլլան հարցերու մէջ, որոնք կապ չունին քու պատասխանատուութիւններուդ հետ: Ինչպէս կը կարծես Յիսուս կը զգայ այն ղեկավարութեան նկատմամբ, որ Ինք հաստատած է Իր եկեղեցիին մէջ:
2. Աննա տարիներ աղօթեց զաւակ ունենալու համար: Ինչո՞ւ կը կարծես, որ Աստուած պատասխանեց անոր աղօթքին երբ պատուեց ղեկավար մը, որ անպատուած էր զինք:
3. Երբ մենք կը չարախօսենք ղեկավարի մը մասին, դուրս կու գանք Աստուծոյ իմաստութենէն եւ հետեւաբար դուրս կու գանք Անոր պաշտպանութեան հովանիէն: Մարիամի, Ահարոնի եւ Մովսէսի պատմութեան մէջ այդ ճշմարտութիւնը կը տեսնենք երբ Մարիամ սխալ կերպով քննադատեց Մովսէսը՝ եթովպիացի կնոջ մը հետ ամուսնանալուն համար:

Պատահած է, որ դժուարություններ դիմագրաւես Աստուծոյ իմաստութենէն եւ պաշտպանութենէն դուրս եկած ըլլալուդ համար: Ինչ էր ատոր արդիւնքը:

4. Եղւած ես կացութեան մը մէջ, ուր ղեկավարդ որոշում մը տուաւ, որ անխտեմ թուեցաւ քեզի: Թերեւս կարեւոր տեղեկութիւն մը կար, որ ղեկավարդ չունէր: Ինչ էր արդիւնքը: Հիմա կը հաւատամ, որ դուն տարբեր ձեով կրնայիր վարուիլ այդ կացութեան մէջ: Ինչ սորվեցար ատկէ:
5. Սաւուղ Թագաւորի նկատմամբ Դաւիթի կեցուածքը պատուելն ու ենթարկուիլն էր, հակառակ անոր որ Սաւուղ խենթացած էր եւ կը փորձէր մեռցնել զինք: Դաւիթ պարէն, խաղաղութիւն եւ պաշտպանութիւն ստացաւ Աստուծմէ այդ դժուար ժամանակաշրջանին: Ինչպէս կրնաս ղեկավարներուդ հանդէպ պատիւի եւ ենթարկումի այդ նոյն կեցուածքը մշակել:

Դաս 6

Լուսարձակի տակ առնուած նիւթեր՝ Տասնհինգերորդ, Տասնվեցերորդ եւ Տասնութերորդ Գլուխներէն

1. Փառք մը կայ, որ պահուած է Եկեղեցիին երբ մենք մէկ կ'ըլլանք: Յիսուս յայտնաբերեց Աստուծոյ փառքը երբ երկրի վրայ կը գտնուէր: Ինչ բանի մասին կը մտածես երբ լսես *փառք* բառը: Կը կարծես, որ Աստուծոյ ներկայութեան անելի մեծ չափ մը կայ, որ տրամադրելի է:
2. Երբ Պենտէկոստէի օրը եկաւ, Վերնատան 120 աշակերտները միաբանութեան մէջ էին: Անոնք ունէին մէկ միտք, մէկ սիրտ եւ մէկ հոգի: Ինչ երեւոյթ պիտի ունենար այդ մէկութիւնը մեր եկեղեցիներուն մէջ այսօր:
3. Միացեալ Նահանգներու բանակը ունի հինգ ճիւղեր. մէկ բանակ է, բայց կան իրարմէ շատ տարբեր գործունէութիւններ: Եկեղեցիին մէջ ալ կան տարբեր գործունէութիւններ: Մենք պէտք է գործենք այն գործունէութեան մէջ, ուր Աստուած դրած է մեզ: Ատիկա ինչպէս կը փոխէ տեսակետդ այն եկեղեցիին

նկատմամբ, ուր ներկայիս կը յաճախես: Ինչ բանը կրնաս տարբեր ձեռով ընել, որպէսզի կարենաս մաս կազմել այն տեսիլքին, որ այդ եկեղեցւոյ համայնքը ունի:

4. Պատկերացո՞ւր, թէ ինչ տեսակի ազդեցութիւն կ'ունենանք միջավայրներու, շրջաններու եւ երկիրներու վրայ երբ Աստուծոյ ժողովուրդը որդեգրէ Անոր միութեան ձեւը: Ինչ ձեռով կրնաս յաւելեալ միութիւն ստեղծել քու բարեկամներու շրջանակիդ մէջ: Եկեղեցիիդ մէջ: Միջավայրիդ մէջ:

ՊԱՏՈՒԵԼՈՒ ՎԱՐՁՔԸ

Բացայայտեցե՛ք Այս Մոռցուած Առաքինութեան Զօրութիւնը



Ոչ մէկ Քրիստոնեայ կ'ուզէ զԱստուած սահմանափակել, բայց մեզմէ շատերը անգիտակցաբար կը սահմանափակեն Անոր գործունէութիւնը իրենց կեանքին մէջ, որովհետեւ կ'անտեսենք կարեւոր հոգեւոր սկզբունք մը՝ Պատիւը:


Պատիւը այնպիսի հասկացողութիւն մըն է, որ մեծ մասամբ կորսուած է մեր մշակոյթին մէջ, բայց ինչպէս այս գիրքին էջերուն մէջ պիտի տեսնէք, անիկա էական է Աստուծոյ Թագաւորութիւնը կեանքի բոլոր մարզերէն ներս արձակելու համար:

«Պատուելու Վարձքը» գիրքին մէջ հանրաճանաչ հեղինակ Ճոն Պրվիրը, ցոյց կու տայ, թէ ինչպէս պատուելու կոչը ընդունիլը ձեզ Աստուծոյ արժէքային համակարգին համապատասխան կը դարձնէ եւ ձեզ այնպիսի դիրքի մը մէջ կը դնէ, որ դուք ստանաք այն ինչ որ Աստուած ունի ձեզի տալու:

Այս խորունկ աստուածաշնչական յայտնութիւնները միացնելով այդ սկզբունքները գործնականօրէն պատկերող ազդեցիկ պատմութիւններու հետ, այս գիրքը ձեզի կու տայ այս մոռցուած առաքինութեան մասին նոր հայեացք մը եւ, ամենակարեւորը, ձեզի կու տայ բոլոր փափաք մը զանիկա գործածելու կեանքի բոլոր մարզերուն մէջ:

X MessengerX

Հշակերտութեան ճամբորդութիւն մը ամէն մարդու համար, ամենուրեք




- Անվճար, աւելի քան 125 տարբեր լեզուներով
- Հասանելի որպէս աշխատածրագիր («Եփլիքէշըն») եւ առցանց
- Աղբիւրներ՝ նախատեսուած ձեր աճին համար
- Հետեւեցէք ձեր անցած կիւթերուն եւ աշակերտութեան ուղիին



Ստացէք «Messenger»-ի աշակերտական Նիւթերու ամբողջ գրադարանը, ներառեալ ելեկտրոնային գիրքեր, օտիօգիրքեր, կարճ ֆիլմեր, վիտէօ-ուսուցումներ, Աստուածաշունչեր եւ աւելին. դիտեցէք, կարդացէք եւ լսեցէք ձեր բոլոր սարքերուն միջոցով:

MessengerX.com



Հասանելի է աշխարհի տարածքին «App Store»-ի եւ «Google Play»-ի մէջ

Պատահանձ է բնաւ, որ շփոթի մէջ ըլլաս, թէ ինչ կեցուածք պէտք է որդեգրես տնօրէնի մը կամ ղեկավարի մը հանդէպ երբ անհամաձայնութեան մը մէջ ես անոր հետ: Բնաւ դուն քեզի հարց կու տաս, թէ ինչն պէտք է մտիկ ընես իրեն սկսելու համար:



Այս նոր վերանայումը եւ այժմեականացումը տարբերակին մէջ, *պէտք-սէլիսկ* հեղինակ ճոն Պրովիր՝ նոր սերունդի մը ուղղելով իր պատգամը, անգամ մը եւս կը կեդրոնանայ այն պաշտպանութեան սահմաններուն վրայ, զորս Աստուած կը հայթայթէ իշխանութեան վրայ եղող մարդոց միջոցաւ: Գոն կը բացայայտէ, թէ ինչպէս թշնամին կը խաբէ մեզ հաւատալու, թէ մեր իսկական կոչումը կրնանք գտնել աստուածային ղեկավարութենէ հեռու, եւ աստիկա կ'ընէ պոտորելով Աստուծոյ Անձին իշխանութիւնը և Անոր կողմէ յանձնարարուած իշխանութիւնը ճանչնալու մեր կարողութիւնը: Ղեկավարութեան հետ պէտք եղած ձեւով յարաբերիլ տրվեցնելով, ճոն ցոյց կու տայ, թէ ինչն իշխանութեան տակ ապրիլը մեզի կը հայթայթէ վայր մը, ուր կայ պարէն, պաշտպանութիւն եւ ապագայի համար յոյս:

«Ծածկոյթի Տակ»ը նաեւպիտի օգնէ, որ յայտնաբերես.

- Ինչպէս խուսափիլ ամէն ձեւով ճիշդ բայց տակաւին որոշ ձեւով սխալ ըլլալէ
- Աստուածաշնչական ձեւը՝ անարդար վարմունքներու դիմաց կեցուածք առնելու եւ զանոնք յաղթահարելու

Աւելցումը նոր գլուխով մը եւ վերջաւորութեան քննարկումի հարցումներով, «Ծածկոյթի Տակ»ը գործնական, կեանք-փոխող գիրք մըն է, որ ի յայտ կը բերէ Աստուծոյ իշխանութեան ենթարկուելու կարեւորութիւնը ինչպէս նաեւ ցոյց կու տայ մեր կեանքին մէջ գոյութիւն ունեցող ղեկավարներուն հանդէպ ինչպէս ճիշդ կեցուածք ունենալը:



ՃՈՆ ՊՐՎԻՐԸ միջազգային պատգամաբեր մը եւ *պէտք-սէլիսկ* հեղինակ մըն է՝ ծանօթ Աստուծոյ Խօսքին հանդէպ իր համարձակութեամբ եւ անգիջող մօտեցումով: Գոնը եւ իր կինը՝ Լիսան հիմնադիրներն են *Մասէնճըր Ինթըրնաշընըլի*՝ առաքելութիւն մը, որ նուիրուած է զարգացնելու անգիջող հետեւորդներ Քրիստոսի, որոնք կը փոխակերպեն մեր աշխարհը: Իր Քոլորատօ եղած ժամանակ, ճոն կը զբաղի իր չորս որդիներուն հետ *քարտի* խաղեր խաղալով կամ համոզելով Լիսան, որ սկսի *կոլֆ* խաղալ:



Ձրի ներբերումներու համար եւ *փոտօ* սփռումներու հետեւելու համար, դիմել՝ **MessengerX.com**



Այս գիրքը նուրբ է ճեղհնակելու եւ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՑ ՉԷ

Կը ցանկաբ անոյն: Տեսնուեցէ պատկերակը:

